











# ՀՈՐ ՔՆԱՐ

ՉԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ  
ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ  
ԿԱՐՑ ԳԷՈՐԳԵԱՆ



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՆ



# ՆՈՐ ՔՆԱՐ


ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ

( ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ )

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆ



ՊԵՅՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ

PRINTED IN LEBANON


1954

... «Քնարիս լարերը դեռ թա՛ց են,  
եղբայրեն՛ր... Թո՛ղ երգես մրրկին, թո՛ղ  
արցունես թորայ, թո՛ղ շեփորս հերոսնե-  
րուն իր հրաւերն որոտայ»...

ՍԻԱՄԱՆԹՕ

Երգ սիրեցե՛ք կեանքից, գինուց, ամեն բանից աւելի,  
Երգն է միակ բայասանը անդնդախոր ցաւերի,  
Երգ հիւսեցե՛ք, առանց երգի՛ վիճն աշխարհն է ցաւերի:

ՍԱՐՄԷՆ



Զ Օ Ն

ԱՆՆՄԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ

Ե Ի

ՀԱՅ ԵՐԳԻ ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ՎԱՐՊԵՏ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

---

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ ՓԱՐԻՋ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1935ԻՆ

ԵՒ ՄԱՐՄԻՆԸ ԹԱՂՈՒԵՑԱԻ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

26 ՄԱՅԻՍ 1936ԻՆ



(ԾՆԱԾ ԷՐ ՔԷՅԹԹԱՀԻԱ (ԿՈՒՏԻՆԱ) 1869 ԹՈՒԱԿԱՆԻՆ)

## ԿՈՄԻՏԱՍԻՆ

Կոմիտա՛ս, Հայոց երազ, Հայոց երգ, Հայոց գինի,  
Մասիսի սրտից յորդած դու մեր հին մրմունջի դետ,  
Ձի կարող քեզ մուսանալ ո՛վ սրտի մի խորշ ունի,  
Քանի որ երգն էլ կեանք է ու կեանքն էլ երգ է յաւէտ:

Գարուն ա, ձուն ա արեւ, — երգեցիր դու սրտախոց,  
Երբ տեսար հայ աղջըկան, որ սիրոյ վշտից քամւեց,  
Դու տեսար դեռ երէկւայ կոտորածն անմեղ Հայոց,  
Եւ միտքըդ, քո սրտից շուտ, այդ վշտում դերեղմանւեց:

Մեղւի պէս դու տուն բերիր երգերը մեր թափառիկ,  
Ու քեզ են ամէնից շատ գուրգուրում սրտերը մեր,  
Որ Հայոց մայր մեղեդին խրճիթից աշխարհ հանիր՝  
Որպէս քար սրտերն հերկող յաւիտեան մի հոռովել:


— Ձինար ես՝ կուսնալ մի, — օ՛ չինար անմահութեան,  
Խշշում ես մեր աշխարհում քո երգով մահից այս կողմ,  
Հայրենի հողն է ահա յաւիտեան քեզ պահապան,  
Ձի՛ թեքի քո հանճարի չինարին էլ ո՛չ մի հողմ...

Կոմիտա՛ս, Հայոց երազ, Հայոց երգ, Հայոց գինի,  
Աշխարհի ծովը մտած դու Հայոց մրմունջի դետ,  
Երգազուրկ մարդն է գազան, լոկ չար մա՛րդը երգ չունի, —  
Առիւծին երգով սանձող՝ դու Հայոց քնարն յաւէտ:

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

## ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

«ՆՈՐ ՔՆԱՐ»Ի Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ



«Նոր Քնար»ի Ա. սպագրութիւնը լոյս տեսաւ 1937ին Յունաստան (Սելանիկ), իբրեւ վերահրատարակութիւնը՝ ասկէ երկու տարի առաջ հրատարակ հանուած եւ անմիջապէս սպառած «Հայ Քնար» Երզարանին, որ սակայն չունէր ձայնագրուած երգեր եւ նկարներ: Հազիւ հրատարակուած, «Նոր Քնար»ն ալ սպառեցաւ չորս հինգերորդով, գրեթէ անմիջապէս, իսկ մնացեալ մէկ հինգերորդն ալ, պատերազմի աւարտումէն ետք, խլուեցաւ ձեռքէ ձեռք: Այնպէս որ մէկ օրինակ իսկ չմնաց վաճառման համար:

Այս յայտողութենէն քաջայերուած, այլեւ բազմաթիւ կողմերէ եղած պահանջներուն զոհացում տալու նպատակով է որ կը ձեռնարկենք ահաւասիկ «Նոր Քնար»ի այս երկրորդ բազմաձայն սպագրութեան:

Իբրեւ Բ. սպագրութիւն, սակայն, «Նոր Քնար»ը կը գերազանցէ առաջինը, շատ մը առաւելութիւններով: Հիմնական փոփոխութեան ենթարկած ենք, օրինակի համար, երգացանկը, նկատ ունենալով որ 1937էն առդին բազմաթիւ նոր երգեր յօրինուած են Հայաստանի եւ արտասահմանի մէջ: Այդ երգերէն կարելուորներուն տեղ տուած ենք այս անգամ, այս հրատարակութեան մէջ: Երզարանին ծաւալը պահած ենք մօտաւորապէս միեւնոյնը, բայց որպէսզի կարենանք ձայնագրուած նոր երգերու տեղ տալ, նախկին երգացանկէն դուրս ձգած ենք հարիւրի չափ ոտանաւորներ, որոնք կը կարդացուին, բայց չեն երգուիր ընդհանրապէս: Այնպէս որ այս Բ. սպագրութիւնը կը բաղկանայ գրեթէ ամբողջութեամբ երգելի կտորներէ:

Ա. սպագրութեամբ հրատարակուած բոլոր ձայնագրեալ երգերը տրուած են նաեւ այս հրատարակութեան մէջ: Անոնց վրայ, ուրեմն, աւելցուցած ենք 100է աւելի նոր երգեր, բոլորն ալ ձայնագրուած: Այս ձայնագրուած երգերէն զատ, «Նոր Քնար»ը կը պարունակէ այս անգամ զանազան եկեղեցական երգեր, ինչպէս նաեւ հայկական ժողովրդական կարգ մը պարերու ձայնագրութիւնները, նուազի համար ու տակաւին 300ի չափ ուրիշ երգեր, որոնց ձայնագրու-

թիւնը կը պակսի: Ասոնց մեծ մասը սակայն ծանօթ երգեր են եւ կ'երգուին հիմէն ի վեր:

Այս սպագրութեան մէջ տեղ տուած ենք նաեւ կարգ մը նոր նկարներու, պահելով մեկտեղ նախապէս հրատարակուածները, ընդհանրապէս:

Երգերը դասաւորած ենք դարձեալ առանձին գլուխներու տակ, ըստ իրենց տեսակին, — ազգային—հայրենասիրական, ռազմական—յեղափոխական, տոհմիկ եւ աշուղական, հոգեւոր, սիրային, ժողովրդական, մանկական, եւն.: Իսկ Երգարանի վերջաւորութեան հրատարակած ենք երգացանկը, այբուբենական շարքով եւ ձայնագրեալ երգերու յատուկ նշանագրութեամբ, փնտռուած երգ մը անմիջապէս կարենայ գտնելու համար:

Ինչպէս մեր նախորդ հրատարակութեանց մէջ ալ կ'ըսէինք, հայ ժողովուրդը, իր տարագիր վիճակին մէջ մանաւանդ, աւելի քան պէտք ունի Հայ Երգին, որ այնքան հզօր ազդակ մըն է մեր գոյութեան պահպանման համար եւ որ այնքան գեղեցիկ յոյզեր ու յուզեր կ'արթնցնէ ամենուն մօտ: Մեր հայրենասիրական, յեղափոխական, ռազմական, տոհմիկ, հոգեւոր, սիրային, աշուղական կամ զուարթ երգերը, որոնք այնքան շատ են ու գեղեցիկ, կ'երգուին ամէն տեղ եւ ամէն առթիւ, ոգեւորութիւն ստեղծելով մեր տարագիր բազմութիւններուն մօտ ու զանազան միտք կապուած կը պահեն հեռաւոր Հայրենիքին, կ'արժարժեն անոնց մէջ հայրենասիրական ոգին, ցեղային տոհմիկ շունչն ու մանաւանդ հաւատքն ու յոյսը մեր յուսաւոր ապագային եւ Հայաստանի վերջնական ազատագրման հանդէպ:

Հաւատարմացած ենք, որ իր նոխացուած բովանդակութեամբ, «Նոր Քնար»ի այս Բ. սպագրութիւնը պիտի գոհացնէ բոլոր նախասիրութիւնները եւ դառնայ Հայ Երգի սիրահար բազմութեանց անբաժանելի ընկերը, բոլոր գաղութներու մէջ:



# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱԶԳԱՅԻՆ - ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## ՕՐՀՆԵՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ



## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Tempo di  $\text{♩}$ marcia

Դաճաւորեց Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Մեր հայ-րե-նիք թող-նալան-տիր Մեր թրջ-նա-նայ ոտ-նա-կոխ

իւր որ-դի-քը արդ կան-չու՛մ է հա-նել իւր վրէժ քէն ու ոխ քէն ու ոխ:

Մեր հայրենիք թշուառ անտէր,  
Մեր թշնամեաց ոտնակոխ,  
Իւր որդիքը արդ կանչու՛մ է,  
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապած,



ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԻԱՆԴԵԱՆՑ

Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով  
Պիտի լինի ազատուած:

Ահա՛, հղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուքով լուացի:

Նայիր նորան երեք գոյնով՝  
Նուիրական մեր նշան,  
Թող փողփողի թշնամու դէմ,  
Թո՛ղ վերածնի Հայաստան:

Ինչքան կին մարդ, մի թոյլ  
էակ,

Պատերազմի գործերում  
կարէ օգնել իւր հղբօրը՝  
Զանց չարեցի քո սիրուն:

Ահա՛ իմ գործ, ահա իմ դրօշ,  
Շուտ ձի հեծիր քաջի պէս,  
Գընա՛ փրկել Մայր Հայրենիք,  
Պատերազմի վառ հանդէս:

Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,  
Բայց երանի՛ սր իւր ազգի  
Ազատութեան կը զոհուի:

Գընա՛, հղբայր, Աստուած քեզ յոյս,  
Ազգիս սէրը՝ քաջալեր,  
Գնա թէեւ չեմ կարող գալ,  
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Գընա՛ մեռիր դու քաջի պէս,  
Թող չը տեսնէ թշնամին  
Քո թիկունքը, թող նա չասէ  
Թէ վառ է Հայաստանցին:

Ասաց՝ տուեց օրիորդը  
Իւր հղբօրը մի դրօշ,  
Մետաքսից էր, ազնիւ գործած  
Ուր երեք գոյն կար սրօշ:

Եղբայրն առաւ և ողջունեց  
 Իւր սիրական քնքուշ քոյր,  
 Առաւ զէնքը, սուր, հրացան,  
 Հեծաւ իւր ձին սեւաթոյր:

Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,  
 Մընաս բարեաւ սիրական,  
 Այս զբօշակին պիտի նայի  
 Ամբողջ բանակն հայկական:

Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած  
 Արտասուքով ու կընքած,  
 Դու յանձնեցիր ինձ յիշատակ,  
 Հայրենիքի նուիրուած:

Թէ մեռանիմ՝ դու մի սըգար,  
 Իմացիր որ տարեցի  
 Դէպի մահ ու արքայութիւն,  
 Իմ հետ քանի՛ թշնամի:

Ասաց՝ վազեց դէպի հանդէս  
 Թշնամիին յանդիման,  
 Իւր արիւնով գնել յաւէրժ,  
 Աղատութիւնն հայկական:

Ո՛հ, իմ սիրտը կարատուամ է  
 Տեսանելով այսպէս սէր  
 Դէպի թշուառ մի հայրենիք,  
 Որ սանակոխ եղած էր:

Սորա կէսը, կէսի կէսը,  
 Գէթ երեւէր մեր ազգում...  
 Բայց մե՛ր կանայք... ո՛ւր, Եղիշէ,  
 Ո՛ւր մեր «Տիկնայք փափկասուն»:

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,  
 Այլ չեմ կարող բան խօսել,  
 Չէ՛... թշուառ չէ Հայաստանը,  
 Եթէ կանայք այսպէս են:

ԵՐԳ ՈՒ ԳՆԱՅՔ  
 ՉՕՐԱՅ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ  
 Ի ՇԱԽԱՐՇԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺՔ  
 Օ՛Ն ԱՆԴԻ ՅԱՌԱ՛Ձ

ԲԱ՛Մ ՓՈՐՈՏԱՆ

Tempo di marcia

Խօսք՝ ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ

Բամ փո-րո-տան Բար-ճուտ քոմ քիմք Եյ-րա-րատ-եան

գաղտն ի վայր Ե-րի ա-րանց արիմք յեանդն ա-ռա-տանն ի հրա-զայր:

հրա-ւեր հայ-րն-եաց հո-չա-կի՛նդ հա-նուր հո-գիք հայ-կա-զանց

Բար-քո-քին ի հուր Որք երկ նա-ւո-րին դաա կին էք կա-րու, որք եր-կրաւ ւո թին

փա-ռաց երկ նա-յորդ: հաղ օն ա-րի ա-րանց ման-կունք, հաղ..


օն ա-րի ա-րանց ման-կունք, հայ-րն-նա-փրկե՛րդ հայ-կա-

զունք: հաղ օն ի զէն գունդ ի գունդ յնա նայ ի դար թունդ ի թունդ հաղ օն

ի զէն գունդ ի գունդ յնա նայ ի դար թունդ ի թունդ ի զէն ի վրժ. օն անդր յա-

նա՛ղ, ի զէն ի վրժ. մի ճախ մի յաղ. Օն անդր յա նա՛ղ մի ճախ մի յաղ օն անդր յա-

նա՛ղ. յա-նա՛ղ, յա-նա՛ղ, հաղ օն, յա-նա՛ղ - - - յա-նա՛ղ



ՀԱՅՐ ՂԱՅԻՆՆԻ ԱԼԻՇԱՆ

Բա՛մ, փորոտան բարձուստ բո՛մբիւնք յԱյրարատեան դաշտն ի վայր,  
Արի արանց արիւնք յեռանդն տռատանան ի հրազայր.

Հրաւէր հայրենեաց հըռչակի 'նդհանուր,  
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.  
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,  
Որք երկրաւորիս փառաց երկնայորդ.

Հապ'օ՛ն արի արանց մանկունք,  
Հայրենավրեժքդ Հայկազունք,  
Հապ'օ՛ն ի գեկ գունդագունդ  
Յեռեայ ի պար բունդ ի բունդ.  
Ի գե՛ն, ի վրե՛ժ. օ՛ն անդր յառաջ,  
Ի գե՛ն, ի վրե՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,  
Օ՛ն անդր յառաջ,  
Մի՛ ձախ մի՛ յաջ,  
Օ՛ն անդր յառաջ,  
Յառա՛ջ. յառա՛ջ.  
Հապ'օ՛ն յառաջ:

Հայկեան փանդռանց որոտընդօստ դռնչին բարբառք մ'արտապսո,  
Դառնագոռոչ անդրաձայնէ պարսիկ կերկեր ի շեփօր:

Շարժեն հրեշտակք թեևս լուսափողփողս,  
 Ճիւղաղք ճիւղաղաց կայտունն ի դժոխս.  
 Շունդըն շանթառաք զեթերօք փարի.  
 Սարսափին սանդարք ի խօլ խաւարի:  
 Հապ'օ՛ն արի արանց մանկունք, ելլն.:

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն յայերս գոգ ծալ ի ծալ,  
 Ի ճակատուց ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց յսւրաստ կալ.

Հեծեալ հրանժոյգ վեհին վահանայ՝  
 Վրէժ կանչէ արեան կարմիր վարդանայ.  
 Փռնչեալ բոցաշունչ դափր ի գարշապար  
 Թաղմամուտ վարդի յանժոյժ երիվար:

Հապ'օ՛ն արի արանց մանկունք, ելլն.:

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ,  
 Գոռան կորդրիք, մռնչեն Մասիք, հռնչեն սահանք Երասխայ.

Ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ոտնատրոփ,  
 Տատանին դաշտակք, յառնէ շունդն ապշուպ,  
 Կռուփ առ կռուփ կոփեն կմբայք տէգ առ տէգ,  
 Դղորդք առնուն տարերք կորսվեացն ի վէգ:

Հապ'օ՛ն արի արանց մանկունք, ելլն.:

Արի՛ք ի կռիւ քաջակորովքդ՝ ընդ կորակոր հրօսն Արեաց,  
 Հա՛պա համհարզք մեր բիւրայաղթք, ձեզ նոր հանդէսք են  
 փառաց.

Թռի՛ք ի ռազմ ի խազմ, առէ՛ք զէն և զարդ,  
 Երեսնիւք յիսնիւք հարուլ բիւրս հազարս,  
 Ի սուր ի սուսեր կարչնեղ յաղեղունս՝  
 Ըզսեալ Սասանեանց ջարդել կառափունս:

Հապ'օ՛ն արի արանց մանկունք. ելլն.:

Մինչեւ ցե՞րք, ցե՞րք սուգ ունի զՀայս, հատէ՛ք զարտօսր որքք,  
 այրիք,  
 Հարանց, հարսանց, եղբարց, որդւոց, հանուրց Հայոց վրէժխնդիրք.

Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց,  
 Յուշիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց.

Սօսափիւնք յերկնից, արհաւիրք յերկրէ  
 Քաջացս օժանդակ զՊարսն հերքեսցէ:

Հապ'օ՛ն արի արանց մանկունք, ելլն.:

Օ'ն անդր ի բաց հայկեան հողոյ հըսկայազանց և սըրբոց՝  
 Ի բաց ջուրը հուսուական մոխրապաշտիցն պղծոց.

Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,

Արիւնք վըկայից զճապազիսն անժամ.

Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ,

Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ:

Հապ'օ'ն արի արանց մանկունք, եւլն.:

Արք աղեղանց, բարձր ի թիրախ թռուսչիք, վերջին ձեզ խրախոյս,

Առեալ տարցուք գանթիկն ադարձ դայս վարդազոյն դրօշն անխոյս՝

Ի վերայ յիսնից յաղթեց վարդանայ

Պարսկատանջ բազկաւ արւոյն վահանայ,

Շեշտ ի ծայր շիրմ ի դաշտին Շաւարչան

Տընկել յաղթանակ անմահ հայու թեան:

Հապ'օ'ն, արի արանց մանկունք,

Հայրենավրեժքդ Հայկագունք,

Ի Շաւարեան գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ,

Ի յաղթանակ, օ'ն անդր յառաջ,

Ի յաղթանակ, մի' ձախ մի' յաջ.

Օ'ն անդր յառաջ,

Մի' ձախ մի' յաջ,

Օ'ն անդր յառաջ,

Հապ'օ'ն, յառաջ,

Ի յաղթանակ:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ



# ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտութիւն՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆԻ

Tempo di marcia

Խօսք՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅԻ

SOPR

ԱՄՐ

ՏԵՄՈՐԻ

BASSI

Յա-նազ նա-հա-փակ չե-ղի ան-մահ-ներ վեց գա-րու ան-մոռ վրէ-  
 վա-փին սե ա-րիւն մեր հողն ո-րո-գեց փա-րա- գիր եայն իր կնան-

Յա-նազ նա-հա-փակ չե-ղի ան-մահ-ներ վեց գա-րու ան-մոռ վրէ-  
 վա-փին սե ա-րիւն մեր հողն ո-րո-գեց փա-րա- գիր եայն իր կնան-

— ժի զը-բահ-ներ կա- փարն հայ-րն-նի լե- աւել հե-ռա-գոյն եր-  
 — Կը նո-րո-գեց է- րէկ շշ-թայ-ուած այ- սոր ինկ-նա-վար յար-

— ժի զը-բահ-ներ կա- փարն հայ-րն-նի լե- աւել հե-ռա-գոյն եր-  
 — Կը նո-րո-գեց է- րէկ շշ-թայ-ուած այ- սոր ինկ-նա-վար յար-

*p* *Cresc.*

— Թանկ կո-թո-շել գրո- շահն է-ռա-գոյն հո- կայ եր-կիր-ման փոր-  
 — Եւլ վե-հո-րէն զամ- րա-նէն խա-ւար զամ- րա-նէն խա-ւար

— Թանկ կո-թո-շել գրո- շահն է-ռա-գոյն հո- կայ եր-կիր-ման փոր-  
 — Եւլ վե-հո-րէն զամ- րա-նէն խա-ւար զամ- րա-նէն խա-ւար

— Միշ հը—բա—թև կա—մա—տը բա—նակ յա—ռազ յա—

— ման կա—մա—տը բա—նակ յա—ռազ յա—ռազ յա—ռազ յա—

— ման կա—մա—տը բա—նակ յա—ռազ յա—ռազ յա—

— միշ հը—բա—թև կա—մա—տը բա—նակ յա—ռազ յա—ռազ ար—տը յա—

— ռազ ան—սա—սան յա—ռազ ան—դե—դե դե—պի յաղ—թա—նակ

— ռազ յա—ռազ ան—դե—դե դե—պի յաղ—թա—նակ յաղ—թա—նակ


— ռազ ան—սա—սան յա—ռազ ան—դե—դե դե—պի յաղ—թա—նակ յաղ—թա—նակ

— ռազ ան—սա—սան յա—ռազ ան—դե—դե դե—պի հե—պի յաղ—թա—նակ յաղ—թա—նակ

Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ,  
 վեց դարու անմու վրէժի զրահներ,  
 կատարն հայրենի լերանց հեռագոյն՝  
 երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հրակայ ցուիւման  
 Տոբի՛ղ հրաթել,  
 Կամաւո՛ր բանակ,  
 Յառա՛ջ անսասան,  
 Յառա՛ջ անդեղել,  
 Դեպի յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
 Տարագիր Հայն իր կեանքը նորոգեց,



ԵՐԳԱՂԱՆ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԻԱՆ  
(ՎԵՐՋԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ)

Երէկ շղթայուած՝ այսօր  
ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն  
խաւար:

Հրսկայ ցուիրման,  
Տօրմի՛ղ հրաքել,  
Կամաւո՛ր բանակ,  
Յառա՛ջ անսասան,  
Յառա՛ջ անդեղել,  
Դեպի յաղբանակ:

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ



### ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,  
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.  
Որ ազգն երբ զանի փրկարար կոչեց,  
Նոր հոգի, նոր կեանք անոր պարգեւեց:

Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած,  
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բըխած:  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն:

Ձրկանք, բռնութիւն վատթար վարչութեան  
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.  
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց  
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,  
 Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ՝  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

Ջնջեց ամենայն կարծիք անձնական,  
 Խեղդեց ամենայն ձայն անհատական.  
 Հրաւէր կարգաց Ստառածոյ ձայնին՝  
 Առաջնորդ լինել զօրծոց ազգային:

Այն որ Ստառածոյ ձայն տուաւ մեզի,  
 Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի —  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգուած փրկեց բարձրացուց,  
 Մարդկային կոչման մեզ արժանացուց,  
 Շնորհեց մեզի զոր ազատն Ստառած,  
 Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն շնորհիւն յարգ ստացանք մենք,  
 Անոր յարգ տալով ապրինք ու երգենք՝  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

Դո՛ւ ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,  
 Ալ այսուհետեւ մի՛ սգար լռիկ.

Ձի ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ՝  
 Ձքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի՛ լար, մայրիկ, լացի ի պար փոխէ,  
 Եւ ձայնովդ քաղցրիկ սրբւոցդ երգէ՝  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայեր, միանանք, մեր մօր հետ օրհնենք,  
 Չանոնք որ մեզի տուին ուրբ օրէնք,  
 Սահմանադրութեան բարեաց փոխանակ,  
 Թող վարեն ուրախ կեանք մը բարունակ:  
 Թո՛ղ և մեր սրբիք հետ անոնց անուան,  
 Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարգան՝

Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Andantino

Դաշնաւորեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.  
Խօսք՝ Յ. ՄԻՐՉԱ . ՎԱՆԱՆԴԵՑԻԻ

հա—յաս—տան եր—կիր գրախ—տա—վայր Ռու մարդ—կայ  
նոյ ցե—ղին օր—րան Ռու և բնիկ իմ հայ—րե—նիք.  
հա—յաս—տան հա—յաս—տան հա—յաս—տան  
ի վեհ անուշագ սիրտ իմ, ոհ, յոյժ ո—գե—ւո—րի ի նոր խրախոյս, ի վեհ անուշագ  
սիրտ իմ, ոհ, յոյժ ո—գե—ւո—րի ի նոր խրախոյս եւ անձ կայրենաց ի  
քեզ յուսամ ի քեզ ի քեզ յոյս իմ մի—այն հա—յաս—տան  
հա—յաս—տան հա—յաս—տան

Հայաստա՛ն, երկիր դրախտավայր,  
Դու մարդկայնոյ ցեղին օրրան,  
Դու և բնիկ իմ հայրենիք.  
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:  
ի վեհ անուշագ սիրտ իմ, ո՛հ, յոյժ  
Ոգեւորի ի նոր խրախոյս  
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,  
ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն,  
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, անուն փարեղի,  
 Ի քեզ հանգիստ նոյեան տապան  
 Եզիտ և քեւ ապրեցաւ նոյ,  
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Գեաք քաջառաջք աղենարուղխք  
 Զհողդ բարի առնեն յուռթի,  
 Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,  
 Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն,  
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, ծընող դիւցազանց,  
 Եւ հրաշալեաց հանդիսարան,  
 Քո զեփիւռին քաղցր է շնչիւն,  
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Զոր շնչեցին և զօրացան  
 Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,  
 Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,  
 Ըզքեզ յիշեմ, ըզքեզ սիրեմ,  
 Ըզքեզ, ըզքեզ, սէ՛ր իմ միայն  
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Յ. ՄԻՐԶԱ . ՎԱՆԱՆԴԵՑԻ

## ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լուսց: Ամպերը եկան ծածկեցին  
 Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին:  
 Մնացի մենակ, հոգիս վրդոված,  
 Զեռնեիրս ծոցիս, գլուխս քարշ արած:  
 Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,  
 Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
 Նրա տիրամած դէմքը նայելիս,  
 Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:  
 Ա՛խ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,  
 Գուցէ քո փայլից փայլ տաս և Հային:  
 Պատմէ շատերուն վարդանի մահը,  
 Կամ ի՛նչպէս կորաւ հայ ազգին գահը,  
 Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր վարդան  
 Մայրենի հողը, — աշխարհն Հայաստան:

ԳԱՄԱՌ . ՔԱԹԻՊԱ

## Կ Ի Լ Ի Կ Ի Ա



ՏՈՐԹ. ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ

Երբոր քացուին դռներն յուսոյ  
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,  
Չըքնաղ երկիրն մեր Արմենիոյ  
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,  
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,  
Երբոր ծառերն հագնին տերեւ՝  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ կտուր արեւ:

Տեսի դաշտերըն Սուրիոյ,  
Լեռուն Լիբանան և իւր մայրեր,  
Տեսի գերկիրն Իտալիոյ,  
Վենետիկ և իւր կոնտողներ,  
Կըղզի նման չիք մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ

Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ կտուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.  
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝  
Յիշատակաց իւր կարօտի.  
Յորժամ քնարն իմ ցրտանայ,  
Սիրոյն տալով վերջին բարեւ՝

Երթամ ննջել յիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ կտուր արեւ:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ



# Ո՛Վ ՄԵԾԱՍՔԱՆՁ ԴՈՒ ԼԵԶՈՒ

Խօսք՝ ՏՈՔԹ. Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆԻ

Դաշնամուտից՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Գորակած յ. 46

*Գորակած յ. 46*

Ո՛վ հեղու հար-հար մայ րա կան  
 Ո՛վ հար-հար մայ րա կան  
 Ո՛վ մե-ծա-քանից գու լն-գու.  
 Ո՛վ մե-ծա-քանից գու լն-գու հար-հար.  
 Բաղ-ցրա-հըն-չին Բա սե-րուք նը-ման ար-դեպ այլ տեղ կան:  
 նը-ման ար-դեպ այլ տեղ կան:  
 Բաղ-ցրա-հըն-չին Բա սե-րուք նը-ման ար-դեպ այլ տեղ կան:  
 նը-ման ար-դեպ այլ տեղ կան:

*Կարճորեն յ. 66*

Դու, որ նախ ինձ հըն-չե-ցիր նախ սի-րոյ սե- հեղու- խա-ղեր.  
 Դու, որ հըն-չե-ցիր հեղու խա-ղեր.  
 Դու նախ ինձ հըն-չե-ցիր նախ սի-րոյ հեղու- խա-ղեր.  
 նախ ինձ հըն-չե-ցիր սի-րոյ խա-ղեր.

Այն շափ ըզ-բնջ Բո-Ռո-վնջ Դեր ի՛ն ճար-թն չէ — Ե-լն:

Այն Դեր ի՛ն ճար-թն չէ Ե — Լն:

Շափ ըզ-բնջ Բո-Ռո-վնջ ի՛ն ճար-թն չէ — Ե-լն

Ըզ բնջ Բո-Ռո-վնջ Դեր չէ Ե- Լն:

Ի՛ն ճայ-րն-նի թաղ-ցըր լն-զու. Կնայ ան-սա-սան Կնայ յա-ւեր.

Ի՛ն ճայ-րն-նի թաղ-ցըր լն-զու. Կնայ ան-սա-սան. Կնայ յա-ւեր.

Ի՛ն ճայ-րն-նի, թաղ-ցըր լն-զու, Կնայ Կնայ յա-ւեր.


Ի՛ն ճայ-րն-նի. թաղ-ցըր լն-զու.

Կնայ միտ լն-զուգ — Դայի-ար-ժան, Կնայ ժաղ-կա-լից ժաղ կա-ւեր

Կնայ միտ լն-զուգ — Դայի-ար-ժան Կնայ ժաղ կա-լից ժաղ-կա-ւեր

Կնայ միտ լն-զուգ. — Դայի-ար ժան, լն-զուգ Կնայ ժաղ-կա-ւեր

Կնայ ժաղ-կա-լից. Կնայ ժաղ կա-ւեր.



ՏՈՔԹ. ՆԵՐՍԷՍ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,  
 Ո՛վ հեշտ բարբառ մայրական,  
 Քաղցրահնչիւն բառերուդ  
 Նըման արդեօք այլ տեղ կա՞ն:  
 Դու որ նախ ինձ հընչեցիր  
 Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,  
 Այն նախ ըզքեզ թօթովելս  
 Դեռ իմ մըտքէն չէ ելեր:

Իմ մայրենի քաղցըր լեզու,  
 Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,  
 Կեա՛ց միշտ լեզուդ հայկարժան,  
 Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ:

Ի՛նչ դառն վիշտ է սըրտիս  
 Երբ օտար տեղ ու լեզու՝  
 Բըռնի իրեն զիս կը քաշէ,  
 Սըրտէս արիւն կը հեղու:

Ո՛հ, զայն օտարն ես սիրել  
 Բընաւ չեմ կարող ի սրտէ,  
 Չէ՛ այն չէ՛ քաղցըր իմ լեզու,

Որ սիրով զիս կ'ողջուենէ:

Իմ մայրենի քաղցըր լեզու, եւլն.:

Լեզու համակ սիրաշարժ,  
 Քանի ճոխ, պերճ ու պայծառ  
 Մինչ կը հընչես դուն քեզի  
 Սըրտերն ամէն դողահար:

Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,  
 Վե՛ դիւցազանց պերճ երգ դու.  
 Թօթվէ՛ փոշիդ, խոր մութէն  
 Ե՛լ երեւան, պերճ երգ դու:


Իմ մայրենի քաղցըր լեզու, եւլն.:

Յաւերժակամ Սուրբ Գրոց մէջ  
 Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,  
 Կըշուակ անոյշ քո տողերդ  
 Թող ամէն սիրա արժարժեն:

Շքնորհ ունեի Արարչէն  
 Կամ պէտք ըլլայ աղօթել,  
 Շրթունքս սրբաէս բարոքած  
 Կ'աղաղակէ անարգել՝

Իմ մայրենի քաղցր լեզու, եւլն.:

Ն. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ



ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՈՍԵԼԵԱՆ

## ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շրջեղ՝  
 Թէ երգք թռչին սիրողաբար,  
 Մատունք կուսին ամենագեղ,  
 Թէ որ զարնեն փափուկ քշնար,  
 Չունին ձայն մի այնքան սիրուն,  
 Քան զանձկալի հղբայր անուն:

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, հղբայր եմք մենք,  
 Որ մըրըրկաւ էինք զատուած,  
 Բաղդին ամէն ոխ չար ու նկնգ,  
 Ի մի համբոյր ցըրուին ի բաց:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
 Քան զանձկալի հղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան  
Տեսնէ զսրգիս իւր քովէ քով,  
Սըրտին խորունկ վէրքը դաժան  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:  
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ լացինք մենք ի հընում,  
Եկէք, դարձեալ յար անբաժան,  
Խառնենք զարտօսը և ըզխնդում,  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:  
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,  
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,  
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր:  
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

### ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրէ՛ժ կը գոռան շիրմաց խորէն  
Գոռ դիւցազանց սառեերքն անեղ,  
Վրէ՛ժ կը մրմռան արդ տխրօրէն  
Մեր հէք եղբարց արեան հեղեղ:  
Մասեաց ժեռուտ սարն բոցավէժ  
Մեր սրտերուն խոր ժայթքէ վրէժ...  
Օ՛ն, անվեհեր վանենք զրկանք,  
Որ Հայաստան առնէ նոր կեանք:  
Բիւր սուր, հուր, մահ,  
Չազդեն մեզ աս...  
Արդ քաջալանջ  
Նետուինք յառաջ:  
Սուր մը յագուրդ  
Վատ և անդուժ՝  
Թող թշնամւոյն  
Խմէ արիւն...:

Պ. ԳՈՒՐԵԱՆ

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

\*\*\*

Ազատն Աստուած այն օրից՝  
Երբ հաճեցաւ շունչ փչել,  
Իմ հողանիւթ շինուածքին  
Կենդանութիւն պարգեւել,

Ես անբարբառ մի մանուկ՝  
Երկու ձեռքըս պարզեցի,  
Եւ իմ անզօր թեւերով  
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ  
Օրօրոցում կապկապուած,  
Լալիս էի անդադար,  
Մօրըս քունը խանգարած՝

Խնդրում էի նորանից՝  
Բազուկներս արձակել. —  
Ես այն օրից ուխտեցի  
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն  
Արձակուեցան, բացուեցան,  
Մինչ ծնողքըս իմ ձայնիս  
Խնդացին ու բերկրեցան՝

Նախկին խօսքն որ ասացի՝  
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.  
«Ազատութիւն» դուրս թըռաւ,  
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն, ինձ կրկնեց,  
Ճակատագիրն վերեւից.  
Ազատութեան դու զինուոր,  
Կամի՞ն գրուիլ այս օրից:

«Ո՛հ փշոտ է ճանապարհդ,  
Քեզ շատ փորձանք կը սպասէ.  
Ազատութիւն սիրողին,  
Այս աշխարհը խիստ նեղ է:»  
— Ազատութիւն, գոչեցի,  
Թող որոտայ իմ գլխին

Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թո՛ղ դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ, կախաղան,  
Մինչեւ անարգ մահու սիւն,  
Պիտի դռամ, պիտ' կրկնեմ,  
Անդադար՝ Ազատութի՛ւն:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

## Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Ահա բաժակ ուրախութեան,  
Ի սէր յաւերժ միութեան,  
Ձի վայելուչ որդիք հայկեան,  
Մէկտեղ հրճուին ու ցնծան:

Կեցցե՛ սէր եւ միութիւն,  
Կրեմք մի սիրս, մի արիւն:

Վերցուր աչքդ երկնից կամար,  
Փայլի հեռուն ասող մի պայծառ  
Եւ դու, ո՛ւհայ զարթիր, սիրտ առ  
Հայոց բախտն ալ չէ խաւար:

Կեցցե՛ սէր, եւլն.:

Բաւ է այսչափ բաժանում,  
Ըլլամք ուրախ և խնդում,  
Նախանձ, վրէժ ձեզ թողում,  
Անդունդք և վիհք անհատնում:

Կեցցե՛ սէր, եւլն.:

Փորձ մը ըրինք բաժանման,  
Փորձ մ'ալ ընենք միութեան.  
Լեցուի փափաքդ Հայաստան:

Տես որդիքդ քո միանան:

Կեցցե՛ սէր եւ միութիւն,

Կրեմք մի սիրս, մի արիւն:

## Ո Ղ Բ Ե Ր Գ

Մինչ ե՞րբ գըլուխդ պիտի ծեծես,

Շղթայակապ այդպէս հեծես,

Հէք Հայաստան շիջելարեւ,

Ե՞րբ սոխակը սըգատերեւ

Նոճիներէն շուտ տալով խոյս՝

Պիտի երգէ վարդ արշալոյս:

Եղո՛ւկ քեզի, հէք հայրենիքդ,

Որ շորթելով շքեղ դափնիքդ՝

Որդիքդ անխիղճ գլխուդ վատուժ

Բալորեցին սեւ նոճ ու փուշ...


Ա՛հ, վրէժխնդիր շանթեր ճայթին

Հայրենադրուժ Հայոց ճակտին:

Պ. ԴՈՒՐԵԱՆ


## Ի Ղ Ձ Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ն

*Andantino*



Թէ թե ունէի Ռհ կը թու չէի

*Andante Maestoso*



Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին.


*Allegretto*



Անկէ ձեզ. Հայեր. Կարդայի հրաւեր Անկէ ձեզ հայեր



Կարդայի հրաւեր Թ'ե կէ հայեր ԸԼ լամբ մեկ սիրտ մեկ մարմին — սիրտ:



Թե թե ունէի սիրտ կա թո գին — Թ'ե սիրտ կա թո գին:

Թէ թե ունէի,  
Ռհ, կը թուչէի

Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին,  
Անկէ ձեզ, Հայեր,  
Կարդայի հրաւեր,

Թ'ե կէ Հայեր, բլլանք մեկ սիրտ, մեկ մարմին,  
Սիրտմբ ընկեր, զընկեր՝ սիրտմբ կաթոզին:

Թէ դեռ յիմ արիւն  
Ձը խառնուէր թոյն,

Դեռ երակացըս մէջ աշխոյժ խաղային —  
Ռհ, քանի՛ հպարտ,  
Կանչէի ազատ,

Թ'ե կէ Հայեր, բլլանք մեկ սիրտ, եւլն.:

Թէ կեանք ունէի,  
Ռհ, կը լարէի

Թեւ քընարի բաղդին Հայոց անկենդան, —  
Որ նա ձեզ խօսէր  
Ձեզ պանդո՛ւխտ Հայեր,

Թ'ե կէ Հայեր, բլլանք մեկ սիրտ, եւլն.:

Թէ սէր ըլլայի,  
 Կամ անմաշ հոգի,  
 Կը կապէի Հայոց սրտերն անմեկին,—  
 Յայնժամ և նոքա  
 Մի որդիք Հայկայ  
 Կ'ըլլանքի մի անշուշտ մէկ սիրա մէկ մարմին,  
 Սիրենք ընկեր զընկեր, սիրեն կաթոգին:

Ս. Հ. ՖԵԼԷԿԵԱՆ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐՄԻԻԸ  
 ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

### ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Եկել է դարուն, սոխակը սիրուն  
 Վարդի թրիի տակ. Հայրիկձան,

## Երգէ Հայրենիք:

Միծեռնակ, բաղէ, թըռչունք համօրէն  
Քաշում են միշտ ա՛խ, Հայրիկճան,

## Օտարաց երկրէն:

Կռունկ մեր պանդուխտ՝ իւր բարձըր գիրքով,  
Փռլթայ ձայն տալ մեզ, Հայրիկճան,

## Հայրենեաց սիրով:

Վասպուրականի երիտասարդներ  
Եւ օրիորդներ, Հայրիկճան,

## Սեւեր են հագեր:

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,  
Հայրիկ կանչելով, Հայրիկճան,

## Քաշեն հառաչանք:

Մեր սիրտն ու հոգին քու հոգւոյդ զուրպան  
Հրեշտակ՝ Հայ ազգի, Հայրիկճան:

## Դարձիր Հայաստան:

Մեր սիրտն ու հոգին դու մորմոքեցիր,  
Քաղցր, անուշիկ Հայրիկճան,

## Թողիր գընացիր:

Վոսփորի ափեր, գիտեմ, չես սիրում,  
Վարագայ վանքիդ, Հայրիկճան,

## Կարօտես քաշում:

Հրաժարական քարոզըր տուիր,  
Խեղճուկ սրտերնուս, Հայրիկճան,

## Կըրակ վառեցիր:

Իսկ Երկուշաբթի, որ օրն էր Աւագ,  
Ի սուրբ Յակոբէն, Հայրիկճան,

## Դառնայիր արագ:

Ո՛ւր որ ալ լինիս, ո՛ւր որ ալ երթաս,  
Քու փայլուն ջահէդ, Հայրիկճան,

## Մեզի լոյս կուտաս:

Եւրոպ՝ ճանաչէ քու բարձր արժանիք,  
Մինչ քու կարօտովդ, Հայրիկճան,

## Կ'այրինք, տոչորինք:

## ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՛խ վասպուրական, տխուր Հայաստան,  
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան.  
Ահեղ կռուի մէջ այնքան դիմացան,  
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ա՛խ բաւ է Հայեր, միշտ այսպէս գերի,  
Թողնել հայրենիք դիմել օտարի.  
Օտարն սիրում է մեզ իբրեւ հիւրի,  
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի:

Ա՛խ բաւ է Հայեր, ձեր անմիութիւն,  
Պատիւ չի բերեր մեր հայ ազգութեան,  
Պէտք է շուտ գտնել միութեան դարման,  
Որով ազատենք մեր մայր Հայաստան:

Պէտք է միանայ ամբողջ Հայաստան,  
Թող տեսնէ Եւրոպ ու Ամերիկան,  
Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական,  
Քանի այսպէս է թուրքի դատաստան:

Վան փոքրիկ քաղաք իւր գաւառներով,  
Լեցուեցաւ դիակ հարիւր, հազարով,  
Ներկուեցան դաշտեր Հայու արիւնով,  
Զայն տուին երկինք, ամպերն աստղերով:

Տեսէք թուրք ազգը ինչքան անամօթ,  
Քաշեց մեր վրայ զէնք ու թնդանօթ,  
Բայց երբ շողշողաց հայկազեան սուրեր,  
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր:

Ելէ՛ք, ընկերներ առնենք հրացան,  
Անգութ թուրքերը նոր կատղեցան.  
Մեր հայ եղբայրներ շրջապատուեցան  
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձան:

Իմ վերջին համբոյրս կուտամ ձեզ, Հայեր,  
Զըլլայ թէ մոռնաք դուք իմ պատուէրներ:  
Եւ Հայաստանի անմեղ մանուկներ  
Շուտով լուծեցէք Հայու վրէժներ:

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Օգդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն,  
 Պէս պէս գոյնով ծաղիկներդ դալարուն.  
 Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն,  
 Քու հարազատ մշակներդ, Հայրենիք:

Երբոր լինի գարնանամուտ նոր գարուն,  
 Կը բազմանան վտակներդ, Հայրենիք,  
 Շարիշար ցնծութեամբ երգելով զուարթուն,  
 Շարժում են բանակներդ, Հայրենիք:

Մարդիկ կուգան քու սարերը ման գալու,  
 Իբր որսորդ եղնիկներդ որսալու,  
 Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու,  
 Քու սգազգեաց սոխակներդ, Հայրենիք:

Գուն դրախտն ես քեզի Սուրբ Գիրքը վկայ,  
 Քու միջիցդ անմահութեան հոտ կուգայ:  
 Հազար ափսոս լուսաւորուած չեն հիմա,  
 Ժողովուրդդ, զաւակներդ, Հայրենիք:

## Գ Ն Ա՛ Բ Լ Բ ՈՒ Լ

Գնա՛ բլբուլ, մեր աշխարհից,  
 էլ դու էստեղ մի՛ երգիր.

Մեր օրը սև, մեր կեանքը ցաւ,  
 էլ էս երկրում մի՛ երգիր:

Տանջուած սիրտը, անուշ երգից  
 Քըրքըրում է, խորանում,  
 Սրտի վիշտը, քս երգերից՝  
 Փրփրում է, լեռնանում:

Գնա՛ բլբուլ, մեր աշխարհից,  
 Գնա՛ երգիր այլ երկրում,  
 Ասա՛ էնտեղ, որ մեր վարդից՝  
 Արեան թարմ հոտ է բուրում:

Որ ողբաձայն մրմնջացող  
 վտակների հոսանքին՝  
 Միանում են արեան շիթեր,

Առաջ շարժում մոլեգին:

Որ ծաղկազարդ հովիտներից

Մահուան ցուրտ հով է փչում,

Որ մեր երկրում կանաչ դաշտերն

Իսկոյն կարմիր են ներկում:

Գնա՛ պատմիր, որ դու տեսար

Այրիացած մի երկիր,

Սարեր, ձորեր կարմիր հագած

Արիւնազարդ մեր երկիր:

Ա՛խ, ջան բլբուլ, էլ մի՛

կանգնիր,

Գնա՛, պատմիր աշխարհին,

Մեր ցաւն, հոգին, վիշտն ու

թախիծ,

Մեր օրերը դառնագին:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Larghetto

Եղանակ՝ Տ. ՉՈՒՀԱՆԵԱՆԻ

Ո՛հ ինչ ա-նուշ և ինչպիսի գով Ա-ռաւօ տուց փր չեմ-հո-վիկ

Ծաղկանց վրայ գու — ռ գուրգուրով եւ մա-զե բուն կու — սին փափկիկ

Բայց չես հո-վիկ իմ հայ-րե ննաց ԳՐ- նա անցիր սը-ր-տես ի Բաց

Բա-յց չես հո վի-կ իմ հայրե ննաց ԳՐ նա անցիր սը — րտես ի Բաց:

Ո՛հ ինչ ա-ղու և սրբազին մա-րաց մ- ջէն եւ գն՝ թող նի կ Աի-րոյ ժա

մերն ի յան-տառին ըզ-ճայ-չե ցան ի թոյ ևայ-նիկ Բայց չես թող-նիկ

Իմ հայրե ննաց ԳՐ նա եր-գե սը-ր-տես ի Բաց Բայց չես թող-նի — կ

Իմ հայրե ննաց ԳՐ- նա եր-գե սը — ր տես ի Բաց:

Ո՛հ, ինչ անուշ և ի՛նչպէս գով,  
 Առաւօտուց փրչես հովիկ,  
 Ծաղկանց վրայ գուրգուրով,  
 Եւ մազերուն կուսին փափկիկ.  
 Բայց չես հովիկ իմ հայրենեաց,  
 Գրնա, անցի՛ր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ աղու և սրտագին,  
 Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,  
 Սիրոյ ժամերն ի անտառին  
 Զմայլեցան ի քո ձայնիկ.  
 Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,  
 Գրնա՛, երգէ՛ սրտէս ի բաց:  
 Ո՛հ, ի՛նչ մրմունջ հանես վտակ,  
 Ականակիտ և հանդարտիկ,  
 Քո հայելւոյդ մէջ անապակ,  
 Նային զիրենք վարդն ու աղջիկ.  
 Բայց չես վտակ իմ հայրենեաց,  
 Գրնա՛, հասէ սրբտէս ի բաց:  
 Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց,  
 Աւերակաց թռչին վերայ,  
 Թէպէտ պղտոր վտակն Հայոց,  
 Նոճիներուն մէջ կը սողայ.



ՏԻԳՐԱՆ ՉՈՒՀԱՃԵԱՆ

Նոքա հառաչք են հայրենեաց,  
 Նոքա չերթան սրտէս ի բաց:

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## ԹՈՂ ԲԼԲՈՒԼ ԶԵՐԳԷ

Թո՛ղ բլբուլ չերգէ Մշոյ դաշտերում,  
 Թո՛ղ երգ չհնչէ Սասնոյ լեռներում,  
 Թո՛ղ ժպիտ չը գայ Հայերուս գէմքին,  
 Թո՛ղ թախիժ աիրէ Հայերուս սրտին:

Հայի ձեռքերը արիւնով ներկուած,  
 Հայոց սրտերը վշտով է պատած.  
 Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան,  
 Հայոց Եգեմի դաշտում աննման:

Քանի հայ աղջիկ չէ զարդարուելու,  
 Ծաղկով իր կուրծքը չքեղ պճնելու,  
 Թո՛ղ երգ չհնչէ Մշոյ դաշտերում,  
 Թո՛ղ բլբուլ չերգէ Սասնոյ լեռներում:

## Վ Ա Ն Ե Ց Ի Մ Օ Ր Ե Ր Գ Ը

Պըզտի՛ տըղայ, չեմ օրօրիք օրօրանքըդ, որ քուն լաս,  
 Հայ աղբերքըդ ոտքի ելան, մինակ դո՞ւ ետ պիտ' մընաս,  
 Չարթէ՛, հոգիս, անուշ քունէդ, թող աչերըդ լուս տեսնին,  
 Արեւմուտքէն արեւ ծագեց, բաղդը բանեց հայ ազգին:

Չար Սուլթանին ոսկի թախտը Չարդուեցաւ, վար ինկաւ,  
 Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ:

Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գանէ,  
 Սիրուն որդի՞ս միթէ մինակ չար լուծի տակ պիտ' մտնէ:

Մենք Սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին ու լացինք,

Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուացինք,

Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի Հայերուն,

Այժմ, նայինք, նա կը լսէ՞ շառաչիւնը սուրերուն:

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուշները, արձակեմ

Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.

Ըստրուկ գնա արեան դաշար, վերադարձիր ազատուած:

— Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած:

## ՄՇՈՅ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Թո՛ղ երգէ բլբուլ Մշոյ դաշտերում,

Թո՛ղ վարդեր բացուին Սասնոյ լեռներում,

Թո՛ղ մեր թշնամիք սարսեն սարսափեն,

Գազան սառխներ ճաքեն, տըրաքուեն:

Մշոյ դաշտերը ծագկունքով բացուած,

Հայու սերունդը կը պահէ Աստուած,

Ինչքան որ կ'ուզեն թշնամիք թող գան,

Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի սասնան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,

Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,

Թող հայ աղջիկը երգէ վառվռուն.

Սուր զէնքը ձեռին՝ Չարդ տայ թշնամուն...

Վ Ա Ր Դ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Allegro Moderato

հի մի էլ լՁ-անք եղ-բարք հի մի էլ երբ մեր թշ-նա-  
 մին իր մու-րն է ղԸ-մը, իր օր-ես-սա-կան սու-րը  
 մեր կարծ-քին ա-կանջ էլ ղԸ-նամ մեր լաց ու կո-զին:  
 Ա-սա-ցէք եղ-բարք հա-յեր ինչ ա-նձեր, հի-մի-էլ լՁ-  
 անք, ա-սա-ցէք եղ-բարք ես-յեր ինչ ա-նձեր, հի-մի մի  
 էլ լՁ անք:

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ,  
 Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,  
 Իր օրհասական սուրը՝ մեր կրծքին,  
 Ականջ չի դնում մեր լաց ու կոծին:  
 Ասացէ՛ք, եղբարք, Հայեր, ի՞նչ անենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին  
 Դառով, հրապուրքով տիրեց մեր երկրին,  
 Ջնջեց աշխարհից Հայկայ անունը,  
 Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,  
 Խըլեց մեղանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք:  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին  
 Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին.  
 Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,  
 Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց:  
 Վա՛յ մեզ, շղթայով կապուած գերի ենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,  
 Սոսկալի զէնքը բըռնած մեր գըլխին,  
 Կուլ տալ է տալիս արտասուք առատ,  
 Աղեխարշ բողոք վարուց ապիրատ,  
 Մեր գլուխ լալու Եփրատ ո՞ւր պըտրենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին  
 Լիբբ գոռոզութեամբ լցրած իր հողին՝  
 Արդարութեան ձայնն հանած իր սրտից՝  
 Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.  
 Պանդո՛ւխտ, հալածեալ եղբա՛րք, ո՞ւր դիմենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին  
 Անգոհ մեր բերած ծանրը զոհերին,  
 Իւր լիբբ նդոված ձեռքը կարկառեց,  
 Աղգութեանս վերջին կապը պատառեց.  
 Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին  
 Արհամարհելով մեր փառքն ազգային,  
 Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
 Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ.  
 Սուրբ խորան չունենք, արդ ո՞ւր աղօթենք,  
 Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կ'ասեն,  
 Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,  
 Չե՞ն ասել որ Հայք արժանի էին  
 Այդ ստրկական անարգ վիճակին.  
 Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,  
 Մինչեւ է՞րբ լռենք:

Թող լուէ մուկնջը, անդամալոյծը,  
 կամ՝ սրոց քաղցր է թշնամու լուծը.  
 Բայց մենք, որ ունինք հողի ու սիրտ քաջ,  
 Ե՛կ, անվախ ելլենք թշնամու առաջ.  
 Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք:  
 Ու այնպէս լուենք:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

### ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՞լ խօսենք, եղբարք, հիմի է՞լ,  
 Երբ ընտանեկան երկպառակութեամբ,  
 Ուրիշ բան չունենք, բայց իրար դաւել,  
 Եւ սարսափելի ազգուրացութեամբ  
 Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք,  
 Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ քաջն վարդան  
 Վաթսուն հազարից՝ հազարով մնաց,  
 Մինչ մնացել էր պարսից լոկ Մատեան  
 Գունդը՝ մեր վաթսուն հազարի դիմաց.  
 Երբ մեր վատութեամբ ո՛ղջ կորուսել ենք,  
 Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ ստարից շատ  
 Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,  
 Մոխրատնով լցրինք Դուին, Արտաշատ,  
 Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.  
 Երբ այս ամէնը մենք կատարել ենք,  
 Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ հրապարակում  
 Պարսիկը առակ արել է Հային —  
 «Թէեւ Ասորու նման աշխարհում  
 Չկայ մի վատ ազգ, բայց քանց Ասորին  
 Էլ վատ է Հայը:» Մենք այդ տանձում ենք,  
 Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ իշխանութիւն  
 Մախուում է անարգ հացկատակներին,  
 Մինչ ստրուկ մարդիկ նստած մեր գլխին,

Ու մեզ կարծու՛մ են իրենց հող ոտքին,  
 Ու մենք մեզ կօխող ոտքը լիզս՛ւմ ենք,  
 Հիմի է՞լ խօսե՛նք:

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,  
 երբ ողջունում ենք մենք այդ չքերին,  
 Որոնք դրան շուն են և մեզ տեսնելիս  
 Շուտ դիմակները դնում հրեսին.

Այդպիսիներին դարձեալ պատու՛մ ենք,  
 Հիմի է՞լ խօսե՛նք:

Էլ մեր հրեսին մնա՞ց մի կաթիլ  
 Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք:  
 Ո՛չ, թէ չենք ուզում հողից հող կորչել,  
 Թշնամու արեամբ մեր թրին ջուր տանք,  
 Ազգ, եկեղեցի փրկենք, ազատենք

Եւ ապա խօսե՛նք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ


### Յ Ո Յ Ս

Թո՛ղ փրչէ քամին պաղ պաղ հրեսիս,  
 Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,  
 Որքան որ կ'ուզէ թող փրչէ հիւսիս,  
 Յուսով եմ վաղ ուշ, գարունը պիտ' գայ:  
 Թուխպը թո՛ղ պատէ՛ հրկինքը պայծառ,  
 Թանձրը մառախուղ հրկիր թող փակէ,  
 Տարերք աշխարհիս խառնուին իրար,  
 Յուսով եմ, վաղ ուշ, արեւ պիտ' ծագէ:  
 Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,  
 Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը,  
 Սարսափելի չեն Հայիս տառապանք,  
 Միայն... չը հատնէր խրղճուկի յոյսը:

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ



## Ծ Ո Վ Ա Կ



ՐԱՖՖԻ

Արդեօք գալս՞ւ է մի օր ժամանակ,  
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,  
Եւ ամէն կողմ ից պանդուխտ Հայազգիք,  
Դիմեն դէպ իւրեանց սիրուն հայրենիք:

ՐԱՖՖԻ



ՐԱՖՖԻԻ ԽԵՆԹԸ ԻՐ ՔԱՋԵՐՈՒ ԽՈՒՄԲՈՎ

### ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐՔ

Lento

Թէ հայ—րեն—նաց որ—սա— կա— գիր գողթնի լը—նարք  
 ԼԸ— ուլ— ցն ԼԸ— ուլ ցն Երկ—նից թող գան ան—  
 Մահ հո— գիր հայոց քաջեր որ— սա— կելք

Թէ հայրենեաց պսակադիր  
 Գողթնի քնարք լռել են,  
 Երկնից թող գան անմահ հողիք,  
 Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գազաթն թող գան  
 բազմին,  
 Երկնից գունդ գունդ հրեշ-  
 տակներ,  
 Աստուած իջեր ի Հայաստան,  
 Հայոց արիւնն հոտոտել:

Փախէք ամպեր Շաւարշանէն,  
 Ալ մի ցողէք ձեր ցողեր,  
 Շաւարշանը ոռոգուած է  
 Հայոց քաջաց արիւնէն:

Եւ կը ծլին և կը ծնին  
 Այս դաշտին մէջ ոչ խոտ՝  
 վարդ,  
 Այլ վարդանայ ինկած երկիր  
 Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջ Եղիշէն  
 Գրիշ ի ձեռն գայ յԱրտաղ,  
 Չափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ  
 կեանք, մահ, հաւատք վար-  
 դանայ:

Ո՛հ վարդանայ անուան արժան  
 Մասիս կանգնի մահարձան,  
 Մենաստաններ՝ խաչն ի գլմ-  
 բէթ,

Աւետարան սուրբ հաւատ:  
 Ծագէ՛ արեւ քոյդ ճառագայթ,  
 Սաղտեաց լեռնէն, մութ խորշէն,  
 Այնտեղ ինկաւ քաջ Հմայեակ,  
 Այնտեղ պսակեր նահատակ:

Լուսին, լուսին, աչօքդ ան-  
 քուն,  
 Պահէ Հայոց ոսկորներ,  
 Եւ Մայիսի գուարթ ցողով  
 Յօղէ անոնց շիրիմներ:

Արծուիք, բազէք Հայաստանի  
 Եւ արագիլ ամրան հիւր,  
 Դուք հսկեցէք այս աշխարհին,  
 Ժառանգեցէք Հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,  
 Աւերակներ շինէք բոյն,  
 Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,  
 Մինչեւ Հայոց գայ դարուն:

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ամերսով  
Քայլամուխը գնում եմ,  
Հի՛ն հի՛ն դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պարում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ  
Պղտոր ջրով եզերքին  
Դարի՛ւ դարի՛ւ խփելով  
Փախչում էին լալադին:

— Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ  
Պար հետ բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չը հասած  
Սգաւոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում եմ,  
Քու սէգ հպարտ աչերից,  
Ինչո՞ւ արագ փախչում ես  
Այդ հարազատ ամերից:

Մի՛ պղտորիլ յատակըդ,  
Հանդարտ հոսէ՛ խայտալով, —  
Մանկութիւնը քու կարճ է,  
Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թփեր թո՛ղ բուսնին  
Քու հիւրընկալ ամի մօտ,  
Սոխակները նոցա մէջ  
Երգեն մի՛նչեւ առաւօտ:

Մշտադալար ուռիներ  
Սառ ծոցի մէջ քու ջրին՝  
Ճկուն ոստըն ու տերեւ  
Թո՛ղ թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու  
Հովիւք թող գան համարձակ,  
Գառն ու ուլը քու վճիտ  
Ջուրը մանեն միշտ արձակ: —

Մէջքը սևոցուց Արաքսը,



ԳԱՄԱՌ ՔԱՌԻՊԱ

Փրփուր հանեց իր տակից,  
Ամպի նման զոռալով  
Էսպէս խօսեց յատակից:

— «Խիզա՛խ անմիտ պատանի,  
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր  
Վրդովում ես, նորոգում՝  
Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից յետ  
Ե՞րբ ես տեսեր, որ այրին  
Ոռքից դուրս պճնուի  
Իր զարդերով թանկագին:

«Որի՞ համար զարդարուեմ,  
Որի՞ աչքը հրապուրեմ, —  
Շատերն ինձ են տակի,  
Շատերին ես օտար եմ...»

«Իմ ազգակից գիժ կուրը  
Թէեւ այրի ինձ նման,  
Ստրկօրէն տանում է,  
Գայթակղիչի կուռ շղթան:

«Բայց նա ինձ չէ օրինակ,  
Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,  
Օտար փեսայ չուզեցով,  
Ես միշտ այրի կը մնամ:

«Կար ժամանակ, որ ես էլ՝  
Շքեղազարդ հարսի պէս  
Հաղար ու բիւր պչրանքով,  
Փախչում էի ափերէս:

«Յատակս պարզ ու վճիտ,  
Կոհակներս ոլորուն,  
Լուսաբերը մինչեւ այդ  
Ջրիս միջին էր լողում:

«Ի՞նչս մնաց էն օրից,  
Ո՞ր ջրամօտ գեղերս,  
Ո՞րը իմ շէն քաղաքից,  
Ո՞ր բերկրալի տեղերս:

«Տուրքը ջրի ամէն օր  
Իր սուրբ ծոցէն Արարատ  
Մայրախնամ ինձ սնունդ  
Պարգեւում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով  
Սուրբ Ակոբի աղբիւրին,  
Պիտի ցօղեմ արտօրա՞յքն  
Իմ ատելի օտարին:

«Կամ կենսատու իմ ջրով,  
Ափերիս մօտ կըկըզած,  
Իւր աղօթքը կատարէ  
Մեր վատ դուշմանը հոտած:

«Մինչ իմ որդիք— ո՞վ գիտէ—  
Ծարաւ, նօթի, անտէրունջ,  
Օտար աշխարհ՝ յածում են  
Թո՛ւյլ սաքերով, կիսաշունչ...»

«Հեռո՛ւ հեռո՛ւ քշեցին  
Բնիկ ազգըն իմ Հայկեան,  
Նորա տեղը ինձ տուին  
Ազգն անկրօն, մոլեկան:

«Իոցա՞ համար զարդարեմ  
Իմ հիւրընկալ ափերը,  
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ  
Ճպոտտ, պըլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք  
Այսպէս կը մնան պանդուխտ,  
Ինձ միշտ սգւոր կը տեսնէք,  
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»...»

Էլ չը խօսեց Արաքսը,  
Յորձանք տըւեց ահագին,  
Օղակ-օղակ օձի պէս  
Առաջ սողաց մոլեգին:

Գ.Ա.Մ.Ա.Ռ. Ք.Ա.Թ.Ի.Պ.Ա.

Օ Ր Օ Ր

Նն ջիր մանկիկ իմ սիրասուն,  
Պայծառ լուսինն է մեղմ հայում  
Օրօր եմ ապում,  
Քո օրօրացում:

Ննջիր մանկիկ իմ սիրասուն,  
Պայծառ լուսինն է մեղմ հայում  
Օրօր եմ ապում,  
Քո օրօրացում:

Այն օրուանիցերբ հայրդ ընկաւ Բայց նա չունի սկորներին  
 Տաճկի գնդակից, Մի փոս առանձին,  
 Պայծառ լուսինն էլ խաւարաւ Ժողոված միատեղ թաղեցին,  
 Անարդար գործից: Բայց Հայերին:  
 Արիւնթաթախ հայրդ խանութից Ննջիր մանկիկ իմ սիրասուն,  
 Տարան գերեզման, Օրոր իմ ասում,  
 Այնտեղ տըւին շինուած հողից Պայծառ լուսինն է մեզմ հայսում  
 Մի հանգստարան: Քս օրօրոցսում:


Վ Ա Ր Դ Ա Ն

Moderato

Իմ հայ— թննեաց հոգի— վարձան, հոգի— հոգ— ւոյգ  
 Որ Տըզ— մուտի ա— վե— ըրի բով, վաթսուն հա— զար  
 եզ— ձի զուրդած Զարկիր— զարկար ինկար— քաջ քաջ  
 4ըտ— թննե— ըն— բով  
 Պարսիկ— սրբուած մի շախ մի աջ իմ հայ— թննեաց  
 ա ըւ վար զան. ա ըւս ար՛ւուզ եղ— նի զուր պան

Իմ հայրենեաց հողի վարդան,  
 Հողիս հողւոյդ եղնի զուրպան.  
 Որ Տըզմուտի ափերի քով,  
 վաթսուն հազար կարիճներով  
 Զարկիր, զարկուար, ինկար քաջ-քաջ,  
 Պարսիկ սրբուած ի ձախդ ու յաջ:  
 Իմ հայրենեաց արեւ, վարդա՛ն,  
 Արեւս ար՛ւուզ եղնի զուրպան:

Աւետարանն ու խաչն առիր,  
 Տարիր յերկինս բարձրացուցիր,  
 Էւ դուն ալ հեա թողիր գացիր,  
 Անուշ արեւդ հողին տըւիր,



ՎԱՐԳԱՆԱՆԻ

Որ հայրենեաց շողայ արեւ  
Շաւարշանայ դաշտին վերեւ:

Իմ հայրենեաց արեւ, վարդա՛ն,  
Արեւս ար՛ուող եղնի դուրպան:  
Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,  
Դաշտ ու ծաղիկ հերկուեցաւ,



Վարդան Մամիկոնեանի դամբարանը Խոյի դաշտին մէջ

Լուսնակն ելաւ ամպի տակից,  
 Պաղ պաղ թափեց ցողիկն յաչից,  
 Որ հայրենեաց վարդեր բացուին,  
 Պղպուլն երգէ դրախտի սարին:

Իմ հայրենեաց արեւ, վարդա՛ն,  
 Արեւս ար՛ուող եղնի դուրպան:

Ս. Ն. ՖԷԼԷԿԵԱՆ

### ԿԱՐՆՈՅ ՇԱՐԺՈՒՄԸ

Չայն մը հնչեց էրզրուամի Հայոց լեռներէն,  
 Թունդ թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաշիւնէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր զէնք էր տեսած  
 Դաշար թողուց, սուր, հրացան բահի տեղն առաւ:

Քնքուշ կեանքը ծանր է թըւում հայ օրիորդին,  
 Զէնքը ձեռին յորդորում է Հայոց քաջերին:




Կարնեցի օրիորդ տոհմիկ տարազով (նկարուած կէս դար առաջ)

Հայ աիկինը ստիպում է ամուսնուսն գնալ,  
 Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ, ստանալ:

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է,  
 Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ:

Անմիութիւն տունը քանդող Հայոց խեղճ ազգին,


Հրաժարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին:  
 Հսեց թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,  
 Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին:  
 Եւրոպային լսւրը հասաւ շարժման հայ գեղջկին,  
 Ուրախական սղջսյն տուաւ հայրենասէրին:  
 Յնձա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,  
 Ութ դարերու սուգ ու թախիժ քեզնից վերացան:  
 Ուսումն ու լսյս ազատութեան արդ քեզ են ընկեր,  
 Սուր, հրացան, եռանդ ուզմի պաշտպան անվեհեր:  
 Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,  
 Հին դարերու սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ:



ԿԱՐԻՆ (ԷՐԶՐՈՒՄ)

ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Օ՛խար տարով, օ՛խար սարով,	Կ՛ուզեմ հողիդ կարօտն առնեմ,
Ա՛յ սիրական իմ աշխարհ,	Հող ու ջրիդ ես դուրբան,
Հեռացել եմ քեզնից լալով,	Բայց ո՞նց անեմ՝ ճամբէդ
Ղարի՛ւ պ ընկեր սարէ-սար:	բռնեմ,
Կեանք եմ մաշում, սեւ օր	Բաղդն է կապել իմ ճամբան:
քաշում	Վա՛յ զարիբին, օրը օր չի,
Ընկած խալխի դռներին,	Վայով կեանքն է անցրնում.
Քո սէրն է ինձ էրում, մաշում,	Դուրսը մեռնի, չսլում կարչի,
Հողիս կուտամ էդ սէրին:	Ո՞վ է խեղճին հարցընում:



ԱՐՏԵՏԻՍ ԱՎԱԿՅԱՆ

ԿՈՅՐ ԱՇՈՒՂԸ

Moderato

Սև խաւարը իմ ընկերս է անբաժան, ես չըզիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր, Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան, Դիակները փսիտում են ահաւոր  
 Գաւերն անպատում Ծո՞րից ևստ ուսման Գո՞րծե՞ր ըստ էր կըն քում

Սև խաւարը իմ ընկերս է անբաժան,  
 Ես չըզիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,  
 Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան,  
 Դիակները փսիտում են ահաւոր

Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,  
 Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:  
 Հին դարերից ցաւեր շալկած յամբօրէն,  
 Հառաչելով անցաք արեան ծովերով,  
 Համբերութեան դասեր առիք լեռներէն...  
 Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով,  
 Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,  
 Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Այս իմ անձար քնարն ունի երեք լար.  
 Այն՝ ողբաձայն, լալկան, խղճուկ, դողդոջուն, —  
 Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,  
 Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն...  
 Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում  
 Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Տառապանքի, սուգ ու սեւի ինձ ընկեր  
 Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում,  
 Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ,  
 Լոկ քամին է կողկողազին մրմնջում...  
 Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,  
 Որից Աստուած գուցէ դողայ երկնքում...

Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ  
 Եւ արցունքի երգեր հիւսկնք միասին.  
 Նա խաղում է ամպրոպների, շանթի հետ,  
 Նա յոյզ ու բոց կուտայ նաև մեր երգին:  
 Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին  
 Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:

Ունա՛, քամի, հազար ու մի ձայներով,  
 Թո՛ղ սարսառն լեռներ, ձորեր, անգունդներ.  
 Անցի՛ր մէկ-մէկ գիակների վրայով,  
 Լիզի՛ր վէրքեր ու հաւաքիւր հառաչներ...  
 Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին,  
 Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:

Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ՛ հեռուն,  
 Հառաչանքներ, խօր-խօր ցաւեր շալկած,  
 Վե՛ր սըլացիւր դէպի երկինքը անհուն,  
 Գտի՛ր գահը, ուր բազմած է մի Աստուած:

Թէ անգոր է սրբել արցունքն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ', և ոչ Աստուած երկնքում:

Փշիր վրան անեղաշունչ սրտով,  
Թող իր գահը դողայ այնտեղ և Աստուած,  
Թող երկինքը մթնի իր վառ աստղերով,  
Տիեզերքը դարձրո՛ւ քառս, աւերած...

Թէ անգոր է այն Աստուածն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ', և ոչ Աստուած երկնքում...

Ձուր ես խառնում ձեր ալիքներն աշուղին,  
Այնտեղ միայն ՚ի՛ն օրհրի խոհեր կան,  
Դու խօս գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,  
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՛նչ տեսան...

Երբ անգոր է այն Աստուածն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ', և ոչ Աստուած երկնքում...

Անցիր հանդարտ շիրիմների վրայից,  
Հողի տակ էլ թշուառները քուն չունին.  
Շարան-չարան հողաթմբի խորքերից,  
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւագին...

Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ', և ոչ Աստուած երկնքում:

Խօսի՛ր քնար... արար-աշխարհ թէ լռի,  
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում,  
Կոյր աշուղը հառաչանքի պարտք ունի  
Թշուառութեան ու անէծքի վայրերում:

Այսքան չարիք թէ մոռանան մեր սրգիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարգայ նախատինք:

Երեք լար կայ, մէկը մէկից սգաւոր,  
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,  
Եւ երրորդը — այն ամենից թունաւոր,  
Անէծք ունի իր թրթռուն խաղերում:


Այսքան չարիք թէ մոռանան մեր սրգիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարգայ նախատինք:

Սեւ բռնութեան, աւերածի զինուորներ,  
Խոպան, աւեր, բոց փռեցիք ձեր ստքով,  
Բնակութիւն, չէ՛ն քաղաքներ ու տներ,  
Անապատի վերածեցիք անվրդով:

Այսքան չարիք թէ մոռանան մեր սրդիք,  
 Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարդայ նախատինք:  
 Դիակների վիշտը լացի ու ցաւե՛ր...  
 Քանի՛ դարեր լոկ ողբ ու սուգ ենք ասում,  
 Այժմ անէ՛ծք դահիճներին մարդակեր,  
 Վրէ՛ժ միայն, լոկ վրէժ ենք պահանջում...  
 Այսքան չարիք թէ մոռանան մեր սրդիք,  
 Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարդայ նախատինք:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

### ԷՅ, ՋԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ



Է՛յ, ջա՛ն հայրենիք, ի՞նչքան սիրուն ես,  
 Սարերդ կորած երկնի մովի մէջ,  
 Զրբերդ անո՛ւշ, հովերըդ անո՛ւշ,  
 Մենակ բալէքըդ արուն — ծովի մէջ:  
 Քու հողին մեռնեմ, անգի՛ն հայրենիք,  
 Ա՛խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,  
 Երնէ՛կ ունենամ հազար ու մի կեանք,  
 Հազա՛րն էլ սրբտանց քեզ մատաղ անեմ:  
 Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,  
 Բալէքիդ մատա՛ղ, մատա՛ղ քո սիրուն.  
 Մենակ մի կեանքը թո՛ղ ինձի պահեմ, —  
 Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն, —  
 Որ արտուտի պէս վե՛ր ու վե՛ր ճախրեմ  
 Նոր օրւայ ծէգիդ, ազի՛ղ հայրենիք,  
 Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զի՛լ գովեմ  
 Կանաչ արեւըդ, ազա՛տ հայրենիք...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



Ա Ր Դ Ա Ր Զ Ա Յ Ր Ո Յ Թ

Տ. Զուհաճեան - 8

Andante

հե-րկո որ-դեակ այս քան տար-այ տա-րա-դարձ  
 հե-րկո դա ծան առ-գաթ թեր-զին ոտն ին-կարկ

հա ճի խո-ծարկ զո-լուս ծը-նծր զայ-լե-րին.....  
 թէ-կ զա ճիթ ոչ թար ոչ սուր ոչ ճի զայ.....

ճի-քան ծա ճար թն-ընդ զե-րին ճը-զին:  
 ճըք թա ճըն է կա ծն ծը-քանց շառ տա-տայ:  
 8 al Fine

Allegro

հե-րկո էլ ճեթ ցոյց տալ թէ ճիթ հա-րա զար:  
 հայ թա ճե-րի ա-րի ճիթ ճիթ ու տա-զար

Հերի՛ք սրգեակք, այսքան տարուան տառապանք,  
 Հերի՛ք դաժան անդուծ Քիւրտի սան ինկանք,  
 Քանի խոնարհ գլուխ տաւինք գայլերին,  
 Ա՛յնքան ծանր բռններ գրին մեր լզին:

Հերի՛ք, ելլեմք, ցոյց տանք թէ մենք հարազատ.  
 Հայ քաղերի արիւնքից ենք եւ ազատ,  
 Թեեւ չունինք ո՛չ սուր, ո՛չ բուր, ո՛չ նիզակ,  
 Մեր բահերն էլ կ'անեն նրանց շահասակ:

Մինչ ո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,  
 Նրանք մարդ չեն, այլ գազաններ վայրենի,  
 Մերն է ձիրքը, մերն է սուտումն ու հանճար,  
 Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:

Հերի՛՛ք, ելլե՛՛նք ցոյց տանք, եւլն.:

Նրանց են մեր կոյս աղջկունքը, հարսունքը,  
 Նրանց են մեր ճակատի քրտանց արդիւնքը,  
 Նրանց սուրի ծայրն է կարծես մեր հոգին,  
 Նրանց գամբուր մեզնից շատ է թանկագին:

Հերի՛՛ք, ելլե՛՛նք ցոյց տանք, եւլն.:

Մենք կզբայրներ ունինք հեռու տեղերում,  
 Նրանք մեր վրայ լռիկ արցունք են թափում,  
 Չեն խնայել թեւ ու թիկունք, կը հասնին,  
 Շուտով կուզան կը միանան սուրբ գործին:

Հերի՛՛ք, ելլե՛՛նք ցոյց տանք, եւլն.:

ՄԵԱԿԵԱՆ

Ե Ր Գ Հ Ա Յ Ր Ե Ն Ի

Andante

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն  
 Յետ դառնաշունչ ձմերայնւոյն,  
 Եւ ի գաւառն իմ հայրենի  
 Գեղածիծաղ դառնայ գարուն,  
 Մինչ բոյր ի բոյր փլթթին ծաղկունք  
 Եւ ճրուռողին նորեկ ծիծուռնք,  
 Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ,  
 Ո՞վ ցանկալիդ իմ Հայաստան:

Ո՛չ Հելուեհեան ինձ դաշտավայրք  
 Եւ կամ զըւարթ մարգագետինք,  
 Ոչ քան ըզքեզ չքնաղագեղ  
 Իտալական պայծառ երկինք.  
 Հեռի ի քէն պանդուխտ գալով,  
 Քոյովըդ յար տապիմ անձկով,  
 Ի խանձարուրդ իմոց կենաց,  
 Ո՛վ Հայաստան, առնեմ ես դարձ:  
 Գայցեն աւուրք՝ ուր մանկութեան  
 Անկցի տիոցս իմ դեղ դալար,  
 Եւ յինէն խոյս տացեն վայելք  
 Կենաց թեթեւ ի գարշապար,  
 Ուր հէգ Մուսայս մասն ի յերեր  
 Մոռանայցէ երգել ըզսէր,  
 Զնինջ ի ծոցդ առնում յայնժամ,  
 Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Մ. ՊԵՇԻԿԵԱՇԵԱՆ

Ն Ա Զ Է Ի Օ Ր Օ Ր Ը

Andante

Քո սիր իմ — Բա լիկ — օ-րոր իղ — ա-րա  
 դու լաց մի — Լի — սիր — ես-շատ եմ լա ցել  
 Կոյր Կը ուռնկ — Եւ — թը — սուգ ու շի — Լա — շով  
 Լի. յոր լու — Եւ — թու.Ս — իր թաղ Կու — թա — ցան.  
 մեր սեւ ծր — Կըն — թով — Ե կան ածց կա — ցան,  
 դու լաց մի — Լի — սիր — ես շատ եմ լա — ցել :

Քընի՛ր, իմ բալիկ, օրոր իշ արա,  
 Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել:

Կոյր կըռուենկները սուղ ու շիւանով  
Մեր սեւ երկընքով կկան անց կացան,  
Ա՛խ, մեր լեռներում նրանք կուրացան,  
Դու լաց մի լինիր, ես շա՛տ եմ լացել:

Հողմն է հեծեծում սև անտառներում,  
Անտէր մեռելի սուգն է այն, բալի՛կ,  
Անտէր ու անթաղ մեռելները շատ,  
Դու լաց մի լինիր, ես շա՛տ եմ լացել:

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,  
Սև անապատում ծունկ չսքեց, մընաց,  
Այն մեր աշխարհի դարդ ու գուլումն է,  
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել:

Գայլերն են ոռնում հեռու դաշտերում,  
Մի՛ վախեր, բալիկ, քընիք, սուս արա,  
Մարդի ձայն չըկայ, ո՛չ շունչը թունտ,  
Դու լաց մի՛ լինիր ես շա՛տ եմ լացել:

Դալսեկ շրթունքիդ իմ կաթը սառեց.  
Գիտեմ, այն դառն է, չես ուզում. բալի՛կ,  
Ա՛խ վըշտիս թոյնն է քամուել նըրա մէջ,  
Կուրծքըս ցաւոս է, ես շա՛տ եմ լացել:

Կաթիս հետ մէկտեղ սև վիշտըս ծըծի՛ր,  
Հոգուդ մէջ թող նայ սև վըրէժ դառնայ,  
Ծըլի՛ր, բոյ քաշիր, բոյիդ ես դուրբան,  
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել:

Յուլունք եմ շարել, կապել օրոցքիդ՝  
Չար աչքերի դէմ, մեր շար դուշմընի,  
Քընի՛ր ու աճի՛ր, շո՛ւտ արա, բալի՛կ,  
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել:

Քընի՛ր ու աճի՛ր, թիկունքիդ դուրբան,  
Եւ ճամբէ՛դ գնա— հըսկայի՛ ճամբէն.—  
Մենք գութ չտեսանք, դու խրո՛խտ անցիր,  
Եւ լաց մի լինիր, ես շա՛տ եմ լացել:

Երկաթ կըրուենկով, թունաւոր օձի  
Գըլուխը փըշրիք անողորմ օձի,  
Հըգօր ոտքիդ տակ շարիքը դողայ,  
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել:

Քընի՛ր, իմ բալիկ, օրօր ի՛չ արա,  
Դէ՛հ, շո՛ւտ, բո՛յ քաշիր, ես շատ եմ լացել...

## Հ Ա Յ Ա Պ Ր Ի Ն Ք



ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ

Հայ ապրինք, եղբարք, մարդ-  
կութեան մէջը,

Հայ կնքեր է մեզ պատմու-  
թեան էջը,

Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն  
երկինք, —

Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք. — Մեր հայրն է  
այն զիւցազուն,

Որ զԱզատութիւն սովրեցուց  
մարդուն,

Ու մեզ վե՛հ անուն մը տուաւ  
բաժինք, —

Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ. — Մեր  
հողուն վերան,

Աստուած է քալեր, հանելով  
զկեղամ,

Մեր լեզուն ստեղծեր, խօսեր է նախ ինք, —  
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նայն ունին օրրան,  
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,

Կըրօնից նախկին սեղան է Մասիք, —

Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ա՛չ միայն յերկիր,

Այլ և յեթերց մէջ շողայ լուսալիր,

Քաջ Հայկին աստեղք անմահ են երկինք, —

Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Մեր քաղցր հայրենիք, մեր թագ, գաւազան,

Ամպեր են ծածկեր արեւի նման,

Յուսացէ՛ք, արեւ կուտան մեզ երկինք, —

Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Ո՛չ, ճակատագիր մեր չէ միշտ տըխուր,

Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր,

Նոր երջանկութեան ապագայ մ'ունինք,—  
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբա՛րք,  
Կարենան պարծիլ որ դմեղ ունին հարք,  
Չըլլանք հայ անուան, չըլլանք նախատինք,—  
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:


Հա՛յ ապրինք.— Օր մը յաղթական մահուն  
Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն,  
Ո՛հ, այն օր մեզի շուտ ծագէ երկինք,—  
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ

## ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳԸ

Արի՛ իմ սոխակ, թո՛ղ պարտէզ մերին,  
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.  
Բայց նա լալիս է.— դու, սոխակ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզէ արբացու դառնալ:  
Եկ, արեղածագ, թո՛ղ արտ ու արօտ,  
Օրօրէ տղիս, քընի է կարօտ.  
Բայց նա լալիս է, դու, ձագուկ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:  
Թո՛ղ դու տատրակիկ, քո ձագն ու բունը,  
Վստճուով տղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:  
Կաշաղակ՝ ճարպիկ, գող, արծաթասէր,  
Շահի զրուցով որդուս քունը բեր.  
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի՛ գալ,  
Իմ որդին չուզէ սովազար դառնալ:  
Թո՛ղ որսըդ, արի, քաջասի՛րտ բազէ,  
Քու երգը դուցէ իմ որդին կ'ուզէ...  
Բազէն որ եկաւ՝ որդիս լուցաւ,  
Ռազմի երգերի ձայնով քնացաւ:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ



ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱԶ ՎԱՆՔ

## ՂԱՐԻՊ ՄՇԵՑԻ

Ես մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէ,  
 Ձեզ շատ բարեւ բերեր եմ Հայի գեղերէ.  
 Ախպէրքըս ինձ զրկեցին դէպի էս կուման,  
 (Մի վախնաք, չսուղեմ ձեր մանէթն ու թուման).  
 Վարազայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր,  
 Խղճացէք Հայ ազգիս, տուէք մէկ-մէկ թուր:

Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշի,  
 Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշի,  
 Օր կ'ըլլայ՝ գերեվար կ'անէ մեր տըղոց,  
 Օր կ'ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց.  
 Թէ չ'օգնէք՝ մենք ալ կ'ըլլանք ցիր ու ցան,  
 Խղճացէք հայ ազգիս, տուէք մեզ հրացան:

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կայանք,  
 Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,  
 Խաչը ոտքով փշրեցին, տեղը դրին լուսնակ,  
 Խեղճ Հայն օրն ի բուն ծաղր է ու ծանակ.  
 Ո՛վ եղբարք, բերեր եմ ձեզ ա՛յսպէս սև բօթ,  
 Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօղ:

Այսքան շատ տանջանքին ի՞նչպէս դիմանանք,  
 Մինչև ե՞րբ ձեր դիմաց անոք պիտ' մնանք,  
 Մեր ազգը տէր չունի Սլավոնի նման,  
 Բարի՛ դուք ըլլայիք մեզի օգնական.  
 Հոգիներս տրորած է, ջաներըս ցաւոտ,

Չուղենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ:  
 Շատ տառապանք քաշեցինք դուշմանի զէնքէն,  
 Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,  
 Առանց ատոր աշխարհքը մեր չէր բազմամարդ,  
 Հիմի փուշ կը բըսնի ուր առաջ էր վարդ,  
 Բայց մենք ձեր սնտուկի փողին կարօտ չենք, —  
 Հա՛յ կղբարք, շնորհեցէք դուք մեզ մէկ մէկ զէնք:

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,  
 Ախորժ ընտանի իմ հոգու համար.  
 Առաջին դու խօսք տկանջիս հասած,  
 Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.  
 Մանկական լեզուիս թոթովանք տկար,  
 Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,  
 Այդ ի՛նչպէս քաղցրը հնչում ես ինձ դու,  
 Կամիմ աւելի քաջ ծանօթանալ  
 Քս ճոխ գանձերին, հոգով հայանալ,  
 Ասես թէ ահա կանչում էին ինձ  
 Պապերն ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչի՛ր, դու հնչի՛ր այժմ և յաւիտեան.  
 Մայրենի լեզու, բարբառ սիրական,  
 Արի՛, բարձրացիր հնուլիկան փոշուց,  
 Դու, իմ հայ լեզու, մոռացուած վաղուց,  
 Զգեցիրնոր կեանք սուրբ գրուածներով,  
 Որ ամենայն սիրտ վառի քս սիրով:

Ամէն տեղ փչում է Աստուծոյ շունչը,  
 Սուրբ է, այո՛, միւս, այլ ձե ու սճը,  
 Բայց թէ աղօթել, դոհանալ պէտք էր,  
 Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,  
 Իմ երանական մտածութիւնքը —  
 Ապա կը խօսիմ իմ մօրըս խօսքը:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Andante

Հետևողութեամբ ԱԼԵՔՍ. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆԻ

հայ - րիկ հայ - րիկ. քո հայ - րն - Եիք. վաս պառա կա -  
 -ն ըն - ր աշխարհ. վարդի - փո - խան բնզ փուշ  
 քն բա — ցա ընր դ դա — ան խորհա զա — ր

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք  
 Վասպուրական մեր աշխարհ,  
 Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,  
 Ցաւերդ դառան բիւր հազար:  
 Մայիսն եկաւ սոխահներով,  
 Վարդի թըփիկ որոնեց,  
 Փոխան թըփի փըշեր դտաւ,  
 Լալահառաչ ձայն հանեց:  
 Հայրիկն ասաց. — «Իմ հայ -  
 րենեաց  
 Փուշն անուշ է քան զվարդ,  
 Եւ այն փշոց մէջը դարձեալ  
 Կ'որոնեմ ես սիրուն վարդ:  
 «Այն սայրասուր փշերն ամէն,

Փուշն զկապեցէք շար ի շար,  
 Թողէ՛ք դլխիս պսակ կապեն,  
 Որուն ճակատս է յօժար»:  
 Հայրի՛կ, հայրի՛կ, քո սուրբ  
 ճակատ  
 Արիւն արցունք են, ո՛հ, միշտ,  
 Փթթեալ վարդից կարմիր  
 թերթեր,  
 Կը պսակին փառօք դարդ:  
 Որքան ստոր դաւեր լարեն  
 Սեւակունչ ազաւաներ,  
 Չէ կարելի արծիւն իւր բարձր  
 Դիրքիցն յերկիր վար բերել:

ՀԱՅՐԱՊԵՏ ՃԱՆԻԿԵԱՆ



ՍՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

իմ սի-րե-լի զա-ւա-կուն-քըս ես ո՞ւր գի-մեմ, ո՞ւր  
կը թա-փա-ռին օ-տար աշ-խարհ:

փը-ն-տը — ռեմ, կը ծա-ռա-յեն այ-լոց խո-նարհ

ե— կայք որ-գեակըք իմ ջեր մօրն այ-ցե-լու թեան ջեր:

Տօ — ըն այ-ցե-լու — թեան:

Իմ սիրելի գաւակունքըս  
կը թափառին օտար յաշխարհ  
Ես ո՞ւր գիմեմ, ո՞ւր փնտռեմ,  
կը ծառայեն այլոց խոնարհ:  
Եկա՛յք որդեակք իմ,  
Ձեր մօրն այցելութեան:  
Դարեր անցան լուր մը չառի,  
իմ քաջերըս մեռան կորան,  
կուլամ, արիւնըս կը սառի,

Մէկը չունիմ տայ ինձ դարման:  
Եկա՛յք որդեակք, եւ լն. :  
Արիւնս ցամքած, սիրտս մաշած,  
Դէմքս է տըխուր մինչ  
յաւիտեան,  
Եւ կարօտոյն իմ որդեկաց  
Պիտի իջնեմ սու գերեզման:  
Եկա՛յք որդեակք, եւ լն. :  
Եւ դու հովիւ թափառական,



Կ'երգես տխուր ի մէջ հովտաց,  
 Ե'կ արտասուենք թանգ կո-  
 ըրստեան,  
 Տըխուր մահուան մեր որդեկաց:  
 Եկա՛յք որդեակի, եւլն.:

Գընա՛ հեռու աչքէս ի բաց,  
 Յետին ողջոյնս տար զաւակացս,  
 Զի կեանքիս մէջ յոյսս է  
 մեռած:  
 Եկա՛յք որդեակի, եւլն.:

Իսկ դու կռունկ իմ հայրենեաց,

### ՄԱՀ ՔԱԶՈՐԴԻՈՅՆ

Դու զո՞վ խնդրես, մա՛յր իմ անուշ,  
 Ե'կ, մի դողար, մօտեցիր հոս,  
 Անլաց աչքով դիտէ զորդիդ  
 Ու իւր վէրքերն արիւնահոս:

Քրդաց մայրեր բող լան, ու դուն  
 Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ  
 Կակուղ ձեռամբ փայփայելով,  
 Մանկիկ մարմնոյս հանգիտա տայիր՝  
 Իրրեւ հրեշտակ նըւագելով. —

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն  
 Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

«Նորեկ որդւոյս կենացն արեւ  
 Զեզի համար փայլի, Հայե՛ր»,  
 Այսպէս յայնժամ դու երգէիր,  
 Օրօրոցիս նըստեալ քովեր:

Անոնց համար շիջաւ, ու դուն  
 Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,  
 Սակայն, մա՛յր իմ, նայէ չորս դին,  
 Զարիւնուշտ սա քիւրտերըն տե՛ս,  
 Հազարներով փռուած գետին:

Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն  
 Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Մըռընչեցին ինչպէս վիշապ  
 Ու մեր վրայ յարձակեցան,  
 Ո՛վ հայրենիք ի հուր, ի բոց,  
 Քո համար մեր սիրտք վառեցան:

Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն  
 Ուրախ յուրեր սար ի Զեյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,  
 Զի չէ՛ մեռած Հայոց կըրակ  
 Ու ցնծացին այնչափ զոհեր,  
 Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ:

Խնդաց Մասիս, մա՛յր իմ, ու դուն  
 Ուրախ յուրեր սար ի Զեյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,  
 Հատուցանես զայն սիրուհւոյս,  
 Վերջին անգամ գրկեմ մեր հող,  
 Ուր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս:

Խաչ մը սնկե վրաս, ու դուն  
 Ուրախ յուրեր սար ի Զեյթուն:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## Ե Ա Ր Ա Լ Ի Բ Լ Բ Ո Ւ Լ

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր,  
 Եարալի բլբուլ կմ.

Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ,  
 Եար արի՛, տուն արի՛, շուտ արի, բլբուլ,  
 Սարերի գիւլն կմ:

Ա՛խ իմ դարդս շատացել է չեմ կարող,  
 Եարալի բլբուլ կմ.

Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,  
 Տուն արի՛, շուտ արի՛, եարալի բլբուլ կմ,  
 Սարերի գիւլն կմ:

Ա՛խ, անբաղդ հայդուկիս, Տէր իմ, դու խղճա,  
 Եարալի բլբուլ կմ.

Մի՛ թողնիր քուրդի գնդակով զուր գնամ կորչեմ,  
 Եար արի՛, տուն արի՛, շուտ արի՛, բլբուլ կմ,  
 Սարերի գիւլն կմ:



ՕՐՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ


Andante

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԳ.

Ա - ՄԷ հա - յԻ սրբ - տից ԲԸ - Խաժ ԸԸ - սիր այս ձայնն  
 ո՛վ ————— Աստուած, Եր - կար կեանք տուր հայ - բա - ղն - տին.  
 Եր - կար օ - ղեր հա - յոց հոյր Տէր, ան - սա - սանդ դա - հնս  
 դու սրբո՛ւ, բո՛ իսկ կիւմ - ձած Մա - յր Ա - րո՛ւս

Ամէն: Հայի սրբախց բրխած,  
 Լքսիր այս ձայնն, ո՛վ Աստուած,  
 Երկար կեանք տուր Հայրապետին,

Երկար օրեր Հայոց Հօր,  
Տէ՛ր, անասան պահես դու միշտ  
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:




Ն. Ս. Ս. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Մնացե՛ս բարեաւ, սէր իմ, սէ՛ր,  
Հրաւէր մարտին որոտաց,  
Թէ չեմ քաջաց ես ընկեր՝  
Չըկայ բաժին ինձ փառաց:  
Մի՛ լար հողւոյս իմ հատոր,  
Գուցէ դառնամ, ո՛հ, մի՛ լար,

Թ՛անկայց մարտին ես ի գոռ,  
Տեսցուք յերկինս մեք զիրար:  
Եղբայրասպան չէ նախանձ,  
Որ բորբոքեալ յիս վառի.  
Ի սուրբ հողոյ հայրենեաց  
Բառնամ ըզլուծ օտարի:

ԱԿԻՆԻ ԵՐԳԸ



ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՅԸ  
Ս. ԷԶՄԻԱՍՏՆԻ ՄԵՋ

Առաւօտ արշալոյսին  
Չորս կողմերնիս պատեցին,  
Բոցաճաճանչ գնդակներ  
Կարկուտի պէս տեղացին։

Արիւններու ներկերով  
Խեղճ Ակինը ներկեցին,  
Եւ Հայերուն դիակներ  
Ասդին անդին փռեցին։

Ա՛խ, Հայրիկճան, ո՞ւր տեղ ես,  
Էջմիածին բաղմեր ես,  
Հայը արիւն է թափեր,  
Եկուր Հայաստանը տես։

Կացիններու հարուածով  
Դուռ պատուհան կտարեցին,  
Չը թողուցին փայլուն տուն,  
Բոլորն ալ այրեցին։

Ա՛խ, Հայրիկճան դուն եկուր  
Սուրբ Խաչը ձեռքըդ եկուր,  
Տէրը խիստ զօրաւոր է,  
Յոյսըդ վերան դիր եկուր։

Պ Ա Ր Զ Ի Ր Ա Ղ Բ Ի Ի Ր

Պարզի՛ր աղ-բիւր բր-դի տը-ղի՞ն ջուր տա — նի՛մ։

Պարզի՛ր պարզի՛ր բէ-կի տը-ղի՞ն ջուր տա — նի՛մ։ ջուր տա — նի՛մ։

Պարզի՛ր, աղբիւր, քրքի տըղին ջուր տանեմ,  
Պարզի՛ր, պարզի՛ր, բէկի տըղին ջուր տանեմ։  
Աղբի՛ւր, գիտե՞ս, Քիւրդը մեզի ի՞նչ կ'անէ,

Կը կողոպտէ, կը հալածէ, կը սպաննէ:  
 Աչքըս բացի՝ սուգ ու շիւան ես տեսայ,  
 Նամէրդ Քիւրդին, ո՛հ, զոհ գընաց իմ փեսայ:  
 Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,  
 Մեր սեփական թագաւորներն ունէինք:  
 Գահ ու փառքից, ազատ կեանքից զրկուեցինք,  
 Արիւնարբու թշնամու ձեռք մատնուեցինք:  
 Աղբի՛ւր, հիմա սեւն է պատեր մեր աշխարհ,  
 Զուլո՛ւմ, զուլո՛ւմ, ջարդ ու սարսափ ու խաւար:  
 Դէ՛հ, շուտ պարզի՛ր, բէկի աըղին ջուր տանեմ,  
 Պարզի՛ր, պարզի՛ր, Խան Մուրադին ջուր տանեմ:

### ՄԷԿ ՍԻՐՏ ՄԷԿ ՀՈԳԻ

Միութեան սուրբ դրօշակը,  
 Մասիս լերան կատարից,  
 Մածանում է դէպի երկինք,  
 Փողփողելով հրճուալից...

Հնչակ, Դաւենակ մեկ սիրտ մեկ հոգի դարձան,  
 Հայոց դաւոս ու լերինք, նոր կեանք ստացան:

Նայեցէք Հայք այն դրօշին,  
 Մեզ կանչում է կռուի դաշտ,  
 Եւ միութեան սուրբ հոգին  
 Մեզ օրհնում է ջերմ առատ:

Հնչակ, Դաւենակ մեկ սիրտ մեկ հոգի դարձան,  
 Հայոց դաւոս ու լերինք, նոր կեանք ստացան:

Դիմենք յառաջ մենք անվեհեր,  
 Մեզ հետ երկնից սեր ովբէք  
 Գունդ-գունդ իջնեն հուր ու սուրով,  
 Ազատելու մայր հայրենիք:

Հնչակ, Դաւենակ մեկ սիրտ մեկ հոգի դարձան,  
 Հայոց դաւոս ու լերինք, նոր կեանք ստացան:

Կ Ռ Ո Ւ Ն Կ

ՔԱՂՅՐ

Դաշնաւորեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Կռունկ ուստի-----կու—գաս----- ծա—ռայ եմ .  
 Ճայ—նի-----կռունկ  
 մեր աշխարհէն,-----խաղրիկ մը—չու-----  
 նիս-----կռունկ մեր աշխարհէն-----  
 խաղրիկ մը---չու-----նիս-----

Կռունկ, ո՞ւստի կուգաս, ծառա՛յ եմ ձայնիդ,  
 Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:  
 Մի՛ վազեր երամիդ շուտով կը հասնիս.  
 Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:  
 Թողել եմ ու եկել մըլքերս ու այգիս,  
 Քանի որ ա՛խ կ'անեմ; կու քաղուի հոգիս,  
 Կռունկ, պահ մի կացիր՝ ձայնիկդ ի հոգիս  
 Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:  
 Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,  
 Ձայնիկդ անուշ կու գայ քան ըզջրի տալապ.  
 Կռունկ, Պաղտատ իջնուս՝ կամ թէ ի Հալապ,  
 Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:  
 Սըրտերնիս կամեցաւ ելանք գընացանք,  
 Այս սուտ աստուորին տէրաէրն իմացանք,  
 Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք,  
 Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:

Աստուծորիս բաներն կամաց կամաց է,  
Մի՞թէ Աստուած լըսէ դռնակն բացցէ,  
Ղարիպին սիրտն է սուգ, աչերն ի լաց է,  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուած՝ քեզնէ խնդրեմ մուրվաթ ու քէրամ,  
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վարամ,  
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Ո՛չ զլուր օրն գիտեմ, ո՛չ զկիրակին,  
Զարկած է զիս շամփուրն բռնած կրակին,  
Այրիլս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտ եմ.  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Հաւատով պառկեր եմ, ներքեւս է Փըշխի,  
Հոտոյն ալ չեմ քաշուիր, կը թուի մուշկի,  
Շատ հասրէթ մընացանք անկողնու առչկի,  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Այսօր ղարիպութիւնն միակ միաւոր,  
Հոգւով և մարմնով ես եմ մեղաւոր,  
Սուրբ Սարգիս օգնական՝ ձերմակ ձիաւոր.  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտատու կուգաս՝ կ'երթաս ի Սէհրադ,  
Թղթիկ մի գրեմ, քեզ տամ ամանաթ,  
Աստուած թող վկայ լինի քո վըրադ,  
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելիաց:

Գրել եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,  
Օրիկ մի օրանց զաչերս չը բացի,  
Սիրելիք, ձեզանէ կարօտ մնացի.  
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աչունն է մօտեցել, գնալու ես թէպտիր,  
Երամ ես ժողվել հաղարներ ու բիւր,  
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.  
Կռունկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացի՛ր:

### ԽԱԻԱՐԵԼ ԵՄ

Adagio

խա-ւա-րել եմ որ տես գի-ղեր-իմ չորս  
կողմէ փո-թո թիկ. Չու նիմ ե-ս սէր չու-նիմ ես  
սէ-ր ես սիրում եմ հայ-րն-նիբ հայ-րն-նիբ:

Խաւարիչ եմ որպէս գիշեր,  
իմ չորս կողմս է փոթորիկ.  
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ  
սէր,  
Ես սիրում եմ իմ հայրենիք:  
Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,  
Որդեկորոյս ծնողներ,  
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր  
Թափում են յորդ արցունքներ:


Ինձ մի' սիրիր, ինձ մի' սիրիր,  
Ես շատ ու շատ փոխուել եմ.  
Ա'ն թաշկինակդ սրբիր աչերդ,  
Ես քեզ սիրել կարող չեմ:  
Մնա'ս բարեաւ, իմ աչքի լոյս,  
Սէրդ լինի ինձ խրախոյս,  
Արդ արտասուք ես պիտ'  
Թափեմ,  
Որ իմ ցաւերս ըսփոփեմ:

Ս. ՇԱՀԱԶԻԶ

### ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատութեան սիրոյն համար  
Շատ արիւններ թափուեցան,  
Անմեղ հայրեր ու զաւակներ  
Եկան այստեղ թաղուեցան:  
Ահա եղբարք ես ալ կ'երթամ  
Ազգիս համար մեռնելու,  
Ազատութեան սիրոյն համար  
Ամբողջ կեանքս գոհելու:  
Գերեզմանիս հողին վրայ  
Թափէ արցունք իմ մայրիկ,

Սըփռէ ծաղիկ բուրումնաւէտ  
Նահատակ եմ ես յաւէտ:  
Ահա այսօր հայ եղբայրներ  
Կուգան այստեղ ողբալու,  
Նահատակաց հողին վրայ  
Աղի արցունք թափելու:  
Ո՛վ եղբայրներ, դուք ալ ելէք  
Գերեզմանի խորերէն,  
Ուրախացէք և ցնծացէք  
Ազատութեան գոշերէն:



ԱՏԱՆԱՅԻ ԱՐԶԱԻՐԲԸ (1909)

Նկար՝ ձիրութեանի

Բիւրաւոր Հայեր անխնայ մեռան:

Անզգայ անօրէն վատը որք թողուց  
 Զաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,  
 Ճէվատն անզգամ, Ատիլը գձուձ,  
 Կերան, կշտացան Հայու արիւնէն:

Պարապ է աւա՛ղ, հարսւտ Ատանան,  
 Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,  
 Միայն ապրեցաւ Հաճընը սիրուն,  
 Ինչո՞ւ էի շարժիր ապառաժ Զէյթուն:

## ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Կոտորածն անգութ, Հայերը  
 թող լան,  
 Անապատ դարձաւ շքեղ  
 Ատանան,  
 Կրակն ու սուրը և անխիղճ  
 թալան,  
 Ռուբէնի տունը, ա՛խ, ըրաւ  
 վերան:

Ալ մի՛ տար լսյսըդ պայծառ  
 արեգակ,  
 Լուսին, շուրջ կապէ դուն  
 սուգի մանեակ,  
 Անցաւ մեր երկրէն հարաւի  
 խորշակ,  
 Զորցուց, թռամեցուց ծառ,  
 ծաղիկ համակ:

Բոպէ մը հանցաւ ու Հայոց  
 խեղճեր  
 Ինկան սուրին տակ խուժանին  
 ահեղ,  
 Ժամեր ու դպրոց բոցի մէջ  
 կորան:

Երեք օր գիշեր կրակը մէջէն,  
 Թշնամունսն սուրը, գնդակը դրսէն,  
 Զնջեցին Հայը երկրին երեսէն,  
 Արիւն կը վազէ մեր ջինջ գետերէն:

Ա՛լ բաւ է որքան վատերուն լուծը  
 կրեցինք, թողունք մեր լացն ու կոծը,  
 Օտարին տունը ա՛լ չէ ապահով,  
 Հայ հողերու վրայ մեռնինք մենք փառքով:

### Հ Ա Յ Ե Մ Ե Ս

Հայ եմ ես, մեռնիլ գիտցող Հայ եմ ես,  
 Մեռնելով ապրիլ գիտցող Հայ եմ ես,  
 Ո՛հ, Հայ եմ ես, նախահօրս Հայկին պէս,  
 Ազատ ապրող, ազատ մեռնող Հայ եմ ես:

Հայու վոճեր իմ կրծքէն  
 Հանեն բոցեր սրսակեզ,  
 Հայ ազգութեան նուիրուած՝  
 Մահ փնտռող զոհն եմ ես:

Հայ եմ ես, սարսափեցէք իմ դէմքէս,  
 Վատ թշնամուն մահ կը թռչի իմ գէնքէս,  
 Քիչ մ'առաջուայ ստրուկը կամ գերին չեմ ես,  
 Քաջ Արամայ կատղած թողը՝ Հայ եմ ես:

Հայու վոճեր, եւայլն:

### ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Երբ որ մենք մեծնանք,  
 Պիտեր ունենանք,  
 Պիտի ուզենք որ  
 Ընեն մեզ զինուոր:

Ըլլալ անվեհեր,  
 Պահել մեր կարգեր,  
 Այժմէն պիտ' սորվինք  
 Որ լաւ մը կուսինք:

Հրացանը ուսին,  
 Թուրը մեր մէջքին,  
 Խրոխտ քայլերով  
 Պիտ' քալենք սիրով:  
 Մենք պիտի բաղձանք,  
 Որ մերին պարծանք  
 Ըլլայ յաղթութիւն  
 Եւ ոչ պարտութիւն:

Հ Ա Յ Ո Ց Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ն

Երնէ՛կ թէ այս նոր տարին  
 Վերջ տար Հայի ցաւերին,  
 Չարը կորչէր ու բարին  
 Բուն դընէր մեր սրտերին:

Երնէ՛կ թէ այս նոր տարին  
 Ազատ շնչէր Հայաստան,  
 Եւ շուրջ Մասիս մեր սարին  
 Փայլէին վարդ—անդաստան:

Երնէ՛կ թէ այս նոր տարին  
 Ոտքի կանգնէր Հայաստան,  
 Ու կիսաքանդ մեր կարին  
 Լինէր քաղաք մեր ոստան:

Երնէ՛կ թէ այս նոր տարին  
 Հայ սրտի մէջ ուժ հոսէր,  
 Ապաւինած իր սրտին,  
 Հայը քիւրդէն չը սարսէր:

Երնէ՛կ թէ այս նոր տարին  
 Հայ ազգ ի մի գումարուէր,  
 Ի գլուխ կարնոյ հայ ամբին  
 Հայի դրօշակ ծածանէր:

Հայե՛ր, երբեք չերկմըտինք,  
 Կը կատարուի այդ ամէն,  
 Եթէ ի սպառ մենք հանենք  
 Փոքրոգութիւն մեր սրտէն:

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ

Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Նպատակիս հասնիմ միայն,  
 Թող զիս հանեն կախաղան,  
 Կախաղանէն խեղդուկ ձայնով,  
 Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան:

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու  
 հոգիս  
 Քեզ նուիրեմ ընդունէ,  
 Թէ կարելի, թող ես մեռնեմ,  
 Հայրենիքըս, դուն ապրէ:

Անոր սիրուն բանտն ալ  
 դրուիմ,  
 Պալատ է ան ինձ համար,  
 Զեռքերս ոտքերս շղթայ  
 զարնեն,  
 Երջանկութիւն է ինձ ան ալ:  
 Թէ մինչև իսկ աքսորուիմ ալ,  
 Թափառական ընէ զիս բաղդ,  
 Հայաստանի սիրոյն համար,  
 Փշոտ վայրեր կ'ըլլան դրախտ:

Ա՛խ, Հայաստան, դուն սիրուն  
 մայր,  
 Մինչ ե՞րբ այսպէս քու որդիք,  
 Քեզնէ հեռու պիտ' հառաչեն,  
 Երբ դու այստեղ անտէր կը  
 մնաս:

Ե՞րբ պիտի գայ իմ թագաւոր,  
 Որ ես հասնիմ իմ ուխտին,  
 Դրօշակներ ծածան ծածան,  
 Ականակուռ թագը գլխին:

Ա՛խ, Հայաստան, աչքդ  
 դարձուր  
 Քեզ փնտրող որբերուն,  
 Պէս պէս ցաւօք կը տանջուին,  
 Դարման եղիր Հայ քաջերուն:  
 Վախնամ, մեռնիմ ես այս  
 ցաւով  
 Ու իջնեմ սեւ գերեզման,  
 Գերեզմանէն մեռած ձայնով  
 Պիտի գոռամ, վա՛խ, Հայաստան:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ա Ր Ո Ւ Ն

Andante con calore

Եղանակ՝ վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅԻ

*mf*  
 Ես իմ աշխարհի — գա — րու նը կու — զեմ, զը — ւարթ ու վը — սեմ  
 գե — տա — կը փր — փուր հաւ — րե — թը կայ — տառ, ծա — դի — կը տայ — ծառ...  
*poco a poco cresc. Animato*  
 Այս օ — տար եր — կրի — գա — րու նն է մը — ռայլ, ծա — դի — կը ան —  
 փայլ, ա — րե — ւը կը — րակ, գե — տա — կը տը — խուր թըռ — շուն — նե — թը լուռ:  
*piu mosso*  
 Մեր սի — րու ն — ձո — րի գե — փեւոն է թըն — քուշ ա — րե — ւը ա — նուշ:  
 Այն իմ աշխարհի գարնան եմ կա — րօտ, ա — նուշ ու հո — տոտ: —

Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ  
 Զուարթ ու վրսեմ,  
 Գետակը փրփուր, հաւքերը կայտառ,  
 Ծաղիկը պայծառ:  
 Այս օտար երկրի գարունն է մը ռայլ  
 Ծաղիկը անփայլ,  
 Արեւը կըրակ, գետակը արխուր,  
 Թռչունները լուռ:  
 Մեր սիրուն ձորի զեփիւռն է քնքոյշ,  
 Արեւը անուշ:  
 Ա՛խ, իմ աշխարհի գարնան եմ կարօտ,  
 Անուշ ու հոտոտ:

# ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Larghetto

Ազնիւ ընկեր մե-ռա-նում եմ, Բայց հանգիստ եմ ես հոգւոյ  
 իմ թըշ-նա-միքս ես օրհ-նում եմ օրհ-նում եմ քեզ Աստուծով:



ՍՄԻՐԱՏ ՇԱՀԱԶԻԶ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,  
 Բայց հանգիստ եմ ես հոգւով,  
 իմ թշնամիքս ես օրհնում եմ,  
 Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ անգին ընկեր,  
 Չգնահատուած ոչ սքից՝  
 Բայց հաւաստեալ անձնանուէր  
 Ազգիս մշակ կը հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չմոռանաս,  
 Անդաւածան չեմ սիրով,  
 Ես սիրել եմ իմ հայրենիք,  
 Գնա և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգին՝  
 Կարեկցարար մտածիր,  
 Ոսկէ գրքոյկն Եղիշէի  
 Քաջ առաջնորդ քեզ ընարիր:

Այնտեղ՝ սուրբ կրօն, ազգ  
 միաբան,  
 Ազատ կամքով ու խղճով,  
 Այնտեղ՝ վարդան, անմահ  
 վարդան  
 Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք, սեղան սրբութեան,  
 Ես Աստուծոյ առաջեւ,  
 Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,  
 Որ ծագէ քեզ նոր արեւ:

Իմ մտերիմ, մահս մօտ է:  
 Բայց հանգիստ եմ ես հոգւով,  
 Որովհետեւ խիղճս արդար է,  
 Ծշմարտութեան ջատագով:


Ս. ՇԱՀԱԶԻԶ



# ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՕՏ

(ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՄՈՌԹԻՎ)

Andante



Ո՛վ անձկալիդ իմ հայրենիք,  
 Դու հեռաւոր իմ օրրան,  
 Աւերակներդ ու վարդենիք  
 Կը կանչեն զիս յաւիտեան:

Նըսեհիս մէջ քեզ կը տեսնեմ  
 Դահիճներու ոտնակոխ,  
 Նահատակներ զարհուրողէմ  
 Կ'երգեն հողուոյս վրէժ ու սխ:

Քեզ կը կանչեմ ես ծովէ ծով,  
 Հայրենագուրկ ու վըտար,  
 Քեզ դանելու ջերմ երազով  
 Կը տոչորիմ անդադար:

Արիւնահոս իմ կարօտին,  
 Ո՛վ դու բաժակ ու խրախոյս,  
 Ա՛հ, արդեօք հ՞րբ պիտի ցաթես  
 Իբրեւ ազատ արշալոյս...

## Օ Ր Օ Ր

Ննջեա, որդեակ, անուշ քնով,  
 Օրօր կ'ասեմ ու նանի,  
 Քնոյ հրեշտակն իւր թեւերով  
 Քո երեսին հով անի,

Օրօր, օրօր իմ զաւկիս,  
 Օրօր, կ'ասեմ հրեւտակիս:

Ննջեա՛, ննջեա, անուշ գաւակ,  
 Շուտ մեծացիր ու մարդ դառ,  
 Հայրենիքիդ լիւր պիտանի,  
 Նորա արեան վրէժն առ:

Գիտե՞ս արդեօք ո՞վ էր պա-  
 պըշ,

Եւ ի՞նչ զործեր նա արաւ,  
 Նա վարդանն էր՝ որ իւր գոր-  
 ծով  
 Հայրենիքին փառք բերաւ:

Քո անունն էլ նոյնպէս վար-  
 դան,

Դու էլ նորան նմանիր,  
 Նորա տուած օրինակով  
 Հայրենիքիդ ծառայիր:

Դէ՛հ մեծացիր ու քաջացիր,  
 Ազգիդ վերայ մտածիր:

Չեւքէդ եկած ամէն բարիք  
 Նորա դու մի՛ խնայիր:

## Ա Ք Ս Ո Ր Ի Ե Ր Գ Ե Ր

Հալածուած ենք Հայաստանի լեռներէն,  
 Ո՞վ չի վախնար հուրով սուրով մեռնելէն.  
 Դար ու սարեր անցանք դադար չունեցանք,  
 Դիակներէն անցանք արցունք չունեցանք:

Արեւին տակ մեռնիլն, Աստուած իմ, վատ է,  
 Պուտ մը ջուրի մեր շրթունքը կարօտ է...  
 Մանուկները կուրծքերուն վրայ մորթեցին,  
 Հորերուն մէջ ողջ մայրերը լեցուցին...

Ո՞ւր է մայրիկ, ո՞ւր է իմին հայրիկը,  
 Չե՞ս գիտեր սր վատ է թուրքին դանակը:  
 Ո՞ւր է, մայրիկ ո՞ւր է անոր դիակը,  
 Արցունքն իջաւ մինչեւ սրտիս յատակը:

Կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,  
 Իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին.  
 Երկ' օր վերջն ալ խեղճ մայրերուն գիտցուցին,  
 Խեղճ մայրերն ալ անմխիթար մեացին:

Մոխիր դարձան այն պատուական տուները,  
 Արիւններով ներկուեցան քարերը:

## Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Արի՛ք, ընկերք, քաջակորով,  
 Ի պատերազմ դիմենք փութով,  
 Մեր սկզբունքն է պաշտպանել  
 Ազատութիւն, զրկանք վանել:

Անգութ դատաստան՝

Արդար ապաստան,

Մեր արիւնն ահա

Կայ վասն թշուառին:

Կեցցէ՛ լեւոն, օձցի լեւոն,  
 Թագ կապեցի տանըս Հայոց,  
 Չէ՛յթուն լիցի մայրաքաղաք,  
 Եւ Կիլիկիա ազատ երկիր:

ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

Moderato

Ե - թէ կա - մեր փր - կել թշուառ հայ - թե - նիք Եսի տիտ  
 կա - մեր մեր անց - նալ փառ - բը գրոտ - նել հար - կա -  
 կա - մեր ի - ռար մեր սիրտն ու հո - գիք Ե - թէ  
 ւոր չէ կու - սակ - գու - թնանց քա - ճան ունի :  
 Ա - թիք նշ - քարք մի - ա - նանք, Բա հա - մա - թնք մեր տան -  
 ջանք, ի սեր երեղոսի հայ աղ - զիմ գործ գը ծննք մեր ճիգ ու ջանք

Եթէ կամինք փրկել թշուառ հայրենիք,  
 Նախ պիտ' կապենք իրար մեր սիրտ ու հոգիք,  
 Եթէ կամինք մեր անցեալ փառքը գանկել,  
 Հարկաւոր չէ կուսակցութեանց բաժանուել:

Արի՛ք, եղբարք, միանանք,  
 Բա՛ւ համարենք մեր քանգանք,  
 Ի սեր նեօուած Հայ ազգին՝  
 Գործ դրենք մեր նիգ ու ջանք:

Մենք Հնչակեան, եղբարք, դուք Դաշնակցական,  
 Մենք երկուքս էլ կու լանք վիշաք հայկական.  
 Արի՛ք, վճռենք, հոգւով - սրտով միանանք,  
 Չեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Արի՛ք, եղբարք, միանանք, եւլն.:

Մի՛ միութիւն և մի՛ վրսեմ գաղափար  
 Մեզ կը սպասեն անհամբեր ու անդադար.  
 Ուխտենք եղբարք, յայտնենք մեր սուրբ միութիւն,  
 Միութիւնս՛վ պէտք է գանենք փրկութիւն:

Արի՛ք, եղբարք, միանանք, եւլն.:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,  
 Ու մեր տըներ իւրեանց ձեռքով քանդեցին.  
 Օտարների սուտ փառքերից շըլացան,  
 Մեզ մատնեցին մինչեւ այժմս գերութեան:

Արի՛ք, եղբարք, միանանք, եւլն.:

## ԳԱՐՆԱՆ ԱՐԵԻ

Moderato

ՔԱՐԼ ՅԵՕԼՆԵՐ

Գար - նան ա - րեի այ - րուն այ - րուն կը ծա - գիս րուն այ -  
 գի - ւտ - րուն ար - տն րուն Ա - մէն սա - րի կու -  
 տաս քա - րե ա - մէն ծա - գի կու - տաս տն - քե լոկ յոգ հա - ճար ա -  
 ճարդ ա - րե րուն ծա գիս րուն չես ծա գիս  
 րուն տա - րա - գիս լոյս առ տուն չի ծա - գիս:

Գարնան արեւ, այգուն այգուն  
 կը ծագիս դուն այգիներուն,  
 Արտերուն.

Ամէն սարի կուտաս բարեւ  
 Ամէն ծառի կուտաս տերեւ,  
 Լոկ մեզ համար, անո՛ւշ արեւ,  
 Դուն չե՛ս ծագիր,  
 Դուն չե՛ս ծագիր,  
 Եւ Հայուն  
 Տարագիր՝  
 Լոյս առաուն  
 Չի՛ ծագիր:

Երկրէ երկիր, օտար տփեր,  
 Տերեւներու պէս ենք թափեր  
 Տարուբեր.

Ամէն ճիւղի կուտաս ծաղիկ,  
 Ամէն գիւղի կուտաս բարիք,

Լոկ մե՛զ համար, անհայրենիք,  
 Դուն չե՛ս շողար,  
 Դուն չե՛ս շողար,  
 Եւ Հայուն  
 Տարագիր՝  
 Լոյս առտուն  
 Չի՛ ծագիր:

Մեր հաւատքի դրօշին յաւէտ  
 Փարած ամուր իրարու հետ  
 Սիրաւէտ.

Պիտի վարենք մեր նաւն ու լաստ,  
 Ծովերէ ծով փոթորկասաստ,  
 Մինչեւ որ ալ ծագի ազատ  
 Հայուն արեւ,  
 Հայուն արեւ,  
 Ու, խրախո՛յս  
 Երկնաթեւ՝  
 Ամէնուս  
 Տայ բարև:

1934

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏ

Դարդլու աշուն սարէն իջաւ,  
 Վաղեց քամին հեւալով,  
 Չըկա՛յ ծաղիկ, վարդը թօշնաւ,  
 Ծառը խշշաց սգալով:

Պարզ երկինքը մշուշ հագեր՝  
 Մտորում է տարագիր,  
 Կռունկների շարան-շարքեր  
 Ճամբայ ընկան տաք երկիր:

Ա՛յ կռունկներ, խաբար չունի՞ք  
 Իմ սիրունիկ աշխարհէն,  
 Դարիբ սրտիս բարեւ չունի՞ք  
 Իմ չարչարուած քոյրերէն...

Ես էլ մի օր ճամբայ ընկայ

Անցայ դաշտեր, սար եւ ծով,  
 Դարիբ զուրբաթ երկիր եկայ  
 Սիրաբս լի՛քը յոյսերով...

Բայց իմ երկրի տապ-կարօտից  
 Չսրցան բողբոջ յոյսերըս,  
 Ա՛խ, կռունկներ, էն սև օրից,  
 Լալկան դառան աչերըս...

Երնէ՛կ ձեզի.—մի օր կրկին  
 Ես կը դառնաք շարքերով,  
 Մենա՛կ-դարիբ հս կը մնամ  
 Հայրենիքիս կարօտով...

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ԱՆԻԻ ՈՂԲԸ

Andante

Անի՛ն. — Անի քաղաք<sup>3</sup> նստե՛ր կուլա՛յ,  
 Չըկայ ըսող՝ մի՛ լայ, մի՛ լայ,  
 Կ'ըսեն թէ, չէ՛, թող նստի լայ,  
 Ա՛խ, ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ,  
 Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,  
 Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,  
 Որ խըղճալոյս գայ մօտենայ,  
 Գոնէ ըսէ, մի՛ լայ, մի՛ լայ:

Ա՛յ հայ տղայ, խղնա՛ ինձի,  
 Տե՛ս քո Անին ի՛նչպէս է,  
 Հերիք ես լամ, դու չր գթա՛ս,  
 Չե՞ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցան,  
 Լալէն աչքերըս կուրացան,  
 Որբ մնալն ինձ վիճակուեցաւ,  
 Բախաս ի սպառ զիս մոռացաւ:

Կորուցեր եմ թագաւորներ,  
 Ժողովեր եմ գլխուս բուեր,  
 Որք միշտ կ'երգեն «Անին անցաւ,  
 Անին անաէր աւերեցաւ»:

Ա՛խ հայ տղայ, խղնա՛ ինձի, և լին.:

Անին էի մարդաբընակ,  
 Մնացեր եմ դառն աւերակ,  
 Իմ լաց, իմ կոծ, իմ աղաղակ,  
 Անաէր որբոց է նմանակ,  
 Երբեմն էի շատ աննման,

Հայոց քաղաքն արքայական,  
Այժմ աւեր, հիմնայատակ,  
Նստեր կուլամ կս միայնակ:

Ա՛խ, հայ տղայ, խղիւճի ինձի, ևլն.:

Եկար, տեսար, դարձեր, կ'երթաս,  
Լալով կ'ըսես՝ «բարեաւ մընաս»:

Աստուած սիրես, չը մոռանաս,

Մասիս սարին երբ մօտենաս՝

Ասա իմ քաջ Արարատին՝

«Նստեր կուլայ քս խեղճ Անին».

Կ'ըսես՝ ե՞րբ գաս աւետիք տաս,

Թէ՛ «իմ Անի՛, հերի՛ք է լաս»:

Ա՛խ, հայ տղայ, խղիւճի ինձի, ևլն.:

ՀԱՅ ՏՂԱՆ. — Ողբերգութիւնդ հերի՛ք, Անի՛,

Թըշուառացեալ գու լաս քանի՛,

Օր մը գըթած աչն Անեղին,

Մարդասիրեալ՝ առ քեզ հայի:

Գան ժողովին Հայք միաբան,

Գեղեցկանաս շատ աննման,

Հասցա մի՛ լայ, սիրուն Անի՛,

Անի՛, Անի՛, իմ ջա՛ն Անի՛:

Ա. Կ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

## ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Երբոր մայրը երկունքով  
Աշխարհ բերէ երեխայ,  
Հայրը որդուն մի սըրած  
Պիտի գաշոյն տայ ընծայ:

Երբ երեխան մեծանայ,  
Խաղալիքներու փոխան՝  
Հայրը ձեռքը պիտի տայ  
Մի մահաբեր հրացան:

Երբոր տըղին վարժատուն  
Գայ ժամանակ երթալու,

Նախ սուր խաղցնել և ապա  
Պիտ՝ սորվեցնենք կարգալու:

Կարգալ, գրել լաւ բան է,  
Բայց որ հասաւ քննութիւն՝  
Աշակերտին հարցուցէք, —  
Վոթել գիտէ՞ նա արիւն:

Լոկ դուք այսպէս յուսացէք  
Փրկել խեղճուկ Հայաստան,  
Ազատ, անկախ մարդ երբեք  
Լինելու չէ մուրացկան:

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն


Allegro

Ո՞րն է աշխարհի հա յաս տան՝ Մի՞թէ սա է Ռու սաս տան՝  
 Որ իր բռնութեամբ գերել է աշխարհի: Ազգի  
 ճիգն ու ջանք յաւիտեան կոր ծան: Զէ, չէ, չէ, չէ, չէ, չէ.  
 Սը իսկ է մեր աշխարհն այլ է մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհի Հայաստան,  
 Մի՞թէ սա է Ռուսաստան,  
 Որ իր բռնութեամբ գերել է  
 աշխարհ,  
 Ազգի ճիգն ու ջանք յաւիտեան  
 կործան:

Զէ, չէ, չէ, չէ, չէ, չէ. սխալ է,  
 Մեր աշխարհն այլ է, մեր աշ-  
 արհն այլ է:

Ո՞րն է աշխարհի Հայաստան,  
 Մի՞թէ սա է Տաճկաստան,  
 Ուր իրաւունքից կանայք են  
 զրկուած-  
 կանանոցի մէջ կենդանի թաղ,  
 ուած:



Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Զէ, չէ, չէ, չէ, չէ, չէ, սխալ է, եւլն.:

Ո՞րն է աշխարհի Հայաստան,  
 Մի՞թէ սա է Ֆրանգստան,  
 Որ իր ճոխ զգեստօք տիրել է աշխարհ,  
 Լուսաւորութեամբ առաջինն է նա:

Զէ, չէ, չէ, չէ, չէ, չէ. սխալ է, եւլն.:

Ո՞րն է աշխարհի Հայաստան,

Ահա՛ սա է Հայաստան,  
 Որ իր քաջութեամբ հաւատն ու կրօն  
 Պահպանել է նա անսասան ցայսօր:  
 Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, շիտակ է,  
 Մեր աշխարհն այս է, մեր աշխարհն այս է:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

## Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Andante

Այ - գուն այ - գուն իմ - խոց - կի մօտ լու - սա - ժը - տխուր մինչ  
 ա - աւ - ԼՈՒՄ Եր - գէ տը - ղուն իմ Սիս ուա - նայ  
 կի - լի - կիա - կի - լի - կիա կի - լի - կիա - կի - լի - կիա:

Այգու՛ն, այգու՛ն իմ խցկի մօտ,  
 Լուսածայիտ մինչ առաւօտ,  
 Երգէ պլպուլին իմ Սիսուանայ՝  
 — Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛,  
 Քարուն կուգայ, ծաղկունք փթին,  
 Դաշտերու մէջ, ի ծոց հովտին.  
 Բայց պլպուլիկն իմ դեռ ողբայ  
 — Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛:

Ա՛խ այն վարդին կարմիր թերթեր,  
 Արեամբ նախնեաց են ներկուեր,  
 Եւ այն ցողեր որ կը կաթին,  
 Արիւն-արցունքն են Չապէլին:

Լո՛ւռ կաց, պլպուլ, ալ մի՛ երգեր,  
 Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր,  
 Լո՛ւռ կաց, քո տաղ վէրքեր բանայ,  
 — Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛:

## Տ Ա Ր Ա Գ Ի Ր Ն

Moderato

Ընդ աստ-ղօք օտար ափանց օտար ափանց տա-րա-գրե-լոյս չիք բեր կրանք.  
 Լըքեալ հող-ւոյս յոյս հայ-րեն-եաց դու ես մի-այն ըս-փո-փանք:  
 Օտար աստ-ղեր լոյս չու-նին, օտար նո-կիւք ինչ մը թին:

Ընդ աստղօք օտար ափանց  
 Տարադրելոյս չիք բերկրանք,  
 Լըքեալ հողւոյս, յոյս հայրենեաց  
 Դու ես միայն սփոփանք:

Օտար աստղեր լոյս չունին,  
 Օտար երկինք ինձ մրթին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,  
 Ջրեր պղտոր ու լեղի,  
 Դուշտք, անապատք, հովիտք,  
 արտեր

Ու պարտէզներն անբերրի:  
 Օտար ծառեր շուք չունին,  
 Օտար ծաղիկք հոս չունին:

Օտար երկիր երջանկաբեր,  
 Ծանրայդ պայման ինձ համար,  
 Չիւն ձմեռ են իւր գարուններ,  
 Չունի երբեք ինձ ամառ:

Օտար երկինք ամպօս են,  
 Օտար սրտեր անգուլթ են:

Օտար թէեւ շնչեմ ես օդ,  
 Յաւօք սահին իմ օրեր,  
 Քեզ Հայաստան սիրակարօտ,  
 Սիրտըս համայն քեզ նուէր:

Օտարութիւն դու փուլ ես,  
 Այլ հայրենիք դու վարդ ես:

Մ. ՊԵՇԻԿԵԱՇԵԱՆ

## ՎԱՆԵՑՈՑ ՀԱՅՐ ՄԵՐԸ

Հայր մեր երկնաւոր, սուրբ ըլլայ քո անուն,  
 Հային երկրաւոր տուր արքայութիւն.

Ամէն բանի մէջ քու կամքը թող ըլլայ,  
 Միայն թէ Հայր լուծի տակ չը լայ.

Ո՛չ չոր, ո՛չ կակուղ հացդ մենք կ'ուզենք,  
 Միայն տուր ամէն Հայի ձեռքը զէնք.

Չենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,  
 Թաք վերցուր թիւրքի խայտառակ հարկը.

Գլորէ մեզ Աստուած մարտի փորձութեան,  
 Որ շուտ ազատի ազգը քո Հայկեան:

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ

ՈԳԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԱՑ

ՀԱՆԳԻՍԱԽՈՐ

Եղանակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ

Անոնց համար որ ինկան,  
 Զմեզ ազատ ուզելով,  
 Մեր բիւր սրտեր քովէ քով,  
 Կ'ըլլան աշտօր մէկ խորան:  
 Անոնց հոգևոյն պաշտամունք՝  
 Մեր մէն մի խոհն է հիմա,

Վե՛ր, զէպ' անոնց կ'ամպանաք,  
 Մեր յոյսն ու սէրն իբրև խուռնկ:  
 Եւ մեր ցաւի սրկիհէն  
 Անոնց արիւնն ու հոգին,  
 — Հաղորդութի՛ւն վրիժագին —  
 Մենք կ'ընդունինք սրբօրէն:

Վ.Ա.ՀԱՆ ԹԵՒԷՆԱՆ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Թէ զիս կանչեն օտարաց  
 Արքայական պալատում  
 Այլ կը սիրեմ հայրենիք,  
 Ուր որ լինեմ ես բանտում:

Կ'ասեմ անդադար՝  
 «Այլ ո՞ւր կայ սեղ քաղցրիկ  
 Մարդուն քան իւր հայրենիք»,  
 Կ'ասեմ անդադար:

Թէ զիս կանչեն թագաւոր,  
 Ըլլամ մի օտար երկրի,  
 Այլ կը սիրեմ հայրենիք,

Ուր և լինեմ ես դերի:  
 Կ'ասեմ անդադար, ևւն. . .  
 Թէ ինձ մի օտարի ձեռք  
 Տայ փունջ մի լեցուն ծաղիկ,  
 Չեմ առնեք, զի մեր երկրի  
 Փուշն է քան զայն գեղեցիկ:  
 Կ'ասեմ անդադար, ևւն. . .

Թէ ամէնէն ոսկեփայլ,  
 Երկրի լինեմ բնակիչ,  
 Այլ կ'երազեմ հայրենիք,  
 Իր սեւ բախտով մահակէզ:  
 Կ'ասեմ անդադար, ևւն. . .



ՄՈՒՇԻ ՏԵՍԱՐԱՆԸ

ՄՇԵՑԻ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Մայիս ամսոյ դու զեփիւռիկ,  
Սլանում ես Մշոյ լերինք,  
Կորուսեր եմ քաղցր հայրենիք,  
Կուլամ, կողբամ, չասե՞ս հերիք:

Լեռոն Մշոյ է նման Մասիս,  
Մայրիկս կուլայ կանչում է իս,  
Կ'ասէ ինձի, եկուր առ իս,  
Բաւ է որդեակս, դուն թափառ իս:

Հոս պանդուխտ եմ օտարութեան  
Ատեն չունիմ որ առ քեզ գամ,  
Ցաւերս չատենն, վիշտք՝ յարածամ,  
Գուցէ անոնց եմ ես արժան:

Ես եմ միայն թշուառ անտէր,  
Չիք կարեկից, ըլլայ ինձ տէր,  
Թափառում եմ օտար հողեր,  
Բաւ է կրեմ ես այս ցաւեր:

Անբախտ եմ ես Տարօնացի,  
Շատ ժամանակ պանդուխտ  
մնացի,

Ցաւօք սրտի ես միշտ լացի,  
Մշոյ երկրին կարօտ մնացի:

Ո՛հ, դու անխիղճ, անգութ  
բախտիկ,  
Է՞ր չեա թողուր դնամ հայրե-  
նիք,

Չունիմ հայրիկ, ոչ իսկ մայրիկ,  
Բա՛ւ է կրեմ դառըն և վիշտք:

Վշտերս թաքուն, ցաւերս ան-  
հուն,

Չունիմ ոչ տեղ և ոչ ալ տուն,  
Կուլամ, կ'ողբամ գիշերն ի  
բուն,

Հիւանդ եմ ես, ո՛հ, չունիմ քուն:

Հայրենիքքս Տարօն-Մուշ է,  
Ինձ ասում են թէ ապուշ է,

Լաց ու կոծում սրգոյ գոյժ է,  
Ան որ կեղծ է՝ վէրք չը բուժէ:

Ի Ձ Է Ն

Tempo di Marcia

Ան զա-տու-թեան այն վառ սէ-րը՝ թու՛նդ որս-տա-ց իմ սըր տում  
 իմ հայ-րեն-եաց սուրբ ան-նը ինչ որ ստե-րած է կանչում է կանչում  
 Ե-լէք, Ե-լէք, հայ-կա-զունք Ե-լէք հայ-կայ զա-ւա կունք  
 Ե-լէք, Ե-լէք հայ-եղ-բայրներ Ա-ռէք չոր սուրճ ու նի-զակ ու նի-զակ

Ազատութեան այն վառ սէրը  
 Թունդ սրտաց իմ սրտում,  
 իմ հայրենեաց սուրբ անունը  
 Ինձ պատերազմ է կանչում:

Ելե՛ք, ելե՛ք Հայկազունք,  
 Ելե՛ք, Հայկայ գաւազունք,  
 Ելե՛ք, ելե՛ք, հայ եղբարք,  
 Առե՛ք ձեր սուրն ու ճիգակ:

Ահա՛, եղբարք, հա՛յ եղբայրներ,  
 Առէ՛ք, զրահ, սուր, զէնքեր,  
 Մահը դաշտում Շաւարշանայ  
 Մեզ հրաւէր կը կարգոյ:

Ելե՛ք, ելե՛ք, Հայկազունք, Եւն. :  
 Ա՛խ, հայրենիք, սուրբ անունըդ  
 Անշէջ վառի իմ սրտում,  
 Մեր հայ եղբարց շիրիմները  
 Իրանց գրկին մեզ կանչում:

Ելե՛ք, ելե՛ք, Հայկազունք, Եւն. :  
 Այս օրերը մեր քաջ կեանքին  
 Նուիրական թող լինին,  
 Թող չմոռնանք Հայու անուն,  
 Նա սիրում է Ազատութիւն:

Ելե՛ք, ելե՛ք, Հայկազունք, Եւն. :

ԶԻՆՈՒՈՐԻ ՇԱՊԻԿԸ

Գետի ափին լուաց անում,  
 Սեւը գլխին մի հարսիկ,  
 Լուաց անում լաց է լինում,  
 Սարի շարմաղ մի աղջիկ:

Ջուրը գուլալ՝ հարսի ափում  
 Արիւն կտրած, լալ ու վարդ,  
 Վաշվշելով արցունք թափում,  
 Ափն է ծեծում է իր գուարթ:

Հարսի ափում կռուից եկած  
 Շապիկն է սուրբ իր հարի,  
 Ալ ու փթիթ՝ արնով ներկած,  
 Կարմիր արնով ջիգեարի:

Ու իր եարի շապիկ վրայ  
 Հարսն է լալիս, մրմնջում,  
 Ջուրը գուլալ՝ արիւն լուայ  
 Հետը տխուր վշվշում...

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Թողի երկիրն իմ հայրենի,  
 Անահ անցայ Արաբ ու Հինդ,  
 Տեսայ մարդիկ չորս գլխանի,  
 Տեսայ հազար աղէտ ու խինդ:  
 Հասայ մինչեւ Չինուժաչին,  
 Հասայ մինչեւ Ծովը ձերմակ,  
 Տեսայ երկրի ծայրը վերջին  
 Եւ դրախտի դուռը կըրակ:  
 Հազար անգամ ծագեց արեւ  
 Ու մայր մտաւ հազար անգամ,

Տեսայ ծառեր հըրատերեւ,  
 Տեսայ աղունքն արեգական:  
 Եւ փերիներ քնքոյչ ու սեւ,  
 Աչքերը բոց, իրենք խաւար,  
 Եւ փերիներ տեսայ թեթեւ,  
 Փրփուրի պէս ճերմակ ու վառ:  
 Բոլորը ծսւխ, բոլորն աւա՛ղ,  
 Բոլորն աւար ջուր ու քամուն,  
 Չըկայ քեզնից գերիչ երազ,  
 Իմ Հայաստան, անո՛ւշ անուն...


Վ. Ա. ՀԱՆ ՏԷՐԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ՀԱՅԿԱԿԱՆ

Հայե՛ր, Մասիսը ժածն է առեր,  
 Հուրով, սուրով կը փորոտայ,  
 Չեզ կ'ուղարկէ դեսպան՝ քարեր  
 Ու իր խորքովը կ'որոտայ.  
 Հա՛պ' օ՛ն, ճեսեր հայկեան  
 զարմի,  
 Դէպի երկիր ձեր Եդեմի:  
 Պիղծ գերութեան շղթան,  
 Հայե՛ր,  
 Թօթափեցէք ձեր վիզերէն,  
 Ազատ, անկախ և անվեհեր  
 Առէք սուր, զրահ, վրէժ մռըն-  
 չելէն  
 Ու խոյացէք դէպի գուպար  
 Դըռոյթ ի դըռոյթ իբրև ի պար:

Սուրբ հայրենիքը ձեզ աւանդ,  
 Հայե՛ր, զիրար միշտ սիրեցէք,  
 Երկիրը ձեր ճոխ, արգաւանդ,  
 Չեր քրտինքով մշակեցէք,  
 Կուրծքերը ձեր վահան ան-  
 խախտ,  
 Պայծառ պահեն թող Հայուն  
 բախտ:  
 Ո՛վ եռափայլ և գեղանի  
 Կարմիր, կապոյտ, նարինջդ  
 Հայոց,  
 Սըփռէ չքնաղ քու հովանի՛  
 Որ ըսփոփուի սիրան Հայուն  
 խոց:  
 Կեցցէ՛ յաւերժ դրօշն հայկեան,  
 Կեցցէ՛ հայ ազգն արիական:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ



ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻՆ

Թո՛ղ բարձրացնեն ճգինչ աղաղակ,  
Թուժակ, կաշաղակ,

Միակ վայելուչ, միակ սրտառուչ  
Երգիչն է Սոխակ:

Թո՛ղ վային բուեր, ագռաւներ անթիւ,  
Հաղար հաւ ու ճիւլ,

Ամէնից մեծը, ամէնից բարձրը  
է ազատն Արծիւ:

Թո՛ղ տան՝ ուժ կ'ուզեն մանեակ, մատանիք,  
Նշաններ, գափնիք,

Միակ արժանին, միակ սիրելին  
Կը մնայ Հայրիկ:

Հայրի՛կ, ս՛հ, Հայրիկ, քո քաղցր անուան  
Լինեմ ես զուրբան,

Սիրեմ այն հողը, որ ծնաւ քեզ պէս  
 Հրեշտակ պահապան:  
 Ա՛լ տէր, պահպանի՛ր Դու մեր Հայրիկին,  
 Քո հաւատարմին,  
 Անպակաս արա մեր գլխի վրայից  
 Նորա հովանին:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

## Ս Ա Ս Ո Ւ Ն

Lento

Աս սուն քաւառ հին հալա տան, համ-բաւղ լը-  
 սեց — աշխարհ հա-մայն: Երիտա-սարգէ են  
 քա-ջա-զուն հա-յոց տար-ծանք մի-այն Աս-սուն

Սասուն դաւառ, հին Հայաստան,  
 Համբաւղ լսեց աշխարհ համայն,  
 Երիտասարդք են քաջազուն,  
 Հայոց պարծանք միայն Սասուն:

Սասուն պարարտ հովիտներով,  
 Պարծի ընդ միշտ իւր քաջերով,  
 Թէեւ սեռն կրկր, կորեկ,  
 Ազգան ընդ սուր գիշեր, ցորեկ:

Սասուն դաւառ անտառներով,  
 Պարսպապատ բարձր լեռներով,  
 Դիմադրեց միշտ քուրդ զօրքերուն,  
 Հայոց մատաղ եզաւ Սասուն:

Սասուն երկիր լեռներու մէջ,  
 Ա՛լ սրբացան իւր ել և էջ,  
 Քարոտ, լեռնատ սե խորտուրորտ,  
 Սասուն բուրէ այժմ արեան հաս:


## ՕՐՕՐ, ԲԱԼԱ՛ ԶԱՆ

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա՛ ջան,  
 Որ քեզի հայր նա կոչուած էր, օրօր, օրօր, բալա՛ ջան:  
 Առաւօտեան ժամը եօթին, բալա՛ ջան,  
 Պատերազմուծ հայրդ սպանուեց, օրօր, օրօր, բալա՛ ջան:  
 Նա զոհ գնաց վատի սրբին, բալա՛ ջան,  
 Դու հայրազուրկ՝ որբ մնացիր, օրօր, օրօր, բալա՛ ջան:  
 Կաթըս քեզի կ'անեմ հալալ, բալա՛ ջան,  
 Երբ քաջի պէս կռուիլ սորվիս, օրօր, օրօր, բալա ջան:  
 Դէ՛հ, մեծացիր, շուտ բոյ քաշիր, բալա ջան,  
 Վատի արիւն խմել սորվիր, օրօր, օրօր, բալա ջան:  
 Վրէ՛ժ, վրէ՛ժ, չար ոսոխից, բալա՛ ջան:  
 Խանասօրը քեզ կանչուած է, օրօր, օրօր, բալա՛ ջան:

## ԳԱՐՈՒՆՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ

Հայոց աշխարհիկ, գարո՛ւնդ է հասել,  
 Ահա գեղեցիկ գարուն քո եկել,  
 Ո՛վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,  
 Ո՛վ դու իմ սրբոխ անմոռաց տեղիք,  
 Ահա՛ գարունիկդ հասել է, հասել,  
 Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել,  
 Այն սեւ-սեւ ամպերն են դարձել ի փախ,  
 Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ,  
 Ջրնիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,  
 Քաղցրիկ կըրկըջով գլորէ գետս հազար,  
 Չայն բարձրը ժայռից, որ երկնուց են մօտ,  
 Կենաց օրհնութեան ծագի առաւօտ...  
 Հայո՛ց աշխարհիկ, գարո՛ւնդ է եկել,  
 Ահա՛ գարունիկդ հասե՛լ է, հասե՛լ...

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ



ՄԵՆ ԵՒ ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆԵՐԸ

Մ Ա Ս Ի Ս

Սիրաբոս տխուր լի վէրքերով,  
իմ սեւ օրն եմ ես լալիս,  
Մի դեղ չունի՞ս ցաւիս դնեմ,  
Խեղճ ու սըգւար իմ Մասիս:

Անգուժ վէրքիս խորունկ ցաւից  
Մինակ տխուր ման կուգամ,  
էրուած սրտիս լացի ձէնից  
Գլուխս առած քեզ կուգամ:

Շա՛տ կան ցաւեր, շատ կան  
դարդեր,

իմ ըս սեւ է, սըգալի,  
Ձէնըս լսի մի խօսք ասա,  
էրուած սրտիս դեղ լինի:

Սիրաբոս սեւ է, հոգիս տխուր,

Յաւս էլ մէկը չը լսեց,  
Լսկ արցունքն էր ցաւիս

դարման՝

էն էլ չարցաւ ու ցամքեց:

Սարեր ձորեր ես միշտ ինկած  
Հանգիստ չունիմ դօր, գիշեր,  
Եարաբ, դո՞ւ էլ, սիրուն Մասիս,  
Ինձ չես ուզեր քեզ ընկեր:

Խօսք չես ասում, ես ո՛ւր գնամ  
էս սեւաւոր աշխարհում,  
Գոնէ փորիք ինձ մի շիրիմ,  
Արնոտ հողիդ սեւ գրկում:

ՊԵՏՐՈՍ ՄՈԶՈՐԵԱՆՅ

ԿՈՌԻՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բարով եկար սիրուն կռուակ,  
Ի՞նչ լուր քերիք հայրենիքէս,  
Խօսիր ինձ հետ ազատօրէն,  
Կեանքս կը նուիրեմ ևս քեզ:

Տեսար իմ հայրենեաց տունը:  
Գեղեցիկ զարդարուած բոյնը,  
Նորա սիրուն տանջուած եմ,  
Աչերիցս կարաւ քունը:

Ազատ տեսա՞ր մեր լեռները,  
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը,  
Այն լեռներու պաշտպանողը,  
Արծուի, կորիւնի ձեանքը:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաս-  
տան,  
Վարդ, մեխակ, շուշաններ շատ  
կան,

Եղեմական դրախտավայր, —  
Նա կոչուած է Մայր-Հայաս-  
տան:

Այնտեղ ունիս հղբայր ու  
քոյր,

Միջոց ի՞նչ կը սպասես ի դուր,  
Արի առնեմ իմ թեւերուն,  
Գնանք այնտեղ սերախացուր:

ՀՐԱԺԵՇՏ ՍԻՐԵԼԵԱՑ

Ահա՛ կերթամ, սիրելի մայր,  
Ազգիս համար մեռնելու,  
Քաջ ընկերօքս ես միասին,  
Անգուժ թուրքեր ջարդելու:

Ի՞ի լար, մայր իմ. մ'ողբար,  
մայր իմ,  
Վերադարձիս բապտէ,  
Ազգիս հայաց ազատութեան  
Տիւ եւ գիշեր ապօրէ:

Ահա՛ կ'երթամ, սիրելի քոյր,  
Նպատակըս է բարի.  
Չենք դիմանար մենք գերի ենք,  
Իբր վեց հարիւր տարի:

Ահա՛ կ'երթամ, սիրելի հայր,  
Մնաս բարեաւ դու հիմա,  
Այսքան ճնշման տակ ինկած է,  
Հայը ինչպէ՞ս դիմանայ:

Ահա կ'երթամ, սիրելի կին,  
Քու արտասուք չը հասէ,  
Պատերազմի դաշտին վերայ  
Իմ ընկերը կը սպասէ:

Ով բարեկամք և ազգականք,  
Թողէք մեզի որ երթանք,  
Պատերազմի դաշտին վերայ  
Վէրքեր տանք ու ստանանք:

Թէ յաջողիմ ողջ կը դառնամ,  
Այս ամէնը կը մտնաս,  
Թէ պսակուիմ ևս սուրբ մահով,  
Օր մ'ալ անշուշտ դուն կուգաս:

Գերեզմանիս քարին վերայ,  
Թափէ արցունք, ս'վ մայրիկ,  
Թափէ արցունք, ցանէ ծաղիկ,  
Երիտասարդ եմ մայրիկ:

Սերտտիտիս երբ կ'երթայի,  
Երկու օրէն դառնայի,  
Երկու օրս ալ կ'ըլլաք տարի,  
Ես քեզ շատ կարօտնայի:

Արդեօք այս մեր քաջածները  
Պիտ' վերջացնեն՞ս, ով Աստուած,  
Արդեօք ողջ ողջ պիտի տեսնեն՞ք  
Հայոց դրօշը պարզուած:

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Կարտավ

Վաչնաւորեց՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Յի — ծնւ — նակ

Բու գար — ծան սի —

բուն թոչ — նակ Դէ — տի ուր Իձճ ա —

սա Քոռ — չում ես այդ — տես ա — բազ

Միժևանակ, ծիժևանակ,  
 Բու գարնան սիրուն թռչնակ,  
 Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,  
 Թռչում ես այդպէս արագ:  
 Ա՛խ, թրփր ծիժևանակ,

Մընամ տեղըս Աշտարակ,  
 Անդ շինիր քո բոյնը,  
 Հայրենի կառքի տակ:  
 Անդ հեռու ալեւոր  
 Հայր ունի՞մ ես սղաւոր,

Որ միակ իւր սրդուն  
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,  
Ինձնից շատ բարեւ արա՛,  
Ասա՛ թող նստի լայ,  
Իւր անբաղդ սրդու վրայ:

Դու պատմէ թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղճ կմ էս,  
Միշտ լալով ողբալով՝  
Կեանքս մաշուել, կղել է կէս:  
Ինձ համար ցերեկը՝

Մութ է շրջում արեգը,  
Գիշերը թաց աչքիս՝  
Քունը մօտ էի գալիս:

Շուտով սառ հողի տակ  
Կը պառկեմ այստեղ մենակ,  
Թողնելով հօրս սրտում  
Միշտ ցաւալի յիշատակ:

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացի՛ր, թըռի՛ր արագ,  
Դէպ՛ Հայոց երկիրը,  
Մընած տեղըս Աշտարակ:

Գ. Ա. ԳՈՒՈՒԵԱՆՑ

## ՈՂԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քանի՞ տարի է, հայրենիք սիրուն,  
Դառըն ցաւերով կղել կմ նրկուն,  
Սար ու ձոր ինկած իբրեւ խեղճ թռչուն,  
Վեր առ զքնարդ ս՛վ հայ գիւցազուն:

Ողբամ Հայաստան, աւա՛ղ Հայաստան,  
Ափսո՛ս Հայաստան, քաղցր իմ հայրենիք:

Հայաստանի մէջ զանազան ազգեր,  
Իւր խեղճ սրդիքը պանդուխտ և անտէր,  
Քաղաք ու աւան անբնակ, աւեր,  
Աւերակ, անշէջ են Հայոց տուներ:

Ողբամ Հայաստան, աւա՛ղ Հայաստան,  
Ափսո՛ս Հայաստան, քաղցր իմ հայրենիք:

Ինչո՞ւ դուն այսպէս, ո՛վ վերին տնտես,  
Հայուն խեղճ ազգը ըրեր և անտես,  
Ձի արգեօ՞ք դու մեզ լոյս պիտի ծագես  
Ու բարի իշխան մեզ պիտի կանգնես:

Ողբամ Հայաստան, աւա՛ղ Հայաստան,  
Աւա՛ղ Հայաստան, քաղցր իմ հայրենիք:

Մթնցաւ Հայոց պայծառ լուսատուն,  
Խեթիւ նայեցաւ ակն գերագոյն,  
Մինչ այսպէս ձմեռ ու ապա գարուն,  
Արի՛ նստինք լանք, ո՛վ հայ իմաստուն:

Ողբամ Հայաստան, աւա՛ղ Հայաստան,  
Ափսո՛ս Հայաստան, քաղցր իմ հայրենիք:

# ՀԱՅ ԴՐՕՇԻՆ

Andante

Խօսք Եւ. Եղանակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅԻ

Մը Թին դա-րե-րոց  
 Մը Թին... ան-գուն-գին խո-րէն Կը Բար Հրա նաս

Վեր յաղ-թա-կան-օ-րէն, Կեանքի մը նո-րոց աղ-

խու ծովն ա-րի, Եւ մէն հա-յու սիրտ բն-գի կը փա-րի  
 Խանգախտ

Պերձ մեր յոյ-սին դու ծի-ա-ծան լու-սն-դէն անդ մեր աք-տո-րին,

Սոց-բնր Բող յա-ւետ բն-գի սն-ւն-դին, եւ ա-մէն տեղ բնդ-ճով ցուն-

ծան, քեզ մոլ գն ծան  
 ծան քեզ մոլ գն ծան  
 ծան, քեզ մոլ գն ծան քեզ մոլ գն ծան

Մթին գարեբու անդունդին խորէն  
 Կը բարձրանաս վեր յաղթականօրէն,  
 Կեանքի մը նորոգ աշխուժումն արի,  
 Ամէն Հայու սիրտ քեզի կը փարի:

Պերն մեր յոյսին դուռն ծիածան,  
 Լուսեղէն ամպ մեր Աստուծոյն,  
 Աչկեր քոյ յաւե՛ս քեզի սելեոթին,  
 Եւ ամէն տեղ քեզմով գնձան:

Փառքի խանձարուք, գոհերու բազին,  
 Ընծայ քեզ մեր սեխան ու սէրն ու հոգին,  
 Փարոս բարութեան, արժիւ երկնաթիւ,  
 Շողա՛ ու ճախրէ՛ դուռն միշտ մեր վերեւ:

Պերն մեր յոյսին, եւլն.:

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

## Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ո Ւ Ն


Խաղաղութի՛ւն ձեզ սուրբ մարտիրոսներ,  
 Որ կռուի դաշտում ընկաք անվեհեր,  
 Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,  
 Որ ձեր արիւնսով փրկէք հայրենիք:

Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք  
 Փշրել բռնութեան շղթան ու կապանք,  
 Բայց աւա՛ղ, ձեր հետ մեռան ձեր իղձեր...  
 Խաղաղութի՛ւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութի՛ւն ձեզ, հերոս կղբայրներ,  
 Թող չվրդավուեն ձեր սուրբ սակարներ,  
 Ձեր վերջին կամքը — «անէ՛ծք թշնամուն» —  
 Մենք միշտ կը պաշտենք սրպէս սրբութիւն:

Անէ՛ծք ու վրէժ — դոքա մեր միակ  
 Կը լինին կեանքի հզօր նպատակ...  
 Քնեցէք խաղաղ, հերոս կղբայրներ,  
 Թող չվրդավուեն ձեր սուրբ սակարներ:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ



ՎԱՆԻ ԲԵՐԴԸ

## Վ Ա Ն Ի Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ը

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,  
Երկինքը լի աստղերով,  
Եւ լուսինը մեզմ' փայլում էր  
Կաթնանման իւր լոյսով:

Նա նայում էր լռիկ մեջիկ  
Իբրեւ մի կոյս՝ դէպի վան,  
Նրա աչքին երեւում էր,  
Մի ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քիւրդեր  
Բռնած սուր թուր, հրացան,  
Կոտորում են, կոզոպտում են,  
Աւերում են անաէր վան:

Եւ կարծես թէ վեր երկնքից  
Խօսում էր այդ լուռ վրկան.—  
«Վըրայ հասիր հա՛յ ազգասէր,  
Չեռքից կ'երթայ Հայաստան:»

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

## ՉԻՆՈՒՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Չարթի՛ր, որդեակ, ուշ բեր,  
Վեր կաց,

Պատերազմի փողն հնչեց,  
Չարթի՛ր, գոչեց ձայնն  
հայրենեաց,  
Կենաց, մահու ժամ հընչեց:

Պատրաստեր եմ քո զէնքերը,  
Ահա գըլխիդ վերեւ կան,  
Ինչպէս երբեմն քո գրքերը,  
Երբ կ'երթայիր վարժարան:

Ելի՛ր կապեմ սուրը մէջքիդ,  
Ասպար կապեմ քու ուսէդ,

Եւ սուրբ դրօշակն հայրենիքիդ  
Թող ծածանի աջ թեւէդ:

Մի՞թէ դուն չես յիշեր երբոր  
Գըրիչ ու թուղթ ալիք քեզ,  
Փոխան դոցա, ըսի, մի օր  
Ուրիշ բաներ կուտամ քեզ:

Փոխան գրքիդ ահա սուսեր,  
Փոխան թղթի՝ կուռի դաշտ,  
Գնա՛ մեռիւր ազգիդ համար,  
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ:

Գըրչով ուսար ազգ, հայրենիք,  
Գընա՛ սուրով փրկել զայն,  
Մեր հայրենեաց վըշտաց հերի՛ք  
Չըսաւ աշխարհը համայն:

Մեր հայրենեաց թշուառութիւն  
Երկրիս՝ ազգաց մէկը չունի.  
Մեր խեղճութեան կարեկցու-  
թիւն  
Երկրիս վրայ մարդ չունի:

Գնա՛, որդեակ, այս սև չարիք  
Խեղդեց շունչը քո ազգի,

Գնա՛ փրկել քո հայրենիք,  
Թէ ոչ՝ ինչո՞ւ ծնայ քեզ:

Քանի՛ տարի կերակրեցի,  
Մինչ հասակըդ այդ առիւր,  
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,  
Դուն ալ քո ազգիդ մեռիւր:

Դո՛ւ հայրենեաց սեղանին զոհ,  
Մարտի՛ր, որդեակ, ժամ հասաւ,  
Երկինք ու ազգ յայդ մընան  
Գոհ,  
Մայրդ ալ վասն այդ քեզ  
Ժընաւ:

Յառա՛ջ, որդեակ, ահա կ'երթան  
Քու ընկերներդ բիւրաւոր,  
Որպէս ընկեր դպրոցական,  
Քաղցր է ընկեր կուռարար:

Յառա՛ջ, որդեակ, ի մարտ  
անմահ

Տո՛ւր անվախ կուրծք ու ճակատ,  
Հող չէ թէ քեզ կը գտնէ մահ,  
Զի յայնժամ է ազգն ազատ:

Պ. Վ. ՆԱԹԱՆԵԱՆ

Վ Ե Ր Կ Ա Ց

Վեր կա՛ց, թշուառ վշտի զաւակ,  
Վանէ՛ թախիժ անյուսուութեան,  
Շուտ կը հասնի քեզ երկնարար  
Չեռքն հայկական սուրբ միութեան:

Սսի՛ն էր տիրած խեղճ հայորդւոյն տընակը,  
Հէքն էր թաղուած սև մտածմանց յատակը,  
Հացի վերջին պատառն հատած էր արդէն,  
Եւ յուսահատ՝ դիմումներէն դէս ու դէն,  
Հէքն էր թաղուած սև մտածմանց յատակը:

Վե՛ր կաց, բուռն, եւայլն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ռ Ա Ջ Մ Ա Կ Ա Ն — Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ք Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ե Ր

ՍԻՓԱՆԱՅ ՔԱԶԵՐ

*Յարածուն* *բիջանցի ոսկեր*

Լօ, Լօ, Լօ. Աեգ Արփա-նայ սարի վե-րան. կր-տղի՞ծ-ներ ըղ-տա-ղով  
 գա-լիս են մի-ա-նում: Այն-տեղ ան-ահ որ-գիք ան-յաղթ Արփան լե-րան  
*կրակու*  
 զենք ու զրա հի են ըն-թա-նում: Ին-չու վառ-ւում են զին-ւում  
 կա-տարն ի վեր ել-նում ան-համ-բեր, վառ ար ին է նո-ցա քաջ սր-տի մեջ Ե-  
 օում, սուրում անցնում են ան-ղեր. քան Արփա նայ սար քա-մին սր-լա նում են  
 դե-ղի վար, դաշտի մի է թղ-նա-մին նա է վա-ռում նո-ցա  
 արեան վր թե՛ ան-մո-ռաց — գա-զա-նա-բար վատ թար թողնա-մին  
 հա-տու-սու-սե-րը հա-նել հայ իր իս նին է սպա՞ծել, այս է վառում  
*համարակ*  
 քա-ջն-րին: հայ որ նարն էլ ո-տի կանգ նա՛ծ, այ ժրճ թող նա  
 մուն մա-հու մարտի է կան-չում, ու վր-թե՛ ա-րճան վր-թե՛

է նա որ-հան-ջում, օ թըղ-նա-մին որ-տը-լած. թող-նում վա-զում  
 սա-րի սար յնտ է մը-նում շատ ա-ւար: Ա-րին թա-փե-  
 ցին փո-խա-նակ ար-եան Ա-րին բա-ճեց ա-մե-ճի սու-սեր, սու-րը յա-գե-  
 ցաւ յնտ գը-րին որ-տեան. եղ-նում են հի-մայ սէգ Աի փանն ի վեր:  
 Աէգ Աի-փանայ փա-նայ գա-գա-թին բա-զերն ա-նում են մեծ խն-դում  
 — և ամ-դե-րի թան-ջու-թեան մի-ջին հս-կայ Աի-փա-նայ սար թըն-  
 դում, էլ մտա չեն գայ մեղ թըղ-նա-մից սուր տեսան մեր որդ-վա-տիկ:

Լօ, լօ, լօ, սէգ Աիփանայ սարի վերան (\*),  
 Կըտրիճներ ըշտապով գալիս են միանում.  
 Այնտեղ անահ սրգիք, անյազթ Սիփան լերան,  
 Զէնք ու զրահի են ընթանում:  
 Ինչո՞ւ վառւում են, գինւում,  
 Կատարն ի վեր ելնում անհամբեր,  
 Վառ արիւն է նսցա քաջ սրտի մէջ եռում:  
 Սուրում անցնում են ամպեր  
 Քանց Սիփանայ սուր քամին,

(\*) «Սիփանայ Քաջեր», այլ երգարաններու մէջ հրատարակուած է փոխուած բառերով. այդպէս ալ կ'երգուէր առեմօք Թուրքիոյ մէջ: Ի ձեռին ջունենալով երգը հեղինակին իսկ կազմած ձեռով, կը հրատարակենք զայն առնելով կոմիտաս վրդ.ի դաշնաւորած խմբերգէն: Կ'ենթադրենք որ բնագիրն ալ մեր հրատարակածին պէս է:


Սըլանուժ հն զէպի վար, դաշտի մէջ է թշնամին,  
 Նա է վառուժ նոցա արեան վըրէժ անմուաց:  
 Գազանաբար վաթար թշնամին  
 Հատու սուսերը հանել, հայ իշխանին սպաննել,  
 Այս է վառուժ քաջերին:

Հայ սրեարն էլ սոի կանգնած,  
 Այժմ թշնամուն մահու մարտի է կանչում  
 Ու վըրէժ, արեան վըրէժ է նա պահանջում:  
 Ու թշնամին պարտուած,  
 Թողնում վազում սարէ սար,  
 Յետ է մնում շատ ուար:

Արիւն թափեցին փոխանակ արեան,  
 Արիւն քամեց ամենի սուսեր,  
 Սուրը յագեցաւ, յետ դըրին պատեան,  
 Ելնում հն չիմա սէգ Սիփանն ի վեր:

Սէգ Սիփանայ կանաչ գապաթին  
 Քաջերն անում հն մեծ խնդում  
 Եւ ամպերի թանձրութեան միջին,  
 Հսկայ Սիփանայ սար թընդում.  
 — «Էլ մօտ չհն գայ մեզ թըշնամիք,  
 Սուր տեսան մեր պողվատիկ»:


Մ. ԱԲԵՂԵԱՆ



ՍԻՓԱՆԱՅ ՍԱՐԸ ԿՏՈՒՅ ԿՂԶԻԷՆ ԴԻՏՈՒԱՄ

## ԽԱՆԻ ԵՐԳԸ

Tempo di marcia



Լուսին չկար, մութ գիշեր էր,  
Մի խումբ կերթար արագ-

արագ  
Տեսանք որ քաջ Խանի խումբն  
էր,

Չինուած էին բոլոր նրանք:

Կեանքերը ազգին նուիրած,  
Կարիճ Խանը առաջ ինկած՝  
Գնում էին Տաճկաց սահման,  
Թռչում էին կրակի նման:

Հըրացանները ուսերին,  
Դըրօշակը պարզել էին,  
Գընում էին ուրախ զուարթ,  
Ազատութիւն կրգում էին:

Մութ անտառից անցնում էին,  
Ամէն մէկը առիւծ էին,  
Նժոյգ ձիանց վրայ նստած՝  
Մերկ սուրերը քաշել էին:

Երբ քաջ Խանը ելաւ Բասեն,  
Թնդանօթներ արձակեցին,  
Հայ քաջերի մօտիններից,  
Գնդակները գոռգոռացին:

Երբ քաջ Խանը հրահանգ  
կուտար:

Արի՛ք առիւծներըս իմ քաջ,  
Մտան թշնամու խիտ շարքեր,  
Կոտորեցին ձախըն ու աջ:

Կեցցէ՛ Խանը իր խմբովը,



Խ Ա Ն

Սարսափ թողեց Բասենումը,  
Երեք օր ու գիշեր կռուեց,  
Աչերիցը կարեց քունը:

Հայաստանի հողին վըրայ  
Քաջը թափեց իւր արիւնը,  
Յիշենք Հայեր, չը մոռանանք  
Կարիճ Խանի սուրբ անունը:



ԽԱՆԻ ԱՐՇՄԻԱԽՈՒՄԲԸ

«Լուսին ջկար, մութ գիշեր էր, մի խումբ կ'երթար արագ արագ»...

### ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենեաց սիրոյ համար  
 Խմբեր պատրաստուել են քաջ,  
 Հրացանները ուսերին,  
 Փամփուշաները աջ ու ձախ:  
 Հնազանդ կարգով շարուած,  
 Իրանք առիւծի պէս քաջ.  
 Խմբապետը հրահանգ տուեց  
 Գնալ դէպի յառաջ յառաջ:  
 Խմբապետը Նեւրուզն էր,  
 Օգնականը շատ քաջ էր,  
 Աղճօն առաջ կանգնած էր,  
 Պատերազմի կը սպասէր:  
 Ոսկեզօծ բաշլուղներով,  
 Լազի շորեր թանկագին,  
 Գրնուժ էին դէպի Սասուն  
 Օգնելու Անդրանիկին:  
 Համիտիէ ալային  
 Հրովարտակ բաժնեցին,

Թնդանօթով զէնքերով  
 Գէպի Սասուն գնացին:  
 Հայ քաջերը դիրք մտան,  
 Թշնամուն պաշարեցին,  
 «Աժէն կողմից կրակ տուէք,  
 Կստորեցէք», — գոռացին:  
 Եաման եկաւ ջան ֆէտան,  
 Սարսափ ախրեց բանակին,  
 Փախչում էին դէպի լեռներ,  
 Վախկոտները խմբովին:  
 Խաւարից լոյս ծագեցաւ,  
 Երեւում էին յոյսեր.  
 Գաշնակցու թևան ցանած սերմեր  
 Տալիս էին նոր բոյսեր:  
 Մեր ապագայ սերունդից  
 Ըսպասում ենք մեծ յոյսեր.  
 Կ'երգենք միշտ ազատ կրծքից  
 Խրախուսալից վեհ երգեր:

ՔԱՅԼԵՐԳ ՍԱՍՆՈՅ

Սասունն ելաւ ապստամբեց  
Աշխարհի մէջ հանեց թունդ,  
Ամերիկա, Եւրոպ ցնցեց,  
Քաջաց բանակ գունդագունդ:  
Հայոց սրտեր թրթռացին,  
Հայու ձայնը սրտաց,  
Կտրիճք յառաջ խաղացին,  
Ազատութիւնը թնդաց:  
Ա՛խ, Սասունցիք, քաջ  
Սասունցիք,  
Ձեր արիւնին մենք զուրպան,  
Միութեան սուրբ սերմեր ծըլին,  
Ազատութեան մենք զուրպան:  
Թուրքը լսեց և կատաղեց,  
Չօրքեր հանեց բիւրաւոր,  
Յիսուն հազար իւրտեր կանչեց,  
Արիւնարբու, զօրաւոր:  
Եւ Սասունը պաշարեցին,  
Այն վայրենի գնդերը,  
Թնդանօթներ սրտացին,  
Քարքանդ ըրին գիւղերը:  
Ա՛խ, Սասունցիք, քաջ  
Սասունցիք,  
Ձեր արիւնին մենք զուրպան,  
Ա՛խ, սուրբ հողիդ, անմա՛հ  
սրգիք,  
Դիակներուդ մենք զուրպան:  
Մօր արգանդը թուրքը պատուեց  
Գլուխն անցուց նիզակին,  
Մինչ վերջին շունչ Սասուն  
կռուեց  
Ազատութեան կարօտով:  
Ա՛խ թուրք ու քիւրտ  
բռնաւորներ,

Նզովք ըլլայ ձեր գլխուն,  
Միշտ կտրիճ են Սասունցիներ,  
Նզովք, Չէքի, քս անուն:  
Եւ արիւնը գետի նման,  
Թրջեց Սասնայ վեհ սրտեր,  
Հայք բիւրաւոր կոտորուեցան,  
Բռնութեան քաջ սուրբ զոհեր:  
Եւրոպ տեսաւ ցնցեց անդին,  
Ապշած նայեց Հայերուն,  
Տեսաւ վիճակ գէշ է թուրքին  
Եւ խորհեցաւ շահերուն:  
Եւրոպ արեան չհաւատաց  
Եւ յանձնախումբ մը ծնաւ,  
Թուրքնալյառաջ ինկաւ խնդաց,  
Չիւնստ լեռներ ցոյց տուաւ:  
Եւրոպա, ա՛խ, մօր մը պէս  
խորթ,  
Հայ դիակներ կը ծաղրես,  
Թուրքը կ'ընտրես քեզ  
առաջնորդ,  
Այս ի՞նչ կատակ մեզ կ'անես:  
Կեցցէ՛ կռիւ, կեցցէ՛ արիւն,  
Այս է ճամբան միշտ մեզի,  
Մեր արիւնը Եւրոպային  
Անշուշտ թէ քիչ կը թուի:  
Ազատութեան համար անմահ  
Թող ելլէ սղջ Հայաստան,  
Մեր արիւնով մեզ է ներկած  
Շահախնդիր Եւրոպան:  
Սասունցի կին, Սասունցի քաջ,  
Ձեր արիւնին մենք զուրպան,  
Միութեան սուրբ սերմեր ծըլին,  
Ազատութեան մենք զուրպան:  
ՊԵՐՃ ՄՈՒՇԼՈՒ



ԴԺՈՒՔ—ՀՐԱՅՐ

ԴԺՈՒՔ—ՀՐԱՅՐԻ ԵՐԳԸ


Գերեզմանիս թող արձանին վրայ,  
Գրեն, յաղթութեան թէ կսթող է սա,  
Թող տեսնէ Հայաստան թող կարգան հայ քաջեր,  
Տեսնեն իւրեանց ընկեր  
Նահատակ է պառկեր,  
Ծոցն Հայաստանի:

Անձնուէր եւ քաջ Գազարեանի պէս,  
Ցուցնեն քաջութիւն քաջ Արմէնի պէս,  
Գալարին տղիքներ, թափին գաղջ արցունքներ,  
Տեսնեն իւրեանց ընկեր  
Նահատակ է պառկեր,  
Ծոցն Հայաստանի:

Յուսով եմ կընքած աշացս վերջին քուն,  
Տեսնէ Հայաստան իւր ազատութիւն,  
Իմ գերեզմանիս քով թող կայնին ու ձայնն,  
Ահա ազատութիւն,

Եւ ահա փրկութիւն,  
Քաղցր Հայաստանի:  
Հանդէին սսկորներ մէջ իմ տապանին,  
Տեսնեն փրկութիւն Մայր-Հայաստանին:  
Այն առեն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,  
Ազատ դրօշակներով,  
Հայու զինուորներով,  
Ֆեռայիններով:

### ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ ՄԱՀԸ



ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ

Պանք Օթօման գրաւած է  
Դաշնակցական կոմիտէն,  
Նրա մէջը լեցուցած է  
Պայթիչ, խորտակիչ ոււմբով:  
Ամէն հայ քաջ սպասուժ էր  
Այն սիրելի բոպէին,  
Թէ ե՞րբ պիտի նետուի ոււմբը  
Ու խորտակուի թշնամին:  
Ահա ինկաւ պատուհանէն  
Մի կլորիկ զուժպարա,  
Հոն սարսեցաւ Սուլթան Համիտ  
Եւ իւր վատ իզգէթ փաշան:  
Երբ այս լուրը Համիտ լսեց,  
Քովը կանչեց Նազըմը,  
Գնա՛: ըսաւ, հանդարտեցո՛ւր,  
Այդ խուզկաւ Հայերը:

Պանք-Օթօման գետեզուած է  
Բարկէն Սիւնի, յարկին տակ,  
Հոն զսնուեցաւ Բարկէն Սիւնի  
Դաշնակցական վեհ հսկան:  
Սորա անունը սարսեցուց  
Հարիւր հազար միւսլիման,  
Սոցա Սուլթան Համիտ կոչուած  
Իսլամ ազգին խալիֆան:



# Ի ՋԷՆ, ՀԱՅԵՐ

Moderato

Ի ջէն, հայեր, ի սուր և ի հրացան, Տաճկահայաստանից կոչում է մի ձայն, Լեռնից լեռ թնդում է անեղ հրրաման, Թըռէք, Հայեր, թըռէք դէպի Հայաստան: Դէպի, դէպի, դէպի Հայաստան, Թըռէք, Հայեր, թըռէք, դէպի Հայաստան:

Արեւելք և արեւմուտք, հարաւ և հիւսիս, Դըղըդաց ու թնդաց քաղցրը աւետիս, Հայկայ քաջ զաւակաց արի կրծքերից Ազատութիւն հնչեց ամէն կողմերից: Ամէն, ամէն, ամէն կողմերից, Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:

Փրկութեան աւետիք առած ի բերան, Խումբ խումբ Հայեր դէպի Տաճկահայաստան Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք, Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք: Փրկել, փրկել, փրկել հայրենիք, Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկահայաստանը սաքի է կանգնում, Առիւծաբոց վըրէժ, վըրէժ է գոռում, Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը, Արիւնով ներկուած են բոլոր գետերը: Բոլոր, բոլոր, բոլոր դաշտերը, Արիւնով ներկուած են բոլոր գետերը:

Ի ջէն, Հայեր, ի սուր և ի հրացան,  
 Տաճկահայաստանից կոչում է մի ձայն,  
 Լեռնից լեռ թնդում է անեղ հրրաման,  
 Թըռէք, Հայեր, թըռէք դէպի Հայաստան:  
 Դէպի, դէպի, դէպի Հայաստան,  
 Թըռէք, Հայեր, թըռէք, դէպի Հայաստան:

Արեւելք և արեւմուտք, հարաւ և հիւսիս,  
 Դըղըդաց ու թնդաց քաղցրը աւետիս,  
 Հայկայ քաջ զաւակաց արի կրծքերից  
 Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:  
 Ամէն, ամէն, ամէն կողմերից,  
 Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:

Փրկութեան աւետիք առած ի բերան,  
 Խումբ խումբ Հայեր դէպի Տաճկահայաստան  
 Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,  
 Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք:  
 Փրկել, փրկել, փրկել հայրենիք,  
 Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկահայաստանը սաքի է կանգնում,  
 Առիւծաբոց վըրէժ, վըրէժ է գոռում,  
 Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը,  
 Արիւնով ներկուած են բոլոր գետերը:  
 Բոլոր, բոլոր, բոլոր դաշտերը,  
 Արիւնով ներկուած են բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,  
 Անթիւ աւար ու գանձ իր յետին թողնում,  
 «Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն» գոչենք միաձայն,  
 Թշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան:

Կեցցէ, կեցցէ, կեցցէ Հայաստան,  
 Թշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան:



«ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ ՄԱԸԸ ՄԻ Է»...

### ԿԱՄԱԻՈՐԻ ԵՐԳԸ

Իմ անուշիկ մայրիկս,  
 Կանչէ թող դայ քոյրիկս,  
 Տամ իմ վերջին համբոյրս,  
 Կանչում է հայրենիքս:

Գնում եմ կռուելու,  
 Օգնելու, յաղթելու յոյսով,  
 Դէմ դնել քաջի պէս թշնամույն  
 Փրկել հայրենիք:

Պարզուել է Սուրբ Դրօշակ,  
 Գնանք մանենք նրա տակ,  
 Աերոք փաշին նմանակ  
 Լինենք ազնիւ նահատակ:

Ուխտել եմ, զինուել եմ,  
 Անձնուէր քաջի պէս կռուել,  
 Ազատութեան գրօշներով  
 Փրկել խեղճ հայրենիք:

Այնտեղ Ռուսն է մեղ տանջում,  
 Այստեղ Թուրքն է մեղ մորթում:  
 Համարում են մեզ մըջիւն  
 Մեր ունեցածը ձեռքից խլում,

Գնում եմ կռուելու,  
 Օգնելու, յաղթելու յոյսով,  
 Դէմ դնել քաջի պէս թշնամույն,  
 Փրկել հայրենիք:

ՍԵՐՈՐ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Andante

Ով որ քաջ է... ի՞նչ կըս պատէ,  
 Արդէն ժամանակն է թո՛ղ գայ, Մահ պատերազմի օրհաս է,  
 Ո՛վ որ անվախ, քաջ է թո՛ղ գայ:  
 Կամ կուռելով մեռնեն քանցնենք  
 Կամ զէնքով փրկութիւն  
 ստանանք,  
 Կուռելով փրկենք հայրենիք,  
 Ազնիւ մտածողը թո՛ղ գայ:  
 Մերթ Սասնոյ մէջ, մերթ ի  
 Սիփան,  
 Կռիւ անենք միշտ անխափան,  
 Կուռելով փրկենք հայրենիք,  
 Այս յոյս ունեցողը թո՛ղ գայ:  
 Այս հինգ դար է մեզ կը  
 սպաննեն,  
 Բռնի՛ կրօնքէ մեզ կը հաննեն,  
 Մեր կին, աղջիկներ կը տաննեն,  
 Պատիւ ունեցողը թո՛ղ գայ:  
 Քարէ հողի, երկաթէ մարդ  
 Հալածէ թո՛ղ վատը նամարտ,  
 Անվախ՝ քարի տակ շոքողը,

Ով որ քաջ է ի՞նչ կը սպատէ,  
 Արդէն ժամանակն է թո՛ղ գայ,  
 Մահ-պատերազմի օրհաս է,  
 Ո՛վ որ անվախ, քաջ է թո՛ղ գայ:  
 Կամ կուռելով մեռնեն քանցնենք  
 Կամ զէնքով փրկութիւն  
 ստանանք,  
 Կուռելով փրկենք հայրենիք,  
 Ազնիւ մտածողը թո՛ղ գայ:  
 Մերթ Սասնոյ մէջ, մերթ ի  
 Սիփան,  
 Կռիւ անենք միշտ անխափան,  
 Կուռելով փրկենք հայրենիք,  
 Այս յոյս ունեցողը թո՛ղ գայ:  
 Այս հինգ դար է մեզ կը  
 սպաննեն,  
 Բռնի՛ կրօնքէ մեզ կը հաննեն,  
 Մեր կին, աղջիկներ կը տաննեն,  
 Պատիւ ունեցողը թո՛ղ գայ:  
 Քարէ հողի, երկաթէ մարդ  
 Հալածէ թո՛ղ վատը նամարտ,  
 Անվախ՝ քարի տակ շոքողը,



ՏԱՐՕՆԻ ԱՌԻԻԾՐՆԸ ՍԵՐՈՐ ՓԱՇԱ

Անսխալ խփողը թո՛ղ գայ:  
 Վերջապէս մենք ունենք կռիւ,  
 Զէնքով պիտի մաքրենք հաշիւ,  
 Մեր հայրենիաց փառքն ու  
 պատիւ  
 Մերօր փաշան սիրողը թո՛ղ գայ:

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Andante

Վաշնաւորեց՝ վ. ՍԱՐԳՍԵԱՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
 Թնդացնում ես երկինք երկիր տինչավառ,  
 Քաջ անուներդ պիտի յիշուի դարէ դար,  
 Հսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ:

Թշնամ իներ երբ լսեն քո անուներ,  
 Օձերի պէս պիտ' սողան իրանց բոյնը,  
 Երակներիդ ազնիւ քաջի արիւնը  
 Չը ցամաքէ՛ մ'ինչ յաւիտեան, Անդրանի՛կ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,  
 Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պըսակեն,  
 Գոհարներով անվախ կուրծքըդ զարդարեն,  
 Կեցցի՛ս յաւէա դու անսասան, Անդրանի՛կ:

Հայաստանի սոխակները քեզ համար  
 Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար,  
 Անյաղթ մընաս, դու քաջ կռուի սիրահար,  
 Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանի՛կ:



«Իբրեւ արծիւ սաւառնում էս»...



ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՅԴՈՒԿ ԱՆԴՐԱՆԻԿ

Անդրանիկ փաշան բիւր ընկերներով,  
 Զինուած պատրաստուած մոսիւն ղէնքերով,  
 Անցաւ սար ու ձոր իւր տասնեակներով,  
 Սասուն, Ախլաթ, վան դարձան արեան ծով:

Շրջում անվեհեր փոքրիկ խմբերով,  
 Ընդդէմ թշնամուն կռիւ մղելով,  
 Կաւում անվեհեր գողարիկ երգերով,  
 Վրէժ առ վրէժ Հրայր յիշելով:

Դէ՛հ, ելէ՛ք, աղե՛րք, ժամանակ հասաւ,  
 Հայդուկ Անդրանիկ մեզի կը սպասէ,  
 Տարօն, Մուշ գաւառ արիւն կը հասէ,  
 Անդրանիկ փաշան ձեզ խրախուսէ:

## ԳՈՒՐԳԷՆԻ ԽՈՒՄԲԻՆ ԿՌԻԻԸ ՏՐՕՆՔ ԳԻՒՂԻՆ ՄԷՋ

Եկեր առջեւս կայներ ես,  
 Ինչո՞ւ մինակ եկեր ես,  
 Ինն գացիր, մինակ եկար,  
 Արդեօք ընկերքդ ի՞նչ եղան:

Եկեր առջեւդ կայներ եմ,  
 Աչքերս կուրցած եկեր եմ,  
 Ինն գացի մինակ եկայ  
 Հայ քաջեր կորուսեր եմ:

Այդ ի՞նչ խօսք էր խօսեցար,  
 Զօրեղ բազուկս թուլցուցիր,  
 Այդ ի՞նչ եղելութիւն էր,  
 Մէկէն մեզի պատմեցիր:

Դալիպ Բաղշու ելեր էր,  
 Մեր Սալբի Մուշ առեր էր,  
 Քամբախտ Մշուց ելեր ենք,  
 Յրօնք գիւղը իջեր ենք:

Մենք այդ թիւով ութ հոգի,  
 Մըլքէ մարագ մտեր ենք,  
 Մի քիչ հանգիստ առեր ենք:  
 Թշուառ Սըլօն, իւր որդին,

Լուր տէրութեան զրկեր են,  
 Զօրքեր Յրօնք լեցուեր են,  
 Կազի սանդուղ բերեր են,  
 Մարագ վրանիս վառեր են:

Որոնք որ շուտ դուրս ձգուան,  
 Ափսո՛ս անոնք շուտ դարնուան,  
 Ապրին Գուրգէն և Ռուբէն,  
 Ներսէն տուին հրացան:

Անոնք ալ շուտ դուրս ելան  
 Եօթն ութ շուներ սպաննեցին,  
 Դէպ՛ Յունանայ տակ գացին,  
 Զանոնք ալ հոն սպաննեցին:

Այդ ի՞նչ խօսք էր խօսեցար,  
 Զօրեղ բազուկս թուլցուցիր,  
 Այդ ի՞նչ եղելութիւն էր,  
 Մէկէն մեզի պատմեցիր:

Կապած կամուրջ կամար էր,  
 Հայ տղոց սիրտը քար էր,  
 Դուն չես գիտեր՝ մեր արիւն  
 Հայոց ազգին համար էր:



ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Andante

Գաշնաւորեց՝ Վ. ՍԱՐԳՍԵԱՆ



ՀԱՄԱԶԱՍՊ

Ծագեց արեւ ազատութեան,  
 Փախէ՛ք ամպեր երկնքից,  
 Համազասպը իր խմբովը  
 կուգայ իրաչէն գաւառից:

Գալիս էին բազում զօրքով,  
 Ագիգեօզալ Բէկովը,  
 Յանկարծ ընկաւ ասկերանը,  
 Հերոսների ուռկանը:

Թուրք խուժանը սարսափահար  
 Փախչում էին գլխիկօր,  
 Թողնելով իրանց յետեւից,  
 Դիակներ հարիւրաւոր:

Հայերիս տէր Գաշնակցութիւն  
 Քաջեր ունիս սրտալի,  
 Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ,  
 Համազասպը պանծալի:

## ԱՂԲԻՒՐ ՍԵՐՈՐ

Խլաթի գաւառ,  
Սոխորդ գեղ ըսուած  
Իրեն բնակից՝  
Աղբիւր ջան,  
Բարիքով լցուած:

Պօղոս, Գրիգոր,  
Թիւրքին սիրական,  
Կ'ուզեն վերջացնել,  
Աղբիւր ջան,  
Ամբողջ Հայաստան:

Պօղոս, Գրիգոր  
Խորհուրդ կազմեցին,  
Թուրք ոստիկաններ,  
Աղբիւր ջան,  
Ամբողջ կանչեցին:

Սանաթ տուեցին,  
Նորէն շրկեցին,

Թեղուտ ու Սոխորդ,  
Աղբիւր ջան,  
Յանկարծ պատեցին:  
Անիծած Դաւիթ  
«Աղա ջան» կանչեց.  
— Կեղծութեամբ ըսած —  
Աղբիւր ջան,  
Թէ զօրք մեզ պատեց:  
Սոխորդայ վերել՝  
Նեմբութ մեծ սարէն  
Յուցակ տուաւ մեզ,  
Աղբիւր ջան,  
Զէն մոսիսներէն:  
Կեցցէ՛ քաջ Աղբիւր  
Եւ իր մօսինը,  
Յիսուն և հինգ զօրք,  
Աղբիւր ջան,  
Ըրաւ ցան ու ցիր:

## ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Մարտի դաշտը սլացէք ո՛վ քաջեր,  
Թող ձեր ահէն սարսին վատ Քիւրտեր,  
Մեր հայրենիք արեան կրակի մէջ է,  
Ալ ձեռք քաշենք սղբ ու կոծէ և լացէ:

Մեր տունն այրող հուրը կարէ սրտերնիս,  
Ինչո՞ւ այլիւս անգործ պահենք սուրբնիս,  
Առիւծի պէս առաջ նետուինք մարտի դաշտ,  
Կամ ազատուենք, կամ համբոյր տանք մահին հաշտ:

Ապրէ՛ ուրեմն, ո՛հ ապրէ դու, թշուառ հայրենիք,  
Քեզ յօշոտող, քեզ խոշտանգող թշնամիք  
Զեն կրնար սպաննել, գերեզման մտցնել,  
Ահա հայ քաջերը անարգել, կը փութան քեզ ազատել:

Օ՛ն գէպի մարտ, գէպի ահեղ կռուի դաշտ,  
Սարուկներ չենք, կը մեռնինք, կը զոհուինք հպարտ,  
Օ՛ն, քաջ կռուենք ու յաղթենք, կոտորենք թշնամին նենգ,  
Կռուի մէջ մենք մահէն երբեք վախ չունենք:

### ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇԻ ԵՐԳԸ



ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇ

Թուրքը լսեց անունդ, Չավո՛ւշ:  
Դէմքդ սիրուն, լիզուդ անուշ,  
Կեանքիդ մէջ հանգիստ

Հունեցար,

Թշնամեաց դարձուցիր ապուշ:  
Սասունն է քո ապաստան,  
Վրեժն է քո դաստասան:

Հայոց համար սպարապետ,  
Անդրանիկին ընկեր վարպետ,  
Սասունը կանգուն պահեցիր,  
Օգնող է քեզ Սուրբ Կարապետ,  
Սասունն է քո ապաստան, եւ լին։

Կատրեցիր քանիցս վաշտ,  
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ,  
Անվախ հերոս՝ Քուրդաց դէմը՝  
Մինչև վերջը մնացիր անհաշտ:  
Սասունն է քո ապաստան, եւ լին։

### ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հազար ինն հարիւր հոթը թուականին,  
Չքնաղ Մայիսի քսան է հոթին,  
Տօն է բազմաշխատ՝ մահուան Դէորդին,  
Սասնոյ հարազատ մեծանուն քաջին,

Որ գրկած հողը հայրենի երկրին,  
Մօտ քսան տարի ծառայեց ազգին,  
Կռուեցաւ անվերջ հետը տուշմանին,  
Միշտ յաղթեց մէկով անոնց հազարին:


Վերջին կռիւ մ'ալ կը սպասէր քաջին,  
Պըսակելու զինք վառաց երկնային,  
Եւ ահա զօրքը պաշարեց Սուլուխ,  
Եռաց կռիւ մ'ալ ինչպէս հրաբուխ:

Յառաջ արշաւեց Քոստ Պինպաշին  
Կանչեց՝ Ֆէտայի՛ք, մահն է ձեր բաժին:

Որտաց Գէորգ. — Անիրա՛ւ տուչման,  
Եկուր թանկ կեանքդ ծախեմ շատ աժան:

Հարուածը խօսքէն շատ հեռու չեղաւ,  
Իսկոյն պինպաշին ձիէն վար ինկաւ.  
Երբ ինկած տեղից սւղեց վեր կանգնել,  
Հասաւ Մ. քոյից դնդակ մահարեր:

Վրէ՛ժ, ընկերներ, դիմենք դէպի մահ,  
Պարոն Ռուբէնը մռնչեց անահ,  
Ա՛լ չվախենանք թշնամու սխից,  
Ազատ մեռնիլը քաղցր է ամէնից:



ՌՈՒԲԷՆ (ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ)

Քաջի մօտինը գոռաց երեք ժամ,  
Երկինք ու երկիր թնդաց մի անդամ,  
Խիստ իրարանցում եղաւ զօրաց մէջ,  
Փռսւող դիականց չկար թիւ ու վերջ:


Թնդաց սրտերը տասնհակ քաջերուն,  
Կռուեցան անվերջ մինչեւ իրիկուն,

Իսկ երբ գիշերեց՝ Գէորգը շալկած,  
 Գիւղէն դուրս ելան և գացին արամած:  
 Ճամբան աղաչեց քաջն մահամերձ,  
 Հանգիստ ձգէք զիս, մի ընէք շնչահեղձ,  
 Իրէք զիս այստեղ, ծածկէք խոտերով,  
 Գացէք, ընկերնե՛ր, դուք գացէք բարով:  
 Վերջին բարեւներս տարէք հայ ազգին,  
 Վերջին համբոյրներս՝ որդիս վարդգէսին:  
 Լացին ընկերներ, մօտեցան կարգով,  
 Համբուրեցին զինք ու անցան խմբով:  
 Նայեց բոլորաիք, ա՛լ չկար ընկեր,  
 Ընկած կռուի դաշտ օտառապէր անտէր,  
 Համբուրեց հողը քաղցրը հայրենեաց,  
 Փակեց աչքերը ներքեւն աստեղաց:  
 Հանգիստ, փրկութիւն իր սուրբ օսկերաց,  
 Պատուաւոր, յարդի անունդ անմոռաց,  
 Հայն ալ միշտ պիտի տօնէ դարէ դար,  
 Ազնիւ Գէորգի տօնը, անդադար:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ  
 (Մշոյ Առաջնորդ)

## Ս Ա Ս ՈՒ Ն

Իսլամական դոռ վաշտերը կատաղի,  
 Պաշարեցին մեր լեռները սոսկալի:  
 Մի վհատիւր քաջ Սասուն,  
 Քեզ համար չէ նորութիւն,  
 Մեր պապերից սովրել ենք  
 Մեռնիլ տղամարդի պէս,  
 Զոր մեզ թողին յիշատակ:  
 Շէնիկ, Սէմալ պաշարուած են Քիւրտերով,  
 Տալոօրիկի անցքն է փակուած թիւրքերով:  
 Զքեզ տեսնեմ քաջ Մուրատ,  
 Մուրդ շարժիր անվհատ,  
 Մեր հեռաւոր եղբայրներ  
 Զեն կենար միշտ անտարբեր,  
 Շուտով կըզան օգնութեան:



ԱՐԱՌԻԼ ԼԵՌԸ ԵՒ ԽԱՆԱՍՈՐԻ ԴԱՇՏԸ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

Moderato

Դաշնաւորեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

Կարկուտ տեղաց խանասորայ դաշտումը, քաշտու մը: Ծէտայիներ

քաշնակցական վըրիժառու գոռում են: Գոռում են:

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,  
 Ֆէտայիներ դաշնակցական վրիժառու գոռում են:  
 Սոսկաց Քիւրդը՝ լիզապատառ Մազրիկցին,  
 Չէր երազում ջնջուել ի սպառ քաջ Ֆէտայու գնդակից:

— Եաման, Աստուած, Ֆէտան եկաւ ուր փախչինք,  
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդունին:

— Մի՛ վախենար, հանգիստ կեցիր, բաջի ջան,  
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ Ֆէտան:

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,  
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ:

Փչի՛ր, շեփոր, դէպ՛ Արաուլ մենք թռչենք,  
Դիրքեր բռնենք, գաթա, հալուա ձիւնի ջրով ձաշակենք:

Մերթ կուում է, մերթ բարձրանում քաջ Ֆէտան,  
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:


Չկար կարօն, ախուր պատեց ամէնքին.  
Երանի՛ է նրա հոգուն, որ գոհ դարձաւ այդ կռուին:

Քեզ ենք յանձնում, մեր քաջերը ո՛վ պաշտելի Արաուլ,  
Կրծքիդ մէջը ամուր պահիր անմահ գոհերն Հայերուն:

Կը գայ շուտով շղթան կարած հայ մարդը,  
Մեր գոհերը ամուր պահիր գրկիդ մէջը խնկելի:

Հայե՛ր, յիշէք նուիրական այդ օրը,  
Յուլիս ամսու քսանհինգին կատարեցէք մեր տօնը:

ԹՈՐՈՍ



Կ Ա Ր Օ  
(Արիստակէս Զօրեան)



Թ Ո Ր Ո Ս  
(Գալուստ Ալոյեան)

## ԽԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պատերազմ է գնում Հայոց քաջ խանը,  
 Չեռքին բարձրացուց սուր հրացանը,  
 Սարսափից դողում է Համիտ Սուլթանը:  
 Օգնե՛, սե՛ր իմ, օգնե Հայոց բանակին,  
 Հայոց փաջ խանին:

Կանչէ Սերոբ, կանչէ գոհ եմ Աստուծուն,  
 Հայ քաջերը գնում են դէպի Սասուն,  
 Անդրանիկ, Թումանեանց մեզ են սպասում:  
 Օգնե՛, սե՛ր իմ, Լալլն:

Տաճկաստան ուր մանենք քարուքանդ կ'անենք,  
 Մէկ հաւ տանողին տաս մարդ կը սպաննենք,  
 Կին ազջիկ տանողին գերդաստանը կ'այրենք:  
 Օգնե՛, սե՛ր իմ, Լալլն:

Հայ քաջերի ձեռքին մոսին հրացան շողշողուն,  
 Իրաւ շողշողուն, Աստուծոյ ողորմութիւն ձեր վրայ ցողուն,  
 Սարսափիցը սար ու ձորեր դողդողում:  
 Օգնե՛, սե՛ր իմ, օգնե՛ Հայոց բանակին,  
 Հայոց փաջ խանին:

## ԿԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Կամաւոր հայ զինուոր ենք,  
 Պատերազմի կը վազենք,  
 Վրէժի մէջ մկրտուած,  
 Թուրքի արեան ծարաւ ենք:

Կեցցե՛ փաջ Անդրանիկ եւ  
 րնկերներ,  
 Կեցցե՛ միշտ հայ կամաւոր,  
 Միշտ կեցցեն, միշտ կեցցեն  
 հերոսներ:

Թող Թուրքերը իմանան՝  
 Բանակներով հայկական,  
 Կը կոտորենք աջ ու ձախ,  
 Կամաւոր ենք, չունինք վախ:

Կեցցե՛ փաջ Անդրանիկ, Լլն.:  
 Երթանք դէպի Հայաստան,  
 Պարզենք դրօշը հայկական  
 Որուն տեսքէն պանծալի,  
 Թող վատ Թիւրքը սարսափի:  
 Կեցցե՛ փաջ Անդրանիկ, Լլն.:



ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՐԳԸ

ԳՆԱՅՈՒՆ

Կով-կասի քաջե՛ր, խմբեր կազմեցէք,  
 քաջ Անգրանիկին օգնութեան հասէք,  
 Առած իր շուրջը զինուորներ ութսուն,  
 Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն:  
 Սուլթան սարսափած, ճարը կարուած,  
 Հազար ոսկի է գլխին խոստացած:

Կովկասի քաջե՛ր, խմբեր կազմեցէք,  
 Քաջ Անգրանիկին օգնութեան հասէք,  
 Առած իր շուրջը զինուորներ ութսուն,  
 Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն:  
 Սուլթան սարսափած, ճարը կարուած,  
 Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով շարժուեցէք,  
 Երբեք մի վախնաք, սուսեր շարժեցէք,  
 Հասել է ժամը սուրբ ազատութեան,  
 Կենալու ժամ չէ, շուտով քալեցէք:  
 Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,  
 Ունենանք, Հայե՛ր, սուրբ ազատութիւն:

Քաջ Անգրանիկը անվախ, սուր առած,  
 Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,  
 Աջ ու ձախ ջարդել թուրք զինուորներին,  
 Քիւրդերից մատաղ բերել վանքերին:  
 Դէ՛հ, Շաքիր փաշա, մտածիր հնար,  
 Հազար ոսկիով անհա գլխիդ ճար:

Կովկասի քաջե՛ր, առիւծի ճուտեր,  
 Սիրէք ձեր սուսեր, առէք նիզակներ,

Հայ օրիորդներ, օրհնեալ տիկիներ,  
Ծախէք ձեր դարդեր, առէք զնդակներ:  
Աղքատ, քո լուսման տուր հայրենիքին,  
Փրկելու քո խեղճ կարօտ ընկերին:

Դէ՛հ, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,  
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,  
Ահա կռուի դաշտ թշնամին անհաշտ,  
Մեր սուր թող ուտէ օսմանեան վաշտեր:  
Ասաւ քաջ Մուրատ՝ առած եմ խրատ,  
Կամ կռուիլ ազատ, կամ մահ տնարատ:

### ՀՆՋԱԿԵԱՆ ԵՆՔ ՄԵՆՔ

Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ,  
Կեանքի չափ սիրենք մասին հրացաններ,  
Նորից պիտ' ելլենք Սասնոյ սարերը,  
Ձոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով:

Մեզի ասացին հանգիստ նստեցէք,  
Սուլթանին հետը գործ մի ունեցէք,  
Ձեր ազգին դատը մեզի յանձնեցէք,  
Նրա վճիռը մեզնից ուզեցէք:

Ուզիդ հօթ տարի ոչինչ չարեցինք,  
Եւրոպի խօսքին ականջ դրեցինք,  
Ալ բաւական է, ինքզինքնիս գտնենք,  
Հնչակեան դրօշը կրկին վեր առնենք:

Մենք պիտ' պաշտպանենք մեր արդար դատը,  
Սարսափ պիտ' ձգենք ամբողջ Երլորդը,  
Գացէ՛ք ու ըսէք Սուլթան Համիտին,  
Կեանքը շատ սուղ է հնչակ զինուորին:

Քանի որ Սուլթան չունի գթութիւն,  
Ուժով պիտ' առնենք ինքնավարութիւն.  
Ողջ մնաս Սասուն, ապրիս մեր Զէյթուն,  
Կարմիր տողերով թողնենք պատմութիւն:

Թաթուլն եմ ես ձեր միշտ աւետարեր,  
Ոտքի կայնեցէք հնչակ զինուորներ,  
Կենաց եւ մահու հնչեն զանգակներ,  
Ալ մեզ համար չեն աշխարհի օրեր:

ՊԵՏՐՈՍ ՍԵՐԵՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Moderato

Վէր-քե-րով լի ջան ֆի-տայ նմ թա-փա-ռա-կան տուն չու նեմ  
 Եւ-րիս փոխան զէնքս նմ գր-կել, մի տեղ հան գիտո քուն չու նեմ քուն չու նեմ:

Վէրքերով լի ջանֆիտայ եմ,  
 Թափառական տուն չունեմ,  
 Եւրիս փոխան զէնքս եմ գրկել,  
 Մի տեղ հանգիստ քուն չունեմ:  
 Արնոտ երկրի սուգ ու շիւան,  
 Ինձ դուրս կանչեց փակ  
 կեանքից,  
 Տանջուած հայրենիքի սէրը  
 Չը վախեցուց վտանգից:  
 Սասնոյ լեռներ Գողգոթայ են,  
 Շատ բարձր են, խիստ դժուար,  
 Կեանքի խաչը ես շալակած  
 Այնտեղ տարի շատ յօժար:  
 Ես խաչուեցայ. ջան ֆէտայի  
 Սկզբունքը սուրբ մեայ,  
 Թող իմ արեան կաթիլներով,  
 Հայ զինուորը զօրանայ:  
 Մակեդոնական միութիւն  
 Իմ խաչովըս կրնքըւեց  
 Եղբայրական սիրոյ զէնքով  
 Գազան Սուլթանն խորտակուեց:  
 Ահա հանգիստ հող կը մտնեմ,  
 Յոյսըս դո՛ւք էք, ընկերնե՛ր,



ՊԵՏՐՈՍ ՍԵՐԵՄՃԵԱՆ  
 (ՊՈՒԼԿԱՐԱՅԻ ՊԵՏՕ)

Շարունակէ՛ք մեր սուրբ  
 գործը,  
 Գաշնակցութեան վեհ քաջեր:  
 Կախաղանից երբ որ քամ ին  
 Ինձ տարուբերէ ճօճալէն,  
 Յիշէք Պետրոս Սերեմճեանին,  
 Թշնամուց վրէժ գտալէն:



## ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ

Tempo di marcia

Դարձեալ փայլեց Սասնոյ գըլ-խին Լի-զա-տու-թեան դր-րօ-շակ, շակ:.

Կեցցէ հայ-րե—նիք գո-չե—լով Բարձրացը-րին ա—զա-շակ: շակ.

Դարձեալ փայլեց Սասնոյ  
գըլխին

Ազատութեան դրօշակ,  
Կեցցէ՛ հայրենիք գոչելով  
Բարձրացըրին ազազակ:

Թընդաց, որոտաց ձայներից  
Ողջ աշխարհը հայկական,  
Խումբ-խումբ կը գան հայ

գաւակներ

Հայրենիքի օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր-Դժոխք,  
Քաջ Անդրանիկ ղեկավար,  
Տալուորիկի լեռներումը

Շրջում էին անդազար:

Սարսափեցին քիւրդ ցեղերը,  
Մինչ պալաւը Սուլթանին  
Հրամայեց շուտ կործանել  
Դիրքերը հայգուկների:


Ահա անգութ մեր թշնամին...  
Սարսափելի տեսարան,—  
«Ժամանակ է վրէժ լուծել»...  
Գոչեց ձայնը հայկական:

Կըրակ տեղաց հայ քաջերի  
Բընակավայր դիրքերից,  
Կօտորուեցին թշնամիներ  
Ահռելի գնդակներից:

ՊԵՏՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լայն եւ սերտիւ

Զա - ռա - հի - սար լե - ռան կրթ - քին, նա էլ ըն -  
 կուրծ քը պա - տուած սիր - տը խոց - ուած կար թող - նա -  
 կաւ վրա վր - ռա - ւոր, ժ - ռոտ լե - ռան լերկ կա - տա - ռից  
 գրն - ռա - կով:  
 վար սը - լա - ցիր, սե աք - ծի, թե - լե - ռըր բաց -  
 Լայն թե - լե - ռը — դ, ու ջիւա նուն հով ա - ռա:



Պ Ե Տ Օ

(ՎԱԳՆԲՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ)

Գարահիսար լերան կրծքին,  
 նա էլ ընկաւ վիրաւոր,  
 կուրծքը պատուած, սիրտը  
 խոցուած,

Չար թշնամու գնդակով:

ժեռուս լեռան լերկ կասարից  
 վա՛ր սրլացիր, սեւ արծի՛ւ,  
 թեւերդ բաց, լայն թեւերդ,  
 Ու ջիւանուն հո՛վ արա:

Խոցուած սրտից մուգ արիւնը,  
 կաթիլ-կաթիլ կը ձորայ...

Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսում  
 Յաւոտ կըրծքի լայն վերքից...

ժեռուս լեռան լերկ կասարից  
 վա՛ր սրլացիր, սեւ արծի՛ւ,  
 թեւերդ բաց, լայն թեւերդ  
 Ու ջիւանուն հո՛վ արա...

## ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելլինք,  
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք.  
Խեղդուած մեր բողոքը յայտնենք զէնքերով  
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,  
Ճնշուած Հայու որդիք հարագատ:

Քան թէ ամէն վայրկեան կենդանի մեռնել,  
Ազատութեան վճռինք աներկիւղ գոհուել.  
Փափուկ մահճում հանգիստ կեանքը վայել է  
Ով որ հայրենիքում ազատ ապրում է:

Մեր կեանք, մեր մահ, ելն.:

Ըստրկութեան շղթան խուլ շառաչում է,  
Ազատութեան ճնշուած ձայնը գոչում է.  
Ազատ լեռներ թող մեզ լինեն ապաստան  
Եւ ընդարձակ ձորեր՝ ազատ գեղեցման:

Մեր կեանք, մեր մահ, ելն.:

Առաջ դնանք, անվախ զարնենք Համիդին,  
Փրկենք հայ գիւղացին, հանենք վախուկէն.  
Իմաց տանք սուլթանին՝ անխիղճ բռնաւոր,  
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր:

Մեր կեանք, մեր մահ, ելն.:

Յրուած խումբեր Հաճըն, Զէյթուն, Սուէտիա,  
Շտապենք միանալ եւ կազմել զուենդ հայկեան.  
Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,  
Կեանքը մահով կապուած կանգնել նրա տակ:

Մեր կեանք, մեր մահ, ելն.:

## ՀԱՅԴՈՒԿ ԵՄ ԵՍ

Հայդուկ եմ ես Դաշնակցական,  
Սուրբ կողքս, ձեռքքս հրացան.  
Որպէս զինուոր անձնանուէր  
Ես սիրում եմ քաջ ընկերներ:

Քաղցր է ինձի լեռներ ման գալ,  
Թշնամուն դէմ միշտ կռիւ տալ,

Լսել անեղ մարտի կոչը,  
Երգել, կռուիլ զերդ դիւցազանց:

Հայեր, սուրբ է մեր նպատակ,  
Ահա ձեզ զէնք, ահա դրօշակ,


Մահու կորուստ մեր թշնամուցն,  
Կեցցէ՛, կեցցէ՛ Դաշնակցութիւն:

ԵՐԳ ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

Andante

Երբ ալեկոծ ծովու վրայ իմ մակոյկը խորտակուի:  
 Ես փրփրադէզ ալեաց մէջը դեռ իմ յոյսըս չեմ կրտրի:

Երբ ալեկոծ ծովու վրայ  
 իմ մակոյկը խորտակուի,  
 Ես փրփրադէզ ալեաց մէջը  
 Դեռ իմ յոյսըս չեմ կտրի:  
 Բոլոր ուժովս և համարձակ  
 Բազուկներըս կը շարժեմ,  
 Ալիքները պատառելով  
 Դէպի ափունք կը թռչեմ:  
 Ահաւասիկ այս կռուի մէջ  
 Թէ ուժերըս ինձ թողնեն,  
 Ալիքները յորձանք տալով  
 Դէպի անդունդ ինձ տանեն,  
 Այն ժամանակ գէթ սփոփանք  
 Ես գտնուեմ եմ նրա մէջ,  
 Որ մեռնուեմ եմ քաջի նրման,  
 Կռիւ տալով մի նշեւ վերջ:  
 Ես կուկունեան Սարգիս անուն  
 Աքսորման մէջ ինկած եմ,  
 Ազատութեան սիրոյն համար  
 Կեանքս ու հոգիս զոհած եմ:  
 Զեւքերս շղթայ, ոտքերս շղթայ,  
 Մութ բանտին մէջ ինկած եմ,  
 Հայրենիքիս սիրոյն համար  
 Կեանքս ու հոգիս զոհած եմ:



ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆ


Գերեզմանիս քարին վրայ  
 Սէրըդ սիրով դու երգիր,  
 Եւ փոխանակ իմ երեսին՝  
 Շիրմիս քարին համբուրիր:  
 Մընա՛ք բարեալ, սուր, հրացան,  
 Մընա՛ք բարեալ, ընկերներ,

Անցան օրերս ազատութեան,  
 Եկան բանտի շղթաներ:  
 Գերեզմանիս չորս բոլորը,  
 Վարդ, մանիշակ թող բուսնին,

Իմ հայրենեաց խեղճ  
 զաւակունք

Այդ վարդերով զբօսնուն:

Գ. ԹԱԴԵՈՍԵԱՆ



ՍՈՒԼՈՒԽԳԻՒՂԻ ԿԱՄՈՒՐՋԸ (ՄՇՈՅ ԳԱՇՏ)

## ՍՈՒԼՈՒԽԳԻՒՂԻ ԿՈՒՈՒԻ ԵՐԳԸ

Սոսկունն ահաւոր պատեց Մշոյ դաշտ,  
 Նորէն հառաչեց հէք Սուլթան անհաշտ,  
 Սարսափը մեծ էր, վախցաւ օսմանցին,  
 Ղուժանտար կանչեց Քօսա Պինպաշին,  
 — Հասիր բանակով ապստամբ Սուլուխ,  
 Սկսի կրակ, բարձրանայ վեր մուխ:

Ազատ որդիներ Գէորգ եւ Ռուբէն  
 Ի՞նչ միջոց պէտք է որ ի գործ դնեն.  
 Ուզեցին քաշուիլ ի սէր գիւղացւոց, —  
 Պինպաշին կռուոյ փողը հնչեցուց.  
 Տասնեակ զատուելով տղերք զիրք առին,  
 Աստուած կանչելով կրակ բաց արին:

Կռուկեցէք, տղերք, Գէորգ կը ձայնէր,  
Տաքցաւ հրացան, վառեց գնդակներ:  
Ի մէջ մեծ յուզման քաջ ֆէտաներին,  
Աւրեր էր հրացան Գէորգ Չավուշին,  
Երբ ինք անտարբեր հրացան կը քննէր,  
Գնդակի կայծ մը ձախ կողմ կը մտնէր:

Չարնուեր էր Գէորգ, սարերի ասլան,  
Իր զէնքին նայեց, մէկ ալ իր արեան,  
Ուղղեց մոտինը իր նպատակին,  
Ունաց, վար ինկաւ Քօսա Պինպաշին.  
Երբ ինկած տեղից ուզեց վեր կայնել,  
Հասաւ Մքոյից գնդակ մահաբեր:

Տանիքն ընկողմած Գէորգ կը գիտէր,  
Չարկէ՛ք, անխնայ, տղեր՛ք, կը ձայնէր,  
Թող մեր հրացանի որոտման ձայնէն,  
Սարսափի Սուլթան Եըլաըզի գահէն:  
Դէ՛հ, կռուինք, տղեր՛ք, մինչեւ շունչ վերջին,  
Արժանի լինենք փառաց պսակին:

Տաճկաց բանակը կոտրած սպաւոր,  
Դարձաւ դէպի Մուշ սանճագ սեւաւոր,  
Կորուստը մեծ էր, յաղթանակ չքեղ,  
Վերանայ լինի քամ բախտ Սուլուխ գեղ:  
Ղարսեցի Յակօն, կալէն Սպաղանցին,  
Երկու կտրիճներ նահատակուեցին:

Արեւն որ անցաւ իննակեան սարէն,  
Մարտադուր կանչեց ռազմագէտ Ռուբէն:  
Սարհատ սիրականն հետերն իդ տարէք,  
Կանաչ դաշտի մէջ զքաջն պառկեցուցէք,  
Եւ արտասուախառըն ֆէտայիներ,  
Համբուրել գացին Գէորգ Չավուշին:

Հուսին բարձրացաւ դէպ՝ երկնից կամար  
Մշոյ դաշտ տրտում տխուր կ'երեւար:  
Է՛, մնաս բարեա՛ւ, հառաչեց Սարհատ,  
Ա՛խ, չտեսայ զքեզ վայրկեան մը ազատ,  
Փչեց վերջին շունչ, ըսաւ լուսնակին,

Սիրոյ ողջոյնս տար Անդրանիկ պետին:

Մեռնիմ քեզ լուսնակ գոհար պատուական,  
Անտոք, Ֆլրֆլրքար, Տարօն սիրական,  
Քեզ պիտ' գան պատմեն հայ հերոսներէն,  
Երբ որ գաս անցնիս Մշոյ սարերէն:  
Սաչքի-Դուրանի պառկած քաջերէն,  
Վրէժխնդրութեան ձայներ կը հնչեն:

### ԶԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԷՏԱ

Չայն տուր, ո՛վ Ֆէտա, ինչ ո՞ւր կստրտում,  
Լուռ ու մունջ նստած, երկար մտածում,  
Աւա՛ղ, երկար մտածում,  
Տխուր, երկար մտածում:

Շարժեցէք տըղերք սուրեր շողշողուն,  
Թափեցէք կըրակ թշնամեաց գլխուն,  
Գազան թշնամեաց գլխուն,  
Դաժան թշնամեաց գլխուն:

Թափենք մեր արիւն իբրեւ ախոյեան,  
Լինի առաջնորդ մեր ազատութեան:  
Սիրուն մեր ազատութեան,  
Անուշ մեր ազատութեան:

Շտապեցէք, ընկերք, խմբուիլ միատեղ,  
Մետաքսէ դրօշակ ծածանի այնտեղ,  
Թող միշտ ծածանի այնտեղ,  
Սիրուն ծածանի այնտեղ:

Պարզեցէք դրօշակ վեհ Դաշնակցութեան,  
Լինի առաջնորդ մեր ազատութեան,  
Սիրուն մեր ազատութեան,  
Անուշ մեր ազատութեան:

Քանի այսպէս է Հայը խղճալի,  
Զինուած պիտ' լինի ամբողջ Ֆէտայի,  
Սիրուն ամբողջ Ֆէտայի,  
Կտրիճ ամբողջ Ֆէտայի:

Մոսին հըրացան ձեռքերնիս բըռնած,  
Թունաւոր փամփուշտ կուրծքերնիս շարած,  
Պողպատ կուրծքերնիս շարած,  
Սիրուն կուրծքերնիս շարած:

ՍԵՐՈՒԻ ԵՒ ՍՕՍԷԻ ԵՐԳԸ

Moderato

Գըն-դակ ո-րո-տա-ց նո-յեմ-բեր ամ-սու-ն  
 Պա-շար-ուած ենք մենք իմ սիր-րուն Սո-սե  
 վեր առ մո-սի-նըդ քա-ջու-թիւն հոս է  
 քո սիր-րած Սե-րո-բին օրհ-նեալ օրն այս է:



Գնդակ որտաց նոյեմբեր  
 ամսուն,  
 Պաշարուած ենք մենք իմ  
 սիրուն Սոսէ,  
 վեր առ մոսինը, քաջութիւն  
 հոս է,  
 Բու սիրած Սերոբին օրհնեալ  
 օրն այս է:  
 Չայն տուաւ Սոսէն, Սերոբ  
 շան, հոս եմ,  
 Չինուած պատրաստուած ձայ-  
 նիդ կը սպասեմ:  
 Քեզի հետ կուուելու, քու կող-  
 քին մեռնելու,  
 Ամէն օր ամէն ժամ պատրաստ  
 է Սոսէն:

ՇԵՐՈՍՈՒՇԻ ՍՕՍԷ՝ ՄԱՅՐԻԿ

Իսկ քո Սերորը, կեանքիդ հատորը,  
 Արիւնով ներկեց Տալսորիկ ձորը,  
 Առիւծի նայուածքով նայում էր բոլորը,  
 Յաղթական կուռի մէջ էր ամբողջ օրը:

Չայն տուր Անդրանիկ, կենսատու ընկեր,  
 Արդեօք այս պահուս ո՞ր լեռն ես պառկեր,  
 Ոսկեթել մազերով երեսդ ես ծածկեր,  
 Յաղթական բազուկովդ մոտինդ ես գրկեր:  
 Հասիր Անդրանիկ, հասիր օգնութեան,  
 Սերօք կը զսուրի ի սէր ազգութեան.  
 Դէ՛հ, հասիր, շուտ հասիր կարիճ խումբերով,  
 Սերօք կը զսուրի իր զաւակներով:

ԿՈՉ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

ԳՆԱՅՈՒՆ

Դայ Ե — ըրի — տա — սարդք շուտ ՇՂ — տա — տե — ցէք  
 Օ — սարք Դա — յե — ըրիս կա — սեն վախ — կոտ — նն.

Բո — տեն շատ Թանկ է յա — ռաջ քա — լե — ցէք  
 Յաղ — Թու — Թեան գրօ — շակ շու — տով տար — զե — ցէք

Հայ երիտասարդք, շուտ շտապեցէք,  
 Բոպէն շատ թանկ է, յառաջ քալեցէք,  
 Օտարք Հայերին կ'ասենն վախկոտ են,  
 Քաջութեան դրօշակ շուտով պարզեցէք:


Միթէ մենք քաջ վարդանի ցեղից չե՞նք,  
 Մէկըս հազարի դէմ միշտ կը կռուենք,  
 Մի ժամանակ մենք շղթայուած էինք,  
 Հիմա ազատ ենք և ունինք շատ դէնք:

Օգնութեան հասան քաջ Թանն ու Մուրատ,  
 Ծիշդ Հայու զաւակ, ծնունդ անարատ,  
 Մոկացի Գրիգոր և երկու Արշակ  
 Գնդակ թափում են կարկուտից արագ:

Քաջ թումանեանցը, որսորդ Գէորգը  
 Կազմել, պատրաստել են իրենց խմբերը,  
 Դաշնակցութեան Դրօշակի ահից  
 Սարսափահար փախչում են Գրգերը:

## ՀԵՐՈՍ ԵՓՐԵՄԻՆ

Tempo di marcia



ԵՓՐԵՄ

Սարերու ծնունդ արծիւ  
 յաղթապանձ,  
 Դուն հայ անունին պատիւ  
 գերազանց,  
 Բռնութիւններու հզօր  
 ախոյեան,  
 Ո՛վ անմահ Եփրեմ, կեցցե՛ս  
 յաւիտեան:  
 Զինսեպա՛s Եփրեմ խանը  
 գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:  
 Կուկունեան խումբով անցաւ  
 Հայաստան,  
 Կուուեցաւ քաջ քաջ, մտաւ  
 մութ զընտան,

Փշրեց, խորտակեց ժանգոտ շղթաներ,  
 Եղաւ սուրբ դատին անձնըւէր ընկեր:

Զինսեպա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան.

Դարձուց աչքերը՝ Արեւի երկիր,

Տեսաւ Պարսկաստանն անբախտ, վշտակիր,  
 Պարսիկ քաղաքներ մշուշով պատած,  
 Իրանի զաւակ թափէր արցունք, լաց:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Այդ սղբ ու կոծէն յուզուեցաւ մեր քաջ,  
 Ըմբոստ ու խրոխտ սլացաւ յառաջ,  
 Զէնքերը ձեռքը իջաւ ասպարէզ,  
 Յաղթութեան փողը հնչեցուց Արէս:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Ամուր ինչպէս ժայռ, որուն դէմ ի զուր  
 Կուգան կը բաղխին ալիք ու փրփուր,  
 Պատուոյ դաշտին մէջ կանգուն մնաց ան,  
 Եւ արհամարհեց հարուածներ մահուան:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Նենգ, դաւ, բռնութիւն, դժոխքի տարրեր  
 Մահ կը սպառնային քաջին անվեհեր,  
 Գոռաց ան, ինչպէս մըրըրիկ ուժգին,  
 Արձագանգ տըւին երկիր ու երկին:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Քե՛զ փառք, հիացում, ո՛վ Սիւնեաց աշխարհ,  
 Որ այսպէս վսեմ հերոս մը ծընար,  
 Քու անմահութեանդ բոլորեց դափնի,  
 Աարսափ տարածեց իբրեւ Ֆէտայի:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Մեռնիլ, ո՛հ, մեռնիլ, երազն էր անոր,  
 Կուռոյ դաշտին մէջ իբրեւ քաջ զինուոր,  
 Ինք ազատութեան զուարթ հրեշտակ,  
 Գոցեց աչքերը, գնդակներու տակ:

Զինսկայա՛s Եփրեմ խանը գահրաման,  
 Հարի՛սը հիւրիէքը Իրանեան:

Քե՛զ, Դաշնակցութի՛ւն, հազա՛ր երանի,  
 Որ կըրեց քու մէջ եփրեմներ արի,  
 Անոր փառքերէն գինովցիր և դուն,  
 Վարէ՛ գործդ յառաջ թափով եռանդուն:

Զինեկապ՛ս եփրեմ խանր գահրաման,  
 Հարի՛սը հիւրիեքը Իրանեան:

Համբո՛յր դրօշիդ, վե՛հ նշանաբան,  
 Որուն տակ ծընան հերոսներ այնքան,  
 Յիշեմ Սամաթիոյ հերոս Գնունին,  
 Անդրէասեանը, ասոնք մահ չունին:

Զինեկապ՛ս եփրեմ խանր գահրաման,  
 Հարի՛սը հիւրիեքը Իրանեան:

Նոյնպէս Միսաքեանն, Մանավեանին հետ,  
 Ոյց ընկերակից բերկրեցայ յաւէտ,  
 Իցիւ, ես նախկին կորովով աշխոյժ,  
 Ունենայի միշտ քաջութիւն և ոյժ:

Զինեկապ՛ս եփրեմ խանր գահրաման,  
 Հարի՛սը հիւրիեքը Իրանեան:

Այժըմ՛ իրանեանց հետ կսկծալի,  
 Թափելով սրտանց արցունքներ աղի,  
 Կ'ասեմ, մահդ, եփրե՛մ, մխեց մեզ սուր փուշ,  
 Երանութեան մէջ հանգչէ, քունդ անուշ:


Զինեկապ՛ս եփրեմ խանր գահրաման,  
 Հարի՛սը հիւրիեքը Իրանեան (\*):

ՄԻՇՐԱՆ ԱՇՃԵԱՆ

(\*) Ապրի՛ հերոս եփրեմ խան,  
 Մշակ Իրանի ազատութեան:



## ԵՐԳ ՍԱՍՈՒՆԻ



Հ. ՊՅԱՃԵԱՆ  
(ՄՈՒՐԱՏ)

Ծագէ՛ արշալոյս, ծագէ՛ արուսեակ,  
Ծագէ՛ մեր վրայ չը լինի կորուստ:  
Թուրքն յարձակեցաւ բազում  
զօրքերով,  
Սասուն լեցուեցաւ լաց ու կոծերով:  
Ոմանք կիսամեռ ինկած կը մարին,  
Օգնութեան համար երկինք կը  
նային,  
Ո՛վ Սասուն, Սասո՛ւն, աւերակ  
դարձար,  
Հայկազանց սիրոյն անմեղ  
զսնուեցար:  
Օգնեցէ՛ք մեզի արմենեան քաջեր,  
Դիակներ լեցուան Սասունի  
դաշտեր:  
Երբ օգնեն մեզի հզօր ձեռքերը,  
Շուտով կը յաղթենք վատթար  
Թուրքերը:

Ինչո՞ւ կը ննջես իմ սիրուն գառնուկ,  
Արեամբ կը լողան Սասունի մանկունք:  
Հայրիկձան, Հայրի՛կ, ինչո՞ւ գնացիր,  
Սասունի դաշտեր արեամբ լեցուցիր:  
Շատ երիտասարդք ի զուր զո՛հ գացին,  
Անին ալ մոռցան, Սասունը լացին:  
Երբեք չի մարիր վատ Քիւրտին կիրքը,  
Տոմար թող անցնի Սասունի դէպքը:  
Ի՞նչ ընեմ այսպէս տառապեալ կեանքը,  
Ե՞րբ պիտի տեսնեմ հայկազեան փառքը:  
Մատաղ մանկտիք զո՛հ եղան գացին,  
Անմեղ արիւնով ազգը փրկեցին:  
Երկինք թող պատմէ անոնց անունը,  
Թող յաւէրժ կեցցէ՛ Պոյաճեանը:

**ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ**



ՀԱՅԳՈՒԿ ԱՆԴՐԱՆԻԿ

Հերոս մռնչեց, Սուլթան դողդո-  
ղաց,  
Վիլհելմի աչքից արտասուք ցո-  
ղաց,  
Սուրբի թշնամու կրծքին շողշո-  
ղաց,  
Հայոց ղեկավար, հերո՛ս Անդրա-  
նիկ:  
Քեզ համար պէտք է կատարենք  
մաղթանք,  
Անգուլթ թշնամուն ցոյց տուող  
տանջանք,  
Դուն պէտք է լինիս մեր փառք  
ու պարծանք,  
Քաջ գործակատար, հերո՛ս  
Անդրանիկ:  
Պարզէ դրօշակ, տեսնէ Եւրոպա,  
Թող բացագանչէ կեցցէ՛ Հայաս-  
տան,  
Կեցցե՛ս դուն յաւէտ, հերոս  
հայկական,  
Հայոց ղեկավար, հերո՛ս Անդրանիկ:

Դուն պէտք է փրկեո ամբողջ Հայաստան,  
կարին և Սասուն, մայրաքաղաք Վան,  
Տիգրանակերտից մինչև Շաւարշան,  
Տիրեց մեզ համար հերո՛ս Անդրանիկ:



ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մարտունակ

Դաշնաւորեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

Մենք անկեղծ զինուոր ենք  
 Ռեխտեր ենք ծառայել  
 առանձին վիճակ,  
 երկար ժամանակ

Պարսկաստանի խորքից եկել է նամակ գրնում ենք բարով

Կու շանտեր տարով Արիւն սուր ու հուր որաւն ըստ մի դաշտ կը սպասեն մեզ զի

Մենք անկեղծ զինուոր ենք, առանձին վիճակ,  
 Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.  
 Պարսկաստանի խորքից եկել է նամակ,  
 Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,  
 Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ կը սպասեն մեզ զի:  
 Դուշմանը մեզ տուեց ջան ֆէտա անուն,  
 Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն,  
 Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն,  
 Ուխտել ենք կռուել, այդ սիրով մեռնել,


Համոզուած ենք որ միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,  
Ամէն կողմից կռիւ կը սկսի շուտով.  
Կոտորից Բաշկալա անցնենք հեշտ կերպով,  
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,  
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,  
Փա՛ռք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,  
Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,  
Քաջ Զէյթունը յաղթեց վատ չար գաղանին.  
Կեցցէ՛ Զէյթունը, խրոխտ Սասունը, Դաշնակցութիւնը,  
Բախտաւոր օրեր, պարծանք հայ ազգին:

### ՅԱԻԵԼՈՒԱԾ

Անհաւատ ժողովուրդ հրաշք կը սպասես,  
Ու գետը չփոխած, ծով կը բամբասես.  
Դարձեալ հայ զինուորներ չեն յուսահատուած,  
Կուռում են ազատ, գործում հարազատ,  
Երկաթեայ կամքով, կտրիճ ջանֆէտան տանում ամէն բան:




ԱԶԻՅ ՎԱՐԴԱՆԵՐ...



...ԶԱԻԻՅ ԻՇԽԱՆԸ

## ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ



ՄՈՒՐԱՏ

Հայաստանէն եկած զինուոր,  
Պատմէ ինծի հայրենիքից,  
Անդրանիկի զինուորները,  
Վրէժ լուծում են ֆիւրտերից:

Ուրախ եղիր դու հայ ազայ,  
Ունիս պաշտպան քաջ  
Անդրանիկ,  
Մուրատի պէս հոտոտ ծաղիկ,  
Էլ ի՞նչ է ուզում հայրենիք:

Վիթխարի պէս կտրիճ Սեպուհ,  
Պողպատի պէս բազուկները,  
Կայծակի պէս կտրիճները,  
Էլ ի՞նչ են ուզում Հայերը:

Գէորգ Չավուշ և Հրայրը,  
Սարսափ ձգեց ֆիւրտիստանը,  
Կոտորեցաւ ողջ բանակը,  
Ազատուած չէ Հայաստանը:

## ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գըլգըլալով ջուր է իջնում  
Մշոյ մշուշ սարերէն,  
Ծիծառները ծիւլ-ծիւլ եկան  
Գարնան գալը երգելէն:

Գարուն չկայ Հայի համար,  
Ծաղիկ ծիծառ մեզ պէտք չեն,  
Գերեզմանըս հողին հաւսար,  
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրէն...

Գնա՛, ծիծառ... Թո՛ղ ինձ մենակ,

Վէրքը սրախ՝ հողի տակ...

Բայց երբ տեսնես թշնամու դէմ,  
Հայ ժողովուրդ սարի պէս,  
Ձէնքը ձեռին հպարտ կանգնած,  
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պէս, —

Ա՛խ, այն օրը, արի՛, ծըւա՛,  
Գարնան գալը նոր կանչէ, —  
Հայո՛ց գարնան, որ բի՛ւր արև  
Սիրտըս խորէն ղողանջէ:

# Տ Ա Լ Ի Ո Ր Ի Կ

Tempo di marcia

ԱՌՈՅԳ

Տալ-ւո-րի-կի զա-ւակ եմ զորդ քաղ-թը-ցու ղեւ չեմ թու-լա

մորթ: Աս-րի զա-ւակ քա-րի որ-դի հին քաջ հա-յոց եմ մը-նա-ցորդ:

Տալ-ւո-րի-կի զա-ւակ եմ քաջ. չեմ խո-նար-հիր վա-տին յա-ռաջ,

քա-րուս՝ չե-րանց եմ ա-զատ լան. չեմ տն-տն ոչ ա-րոր ոչ մաճ: հայ աղ-

բըր-տիք. ջան աղ-բըր-տիք, Տալ-ւո-րի-կի զա-ւակ եմ քաջ: Ա-զա

տու-թեան սի-րոյն հա-մար Ե-կէք ղեղ ինչ յա-ռաջ յա-ռաջ:

Տալւորիկի զաւակ եմ խորդ (\*).  
Քաղքըցու պէս չեմ թուլամորթ,  
Սարի զաւակ, քարի որդի,  
Հին քաջ Հայոց եմ մընացորդ:

Տալւորիկի զաւակ եմ քաջ,  
Չեմ խոնարհիր վատին առաջ,  
Քարուա լերանց եմ ազատ լան,  
Չեմ տեսեր ոչ արոր, ոչ մաճ:

Հայ աղբրսիք, ջան աղբրսիք,  
Տալւորիկի զաւակ եմ քաջ,

Ազատութեան սիրոյն համար,  
Եկե՛ք դեպ' ինձ յառա՛ջ, յառա՛ջ:  
Երբ իմ աչեր բացի յաշխարհ,  
Ազատ տեսայ մեր սար ու քար.  
Մինչև փակեմ աչքըս խաւար,  
Պիտ' չը կոխէ հոս սաք օտար:  
Իմ մամ ծնաւ զիս պալու ծոց,  
Ընկուզի կսճզ մ'հզաւ օրրոց,  
Տըկլոզ ծընած՝ մեծցայ արկլոզ,  
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց:  
Հայ աղբրսիք, եւլին.:

(\*). Մորդ՝ փոխանակ զորդի, ինչպէս գրուած եւ երգուած է միշտ: Մորդ-քրտերէն բառ է եւ կը նշանակէ հուժկու, յաղթամուտ: Կը խնդրուի սրբագրել նաեւ ձայնաչրտութեան առաջին տողին մէջ:

Ուաքըս բոպիկ, սիրտըս  
 միշտ բաց,  
 Ինչ փոյթ թէ քոյրս ալ մերկ  
 մընաց,  
 Իմ մօտ մէկ է արեւ, բուք,  
 ցուրտ,  
 Բա՛ւ է, չ'իշխեր հոս թիւրք  
 կամ Բիւրտ:  
 Իմ կեանքըս խիստ է եւ  
 չարքաշ,  
 Փափուկ կեանքի վայլից չեմ  
 վարժ,  
 Բընակարանս է ապառաժ,  
 Ընկերս՝ մըրիկ ու երկրաշարժ:  
 Հայ աղբրսիք, եւլին.:

Թող այլք բնակին հովիտ ու  
 դաշտ,  
 Վատ անդուծին հետ լինին  
 հաշտ,  
 Ես պիտի մնամ միշտ աննուած,  
 Թէեւ վըրաս գայ քըսան վաշտ:  
 Իսկի չքաշեմ բանի մ'կարօտ,  
 Քանի ունիմ գնդակ, վառօդ,  
 Ազատ ապրիմ, մեռնիմ ազատ,  
 Սասնոյ որդին եմ հարազատ:  
 Հայ աղբրսիք, եւլին.:

Յորենի տեղ կ'ուտեմ կորեկ,  
 Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ,  
 Շինեմ փէտատ, խոփ, խաշ-  
 երկաթ,  
 Ծանր է դատուժս, բայց եմ  
 ազատ:  
 Հարստուծիւն, ուսում,  
 հանճար,

Պատիւ և փառք չեն ինձ  
 համար.  
 Բա՛ւ է ունիմ տէգ, թուր,  
 խանչար,  
 Բնաւ չի կոխեր հոս ոտք օտար:  
 Հայ աղբրսիք, եւլին.:

Ձէնքն է միակ իմ խաղալիք,  
 կ'ատեմ հանդարտ կեանք  
 խաղաղիկ,  
 կը սիրեմ որս, կռիւ, աւար,  
 կը սպասեմ երբ ընկնի հաւար:  
 Գիշերն ալ գէնք վըրաս  
 քընեմ,  
 Երազիս մէջ կըռիւ կ'ընեմ,  
 կըռուիլն ինձի մօտ խաղաղ է,  
 կըռուով մեռնիլը հալալ է:  
 Հայ աղբրսիք, եւլին.:

կըռիւի մէջ մեռաւ իմ պապ,  
 Այգ կերպ մահն է անուշ  
 մըրափ,  
 կ'ուզեմ ես ալ մահ մէջ կըռուի,  
 Որ իմ անուն անմահ գրուի:  
 Այս քարուտ տեղ խիստ  
 դժուարին,  
 Իմ քաջ պապեր երբ ընտրեցին,  
 Ըսին՝ ազատ որդւոց սրդի,  
 Քաջաց սերսնդ թող հոս  
 ապրի:  
 Հայ աղբրսիք, եւլին.:

Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ,  
 (Աստուած հոգին լուսաւորէ),  
 Ինձ կ'ըսէր միշտ. — «Աղքատ  
 ապրէ՛»,

Բայց մի՛ ծռէ վիզ, հարկ մի՛  
վճարէ»:

Սակայն մի՞թէ կրնայ աղքատ  
կոչուիլ այն մարդ, որ է ազատ,  
Մի՞թէ կայ բան մ'աւելի թանկ՝  
Քան անիշխան և ազատ կեանք:

Հայ աղբրսիք, եւլն:

Տալւորիկն է սև սև սարեր,  
Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ  
քարեր,  
Վերեւ ջուխտակ ձեր Մարա-  
թուն:

Հողիս մատա՛ղ մեր Մարաթուն:

Մեզնով պարծի այսօր

Սասուն,

Մենք ենք խրախոյս Հայոց

նըկուն,

Տալւորիկ սար, ժեռուտ

Չէյթուն,

Տան իրարու ազա՛տ ողջոյն:

Հա՛յ աղբրսիք, ջա՛ն աղբրսիք,

Տալւորիկի գաւակ եմ քաջ,

Ազատութեան սիրոյն համար,

Եկե՛ք դեպ ինձ յառա՛ջ, յառա՛ջ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

### Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Մի՛ հեծեր, մայր իմ, մի՛ հեծեր,  
Չէ թէ կը մեռնիմ,

Տարիքս է քսան տարեկան,  
Փափաքս չեմ առած:

Գուաց փողը պատերազմի,  
Չէնքեր թընդացին,

Հայ կտրիճներ ուսմբ ի ձեռին,  
Խուսմբ խուսմբ քալեցին:

Տուր ձեռքերըդ, մայրիկ, սիրեմ,  
Կրկին համբուրեմ,

Հայոց թաղն է կռի՛ւ, արիւն,  
Պարտքըս կատարեմ:

Տուր զէնքերըս, քաղցրիկ մայր  
իմ,

Ես պիտի երթամ,

Տուր ձեռքերդ մէյ մ'ալ սեղմեմ,  
Գուցէ չդառնամ:

Մի լար մայր իմ, մ'ողբար  
մայր իմ,

Սիրաս փղձկեցաւ,

Բայց չեմ կարող ես մոռանալ,  
Կռուի պիտ' երթամ:

Հայրեր կուլան, մայրեր կ'ողբան,  
Սիրտ չի դիմանար,

Պատերազմի դաշտին վըրայ,  
Չէնքեր կը թնդան:

Կապոյտ երկինք գոյնզգոյնով  
կամար է պատեր,

Մեր հայ տղոց սիրտերըն ալ  
Խաւար է պատեր:

Սրբի՛ր աչերդ, աղնիւ մայր իմ,  
Ինչո՞ւ կ'արտասուես,

Մի՛ լար մայր իմ, մ'ողբար  
մայր իմ,

Թէ դիս կը սիրես:

Տուր զէնքերըս, քաղցրիկ մայր  
իմ,

Ես պիտի երթամ,

Տուր մայրական օրհնութիւնըդ,  
Մի քիչ զօրանամ:

Յաջողութիւն մեզ մաղթեցէք,  
Ծերունի հայրեր,

Չեզ կը թողում իմ սգալի  
Մայրեր և քոյրեր:



Մի փոքրիկ խումբով հեւ ի հեւ ելան  
Գազաթ Աիմ սարին, անդր վար իջան:

Ձայնեց՝ վանքին մէջ պաշարեալ եղբարց,  
— Քաջ եղէք, ահա, կ'օգնէ ձեզ Աստուած.  
Քաջին հրացան գոռաց ի բարձունս,  
Դէպի վանք դիմեց հեա իւր ընկերաց:

Պատահեցան հոն զօրաց շղթային,  
Երեք զօրք մէկէն գլորին գետին,  
Յրուեցան զօրքեր, մօտեցան վանքին,  
Բայց վիրաւորուած հասան փափաքին:

Ինկաւ և նոյնպէս կալեցի Ղազար.  
Անտոքայ քաջեր, ունկնդիր եղբարք,  
Վանքին չորս կողմէն աեղացին գնդակ,  
Յիրուցան ըրին թշնամու բանակ:

— Յաղթութի՛ւն, եղբա՛րք, առինք յաղթանակ,  
Հայի փրկութեան կանգնելով դրօշակ,  
Կամ մեռնինք, չըլլանք մենք ազգին ծանակ,  
Կամ յաղթենք, ըլլանք հայ ազգին պարծանք:



ԳՈՒՐԱՌԻ ԳԻՒՂԸ ՄՇՈՅ ԳԱՇՏԻՆ ՄԷՁ

# ԽԱՆԱՍՈՐԻ ՔԱՅԼԵՐԳ

Tempo di marcia

Գաղնատրեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԱՇԽՈՅԺ

Կրո-ուե-ցէք սը-շէրք Կրո ուե-ցէք քաջ քաջ

Կրո — ուե — ցէք սը — շէրք Կրո — ուե — ցէք

ան-վե-հեր կանգ-նած Թրչ-նամ. տյն ա-ռաջ. ցան-կա լի է

մեզ. ցանկալի, միշտ ազ ճիւ մա-հը. հե-ռու մե-զա-նից

ո-սո-խին ա-հը: Հա-ռաջ խի-զա-խենք իբ-րև նա-հա-տակ

ի զուր թող չանց ճի մեզ-նից մի գըն-դա-կ: դակ:

Կռուկցէ՛ք տղերք, կռուկցէ՛ք քաջ քաջ,  
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.  
Յանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,  
Հեռու մեզանից ոսոխին ահը.  
Յառաջ խիզախենք իրրեւ նահատակ,  
Ի զուր թող չանցնի մեզնից մի գնդակ:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,  
Մեզի կը սպասեն մեր հէք եղբայրներ:  
Ազատ չծնանք, գէթ մեռնինք ազատ,  
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.  
Այս անգամ ին ալ ցոյց տանք թշնամուն,  
Թէ ի՛նչ է Հայու ուժն ու քաջութիւն:

Ահա Քիւրաերը փախչին սարսափած,  
Ահա դիակներ արեամբ շաղախուած.  
Կրակ տեղացէ՛ք, անդադար կրա՛կ,  
Փառք Դաշնակցութեան, առատ է գնդակ.  
Օ՛ն, կռուինք, տղերք, մինչեւ շունչ վերջին,  
Արժանի լինինք փառաց պսակին:

Մեռնինք յսուալով, մերն է ապագան,  
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան.  
Այսպէս յորդորեց ու ինկաւ արին,  
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.  
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,  
Անմոռանալի կըտրիճ Մարտիրոս:

Մ. Ե.

## ՀԵՐՈՍ ՏԱՐՕՆԻ ԵՐԳԸ

Մայր Հայաստանն է կուլայ սգաւոր,  
Թշուառ, ոտնակոխ, այսքան դար է որ  
Արիւնով ներկուած լեռներ դաշտ ու ձոր,  
Թոքերիս դիպաւ ցաւեր հիւժաւոր:

Նորէ նոր գարուն բացուի վարդագոյն,  
Թընդաց Մուշ-Տարօն, Նեմրուդ և Սասուն,  
Ոտքի է կանգնած վեհ Դաշնակցութիւն,  
Սարսափը տիրեց անգութ Օսմանցուն:

Դէ՛հ, ելէք, եղբարք, ժամանակն հաս է,

Հրայր, Անդրանիկ մեզի կը սպասեն,  
Տարօն-Մուշ գալառ արիւն կը հոսէ,  
Մայր Հայաստանն է մեզ կը խրախուսէ:

Թող փայլէ Տարօն տուած քաջերով  
Չինուած պատրաստուած մոսին զէնքերով,  
Անտօք, Ծովասար իր տասնեակներով,  
Սասուն, Ախլատ, վան դարձուց արեան ծով:

Չոհունեցաւ վե՛ն Հրայր, սուրբ անունն անմահ,  
Կեցցէ՛ Անդրանիկ, Գէորգ թիկնապահ,  
Եղբա՛յր, վրէժ ենք լուծում մենք հիմա,  
Հռչակի հազարդը կարգայ Եւրոպա:

Շրջում էր Գէորգ փաքրիկ խումբերով  
Ընդդէմ թշնամուն կռիւ մղելով,  
Անվեհեր կրուում քաղցր երգելով  
Վրէժ առ վրէժ Հրայր յիշելով:

Կ Ա Ր Օ Տ

Moderato

հա-յաս-տա-նից են կած զին-ւոր Ար-րա-կան իմ սրբ-տիւ հա-տոր.

Քեզ կը սպասէ-ի օրէ օր, է գրեց ուայ շամ բէ քիզ մա-տաղ:

Հայաստանից հկած զինուոր,	Սերոբ Փաշի գերեզմանը,
Սիրական, իմ սրաի՛ս հատոր,	Դու տեսա՞ր իմ սիրականը,
Քեզ կը սպասէի օրէ օր,	Թափառեցար Հայաստանը,
Էգուցուայ ճամբէքիզ մատաղ:	Էգուցուայ ճամբէքիզ մատաղ:
Կը գաս քաջերի երկիրէն,	Վանայ ծրփան ծովէն կուգաս,
Խօսի՛ր Մոկացի Եսթերէն,	Անդրանիկի քովէն կուգաս,
Պատմիր Գիսակի գործերէն,	Վարազայ սէգ սարէն կուգաս,
Շողշողուն զէնքերի՛դ մատաղ:	Շողշողուն զէնքերի՛դ մատաղ...

## ՀԱՃԻ ԳԱԼՈՒՍՏ ԱՐԽԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



ԳԱԼՈՒՍՏ ԱՐԽԱՆԵԱՆ

Զէնքերըս տուր մայրիկըս,  
Սուրս ալ դուն տուր քոյրիկըս,

Ազատութեան որդին եմ,  
Արխանեան Գալուստն եմ,  
Երբոր բանտէն ազատուիմ,  
Դարձեալ խուճբ պիտի կաղմեմ:

Թուով հինգ ընկեր էինք,  
Մէկ սիրտ մէկ հոգի էինք,  
Դարձեալ չէինք յանձնուեր,  
Աւա՛ղ, անօթի էինք:

Առաւօտ արշալոյսին,  
Չորս կողմերնիս պատեցին,  
Ամբողջ չորս օր չորս գիշեր,  
Չորս հարիւր թշնամիներ:

Քաջըդ Խորէն ի՞նչ եղար,  
Երևք գնդակով ինկար,  
Մինչդեռ հոգի կուտայիր,  
Դարձեալ պատերազմեցար:

Երթամ կռուիմ վառին դէմ,  
Խորէնին վրէժը լուծեմ:

## ԳԱԼՈՒՍՏ ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Ես եմ ազատ հայ պատանի,  
Աշխարհս են այս լեռները,  
Սուրս է միայն իմ սիրելի,  
Եւ ընկերըս պերտանը:

Իմ զարդերս են զէնքերըս  
Եւ թանկ սակի փամփուշտներս,  
Անկողինըս կանաչ մարգեր,  
Փափուկ մաքուր պատուական:

Ապաստանըս ժայռ քարերը,  
Եւ հայելիս՝ ջինջ վտակ,

Բնակարանս անտառները,  
Եւ լապտերըս՝ վառ լուսնակ:

Ես պարծենալ չեմ կարող, չեմ,  
Որեւիցէ ուսումով,

Միայն գողարիկ երգել գիտեմ,  
Եւ զէնք շարժել սուրբ սիրով:


Խմբապետ եմ հայ խուճբի մը,  
Հագուած լազի զգեստով,

Յանուն ազգիս կուռւմ եմ ես,  
Քաջարի ընկերներով:

# ՍԱՄ ԱԹԻՈՅ ՆԵՐՈ ՆԵՐԸ

Moderato


Գաղնատրեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ



Այս դուռը դեռ անառիկ է, Միմիայն ժամը վեցին



Կրնայ բացուիլ, հրէշտդէմ Չար գազանին գողացին:



Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր, Ահիւնահոս հրազներ:

Այս դուռը դեռ անառիկ է,  
 Միմիայն ժամը վեցին  
 Կրնայ բացուիլ, հրէշտդէմ  
 Չար գազանին գողացին:  
 Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր,  
 Ահիւնահոս հրազներ:  
 Ժամը վեցն էր, օգնող չկար,  
 Իրենք իրենց ապաւինած,  
 Դիւցազնի պէս մարտընչեցան,  
 Մինչեւ որ ուժը չմնաց:  
 Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր,  
 Ահիւնահոս հրազներ:  
 Մասնուած բայց անյաղթելի


Արտաշէսն ու Գնուենին,  
 Վերջին պահուն կը յուսային  
 Թէ կուգայ Անգլիացին:  
 Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր,  
 Ահիւնահոս հրազներ:  
 Մենք Համիտը բնաւ չենք  
 ճանչնար,  
 Թէեւ զարնէ վատարար,  
 Թէ որ մեռնինք, մեր հաւելն  
 Հարիւրներ կան հայ եղբարք:  
 Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր,  
 Ահիւնահոս հրազներ:  
 Պիտի մեռնինք արիւն թափենք,

Ըսին անոնք քաջարար,  
Բայց պիտի գայ որ օր մըն ալ  
Մենք չունենանք սուրբ կապար:


Յոյսեր, յոյսեր, անվերջ յոյսեր,  
Արիւնահոս երազներ:

Ու այն ատեն ազատութեան  
Սուրբ ձայնէն ներշնչուած,  
Գոչեցին ու որոտացին  
Իրենց յոյսը առ Աստուած:

Ո՛վ Արսաւես, ո՛վ Գնունի,  
Ձեր յիշատակն օրհնեալ լինի:



ԱՐՏԱՇԷՍ ՄԻՍԱՔԵԱՆ



ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Խնուսից գալսող հայ զինուորները քաջ,  
Արեան գաշտից եկած և պարտաճանաչ,  
Հին հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,  
Քաջի պէս վազեցին թշնամու առաջ:

Մօտ թուով տասն և չորս և իրենք անվախ,  
Ղեկավար Տիգրանն էր, գործում էր անկախ,  
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,  
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

Թաթօն ընտրեց Մոսօ, Շապուհ և Մխիկ,  
Անուանուհեց ին սրանք խմբեր թռուցիկ,

Խարբուխ թաղի դիրքերումը միշտ անքուն,  
Այրեցին, ջարդեցին անգութ Մուլլի տուն:

Վրաստանի շքեղ թիֆլիս քաղաքը,  
Չէր ձանաչում կանխաւ իրա որդոցը,  
Երբ նրանք Մուզնու թաղում կանգնեցան:  
Այն ժամանակ Հայերը ուրախացան,

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զոհ տուին,  
Բայց անգութ թշնամեաց շուտով յաղթեցին:  
Կը լինեն ազատութեան գրաւական,  
Նրանք պատիւ բերին հայ Դաշնակցութեան:

### ՎԱԶԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



ՎԱԶԳԷՆ

Հայդուկ մի վախնար Քիւրդէի  
գնդակից,  
Նա մահաբեր չէ քաջերիդ  
համար,  
Քո «Չան Ֆէտայի» անեղ  
անունից,  
Քիւրդը սոսկում է, ինչպէս  
դիւահար:  
Առէք հրացան ու ելէք հանդէս,  
Տանջանքի մէջ է ձեր մայր  
հայրենիք,  
Միթէ՞ չէք լսում, նա կանչում  
է ձեզ, —

«Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք»...

Ձեր հրացանը վրէժով լցրէք,  
Ջարդէք թշնամուն, թշնամուն գազան,  
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,  
Միայն թէ կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան:

ՊԵՏՐՈՍ ՍԱՄՈԷԼ



### ԵԼՏԵԸԻ ՊՈՄՊԱՅԻՆ ԵՐԳԸ

Tempo di marcia

*f*

Գո— աաց ոում— Բը Գո— աաց

Գո— աաց ոում— Բը Գո— աաց հա— յը Աուլ— Թա— նին, Թուրքիսու— ժա— նը սար— սա—

փա— հար նա— հան— ջեց, Գո— աաց ոում— Բը Գո— աաց հա— յը Աուլ— Թա— նին,

Թուրքիսու— ժա— նը սար— սա— փա— հար նա— հան— ջեց խո— նար— հե— ցաւ մուրճեճը

տը— ջը Դրօ— շա— կին, զոր հայ կըտ— րինն հե— րո— սա— Բար վեր դար— ջեց.

խո— նար— հե— ցաւ մուրճեճը տը— ջը Դրօ— շա— կին զոր հայ կըտ— րինն հե— րո—

սա— Բար վեր դար— ջեց. Զար— կաւ ոում— Բը ար— անն փր— փուր ժայթ քե— լով,

Անդրոտ ու շանթ ի— բեն առ— ջին ա— մօ— Թով Դա— քի Ե— լաւ և նա

ան սանջ, ա— հա— տը, կեանքի ճա— հի կուի ըլ մը— ջնը ա— հեց խոր:

Յաղ— Թա— նա— կից, ա— ների— վիտ ըս— դա— սե ու

կըտ—րիճ հայ, Պիտ' խո—նար—հի ու—ժը  
 քիրտ, քո—ղը—բից զէմ քո, հըս—կայ:

Գողաց ուսմբը, գողաց Հայը Սուլթանին,  
 Թուրք խուժանը սարսափահար նահանջեց,  
 Խոնարհեցաւ մութ Երլտըզը Դրօշակին,  
 Զոր հայ կըտրիճն հերոսաբար վեր պարզեց:

Զարկաւ ուսմբը արեան փրփուր ժայթքելով,  
 Ամպրոպ ու շանթ՝ իրեն առջին ամօթով,  
 Ոտքի ելաւ և նա անսանձ, ահաւոր,  
 Կեանքի, մահի կռիւը մղել ահեղ, խոր:

Յաղթանակիդ աներկմ իտ ըսպասէ ս'վ կըտրիճ Հայ,  
 Պիտ' խոնարհի ուժը բիրտ բողոքիդ զէմ քո հսկայ:




#### ՆԵՐՈՒՅԻ ԽՈՒՍԲԸ

Դաշնակցութեան քաջ խմբերը Պերնա գիւղում միացան,  
 Խմբապետն էր քաջ Նեւրուզ, բաժանեց քաջաց հրացան,  
 Երզուկեցին դրօշակին քահանայով միասին,  
 Շարժուեցաւ խումբը յառաջ, երկու սահմանից անցան:

Արշալոյսը նոր բացուում էր, տեսան թշնամեաց զօրքեր,  
Քաջ նեւրուզը հրահանգ տուեց, յառաջ եկէք տասնեակներ,  
Ամէն մէկըս հազարի դէմ պիտի կռուենք, եղբայրներ,  
Կարսեցի քաջ Դերենիկին ասաց, — բռնէ՛ լաւ դիրքեր:

Դերենիկն ու Արաաշէսը, ինչպէս կորիւն եղբայրներ,  
Բասէն դաշտու մէջ լցրին թշնամու շատ դիակներ,  
Քաջ Սերոբը և իւր սրգիք, ինչպէս ազնիւ էակներ,  
Նահատակուան քաջերն աշնտեղ, մեզի մնաց վրէժներ:

Հայաստանի հողին վերայ դրօշակ ծածանուեցաւ,  
Երեսուն ճակատամարտ, հազարաց դէմ կռուեցաւ,  
Հայ քաջերի գնդակներից թշնամիք կոտորուեցան:  
Ես, միջագս կը պարծենամ, ունիմ փամփուշտ, հրացան:



ՏԱՐՈՆԻ ԱՌԻԻԾԸ ԵՒ ԻՐ ԿՈՐԻՒՆՆԵՐԸ՝ ԱԻԵՏԻՍ ԵՒ ՅԱԿՈԲ

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆԻ ԵՐԳԸ




ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

(ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼ—ԿՈՐԿՈՏԵԱՆ)

Բանտիս դռներն էին եօթը ել-  
 քերով, — Ելքերով,  
 Շէնքն էր տխուր, պատած եր-  
 կաթ քարերով, — Քարերով:  
 Յանկարծ լսուաւ դռներու ձայն  
 ձոնչմամբ, — ձոնչմամբ,  
 Ներս մղկցին կարգ մը զինուոր  
 շառաչմամբ, — Շառաչմամբ:  
 Գիշերուընէ ինձ յայանեցաւ  
 բանտիս մէջ, — Բանտիս մէջ,  
 Անբաց աչօք չը քնացայ մինչև  
 վերջ, — Մինչև վերջ:  
 Առաւօտեան արշալոյսը ծագե-  
 ցաւ, — Մագեցաւ,  
 Մահուան ետֆթան կուրծքէս ի  
 վար կախուեցաւ, — կախուեցաւ:  
 Առաւօտուն տռին տարին կա-  
 խաղան, — կախաղան,  
 Շուն թուրքերն ալ դէմը կանդ-  
 նած կը խաղան, — կը խաղան:

Ո՛ւր են արդեօք չըկան իմ մօտ անուշ հայր,  
 Անուշ մայր,  
 Լացէ՛ք Հայեր, լացէ՛ք քաջեր, ինձ համար,  
 ինձ համար:  
 Կարծես կուլան երկինք երկիր ինձ համար,  
 ինձ համար,  
 Կուլան տրեւ, լսուին, աստղեր անհամար,  
 Անհամար:  
 Աւա՛ղ կենացս որ ծնած եմ վատոց մէջ,  
 Վատոց մէջ,  
 Միշտ կը գոռամ և կը գոչեմ ցաւոց մէջ,  
 Ցաւոց մէջ:  
 Փամացոյցըս տուէք մօրըս, իմ մօրըս,  
 իմ մօրըս,  
 Մի ըսէք թէ Արամ կախուաւ, այլ պանդուխտ է,  
 Պանդուխտ է:  
 Փամացոյցըս տուէք մօրըս, վա՛խ Արամ,  
 վա՛խ Արամ,

Հայրենիքիդ գուն գոհ գացիր, անվախ մտիր  
 Գերեզման,  
 Ահա կ'ընկնեմ սեւ գերեզման գրկել հող,  
 Գրկել հող,  
 Ի յիշատակ իմ անունը մնայ թող,  
 Մնայ թող:



ԿԱՐՆՈՅ ԲԱՆՏԸ ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆԻ ԿԱԽՈՒԱԾ ԵՐԱՆԻՆ

### ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Զէնքերս սուր, մայրիկ,  
 Սուսերս սուր, քոյրիկ,  
 Թէ չը գոհուիմ ազգիս համար,  
 Հապա ինչո՞ւ գրս ծնար:

Ազատութեան վառ սէրը  
 Ինձ հանել է լեռները,  
 Թշնամու գէժ կռուելու  
 Հայրենիքս վրկելու:


Առաւօտ արշալոյսին,  
 Չորս կողմերս պատեցին,

Չորս ցերեկ եւ շորս գիշեր  
 Անճամար թշնամիներ:

Լեւս'ն սուրգ քաշեցիր,  
 Վրբ՛ւժ առնել սեղեցիր,  
 Երբ որ գնդակը դիպաւ՝  
 «Ա՛խ, ընկերներ» գոչեցիր:

Բուն անունս է Արամեան,  
 Մականունս է Կորկոտեան,  
 Երբ որ քանակն ազատուիմ,  
 Նորէն խաւճիկը կը կաղճեմ:

## ԱՐԱԲՈՅԻ ԵՐԳԸ



ԱՐԱՐՈ

Գըրոզ տանի քուրդ Աբսյին,  
 Իլաջ մացեր Աբսյին,  
 Ըսպաներ է ջոջ Աբսյին,  
 Զարթի՛ր լաօ, մըռնիմ քըզի:  
 Զուր ե՞րբ մնամ էլու դուներ,  
 Էրթամ գտնեմ գիմ խեղճ գառներ,  
 Սուքիմ գիմ բաղչա, ծառեր,  
 Զարթի՛ր լաօ, մըռնիմ քըզի:  
 Դէն իրիշկէ գալող ս՞րն է,  
 Քաջ Աբսո բախտաւորն է,  
 Կարմիր իրիցանց գինուորն է,  
 Զարթի՛ր լաօ, օգնէ Հայուն:  
 Խեղճ Մշեցին մնաց լալով,  
 Հեռու երկիրներ ման գալով,  
 Մեռաւ թուրքի պարտքը տալով,  
 Զարթի՛ր լաօ, օգնէ Հայուն:

Ոտքի կայնէ կտրիճ Խերան,      Սէֆիլ, շիւար մացած Հայեր,  
 Զօրքով գնա առաջ ուրան,      Էղան անտէր, բնաւեր հաւքեր,  
 Սալլաթ մէյրու բաժին դուրպան,      Տէ՛ր, դու փրկէ, պահէ արթուն,  
 Զարթի՛ր լաօ, օգնէ Հայուն:      Զարթի՛ր լաօ, օգնէ Հայուն:

## ԵՐԳ ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ

Բարձրէն ելաւ հրամանը, տուեց թաթուլի անունը,  
 Ընաք բարեաւ ազնիւ ընկերք, մօտ է կեանքիս վախճանը,  
 Կարմրադոյն պատանքս, բանտի պատէն մեխել են,  
 Դիւապաշտպան անդութ ֆարմանը գլխիս վրայ կախել են:  
 Թող չթաղէ ինձ օտարն, թողնէ հողին երեսին,  
 Թող կատարէ անդութ ֆարման գազանական հանդէսին,  
 Ես պաշտել եմ գազափար, ուխտել եմ զսհուիլ ազգիս,  
 Կախաղանի անդութ սարսափ, չի փոխել իմ սուրբ վճիռս:  
 Բայց դուք, ազնիւ ընկերներ, ձեր սրտի մէջ գերեզման,  
 Թող թաթուլի հանդերձներով մահըս յիշէք մշտական:  
 Արեւ լուսնի կարօտով, երկար աւարու տանջանքով,  
 Էրուած, վառուած իմ կեանքին վերջ դրեց իմ թշնամ ինձ:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂԻ ԵՐԳԸ

Tempo di marcia

Սի-րա-զի ա փին ծընած դու ընկեր, էն Սի-րա-զին մենք մատաղ-  
 Մուխ բանտերում տան ջուած ըն կեր, սուրբ տան ջանքիդ մենք մատաղ:  
 Ուռ-ռա, ուռ-ռա ուռ-ռա, քաջ Նժդեհ-հին սուրբ շող շողայ:

Արազի ափին ծնած դու ընկեր,  
 էն Արազին մենք մատաղ,  
 Մուխ բանտերում տան ջուած  
 ընկեր,  
 Սուրբ տան ջանքիդ մենք  
 մատաղ:


Ուռռա, ուռռա, ուռռա,  
 Քաջ Նժդեհի սուրբ շողալ:

Յար վախեցաւ քեզ աքսորեց  
 իր աշխարհէն շատ հեռուն,  
 Մեզ մօտ եկար, բարով եկար,  
 Նոր խեղճներ մեզ բերիր:

Ուռռա, ուռռա, ուռռա,  
 Քարեգիծի սուրբ շողալ:

Արեան դաշտում, կռուի  
 դաշտում,  
 Սուրբը շողայ, քա՛ջ Նժդեհ,  
 Ուռռա, յառա՛ջ, դու գոռացիր,  
 կուրծքըդ խաչով զարդարիր:

Ուռռա, ուռռա, ուռռա,  
 Քաջ Նժդեհի սուրբ շողալ:




ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂ

**ՔԵՌԻԻՆ ԵՐԳԸ**

Moderato

Չորրորդ գունդի հրա մա մա տար քաջ քե  
 ինքըդ աբի և գոր ծծ ընդ միշտ բա  
 ռի ըրի Արր տա ծըմ լիկ լու ըը  
 ա ոհնք ցա ա լի քա ջաջ քա ջը  
 ծէ տա քե ոհ տան ծա լի



Չորրորդ գունդի հրամա-  
 նատար քաջ Քեռի,  
 ինքըդ արի և գործերըդ  
 միշտ բարի,  
 Սրտածմլիկ լուրըդ առինք  
 ցաւալի,  
 Քաջաց քաջը ֆէտա Քեռի  
 պանծալի:  
 Անգութ մահը քեզ մեզա-  
 նից բաժանեց,  
 Մեր սրտերում անբուժելի  
 վէրք բացեց,  
 Մի՞թէ չար գնդակը քեզի  
 որսնեց,  
 Գաղափարըդ ու յոյսերըդ  
 խորտակեց:

Ք Ե Ռ Ի  
 Թող լուեն սոխակներ է՛լ չը ճլվըլան,  
 Սլացէք կուռնկներ դէպի Հայաստան,

Լուր տարածեցէք ամէն տեղ հայութեան,  
Հայոց պաշտպան Քեռին մտաւ գերեզման:

Դու ամէն տեղ վազուժ էիր օգնութեան,  
Քեզ ազդուժ չէր ոչ սուր, ոչ թուր, ոչ փնդակ,  
Ամէնքին անխտիր էիր դու պաշտպան,  
Կսչմանդ արժանի հերոս Քեռի Սան:

Մահրդ Դաշնակցութեան մեծ ցաւ պատճառեց,  
Եւ ընտանիքիդ ալ սիրաւ խռովեց,  
Համարեա թէ ամբողջ կովկասը ցնցուեց,  
Քեզ համար մարդիկ լացին ողբացին:

Ռըվանտուզի կռիւն էր շատ ահաւոր,  
Թշնամի զօրքերն էին շատ բիւրաւոր.  
Տասնը ինը տասնըվեց Մայիս տասնըհինգին,  
Հայոց առիւծն ինկաւ վրէժը կրծքին:

ՄԻՋԱԶ



# ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՈՌԻԵՆՔ

Tempo di marcia

Ռազմունակ


Մենք Պէտք է կորիւնք և ոչ լաց լինենք. Եզ-գի կորուստը  
 զէն-քով յետ խը-լենք: Այս-բան դար լա-ցինք ո՞վ է լը-սո-ղը.  
 Այս-բան դար լա-ցինք ո՞վ է լը-սո-ղը  
 Մեզ ինչ շահ ին-րոց ար-ցուն - քի ծո-վը

Մենք պէտք է կորունք և ոչ լաց լինենք,  
 Ազգին կորուստը զէնքով ետ խլենք.  
 Այսբան դար լացինք, ո՞վ է լսողը,  
 Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը:  
 Այլ ևս չլանք և ոչ լաց լինենք,  
 կրակուած սրտով մեր գործը վարենք.  
 Անվեհեր քաջին այս է պատկանում,  
 Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում:  
 Մուլի և Երկչոտ թշնամին թող լայ,  
 Երբ հայ քաջի դէմ կռուի դուրս կուգայ.  
 Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,  
 Եւ ոչ ալ թուրքի դաժան գնդակից:  
 Անէծք այն հօրն, որ չի մղում որդուն,  
 Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.  
 Ամօ՛թ այն Հային և բիւր նախատինք,  
 Որ ազգի սիրոյն չի գործում բարիք:




### ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Tempo di marcia



Դաշնակ ցա կան խումբ գրնանք մենք մա. սուն. Մեր հայ եղ բայրներ մեզ են ըս դասում



Անդրանի կը քաջ իւր ըն կեր նն րով. կու զէ տա տն րազճ, կըս դասէ գարնան:



ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

Դաշնակցական խումբ գրնանք մենք  
 Սասուն,  
 Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,  
 Անդրանիկը քաջ իւր ընկերներով,  
 Կ'ուզէ պատերազմ, կը սպասէ գարնան:  
 Մտ է գարունը, շուտով կը բացուի,  
 Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,  
 Հայերը անվախ հոգևով մ'իացած,  
 Հրացան ուներնին ստքի են կանգնած:  
 Խմբապետները հոգևով են երդուած,  
 Ֆէտայի ուժով գնում են առաջ,  
 Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,  
 Գոռում է գոչում, կ'ուզէ պատերազմ:

Հերիք, եղբայրներ, մենք շատ քնեցինք,  
 Բաւական չէ՞ մեզ այսքան համբերել.  
 Մայր Հայաստանը ձեռքէ հանեցինք,  
 Հիմա ոյժ ունինք դարձեալ ետ կ'առնենք:

### ԵՍ ՄԵՆԱԿ ԶԵՄ

Մայրիկ մի երթար փաշի սարէն  
 կը նորոգուի սըրտիս կարէն:  
 Մի լաւ մայրիկ ես մեկնակ չեմ,  
 Մի լաւ հոգիս ես մեկնակ չեմ:  
 Ժամու գրուներն են բոյալի,  
 Յակորբի ձեռքն է սուրմալի:  
 Մի լաւ մայրիկ, եւայլն:

Յելեր եկան գոռգոռալով,  
 Մայրեր եկան բոռբոռալով:  
 Մի լաւ մայրիկ, եւայլն:  
 Սասնոյ սարեր բուսան կակաչ,  
 Գէորգ կարեց Խալիլի ականջ:  
 Մի լաւ մայրիկ, եւայլն:

### ԿՈՈՒԻ ԵՐԹ

Tempo di marcia

հայ-նդ— քայր ներ գէղ գունդ ի գունդ, ար-նան դաշ-տը  
Սու-րբ Յն-սին հու-րը կրծ-քին, վա-ռած սրբ-տեր

մեր նետ-ուինք, հոր-ձո-քին. Ա-րև-ւել-քից լոյս է ծա-գում,

և հայաստան ուզքին ցն-ծում, Օ՛ն, Օ՛ն յա-ռաջ. Օ՛ն ի մարտ, Օ՛ն ի հրա-

զայր, Մեր ա-րիւ-նով, մեր ա-րիւ-նով ծառ-խայ քա-նանք հայ. նդ-

բարբ, ջան նդ-բարբ: Թրդ-նամ-ւոյն գէ՛ւ մեր սը-լա-նանք հե-ղե-լի ղէս.

փո-թոր-կի ղէս, նրա ա-րիւ-նով լեռ ներ ներ-կներ պիղծ դի-ա-կով

գազ-տեր դա-տներ: Թող գրն-գա-կի տա-րափ Թա-կի լա-կի: Թող վեր-

ջա-ղէս տես-նէ վա-թան, դար-զած գրո ջակն Ա-զա-տու-թան:

Հայ եղբայրներ, գէ՛ն, գունդ ի գունդ,  
Արեան դաշտը մենք նետուինք,  
Սուրբ ձեռին, հուրը կրծքին,  
Սառած սրտեր բորբոքին:

(1) Կը ինդրուի երրագրիւ վերի ձայնագրութեան մէջ հետեւեալ բառերը. — Ա. տող «վառած սրտեր»ու տեղ «սառած սրտեր» եւ Գ. տող «ցնծում է»ի տեղ «ցնցում»:

Արևելքից լոյս է ծագում

Եւ Հայաստան ուժդին ցնցում,

Օ'ն, օ'ն յառաջ,

Ս'ն, ի մարտ, օ'ն, ի հրազայր,

Մեր արիւնով, մեր արիւնով

Ճամբայ բանանք հա'յեղբարք, ջա'ն հղբարք:

Թշնամւոյն դէմ մենք սլանանք

Հեղեղի պէս, փոթորկի պէս.

Նրա արիւնով լեռներ ներկենք,

Պիղծ դիակով դաշտեր պատենք:

Թող գնդակի տարափ թափի,

Թող մեզ անարգ մահը լափի,

Թո՛ղ վերջապէս տեսնէ վաթան

Պարզած դրօշակն Ազատութեան:

### ՏՈՒՐԲԱԽԻ ԵՐԳԸ



ՏՈՒՐԲԱԽ

— Ուրեմն մնաք բարով, ազնիւ  
ընկերներ,  
Մեռնի՞մ ձեր հոգուն երջանիկ  
քաջեր,  
Քո հողին մեռնեմ Տաւուրիկ  
ազատ,  
Կեցցե՛ս դու յաւէտ, Անդրանիկ  
քո զարդ:  
Քաջի համբոյրով տուաւ  
հրածեշտ,  
Անվեհեր Տուրբախն ընկեր  
հարազատ,

Բուպէ մը անցաւ սլացաւ ուժգին,

Վե՛հ Դաշնակցութեան սուրբ տնուան արժան:

Երկինքը պատել էր գունդ գունդ սեւ ամպեր,

Արեգակ չկար, մութ ու խաւար էր,

Դժուար էր գատուել քաջ ընկերներից,

Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռուից տեսնող էլ ու աշիրաթ,  
 Երնէկ կուտային քիաֆուր Տուրբախին,  
 Ա՛հ ու սարսափով լցուած քուրդ միլլաթ,  
 Կապուտ աշերից արցունք կը ցայտէր:  
 Նժոյգ ձի նստած ահուկի դէմքով,  
 Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,  
 Խնուսայ փաշէն լցուած էր դողով:  
 Թռչում էր Յոլակ, ցայտում էր կրակ:  
 Անհամբեր սրտով Դաշնակի ձեռեր  
 Կտրիճ Տուրբախի գալուն կը սպասեն,  
 Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,  
 Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:

## Մ Ե Ն Ա Կ Ի

### Է. ԱՌԱՍՏԱՄԵԱՆԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՍՏՈՒԵՐԻՆ

Բոցիկու սարին սեւ ամպն է չոքեր,  
 Հոփն է հեծեծում Բասենայ դաշտում,  
 Ոսկի երգերը, իմ ազիզ ընկեր,  
 Էն հոփն է երգում Բասենայ դաշտում:

Ա՛յ, սիրուն արտուտ, լալազար դարնան,  
 Արազի դաշտից մինչ Խլաթ ու Մուշ,  
 Դուն թըռչում էիր սիրտը վա՛ռ վառման,  
 Գովքն աղատութեան երգելով անուշ:

Քաջ ընկերներով կռիւ սլացար,  
 Ազատ երգելով Արազի դաշտում,  
 Նամարդ թշնամուն զարկիր, զարկուեցար,  
 Ընկերներիդ հեա Բասենայ դաշտում:

Ու ժողովուրդը, կարօտ քո սիրուն,  
 Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ,  
 Երգում են անվերջ երգերը սիրուն  
 Ու չեն մոռանում երգերը անուշ...

Ա՛խ, սուրբ վէրքերով ընկերներիդ հեա  
 Արնոտ հողի տակ անուշ քնեցիր,  
 Թող ծանր չթւայ այն հողը վերէդ,  
 Որն այնպէս հզօր, անհուն սիրեցիր...

Բոցիկու սարին սեւ ամպն է չոքեր,  
 Հոփն է հեծեծում Բասենայ դաշտում,  
 Անուշ երգերը, իմ ազիզ ընկեր,  
 Էն հոփն է երգում Բասենայ դաշտում...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ք Ա Յ Լ Ե Ր Գ Ն Ե Ր



ՔԱՅԼԵՐԳ Լ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Tempo di marcia

Մը շաղխանուոր բէնջաէր աղբէր, Արի՛ք, մի ա նանք, յառաջ գընանք. Աղխատանք  
 քի դատին պաշտպան, Դաշնակցութեան թև թիկունք տանք: Ահա մենք տանջուներ, քրտինք թա-  
 փներ, Արի՛ն վաստակ դատներ դիզներ. Եա հա գործող ցն ցնր վատնեն, իսկ մեզ՝ չոր  
 հաց քա՛մին հա՛նեն. Դէհ, սեօր-եր ի՛ր-դոր դարձէր, Արի՛ն բըր-  
 յներ երկունք մը տէր, Ծածղանք զբրկանք յն զո՛ւ ա սէր, Գաշ ճարհոյ թե՛ւ ճամբայ քաջէ՛ք:

Մշակ բանուոր, բէնջաէր աղբէր,  
 Արի՛ք, մի ա նանք, յառաջ գնանք,  
 Աղխատանքի դատին պաշտպան  
 Դաշնակցութեան թև թիկունք տանք:  
 Բա՛ւ է տանջուենք, քրտինք թափենք,  
 Արի՛ն վաստակ դատենք դիզենք,

Շահագործող ցեղեր վաանեն,  
 Իսկ մեզ չոր հաց բաժին հաանեն:  
 Դէ՛հ, սև օրեր, բողոք դարձէք,  
 Արիւն, քրտինք երկունք մտէք,  
 Տանջանք, զրկանք, լեզու առէք,  
 Դաշնակցութեան ձամբա՛յ բացէք...



ՔԱՅԼԵՐԳ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ

Tempo di marcia

Յառաջ Հ. Մ. Ը. Մ. ի սկառուաներ, Յառաջ յառաջ Բանակում:


Մի, հոն կը սպասեն քոյր ու եղբայրներ, յառաջ յառաջ և միշտ յառաջ. Մն

Բանակում, զուես մեր իտէալը, Մն Բանակում, ինչ անուշ անուն:


Յառաջ Հ. Մ. Ը. Մ. ի սկառուաներ,  
 Յառաջ, յառաջ, բանակումի,  
 Հոն կը սպասեն քոյր ու եղբայրներ,  
 Յառաջ, յառաջ և միշտ յառաջ:  
 Օ՛ն, բանակում, դուես մեր իտէալը,  
 Օ՛ն, բանակում, ի՛նչ անուշ անուն:  
 Հեռու վայրերէ մենք կը հաւաքուինք,  
 Ամառ ձմեռ, մենք քուն չունինք,  
 Գիշեր ցերեկ անդուլ կ'աշխատինք,  
 Բանակումի կը պատրաստուինք:  
 Օ՛ն, բանակում, դուես մեր իտէալը,  
 Օ՛ն, բանակում, ինչ անուշ անուն:

## ՀՆԶԱԿԵԱՆ ՔԱՅԼԵՐԿ


Tempo di marcia



հե՛ ուս արք երկիր նըստած դու նըժգեհ, հայրենեաց բախտին մ'օտուստես տեղեակ:



քաբող քաջարի նոր ըս կզ բանց վեհ, շնորհս փոխու թեան շայնա տու հընչակ:



քաբող քաջարի նոր ըս կզ բանց վեհ, շնորհս փոխու թեան շայնա տու հընչակ:

Հեռաւոր երկիր նըստած դու նըժգեհ,  
Հայրենեաց բախտին մ'օտուստես տեղեակ,  
Քաբող քաջարի նոր սկզբանց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու Հնչա՛կ:

Նոր գաղափարի քո ցանած սերման  
Ազնիւ պըտուղներ հասուննան արագ,  
Կարին եւ Պոլիս օրոտման նըման,  
Անգրանիկ շարժմունք ծընան քեւ Հնչա՛կ:

Չար բռնակալը Հայոց կեղեքիչ,  
Վախէն պահուեցաւ օսկի գահին տակ,  
Խուլ Եւրոպայի թընդաց մէն գահլիճ,  
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա,  
Հասած կարմըրին արեան նմանակ,  
Կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ,  
Կարմիր հրաւերիդ ակն ունինք, Հնչա՛կ:

Կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր արագ,  
Թո՛ղ Հայք ստք ելլին ծագէ մինչեւ ծագ,  
Փշրի ժանտ շղթան, ծագէ նոր արեւ,  
«Ազատ ենք» հնչէ՛, օսկեզօծ Հնչա՛կ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

# ՔԱՅԼԵՐԳ Ն. Մ. Ը. Մ. Ի

Tempo di marcia — Խանդավառ

Գաղնատրեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

հայ ա—րի—ներ ներ կար—գա—դահի հ. Մ. Ը. Մ Ի գրո—ղիծ

շուրջ Աղ—խա—տանք ներ ու—նիք քա—ղաւ, Օրա գիր ներ վր—

սնձ ու շուրջ: հա—ւա տա—րիմ նախ Աստու—ծոյց,

Յրդ—ուա—ու—թեան դեմ ոչ ան փոյթ. Աղ—գիր հա մար միտ աչ

կա—տի աղ—խա—տե, Ե—ղիք քա—րի ոչ ոք ա—տէ:



Հայ արիներ ենք կարգապահ  
 Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին շուրջ,  
 Աշխատանքներ ունինք բազում,  
 Ծրագիրներ վսեմ ու լուրջ,  
 Հաւատարիմ նախ Աստուծոյդ,  
 Թշուառութեան դէմ՝ ոչ  
 անփոյթ,  
 Ազգիդ համար միշտ աշխատէ,  
 Եղի՛ր բարի, ոչ ոք ատէ:

Ո՛վ հայ արի, նախ բարձրացիր,  
 Մարմնով, մաքով հսկայ  
 դարձիր,  
 Ջանք, ճիգ թափէ դու ամէն օր,  
 Գործադրելու բարիք մը նոր: (\*)  
 Բարձրանանքու բարձրացնենք,  
 Անյազթ մնայ հայ ազգը,  
 Ուրախ ըլլանք, երգենք զուարթ,  
 Ապրի յաւէտ Հ. Մ. Ը. Մ.:

### ՀԱՅ ԱՐԻՆԵՐ

Արիք, կայտառ հայորդիներ,  
 Կենաց բարեւ տանք խնդագին,  
 Դէպի բնութիւն մեզի հրաւէր  
 կարդայ արեւն ալ ժպտագին:

Դընդե՛ր ու ջիղ, եռանդ ու բոց,  
 Արիներ ենք մենք աննըկուն,  
 Վտանգ ու ցաւ, արգելք ու խոց  
 Սարսափ չ'ազդեր մեր վեհ հոգւոյն:

Օ՛ն, բարձրացիր ու բարձրացուր,  
 Այս թող ըլլայ մեր նպատակ,  
 Վերելքին մէջ մեր առաթուր,  
 Փշրենք խութեր ստքի տակ:

Կեանքին համար թռիչք առնենք,  
 Մե՛րն է սուկի ապագան,  
 Հեռո՛ւ մենէ նախանձ ու նենգ,  
 Մեզմով ապրի Հայաստան:

Մեզմով յաւէտ պիտի ապրի,  
 Ապրի՛ յաւէտ Հայաստան:

(\*) Այս երգին 3րդ տունը երգել 2րդ տունին նման եւ վերջին 4րդը՝ առաջին տունին եղանակով:

# ՔԱՅԼԵՐԳ ՆԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ

Աշխոյժ

Խօսք Խ. Խոսնակ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ

S. *փող ու ձո-կան գրող ու թմ-բուկ ա-րև-ա-փիթ ու ռազ-մա-քայլ.*

A. *փող ու ձո-կան գրող ու թմ-բուկ ա-րև-ա-փիթ ռազ-մա-քայլ.*

T. *փող ու թմ-բուկ ու ռազ-մա-քայլ.*

B. *փող ու ձո-կան գրող ու թմ-բուկ, ա-րև-ա-փիթ ռազ-մա-քայլ.*

*սեգ ու զք-ւարթ, տիրկ ու ծա-ղուկ, աղ-ուես ու թու, ար-ծի ու գայլ*

*տիրկ ու ծա-ղուկ, աղ-ուես ու թու, ար-ծի ու գայլ*

*Որք կո-րիւն-ներ սար ու բա-րի մեզ ա-ւազ-ներ Ե-ղան օր-քան,*

*Որք կո-րիւն-ներ սար ու բա-րի մեզ ա-ւազ-ներ Ե-ղան օր-քան*

Շո-վերն արեան հայ աշխարհի Երկր-տու-նեան աւազան խի-զար ու

խի-զար ու

Շո-վերն արեան հայ աշխարհի Երկր-տու-նեան աւազան

Շո-վերն արեան աւազան:

Solo S. A. Բարձրա-ձա-կատ Երկր-տու-նեան աւազան Բարձրա-ձա-կատ

S. A. լա, լա

T. լա, լա, լա, լա, լա, խի-զար ու Բարձրա-ձա-կատ Երկր-տու-նեան աւազան


B. խի-զար ու Բարձրա-ձա-կատ Երկր-տու-նեան աւազան լա, լա, լա, լա, լա

Կատ Երկր-տու-նեան աւազան Միջոտ ան լա

Բարձրա-ձա-կատ ու հո-յա-լանջ

Բարձրա-ձա-կատ ու հո-յա-լանջ լա, լա, լա, լա, լա, լա





ԳԵՊՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՅ

Մէ՛կ ճանապարհ, մէ՛կ հաւա-  
 տամք,  
 Մինչևեւ կատարն հայրենաւանդ:  
 Ոչ մէկ օտար շեշտ ու խըթան  
 Ոգեւորէ թող մեր հողին,  
 Միայն երկո՛ւնքն անկախու-  
 թեան  
 Հայրենիքին, հայ հողին:  
 Խիզախ ու քաջ, եւլին:  
 Վաղն երբ ծագի թուխպէն արև,  
 Կեանքն՝ անստուկի՛ր դառնայ  
 Հայուն,  
 Մեր ծիծաղկոտ հողին վերև  
 Երբ ծածանի դրօշն Եռագոյն,  
 Մէկն հազարով հատուցանել  
 Թողըլլայ մեր պարտքը զուարթ,  
 Սէր, աշխատանք, բարիք ցանել՝

Որ սրտէ սիրտ բացուի վարդ:  
 Խիզախ ու քաջ, եւլին:

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅ

### ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՌԱԶՄԵՐԳ

Եղբարք, յառաջ սլանանք քաջ,  
 Դիմաւորենք թշնամին,  
 Մեր սուրնով միշտ աննուաճ,  
 Մահ տարածենք ամէն դին:  
 Ֆէտայի ենք լի վրէժով,  
 Հայրենիքի ջերմ պաշտպան,  
 Ազատութիւն մեր արիւնով  
 Պիտի գտնէ Հայաստան:

Յառաջ նետուինք ու քաջ,  
 Կըռուի՛նք, գոռանք ուժգին,  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛  
 Զէնք ու կռիւ:  
 Ալ հերիք մեանք այսպէս,  
 Կուրծք տանք թշնամույն,  
 Դաշնակցականներ, ի զէ՛ն,  
 Կռուի միշտ պատրաստ:

Գործը կ'ընէ գաղափարը միշտ յաղթական,  
 Գործի մարդիկ, կռուի մարդիկ թող ոտքի ելլեն,  
 Քաջ կռուինք՝ պիտի յաղթենք անկասկած,  
 Մեռնինք ալ չենք պարտուած,  
 Ապագան մերն է մի՛շտ յաղթապանծ:

# ՔԱՅԼԵՐԳ Լ. Կ. ԽԱԶԻ

Tempo di marcia

Խօսք ևս Լիանակ' Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅԻ

Կու-գաս անց եա-լի ոս-կու մը-ղու-ղէն, Մե՛ծ անձն-ու-րաց-ման գու-  
 Կու-գաս — ս ոս-կու մը-ղու-ղէն, Մե՛ծ անձն-ու-րաց-ման գու-  
 Կու-գա — ս Մե՛ծ անձն-ու-րաց-ման գու-  
 Կու-գաս անց եա-լի ոս-կու մը-ղու-ղէն, Մե՛ծ անձն-ու-րաց-ման գու-

դար ազ-գա-ղէն Ո՛վ հայ սրբ-տէրու գո-րով ազ-ուա-կան, ո-  
 դար ազ-գա-ղէն Ո՛վ հայ սրբ-տէրու գո-րով ազ-ուա-կան, ո-  
 դար ազ-գա-ղէն Ո՛վ հայ — սր-տէ-րու գո-րով — ազուական, ո-  
 դար ազ-գա-ղէն Ո՛վ հայ — սր-տէ-րու գո-րով — ազուական, ո-

րուն մեն-տու-հին Ե-ղաւ Աղ-ուի-թան: Բու-ժակ Բա-րե-րար տիկ-  
 րուն մեն-տու-հին Ե-ղաւ Աղ-ուի-թան Բու-ժա — կ տիկ-  
 րուն մեն-տու-հին Ե-ղաւ Աղ-ուի-թան Բու-ժա — կ տիկ-  
 րուն մեն-տու-հին Ե-ղաւ Աղ-ուի-թան Բու-ժակ Բա-րե-րար տիկ-

Նանց փափ-կա-տուն , կա-Նանց իւ-զա-բեր կան-թեղ մըզ-տար-թուն, Որ

Նանց փափ-կա-տուն , կա-Նանց----- կան-թեղ մըզ-տար-թուն, Որ

Նանց փափ-կա-տուն , կա-Նանց----- կան-թեղ մըզ-տար-թուն, Որ

Նանց փափ-կա-տուն , կա-Նանց իւ-զա-բեր կան-թեղ մըզ-տար-թուն, Որ

Ա-ւա-րայ-րէն մին-չև Ա-րա-րայ, ցօ-ղնց ու ցո-լաց հայ ցա-ւին վը-րայ:

Ա-ւա-րայ-րէն մին-չև Ա-րա-րայ, ցօ-ղնց ու ցո-լաց հայ ցա-ւին վը-րայ:

Ա-ւա-րայ-րէն մին-չև Ա-րա-րայ, ցօ-ղնց ու ցո-լաց հայ ցա-ւին վը-րայ:

Ա-ւա-րայ-րէն մին-չև Ա-րա-րայ, ցօ-ղնց ու ցո-լաց հայ ցա-ւին վը-րայ:



Կուգաս անցեալի ոսկուն մշուշէն,  
 Մեծ անձնուրացման գուպար ազգաշէն,  
 Ո՛վ հայ սրտերու գորով աղուական,  
 Որուն մենտուհին եղաւ Աղուիթան:

Բուժակ բարերար տիկնանց փափկասուն,  
 Կանանց իւղաբեր կանթեղ մշտարթուն,  
 Որ Աւարայրէն մինչեւ Արարա,  
 Տօղեց ու ցոլաց հայ ցաւին վրայ:

Նժգեհ ափերու դաժան քմայքին  
 Թողլիք, ցան ու ցրիւ, բեկորներ անգին,  
 Նոր աշխարհներէն մինչեւ Հայաստան,  
 Անոքներն ամէն քեզի կը յուսան:

Կամքի, հաւատքի կոթող անսասան,  
 Լոյսի սերմնացան, ցաւի բալասան,  
 Հսկէ՛ քառաթեւ, գործէ՛ աննահանջ,  
 Ապրէ՛, ապրեցո՛ւր, ո՛վ Հայ կարմիր Խաչ:

ՔԱՅԼԵՐԳ ՇԱԿԱՐՇԱՆԻ

Tempo di marcia

Եղանակ՝ Ս. ՏԱԳԼԵԱՆԻ


Շա-ւար-շա-նի հե-րոս-նն-դուն. Ա-րի սերունդն ենք հարա-զատ,

Պի-տի դաս-ունքա-նոնց ա-նուն, Պի-տի ըլ-լանք մենք հա-րա-զատ:

Ե-թէ ա-տեն մը գալ չա-րի, Պի-տի կրո-ւսինք միշտ աննա հանջ

Ա-հողնց նը ման ալ բազ ա-րի Պաշտոտանե-լով բար-տոյն տա-հանջ:

Կնց գէ, Կնց գէ, միշտ անխա-ժան, Կնց գէ յա-ւերժ մեր Շա-ւար-շան:



Շաւարշանի հերոսներուն  
Արի սերունդն ենք հարազատ,  
Պիտի պատուենք անոնց անուն,  
Պիտի ըլլանք մենք յար ազատ:

Եթէ տունն մը զայ չարի,  
Պիտի կռուինք միշտ աննահանջ,  
Անոնց նման ալ քաջարի՝  
Պաշտպանելով բարւոյն  
պահանջ:

Կեցցե՛ք, կեցցե՛ք միտս անբաժան,  
Կեցցե՛ք յաւերժ մեր Շաւարշան:

Մենք չենք ճանչնար երբեք  
խըտիր,  
Սերտ միութեան ենք ջերմ  
պաշտպան,

Սիրոյ դրօշը գերբնաիր  
Պիտ՝ ծածանի յար անխափան:

Օջմարտութեան յառաջապահ,  
Աշխատութեան ալ ռահվիրայ,  
Գրիչ սւ գիրք, բրիչ ու բահ,  
Մեր յարգանքին են տուարկայ:

Կեցցե՛ք, կեցցե՛ք, եւ այլն:

Կռու ներդաշնակ մշակութեամբ  
Պիտի կրթենք հոգի, մարմին,  
Նկարագրով վարքով անամպ՝  
Արժանաւոր հայկեան զարմին:

Համայն աշխարհ գիտէ այսօր,  
Թէ վառ լոյսի պաշտող են  
Հայք,

Շաւարշանի դրօշէն բոսոր  
Լոյս ծագեցաւ, շողաց նոր այգ:  
Կեցցե՛ք, կեցցե՛ք, եւ այլն:


Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Յառաջ ընթանանք, եղբայրնե՛ր,  
Մարտի հրաւէր կարդալով,  
Հայրենեաց ազատութիւնը  
Գընենք մեր սուրբ արիւնով:

Բաւ է որքան տառապեցանք,  
Բաւ է որքան մենք լացինք,  
Այսուհետեւ մարտի դաշտը  
Կռիւ տալով պիտ՝ մեռնինք:





ԶԷՅԹՈՒՆԻ ԸՆԴՀ. ՏԵՍԱՐԱՆԸ

ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՆԻ

քանի՜ թմրինք, բու է եղբարք,  
 Շրջենք աչեր աջ ու ահեակ,  
 Շատ սարուհներ եզան ազատ,  
 Միայն մենք մընանք հնազանդ:  
 Զէյթունցի ենք, մեր զբօսանքն  
 է պատերազմ և արշաւանք,  
 Սուր, թուր, գնդակ և հրացան  
 Մեր խաղալիքն են յաւիտեան:

Զէյթունցի ենք, քաջեր ունինք,  
 Ոտխներէն մենք վախ չունինք,  
 Մեր զբօսանքն է պատերազմ,  
 Պատերազմներ ու արշաւանք:  
 Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛  
 Զէյթուն,  
 Թող չտեսնէ սարկուծիւն,  
 Քանի ունի մեզ պէս քաջեր,  
 Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛  
 Զէյթուն:

քանի՜ թմրինք, բու է եղբարք,  
 Շրջենք աչեր աջ ու ահեակ,  
 Շատ սարուհներ եզան ազատ,  
 Միայն մենք մընանք հնազանդ:  
 Զէյթունցի ենք, մեր զբօսանքն  
 է պատերազմ և արշաւանք,  
 Սուր, թուր, գնդակ և հրացան  
 Մեր խաղալիքն են յաւիտեան:

Զէյթունցի ենք, քաջեր ունինք,  
 Ոտխներէն մենք վախ չունինք,  
 Մեր զբօսանքն է պատերազմ,  
 Պատերազմներ ու արշաւանք:  
 Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛  
 Զէյթուն,  
 Թող չտեսնէ սարկուծիւն,  
 Քանի ունի մեզ պէս քաջեր,  
 Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛  
 Զէյթուն:

ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՏՈՂՄԻԿ ԵՒ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԶԱՆ ԳԻՒԼԻԻՄ

Allegreto

Երգ

Կողմեր

Շա-ռիս տա-կը մա-նի-շակ, Զան, գիւ-լիւմ,  
 ջան, ջան, իմ եա-րը քանց բնջ չի-լակ Զան ծա-ղիկ  
 ջան, ջան, իմ եա-րը քանց բնջ չի-լակ. ջան ծաղիկ, ջան, ջան:

Ծառի տակը մանիշակ,  
 Ջան գիւլիւմ, ջան, ջան,  
 Եմ հարը քանց քեզ չիչակ,  
 Ջան ծաղիկ, ջան, ջան:  
 Սարի թըրթընջուկ թագա,  
 Մեղր ու մեխակ քեզ մագա,  
 Ինձ պէս նազանի աղջիկ  
 Քեզ պէս տըղին ո՞նց սագա:  
 Ա՛յ տըղայ, եսխէդ մով ա,  
 Սուրբ կարտպետ քեզ գով ա,  
 Ես քեզ խիստ շատ եմ սիրում,  
 Քո սիրտ ինձանէն հով ա:  
 Նախրատափին խընկի ծառ,  
 Խընձոր գըցեմ՝ արի տա՛ր,  
 Ուրբաթ-շաբաթ քեզ մոհլաթ,  
 Լոյս կիրակի արի տա՛ր:  
 Մնր տան առաջին դարան  
 Աղջկերք եկան ետ դառան,  
 Բուռըս տարայ որ բռնեմ,  
 Շարած մարգարիտ դառան:  
 Ա՛յ տղայ, բաղի միջին,  
 Ոտներըդ շաղի միջին,  
 Կանչի՛ կանչերուդ մեռնեմ,  
 Ես եմ քո խաղի միջին:  
 Մեր տան ետեւը մառան,  
 Տըղերք եկան ետ դառան,  
 Չեռըս տարայ թէ բռնեմ,  
 Դիփ լալ ու մարջան դառան:  
 Ես աղջիկ եմ ալ կ'ուզեմ,  
 Բողչէս ծալեծալ կ'ուզեմ,  
 Երբ որ հարի տուն երթամ,  
 Գօտիկս քիրմա շալ կ'ուզեմ:  
 Ամպել ա, ձիւն չի գալի,  
 Մթնեւ ա, տուն չի գալի,  
 Էս անտէր բարձի վըրայ,

Առանց եար քուն չի գալի:  
 Ա՛յ աղջի, ասա, մասա՛,  
 Ծամերիդ տէրը խաս ա,  
 Թուշիդ դէսն արա, պաչեմ,  
 Վաղի, գընա մօրդ ասա:  
 Արխալուղըս կարել եմ,  
 Ոսկէ կոճակ շարել եմ,  
 Նանի ջան, դարդ մի՛ անիր,  
 Ես սիրածըս ճարել եմ:  
 Արտումս ցանեւ եմ գարի,  
 Աստուած տայ նանիս բարի,  
 Ինձ տըւեց ջանիլ հարի,  
 Դարչին-մեխակ քահրբարի:  
 Բարտի ծառը բարձըր ա,  
 Սիրած հարը քաղցըր ա,  
 Գընամ մօրըս հարցնեմ,  
 Թէ որ չըսան, փախցըրա:  
 Կանգնեւ ես բարձըր հովին,  
 Փըռփըռում դուշիդ մովին,  
 Էրնէկ ծոցիդ քընողին,  
 Շամամ ծըծերդ բռնողին:  
 Ես լիաստղ եմ երկնքին,  
 Շողքըս տըւած գետինքին,  
 Դեռ շատ կարօտ ման կըգան,  
 Էս իմ շալ աչք, կեռ ունքին:  
 Քաքուլիդ կալին մեռնեմ,  
 Երեսիդ խալին մեռնեմ,  
 Լըսել եմ կարգացւոր ես,  
 Սաղմոսիդ ծալին մեռնեմ:  
 Ծառի տակը հով քամի,  
 Քաքուլըդ քամին տանի,  
 Բա դու սարում ու ձորում,  
 Իմ քունը ո՞նց կը տանի:  
 Ծիրան եմ քաղել նուշը,  
 Պըտղընցիս վարդի փուշը,

Փունջ կապեմ, աղբորըս տամ,  
 Պաշ անեմ կարմիր թուշը:  
 Հա՛ դէտը գնա՛, դէտը գնա՛,  
 Մէջքիդ քիրմէն ետ գընայ,  
 Դէսն արի, թուշըդ պաշեմ,  
 Ունքամէջըդ ետ գընայ:  
 Մանուշակ երկու թերի,  
 Սիրողին տունը կ'երի,  
 Ով իմ սիրածն ինձ չը տայ,  
 Չը տըւողին տունն էրի:  
 Սիրել եմ սէրն երեսին,  
 Ռեհան թերըն երեսին,  
 Ով իմ սիրած ինձ չը տայ,  
 Աստըծու կերն երեսին:  
 Չափարի տակ չափ կը տամ,  
 Քիսով ոսկի թափ կը տամ,  
 Էս իմ պատիկ տեղովըս  
 Քեզ պէս շատին խափ կը տամ:  
 Չիթ եմ հագել, սազով ա,  
 Գըլխիս մազը գազով ա,  
 Հալբա՛թ ես էլ նագ կանեմ,  
 Երբոր եարըս նագով ա:  
 Չիթ մինթան էդ հին մաշա,  
 Ունքերըդ զալամ քաշ ա,  
 Աղջի՛կ, ի՞նչ ես միաք անում,  
 Իմ ջանըս քեզ փէշքաշ ա:  
 Պուճուր աղջի՛կ, լաւ աղջի՛կ,  
 Դու ինձ համար ցաւ աղջիկ,  
 Ես քեզ թագուն սիրեցի,  
 Էս ո՞վ արաւ, չա՛ւ աղջիկ:  
 Սարերի սինձ ի՞նչ կանեմ,  
 Կաթով բըրինձ ի՞նչ կանեմ,  
 Թո՛ղ իմ սիրած ինձի տան,  
 Ոսկի, արծաթ ի՞նչ կանեմ:  
 Սարերումը տուն ունեմ,

Միջին ոսկի սին ունեմ,  
 Ա՛յ շան տըղայ, քիչ խօսա,  
 Քեզ պէս հազար շուն ունեմ:  
 Կանգնել ես, կանչում էլ չես,  
 Բոյիցդ ամաչում էլ չես,  
 Եկայ կըշտովդ անց կացայ,  
 Տէր ես՝ ճանաչում էլ չես:  
 Ամպել ա ամպի տակին,  
 Ծունկըս ծընկանըդ տակին,  
 Ես քեզ ո՞րտեղ սիրեցի, —  
 Մեխակի ծառի տակին:  
 Ա՛յ տղայ, դու հէրիս, մէրիս,  
 Ո՞ւր եկար, կէս գիշերիս,  
 Տեղումըս քեզ տեղ չը կայ,  
 Գըլուխըդ դի՛ր կըռներիս:  
 Ճըրագ դընեմ լիսացաւ,  
 Կարմիր խառէն քիսացաւ,  
 Ես քո մօրը հարսնացու,  
 Դու իմ մօրը փեսացու:  
 Աղջի՛կ, մաղերդ հիւսէիր,  
 Թուշդ երեսիս քըսէիր,  
 Ելնէիր բարձիս վըրայ,  
 Բիւլբիւլի պէս խօսէիր:  
 Աղջի՛կ, գընանք մեր բաղը,  
 Պոկեմ շամամիդ թաղը,  
 Էդ երեսիդ շաֆաղը  
 Հանել ա սըրտիս դաղը:  
 Չուն դընեմ թաւէն խաշեմ,  
 Գընամ կտրովը եաշեմ,  
 Եթէ եարըս գալիս է,  
 Չոքեմ՝ չէքմէքը քաշեմ:  
 Գիւլիւմ գիւլիւմ, գիւլ չիչակ,  
 Ես-դու մտնենք մին դոշակ,  
 Մինչեւ լոյսը քըշփըշանք,  
 Լոյսից յետոյ կըչկըշանք:

## ԱՐՕՐ ՏԱՏՐԱԿ

(ԱՇՈՒՆ ԵՒ ԳԱՐՈՒՆ)

Արօրն ասաց տատրակ հաւքուն,  
 — «Ինչի՞ կուլաս կուց կուց արիւն,  
 Երթայ լըցուի բարակ առուն»:

Տատրակն ասաց արօր հաւքուն,  
 — «Գընաց գարուն եկաւ աշուն,  
 Կըտրաւ ջըրիկ աղբիւրներուն,  
 Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,  
 Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն:  
 Էնքան պիտի լամ երերուն,  
 Արիւն կաթէ իմ աչքերուն,  
 Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն»:

Ասաց. — «Դու մի՛ լա էս աշուն,  
 Չէ՞ վաղ կուգայ բարի գարուն,  
 Լոյս կը բացուի վեր աշխարհում,  
 Դուռ կը բացուի խեղճիկներուն,  
 Ես քեզ կ'առնեմ իմ թեւերուն,  
 Թըռնեմ բարձրիկ վեր ծառերուն,  
 Տանիմ, հանեմ վեր սարերուն,  
 Բուն կը դնեմ մէջ քարերուն,  
 Տուն կը շինեմ մէջ գեազերուն,  
 Երգիկ բանամ դէմ հով քամուն,  
 Թոնիր թաղեմ մէջ այրերուն,  
 Ծուխ կը հանեմ հետ ամպերուն,  
 Մեր ցաւկուտանք հարաւ քամուն»:

Գընաց աշուն, եկաւ գարուն,  
 Կաթէր ջըրիկ աղբիւրներուն,  
 Երթար, լըցուէր բարակ առուն:  
 Աղբրանց — արիւն մէջ քարերուն,  
 Դեղին սուսան վեր սարերուն,  
 Փունջ մանուշակ մէջ ձորերուն,  
 Կանաչ կարմիր գոյն գոյն ծաղկունք,  
 Դաշտերն ամէն էրանք, թըռչունք,  
 Չէնիկ կուգայ գառնիկ, մաքուն,  
 Մեր ապրելիք վեր Աստըծուն: Կ. Վ.

## ԱԼԱԳԵԱԶ — ԷԶՄԻԱԾԻՆ

Ալագեազ բարձր տեղ ա, հա՛ր,  
 Զուրբ հիւանդի դեղ ա, հա՛ր,  
 Ես սիրեցի, վայ, խալխը տարաւ իմ սիրած հարը,  
 Թէ որ չառնեմ, վայ, ես կը մեռնեմ, իմ անուշ հարը:  
 Քեզի մեռնեմ էջմիածին,  
 Ազատ անող Աստուածածին,  
 Նանէ՛, նանէ՛, նանէ՛, նանէ՛ ջան:  
 Նանու դարդեր սարերով է,  
 Նանէ՛, նանէ՛, նանէ՛, նանէ՛ ջան:  
 Էրևում եմ, վառւում եմ,  
 Չեմ գընայ, նանէ՛ ջան,  
 Նանէ՛, նանէ՛, ջան:

## ԼԷ՛ՓՕ ԼԷ ԼԷ

Լէֆօ լէ լէ, լէֆօ լէ լէ, լէֆօ լէ լէ, հօտալի,  
 Հողալու ջան, հողալու ջան, հողալէ,  
 Հողալու ջան, հողալու ջան, հողալէ,  
 Գիւղէլ շիրին, հարալը ջան հարալէ,  
 Գիւղէլ շիրին, հարալը ջան հարալէ:  
 Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,  
 Հայրըս տունը թող ճգնի,  
 Մայրս տունը թող չեղնի,  
 Դէ՛ տղերք, եկէք թող հանենք,  
 Չար թշնամուն աչքը տանենք:

## ԳԵՂԶՈՒԿ ՍԻՐԵՐԳ

Ալագեազ բարձր սարին,  
 Չին ա կիտուել կատարին,  
 Սարի ճամբէք, բաց ելէ՛ք,  
 Էրթամ, հասնեմ իմ հարին:  
 Ա՛խ, իմ ճամբէն քարոտ ա,  
 Սիրաըս էրուած, հարոտ ա,  
 Ղարըբի օրն ըլնի սե,  
 Ազիզ հարի կարօտ ա:

Եարիս տեսայ, լալիս էր,  
 Լալիս, գըլխին տալիս էր,  
 Ճամբայ տըէք, ա՛յ սարեր,  
 Չեռով արի՛ գալիս էր:  
 Էն ի՞նչ զուշ ա էն քարին,  
 Սիրաըս կաթում ա արին,  
 Ա՛յ իմ թառլան, թե տուր ինձ,  
 Թռնեմ, հասնեմ իմ հարին:

## ՊԱՐԵՐԳ

## ՏՂԱՆ

Ա՛յ սիրուն աղջիկ,  
Դրախտի ծաղիկ,  
Դուրս արի, տեսնեմ,  
Տեսքիդ խելարն եմ:

## ԽՈՒՄԲԸ

Ձա՛ն վարդավառ,  
վարդավառ,  
Մեր դըռանը  
Ոսկի ծառ:

## ԱՂՋԻԿԸ

Ա՛յ խելար տըղայ,  
վարդերի վըրայ  
Իսկի չե՞ս քընել,  
Երազ չե՞ս տեսել:

## ԽՈՒՄԲԸ

Ձա՛ն վարդավառ,  
վարդավառ,  
Ոսկի բըլբուլ  
վարդին թառ:

## ՏՂԱՆ

Ա՛յ երազ-աղջիկ,  
Դըրախտի ծաղիկ,  
Մի պաչ տուր ինձի,  
Ծարաւ եմ քեզի:

## ԽՈՒՄԲԸ

Ձա՛ն վարդավառ,  
վարդավառ,  
վարդ եմ քաղել  
Քեզ համար:

## ԱՂՋԻԿԸ

Ա՛յ ծարաւ տըղայ,  
Գիշեր լուսընկայ,  
Բըլբուլի երգով  
Չե՞ս հարբել գինով:

## ԽՈՒՄԲԸ

Ձան վարդավառ,  
վարդավառ,  
Թէ տըղայ ես՝  
Արի՛, տա՛ր...

## ԱՌԱԿՕՏ ԼՈՐ

Առաւօտ լոր մըտաւ արտ — վա՛խ,  
Աչքըս առաւ եղաւ դարդ — վա՛խ,  
Կու նմանէր քաֆուր վարդ — վա՛խ.

Լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լոր,  
Կանաչ լորիկ, կարմիր լորիկ,

Անուշ լորիկ, սիրուն լորիկ,

վառ վառ լորիկ, լորիկ, լորիկ,

Լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լորիկ:

Առաւօտ բարի լուսուն,  
Ես մայիլ եմ քո տեսուն,  
Լո՛րիկ, դու իմ սրտի սուն:

Առաւօտ բարի լուսուն,  
Քո խալան հարիւր յիսուն  
Համրի դնի վեր քուրսուն:

ԻՆՉՈՒ ԲԻՆԳԵՕԼԸ ՄՏԱՐ

Scherzando

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Ինչո՞ւ Բինգեօլը մըտար,  
 Բաղի բիւլբիւլը գըտար:  
 Ինչո՞ւ կարոյին առար,  
 Անտէր ու գեղի գառար:  
 Տըլէ՛, Մրկօն, սե՛՛,  
 Աբո՞ն քրխկո՛նսկ:

Թրխկո՛ն, քրխկո՛ն, քրխկո՛ն, սե՛՛,  
 Աբո՛ն կո՛նսկ, քրխկո՛նսկ.  
 Սուսամ սիւմբիւլ,  
 Բաղի բիւլբիւլ:  
 Ինչո՞ւ Բինգեօլը մըտար,  
 Բաղի բիւլբիւլը գըտար:

ՍԱՐ, ՍԱՐ

Սա՛ր, սա՛ր,  
 Ես սարերի ծաղիկ եմ,  
 Զա՛ն, զա՛ն,  
 Ես լեւոնի քուրիկն եմ:  
 Ժամի դրոնէն դուրս ելայ  
 Արեւի պէս լուս եղայ:  
 Էն սարին սա՛ր չեմ ասի:

Փիս գեաղին եար չեմ ասի:  
 Ինձ չէր առնում թող չառնէր,  
 Խօսքն ու զըրիցն էլ ի՞նչ էր:  
 Հաց եմ թըխել փըրփըրի,  
 Վատ խօսողը քըրքըրի:  
 Ես սարերի ծաղիկն եմ,  
 Ես լեւոնի քուրիկն եմ:

ԱՒ, ՄԱՐԱԼ ԶԱՆ

Ա. Յ. Յ. ժ = 88

Գրի առան, դաշնակոց կոմիտաս վարդ.


Ան, մարալ զան — կո. կո. նոս — թոռ — մա՞ն մը . . . . . նաց —  
 Ան, մարալ զան — իմ ա. նեմ — իմ — աա. ըն . . . . . լ —

Ան, գեա. բալ զան — Ար. առն կը. բա . . . կա՞ն մը . . . . . նաց.  
 Ան, գեա. բալ զան — իմ ա. նեմ — իմ — թաց. մը . . . . . նաց.

Ար. առն կը. բա . . . կա՞ն մը . . . . . նաց.  
 իմ ա. նեմ — իմ — թաց. մը . . . . . նաց.

Այս երգը ձայնա-  
գրուած է նոյն ինքն  
կոմիտաս վարդապե-  
տի ձեռքով:

1) Ա՛Խ, ՄԱՐԱԼ ԶԱՆ (\*)



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

Ա՛խ, մարա՛լ զան,  
 Կոկոնըս թոռմած մընաց,  
 Զա՛ն, գեա՛րայ զան,  
 Սիրտըս կըրակած մընաց:  
 Ա՛խ, մարա՛լ զան,  
 Ի՞նչ անեմ իմ ապրելը,  
 Զա՛ն, գեա՛րայ զան,  
 Իմ աչքերը թաց մընաց:  
 Կամար ունքերդ գովեցիր,  
 Սիրել էիր՝ ասեցիր,  
 Ինձ պէս ուժով կըտըրճին  
 Դու անդանակ մորթեցիր:  
 Զահիլ եմ, ընկեր չունիմ,  
 Ընկել եմ ես, աէր չունիմ,  
 Ոչ լաւ ասէք, ոչ էլ վատ, —  
 Հարըստութեան սէր չունիմ:

2) ԷՍ ԳԻՇԵՐ

Mobile

*mf*

էս — գի — շիր — լու — ս — նակ — գի — ղեր, վայ  
 ըրենն — ց — կեր — գն — տին — նախ — ղեր, ով

է, է, է, — — — է, — — — է, է, է, — — — է, — — —  
 տն — սնդ — սի — բած նա — ղին — մո

է, է, Ով մո — ու — նայ — զու — խո  
 ու — նայ:

ալ — քն — ղով — — — կու — ղա — նայ:

(\*) Յուսարուած երգերը կարելի է երգել ետեւէ ետեւ, ինչպէս կ'երգր-  
 ան յաճախ, համերգներու ընթացքին, մէկը միւսին իբրեւ շարունակութիւն:

Էս գիշեր լուսնակ գիշեր,  
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Ձիւնն եկեր, գետին նախշեր:

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:

Թուշըդ գէ՛մ արա՛ պաշեմ,  
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Կեռ ունքեր, սիրուն աչեր:

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:

Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,  
Հացըս թող լինի գարի,  
Մենակ եարըս ինձ համար,  
Սրտով խօսքը կատարի:

Ա՛ղջի, քու չարը տանեմ,  
Քու սիրուդ ինձ կը սպանեմ,  
Դու իմ խօսքին ականջ դիր,  
Ես մօրըդ հաւան կ'անեմ:

### ԳՈՒԹԱՆԵՐԳ

Լուսաստղ զըցեց դուռ,  
Գութան քըշէք դար ի դուռ:  
Հոռովել, հօ՛:  
Արտուտ թըռաւ իր բընէն,  
Լուս ծագեց աղօթրանէն:  
Քամին անուշ շընկշընկաց,  
Թուփն ու ծաղիկ տընկտընկաց:  
Հօտաղներ, շուտ վեր ելէք,  
Խարզան ու լըծեր լըծէք:  
Մա՛ճկալ նայէ դէ՛մ աղօթրան,  
Փառք տուր Աստծուն մէկ  
բերան:  
Մըսրայ գոմէշ լըծի տակ,  
Թող գըլորի պգտիկ ալ:

Հոռովել տուր, մաճկա՛լ ջան,  
Իմ ջան քո ջանին դուրբան:  
Եղնարած եղներ տարաւ,  
Խամբաջին փըլաւ բերաւ:  
Մութն ընկաւ, գութան թորկին,  
Մաճկալ և հօտաղ պառկին:  
Մըրտօն պառկե մէջ առուին,  
Կը գըռմըրայ վեր պառուին:  
Հօտաղ քե՛ մատաղ, պառկի՛,  
Թող մեր չարկամ ակըռկի:  
Գառներ գմաքիք կը ծըծին,  
Քունն անուշ պգտիկին, մեծին:  
Կ. Վ.

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ:

— Գացինք, տեսանք, գէլն է կերել զէծ:

Գէլն է զէծուն,

Էծն գտիկուն,

Տիկ զարեւուն,

Հալալէ կրմօ, հալալէ,

Հալալէ, ջալօ՛, հալալէ:

Է՛ս ինչ քեաֆուր դարու հասանք, հալալէ,

Էս ինչ խաբար կրմօ ստացանք, հալալէ:

Դէ՛հ, գնա, կիգամ, դէ՛հ գնա կիգամ, շուտ կիգամ,

Կարմիր սուրս հագնիմ, կիգամ, շուտ կիգամ:

Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ:

— Գացինք, տեսանք արջն է կերել զէծ:

Արջն զգէլուն,

Գէլն է զէծուն,

Էծն գտիկուն,

Տիկ զարեւուն,

Հալալէ կրմօ, հալալէ,

Հալալէ, ջալօ՛, հալալէ:

Է՛ս ինչ քեաֆուր դարու հասանք, հալալէ,

Էս ինչ խաբար կրմօ ստացանք, հալալէ:

Նազ մի աներ, նազ մի աներ, նազ աղջիկ,

Դէրեազ քաշիր թող մի աներ հայ աղջիկ:

— Նազ կու էնիմ, նազ կու էնիմ հայ աղայ,

Մինդանովըս թող կու էնիմ հայ աղայ:

Խորոտիկ, մորոտիկ,

Խորոտիկ, մորոտիկ,

Իմ եարն է:

Գացէք, տեսէք, ո՞վ կերել է զէծ:

— Գացինք, տեսանք, առիւծն է կերել զէծ:

Առիւծն զարջուն,

Արջն զգէլուն,

Գէլն է զէծուն,

Էծն գտիկուն,

Տիկ զարեւուն,  
 Հալալէ, կրճօ հալալէ,  
 Հալալէ ջալօ՛, հալալէ:  
 է՛ս ինչ քեաֆուր դարու հասանք, հալալէ,  
 էս ինչ խաբար կրճօ ստացանք, հալալէ:  
 Ծառը ես եմ, բարը դու ես Աննա ջան,  
 Սրտով սիրած եարըս դու ես Աննա ջան:  
 — Ծառը դու ես, բարը ես չեմ հայ տղայ,  
 Սրտով սիրած եարըս դու չես հայ տղայ:  
 Խորոտիկ, մորոտիկ,  
 Խորոտիկ, մորոտիկ,  
 Իմ եարն է:  
 Գիրգորն եմ, Գիրգորն եմ,  
 Ձեր մայլեցի Գիրգորն եմ:  
 Խորոտիկ, մորոտիկ,  
 Խորոտիկ, մորոտիկ,  
 Իմ եարն է:

#### ԿԱՐՍԵՑՈՅ ԵՐԳԸ

Վերէն ես կուգայի՛ դու դուռը բացիր,  
 Ձեռքըդ ծոցըդ տարար՝ ա՛խ էրիր լացիր,  
 Ես էլ քեզի չառայ՝ տունը մընացիր,  
 Գընը, զապլի խային, եար չեղար ինծի:

Ես սարէն կուգայի, շալակըս բուրդ էր,  
 Լեզուդ ինծի համար վառած քուքուրթ էր,  
 Բոյըդ զարդու զամիչ, երեսըդ թուղթ էր,  
 Գընը, զապլի խային, եար չեղար ինծի:

Երկինքը ամպեւ էր, ի՛նչ անուշ թոն էր,  
 Էկայ դըռնէն անցայ, ջանանըս հոն էր,  
 Էրեցայ-վառեցայ, սիրտըս միշտ քոնն էր,  
 Գընը, զապլի խային, եար չեղար ինծի:

Էնօր շաբաթ էղնիր, էգուց կիրակի,  
 Եարըս դըռնէն անցնիր էրթար կըրակի,  
 Լեզուն բանլիք էղնիր, ծոցը ֆըռանկի,  
 Գընը, զապլի խային եար չեղար ինծի:

Հ Ա Բ Ը Ր Բ Ա Ն

Allegreto

հա-բր-բան - ջանի ջան Ար-թել եմ սերն Ե-րե-սին,  
 Ան-թառամ թերն Ե-րե-սին,  
 Ո՛վ իմ սիրածն ինձ չի-տայ, Ասար-ծու կերն Ե-րե-սին,  
 հա-բր-բան - ջա-նի ջան Աս-րի թըր-թըն - ջուկ թա-զա,  
 Մեզր ու շա-քար քեզ մա-զա  
 ինձ որես նա-զա-նի աղ-ջիկ, քեզ որես տը-ղին ո՞նց սա-զայ

ՏՂԱՅ

Հաբրբան.

Աղջիկ

Ջա՛նե ջա՛ն.

ՏՂԱՅ

Սիրել եմ սերն երեսին,  
 Անթառամ թերն երեսին,  
 Ո՛վ իմ սիրածն ինձ չի տայ,  
 Ասարծու կերն երեսին:

Աղջիկ

Հաբրբան.

ՏՂԱՅ

Ջա՛նե ջան.

Աղջիկ

Սարի թըրթընջուկ թազա,  
 Մեզր ու շաքար քեզ մազա,  
 ինձ պէս նազանի աղջիկ,  
 քեզ պէս տըղին ո՞նց սազայ:

ՏՂԱՅ

Պըզտիկ աղջիկ, համ ունիս,  
 Չորեքդիմաց ծամ ունիս,  
 Խունջիկ-մ ունջիկ մի՛ անի,  
 ինձ առնելու կամ ունիս:

Աղջիկ

Գութանըդ հուլա՛, հուլա՛,  
 Գութանիդ տակը քուլ ա,  
 Քանի՛ գըծութիւն անես,  
 Քեզի առնողը տու ա:

ՏՂԱՅ

Չեր տան տակին վար կանեմ  
 Չար ագռաւին քար կանեմ,  
 Թող իմ սիրածն ինձի տան,  
 Գըծութիւնըս թարկ անեմ:

Աղջիկ

Չուրը իր ճամբով կ'երթայ,  
 Յողածը վարդի թերթ ա,  
 ինձ սիրող կըարի՞ն տըղէն,  
 Հազարի մէջ մի բերդ ա:

## ՏՂԱՅ

Բուսեւի ես բազի միջին,  
Շամամի թաղի միջին,  
Գիշեր ցերեկ միալար,  
Դու ես իմ խաղի միջին:

## ԱՂՋԻԿ

Աշուղի պէս խա՛ղ ասա,  
Բըլբուլի պէս տա՛ղ ասա,  
Ինչքան որ գովես՝ արժեմ՝,  
Իմ մօր գովական փեսայ:

\* \*

Հաբրբան,  
Ջանե ջան.

Աղջի անուշդ է Շուշան,  
Արի երթանք Սուրբ Նշան,  
Ջանե ջան,  
Մատնիք տըւի քեզ նշան:

Արեւ դիպաւ սարերուն,  
Կաքաւ թռաւ քարերուն,  
Եղսօն կայնէ վըր դարուն:

Չունն էկաւ, նստաւ կալին,  
Թըմահ չունիմ ձըր մալին,  
Կարօտ եմ երսիդ խալին:

\* \*

Հաբրբան,  
Ջանե ջան,

Արազից ջուր ա գալի,  
Հարցըրէք ո՞ւր ա գալի,  
Մի լար սիրուն սիրական,  
Բաժանման լուր ա գալի:

Ապուր եմ կփել աղի,  
Ուտողի սիրաը դաղի,  
Ես ու դուն իրար սիրենք,  
Թող դուչմանը կատաղի:

Ո՞նց տնկի ես բար չունիս,  
Ո՞նց ջահել ես, եար չունիս,  
Երկնքի զուշ ես դառել,  
Իջնելու ումուտ չունիս:

\* \*

Հաբրբան,

Էսօր ամպ ա պարզում չի,  
Սիպտակ դեյրէն սազում չի,  
Օխտը տարի ալ հագնիս,  
Ջանե ջան,  
Սիրադ սեւ ա, սազում չի:

Պուճուր աղջիկ գուլում ես,  
Մազերըդ սղալում ես,  
Ամէն ինձի տեսնելիս,  
Ջանե ջան,  
Աչքով ունքով անում ես:

Ամպել ա բութա-բութա,  
Կերածդ կարմիր թութ ա,  
Ես սիրել եմ, ես կ'առնեմ,  
Ջանե ջան,  
Թող գեղով ասեն սուտ ա:

Կայնել ես ախա-պախա,  
Եայլուղիդ տուտը կախ ա,  
Սեւ տղայ, սիպտակ աղջիկ,  
Ջանե ջան,  
Բռնել են իրար եախա:

Արազն ընցայ էն կուռը,  
Քաղեցի դաստա նուռը,  
Ես չեմ առնի էն ծուռը,  
Ջանե ջան,  
Կ'երթամ կ'ընկնիմ սեւ ջուրը:

\* \*

<p>Հաբրբաճ, Ջանե ջան, Հաբրբաճը նստել ա, Սինամ սարք մթնել ա:</p> <p>Մողնըքայ ջուրը լողցայ, Մողնըքայ շուշէն գողցայ, Օխտը տարի հիւրնդցայ, Եարիս տեսայ լաւընցայ: Մողնըքայ ջուրը սառն ա, Մողնի է թողն իմ եարն ա,</p>	<p>Թող էրթայ մուրազն առնի, Ետ դառնայ սիրածն առնի: Ջուխտ գուլթան արտ կը բանի, Շէկ աղջիկ հաց կը տանի, Շէկ աղջըկայ ծամերը Խելքս ու իմանս կը տանի: Ալագեազը ձընել ա, Եարըս տակին քընել ա, Ջէն կուտամ՝ ձէնըս չառնի, Էս ի՛նչ անուշ քընել ա:</p>
---	---

ԴԷ ԵԼ, ԽԱՂԱ

<p>Աղջի, անուկդ Արաքսի, Դէ, ելի, կայնի, խաղա, Հագիդ շորերը մետաքսի, Դէ, ել, կայնի խաղա՛: Աղջի, անուկդ Շուշանիկ, Դէ՛, ել, կայնի, խաղա՛,</p>	<p>Մատիդ սսկէ մատանիք, Դէ՛, ելի, կայնի, խաղա՛: Աղջի, անուկդ Հայկանուշ, Լեզուդ քաղցր, խօսքըդ անուշ, Աղջի, անուկդ Վարդիթեր, Էդ ինչ շուտ դառար մարդի տէր:</p>
--	--

ԵՐԿԻՆՔԸ ԱՄՊԵԼ Ա

<p>Երկինքըն ամպել է, Ի՛նչ անուշ թոն է, Գամ դըռնէն անցնեմ, Հոգեակըս հոն է: Երկինքըն ամպել է, Գեաինը թաց է, Եարըս քընել է, Երեսը բաց է: Երկինքըն ամպել է, Ի՛նչ անուշ երակ, Սըրտիս մէջ լըցաւ Մի բուռը կըրակ:</p>	<p>Երկինքըն ամպել է, Գեաին շաղերով, Ես քեզ սիրել եմ, Անուշ խաղերով: Երկինքըն ամպել է, Գեաինը մուլթ է, Ես քեզ ուզել եմ, Թո՛ղ ասեն՝ սուտ է: Շորո՛ր, դու, շէկի՛կ եար, Տեսնեմ՝ դու ո՛ւմն ես, Իրաւ եմ ասում Դու իմ սըրտումն ես:</p>
---	--

## 1) ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,  
 վա՛յ, լե՛, լե՛, լե՛,  
 վա՛յ, լօ՛, լօ՛, լօ՛, լօ՛:  
 Շինականի քունն անուշ,  
 Երնեկ են օրձր,  
 Որ կ'ելնենք սարեր:  
 Ծագեց լուսնակըն երկնուց,  
 Հովիւի փողն էր անուշ:  
 Հօտաղն եղներ կ'արածայ,  
 Մաճկալ պառկէր՝ քունն անուշ:

Զղզղուն քամին կը փչայ,  
 Ծովային հովն էր անուշ:  
 Դաշտեր ձորեր մնջեր են,  
 Զրեր գլգլան՝ ձէնն անուշ:  
 Հաւքեր թռան իրենց բուն,  
 Բըլբուլի տաղն էր անուշ:  
 Անմահական հոտ բուրէր,  
 Քաֆուր վարդի հոտն անուշ:  
 Հասուն պտղով լի ծառեր,  
 Որից տակ քունն էր անուշ:

Թ. ՄԵԼԻՔԵԱՆ

## 2) ՇՈՂԵՐ ԶԱՆ

Ամպիւ ա՛ ձուն չի գալի,  
 Շողե՛ր ջան,  
 Սարիցը տուն չի գալի,  
 Շողե՛ր ջան,  
 Դուն շորորա՛, դուն օրօրա՛,  
 Շողե՛ր ջան,  
 Ամպի տակին ձուն կ'երեւայ:  
 Շողե՛ր ջան,  
 Սիրտըս կըրակով լեցուած,  
 Շողե՛ր ջան,  
 Աչքերիս քուն չի՛ գալի,  
 Շողե՛ր ջան,  
 Դուն շորորա՛, դուն օրօրա՛,  
 Շողե՛ր ջան,  
 Ամպի տակին ձուն կ'երեւայ:  
 Շողե՛ր ջան,  
 Աշունն եկաւ սարիցը,  
 Տերեւ թափեց ծառիցը,  
 Շողօն դարդով լըցուել ա,  
 Հեռացել ա եարիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,  
 Շողե՛ր ջան,  
 Շէկլիկ եարըս տուն եկաւ,  
 Շողե՛ր ջան,  
 Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ,  
 Շողե՛ր ջան,  
 Բերդի տակէն տուն կ'երեւայ:  
 Շողե՛ր ջան,  
 Դեռ մուրադիս չը հասած,  
 Շողե՛ր ջան,  
 Վըրէս խորունկ քուն եկաւ:  
 Շողե՛ր ջան,  
 Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ,  
 Շողե՛ր ջան,  
 Բերդի տակէն տուն կ'երեւայ:  
 Շողե՛ր ջան,  
 Հուրք ա թափում վերիցը,  
 Ես վառուայ քս սէրիցը,  
 Վարդավառին ինձ համար,  
 Զուն բեր դու սարերիցը:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Խօսք՝ ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻ  
Allegretto

Երաժշտութիւն՝ ԱՐՏԱՇԷՍ ԽԱԶՍՈՒՐԵԱՆԻ

Աւարտ ըրդ ծաղկել շո-րն-րը ծաղ-կել, զըմ-րուխք փա-րուս — *mf* —  
 շո-րն-ր տն հա-սել, փար-նուս ճամ-բով տա փը-նուս իր զա-նիք,  
 ա-նուշ հայ-րն-նիք, փն-փուշ հայրն-նիք, զա-ն — *f* — ն.  
 ա-նուշ հայ-րն-նիք, փն-փուշ հայրն-նիք *poco rubato* փար-ն-ր ծաղ-  
 կա-ն — ն շուր-րն-րով փա-ն-սա-ն — ն, փո-սուս տն ինչ հե-ր  
*a tempo mf*  
 սի-րով անսահման, փն-նով տեղ մի-այն չը-ւարթ իր զա-նիք,  
 ա-նուշ հայ-րն-նիք, փն-փուշ հայրն-նիք, փն-նով տեղ մի-այն  
 չը-ւարթ իր զա-նիք, ա-նուշ հայ-րն-նիք, փն-փուշ հայրն-նիք:

Սարերը ծաղկել, ձորերը ծաղկել,  
 Զըմրուխտ գարունքի շորեր են հագել:  
 Գարնան ճամբով ես գընում երջանիկ,  
 Անուշ հայրենիք, քնքուշ հայրենիք: — Զան. . .

Վարդերը գարնան, շուրթերով վառման,  
 Խօսում են ինձ հետ սիրով անսահման,  
 Քեզնով ենք միայն զըլարթ, երջանիկ,  
 Անուշ հայրենիք, քնքուշ հայրենիք:

Արտերըդ լիքն են ցորենի բերքով,  
 Լոյս արտոյաների հայրենի երգով,  
 Բերքով երջանիկ, երգով երջանիկ,  
 Անուշ հայրենիք, քնքուշ հայրենիք: — Ջա՛ն...

Ես էլ մի հասկ եմ քո կեանքի արտում,  
 Սիրտըս մի արտոյա՝ քեզ երգ է կարգում,  
 Քեզնով է միայն որդիդ երջանիկ,  
 Անուշ հայրենիք, քնքուշ հայրենիք:

### ԳԱՐՈՒՆՔՆԵՐԸ

Գարունքները դու ման կուզաս սարումը,  
 Ես կը կանգնեմ իմ տուածի գալումը,  
 Հարսանիքըդ կը լինի էս տարումը,  
 Մատնիքս առան ձեր տան ճանապարհումը:

Աղջի՛ արի, քո խոսանասիդ մասադ,  
 Ոսկով լիք ծով ես, աւազիդ մասադ,  
 Աւարակի խաղող ես, վազիդ մասադ,  
 Արեւն ու կես ծամեր ու մազիդ մասադ:

Քանի պուճուր էր, բոխախում խալ գըցեց,  
 Կօշիկ հագաւ, տակը ոսկէ նալ գըցեց.  
 Հարսը դառաւ, գլխին քիրման շալ գըցեց,  
 Հենց մեծացաւ, հետըս դալմազալ գըցեց:

Աղջի՛ արի, քո խոսանասիդ մասադ, եւայլն:  
 Կանգնել ես բալկոնումը համաշա ես,  
 Զուգուել ես, զարդարուել ես, թամաշա ես,  
 Դուն ինձ համար վարդ, մանուշակ, փաշա ես,  
 Ո՞ր տունը քանդուածը քեզ կասի ալաշա ես:

Աղջի՛ արի, քո խոսանասիդ մասադ, եւայլն:  
 Աղջի, ի՞նչ ես կանգնել էդ զէյմաթումը,  
 Արի կանգնի իմ սազ ու սոյբաթումը,  
 Դուշիդ վրայ մի ջուխտ նշաններ ունիս,  
 Էդ քու նշաններիդ էլ եմ ես մատաղ,  
 Էդ քո բերող նանիդ էլ եմ ես մատաղ,  
 Օխտը բերել ա, կենդու քու ջանիդ մատաղ:

Աղջի՛ արի, քո խոսանասիդ մասադ, եւայլն:

# ԱՆՏՈՒՆԻ

ԵՐԳ ՎԸՌԸՇԻԿՆԵՐՈՒ (Ռչտուհնցւոց)

Largo ad libitum

ԿՈՄԻՏԱԾ ՎՐԳ.

Սիր-աղբս նը-մա՛ն է՛ն փլած տը-նե՛ր  
 Կոտրեր գե՛րաններ խախտեր է սը-նե՛ր  
 Բուն պիտի գը-նեն մէջ վայ-րի հաւ-քե՛ր  
 Երթամ ձիկ թալեմ էն ել՛ման գետեր,  
 Ընիմ ձրկներու ձագերաց ընկեր:  
 Ա՛յ, so լա՛ն սրնաւեր:  
 Սե ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բուրբ,  
 Ալին կը գարկէր, չէր խառնի յիրոր,  
 Էն ո՞րն է տեսե մ'չկ ծովն երկթաւոր,

Սիրաղբս նըման է էն փլած տըներ,  
 Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ,  
 Բուն պիտի գընեն մէջ վայրի հաւքեր,  
 Երթամ ձիկ թալեմ էն ելման գետեր,  
 Ընիմ ձրկներու ձագերաց ընկեր:

Ա՛յ, so լա՛ն սրնաւեր:

Սե ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բուրբ,  
 Ալին կը գարկէր, չէր խառնի յիրոր,  
 Էն ո՞րն է տեսե մ'չկ ծովն երկթաւոր,

Անտուհի սիրտն է պղտոր ու մսլոր,  
Ա՛խ, իսկի մի՛լնիք սըրտիկ սեւաւոր:  
Ա՛յ, so լա՛նք սքնաւեր:

Կ. Վ.

## ՄՇԵՑԻ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր  
Շամամն ի գօտիս թողմըշեր,  
Եար մզիկ դռնէն դուրս չեղներ,  
Փըշուր մի սիրտ մըզիկ խովներ:

Վա՛յ յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛:

Երթամ Ստանբօլ,

Դատիմ փարա բօլ,

Իմ եարի համար

Առնեմ ջուխտ մի սօլ:

Արի՛, եար, արի՛, խրոսվ մի՛ կենայ,  
Ասուտորիս բան, եա՛ր, մըզիկ չի՛ մնայ:

Առնեմ գդամ բուրէս՝

Յեղնամ քու մամու յերդիս,

Զիմ կաքուռ ձէն լըսես,

Անուշ քընէդ ի գարթիս:

Վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛:

Կայներ իս յիգին՝

Խաղող կու քաղես,

Շամամ ծըծերով՝

Շաքար կու մաղես,

Ալմաստ բիչաղով՝

Զիմ սիրտ կու դաղես:

Արի՛, եար, արի՛, և լն.:

Վա՛յ, սանխէր կիվկիվ,

Դու գացիր ի Մուշ բարով,

Էլ չըս յիգայ հազար տարով:

Խարս պարկէ տըզայ բերէ,

Առջընեկ լէ գութան կը վարէ:

Վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛, վա՛յ, յօ՛:

Քամբախ Բուլանըխ

Ի՛նչ անուշ գեղ է,  
 էրկուսս մէ շապիկ՝  
 Փողպատնի նեղ է,  
 Եարիս մէ պագնի  
 Սրաիս ի գեղ է.

Արի՛, եար, արի՛, ևլն.:

Մկլորսի քամբախ երկրէն  
 Խարրիկ մէ եկեր,  
 Թէ Տաճիկ լցուեր գեղ,  
 Չըմէն թալներ ու տարեր.

Վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛:

Խայե՛ր, վա՛խ, խայե՛ր  
 Շիւար էք մնացեր,  
 Չիմնա՞ք մեր երկրի  
 Լացերն ու թացեր:  
 Եարսի խռովաւ,  
 Շաղկամ թռռոճաւ,  
 Հովիւ խռովաւ,  
 Ոչխար մսլորաւ,  
 Բերւոր շիւարաւ,  
 Կըթոց գլորաւ:

Արի՛, եար, արի՛, ևլն.:

Աղջի, էրեցայ քու դարդէն,  
 Գամ նըսաիմ քու հէրանց բաղչէն,  
 Է՛նքան դարնեմ, է՛նքան ասեմ,  
 Չուր հալի միս, թափի իմ ջանէն.

Վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛:

Արթուն թէ քընած՝  
 Ընկել եմ քու փէշ,  
 Խոցերս շատ են,  
 Մի՛ անիր ինձ գէշ,  
 Կը մեռնիմ սիրովդ,  
 Կը տեսնես իմ լէշ.

Կանչեմ՝ եա՛ր, արի — եարիկ ձե՛ն չի տայ,  
 Ընկեր քողքը քու՛ն անուես էլ չի՛ տայ:

## 1) ՀԱՐՍՆԵՐԳ

### ՆՈՐԱՓԵՍԱՅ

Առաւօտուն բարի լուս,  
Աստուած պահէ ամէնուս,  
Թող դո՛ւս գայ  
Լուս թըշնամուս,

Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,  
Թող դո՛ւս գայ  
Լուս թըշնամուս:

Լօրի՛կ,

Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,  
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛րիկ,  
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛րիկ:

### ՆՈՐԱՀԱՐՍ

Հազա՛ր էրնէկ էն աւուր.—  
Տափուլ զուրնա չալեցուցին,  
Կանաչ կարմիր հագեցուցին,  
Տարան ժամը կայնեցուցին,  
Աւետարան կարդացուցին,

Չեռը ձեռին տըլեցուցին:

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,

Տո՛ւյ, տո՛ւյ...

### ՆՈՐԱՓԵՍԱՅ

Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,  
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛րիկ,  
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛րիկ:

Առաւօտուն բարի լուս,  
Բարեւ ասա բարեւուս,  
Բարին հասնէ արեւուս:

Առաւօտուն բարի լուս,  
Արեւն ելաւ սարի ուս,  
Արի՛, երթա՛նք, դար ի դուս,

Առաւօտուն բարի լուս,  
Աստուած պահէ մեր երկուս,  
Լո՛ր, ոսկի սիւն իմ հոգուս:

Առաւօտ բարի լուսուն,  
Քո հալան հարիւր յիսուն  
Համրի դնի վըր քուրսուն:

4. 4..

## 2) ՊԱՐԵՐԳ

Արեւը կայնէ կէս օր,

Դե՛, ֆե՛լե դե՛ ֆե՛լե,  
Եա՛րօ, զա՛ն,

Իմ եարը կուգայ էս օր,

Դե՛, ֆե՛լե՛, դե՛ ֆե՛լե,  
Եա՛րօ, զա՛ն.

Իմ եարի գալած ճամբին,

Դե՛, ֆե՛լե, դե՛ ֆե՛լե,  
Եա՛րօ, զա՛ն.

Կը ցանեմ կարմիր մասոր:

Դե՛, ֆե՛լե, դե՛ ֆե՛լե,  
Եա՛րօ զա՛ն:

4. 4



## ԿԱԼԻ ՀՈՌՈՎԵԼ

Andante

Գրի առաւ եւ դաշնաւորեց Գ. ՍԻԻՆԻ

Սա-րե-րը հո-վել-ա ծի-րան ջան հօ- հո-ոտ-վել հօ  
 Օ-րե-րը գնա-ցել-ա ծի-րան ջան հօ- հո-ոտ-վել հօ

Սարերը հովել ա, ծիրան ջան,  
 Հօ՛, հոռովել, հօ՛:  
 Բաներուս մնացել ա, ծիրան ջան,  
 Հօ՛, հոռովել, հօ՛:  
 Օրերը գնացել ա, ծիրան ջան,  
 Հօ՛, հոռովել, հօ՛:  
 Էլ գնալով, անելով, ծիրան ջան:  
 Հօ՛, հոռովել, հօ՛:

## ԳԵՂՋԿԱԿԱՆ

Պարտքով կսվը ծախեցին,  
 Եա՛ր, եա՛ր,  
 Չըմեռ տըրին բուռնուզին,  
 Եա՛ր, եա՛ր.  
 Ընկել եմ սար, սա  
 Ինչպես խելագար:  
 Բուռնուզ պատէն կախեցին,  
 Եա՛ր, եա՛ր,  
 Մուրհակն ինկաւ մեր վըզին,  
 Եա՛ր, եա՛ր,

Ընկել եմ սար սար  
 Ինչպես խելագար:  
 Չիւնն եկաւ, գետին առաւ,  
 Կեսրարըս պարտքով մեռաւ,  
 Ես պզտիկ, եարըս պզտիկ,  
 Հոգս միաքը մեզ տարաւ:  
 Սիրտըս լըցուել ա կրակ,  
 Ինձ ազատէ՛ք, թէ կարաք,  
 Թէ չէ՛ էգուց էս ցաւից  
 Ես կը մեռնեմ անդանակ:

## 1) ՏԱՆՐ ՊԱՐ

Ալազհազ սարն ամպել ա,  
 վա՛յ լե՛, լե՛, լե՛,  
 լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 Աղբէր իր ձին թամբել ա:  
 Իմ մա՛յրիկ, ջան,  
 Իմ մա՛յրիկ, ջա՛ն:  
 Աղբէր իր ձին թամբել ա,  
 Եարոջ գըռնէն անցել ա:

Եարոջ գըռնէն անցել ա,  
 Ելե գաշտը խաղցել ա:  
 Ելե գաշտը խաղցել ա,  
 Անձրեւ եկե թըրջել ա,  
 Անձրեւ եկե թըրջել ա,  
 Արեւ զարկե չորցել ա:  
 Արեւ զարկե չորցել ա,  
 Քանց կարմ իր վարդ բացուել ա:  
 Կ. Վ.

## 2) ՈՒՍՊԱՐ

Մեր գըրանը խընկի ծառ,  
 Գիւլի՛ւմ ջան,  
 Ձեր գըրանը խընկի ծառ,  
 Գիւլի՛ւմ ջան,  
 Արնկենին ա բերել բար,  
 Գիւլի՛ւմ ջան,  
 Իմ խորտաիկ պղտիկ եար:  
 Գիւլի՛ւմ ջան:  
 Մեր գըրանը խընկի ծառ,  
 Նախշուն բըլբուլ վըրէն թառ,  
 Երթար ու գար շորոր տար,

Սիրուն եարին օրօր տար:  
 Մեր գըրանը խընկի ծառ,  
 Մարջան բըլբուլ վըրէն թառ,  
 Գընար ու գար, շըլին տար,  
 Անուշ եարի թեւին տար:  
 Մեր գըրանը խընկի ծառ,  
 Ոսկի բըլբուլ վըրէն թառ,  
 Կարմ իր խնձոր հանէր տար,  
 Ալուան ծաղիկ տանել տար:  
 Կ. Վ.

## 3) ԹԵՒ ՊԱՐ

Շորորա՛, Անուլ ջան, Եորորա՛,  
 Անուլի Եորորով ես կորայ.  
 Անո՛ւշ, լուսնակ նորել ա,  
 Շորորա՛, Անուլ ջան, Եորորա՛:  
 Նորել՝ բակ բոլորել ա,  
 Անուլի Եորորով ես կորայ.  
 Շարան-շարան ամպի մէջ,  
 Շորորա՛, Անուլ ջան, Եորորա՛,  
 Մըտել ու մուրիել ա:  
 Անուլի Եորորով ես կորայ:  
 Վարդ եմ քաղել շաղկերով,


Վեր եմ գըրել մաղերով,  
 Մի ջուլստ շամամ եմ կորցրել,  
 Իրա կանաչ թաղերով:  
 Մամեր ունիս ծիրանի,  
 Քամին տա՛յ թել-թել անի,  
 Էդ կապուտակ ծով աչեր,  
 Ո՛ւմ խելքն ասես կը տանի:  
 Ալ վարդ բացուել է հովին,  
 Սոխակ կայնել է քովին,  
 Բացի իրնից ձեռ տալու՝  
 Մօտ չի՛ թողնում ոչ սվին:  
 Կ. Վ.

Կ Ա Ր Օ Տ

Խօսք՝ Գ. ՍԱԹԵԱՆԻ  
Andante

Երաժշտութիւն՝ ԱՇՈՏ ՍԱԹԵԱՆԻ

Թըր-է-ի ճըր-իսլ ցունէ, ուր իմ մայրն է արթուն,  
 ցես-նէ-ի այն առունէ կա-րօ-ցոյ՛ տա անհուն, որ ա-նի մի վա-րունէ  
 Չը-րե-րոյ վա-րա-րունէ կար-կա-չում էր աւ-րե-րունէ :  
 Տեւնէ-ի այն ա-ռունէ կա-րօ-ցոյ՛ տա անհուն, որ ա-նի մի վա-րունէ  
 . Չը-րե-րոյ վա-րա-րունէ կար-կա-չում էր աւ-րե-րունէ :



ԱՇՈՏ ՍԱԹԵԱՆ

Տուն կը գամ ես կրկին,  
 կը սփսփեմ քո հոգին

Թըրչէի մարտի տուն,  
 Ուր իմ մայրն է արթուն,  
 Տեսնէի այն առուն,  
 կարօտով ես անհուն,  
 Որ ամէն մի գարուն,  
 Ջրերով վարարուն,  
 կարկաչում էր սարերում :

Թեքուէի աղբիւրին,  
 կարօտած պաղ ջուրին,  
 Լինէի հանդերում,  
 Մեր կանաչ մարգերում,  
 Ուր ծաղկունքն են բուրում,  
 Ուր մանուկ օրերում,  
 Հոգն էր միշտ ինձ համբուրում :

Հայրենիքն իմ սրտում,  
 Թէ չընկնեմ ես մարտում,  
 Ա՛խ, իմ մայր թանկագին,

Համբոյրով սրտագին,  
 կը սեղմեմ քեզ իմ կրծքին :

### ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ ԵՄ

Սիրուն աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,	Խորոտ եարը միտս եմ գըցել,
Ալ կ'ուզեմ, շալ կ'ուզեմ,	Ջան, եար ջան,
Շըքեղ պալատը ես ի՞նչ կ'անեմ,	Թե՛ կըրակը միտս եմ գըցել,
Ոսկեպատ զալ կ'ուզեմ:	Էրևում եմ, եար ջան:
Բարակ մէջքիդ քիրման շալը,	Գըլուխըս դըրել եմ քարին,
Ջան, եար ջան,	Սիրաբըս լիքը արին,
Դու կ'արժես աշխարհքի մալը,	Աստուած սիրէք էս նամակը
Ջան, եար ջան,	Հասցրէք իմ եարին:
Չես հարցնի եարիդ հալը,	Բարակ մէջքիդ քիրման շալը,
Էրևում եմ, եար ջան:	Ջան, եար ջան,
Արեւն ելաւ կամար, կամար,	Դու կ'արժես աշխարհքի մալը,
Էրևում եմ քեզ համար,	Ջան, եար ջան,
Գըլխիդ բաղդադի ես կապել,	Չես հարցնի եարիդ հալը,
Մէջքիդ՝ սսկէ քամար:	Էրևում եմ, եար ջան,
Ալ ալուզը ճիտս եմ գըցել,	Էրևում եմ, եար ջան,
Ջան, եար ջան,	Էրևում եմ, եար ջան,
	Ջան...

### ԱՇԽԷՆ ՋԱՆ

Ինձմէ մի նեղընա, իմ խոգու մասը,  
 Մի՛ խաղներ, Աշխէն ջան, դու սեւ մի՛ խաղներ:

Դե՛ ֆելե, դե՛ ֆելե, Իւղաբեր,  
 Դե՛ ֆելե, դե՛ ֆելե, Լուսաբեր,  
 Դե՛ ֆելե, Աշխէն ջան:

Հանէ քու սեւերը, խաղիր ալ խասը,  
 Մի՛ խաղներ, Աշխէն ջան, դու սեւ մի՛ խաղներ:

Դե՛ ֆելե, դե՛ ֆելե, Իւղաբեր, եւ ալլն:

Աշխարհն ինչպէս բռնես, էնպէս կը գնայ,  
 Լալուդ ժամը անցաւ, հիմա էլ խընդա:

Դե՛ ֆելե, դե՛ ֆելե, Իւղաբեր, եւ ալլն:

Հան լիբասըդ, սեւերի մէջ մի՛ մնայ,  
 Մի՛ խաղներ, Աշխէն ջան, դու սեւ մի՛ խաղներ:

Դե՛ ֆելե, դե՛ ֆելե, Իւղաբեր, եւ ալլն:

## ՄԷԿՆ ԻՄ ԵԱՐԻՆ ՆՄԱՆ ՁԻ

Լուսնակը ցոլաց գընաց,  
Դէմ առաւ ամպին մընաց,  
Սըրտով սիրած անուշ հարըս,  
Ինձ թողեց հեռու գընաց:

Ա՛յ, բաղմանչի, բաղմանչի,  
Շիւ կայ՝ շիւի նման չի,  
Հարս ու աղջիկ շատ եմ տեսել,  
Մէկն իմ հարին նըման չի:

Արագ ջըրիդ եմ կարօտ,  
Բըլբուլ եմ վարդի կարօտ,  
Հեռու տեղից հարըս թող գայ,  
Քաղցըր լեզուին եմ կարօտ:

Լուսնակ, դու անցիր գընա,  
Կանգ առ ու էնպէս գընա,  
Որտեղ իմ հարին կը տեսնես,  
Բարեւ տուր, անցիր գընա:

## ԼՈՒՍՆԱԿԸ ՑՈԼԱՑ ԳՆԱՑ

(Վերի երգը՝ ուրիշ բառերով)

Լուսնակը ցոլաց, գընաց,  
Վայ, լէ, լէ, լէ,  
Ջան, լէ, լէ, լէ,  
Վայ, լէ, լէ:

Դէմ առաւ ամպին մընաց,  
Ո՛վ էր տեսել սիրած հա-  
րը մոռանայ,  
Ո՛վ մոռանայ՝ ջուխտ աչ-  
քերվո կուրանայ:

Սըրտով սիրած անուշ հարըս  
Ինձ թողեց, հեռու գընաց:

Ձեր բաղի դուռը բաց ա,

Ոտներըդ շաղով թաց ա,  
Եարիցըդ հեռացել ես,  
Աչքերըդ լիքը լաց ա:

Արտըս ցորեն ցանեցի,  
Դարդըս հեաը թաղեցի,  
Հազար ու մի աղօթքներ,  
Ցանած վախտը շարեցի:

Վարդ գըցի՝ ձեռքով բռնեմ,  
Եարալու սրտիդ մեռնեմ,  
Քէօշկիցը մի դուրս արի,  
Բալքի հավասըս առնեմ:

## ԿԱՅՆԻ ԳԱՄ

Աչքերըդ օլոր-մոլոր,  
Ման կուգաս իմ չորս բոլոր,  
Մի նայիր էդպէս մոլոր,  
Կայնի հարօ, կայնի կարօ,  
Կայնի գամ:

Ոտբոպիկ եմ, չըստերս հագնեմ,  
Կայնի գամ, կայնի գամ,  
Խաս շորերս հագնեմ, իգամ,  
Կայնի գամ, կայնի գամ:

## ՍԻՐԱՀԱՐՆԵՐ

ՏՂԱՅ.— Այ, մարալ աղջիկ, ա'յ, սիրուն աղջիկ,  
 Հէյրան հմ քեզի, դուրբան հմ քեզի,  
 Դունէն դուրս արի, քու բայըդ տեսնեմ,  
 Սէյրան հմ քեզի:

ԱՂՋԻԿ.— Ա'յ, սարի տղայ, ա'յ, սիրուն տղայ,  
 Դու բաղ չե՞ս մտել, չինար չե՞ս տեսել,  
 Գնա', հեռացիր:

ՏՂԱՅ.— Ա'յ, մարալ աղջիկ, ա'յ, սիրուն աղջիկ,  
 Սէյրան հմ քեզի, մատաղ հմ քեզի,  
 Տընէն դուրս արի, աչքերըդ տեսնեմ,  
 Հէյրան հմ քեզի:

ԱՂՋԻԿ.— Ա'յ, սարի տղայ, ա'յ, սիրուն տղայ,  
 Երկինք չե՞ս նայել, աստղեր չե՞ս տեսել,  
 Գնա', հեռացիր:

ՏՂԱՅ.— Ա'յ մարալ աղջիկ, ա'յ, սիրուն աղջիկ,  
 Հէյրան հմ քեզի, դուրբան հմ քեզի,  
 Դունէն դուրս արի, թչերըդ տեսնեմ,  
 Սիրում հմ քեզի:

ԱՂՋԻԿ.— Ա'յ, սարի տղայ, ա'յ, սիրուն տղայ,  
 Դու բաղ չե՞ս մտել, խնձոր չե՞ս տեսել,  
 Սիրում հմ քեզի:

## ՎԱՐԴՆ Ի ԲԱՑԻԷ

Վարդն ի բացէ վանայ քեաղքի էղեստար .  
 Աստուած սիրես՝ մէկ օրոխկի տեու ձիկ տար,  
 Քեա նազերով, քեա խորոտիկ, վի՞րն ես տեսու,  
 Աշխարհ գիտի, ալամ գիտի, իմն ես տեսու:

Վարդն ի բացէ առաւրտման խաւ խուսոց,  
 Իմ եար բախչէն կայնէ՝ երկու ձեռն ի ծոց,  
 Քեա նազերով, քեա խորոտիկ, վի՞րն ես տեսու,  
 Աշխարհ գիտի, ալամ գիտի, իմն ես տեսու:

Վարդն ի բացէ առաւրտման չաղերով,  
 Իմ եար բախչէն վարդ կը քաղի մաղերով,  
 Քեա նազերով, քեա խորոտիկ, վի՞րն ես տեսու,  
 Աշխարհ գիտի, ալամ գիտի, իմն ես տեսու:

(Վանայ շրջանի ժողովրդական երգ)

1) ԱՆՁՐԵԻՆ ԵԿԱԻ

Allegretto amobile

Գաշնաւորեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Անձրեւն իկաւ շաղալէն, Ուռու տերեւ դողալէն.  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛.

Ննձրեւն իկաւ շաղալէն, Նուռու տերեւ դողալէն.  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛.

Անձրեւն իկաւ շաղալէն,  
 Ուռու տերեւ դողալէն.  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,  
 լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛:

Նրբէս իկաւ իմ աղբէր,  
 Ալ ձին տակին խաղալէն:  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,  
 լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛:

Դէմ աղօթրան խաչ հանեմ,  
Թըշնամու դէմ շանչ հանեմ,  
Չեռքս գըցեմ վըզովը,  
Մի երեսը պաչ անեմ:

Խալիչէքը փըռել եմ,  
Նախշուն բարձեր դըրել եմ,  
Թառլա՛ն ջան, քեզ՝ ուտելու  
Սեր, կարագ հազըրել եմ:

Տապկած հաւի ճուտ բերեմ,  
Ոչխարի մածուն բերեմ,  
Որ գիտենաս, անո՛ւշ ջան,  
Թէ քեզ սըրտով կը սիրեմ:

Ղուշ մի դառնայ թեւաւոր,  
Դու խաղ կանչի ձեւաւոր,  
Եարա՛ր, կ'ըլնի՞ էն օրը,  
Որ գաս մեր տուն թագաւոր:

կ. վ.

## 2) ՊԱՐԵՐԳ

Փափուրի, ջա՛ն,  
Մրսայ բրլբուլի բաղը,  
Փափուրի, ջա՛ն,  
Երգեցի անուշ տաղը:

Լուսնակը շող ա քցել,  
Իմ եարը քօղ ա քցել:

Փափուրի ջան, եւայլն:

Բարակ քամին տալիս ա,

Ալ քօղը դող ա քցել:

Փափուրի ջան, եւայլն:

Ծամեր ունիս ծիրանի,  
Քամին տայ թել թել անի,  
Սիրուն աչերըդ, եա՛րօ,  
Խեղքս ու միտքըս կը տանի:

Փափուրի ջան, եւայլն:

կ. վ.

## ԱՐԱՋԸ ՆԵՇՏԱՑԵԼ Ա

Արաղը հեշտացել ա,  
Ի՞նչ ասեմ հօրըս մօրըս,  
Եաման եար, ճամբէքը կոշտացել ա.  
Եար, եա՛ր, եաման եա՛ր,  
Դարդերըս շատացել ա եար, եա՛ր:

Ծաղիկ ես բաղի միջին, եաման եա՛ր,  
Մի հատ ես թաղի միջին, եար, եա՛ր,  
Գիշեր ցերեկ, առանց քունի, եաման եա՛ր,  
Գովում եմ խաղի միջին, եար, եա՛ր:

Անցնում եմ գետի էն կուռը,  
Քաղեմ մի դաստա նուռը,  
Ով իմ սիրածն ինձ չը տայ,  
Կը քաշեմ խանի թուրը:

## ՀՈՌՈՄԵԼ Ա ԵԱՐՍ

Հոռում, Հոռում, Հոռումել ա եարս,  
Վարդը ձեռին թոռումել ա եարս.

Աղջի՛, Հոռոմ, մատանին դըրել ես,  
Նըշանուել ես, հարոյիդ խարել ես:

Հոռում, Հոռում, Հոռումել ա եարս,  
Վարդ եմ թափել, թոռումել ա եարս.

Աղջի՛ Հոռոմ, սսկեքը կապել ես,  
Նըշանուել ես, հարոյիդ խարել ես:

Հոռում, Հոռում, Հոռումել ա եարս,  
Արել սեսե՛ թոռումել ա եարս.

Աղջի՛ Հոռոմ, բաղդադին կապել ես,  
Նըշանուել ես, հարոյիդ խարել ես:

Հոռում, Հոռում, Հոռումել ա եարս,  
Նբեանուել ա, թոռումել ա եարս.

Աղջի՛, Հոռոմ, գըրողը քեզ տանի,  
Արժանի չես մի քըթոց դարմանի:

## 2) ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵԼ

Երեւան բաղ եմ առել,  
Ջան արե՛լ, արել աղբերս,  
Հոգիս մատաղ եմ արել,  
Քմ արե՛լ, արել աղբերս.

Հացըս ծիծաղ եմ արել,  
Ջան արե՛լ, արել աղբերս,  
Էլի բարեկամի մօտ,  
Իմ արե՛լ, արել աղբերս:

## 3) ՄԵՐ ԲԱՂԸ

Մեր բաղը ծառ ա,  
Չեր բաղը քար ա,  
Ես քեզ չեմ առնի,  
Իմ աղբօր ծառայ:

Մեր բաղը վարդ ա,  
Չեր բաղը յարդ ա,  
Ամէն բան գիտեմ,  
Ի գուր մի՛ ջարդա:

## 4) ԳՈՎԱԿԱՆ ԵԱՐԸ

Իմ չինար հարին,  
Իմ գոհար հարին,  
Ո՞վ է բան ասել  
Գովական հարին:

Իմ գոհար հարին,  
Իմ չինար հարին,  
Ո՞վ է բան ասել  
Գովական հարին:

# ԱՐԴԵՕՔ ԳԻՏԵՒ Մ ԴՈՒ...

(ԼԻՐԻԿԱԿԱՆ)

Խօսք՝ Գ. ՍԱՐԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ ԱՇՈՏ ՍԱԹԵԱՆԻ

Andante

Լորդ - եօք գի - րե՛ն դու, որ չե՛մ մո - ւա - - ցել, մո՛ւ աւ -

ցել - - - Ամբ՛ն, ամբ՛ն որ կա - րօ - րում ե՛մ ես. կա - րօ - րում ե՛մ ես :

Հո - ցիս թե - - ւա - - ւոր թըռչում է դար - - չել եւ ճե - :

առ - ձե - - րում որո - սում է - - - քեզ որո - ձում է քեզ: Հո - ցիս թե - ւա -

ւոր թըռչում է դար - - չել եւ ճե - - - առ - ձե - - - րում որո -

նում է - - - քեզ, ո - րո - ձում է քեզ: Ո - րո -

նում է քեզ, քե - ձան թէ ար - - թում, ար - թում, եւ թը -

նում է թէ ահա կե - րե - ւաւ, ահա կե - րե - ւաւ: Լուռ կը նա - յն

իմ աշ - խե - - քդ ժըղ - արում, իմ ւա - իմ մա - - - քուր, իմ ա -

Նուշ Ե-----բաց իմ ա-նուշ Երազ --- Լուս կը նա-յն ինչ --- աչ-ի-

ըզդ ժրդ - գուն, իմ լաւ, իմ մա--խոր, իմ ա-նուշ Ե --- բազ, իմ ա-նուշ Ե-բազ:

Արդեօք գիտե՞ս դու, որ չեմ մոռացել,  
 Ամէն, ամէն օր կարօտում եմ քեզ,  
 Հոգիս թեւաւոր թռչուն է դարձել  
 Եւ հեռուներում որոնում է քեզ:

Որոնում է քեզ՝ քընած թէ արթուն,  
 Եւ թըւում է, թէ ահա կ'երեւաս,  
 Լուս կը նային ինձ աչքերըդ ժպտուն,  
 Իմ լաւ, իմ մաքուր, իմ անո՛ւշ երազ...

### ՀԱԻԱՐ ԶՈՒԼՕ

Արեւն ելաւ կամար, կամար,  
 Զուլօն կասկեց ոսկէ քամար,  
 Ես կը մեռնեմ քեզի համար:

Հաւա՛ր Զուլօ, մադաթ Զուլօ,  
 Բացւիր, բացւիր, բացւիր,  
 Բացւիր իմ վարդ Զուլօ:

Արեւն ընկաւ ամուր բերդին,  
 Քս սէրն ընկաւ մէջ իմ սրտին,  
 Ես քեզ սիրեմ՝ թող ինձ քերթին:

Հաւա՛ր Զուլօ, մադա՛թ Զուլօ, եւայլն:

Դու դաշտ կուգաս հուլա-հուլա,  
 Կը նմանես բամբկի քուլա,  
 Աչքըս տեսաւ, սիրտըս կուլայ:

Հաւա՛ր Զուլօ, մադաթ Զուլօ,  
 Բացւիր, բացւիր, բացւիր,  
 Բացւիր, իմ վարդ Զուլօ:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Ա.

Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի քաթա շապիկ պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի մահուդ չուխա պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի մահուդ շալվար պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի քիրման գօտիկ պիտի:

Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի ջուխտ լաւ գուլպայ պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի ջուխտ լաւ կօշիկ պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի բուխար գըլխարկ պիտի:  
 Մեր թագւորին ի՞նչ պիտի:  
 — Մի լաւ խաս փէշքիբ պիտի:

Բ.

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորամէր,  
 Որ գայ, նըստէ, դարբաս անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Հրամէ բարին մեր թագւորին:

Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորահէր,  
 Որ գայ բանայ դուռ մաղազին,  
 Հանէ զխազփոկ նոր, պահունի,  
 Բերէ, բաշխէ մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորամամ,  
 Որ գայ, նըստէ, դարբաս անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Հրամէ բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորապապ,  
 Որ գայ, նըստէ, դարբաս անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Հրամէ բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորաղբէր,  
 Որ գայ, նըստէ, դարբաս անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Հրամէ բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորաքոյր,  
 Որ գայ նըստէ, դարբաս անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Հրամէ բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք թագւորաքաւոր,  
 Քառսուռն քիսա առնէ, բերէ,  
 Այս թագ դընէ առնէ, տանէ,  
 Բերէ, բաշխէ մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք կռուսկն իչոլէն,  
 Որ գայ, նըստէ, սէյրան անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Աստծու բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք, բազն ի գեօլէն,  
 Որ գայ, նըստէ, սէյրան անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Աստծու բարին մեր թագւորին:

Գացէ՛ք, բերէ՛ք, կաքաւն ի  
 քարէն,  
 Որ գայ, նըստէ, սէյրան անէ,  
 Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,  
 Աստծու բարին մեր թագւորին:

Գ.

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,  
 Պըսակն էր կարմիր,  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,  
 Շապիկն էր կարմիր,  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,  
 Չուխան էր կարմիր,  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,

Շալվարն էր կապոյտ,  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,  
 Գօտին էր կարմիր:  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Խաչվառ խաչ ու մաչ,  
 Գուլպան էր նախշուն,  
 Արեւն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ,  
 Հայոց խաչ ու մաչ,  
 Ձիուկն էր հրեղէն,  
 Թագւորն էր վրէն:

Դ.

է՛ն դիզան, պէտ պէտ դիզան,  
 Տեսէք, էն ո՞րն է:

— է՛ն դիզան, պէտ պէտ դիզան,  
 Գեղի համբէքն է:

Կաքըւներ կըղկըղալէն՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— Կաքըւներ կըղկըղալէն՝  
 է՛ն երիցներն է:

Ճընճուղներ ճըլվըլալէն՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— Ճընճուղներ ճըլվըլալէն՝  
 է՛ն տիրացուքն է:

է՛ն միջի հաստագերան՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— է՛ն միջի հաստագերան՝  
 Թագւորի հէրն է:

է՛ն քուլա բամպակն ի ծակ՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— է՛ն քուլա բամպակն ի ծակ՝  
 Թագւորի մէրն է:

է՛ն արեւ, երկնուց արեւ՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— է՛ն արեւ, երկնուց արեւ՝  
 Մեր թագաւորն է:

է՛ն լուսին՝ ամպերի տակ՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— է՛ն լուսին ամպերի տակ՝  
 Մեր թագուհին է:

Շունն եկաւ պարկն ի բերան՝  
 Տեսէք, էն ո՞րն է:

— Շունն եկաւ պարկն ի բերան՝  
 Գեղի գըզիրն է:

Ե.

(Փեսայի տան առաջ երգուած)

- Թագաւորի մէ՛ր, դո՛ւս արի,
- Տե՛ս, քե, ինչե՛ր ենք բերե.
- Թագաւորի մէ՛ր, դո՛ւս արի,
- Քե գլուխ դըմբող ենք բերե.
- Քէ լուաց արող ենք բերե.
- Գըրդնակ կարող ենք բերե.
- Քե տախտ աւլող ենք բերե.
- Քէ տաշտ մաքրող ենք բերե.
- Քե հաց թըխող ենք բերե.
- Ոջիլդ կտարող ենք բերե.
- Ծամ իստըկող ենք բերե.
- Կարկտան արող ենք բերե.
- Սուեր շիակող ենք բերէ.
- Բուրդի գըզող ենք բերե.
- Չախրակ մանող ենք բերե:

4. 4.

ՏՈՒՆ ԱՐԻ, ՏՈՒՆ ԱՐԻ

- Ամպել ա, ձիւն չի՛ գալի,
- Մըթնել ա, տուն չի՛ գալի,
- Հեռու ճանապարհի ես,
- Աչքերիս քուն չի գալի:
- Կանչում եմ, կանչում եմ,
- Եա՛ր, արի՛, եա՛ր,
- Մուքն քնկաւ, տո՛ւն արի,
- անջիգեա՛ր եար:
- էս գիշեր կ'անցնի գըժուար,
- կ'երթայ բարակ ու երկար,
- Իմ ըս, որ ա՛խ ու վախով,
- Քոնըդ ի՞նչպէս կ'անցնի, եա՛ր:
- Չորերն ի վեր հանդեր ա,
- Չուրը տունըս քանդեր ա:
- Շո՛ւտ արա, յետ դարձիր, ե՛կ,
- Սիրածըդ տունն անտէր ա:
- Ծաղիկ ես բաղի միջին,
- Մի հատ ես թաղի միջին,
- Գիշեր ցերեկ առանց քուն,
- Գովում եմ խաղի միջին:
- Երգ ասեմ կօթն ոտանի,
- Մենակ քունըս ո՞նց տանի,
- էգուց արի՛ մեր տունը,
- Մատիդ շարեմ մատանի:

ԴԵՐՋԱՆԻ ԵՐԳ

- Արեւը կեռ ու կամար,
- Ես մեռնիմ պոյիդ համար,
- Եօթը տարի մնացի՛
- Մինակ քու խաթրիդ համար:
- Կայնել ես էլի դուներ,
- Տար արածէ մեր գառնուկներ,
- Խային, դու ինձ թողեր ես՝
- էլին ետխան փակեր ես:
- Լուսինին լոյսը ես եմ,
- Ծովերուն ձուկը ես եմ,
- Գիշերուայ փախչող աղջիկ,
- Հետիդ ընկերը ես եմ:
- Քէնկէլդ թափ ես տալիս,
- Չեռներդ ծափ ես տալիս,
- Ես որ եկայ այս գիշեր,
- Ամէն օր խաբ ես տալիս:
- Շիմշիբ դըգալ Շիրուանի,
- Հովը մէկ մէկ կը տանի,
- Մաիկ ըրէք մայրիկներ,
- Սաւտաս համան կը տանի:



ՅՈՒԱԿԻ

Ամպի մէջ լորիկ թըռաւ,  
 Յոլակ ջան, ցոլ տու գընա,  
 Քո սէրն իմ սըրտիս դիպաւ,  
 Կընկադ հետ եօլա գընա:

Ամպել ա ամպի տակը,  
 Յողիկ ջան, ցոլ տու գընա,  
 Թեւըս դիր գըլխիդ տակը,  
 Մարդիդ հետ եօլա գընա:

Գութանը մանի, մանի,  
 Յոլակ ջան, ցոլ տու գընա,  
 Անուշ քունըս կը տանի,  
 Կընկադ հետ եօլա գընա:

Գութանը ման եմ տըւել,  
 Յողիկ ջան, ցոլ տու գընա,  
 Սիրել եմ, ջան եմ տըւել,  
 Մարդիդ հետ եօլա գընա:

Իմ դէյրէն ալ վարդերով,  
 Յոլակ ջան, ցոլ տու գընա,  
 Եարըս եկաւ արտերով,  
 Կընկադ հետ եօլա գընա:

Քո դէյրէն ալ ու չիթ ա,  
 Յողիկ ջան, ցոլ տու գընա,  
 Ես կ'ուզեմ, հերըդ չի տայ,  
 Մարդիդ հետ եօլա գընա:

Ծառի տակին հով քամի,  
 Յոլակ ջան, ցոլ տու գընա,  
 Ով սիրել ա թող տանի,  
 Կընկադ հետ եօլա գընա:

Յողիկ ջան, ցոլ տու գընա,  
 Մարդիդ հետ եօլա գընա,  
 Յոլակ ջան, ցոլ տու գընա,  
 Կընկադ հետ եօլա գընա:

ՋԱՂԱՅՍ

Ջաղացըս պատիկ-պատիկ,  
 Աչքերը նըռան հատիկ,  
 Ամէն քեզի տեսնելիս,  
 Հա՛մ Համբարձում, հա՛մ Ջատիկ:

Ջաղացըս մանի-մանի,  
 Անուշ քունըս կը տանի,  
 Իմ եարը հանդում, չոլում,  
 Իմ քունը ս'նց կը տանի:

Ջաղացըս ման եմ տըւել,  
 Սիրել եմ, ջան եմ տըւել,  
 Եօթը տարի սիրութիւն,  
 Մէկ օր պայման եմ տըւել:

ՍԱՓՈՐՆ ՌԻՍԻՍ

Սափորն ուսիս դրի,  
 Ջա՛ն, եարօ՛ ջան.  
 Երթամ աղբիւրը ջրի.  
 Ջա՛ն, եարօ՛ ջան.

Ինչ փուշ գայ իմ առջիւը,  
 Ջա՛ն, եարօ՛ ջան.

Չար աչքի սըրտով խըրի:  
 Ջա՛ն, եարօ՛ ջան,  
 Ջա՛ն, եարօ՛ ջան,  
 Ես սիրեցի ես առայ:

Արեւը մէրը մըտաւ,  
 Սիրունը տէրը գտաւ,  
 Օտարի վատ խօսքերը  
 Իրանց սըրտի մէջ վըտաւ:

Աշխարհի մէջ տէր ունիմ,  
 Եարիս վըրայ սէր ունիմ,  
 Ճակատը բաց՝ խօսքի տէր,  
 Ինձի պահող հէր ունիմ:

**ԵՍ ԱՂՋԻԿ ԵՄ**

Ես աղջիկ եմ, հէր չունիմ,  
 Վա՛յ, | Է, | Է, | Է, | Է, | Է,  
 | Է, | Է, | Է, | Է,  
 Մի սրբտացաւ տէր չունիմ,  
 Վա՛յ, | 0, | 0, | 0, | 0, | 0,  
 | 0, | 0, | 0, | 0,  
 Հօրից, մօրից զըրկըւած՝  
 Վա՛յ, | Է, | Է, | Է, | Է, | Է,  
 | Է, | Է, | Է, | Է,  
 Աշխատող աղբէր չունիմ,

Վա՛յ, | 0, | 0, | 0, | 0, | 0,  
 | 0, | 0, | 0, | 0:  
 Ղարիբ հաւքը բուն չունի,  
 Որբ աղջիկը տուն չունի,  
 Ինձ նըման սեւաքախտը  
 Աշխարհքումըս ի՞նչ ունի:  
 Ծագեց արեւը սարէն,  
 Կանչեց կաքաւը քարէն,  
 Սիրածս է՛ն ա, ինձ տըւէք,  
 Լաւանայ սըրտիս հարէն:

4. 4.

**ԲԱԼԱ ՇԻՐԻՆ**

Քանաքեռ բարձր տեղ ա,  
 Բայա շիրին, ամման ամման,  
 Զուրը հիւանդի դեղ ա,  
 Թառլան շիրին, ամման ամման,  
 Բայա շիրին, ամման ամման,  
 Սիրած սիրածին չեն տայ,  
 Էս ի՞նչ անօրէն գեղ ա:

Ա՛յ տղայ սեւ չուխաւոր,  
 Սաղմոսը ծոցիդ սաւոր,  
 Էրնէկ կը տամ է՛ն օրը՝  
 Մեր տունը գաս թաղաւոր:  
 Ա՛յ տղայ, բաղսմէ արի՛,  
 Ոտներդ շաղսմէ արի՛,  
 Էս թաղը դալմաղալ ա,  
 Ման տուր՝ է՛ն թաղսմէ արի՛:

**ՈՒՌԻ ԵՍ**

Ուռի ես կռանալ մի՛,  
 Մեր տընից հեռանալ մի՛,  
 Վա՛յ. | Է, | Է, | Վա՛յ, | Է, | Է,  
 Վա՛յ, | 0, | 0, | ջան:  
 Թէ Աստուածդ կը սիրես,

Սիրել ես՝ մոռանալ մի:  
 Հեռու կաց, հեռու սըրտէս,  
 Ճընճըրկի թեւ ա սիրտըս,  
 Քանց վարդը կարմիր չկայ,  
 Բաց անիմ՝ սեւ ա սիրտըս:

**ՂԱՐԻԲ ԵՄ**

Ղարիբ եմ կարս գընացի.  
 Ղարիբ տեղ հարս գընացի.  
 Մայրի՛կ ջան:  
 Փսքրուց ես օր չը տեսայ,  
 Անկեսուր հարս մնացի:  
 Մայրի՛կ ջան:  
 Ղարիբ եմ, տեղըս քար ա,  
 Ղարիբութիւն գըժուար ա,  
 Աստուած սիրէք, բան չասէք,

Ղարիբն էս ի՛նչ անճար ա:  
 Ես ղարիբ եմ՝ ջուր չըկայ:  
 Սարերին աղբիւր չըկայ,  
 Վախենամ ղարիբ մեռնեմ,  
 Վըրէս մեր ու քուր չը գայ:  
 Սեւ եմ, սեւաւոր հաւք եմ,  
 Դեղին թեւաւոր հաւք եմ,  
 Ինձ մի բա՛ց թողէք, թըռչեմ,  
 Երամի սովոր հաւք եմ: 4. 4.

### ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

(Երգուած՝ կալուածոց գրաւման առթիւ)

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԻ.

Ծիրան էի ծառ բա՛ր մի տա՛յ Վայ Վայ  
 Ճըղնե՛րդ ի՛րա՛ր մի տա՛յ Վայ Վայ  
 Ես քա՛նի բազի՛ն մա՛ն գամ,  
 ցա՛ւն ըն՝ ս ի՛րա՛ր մի՛ տայ.  
 Իս տը՛ւէ՛ք յնտ տը՛ւէք, սա՛ ընդ  
 Գը՛նայ էլ յնտ ջը՛գայ էս տար՛ն  
 Իտն ըն՝ կաւ, սըր տի՛ս ինն՝ գամն ծովն ըն՝ կաւ  
 ւան տա՛րին. սե՛ր գարգծ՝ իմ՝ վը՛զովն ըն՝ կաւ  
 Իտ՛վ, Իտ՛վ, Իտն ըն՝ կաւ, սըրտիս ինն՝ գամն ծովն ըն՝ կաւ:

Ծիրանի ծառ, բար մի՛ տայ,  
 Վայ՛,  
 Ճըղներդ իրար մի՛ տայ,  
 Վայ՛,  
 Ես քանի բազին ման գամ,  
 Յաւերըս իրար մի տայ:  
 Հա՛, սրե՛ք, յե՛ս սրե՛ք  
 Սարերն հովն ընկաւ,  
 Սրսիս խրեղումն ծովն ընկաւ.  
 Գրեայ, էլ յե՛ս չը գայ  
 Էս տարուայ տարին,  
 Սեւ գարգն իմ վրովն ընկաւ:  
 Հս՛վ, Իտ՛վ, հովն ընկաւ,  
 Սրսիս խրեղումն ծովն ընկաւ:

Մեռայ բազում բանեղէն,  
 Մի կողմէն ջուր անեղէն,  
 Ծառ՝ ինն թուփ չը մնաց,  
 Դարդիս գարման տանեղէն:  
 Սեւ ամպը գրցել ա հով,  
 Մութը արեւել ա իմ քով,  
 Տեսնում էք՝ ինձ պատել ա  
 Էս անիրաւ արիւն ծով:  
 Նըստած տեղիս քար չունիմ,  
 Էրուած սըրտիս ճար չունիմ,  
 Ա՛յ անօրէն, փուչ աշխարհ,  
 Բազ ունիմ սե բար չունիմ:



ԱՇՈՒՂ, ՋԻԻԱՆԻ

### ԿՈՒԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ

Չախորդ օրերը ձրմբան նըման կուգան ու կ'երթան,  
 վըհատելու չէ, վերջ կ'ունենան, կուգան ու կ'երթան.  
 Դառըն ցաւերը մարդու վերայ չեն մընայ երկար,  
 Որպէս յաճախորդ՝ շարուէ-շարան կուգան ու կ'երթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,  
 Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կ'երթան.  
 Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
 Որքան մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կ'երթան:

Ո՛չ ուժեղը թող պարծենայ և ո՛չ տրկարը տըխրի,  
 Փոփոխակի անցքեր զանազան, կուգան ու կ'երթան.

Արեւը առանց վախելու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կ'երթան:

Երկիրը ուսեալ զաւելին է փայփայտում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական, կուգան ու կ'երթան,  
Աշխարհը հիւրանոց է, Զիւա'ն, և մարդիկը հիւր,  
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կ'երթան:

ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

### ԸՆԿԵՐԸ

Բարի գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,  
Որ փայլեցնէ արեւի պէս պատկերը մարդուն:  
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր,  
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Ընկեր իմաստուն, աստուածավախ, ճշմարիտ ընկեր,  
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:  
Կեանքդ նուիրես ընկերիդ լաւին, քիչ է դարձեալ,  
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:

Թշնամիները իր վրայ քալած ժամանակը,  
Կտրիճ, հարազատ ընկերն է՝ սուսերը մարդուն:  
Ինչ մարդ ունենայ մտերիմ ընկեր, Աշուղ Զիւանի',  
Չի ըսպիտակիր ամենեւին մէկ հերը մարդուն:

ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

### ԻՄ ԶԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Արեւ թըռվըռով ելաւ,

Իմ չիւարի եար:

Մեր բանը կըռուով ելաւ,

Պարդիման եար:

Թըշնամու սրգին մեռնի,

Իմ չիւարի եար:

Իրա չար սըրտով ելաւ,

Պարդիման եար:

Իմ չիւարի եար, իմ չիւարի  
եար,

Իմ չիւարի եար, գովական  
եար:

Ճըրագը վառայ, վառայ,  
Հօր հետ վատամարդ դառայ,  
Մէր ու ազրէր թող տըւի,  
Ես իմ սիրածին առայ:

Քարափի ծէրին կանչի,  
Թո՛ղ թշնամի՛ն ամաչի,  
Արեւի՛դ մեռնիմ, եա՛ր ջան,  
Չիւարի պէս կանաչի՛:

ԱԼ ՈՒ ԱԼՈՒԱՆ

Ալ ու ալուան ես հագել  
 կարմիր լալա ես թառել,  
 ինձ ասա, գլխիդ մատաղ,  
 իշխիկըդ ո՞վ է կարել:

Ախպեր ջա՛ն, քեզ դուրպան,  
 Դու ես, դո՛ւ, մեր գիւման:

Ձեռքըդ թըվանք ես առել,  
 Տուշմանի դէմ ես կանգնել,  
 Սուրայի կլոր մէջքըդ  
 Փամփուշաներով ես ծածկել:

Ախպեր ջա՛ն, քեզ դուրպան,  
 Դու ես, դո՛ւ, մեր գիւման:

Մէջքըդ կապել ես խանչալ,  
 Տօթիդ նախշածն է խալ խալ,  
 Գօտիդ խանչալին մատաղ,  
 Կերածըդ կաթը հալալ:

Ախպեր ջա՛ն, քեզ դուրպան,  
 Դու ես, դո՛ւ, մեր գիւման:

Առիւծի պէս կանգնել ես,  
 Պեխերըդ ոլորել ես,  
 Սեւ, թուխ պեխերիդ մատաղ,  
 Յաղթանակը տարել ես:

Ախպեր ջա՛ն, քեզ դուրպան,  
 Դու ես, դո՛ւ, մեր գիւման:

ԿԱՔԱԻՒ ԵՐԳ ՎԱՆԵՑՈՑ

Ա՛յ խորոսիկ, խորոսիկ,  
 Ա՛յ սիրունիկ կեաքեալիկ:  
 Արեւ դէպաւ սարի վերէն,  
 Կեաքեաւն էլաւ իր բեօնէն,  
 Բարեւ արեց ծաղկըններէն,  
 Թռաւ, էլաւ սարին վերէն:  
 Ա՛յ խորոսիկ... եւայլն:  
 Երբ կեաքէւուն ձայն կը լսեմ,

Երգիսն ի վեր տիւս կ'երիշկեմ,  
 Կեաքեաւ կիւզեալ կըռկըռալով,  
 Քեարին վերէն շորշորալով:  
 Ա՛յ խորոսիկ... եւայլն:  
 Քեօ բեօն հինած ծաղկըններով,  
 Ռըհան, նարկիզ, նունուֆարով,  
 Քեօ տեղ լցուած է շաղերով,  
 Դիւ կը մայլիս անմահ հոտով:  
 Ա՛յ խորոսիկ... եւայլն:

## ԵԱՐԻՍ ԵՄ ԳՈՎՈՒՄ

Սիրուններ միք նեղանայ,  
Որ միշտ իմ եարիս եմ գովում,  
Դուք իմ դարդը չէք իմանայ,  
Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Որքան կ'ուզէք զարդարուէք  
Ալ ու եէշիլ գոհարներով,  
Եարբս՝ սեւ, դուք ալ հագէք,  
Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Մազերըդ սսկի թեւ ա,  
Ունքերըդ նորածին լուսին,  
Աչքերըդ փայլուն ասաղեր,  
Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Թէկուզ լինէք աղաւնեակ,  
Ձեր նաշխընիկ փետուրներով,  
Ճախրելով վեր բարձրանաք,

Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Թէկուզ լինէք սիրամարգ,  
Ձեր շողշողուն փետուրներով,  
Թռնելով վեր բարձրանաք,

Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Ամէնքըդ մէկ մէկ փէրի,  
Աչքիս առաջ ման էք գալի,  
Դուք իմ եարին չէք նմանի,  
Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

Ո՛վ է ասում եարն ի՞նչ է  
Առանց եարի մարդն ի՞նչ է,  
Եար չունեցողը ոչինչ է,  
Էլի եարիս եմ գովում,—

Բալէ ջան, բալէ ջան,  
Եարիս եմ գովում:

ԱՆՈՒՎ ԵՆՐԱՄ

## ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարէն կուգայի՝  
Դուն գսւոք բացիր,  
Ձեռըդ ծոցըդ տարար՝  
Ա՛խ արիր, լացիր:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառւում եմ,  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալւում եմ,  
Հալւում եմ, վառւում եմ:

Ես մի պինդ պաղ էի՝  
Դու մըմմուռ լացիր,  
Քո հրեղէն արցունքով

Ինձի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի՝  
Դու գարնան արեւ,  
Քո սիրով ծաղկեցաւ  
Իմ ճիւղն ու տերեւ:  
Թէ ինձ չէիր առնի՝  
Ինչո՞ւ սիրեցիր:

Մի բուռ կըրակ եղար՝  
Սիրաբոս էրեցիր:

ՈՍԿԷ ՄԱՏՆԻՔ

Պարտէզ ունիմ գը—բախտածաղիկ ծաղկունքի վախտ ա  
 Գէշ-աղջիկ, սի—րուն տըղայ, էս էլ մի--- ուրիշ բախտ ա:

Պարտէզ ունիմ գըբախտ ա,	Ոսկէ մատնիք մատներիս,
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա,	Շողքըն ընկաւ երեսիս,
Գէշ աղջիկ, սիրուն տղայ,	Աքլոր շուտով մի' կանչի,
էս էլ մի ուրիշ բախտ ա:	Անքուն կանես իմ հարիս:

ՀՕՅ ԵԱՐ

Հօ՛յ եար, ամպիլ ա ձուն չի գալի,  
 Հօ՛յ եար, մթնիլ ա տուն չի գալի.  
 Հապօ՛ն, գոնա, ես չեմ գոնա,  
 Դու գոնա, գոնա, գոնա:  
 Հօ՛յ եար, էս անտէր բարձի վրայ,  
 Հօ՛յ եար, առանց եար քուն չի գալի.  
 Հապօ՛ն, գոնա, ելլն.:  
 Հօ՛յ եար, ա՛յ աղջի, ասա՛ մասա,  
 Հօ՛յ եար, ծամերիդ տէրը խաս ա.  
 Հապօ՛ն, գոնա, ելլն.:  
 Հօ՛յ եար, թուշըդ դէս արա՛ պաչեմ,  
 Հօ՛յ եար, վաղի, գընա՛, մօրդ ասա՛.  
 Հապօ՛ն, գոնա, ելլն.:

ԱՐԵՒՐ ՆՈՐ ԾԱԳԵԼ Ա

Արեւը նոր ծագել ա,	Հազար տղայ ինձ ուզի,
Աիրած եարբս եկել ա:	Ես ուրիշին չեմ ուզի:
Շողով շողով իմ եարբ,	Շողով շողով, ելլն.:
Բոյով սոյով իմ եարբ:	Դարդը սրտից չեմ հանում,
Աչերիդ եմ կարօտել,	Քեզ մտահան չեմ անում:
Գծի նման եմ դառել:	Շողով շողով, ելլն.:
Շողով շողով, ելլն.:	

ԱՂՋԿԱՅ ԳՈՎԱՍԱՆՔ



Աղջի, հարսնառդ եկաւ  
 վերի կալերէն,  
 Քեզի հինա բերեց  
 Թղթի ծալերէն:  
 Աղբէր, արի՛ աղբէր,  
 Եզները բառնանք,  
 Էրթանք զարիբ երկիր,  
 Թէզօք յետ դառնանք:  
 Կանչէ՛, կըռուենկ, կանչէ,  
 Քանի գարուն է,

Ղարիբների սիրաը  
 Գունդ գունդ արուն է:  
 Կանչէ, կըռուենկ, կանչէ,  
 Չէնըդ բարակ է,  
 Եարիս լեզուն թագա  
 Մեղրած կարագ է:  
 Կըռուենկ, եղած տեղըդ  
 Չայիր—չիման է,  
 Աշխարհքը արեգակ՝  
 Ինծի դուման է:

ԿԱՐԳԱ՛ ԶԻՍ

Նանի՛, բարօ՛, կարգա՛ զիս,  
 Գէօլի կըռուենկ յերկէն վիզ,  
 Թուճար մարդուն մի տար զիս,  
 Կ'երթայ չարչին մոռնայ զիս:  
 Նանի՛, բարօ՛, կարգա՛ զիս,  
 Գէօլի կըռուենկ յերկէն վիզ,  
 Թէրզի մարդուն մի՛ տար զիս,  
 Կառնայ ասեղ խըշտայ զիս:  
 Վարժապետի մի՛ տար զիս,  
 Կ'երթայ դպրոց մոռնայ զիս,  
 Շալճի մարդուն գեո տուր զիս,  
 Թալա մըքուք գրկայ զիս:

ԿԱՅՆԷ ՄԷԿ ՍԷՅՐ ԱՆԵՄ

Սեւ սեւ աչերիդ զուրբան,  
 Երկէն սաղերիդ զուրբան,  
 Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ,  
 Անուշ պաչերիդ զուրբան:  
 Կոկուել ես կ'երթաս սէյրան,  
 Համ թառլան ես, համ ջէյրան,  
 Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ,  
 Մնացի ջանիդ հէյրան:  
 Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ,  
 Բաղը լիքն է վարդերով,  
 Սիրաըս լիքն է դարդերով,  
 Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ:

# 1) ԱԼԱԳԵԱԶ ԲԱՐՁՐ ՍԱՐ Ա

Andante

Չայնագրեց՝ Գ. ԿՒՆԻՎԱՐԵՆՑ

1. Ա-լա-գեազ թար-ծր տա-րա նար ա-ման, Ջու-րը հի-ւանդի շա-րա նար:  
 2. Աի-րած սի-րա-ծի չեն տայ նար ա-ման, էս ինչ ա-նօրէն դար ա նար

Ես սի-րե-ցի վա՛յ խալխը տա-րաւ իմ ա-նուշ նա-րը  
 Թէ որ չառնեմ վա՛յ ես կը մեռ-եմ, իմ սի-րած նա-րը:

Allegro

Ի՞նչ նար ծա-մեր ու-նիս ծի-րա-ծի, հա-ղօն գոն տա, ես չեմ գոն տա  
 Չան նար հո-ւր թե՛լ թե՛լ կը տա-նի:


գոն գոն տա գոն տա գոն տա . գոն գոն տա գոն տա գոն տա

Ալագեազ բարձր սար ա, հա՛ր աման,  
 Ջուրը հիւանդի ծար ա, հա՛ր:  
 Ես սիրեցի, վա՛յ խալխը տարաւ իմ անուշ կարը,  
 Թէ որ չառնեմ, վա՛յ ես կը մեռնեմ, իմ սիրած կարը:  
 Սիրած սիրածի չեն տայ, հա՛ր աման,  
 էս ի՞նչ անօրէն դար ա հա՛ր:  
 Ես սիրեցի, վա՛յ խալխը տարաւ իմ անուշ կարը,  
 Թէ որ չառնեմ, վա՛յ ես կը մեռնեմ, իմ սիրած կարը:

## 2) ՀԱՊՕՆ ԳՈՆՏԱ

Հօ՛յ նար,  
 Ծամեր ունիս ծիրանի,  
 Հօ՛յ նար,  
 Հովը թե՛լ թե՛լ կը տանի,  
 Հապօն գոնա, ես չեմ գոնա, դու գոնա,  
 Գոնա, գոնա:  
 Հօ՛յ նար.  
 Աչեր ունիս գեղանի,  
 Հօ՛յ նար.  
 Ծուրթեր ունիս նրբինի,  
 Հապօն գոնա, ես չեմ գոնա, ելլե՛:

ՎԱՐԱԳԻ ՄԷՋ ՀԵՐԿ ԸՆՈՂՆԵՐ



«ՀՕՂ, ԱՐԱ, ԵԶԸ, ԶԱ՛Ն, Ա՛ՂԲԷՐ, ԶԱ՛Ն, ՀՕ՛»...

1) ԿԱԼԵՐԳ

Հօ՛, ոօ՛լ, օ՛, յօ՛, յօ՛, յօ՛.  
 Ա՛րի, ա՛րի, քե՛ մատաղ,  
 Հօ՛, Ե՛զր ջա՛ն,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛:  
 Հա՛, կա՛լ արա, մա՛ն արա,  
 Հօ՛, Ե՛զր ջա՛ն,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛:  
 Հա՛, կալը դարման արա  
 Հօ՛, Ե՛զր, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛վել, հօ՛,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛:  
 Յորենն ինձ, դարմանը քեզ,  
 Հօ՛, Ե՛զր, ջա՛ն,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛,  
 Հօ՛, ոօ՛վել, հօ՛:  
 Հաշանը դարման արա.  
 Պոե՛րե, հօ՛մ, պոե՛,  
 Պոե՛րե, հօ՛մ, պոե՛,  
 Պոե՛րե, ջա՛ն:

2) ՍԱՅԼԵՐԳ ՂԱԶԱԽ ԳԱԻԱՌԻ

Հօ՛լ արա գո՛մէշ, ջա՛ն,  
 Հօ՛լ արա գո՛մէշ, ջա՛ն,  
 Հօ՛լ արա գո՛մէշ, ջա՛ն,

Հսօլօ՛, հոօ՛լօ՛, հոսլօ՛, հօ՛,  
 Հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ել,  
 Հօ՛, ջա՛ն, հօ՛:

Թօ՛ւ արա, գո՛մէշ, ջա՛ն,                      Հոօյօ՛, հոօյօ՛, հոօյօ՛, հօ՛,  
 Թօ՛ւ արա, գո՛մէշ, ջա՛ն,                      Հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ել-  
 Թօ՛ւ արա, գո՛մէշ, ջա՛ն,                      Հօ՛, ջա՛ն, հօ՛:

3) ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ՋՈՐԻ

հօլ արա ե-զը. ջան ար-դեր. ջան հօ. Թօլ արա ե-զը,  
 ջան ար-դեր, դե. սիրուն. ել. ել. ել. ել. դե Սիրուն. ել. ել.  
 ել. ել. դե. սիրուն. ել. ել. ել. ել. հօ-----:

Հօ՛ւ արա, եզը,  
 Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛,  
 Թօ՛ւ արա, ե՛զը,  
 Ջա՛ն, աղբէր.  
 Դե՛, սիրուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,  
 Դե՛, ծի՛րան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,  
 Դե՛, սոկա՛ն, ե՛լ, ե՛լ. ե՛լ, ե՛լ, հօ՛:  
 Հօ՛ւ արա ազը,  
 Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛.  
 Թօ՛ւ արա ազը,  
 Ջա՛ն, ա՛ղբէր.  
 Դե՛, սիրուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,  
 Դե՛, ծի՛րան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,  
 Դե՛, սո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հօ՛:

4) ՍԱՅԼԵՐԳ

Մարալ գոմէշ, նա՛զ կանէ,  
 Դե՛, ե՛լ, ե՛լ. դե՛, ե՛լ. ե՛լ. դե՛, ե՛լ, ե՛լ,  
 Պոչը փաթթէ՛ թօզ կ'անէ,  
 Դե՛. ե՛լ, ե՛լ, դե՛, ե՛լ, ե՛լ. դե՛, ե՛լ, ե՛լ,  
 Մարալ գոմէշ նա՛զ կանէ,  
 Զիպոտ կ'ուտէ վազ կանէ:

# 1) ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Naturale



Կուժն առայ, ելայ սարը,  
 Չը գըտայ ֆիդան եարը,  
 Ֆիդան եարը ինձ տըւէք,  
 Չը քաշեմ ահուզարը:  
 Մեծ սարի հովին մեռնեմ,  
 Շէկ արդի բոյին մեռնեմ,

Մի տարի ա չե՛մ տեսել,  
 Տեսնողի աչքին մեռնեմ:  
 Բըլբուլը դարի վերայ,  
 Խընձորը ծառի վերայ,  
 Սիրած սիրածի տային,  
 Չոր գեանին՝ քարի վերայ:

4. 4.

# 2) ՍԱՐԷՆ ԵԼԱԻ

Սարէն ելաւ երկու մուխ,  
 Բոյիդ մեռնեմ,  
 Մինը հանգ ա, մինը ծուխ,  
 Սոյիդ մեռնեմ,  
 Երկու սիրուն երեւաց,  
 Բոյիդ մեռնեմ,  
 Մինը շէկ ա, մինը թուխ,  
 Սոյիդ մեռնեմ:

Կապոյտ քուռակն առել ա,  
 Ոսկի սարքը ճարել ա,  
 Դէմի կանաչ սարի լանջ,  
 Արեւի պէս վառել ա:  
 Իմ եարն ա շատ խորոտիկ,  
 Մէջքին ա ոսկի գօտիկ,  
 Աստուած սիրէք, աղբըրտիք,  
 Ինձ տարէք եարիս մօտիկ:

4. 4.

# 3) ՍԻՐԵՐԳ

Գնա՛, գնա՛, հետիդ եմ,  
 Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,  
 հա՛, հա՛, հա՛,  
 Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,  
 Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,  
 Կարմիր խնձոր՝ գօտիդ եմ,  
 Հա՛, եա՛րին, օ՛, եա՛ր ջան,  
 Սա՛րին, օ՛, եա՛ր ջան:  
 Դու ինձ էստեղ շես թողնի,

Որտեղ երթաս մօտիդ եմ:  
 Աբարանը քարոտ ա,  
 Քարի տակըն արօտ ա,  
 Ուղիդ եօթը տարի ա,  
 Քիրն աղբօրը կարօտ ա:  
 Եար եմ գըտել՝ նառի պէս,  
 Ընկուզենի ծառի պէս,  
 Ուր որ երթայ կայնել եմ,  
 Էն մեր սիրուն սարի պէս:

4. 4.

## ԴՈՒՆ ԵՍ ԻՄ ՍՐՏԻ ՍԷՐԸ

Դու՛ն ելեր ես սարը սէյրան,  
 Կը նըմանիս չոլի ջէյրան,  
 Ջահէլ տըղէն քեզի հէյրան.  
 Կայնի, սէյր անեմ, սէյր ա՛նեմ,  
 Քեզի հէյրան եմ, հէյրան եմ:

Դու՛ն ես իմ սըրտի սէրը:

Դու՛ն ես իմ դեղն ու ճարը:

Դու՛ն ման կուգաս վերի, վերի,  
 Կըրակն ընկել սիրտըս կերի,  
 Ջահէլ տըղին էրիբ դերի,  
 Քեզ եմ կանչում, էս դին արի,  
 Խնայիր ինձ, մի չարչարի:

Դու՛ն ես իմ սըրտի սէրը,

Դու՛ն ես իմ դեղն ու ճարը:

Դու՛ն կայնել ես լըւացք կանես,  
 Սիպտակ կըռներըդ բաց կանես,  
 Ինձ տեսնելիս սուտ լաց կանես,  
 Հոգիս ի գուր կը վըրդովես,  
 Հերիք է հալ ու մաշ անես:

Դու՛ն ես իմ սըրտի սէրը,

Դու՛ն ես իմ դեղն ու ճարը:

## ԱՅ, ՄԱՐԱԼ ԱՂՋԻԿ

Դու խօսք տըւիր ինձանից չըգատուէիր,  
 Թէ գատուէիր, հախ տիրոջմէն գատուէիր.

Ա՛յ, մարալ աղջիկ,

Ա՛յ, ջէյրան աղջիկ:

Արի երթանք քու ման գալած արտերը,  
 Քեզի տեսայ՝ թաժացան իմ դարդերը.

Ա՛յ, մարալ աղջիկ,

Ա՛յ, ջէյրան աղջիկ:

էս օր չարաթ օր ա, էգւան կիրակի,  
 Սիրտըս գարկիր շամփուր, բըռնիր կրակի.

Ա՛յ, մարալ աղջիկ,

Ա՛յ, ջէյրան աղջիկ:

## ԱՂՋԻ ԴՈՒ ՀՈՒՐ ԵՍ

Աղջի, դու հուր ես, մուր ես,  
Ես ծարաւ եմ դու ջուր ես,  
Իս Համբարձման գիշերը,  
Քեզ ման կըզամ, դու ո՞ւր ես:

Խընձորը գլորել եմ,  
Ճամբիցը մուրրել եմ,  
Երեք տարի միալար  
Քեզ վըրայ սովորել եմ:

Ամպաշող լուսնի նըման,  
Խաղ ասելով կըզաս ման,  
Իմ պայմանը քեզ պահէ,  
Դու ե՞րբ կըտաս քու պայման:

Սազն առնեմ ձեռքս, քոքեմ,  
Գամ ձեր դըրանը չոքեմ,  
Ըլնի թէ մի հնարքով  
Քեզ էնտեղից ես պոկեմ:

կ. վ.

## ԳՈՒԹԱՆԸ ՀԱՅ ԵՄ ԲԵՐՈՒՄ

Գութանը հաց եմ բերում,  
Բերանը բաց եմ բերում,  
Տե՛ս, քեզ ո՞րքան եմ սիրում,  
Չուկը տապկած եմ բերում:

Էսօր գութանը մերն ա,  
Մած բռնողը իմ հէրն ա,  
Եզնարած շէկլիկ տըղէն,  
Աշխարհ գիտէ՝ իմ տէրն ա:

Վեր կացած հաւախօսին,  
Գութանն ա վարում փոսին,  
Բարակ արև երկընքում,  
Շողն ա դիպել ակօսին:

Հաւքեր, թեւանի արէք,  
Եարիս հովանի արէք,  
Թող բարակ քամին փըշի,  
Հետն էլ դուք նանի՛ արէք:

կ. վ.

## ՍԻՐՈՒՆԻ ԽԱԼԸ

Սիրունը խալն ի՞նչ կանէ,  
Սիպտակ ձին նալն ի՞նչ կանէ:

Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Եարըն որ եարին սիրէ,  
Աս ու լիսըն ի՞նչ կանէ:

Նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛,  
Նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛:

Կանգնել ես ախա-բախա,  
Լաչակիդ տուտը կախ ա,  
Սեւ տղայ, սիպտակ աղջիկ,  
Բռնել էք իրար եախա:

Արեւը կամար-կամար,  
Կապել ես ոսկէ քամար,  
Յիսունն օր պաս եմ պահել  
Իմ ախպօր ճամբի համար:



1) ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՑ

Andante

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԳ.

Սարերի վրով գընաց,  
Ե՛ր, Ե՛ր,  
Արօժով, արօժով,  
Եարիս կարօժով.

Ի՛մ հարը խըռով գընաց,  
Ե՛ր, Ե՛ր,  
Մրնացիր, մրնացիր,  
Զինուոր գրնացիր:

Ո՛չ լոր ելաւ, ո՛չ կաքաւ,  
Ե՛ր, Ե՛ր,  
Արօժով, արօժով,  
Եարիս կարօժով.

Զհոնէս թըռնելով գընաց,  
Ե՛ր, Ե՛ր,  
Մրնացիր, մրնացիր,  
Զինուոր գրնացիր:

Ծաղիկ էր հասով-մոտով,  
Եկաւ, անցաւ ի՛մ մօտով,  
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,  
Ու միացի կարօտով:

Ծէկ հարիս դըրի ճամբան,  
Ափսո՛ս, չասի իրան բան,  
Ծամբին օգնական չունի,—  
Սուրբ կարապետ պահապան:

2) ԵՐԻ ԵՐԻ ԵՐԻ ԶԱՆ

Կս գիշեր լուսը տեսայ,  
Երի, երի, երի ջա՛ն,  
Ի՛մ հարը դուսը տեսայ,  
Երի, մարալօ՛ ջեյրան,  
Ելեր էր ուխտ էր գալի,  
Երի, երի, երի ջա՛ն,  
Հրացանը ուսը տեսայ:  
Երի, մարալօ՛ ջեյրան:  
Արեւ էր ամպի տակին,  
Սուրբ Յակոբ ճամբի տակին,

Մի էնպէս աղբէր ունեմ,  
Հրեղէն ձին թամբի տակին:  
Արեւը սարի վերայ,  
Մամուռը քարի վերայ,  
Ես ոսկի սարք պիտէի,  
Ի՛մ սիրած հարի վերայ:  
Էն սարէն մարդ ա գալի,  
Սարը կըրակ ա տալի,  
Առաջըս աղլուխ բացաւ,  
Ի՛մացայ վարդ ա տալի:

### ՏԸԼԷ ԵԱՄԱՆ

Andante

Չայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Տը-լէ եա-ման, ա-րեւ... ա-ռէր... վա-նայ...

ժո վին... Տը-լէ եա ման, ես քեզ սի-րի...

աղ-նան հո-վին, եա-ման եաման հէյ... եա-ման-- եա-ման հէյ--

Տըլէ եաման. Արեւն առեր  
վանայ ծովին,

Տըլէ եաման. Ես քեզ սիրի  
Աշնան հովին,  
Եաման, եաման, հե՛յ:

Տըլէ եաման. Վարդ բացուեցաւ  
Քաղեւ չը կայ,

Տըլէ եաման. Եարս բարակ էր,  
Սեղմել չը կայ:  
Եաման, եաման, հե՛յ:

Տըլէ եաման. Լուսինն ելաւ  
էս գիշերին,

Տըլէ եաման. Եարբս տեսայ  
Կէս գիշերին,  
Եաման, եաման, հե՛յ:

Տըլէ եաման. Արի երթանք  
Սարն ի սէյրան,

Տըլէ եաման. Քե տանողի  
Տընիկ վերան,  
Եաման, եաման, հե՛յ:

Տըլէ եաման. Եարս պզտիկ է  
Սիրել չը կայ,

Տըլէ եաման. Շատ խորոտ է  
Պաշել չը կայ,  
Եաման, եաման, հե՛յ...

### ՏԸԼԷ ԵԱՄԱՆ


(ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՎ)

Տըլէ եաման.  
Գեամին եկաւ  
Կըրակի պէս,

Վա՛յ, սըլէ եաման,  
Էկաւ հասաւ  
Չուր ծովու կէս,  
Եաման, եաման, հե՛յ:

Տըլէ եաման,  
Մեր տուն, ձեր տուն  
Իրար դիմաց,

Վա՛յ, սըլէ եաման,  
Մենք սիրեցինք  
Առանց իմաց,  
Եաման, եաման, հե՛յ:



ԱՒԱՆՑ - ՎԱՆԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Տրլէ եաման,

Արեւ գիպաւ  
Մասիս սարին,

Վա՛յ, տրլէ եաման.

Կարօտ մնացի  
Ես իմ եարին,  
Եաման, եաման, հե՛յ:

Տրլէ եաման,

Քամին էկաւ  
Երան-երան,

Վա՛յ. տրլէ եաման,

Գեամին հասաւ

Ծովու բերան,  
Եաման, եաման, հե՛յ:

Տրլէ եաման,

Քամին էկաւ  
Առաւ բերդին,

Վա՛յ, տրլէ եաման,

Քո սէր կաթաւ  
Մէջ իմ սրբտին,  
Եաման, եաման, հե՛յ...

ՋԱՆ, ԱՅ ԼՈՒՍԻՆ

Լուսինն ելաւ էն սարին,  
Սարի բարձր կատարին,  
Շէկլիկ-մէկլիկ երեսով,  
Փըսեց գետին լոյսի ծով:

Ջա՛ն, ա՛յ լուսին, ջա՛ն, ֆո լուսին,  
Ջա՛ն, ֆո կրլօր օեկ երեսին:

Խաւարը շուտ չըքացաւ,  
Լաւ է գեանին չը կացաւ,


Լուսնի լուսէն հալածուած,  
Խոր ձորերի մէջ մնաց:

Ջա՛ն, ա՛յ լուսին, եւայլն:

Բայց ամպերը մոլեգին  
Նախանձեցին լուսնակին,  
Ելան երկինք կապուտակ,  
Լուսինն առան իրենց տակ:

Ջա՛ն, ա՛յ լուսին, եւայլն:





ՀԱՅՈՒՇԻՆ (Նկար՝ Ա. Ֆեթլաճեանի)

### ԲԷԳՉԱԴՈՒՒ ԱՂՋԻԿ

Բէգզադս'ւ աղջիկ, գըռնէն դո՛ւրս արի,  
Քո բոյը տեսնեմ:

— Կորի՛ր գընա, հարամզադա,  
Քիւրաի գիադա,

Անտառ չե՞ս մըտել, չինար չե՞ս տեսել:  
Բէգզադս'ւ աղջիկ, գըռնէն դո՛ւրս արի,  
Քո երես տեսնեմ:

— Կորի՛ր գընա, հարամզադա,  
Քիւրաի գիադա,

Պարաէզ չե՞ս մըտել, խընձոր չե՞ս քաղել:  
Բէգզադս'ւ աղջիկ, գըռնէն դո՛ւրս արի,  
Քո աչեր տեսնեմ:

— Կորի՛ր գընա, հարամզադա,  
 Քիւրաի դեադա,  
 Երկինք չե՞ս նայել, ասաղեր չե՞ս տեսել:  
 Բէզզադո՛ւ ազջիկ, գըռնէն դո՛ւրս արի,  
 Քա կուրծքը տեսնեմ:

— Կորի՛ր գընա, հարամզադա,  
 Քիւրաի դեադա,  
 Սարեր չե՞ս անցել, մարմար չե՞ս տեսել:

### ԵՍ ՊՈՒՃՈՒՐ, ԱՐԵԻԻԴ ՄԵՌՆԻՄ

Ես պուճուր, կարբս պուճուր, արեւիդ մեռնիմ:  
 Ո՞վ կուտայ մեզ հաց ու ջուր, բարեւիդ մեռնիմ:  
 Արեւիդ մեռնիմ, կար ջան,  
 Բարեւդ կ'առնեմ, կար ջան,  
 Սիրելէն կ'առնեմ:

Գօաի ես կապել, կար ջան, ինձ համար մէկ հատ ես,  
 Սիրել եմ քեզի կ'առնեմ, ջհաննամ որ աղքատ ես:  
 Արեւիդ մեռնիմ, եար ջան, եւայլն:

Ես զոճա, կարբս զոճա, արեւիդ մեռնիմ,  
 Հաց կուտենք պողչա պողչա, բարեւիդ մեռնիմ:  
 Արեւիդ մեռնիմ, եար ջան, եւայլն:

### ԶՈՒԻ ԶԷՅՐԱՆ

Իմ կեանք ուսէր սիրուն ազջիկ,  
 Սիրուն ազջիկ, ալւան ծաղիկ,  
 Ալւան ծաղիկ, սարի եղնիկ.

Արի սէյրան, չոյի ջէյրան,

Չոյի ջէյրան, ես իեզ դուրբան:

Չայնդ քաղցրը, լեզուդ անուշ,  
 Լեզուդ անուշ, բաղամ ու նուշ,  
 Բաղամ ու նուշ, դու մեղրաթուշ.

Արի սէյրան, չոյի ջէյրան, Էլն. :

Հաւասն եմ, քեզ խնդիր կանեմ,  
 Խնդիր կանեմ, կեանք տուր՝

ապրեմ,

կեանք տուր՝ ապրեմ, որ

չմեռնեմ .

Արի սէյրան, չոյի ջէյրան, Էլն. :

ԳՈՒՍԱՆ ՀՍԻԱՍԻ

**ՄՈԿԱՑ ՀԱՐՍՆԵՐ**

Եկան, եկան Մոկաց հարսներ,  
Հարալօ, ջալալօ,  
Հարկող եկան, բարւօր գացի՛ն,  
Հարալօ, ջալալօ:

Մեր բաղը վարդ ա,  
Ձեր բաղը հարթ ա,  
Ես քեզ չեմ առնի  
Իմ սիրու սավղա:  
Մեր բաղը ծառ ա,  
Ձեր բաղը քար ա,  
Ես քեզ չեմ առնի  
Իմ ախպոր ծառայ:  
Իմ չինար հարին,  
Իմ չինար հարին,  
Ով ա բան ասել  
Գովական հարին:

Եկան, եկան Մոկաց հարսներ,  
Հարալօ, ջալալօ, հւայլն:

**ԱՅ ՍԱՐ ՈՒ ՍԷՅՐԱՆ**

Ջաղացըս մանի, մանի,  
Քուներս անուշ կըտանի,  
Ա՛յ, սար ու սէյրան ու եար,  
Մարալ ու ջէյրան ու եար,  
Իմ եարը սարում, քոլում,  
Իմ քունը ո՞նց կըտանի:  
Ա՛յ, սար ու սէյրան ու եար,  
Մարալ ու ջէյրան ու եար:  
Սարից գալիս ա քամի,  
Դու չես մնում մի համի,  
Ամեն աժող-չաժողի  
Մի՛ թողնի հոգիս հանի:  
Աղջի, ինադ մի՛ անի,  
Վեր կաց կայնի դու բանի,  
Ձեռքդ տար սրտիս մէջը,  
Դարդերըս մէկ-մէկ հանի:

**ՄՈԿԱՑ ՀԱՐՍՆԵՐ**

(ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՎ)

Եկան, եկան Մոկաց հարսներ,  
Հարալօ, հարալօ,  
Ոսկէ թելով հիւսուած վարսեր,  
Հարալօ, հարալօ,  
Քիրմանու շալ գըցած ուսին,  
Հարալօ, հարալօ,  
Դէմքերն ասես բոլոր լուսին,  
Հարալօ, հարալօ:  
Եկան, եկան Մոկաց հարսներ,  
Ունքերը կեռ, աչքերը սեւ,  
Հագել են խաս, կապել ալմազ,  
Ա՛խ էն լաւից ո՞վ ունի մաս:  
Եկան, եկան Մոկաց հարսներ,  
Հուրի, փերի, կըրակ ու սէր,  
Դուրս եկէք, դուրս, Մոկաց  
փեսէք,  
Մոկաց շէն տան բերքը տեսէք:

**ՏՈՒՅ, ՏՈՒՅ**

Մարդիս միջին կայ համեմ,  
Հէ՛յ, տույ, տույ, տույ,  
Տույ, տույ — վարսի,  
Իմ սիրտ սրտիդ մէջ քամեմ,  
Հէ՛յ, տույ, տույ, տույ,  
Տույ, տույ — Սարսի,  
Բըլբուլ դառնամ՝ էդ սըրտէդ  
Հէ՛յ, տույ, տույ, տույ,  
Տույ, տույ — վարսի,  
Մի կուշտ անուշ ջուր խմեմ,  
Հէ՛յ, տույ, տույ, տույ,  
Տույ, տույ — Սարսի:  
Ունիմ մի յուշ, քաղցրանուշ,  
Ցանեղ եմ վուշ, հոն՝ ի Մուշ,  
Ելել է նուշ՝ վարդի փուշ,  
Քո պագն անուշ քան ըզնուշ:

1) ԳՈՒԹԱՆԵՐԳ ՎԱՐԱՆԴԱՅԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԳ.

*Lento mf*

Ձիգ տու քաշի՛ ա՛յ Ե-զը, արա՛ հո՛—

հո՛— Ե՛յ լուծըդ մա՛շի ա՛յ Ե-զը, արա՛

հո՛— հո՛ արա՛ հո՛—

արա՛ հո՛—

Ձիգ տու, քաշի՛, ա՛յ եզը,  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛, հո՛,  
 Լուծըդ մաշի, ա՛յ եզը,  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛, հո՛,  
 Աստուած պահէ քու տէրը,  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛, հո՛,  
 Մինն էլ տաշի, ա՛յ եզը:  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛, հո՛:  
 Մեր գուժանը օղած ա,  
 Եզանց ուսը նօթած ա,

Վարէ՛ վարը, ա՛յ գուժան,  
 Հազիւ խոփը զօղած ա:  
 Շողքըն ընկաւ ծրմակին,  
 Աստուած կը տայ մըշակին:  
 Սուր գուժանը ծիր գընաց,  
 Տէր-մըշակը քամակին:  
 Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,  
 Սո՛ւրբ ա, սո՛ւրբ ա քու փեշակ.  
 Մինը հազա՛ր տուր, Ա՛ստուած,  
 Քեզ ձէն կը տան տէր-մըշակ:

4. 4.

2) ՔԱՂԼԱՆ

Գարնան գուժան հանեցի  
 Եար, Եայ, Եայ, Եա՛յ, Եայ, Եա՛յ,  
 Արար բամպակ ցանեցի,  
 Սօնա եար, Եա՛յ. Եայ, Եա՛յ.  
 Ամառն եկաւ, քաղն ելաւ,  
 Եար, Եայ, Եայ, Եա՛յ, Եայ, Եա՛յ,  
 Քաղհանաւոր ճարեցի:  
 Սօնա եար, Եա՛յ, Եայ, Եա՛յ:

Քաղհան կանեմ հօ՛ բարով,  
 Գոլմա կ'եփեմ բիբարով.  
 Աշնան անի լաւ օրեր,  
 Բամպակ քաղեմ նուբարով:  
 Բեռնեմ սայլը սար հանեմ,  
 Սար հանեմ ու տուն տանեմ,  
 Դուրս գայ չարի չար աչքը,  
 Չըմեռ հանդիստ օր կանեմ:

4. 4.

ՍԵՐՄՆԱՅԱՆԸ՝ ՎԱՐԱԳԻ ՄԷՋ



«ՍԵՐՄԷ՛, ՍԵՐՄԷ՛, Ա՛Յ ՄՇԱԿ, ԱՐԱ՛ ՀՅ՛»...

### ԷՍ ՃԱՄԲԷՔԸ ՈԼՈՐ Ա

էս ճամբէքը ոլոր ա,  
 վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
 Ես քեզ տեսայ մոլորայ,  
 նա, նայ, նայ, նայ, նայ, նայ նայ նայ.  
 Մոլորիս մէկ ճար արա, վա՛յ լէ...  
 Ինձ էլ քեզ ընկեր արա, նա, նայ...  
 Ծառեր դուք ծիրան մի՛ք տայ, վա՛յ լէ...  
 Ճղներ դուք էլ բար մի՛ք տայ, նա՛...  
 Ես զարիբ եմ, զոնաղ եմ, վա՛յ լէ...  
 Դարդերս իրար մի՛ք տայ, նա՛...  
 Սեւ փուշին վիզս եմ քցել, վա՛յ լէ...  
 Կրակը սիրտս եմ լցել, նա՛...  
 Թամամ հինգ օր չեմ տեսել, վա՛յ լէ...  
 Իմ եարը միտս եմ քցել, նա՛...

## 1) ԵԱՐ ԶԱՆ, ԱՐԻ

Եա՛ր ջան, արի, դուն մի առնի էն արդին,  
 Թէ սր առնես, երեք օրուայ հարս ըլնես:  
 Վո՛ւյ, ետօ՛ ջան:



ՀՍՅ ՊԱՐՈՒՇԻՆ

(Նկար՝ Զապէլ Պոյաճեանի)

## 2) ԷՍ ՕՐ ՈՒՐԲԱԹ Է

Էս օր ուրբաթ է պաս է.

Դե՛, հե՛, զբ՛նգբ, զբ՛նգբ,  
 դե՛հ, հե, ջա՛ն.

Սըրտիկ արծաթէ թաս է.

Դե՛, հե՛, զբ՛նգբ, զբ՛նգբ:  
 դե՛հ, հե, ջա՛ն.

Սըրտիկ, մալուլ մի՛ մընա,  
 Աշխարհ մարդու չի՛ մընա:

Աշունն եկաւ ցօղալէն,  
 Ծառի թըփեր դողալէն.

Սըրտիկ, մալուլ մի՛ մընա,  
 Աշխարհ մարդու չի՛ մընա:

Կըռունկ կանչեց սարերուն,  
 Ղարիբ արդէն երերուն.

Սըրտիկ, մալուլ մի՛ մընա,  
 Աշխարհ մարդու չի՛ մընա:

Ելիլ եմ ու ճար չունեմ,  
 Մեռնելու հընար չունեմ.

Սըրտի՛կ, մալուլ մի՛ մընա:  
 Աշխարհ մարդու չի՛ մընա:

## 3) ԶՈՒՐ ԿՈՒԳԱՅ

Զուր կուգայ վերին սարէն՝  
 Սարն սլորելէն.

Կը թափի մարմար քարէն՝  
 Կաթ-կաթ ծորելէն:

1) ԴՐԺՈՒԱԾ ՍԷՐ

Պարուն ա ձուն ա արել,  
 վա՛յ լե, լե, վա՛յ, լե, լե՛.  
 վա՛յ, լե լե, լե, լե՛.  
 Իմ եարն ինձնից ա սառել:  
 Ա՛խ, չորեա՛յ, վա՛խ, ա՛յ եար,  
 Չար մարդու լեզուն:

Քամին փըչում ա պաղ պաղ,  
 Լերդ ու թոքս անում ա դաղ:  
 Եա՛ր, ինձ բէմուրաղ արիւր,  
 Սէրըդ ինձնից զատ արիւր:

4. 4.

2) ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Կայնել ես, կանչում էլ չես,  
 եա՛ր,  
 Բոյէդ ամաչում էլ չես,  
 եա՛ր,  
 Եա՛ր, եայ, եայ, եայ եայ, եայ,  
 Նա՛յ, եա՛յ, եա՛յ, եայ, եայ, եա՛յ:  
 Եկար կշտովս անց կացար,  
 եա՛ր,

Տէր ես ճանաչում էլ չես:  
 եա՛ր:  
 Սեւ ամպը սարի գըլխին,  
 Կաքաւը քարի գըլխին,  
 Չէ՞, իրար խօսք ենք տըւել՝  
 էն բարձր գարի գըլխին:

4. 4.


3) ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ

(ԾԱՂՐԵՐԳ)

Խումար պարկե երես բաց,  
 Հո՛ւպ, հո՛ւպ, հո՛ւպպրսա, դրմբա,  
 Դեղին կապերա, բըմբուլ բարձ:  
 Հո՛ւպ, հո՛ւպ, հո՛ւպպրսա, դրմբա.  
 Հե՛յ, հե՛յ, լա՛ւն ե,  
 Հե՛յ, հե՛յ, լա՛ւն ե,  
 Հե՛յ, հե՛յ, լա՛ւն ե,  
 Հե՛յ, հե՛յ, լա՛ւն ե:  
 Անուշ քընե երես բաց,  
 Սահակն եկաւ՝ խելք գընաց:  
 Հաջոնց բակն էր զալտըրմա,  
 Աչնան թոխլին զաւուրմա:  
 Խաբար տարէք ըռեսին,  
 Աղջիկ բերէ վեր մըսին:

Հաւարն ընկաւ ըռեսին,  
 Գեացէք, թափան վեր մըսին:  
 Հէրօն ուտէր, գիրանար,  
 Մըկօն խըմէր, ուրախանար:  
 Հաջոնց կալը՝ բոլորպար,  
 Խումար մէջը կը խաղար:  
 Ծամեր թալուկ իւր էտեւ,  
 Կը թըռվըռէր շատ թեթեւ:  
 «Հաստատ մնայ մեր Հաջին,  
 Որ պահէ՛ մեր նոր փեսին:»  
 Գարնան բացուաւ նոր լալա,  
 Խումար քերաւ ջուխտ բալա:  
 Աչքըդ լսյս, Հաջի աղա,  
 Թոռներուդ հալաւ արա:

4. 4.



ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

(ՆԿՍՐԻՆ ՏԱԿԸ՝ ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՁԵՌԱԳԻՐԸ)

Ամէն մարդ չ'ի կանա խրմի իմ ցուրըն, ուրիշ ջըրէն է.  
 Ամէն մարդ չ'ի կանա կարթա իմ գիրըն, ուրիշ գըրէն է.  
 Բունիաթս ավազ չ'իմանաս՝ քարափ է քարակըրէն է...

(ԴՈՒՆ ԷՆ ԳԸԼԻ ԷՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ)

# ԲԼԲՈՒԼԻ ՀԻԴ

(ԵՐԵՒԱՆԻ ՎԱՐԻԱՆԻ)

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

Moderato

ՄՇԱԿԵՑ՝ ՍԱՐԳԻՍ ԲԱՐՄՈՒԴԱՐԵԱՆ

ԲԼԲՈՒԼԻ ՀԻԴ ԼԱԳ ԻՍ ԷԼԻ,  
 ՎԱՐԹԻ ՆՐՄԱՆ ԲԱԳ ԻՍ ԷԼԻ,  
 ՎԱՐԹԱՋՐՐՈՎ ԹԱԳ ԻՍ ԷԼԻ,—  
 ԹԱԳ ԻՍ ԷԼԻ,

ՉԼԿԱՅ ԲԻՉԻ ԵՐՄԱՆ,  
 ՉԼԿԱՅ ԲԻՉԻ ԵՐՄԱՆ,  
 ՔԻԳ ԵՐՄԱՆ, ԲԻՉ ԵՐՄԱՆ,  
 ԴՈ՛ՒՆ ԻՍ ԱՆՆԵՄԱՆ:

ՍԻՐՈՒՆՈՒԹԻՆՆԻ ԷՆԱԸ ԱՐՐԱՐ,  
 ՄԱԳԵՐ ՈՒՆԻՍ՝ ՍԻՄ ՈՒ ՀԱՐՐԱՐ,

ՔԻ ՍԱԳ ԳՈՒ ՔԱ ԴՈՒՂՆՈՒ  
 ՉԱՐՐԱՐ,—

ՂՈՒՂՆՈՒ ՉԱՐՐԱՐ:  
 ՉԼԿԱՅ ԲԻՉԻ ԵՐՄԱՆ,  
 ՉԼԿԱՅ ԲԻՉԻ ԵՐՄԱՆ,  
 ՔԻԳ ԵՐՄԱՆ, ԲԻՉ ԵՐՄԱՆ,  
 ԴՈ՛ՒՆ ԻՍ ԱՆՆԵՄԱՆ:

ԷՐԷՍՐԴ Է ՀԱՄՍ ՈՒ ԴԱՄԱՐ,  
 ԶԱՆՐՍ ԴՈՒՍ ԳՈՒ ՔԱՅ ԲԻՉ ԱՄԱՐ,  
 ՄԷՉԿԻԴ ՈՒՆԻՍ ՕՍԿԷ ՔԱՄԱՐ,—  
 ՕՍԿԷ ՔԱՄԱՐ.

Չկայ քիզի նման,  
 Չկայ քիզի նման,  
 Քիզ նման, քիզ նման,  
 Դո՛ւն իս աննման:

Հաքիդ զարըն՝ ալ իս արի,  
 Բըլբուլի հիդ լալ իս արի,  
 Բարկ էրէսիդ խալ իս արի,  
 Խալ իս արի:  
 Չկայ քիզի նման,  
 Չկայ քիզի նման,

ՈՒՍՏԻ՞ ԳՈՒ ՔԱՍ

Ուստի՞ դու քաս, զարիբ բըլբուլ,  
 Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու,  
 Դու վարթ պըտուէ՛, ես գօզալին,  
 Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Արի՛, բըլբուլ, խօսի բառըն,  
 Օխնըվի՛ քու էկած սարըն,  
 Քի վարթն էրից, ինձ իմ հարըն,  
 Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Ման իմ գալի դիդարի հիդ,  
 Վունց զարիբ բըլբուլ խարի հիդ,  
 Դու վարթի հիդ, ես հարի հիդ, —  
 Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Սալբուլի նըման կանանչ իմ,  
 Ե՛կ, խօսի ձայնըդ ճանանչիմ,  
 Դու վարթ կանչէ՛, ես եա՛ր  
 կանչիմ, —

Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Ղարիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,  
 Ես ու դու էրվինք մէ հալում,  
 Սայաթ-Նովէն ասաց՝ զալում, —  
 Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Քիզ նման, քիզ նման,  
 Դուն իս աննման:

Դարդըս ասիմ՝ կուլան սարիբ,  
 Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիբ,  
 Սայաթ-Նովուն՝ ջունուն արիբ,  
 Ջունուն արիբ:

Չկայ քիզի նման,  
 Չկայ քիզի նման,  
 Քիզ նման, քիզ նման,  
 Դուն իս աննման:

1752 ՄԱՐՏ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՍԻՐԵՐԳ

Էշխէմէն էնպէս վառվիլ իմ՝  
 Վունց մէջլում եա՛ր իմ ասում,  
 Գօզալի տիսուն կարօտ իմ՝  
 Հիդ քաշվի սա՛ր, իմ ասում:

Ղուրբան իմ ծուցիդ նըռանըն,  
 Հօքիս տամ շիմ շատ կըռանըն,  
 Թաք պառկիմ հարի դըրանըն, —  
 Գըլխօքըս քար իմ ասում:

Հաքիլ իս ատլաս խասէմէն,  
 Խըմէցո՛ւ ձեռիդ թասէմէն,  
 Համաշա էշխիդ բասէմէն  
 Էրվում իմ, ճար իմ ասում:

Բադ կու սիրիմ, ես բաղման չիմ,  
 Բադի տիրուչըն ճանանչիմ,  
 Բըլբուլ իմ՝ սիրով վարթ  
 կանչիմ, —

Հիդ քաշվի խա՛ր, իմ ասում:

Մէջլիսնեբուլ խաղըն դուն իս,  
 Վանքեբուլըն տաղըն դուն իս,  
 Սայաթ-Նովու բաղըն դուն իս,  
 Կարօտ իմ, բառ իմ ասում:

## ԱՐԻ ՀԱՄՈՎ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԱ

Արի համով զուլուղ արա, խալխի նօքար, Սայաթ-Նօվա.  
 Ամէն մարթ չի՛ կանա ճանգի շահօվ շքար, Սայաթ-Նօվա.  
 Ով քիզի լիղի պարքիվէ, դուն տու շաքար, Սայաթ-Նօվա.  
 Ղաստ արա՛ շուչէդ չը կօտրին, չը խըփին քար, Սայաթ-Նօվա:  
 Թէգուղ դըպրատանըն պահ տաս՝ ծէծօվ չի խըրատվի խիվըն,  
 Ինչրու անձնէն չը դուս էհա անախտէլի էն չար դիվըն.  
 Բէդասլըն՝ ասըլ չի՛ դառնա, թօլօվ չի՛ սիպտակի սիվըն.  
 Ծուռըն փէտըն չի դըրըստի սանդան, դուրգար Սայաթ-Նօվա:  
 Թէգուղ իմանաս, դիդէնաս աստղերու համբարքըն սիրուն.  
 Անբարի գուրձըն կորած է՝ կարթա՛ Հարանց վարքըն սիրուն.  
 Ավիտարանի խօսկիրըն՝ մարքարիտէ կարքըն սիրուն.  
 Մի ածի խուղի առչիվըն լալ ու գօվար, Սայաթ-Նօվա:  
 Վուր տիղ հասնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ սօյրաթ խաղ է ըլում.  
 Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրօվ տաղ է ըլում.  
 Թէ վուր հօքուղ կամ քն իս անոււմ, մարմինդ բէդամաղ է ըլում.  
 Վո՛ւր մէ դարդին կու դիմանաս, դու ջըրատար Սայաթ-Նօվա:

1758

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

## ԽՐԱՏԱԿԱՆ

Արի՛ ինձ անդաճ կա՛լ, ա՛յ դիվանա սիրտ,  
 Հայա սիրէ՛, ադաբ սիրէ՛, հար սիրէ՛.  
 Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՛  
 Աստուած սիրէ՛, հօքի սիրէ՛, հար սիրէ՛:  
 Ին բանն արա՛ վուր Աստուծու շարքումն է,  
 Խըրատնիրըն՝ դըրած Հարանց վարքումն է,  
 Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է՝  
 Գիր սիրէ՛, դալամ սիրէ՛, դավթար սիրէ՛:  
 Ե՛կ արի՛, սի՛րտ, մի՛ կէնա դուն մէ դամաղի,  
 Հալալ մըտիկ արա հացի ու աղի,  
 Հէնց բան արա՛ մարթ վըրէդ չը ծիծաղի՛  
 Խըրատ սիրէ՛, սաբըր սիրէ՛, շար սիրէ՛:  
 Հընպարտութին չ՛անիս՝ դուր գու քաս Տէրիդ,  
 Խօնարութին արա՛ կանց քիզ դէվէրիդ,  
 Աստուած դիփուլունանցըն մի՛ն հօքի էրիտ՝  
 Աղկատ սիրէ՛, դօնաղ սիրէ՛, տար սիրէ՛:  
 Սայաթ-Նօվա, էրնէ՛կ քիզ, թէ է՛ս անիս՝  
 Հօքուղ խաթրի մարմնուղ ունըրը կէս անիս.  
 Թէ դ՛ուզիս վուր դադաստան չը տէսանիս՝  
 Վանք սիրէ՛, անապատ սիրէ՛, քար սիրէ՛:

# Ո՛Վ ԱԶԿԻԼՈՒՍ

(ՎԱՀԱՆ ՏԷՐ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ԵՐԳԱԾԷՆ)

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

Moderato

ՄՇԱԿԵՑ՝ ՍԱՐԳԻՍ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆ

Ա՛էկ խօսք ու նիմ իլ-թի-մա-զով, անգաճ ա-րա, օվ աչ-կի լուս,  
 սըրտու մըս ին թի-զար ու նեմ----- քու տիսըն բա-----  
 -րով աչ-կի լուս, ա ջաբ քիզ ինչ գէթ իմ ա-րի՛  
 կէնում իս խը-տով աչ-կի լուս, աշխարս աշխա-----  
 -րով կըշ-տացալ----- իս քի-զանից----- սով աչ-կի լուս:

Մէ խօսկ ունիմ իլթիմազով, անգաճ արա՛, օ՛վ աչկիլուս.  
 Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն բարով, աչկիլուս.  
 Աջա՞ք քիզ ինչ գէթ իմ արի՛ կէնում իս խըռով, աչկիլուս.  
 Աշխարս աշխարով կըշտացալ, իս քիզանից սով, աչկիլուս:  
 Մադա՞մ էլ օչ օվ հար չ՛է սիրի, էս ի՞նչ արիբ, էս ի՞նչ բան ա.  
 էշխէմէդ ջուսուն իմ էլի, ման իմ գալի հանա հանա.  
 էս դարդէն օչ օվ չը քաչէ, վուր մէ դանդին չ՛ի դիմանա՛  
 Սիրտըս լուրի պէս խօրվէցիր էշխիդ կըրակով, աչկիլուս:  
 Դօստիրըս դուշման շինէցիր, հադէրուն ի՞նչպէս դօստ անիմ.  
 Անցկացած օրըն չ՛իմ տեսնում քանի գուզէ վուր դաստ անիմ,  
 Աստուած վըկայ, խիստ դըժար է, գլուխըս ի՞նչպէս դուս տանիմ,  
 Ես մէ փուքըր նավի նըման, քու էշխըն է՛ ծով, աչկիլուս:  
 Գ՛ուզիմ բերանըս բաց անիմ, գովքըդ ասիմ թարիփի պէս.  
 Տաս տարի է ման իմ գալիս Փաղիշահի շահիփի պէս.

Օխտըն տարի էլ ման դու քամ սազըն ձէռիս Ղարիբի պէս՝  
 Բուժա Շահսանամըս դունն իս, է՛լ չունիմ ոչ օվ, աչկիլուս:  
 Թէգուզ հազար դարդ ունէնամ, ես սըրտումըս ա՛ն չ՛իմ ասի.  
 Իմ հուքմի հէքիմըն դունն իս, ես էլ ուրիշ Շահ չ՛իմ ասի.  
 Սայաթ-Նօվէն ասաց. Զալում, ես էն մահին մահ չ՛իմ ասի՝  
 Հէնչափ ըլի՛ դուն վըրէս լաս, մազըդ շաղ տալօվ, աչկիլուս:

1758


ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

### ՔԱՄԱՆՉԱ

Ամէն սազի մէջըն գօված դո՛ւնն թամամ դասն իս, քամանչա.  
 Նաքազ մարթ քիզ չ՛ի կանա տէսնի, դունն նըրա պասն իս, քամանչա.  
 Ղաստ արա՛ էլ լավ օրերուն էդիվըն հասնիս, քամանչա.  
 Քիզ ինձնից ո՛վ կանայ խըլի՛ աշուղի բասն իս, քամանչա:  
 Անգաճըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջավահիր քարած,  
 Կութըդ շիրմայէմէն պիտի, փուրըդ սադափօվ նախշ արած,  
 Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած,  
 Օչ օվ ղիմէթըդ չ՛ի գիդի՛ լալ ու ալմասն իս, քամանչա:  
 Ճիպուտըդ վարաղնած պիտի՝ թահր ունէնայ հազար ռանգօվ.  
 Զարըդ ռաշի կուդէն պիտի՝ վուր դունն խօսիս քաղցըր հանգօվ.  
 Շատին դարթուն կու լուսացցնիս, շատին կու քընէցնիս բանգօվ՝  
 Անուշահամ գինօվ լիքըն դո՛ւնն օսկէ թասն իս, քամանչա:  
 Ածօղիդ էրկու կու շինիս, առաչ չայի դափա գ՛ուզիս.  
 Կու մէծըրվիս այիփուումըն, պարապ վախտի բափա գ՛ուզիս.  
 Եփ վէր գու քաս մէջլիսումըն, քաղցըր զօղ ու սափա գ՛ուզիս,  
 Բօլօրքըդ գօղալնիր շարած՝ մէջլիսի կէսն իս, քամանչա:  
 Շատ արխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դուզըն:  
 Եփ քաղցըր ձայնըդ վիր կօնիս՝ բաց կուլ՛ի հիդըդ խաղօղըն.  
 Խալիսին էս իլթիմազն ա՛րա՛ ասին «Ապրի քու ածօղըն»,  
 Քանի սաղ է Սայաթ-Նօվէն, շատ բան կու տէսնիս, քամանչա:

1759

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ





Վս'ւնց գըրանքումըն կայ, վունց գաւթարումըն,  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո'ւրիշ դիղ:

## ՍԻՐԷԿԱՆՆ

Ասաց թէ. «քի դարար՝ շինեցիր շահըդ.  
«Կըտրեցիր ադաբըդ, կըտրեցիր ահըդ.  
«Մի՛ վիթի արունըդ, մի՛ շանց տա մահըդ,  
«Քու ասածըն ուրիշ տիղ է, ո'ւրիշ տիղ:»

## ՍԱՅԱԹ - ՆՕՎԷՆ

Ասի թէ. «Մաղերդ սուրմա իս անում,  
«Հէնց գիտիս՝ չ'իմ գիտի, եա՛ր, չ'իմ իմանում.  
«Սէրըդ ինձ մահ գարաւ՝ էլ չ'իմ գիմանում,  
«Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո'ւրիշ դիղ:»

## ՍԻՐԷԿԱՆՆ

Թաքաւուրի թագի լայիղ քարըն իմ,  
Շիրինի պէս Փահրադի դիզարըն իմ,  
Ես է՛ն գըլխէն Սայաթ-Նովու եարըն իմ,  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո'ւրիշ տիղ:

## ՍԱՅԱԹ - ՆՕՎԷՆ

Հիզըս խօսի՛, մի՛ կէնա խոօվի պէս.  
Տալղա տըվիր՝ գէմիս տարար ծովի պէս.  
Կու մէռնիմ, — չիս տէսնի Սայաթ-Նովի պէս.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:  
Ամա՛ն, ուրի՛ց դիղ:



# ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

Andantino

Գրի առաւ. Է. դաշնակեց ԱՐՄԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Դ ու ն է ն գ լ խ է ն ի մ ա ս տ ու ն ի ս

ի ի լ զ զ ի մ ա թ ի ն բ ա թ մ ի ա ն ի

է լ ա զ ու ն զ զ ա ն տ ա ծ ի հ ի զ

1. - 2. -

մ ի զ ի մ է հ է ս ա թ մ ի ա ն ի

ritar. dim morendo

Ս ա յ ա թ ն ո վ ա

Դուն էն գըլխէն իմաստուն իս, խելքդ յիմարին բաբ մի' անի,  
 էրազումըն տէսածի հիդ միզի մէ հէսաբ մի' անի,  
 Ես խո'մ էն գըլխէն էրած իմ, նուրմէկանց քարաբ մի' անի,  
 Թէ վուր, գիդիմ, բէզարիլ իս, ուրիշին սաբաբ մի' անի:  
 Չը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Ռօստօմի Չալ, թա' քավուր.  
 Ասկըդ ասկէրումըն գօված, համ դուն իս գօղալ թաքավուր.  
 Թէ էսանց էլ սուշ ունէնամ՝ գըլուխս արա' տալ, թա' քավուր.  
 Մըտիկ արա' քու Ստիղծօղին՝ նահախ տիզ դազաբ մի' անի:  
 Եարալուն հէքիմն էնգուր գ'ուզէ՝ դիզ տալու է ցավ տալու չ'է.  
 Քանի գ'ուզէ արբաբ ըլի՝ զուլըն աղին դավ տալու չ'է.  
 Դու քու սիրտըն իստակ պահէ', եադի խօսկըն ավաալու չ'է.  
 Աստուծու սէրն կանչօղի պէս դըռնէմէդ ջուղաբ մի' անի:  
 Ամէն մարթ չ'ի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջըրէն է.  
 Ամէն մարթ չ'ի կանա կարթա իմ գիբըն՝ ուրիշ գըրէն է.  
 Բունիաթս ավազ չ'իմանաս՝ քարափէ քարուկըրէն է՝  
 Սէլավի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտօվ խարաբ մի' անի:  
 Քանի գ'ուզէ քամին տանէ՝ ծօվէմէն ավազ չ'ի պակսի.  
 Թէգուզ ըլիմ, թէգուզ չ'ըլիմ՝ մէջլիսնեբուն սազ չի պակսի.  
 Թէ կու պակսիմ, քի'զ կու պակսիմ՝ աշխարիսմէ մազ չ'ի պակսի՝  
 Սայաթ-Նօվու գէրէզմանըն շինդ Հաբաշ, Արաբ մի' անի:

1753

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

### ԵՍ ՔՈՒ ՂԻՄԷԴԸՆ

Ես քու զիմէթըն չ'իմ գիդի՝  
 Չավահիր քարի նըման իս,  
 Տէսնօղին Մէջլում կու շինիս՝  
 Լէյլի՝ դիզարի նըման իս:  
 Աշխարումըս իմըն դո'ւն իս,  
 Բէմուրվաթ իս, մուրվաթ  
 չ'ունիս.  
 Պըռօշնէրիդ նաբաթ ունիս,—  
 Ղանդու շաքարի նըման իս:  
 Դադա պիտի՝ թարիփդ ասէ,—  
 Ակուէքըդ եաղութ ալմաս է,

Ռանգըդ Փըռանդի աալաս է,—  
 Չար զալամ քարի նըման իս:  
 Մազիբըդ նըման ուէհանի,  
 Դուն ուրիշ խիալ մի' անի,  
 Ռահմ արա', հօքիս մի' հանի,  
 Մուրվաթօվ եարի նըման իս:  
 Վո'ւնց դիմանամ էսչափ չարին՝  
 Աչկէմէս կաթում է արին.  
 Սայաթ-Նօվու, նազլու եարին  
 Գընած նօքարի նըման իս:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

### ԱՇԽԱՐՈՒՄԸՍ ԱՆ Զ՛ԻՄ ՔԱՇԻ

Աշխարհումըս ախ չ'իմ քաշի, քանի վուր ջա'ն իս ինձ ամա,  
 Անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա.  
 Նըստիմ, վըրէս շըվաք անիս՝ զարբար վըրան իս ինձ ամա,  
 Սուչս իմացի՛, էնէնց սպանէ՝ Սուլթան ու իյան իս ինձ ամա:  
 Մէշկըդ սամբու չինարի պէս, ոանգըդ Փըռանգի աալաս է,  
 Լիզուդ շաքար, պոօշըդ դանդ, ակուէքըդ մարքըրիտ ալմաս է,  
 Օսկու մէշըն միևս արած աշկիրըդ ակնակապ թաս է.  
 Պատվական անգին ջավայիր, լալ Բադէշխան իս ինձ ամա:  
 Ես էս դարդին վո՞ւնց դիմանամ՝ մազամ սիրտըս ունիմ քարած,  
 Արտասունքս արուն շինէցիր, խիլքըս գըլխէս ունիմ տարած.  
 Նուր բաղ իս, նուր բաղչի մէշըն բօլօքըդ վարթով չափարած,  
 Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ ամա:  
 Քու էշխըն ինձի մաստ արավ. ես գարթուն իմ, սիրտս է քընած,  
 Աշխարս աշխարով կըշտացու, իմ սիրտըս քիզնից սով մընաց-  
 Եար, քիզ ինչօ՞վ թարիփ անիմ՝ աշխարումըս բան չը մընաց,  
 Կրակէ ծօվէմէն դուս էկած՝ ոաշ, ջէյիրան իս ինձ ամա:  
 Ի՞նչ կո՛ւլի մէկ հիդըս խօսիս՝ թէ վուր Սայաթ-Նօվու եար իս.  
 Շուխկըդ աշխարըս բըռնիլ է՝ արէգագի գէմըն փար իս.  
 Հուտով՝ հիլ, միխամ, դարիչին, վարթ, մանուշակ, սուսանբար իս,  
 Կարմըրագուն դաշտի ծաղիկ, հօվտաց շուշան իս ինձ ամա:

ՍՍՅՍԹ-ՆՈՎԱ

### ՆԱԶԱՆԻ

է՛յ բէմուրագ մի սըպանի, Չունքի արիր սէր, նազանի: Թէ քիզ ավէլ հադ եար սիրիմ, Ումբրէս չանիմ խէր, նազանի:	Եիս քիզ ավէլ իլաջ չունիմ, Դուն դառի ինձ տէր, նազանի: Կըրակ աըվիր կրակն ավէլի, Չախմախ ունիս դուն ցավէլի, Աշխարում քիզնից ավէլի Օ՞վ ասավ թէ կէր, նազանի:
Աշխարումըս դուն իմ ջան իս, Դուն իմ Շահ իս, Սուլթան, Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս, Հազարէն մէ ջէր, նազանի:	Սայաթ-Նօվէն իմ, ճար չունիմ, Եիս վարթըն իմ, մին խար չունիմ, Թէ դուն ասիր հադեար չունիմ, Իզրարըթ գըթար, նազանի:
Ղարիբ գավրիչ իմ, հաջ չունիմ, Գլխիս էրծաթէ թաջ չունիմ,	

# ՔԱՆԻ ՎՈՒՐ ԶԱՆ ԻՄ, ԵԱՐ

(ՇՈՐԱ ՏԱԼԵԱՆԻ ԵՐԳԱՄԵՆ)

Moderato

փա-նի վուր ջան իմ, եար քի դուրբան իմ, աբա ի՞նչ անիմ,  
 վուր ջան իմ, եար քի դուրբան իմ, ա-բա ինչ ա-նիմ, ապրաստե՛մ հա ձիմ,  
 շարհոբայ հա ձիմ, եար, դա-դեղ քա-նի — իմ — ի, ապրաստե՛մ հա ձիմ, շարհոբայ  
 հա ձիմ, եար, դա-դեղ քա-նի — իմ, ա-սիր ջե՛րբան իմ, թուղից ա՛նց ա-նիմ,  
 եար մի-տիկ ա-նիմ, մուրհաղթն՝ ապոյ, փայ ժողով՝ ապոյ, եար, ի-թի-մա-  
 յո՛ւ ա-նիմ, մուրհաղթն՝ ապոյ, փայ ժողով՝ ապոյ, եար, ի-թի-մա-յոյ.

Քանի վուր ջան իմ՝ եար քի դուրբան իմ, աբա ի՞նչ անիմ,  
 Արաստունք հանիմ, շատ հօքուց հանիմ, — եա՛ր, զադէդ տանիմ,  
 Ասիր. «Չէյրան իմ.» թս՛ւզ քիզ սէյր անիմ, եար, մըտիկ անիմ:  
 Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմ ազով:

Մազիրըդ դաստա, պըռօջըդ փըստա. հէյրանի վախտ է:  
 Ե՛կ նընգնինք չօլըն՝ վուր հասնինք գօլըն. Չէյրանի վախտ է:  
 Բըլբուլըն վարթին, վարթըն բաղին. սէյրանի վախտ է:  
 Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմ ազով:

Շուռ գանք հանդամօվ. երկնային նամօվ թուփըն թացվիլ է:  
 Խաղ կանչինք հանգով. լալէքն ռանգով, վարթըն բացվիլ է:

Սուսան սընբուլով, զարիբ բըլբուլով բաղըն լըցվիլ է:  
 Մո'ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմազով:  
 Պատվական շինած, նըման նըմանած լէյլու դիդարին.  
 Եա'ր, ուշկըս գընաց՝ մազիրըդ մընաց վրա մուհաջարին.  
 Բաղըն զարթարած, բըլբուլըն քընած վարթի սաջարին.—  
 Մո'ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմազով:  
 Հաքիլ իս առլաս, թուրլու զար ու խաս՝ սալբու դալ բովուն.  
 Ձէռիդ ունիս թաս, լըցընիս ինձ տաս՝ ղուրբան իմ քովուն.  
 Թաք դուն բաղչէն գաս՝ անիս մասնէ մաս քու Սայաթ-Նովուն:  
 Մո'ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար իլթիմազով:

2 Մայիս 1757

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

### ԹԱՄԱՄ ԱՇԽԱՐ ՊԵՏՈՒՏ ԷԿԱ

Թամամ աշխար պըտուտ էկա՝ չը թօղի Հաբաշ, նազանի,  
 Չը տէսա քու դիդարի պէս՝ դուն դիփունին բաշ, նազանի.  
 Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու շինիս ղումաշ, նազանի,  
 Էնդու համա քու տէսնօղըն, ասուժ է՝ վա՛շ վա՛շ, նազանի:  
 Դուն պատվական ջավահիր իս, է՛րնէկ քու առնօղին ըլի.  
 Օվ կու գըթնէ՝ ա՛խ չ՛ի քաշի, վա՛յ քու կօրցընօղին ըլի.  
 Ափսո՛ւս վուր շուտով մէռիլ է, լուսըն քու ծընօղին ըլի.  
 Ապրիլ էր, մէկ էլ էր բէրի քիզի պէս նազաշ, նազանի:  
 Դուն է՛ն գըլխէն ջուհարգար իս, վըրէդ զարնըշան է քաշած.  
 Դաստամաղիդ թիլի մէշըն մէ շադա մարջան է քաշած.  
 Աչկիրըդ օսկէ փիալա՝ շարխէմէն փընջան է քաշած.  
 Թէրթէրուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր զալամ թըրաշ, նազանի:  
 Էրէսըդ՝ Փարսէվար ասիմ, նըման է շամս ու զամարին.  
 Բարակ միշկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին.  
 Ղալամըն ձէռին չ՛է կանգնում, մաթ շինէցիր նաղըշքարին.  
 Եփ նըստում իս՝ թութի ղուշ իս, եփ կանգնում իս՝ ուաշ, նազանի:  
 Ես է՛ն Սայաթ-Նովասին չ՛իմ՝ վուր ավզի վըրայ հիմնանամ.  
 Աջա՞բ միզիդ ինչ իս կամում՝ սըրտէդ մէ խաբար իմանամ.  
 Դուն կըրակ, հաքածըդ կըրակ, վո՛ւր մէ կըրակին դիմանամ.  
 Հինդու զալամ քարու վըրէն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի:

1758

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՉԻՍ ԱՍՈՒՄ

Չիս ասում թե՛ լաց իս է — ի, բարով քեզայ ի — մ սիր-բե — կան,  
 վարդի էջ — մեկ բաց իս է — ի, բարեբով, բարով սրե — սայ իմ սիրե-կան,  
 Բարով սրե — սայ իմ սիր-բե — կան: Աստված՝ ասի՛նք զբնու — ճայ,  
 այ-կիրորդ ու-կի փրկ-ջա — ն ա բուշահ-նի ի-տե՛ն սրե՛ ջա — ճայ, բարեբով,  
 Բարով սրե — սայ իմ սիր-բե — կան: Ե, բարով սրե — սայ իմ սիր-բե — կան:

Չի՛ս ասում, թե՛ լա՞ց իս էլի.  
 Բարով տէսա, իմ սիրեկան.  
 Վարժի նրման բաց իս էլի  
     Խարեբով,  
     Խարեբով.  
 Բարով տէսա, իմ սիրեկան:

Արի՛ մի դարդըս իմացի՛,  
 էշխեմէդ համան իմ լացի.  
 Օրըս էսպէս անց է կացի  
     Դարեբով,  
     Դարեբով.  
 Բարով տէսա իմ սիրեկան:

Եփ կու հաքնիս ալ ու ատլաս,  
 Տէսնողին կու շինիս մաս մաս.  
 Դոշիդ պիտի լալ ու ալմաս

Ծարեբով,  
 Ծարեբով.  
 Բարով տէսա, իմ սիրեկան:  
 Ես քիզ գովիմ խաղի մէջըն,  
 Ծամամնիրըդ թաղի մէջըն,  
 Ման իս գալի բաղի մէջըն  
     Եարեբով,  
     Եարեբով.  
 Բարով տէսա, իմ սիրեկան:  
 Սալաթ-նովէն վո՞ւնց դընջանա՛  
 Աչկիրըդ օսկէ փընջան ա.  
 Դուշմանի լիզուն մընջանա  
     Չարեբով,  
     Չարեբով.  
 Բարով տէսա, իմ սիրեկան:

## ԷՇԽԷՄԷԴ ՀԻՎԱՆԴԱՑԻԼ ԻՄ

Էշխէմէդ հիվանդացիլ իմ, դիզի համա իմ լալի.  
 Վախում իմ թէ դարդըն հալէ, եղի համա իմ լալի.  
 Շահի կարքած վէքիլի պէս գիզի համա իմ լալի.  
 Տանէն դուս արածի նըման տիզի համա իմ լալի:  
 Մէ տիզ հուքմի հէքիմ չը կա՝ դուռըն էհամ, կանչիմ հարա.  
 Վի կէնա Լողմա հէքիմըն՝ բալքամ դարդիս անէ չարա.  
 Տի՛ս թէ ինչպէս է շըփօթվի՝ դուն իմ խիլքին մըտիկ արա, --  
 Ջուրըն էկավ՝ գէրանս տարավ, ծիզի համա իմ լալի:  
 Սիրտըս էշխէմէն էրած է, դուգուն դաղըն ի՞նչ կօնիմ.  
 Վո՛ւնց դօրա ունէ, վո՛ւնց չափար՝ ես էնպէս բաղն ի՞նչ կօնիմ.  
 Անդի լարըն կըտըրվիլ է՝ դարդակ սադաղն ի՞նչ կօնիմ.  
 Նիտըս քարումըն կօտրէցի, թիզի համա իմ լալի:  
 Ղալամըն գիրըս չէ՛ գըրում՝ մէչ չուրացած թանքի նըման.  
 Խօսկիրըս մէմէկ չ'ի ասվի՝ իմաստննէրու բանքի նըման.  
 Մէչըն չ'իմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման.  
 Խօստօ՛վնահէրըս հիռացավ, միզի համա իմ լալի:  
 Գիղումըն՝ մէլիք տանուտէր, քաղաքտիղըն՝ Սուլթան Խան իս.  
 Բաղումըն՝ վարթ ու մանիչակ, սարումըն՝ սընըուլ սուսան իս.  
 Ղարուլ ունէ Սայաթ-Նօվէն՝ թաք քու ձէռօվ դուն սըպանիս.  
 Մէննէլուս համա չ'իմ հօքում, ցիզի համա իմ լալի:

1758

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

## ԴԱՐԴ ՄԻ՛ ԱՆԻ

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար, միտկըդ գիվաց չը տէսնէ.  
 Աչըկ խավրի, անգաճ խուլանա՝ էրէսըդ թաց չը տէսնէ.  
 Վո՛ւնց արէգագըն շուղկը տա՛, վո՛ւնց լուսինը լուս անէ՛.  
 Ավալ քու տէսնօղըն մէռնի՝ քիզ գըլխիբաց չը տէսնէ:  
 Դուն գըլուխըդ մահի կու տաս, ես էլ քիզիդ կու մէռնիմ.  
 Միր էդնէն թամամ աշխարըս սօվ քաշէ, — հաց չը տեսնէ:  
 Թէ վուր չը գամ ու չը տէսնիմ՝ հազար բաբաթ բան կօսիս.  
 Քաշկամարթ վո՛ւնց գա, վո՛ւնց խօսի, վո՛ւնց քիտըխրած չը տէսնէ:  
 Աստուծու բէրնէմէն առնիս մըխըթարիչ սուրփի հօքին,  
 Է՛լ վաղ մէռնի Սայաթ-Նօվէն՝ ճիտըդ գըցած չը տեսնէ:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

## ՄԷՋԼՈՒՄԻ ՊԷՍ ԿՕՐԱԻ ԵԱՐԸՍ

Մէջլուժի պէս կտրաւ եարըս,  
 Լէյ-լի-ջան, ման իմ գալի  
 Եանա եանա.

Էրվէցաւ խուճի ջիգարըս  
 Արնի պէս աչկս է լալի  
 Եանա եանա, եանա եանա:

Բըլբուլի նման լացիլ իմ,  
 Աչկիրըս արնով թացիլ իմ,  
 Էշխէմէդ հիւանդացիլ իմ.  
 Պառկած իմ դըժար հալի:


Էշխէմէդ դարիլ իմ Եգիդ,  
 Հալվէցայ, մաշվէցայ քիզիդ.  
 Ռահմ արա', մէ խօսի' միզիդ'  
 Բէմուրվաթ, ձէն իմ տալի:

Էրվուժ իմ, կանչում իմ ա՛ման.  
 Ծուցըդ բաղ, ունքիրըդ քաման.  
 Աշխարիս մէջըն քիզ նըման  
 Չ'իմ տեսած, ման իմ գալի:

Մանուշակ բաց արած հօվին,  
 Կարմիր վարթ, ծաղիկ հուտօվին,  
 Շատ մի' լացցնի Սայաթ-Նօվին'  
 Աչկիլուս, կըսկըծալի:

5 Ապրիլ 1757

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ



ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ԳԵՐԵՉՄԱՆԸ  
 (Թիֆլիս)

## ԹԱՔԱՎՈՒՐ ԻՍ

Թաքավուր իս, դիվանս արա, թաք քու արիմն կու սիրիս.  
 Ուրօր գնաս, ինձ էլ հիդտ տար, քու արիմն կու սիրիս.  
 Ակոավը բուլբուլ չի դառնա, քանի գ'ուզէ վուր ախ անէ.  
 Ամէն ոանգ ծաղկի մէջը կարմիր վարթը սիրէկան է,  
 Գուղ մարթն մանգա՛ղօվ գուքա, ձիք կու՛տա տակոէն կու հանէ.  
 Մի թօղնի ասկիտ քաղէլու, վարթ, քու արիմն կու սիրիս.  
 Բուլբուլը սարէմէն գու՛քա, իր լիզվօյն բաղ կանչէլօվ.  
 Սայաթ-Նօվէն վուր բէզրիլ է, շատին էրից խաղ կանչէլօվ.  
 Օվ ջավահիր անգին ալմաս, հա՛ր, քու արիմն կու սիրիս:

## ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Andante

Երաժշտութիւն ԳԱՆԻԷԼ ԳԱԶԱՐԵԱՆԻ

Canto

Piano

Եր երաժ  
 ա-նուշ գա-րու՛ն,  
 ծա-ղիկ  
 Եւ-րիս - - - հե-տըզ գա-լու՛ն,  
 զու կա-րու  
 Եւ վառ ա թե - լի՛ն  
 Եւ իմ կեանք

First system of musical notation. It consists of a vocal line in treble clef and a piano accompaniment in grand staff (treble and bass clefs). The vocal line has lyrics: *բի գա-րու՛ն նա-րին. դու կա-րու՛ն*. The piano accompaniment features a rhythmic pattern of eighth notes in the right hand and chords in the left hand.

Second system of musical notation. It consists of a vocal line in treble clef and a piano accompaniment in grand staff. The vocal line has lyrics: *նա վառ ա-րե-լին. նսիմ կեանք*. The piano accompaniment continues with a similar rhythmic pattern.

Third system of musical notation. It consists of a vocal line in treble clef and a piano accompaniment in grand staff. The vocal line has lyrics: *բի- - - գա-րու՛ն նա-րին*. The piano accompaniment features a more complex rhythmic pattern with sixteenth notes in the right hand.

Fourth system of musical notation. It consists of a vocal line in treble clef and a piano accompaniment in grand staff. The vocal line is mostly blank, with a few notes at the end. The piano accompaniment continues with a rhythmic pattern of eighth notes.

Քեզ եմ մընուժ անուշ գարուն,      Ես հար ունիմ յաւէտ գարուն,  
 Ծաղիկ եարիս հետըդ գալուն,  
 Դու կարօտ ես վառ արեւին,  
 Ես իմ կեանքի գարուն եարին:  
 Դու վարդ ունիս քեզ հմայող,  
 Քո կեանքի հետ նա էլ մարող,  
 Ես հար ունիմ յաւէտ գարուն,  
 Իմ հոգու մէջ վա՛ռ, մընայուն:  
 Անքուն աչքով ես կը սպասեմ,  
 Սէրը սրտումս վառ կը պահեմ,  
 Վարդի թըփից փունջ կը կապեմ,  
 Սիրած եարիս նըւէր տանեմ:

Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ԽԱՆՈՒՄ ԵՒԱ ԶԱՆ

Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ,  
 Խանում եւա ջան,

Արարանը աչերիս դուժան է դառել:

Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,  
 Լալով ողբալով, գոչ ու բարխանով,  
 Սարեր ման գալով, քեզնից գատուելով,  
 Ընկեր ճարելով, Ասուած կանչելով:

Մէկ դին ոչխարք կ'արածին, մէկ դին գառները,  
 Խանում եւա ջան,

Կանաչել են ծաղիկները, ծառները:

Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,  
 Լալով ողբալով. գոչ ու բարխանով,  
 Ընկեր ճարելով, սարեր ման գալով:  
 Զեքեր. շարժելով, Ասուած կանչելով:

Արի գնանք քու ման գալած արտերը,  
 Խանում եւա ջան,

Քեզի տեսայ նորացան իմ դարդերը:

Դուն կեցիր բարով, հւլն.:

Ես Ալէքն եմ, Չամլըխեցի մի ջիւան,  
 Խանում եւա ջան,

Բըռնին տարան էստուց չուրի Երեւան:

Դուն կեցիր բարով, հւլն.:

Չեռ ու ոտըս կապին բերդը դըրեցին,  
 Չուխա շալվար, լալով տունը բերեցին.

Օրե՛ր, գարնան օրեր, դուք ո՞ւր էք կորեր:

ՀԱՆԴԷՆ ԳԱՍ


հան-դէն գաս գե-ղը մըտ-նես, մայրիկ  
 մայրիկ — և մայրիկ ջան, բաղի շամբի — ն  
 կայ նա՛ծ էր. իմ գը ցած տեղը մըտ նես, մայրիկ  
 մայրիկ — և մայրիկ ջան, բաղի շամբի — ն կայնած էր:

Հանդէն գաս զեղը մտնես,  
 Մայրիկ, մայրիկ, մայրիկ ջա՛ն, բաղի նամբին կայնած եր.  
 իմ գցած տեղը մտնես.  
 Մայրիկ, մայրիկ, մայրիկ ջա՛ն, բաղի նամբին կայնած եր.  
 Ընձէն գիւժան հար բունես,  
 Մայրիկ, մայրիկ, մայրիկ ջա՛ն, բաղի նամբին կայնած եր.  
 Բեմուրազ հողը մտնես:  
 Մայրիկ, մայրիկ, մայրիկ ջա՛ն, բաղի նամբին կայնած եր.

ՏՈՒՆ ԱՐԻ

Երգիկ, երգիկ բունել ես,  
 Երգկայ տակին կունել ես.  
 Տուն արի, տուն արի,  
 Տուն արի, եա՛ր,  
 Մթնել ա, տուն արի,  
 Անջիգեար եա՛ր,  
 Կանչրմ եմ, եա՛ր, արի,  
 Եարայու եա՛ր:  
 Չէն տուի՛ ձէնըս չառար,

Մագեամ ինձէն ջորե՞լ ես:  
 Չուն դնեմ թաւէն խաշեմ.  
 Ելնեմ երգիկը աշեմ,  
 Տեսնեմ հարըս գայիս ա,  
 Չօքեմ չաքմէքը քաշեմ:  
 Հանդէն գաս զեղը մտնես,  
 իմ գցած տեղը մտնես,  
 Ընձէն գիւժան հար բունես,  
 Բեմուրազ հողը մտնես:



ՄՇՈՅ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

### ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՐԳԸ

Զանգերն ալ կախած էն տաճարի դռրան,  
 Կազմեցին, սուքիցին տասներկու խորան,  
 Ո՛վ մտնայ տեսնայ՝ բաց մնայ բերան.

Մեղա՛ լաց, մեղա՛ տուր Ս. Կարապետին,  
 Օգնական պահապան անկաջ էնողին:

Ս. Կարապետ ըսաւ՝ վա՛յ Մայրամ ջան,  
 Ես կ'եղնիմ քզի փոշեհան,

Փոշին հանեմ թափեմ փարէ պաթման.

Մեղա՛ լաց, մեղա՛ տուր Ս. Կարապետին,  
 Ինք բարեխօս էղնի անկաջ էնողին:

Ս. Կարապետն էր մըջ պրակին,

Ջուխթակ աղբուրն ալ մըջ ուր բակին,

Իր դուռ կիզայ կանի գառն ու մաքին,

Մատաղ կ'եղնի լուս կիրակին:

Մեղա՛ լաց, մեղա՛ տուր Ս. Կարապետին,

Օգնական պահապանն էղնի տան դատաւորին:

Հոգին զմարմին խրատեց,

Ըսաւ՝ իմ սիրելի բարի դրկեց,

Պիտի օր մը ուտէ զքզի ցեց,


Ինչո՞ւ կիտաս մբմուռ ընծի:

Մարմին հոգիին ըսաւ. աղբէ՛ր,  
 նոր եմ ընկի աշխարհի սէր.  
 Ես կ'ազաչեմ մէկ միայն Տէր,  
 Պիտի քաշեմ ահ ու ու զար ընծի:

Հոգին մարմնին ըսաւ. ժամն օր կանչեց,  
 Դուն ժամն արի, խոստովանի, զմեղքդ լացի,  
 կաթ մը արտասունք արտասուեցի,  
 Դատաստանին գաս տուր ընծի,  
 Պիտի քաշեմ ահ ու զար ընծի:

Հոգին մարմնին ըսաւ. ես կը քաշեմ ախ ու վախ,  
 Ես չեմ գիտեր զմեռնելու գախ.  
 Օր մը Գաբրէլ կիգայ մ'զի խոնախ,  
 Պիտի քաշեմ ահ ու զար ընծի:

Բազում փրկչական, խնամ տէրուական,  
 Չորս գլուխ սաղմոս շարական, եօթ բերան աւետարան,  
 Ս. կարապետ բարեխօս էղնի ձեր տան ու տեղին, մալին  
 տէվլէթին, զարիպ զուրպէթին, դատողին, բանողին, հար-  
 սարական անկաջ էնողին. շէն մնայ այս օծախին, չուր  
 դատաստանին, ձեր սատաղէն մեր վարպետին: Ինչ խըն-  
 դրէք՝ Տէր կատարէ:



ՄՇՈՅ ԼԱՐԱԽԱՂԱՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ

### ԿԱՔԱԻԻ ԵՐԳԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

ՄՇԱԿԵՑ՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԴԱՇՆԱԻՈՐԵՑ՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

*♩ = 126*

Լի-րե բաց ւեց թուխ ամ-ղե-րէն, կա-քաւ թը-ռաւ կա-նանչ սա-րէն,  
 կա-նանչ սա-րէն, սա-րի ծէ-րէն, Բա-րե Բե-րաւ ծա-ղիկ-նե-րէն:  
*ոյ cédés*  
 սի-րու-նիկ, սի-րու-նիկ, սի-րու-նիկ, նախ շուն կա-քա-ւիկ,  
 սի-րու-նիկ, սի-րու-նիկ, սի-րու-նիկ, նախ շուն կա-քա-ւիկ:

Արեւ բացւեց թուխ ամպերէն,  
 կաքաւ թըռաւ կանանչ սարէն,  
 կանանչ սարէն, սարի ծէրէն,  
 Բարեւ բերաւ ծաղիկներէն:

Սիրունիկ, սիրունիկ,  
 Սիրունիկ, նախ շուն կաքաւիկ:  
 Քու բուն հիւսած ծաղիկներով,  
 Շուշան, նարկիզ, նունուֆարով,  
 Քու տեղ լըցւած ցօղ ու շաղով,  
 Քընես—կ'եկնես երգ ու տաղով:  
 Սիրունիկ, եւլն.:

Քու թեւ փափուկ ու խառուարիկ,  
 Պըզաի կտուց, կարմիր տօտիկ,  
 կարմիր կարմիր տօտիկներով,  
 կը շորսրաս ճուտիկներով:

Սիրունիկ, եւլն. :  
 Երբ կը կայնիս մամռոտ քարին,  
 Սաղմսս կ'ասես ծաղիկներին,  
 Սարեր-ձորեր զըւարթ կ'անես,  
 Դարգի ծովէն սիրա կը հանես:  
 Սիրունիկ, եւլն. :

### ԱՔԼՈՐԻ ԵՐԳԸ (ՎԱՆԵՑՈՑ)

- կո՛ւկուլիկու, սանա՛մէր,
- Մեզ հաւ մը կար՝ ո՞ւր գընաց:
- = Ծարաւ-Աղբիւր կո՛ւլ գընաց:
- Ի՞նչ կար կըտուց:
- = Չիր-չամ իչ:

- Վի՞ր կը տանէր:
- = Հարս-փեսին:
- Հարսը գի՞ր էր:
- = Վե՛ր ոսկի թախթին:
- Փեսէ՞ն գի՞ր էր:
- = Վեր ոսկի բարձին:

ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԵՄ

Adagio

Սա-րե-րի հո-վին մեռ նի-մ, իմ եա-րի-ն, ի-ն-  
 էս օր օխտն օր չեմ տե-տե-մ Լ, տես ճո-ղի-ն աչ-  
 յի-ն և մեռ նի-մ: Ահա է-նիմ՝ ա-րուն կու-գայ: Բո-  
 թի-ն և մեռ նի-մ: Ինչ է-նիմ ես էս եա-րի-ն:  
 սե-պր-տիս գա-րուն կու-գայ, տա-րուն կու-գայ:  
 որ-տե-տե-տե-տե  
 եա-ր, եա-ր, եա-ր, եա-ր եա-ր նա նայ-  
 Ահա նա-նի ջան նա-նի, վայ նա-նի նա-նի ջան:

Սարերի հովին մեռնեմ,  
 իմ հարի բոյին մեռնեմ,  
 էսօր օխտն օր չեմ տեսել,  
 Տեսնողի աչքին մեռնեմ:  
 Ախ եհիմ արուն կուգայ,  
 Սե սրբիս գարուն կուգայ,  
 Ինչ եհիմ ես են հարր,  
 Պրսրսուի արուն կուգայ:

Եար, եար, եար, եար, նա նայ,  
 Ախ, նանի ջան, նանի,  
 Վայ նանի, նանի ջան:  
 Լուսնակը կեռ ու կամար,  
 Քոյր մեռնի եղբոր համար,  
 Օխտըն օր պաս եմ պահել:  
 իմ հարի ճամբի համար:  
 Ախ եհիմ արուն կուգայ, եւլն...:

ԱՐԱԳ ԹԵԻՒԱՂ (ԱԿՆԱՅ)

Ահ-լաս Ֆիստան մոռ-վի-ն, 'ո-րը սիրտը կը մա-ղի:  
 Բու մեկ դասգրդ չեմ ի տար, հա-րիսը հա-զար զու-րու-ղի:

### ՍԻՐՈՅ ԵՐԳ

Խօսք՝ Գ. ՍԱՐԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ ԱՆՈՏ ՍԱՌԵԱՆԻ

Andante

*a tempo*  
 Ասու՛մ են թէ՛ մի աղջիկ, ա՛մէն ա՛մէն ա — ու — ա — ա, մա՛րչերն  
 ա՛րջակ, ու բո՛ց պի՛կ. Շըրջում է դա՛ւր ու ա՛րտու՛ 2. Արե՛ն ա՛րե — չը ճա —  
 վան, ա՛րտում պահե՛մք ու սու՛ֆ. Շըրջում է նա՛ ու յոգ — նան, թափում է ցո՛ղ — ա՛րտու —  
 սու՛ֆ. Արե՛ն ա՛րե — չը ճա — վան, ա՛րտում պահե՛մք ու սու՛ֆ. Շըրջում է նա՛ ու յոգ —  
 նան, թափում է ցո՛ղ — ա՛ր — տա — սու՛ֆ. 3. Տը — թում:

Ասում են թէ մի աղջիկ,  
 Ամէն, ամէն առաւօտ,  
 Մազերն արձակ ու բուսիկ,  
 Շըրջում է դաշտ ու արօտ:  
 Ու դեռ արեւ չը ծագած,  
 Սըրտում պահած վիշտ ու սուգ,  
 Շըրջում է նա ու յոգնած՝  
 Թափում է ցող արտասուք:

Տըխուր, արցունքն աչքերին,  
 Հոգին ամպած, սրտում՝ ցաւ:  
 Պատմում է ողջ վարդերին՝  
 Սիրածն ինչպէս մոռացաւ:  
 Պատմում է նա ու լալիս,  
 Շըրջում է նա դաշտերում,  
 Ու ծաղիկներն անհանգիստ,  
 Գըլխիկներն են օրօրում:

### ԱՍՈՒՄ ԵՆ ԴԻՄԱՑԻՐ


Ասում են, դիմացի՛ր, ես ո՞նց դիմանամ,  
 Թղթիկ մ'էլ չես գըրում, դարդերդ իմանամ:  
 Գիշերը բաց աչքիս դու ես երեւում,  
 Ցերեկը թաց աչքիս դու ես երեւուն:  
 Կանչում եմ՝ չես լըսի, ես ո՞նց դիմանամ,  
 Մօտըդ դալ չեն թողնում, ձէնըդ իմանամ:

ՄԻ ԼԱՐ, Կ'ԱՆՑՆԻ...

Խօսք՝ Գ. ԴԵՄԻՐՉԵԱՆԻ  
Andante misterioso. Quasi improvisato

Երաժշտ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ

The musical score consists of five staves of music in G major and 3/2 time. It includes various musical notations such as rests, notes, and dynamic markings like *p*, *ten*, *piu mosso*, and *Sempre ten.* The lyrics are written in Armenian script below the notes.



ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Մի՛ լար,  
 Մի՛ թացիր աշերդ,  
 Աչքիդ լոյսն ափսոս է,  
 Կ'անցնի՛,  
 Մի՛ աղերսիր,  
 Վարդ գարուն հասակդ,  
 Մի՛ օր է վառ Մայիս,  
 Կ'անցնի՛:  
  
 Ի՞նչ հս, ջա՛ն,  
 Էդ դարդին գերուհի,  
 Դա էլ մի գիշեր է,  
 Կ'անցնի՛,  
 Էս կեանքն էլ  
 Հէքեաթ է հսպէս,  
 Մի՛ շտապիր, մի՛ տանջուիր,  
 Կ'անցնի՛...

## ԱՂՋԻԿ ՆԱԶՈՎ, ՍԵՒ ԹՈՒԽ ՄԱԶՈՎ

Ձեր պարտէզում անուշ հոտով, վարդեր կան բացուած,  
Անուշ ետր ջան, աչքերում ըդ գարդեր կան բացուած,  
Եկ համբուրեմ հիանամ, գոնէ տեսնեմ լիանամ:

Աղջիկ նազով, սեւ թուխ մազով, երգրդ սազով,  
Ետր կանչելով անց կենամ ձեր պարտէզով:

Երանի քեզ՝ պոյ ես քաշեր չի նարի, ախ չի նարի,  
Շատ սիրուն ես, աչք չսունիմ ես ուրիշ ետրի,  
Կանչում եմ չես գալիս, գոնէ բարեւ չես տալիս:

Աղջիկ նազով, սեւ թուխ մազով, եւ այլն:

## ԻՆՋԻՆԱՐ ԵԱՐ ԶԱՆ

Ինջինար ետր ջան,  
Փունջինար ետր ջան,  
Ո՞վ էր բան ասէ,  
Սիրահան ետր ջան:

Էս եանը քամի,  
Էն եանը քամի,  
Արագի վըրէն,  
Բանըմ ա գեամի:

Էս եանը նուշ ա,  
Էն եանը փուշ ա,  
Կողքեցին եկաւ,  
Կարմըրաթուշ ա:

Արագի վըրէն,  
Բանըմ ա լողկա,  
Սիրածըս եկաւ,  
Գլխին շլապկա:

Ինջինար ետր ջան,  
Փունջինար ետր ջան,  
Թէ կառնես մարջան,  
Քի կասեմ ետր ջան:

Էս եանը պատ ա,  
Էն եանը պատ ա,  
Քաղցքցուն կ'առնեմ,  
Որ փողը շատ ա:

## ՀՕՅ ՆԱՆԱՄ

Վերի արտերուն գարին,  
Մըտայ տասնհինգ տարին,  
Ինչո՞ւ իմ բոյը չեկաւ,  
Պըստըկուց առին տարին:  
Հօ՛յ նանամ, հօ՛յ նանամ,  
Գիւլիւմ նանամ, ջան նանամ:  
Բաղչէն անեմ վարդարան,  
Բըլբուլները գան վըրան,

Դուն էլ արի, այ տըղայ,  
Չարկ քու ձեռի թամբուրան:  
Հօ՛յ նանամ, հօ՛յ նանամ, Էլն...  
Խընձոր կըտամ, ա՛յ տըղայ,  
Ա՛ռ, գըրպանըդ գիր, տըղայ,  
Երբ որ մեր դըռնէն անցնես,  
Մի ամաչի կե՛ր, տըղա՛յ:  
Հօ՛յ նանամ, հօ՛յ նանամ, Էլն...:

**ԴԷ ԳՆԱ ԿԻԳԱՄ**

Դէ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Նաշխուռն միգարս առնեմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Կարմիր սուլերս հագնիմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Խորոտ լաճերս առնեմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Գլխուս լաշին առնիմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Ապրուջաններս առնիմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Միզրիս կապերն առնիմ ի գամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Էրէսնոցներս առնիմ իգամ, շուտ կիգամ:

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,  
Դեզ սւ գեղգիրս առնիմ իգամ, շուտ կիգամ:

**ՍՐՏՈՎԸ ՍԻՐԵԼ ԵՍ**

Սուրբ կարապետ քո վանքը,

վա՛յ լե՛ լե՛ լե՛ լե՛ լե՛,

վա՛յ լե՛ լե՛ լե՛ լե՛ լե՛,

վա՛յ սիրելի ջա՛ն:

Ղազարի նախշուռն թամքը.

Սրտվր սիրելի ես,

Մոլորք բորկելի ես,

վա՛յ անուշիկ ջա՛ն:

Արդ անեմ թագաւորին,

Անցել է Հայի կեանքը:

Սեւ ամպերը պարզում էի,

Սիպտակ եայլուխ սազում էի,

Եօթը տարի ալ հագնեմ,

Սիրտըս սեւ է, սազում էի:

Միրան եմ ծառի ծէրին,

Կ'երերամ հետ թերերին,

Եկան քաղեցին տարան,

Ծախեցին ախմախներին:

Կաքաւ եմ քարամիջում,

Կը կարգամ ձորամիջում,

Աստուած, իմ մուրազըս տո՛ւր,

էս գալող շաբթու միջում:

Դու մի հատ դառլան զուշ ես,

Մեր բաղում բուսած նուշ ես,

Աստուած վկայ, սուտ էր կայ,

ինձ համար շատ անուշ ես:

Անունըդ կարդացող ա,

Աղբէրըդ գիր բացող ա,

Մի գիրը բաց անել տո՛ւր,

Տեսնենք ո՞նց իմացող ա:

# ԱՅ ԱՂԶԻԿ, ԾԱՄՈՎ ԱՂԶԻԿ

Moderato

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԳ.

Մյ աղ ջիկ --- ծա մո վ աղ ջի կ վայ

ծա մո վ աղ ջիկ ղա բա ղից --- հա մո վ աղ

ծա մո վ աղ ջիկ ղա բա ղից հա մո վ աղ

ջիկ

Ըն ջա աղ փռն ջա աղ այ ծա մո վ աղ ջիկ  
կար ծռ լիկ կուր ծռ լիկ վայ հա մո վ աղ ջիկ

Ըն ջա աղ փռն ջա աղ այ ծա մո վ աղ ջիկ  
կար ծռ լիկ կուր ծռ լիկ վայ հա մո վ աղ ջիկ

Ըն ջա աղ  
կար ծռ լիկ

Ա՛յ աղջիկ, ծամո՛վ աղջիկ,  
 Վա՛յ, ծամո՛վ աղջիկ,  
 Շաքարից համով աղջիկ.  
 Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,  
 Կարնրիկ, կուրնուլիկ, վա՛յ, համո՛վ աղջիկ:  
 Ունքերըդ խելքըս տարաւ,  
 Վա՛յ, խելքս տարաւ.  
 Թուխ աչքերըդ ծով աղջիկ:  
 Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,  
 Կարնրիկ, կուրնուլիկ, վա՛յ, համո՛վ աղջիկ:  
 Կապել ես քիրման գօտիկ,  
 Վա՛յ, փրման գօտիկ,  
 Մարդ չես թողնում քեզ մօտիկ.  
 Ընջաւոր, փրնջաւոր, եւլին.  
 Տեսքով ես, համով, հոտով,  
 Վա՛յ, համով, հոտով,  
 Քան ըզձաղիկ խորոտիկ:  
 Ընջաւոր, փրնջաւոր, եւլին.  
 Գլուխըդ բարձր բռնի,  
 Վա՛յ, բարձր բռնի,  
 Շէկ տըզէն քեզի մեռնի,  
 Ընջաւոր, փրնջաւոր, եւլին.  
 Ինծի տան արար աշխարհք,  
 Վա՛յ, արար աշխարհք,  
 Ես ուրիշին չեմ առնի:  
 Ընջաւոր, փրնջաւոր, եւլին. 4. 4.

**ՇԱՂԳԸՐ ՇՈՒՂԳԸՐ**

Շաղգր՛ր-շուղգր բեամարս,	Շաղգր՛ր-շուղգր՛ր բեամարս,
Բոյով-սոյով իմ եարս:	Բոյով-սոյով իմ եարս:
Արի՛ աղբէ՛ր, խաղ անենք,	Արի՛ աղբէ՛ր, խաղ անենք,
Չար թըշնամուն դաղ անենք,	Մեր ցաւերուն ճար անենք:



ԱԼ ԱՅԼՈՒՂ

ԱՂՋԻԿ

Այլուղըս կորաւ ձեր դուռը,  
Սըրտէս դուս չի գայ մըմուռը,  
Բախտը ինձ գըցեց էս կուռը,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Սիրուն տըղայ, տո՛ւր այլուղըս:

ՏՂԱՅ

Ալ այլուղըդ ես չը գըտայ,  
Երդըւում եմ՝ Աստուած վըկայ,  
Ով գըտել է՝ թո՛ղ բերի տայ,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Սիրուն աղջիկ, քու այլուղըդ:

ԱՂՋԻԿ

Այլուղըս եարի բաշխած էր,  
Ալ արբշումով նաշխած էր,  
Պատկերըս վըրէն քաշած էր,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Սիրուն տըղայ, տո՛ւր այլուղըս:

ՏՂԱՅ

Քու վարմունքին ի՞նչ անուն  
տամ,  
Քիչ է մընում որ անվերջ լամ,  
Մօտըս լինի բերեմ կուտամ,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Սիրուն աղջիկ, քու այլուղըդ:

ԱՂՋԻԿ

Ա՛խ, ի՞նչ ասեմ իմ խորթ  
մօրըս,  
Կամ ի՞նչ պատմեմ աղիղ հօրըս,  
Խարար կուտան մեծ աղբօրըս,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Տըղա՛յ, տըղա՛յ. տուր այլուղըս:

ՏՂԱՅ

Սէրըդ ինձնէն վաղ է սառել,  
Տըւած խօսքէդ ետ ես դառել,  
Հաւատա՛ որ ես չեմ առել,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Սիրո՛ւն աղջիկ, քու այլուղըդ:

ԱՂՋԻԿ

Միւժտէդ կուտամ, այլուղըս բեր,  
Դու ամէն օր կեր կաթի սեր,  
Ինձի քարերուն մի՛ խըփեր,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Անո՛ւչ տըղայ, տո՛ւր այլուղըս:

ՏՂԱՅ

Սեւուկ աղջիկ, սիպտակ հագիր,  
Ա՛ն այլուղըդ՝ վէրքըս կապիր,  
Սիրուդ գերի՛ ինձ մի՛ տանջիր,  
Եար, ջա՛նօ, ջա՛ն,

Էրուած աղջիկ, ա՛ն այլուղըդ:

ԱՂՈՒԷՍԻ ԵՐԳԸ (ՎԱՆԵՑՈՑ)

Աղուէսն եկաւ վերին թաղէն,  
Օո՛ւ պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ.

Մածուն կէրաւ՝ թափաւ վէրէն.  
Օո՛ւ պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ.

Աղուէսն ասաց, «իմ տիղը նեղ ի»,  
Օո՛ւ պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ.

«Հաւու ճեար փորիս դեղ ի».  
Օո՛ւ պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ, պը՛ճ ինկօ ո՛ւ:

ԿԱՔԱԻԻԿ

Moderato

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Վա՛յ կա-քա-ւիկ, սե կա-քա-ւիկ, չա-ւիկ  
 մա-ւիկ սի-րուն հա-ւիկ. Վա՛յ քու ճու-տին էն-խո-  
 թա-ւ տին, Վա՛յ, սը-գա-ւոր իւր մօր սըր-տին:

Վա՛յ կաքաւիկ, սե կաքաւիկ,  
 Չաւիկ մաւիկ սիրուն հաւիկ,  
 Վա՛յ քո ճուտին, էն խորտին,  
 Վա՛յ սրգաւոր իւր մօր սրտին:

Դու չես երգում հանդուգաշտում,  
 Մեր սարերից կ'անցնես տրտում,  
 Վա՛յ կաքաւիկ, սե կաքաւիկ,  
 Չաւիկ մաւիկ նախշուն հաւիկ:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԶԻՆՉ ՈՒ ԶԻՆՉ ՏԱՄ

Զինչ ու զինչ տամ լող-ւոր-չուն : Զո մա--- զո մա---  
 Ոչ է-տա, ոչ հաւ-նե-ցաւ : Զո մա--- զո մա---  
 էր: Զիմ լա չակ տամ լող-ւոր-չուն : քո մա--- քո մա--- էր:  
 էր: Ոչ է-հան ծամկալ ծո-վէն : քո մա--- քո մա--- էր:

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.  
 — Զումա գումա էր.  
 Զիմ լաչակ տամ լողուորչուն.  
 — Քումա քումա էր.  
 Ո՛չ էտա, ո՛չ հաւնեցաւ,  
 — Զումա գումա էր.  
 Ո՛չ եհան ծամկալ ծովէն:  
 — Քումա քումա էր:  
 Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.  
 — Զիմ մ'ը կապ տամ լողուորչուն.

Ո՛չ էտա, ոչ հաւնեցաւ,  
 Ո՛չ եհան ծամկալ ծովէն:  
 Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.  
 — Զիմ շապիկ տամ լողուորչուն.  
 Ո՛չ էտա, ոչ հաւնեցաւ,  
 Ո՛չ եհան ծամկալ ծովէն:  
 Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.  
 — Լուսնակ գիշեր պաղ մը տըրի-  
 շեա էտա, հեա հաւնեցաւ,  
 շեա եհան ծամկալ ծովէն:

# ՄՈԿԱՑ ՄԻՐԶԷ

Moderato

Գաղնատրեց՝ վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ

*mf*

Օրն էր ուրբաթ շոյս ի շաբաթ, գնալ դը-րեք ենք

*mf Colla voce*

ճաշա-բնա վէն, Բղ-Քիկ մ'ե-կաւ Ձրգ-րու քաղ-թէն,

Ա-ռին բե-րին ճաշա-բնա վէն, տը փն ի շնուն մո-կաց Միր-զէն,

հա-զար ափ-սոս... Մո կաց Միրզէն:

ՄՈԿԱՅ ՄԻՐՁԷ

Օրն էր ուրբաթ,  
 Լուս ի շաբաթ,  
 Գեաշա էր իր ենք Մալաքեաւէն,  
 Թըղթիկ մ'եկաւ Ջըղիրու  
 քաղքէն:

Առան բերին Մալաքեաւէն,  
 Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն:  
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:  
 Առեց կարգաց քաղցրիկ լիզուէն,  
 էրաւ Մաղդէն:

Շըլից աչքեր կախեց չանէն,  
 Քաղուաւ գոյն կարմիր երեսէն:  
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:

Կանչեց, ասաց իւր մըշակին.—  
 Դո՛ւս քաշի Բող—Բեղաւին,  
 Վըրայ դըրէք թամբը սաղաֆին,  
 Սաֆար կերթամ չուր Ջըղիրէն:

Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:  
 Գնաց հասաւ չուր Ջամբարէն,  
 Խաթուններ թափան փանջարէն,  
 Թափան Մոկաց Միրզի  
 թամաշէն

Ջըկէր իւր նըման բոլոր  
 դունիէն:

Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:  
 Գընաց հասաւ չուր Ջըղիրէն,  
 Եկան, ժողվան քաղաք զըմէն,  
 Մոկաց Միրզէն՝

Կ'արժէր քաղաք զըմէն:  
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:

Խեր չը տեսնէր կոլոտ փաշէն,  
 Բաժն էր կոլոտ, բըրջամ երկրէն,  
 Կանչեց Մոկաց Միրզէն,

Տարաւ իւր օդէն:  
 Բեմուրադ կեցեր Կոլոտ փաշէն:

Առեց փաշէն, իջաւ շուկէն,  
 Ետու, առեց զէն բաշըլէն,  
 Առեց, բերաւ,  
 Դանակ դեղեց մէկ երեսէն,  
 Կաժեց՝ կաժ մ'ինք կերաւ,  
 Մէկ ետու՝ Մոկաց Միրզէն:

Բեմուրադ կեցեր Կոլոտ փաշէն:  
 Հեծաւ զձին Մոկաց Միրզէն,  
 Քամ ից Մաղդէն:

Շըրջաւ բալակ աչքեր,  
 Կախաւ լամէն,  
 Թափաւ մըրրուսէն,

Թափաւ մազեր կարմիր երեսէն,  
 Թափաւ բեղեր նազիկ պըռկէն,  
 Թափաւ դեղին ջուր սիպտակ  
 լիշէն:

Բեմուրադ կեցեր Կոլոտ փաշէն:  
 Եկանք, հասանք չուր Խընկա-  
 տարէն,

Բարով հասանք չուր Խընկա-  
 տարէն,  
 Տեսանք ժուռ ժուռ նաշը ներ-  
 քուց բերին:

Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն,  
 Բեմուրադ կեցեր Կոլոտ փաշէն:

Եկանք, հասանք չուր Բըռնաշէն,  
 Սարով հասանք չուր Բըռնաշէն:  
 Կուժն ու կըթխէն կապուտ  
 նաշէն՝

Պուտ պուտ արիւն թափէր  
 գետին,  
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:

### ՀՕՂԱԼԼՕ, ԶԱՆ

Հօ՛ղալլօ, ջան,  
 Հօ՛ղալլօ, ջա՛ն, հօ՛ղալլօ,  
 Աղջի՛կ սիրուն,  
 Աղջի՛կ անուշ, դա՛լալլօ,  
 Կայնե՛լ ես աղբերակին,  
 Հօ՛ղալլօ, ջա՛ն, հօ՛ղալլօ,  
 Շող կը տաս արեգակին,  
 Գա՛լալլօ, ջա՛ն, դա՛լալլօ,  
 Քո շող երեսին մեռնեմ՝  
 Հօ՛ղալլօ, ջա՛ն, հօղալլօ,

Ունքերիդ աղեղնակին.  
 Գա՛լալլօ, ջա՛ն, դալալլօ:  
 Մազերըդ ուտրել ա,  
 Աչքերըդ բուտրել ա,  
 Երկ՛ օր ա չեմ տեսել,  
 Իմ սիրտը մուտրել ա:  
 Փող ես ուզում, քեզ փող տամ,  
 Ոսկի տամ, ո՛չ թէ հող տամ.  
 Թէ դրրան էլ հաւան չես,  
 Հոգիս հանեմ քեզ փոխ տամ:

### 1) ԾԱՂՐԾՐԳ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ

Հինգ էծ ունիմ ուլ էծերով,  
 Իլիլի, դիլիլի.  
 Կաթ կը կըթեմ պըղընձներով.  
 Իլիլի, դիլիլի.

Սեր կը չափեմ կալի չափով,  
 Իլիլի, դիլիլի.  
 Եզ կը հանեմ լըլի տըկով:  
 Իլիլի, դիլիլի:

4. 4.

### 2) ՊԱՐԵՐԳ ԹՌՆՈՑԻ

Զա՛ր՝ զր՛նգր, գա՛ր՝ զր՛նգր,  
 Թո՛ղ զրնգա,  
 Պարենի գիշեր յուսրնկայ.  
 Էս գիշեր լուսնակ գիշեր,  
 Զա՛ր՝ զր՛նգր, գա՛ր՝ զր՛նգր,  
 Թո՛ղ զրնգա,  
 Զիւնն հկեր՝ գետին նաշխեր,

Պարենի գիշեր յուսրնկայ:  
 Էլի պարը բուտրաւ,  
 Զա՛ր՝ զր՛նգր, գա՛ր՝ զր՛նգր,  
 Թո՛ղ զրնգա,  
 Եարըս միջին մուտրաւ:  
 Պարենի գիշեր յուսրնկայ:

4. 4.

### ԷՐԻՈՒՄ ԵՄ

Էրւում եմ, էրւում,  
 Կարմիր քարը տաշած ա.  
 Էրւում եմ, էրւում,  
 Բոյըս վըրէն քաշած ա:

Էրւում եմ, էրւում,  
 Ինչ անեմ, որ քաշած ա.  
 Էրւում եմ, էրւում,  
 Սիրտըս հալած, մաշած ա:

4. 4.

ԵՐԳԵՐՆ ԱՆՈՒՇ

Խօսք՝ Ս. ԽԱՆԶԱՏԵԱՆԻ

Երաժշտ. Տ. ԱԻԵՏԻՍԵԱՆԻ

Andantino

Մեզ են գարնան շնչով կանչում արտերը մեր, Գաշտերը մեր, --- Սեր երգն իրենց --- Տո՛վը տանում  
 --- Հասկե - ըն մեր, Հանդե - ըն մեր, Ար-տերն ա - նուշ, Հաս-կերն ա - - նուշ,  
 ար-տե - ըի մէջ մեր սերն ա - նուշ, արտերն ա - - նուշ, Հասկերն ա - - նուշ,  
 արտե - ըի մէջ մեր սերն ա - նուշ - 70 սերն ա - նուշ:

Մեզ են գարնան շնչով կանչում  
 Արտերը մեր,  
 Գաշտերը մեր,  
 Մեր երգն իրենց ծովը տանում  
 Հասկերը մեր,  
 Հանդերը մեր:  
 Արտերն անուշ,  
 Հասկերն անուշ,  
 Արտերի մէջ  
 Մեր սերն անուշ:

Արտերի մէջ հունձ կս անում,  
 Հունձ կս անում,  
 Խուրձ կս կապում,  
 Ծով է բերքը, նոր է երգը,  
 Երգ ու բերքով

Սեր կս անում:  
 Երգըդ անուշ,  
 Բերքըդ անուշ,  
 Սիրունիկ կար,  
 Քս սերն անուշ:

Հայրենիքին խօսք կս տըւել,  
 Խօսք կս տըւել,  
 Գործ կս արել,  
 Ծովի նման բերք կս աւել  
 Հայրենական  
 Մեր հանդերում:  
 Խօսքըդ անուշ,  
 Գործըդ անուշ,  
 Սիրեկան կար,  
 Քս սերն անուշ:

## ՀԱՐՍՆԻՔԻ ԵՐԳ

Մենք, ա՛յ ազուռոր աղջիկ, եկեր ենք ձերը,  
 Քեզ հազար նազերով 'տի տանինք մերը.  
 Շարէն շապիկով, ազիզ լաթերով,  
 Քեզ տանիլ ենք եկեր, մայրիկդ լացուր,  
 Ոտքդ խատէմ լի է, դուն մեզ խնդացուր:

Աղջիկ, քեզի բերեր ենք Ֆիլտիշի սանտըր,  
 Սըրմաթիլ մազերդ հիւսուած է ծանտըր,  
 Սէլվի պոյիդ վրայ հով ունիս ծանտըր.  
 Մի՛ լար, ազուռոր աղջիկ, եար եղիր ինձի,  
 Եախութ, գիւմրիւթ, անգին քար եղիր ինձի:

Աղջիկ մըն ալ կու տանին ալով ու լալով,  
 Ծամերն են հիւսեր սրմայի թելով,  
 Գլուխն ալ են ծածկեր լահօռի շալով.  
 Մի՛ լար, ազուռոր աղջիկ, եար եղիր ինձի,  
 Եախութ, գիւմրիւթ, անգին քար եղիր ինձի:

Հարսնուկ, քու հագածդ ալ է,  
 Ելիր խալուն վրայ քալէ.  
 Քալէ ու մանտըրտուկ քալէ,  
 Ալուկ փէշերդ վեր ծալէ:

Բաղնից դուռը զարկին սազը,  
 Ներուըտաքըդ հիւսեն մազըդ,  
 Տալուըտաքըդ քաշեն նազըդ,  
 Նազ ըրէ, նազըդ վերցընեմ,  
 Ալայ թօղ շաքար կերցնեմ:

## ԱՂՋԻԿ ԵՄ ՏԱՆԸ ԴՐԱԾ

Աղջիկ եմ տանը դըրած,  
 Արծաթ եմ ոսկեջըրած,  
 Նայ, նայ, նայ, նայ, նայ,  
 նայ, նայ, նայ, նայ, նայ,  
 Հօրս ու մօրըս ի՞նչ ասեմ,  
 Ճակատիս էս ա գըրած:

Սիրելի եմ, առնում եմ

Սիրաւերս,

Առնում եմ, չի տալիս

Անսիրտ մերս:

Սիրելի եմ սիրականըս,

Սիրելի, մընացել տանըս,  
 Ա՛հ արա, երկի՛ւղ արա,  
 Մի՛ էրի ջիւան ջանըս:

Մի ծառ ունիմ ծիրանի,  
 Քամին տերեւ կը տանի,  
 Քա՛մի, ինձնից արի, տա՛ր,  
 Անուշ եարիս մատանի:

Մատանի ոսկեջըրած,  
 Ա՛յ տըղայ, դու ինձ գըրած՝  
 Պատճառը ի՞նչ մեղք ունի,  
 Ես քո սիրով շղթայած:

ՂԱՐԻՊ ԱՂԲԵՐ

Գրի առաւ. Ա. Գ. ՄԵԼԻՖՈՆԵԱՆ

*Doloroso*  $\text{♩} = 200$   
 $\frac{4}{16} + \frac{3}{16} + \frac{4}{16}$  *mf*

Վե-րան ա-շու-ն, դառ-ներ գա-րու-ն,  
 Ճամ-բան բաց-ու-ն զար-իպ-նե-րու-ն,  
 Ղար-իպ դառ-նե-ր ի-ր վա-թա-նի-ն,  
 Չմեռ-նէ-ր զար-իպ մու-րա-տ սր-տի-ն,  
 Ղար-իպ աղբ-եր:

Ես կ'աղա-չեմ ըս-է ամ-ի-ն,  
 Ան-փորձ մը-նայ ծո-վու քա-մի-ն,  
 Դու խը-չիմ իս հը-տ դու գա-մի-ն,  
 Քու ու-չք ու մի-տք նը-չան-ած ի-ն,  
 Ղար-իպ աղբ-եր:

Գը-րիմ թու-ղթ մը-տամ ըդ սա-յի-ն,  
 Ար-իւն իջ-ի մէջ իմ սը-րտի-ն,  
 Քիւ-րաւ խը-լեց քու նչ-ան-ած,  
 Իմ ա՞լ խա-պու-լ է-նեց Աստու-ած,  
 Ղար-իպ աղբ-եր:

Քիւ-րաւ փը-լուց մե-ր օջա-խնե-ր,  
 Էլ չի քա-չու-իր էս սե-լ ցա-ւե-ր,  
 Երթ-ամ ըն-կնիմ յե-լման գե-տե-ր,  
 Ու-ր չը տե-սնիմ նոր գու-լու-մե-ր,  
 Ղար-իպ աղբ-եր:

Օսի-աթ կ'ենե-մ չեղ-նի մոռ-նա-ս,  
 Չըտ չու-ն ազ-գի ցա-ւ չի մոռ-նա-ս,  
 Քիւ-րաւ պէ-պախտ է, զէ-տ լէ  
 գի-տնա-ս,  
 Հաց վը-ր ծը-նկան, աչ-ք վը-ր  
 կը-նկան,  
 Չեղ-նի մոռ-նա-ս:

Վերան աշուն, դառներ գարուն,  
 Ճամբան բացուե՛ր զարիպներուն,  
 Ղարիպ դառների իր վաթանին,  
 Չմեռնէ՛ր զարիպ մուրատ սրտին,  
 Ղարիպ աղբեր:

Ես կ'աղաչեմ ըսէ ամին,  
 Անփորձ մընայ ծովու քամին,  
 Դու խըչիմ իս հըտ դու գամին,  
 Քու ուչք ու միտք նըչանած ին,  
 Ղարիպ աղբեր:

Գըրիմ թուղթ մըտամ ըդ սային,  
 Արիւն իջի մէջ իմ սըրտին,  
 Քիւրաւ խըլեց քու նչանած,

Իմ ա՞լ խապուլ էնեց Աստուած,  
 Ղարիպ աղբեր:

Քիւրաւ փըլուց մեր օջախներ,  
 Էլ չի քաչուիր էս սեղացաւեր,  
 Երթամ ընկնիմ յելման գետեր,  
 Ուր չը տեսնիմ նոր գուլումեր,  
 Ղարիպ աղբեր:

Օսիաթ կ'ենեմ չեղնի մոռնաս,  
 Չըտ չուն ազգի ցաւ չի մոռնաս,  
 Քիւրաւ պէպախտ է, զէտ լէ  
 գիտնաս,  
 Հաց վըր ծընկան, աչք վըր  
 կընկան,  
 Չեղնի մոռնաս:

## ԶԵՄ ՈՒ ԶԵՄ

### ԽՈՒՄԲ

Նազ աղջիկ, նազ աղջիկ, նազ մի անի,  
Դէ հլի, հլի խաղա:

### ԱՂՋԻԿ

Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, չեմ, չեմ ու չեմ,  
Չեմ կըրնա, կըրնա ես խաղա.  
Մազերուս, մազերուս ծանրութենէն,  
Չեմ ու չեմ կըրնա ես խաղա:

### ԽՈՒՄԲ

Նազ աղջիկ, նազ աղջիկ, նազ մի անի,  
Դու կըրնաս, կըրնաս խաղա.  
Մազերըդ, մազերըդ դիր պատուհան,  
Դու կըրնաս, կըրնաս խաղա:

### ԱՂՋԻԿ

Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, չեմ, չեմ ու չեմ,  
Չեմ կըրնա, կըրնա ես խաղա.  
Օղերուս, օղերուս ծանրութենէն,  
Չեմ ու չեմ կըրնա ես խաղա:

### ԽՈՒՄԲ

Նազ աղջիկ, նազ աղջիկ, նազ մի անի,  
Դու կըրնաս, կըրնաս խաղա,  
Օղերըդ, օղերըդ հան տուր մեզի,  
Դու կըրնաս, կըրնաս խաղա:

## ՆԱԽՇՈՒՆ ԱՔԻՐ

(ՂԱՐԱՅԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՎ)

Նախշուն աքիր,	Խոխան շկոլանըմ քըցալ,
Նախշուն աքիր.	Շկոլան փողը օզուճան,
Պաքվա պասիլկէն կերալըմ,	Ծատուրը ջան, մատուրը ջան,
Նախշուն աքիր.	Ծատուրը ջան, մատուրը ջան:
Սառ ջուրը երան խըմալըն,	Նախշուն աքիր,
Նախշուն աքիր.	Քեօխալան տոռնը թակուճ ա,
Եկ, եկ, Ծատուրը ջան,	Նախշուն աքիր,
Եկ, քե մատաղ, մատուրը ջան,	Եկ, եկ, Ծատուրը ջան,
Աչքերիդ, ունքերիդ,	Եկ, քե մատաղ, մատուրը ջան,
Ղալամիդ մատաղ,	Աչքերիդ, ունքերիդ,
Ծատուրը ջան, մատուրը ջան,	Ղալամիդ մատաղ,
Ծատուրը ջան, մատուրը ջան:	Ծատուրը ջան, մատուրը ջան,
	Ծատուրը ջան, մատուրը ջան:

ՈՉ ՄԻ ԾԱՂԻԿ ՔՈ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ ՉՈՒՆԻ

Աշուղ եմ էդ քո սեւ-սեւ աչերիդ,  
 էդ անուշ լեզուիդ, կեռ-կեռ ունքերիդ,  
 Մուշկ ու ամբար էդ երկար ծամերիդ,  
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,  
 Ոչ մի մայր քեզ պէս գեօզալ չի ծընի:

Բերանըդ աղբիւր, ատամըդ զարդ է,  
 Այտերըդ մարմար, կարծես թէ վարդ է,  
 Քեզ առնողը բախտաւոր մարդ է.  
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,  
 Ոչ մի մայր քեզ պէս գեօզալ չի ծընի:

Քո մօրը մատաղ՝ սր նա քեզ ծընեց,  
 Աշխարհիս միայն մի փերի յանձնեց.  
 Աշուղ Աշոտին նա երգիչ դարձրեց.  
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,  
 Ոչ մի մայր քեզ պէս գեօզալ չի ծընի:


ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

ՔԷԼԷ, ՔԷԼԷ

ՖՈՌԿԱ, ՖՈՌԿԱ

Քէ'լէ, քէ'լէ, քէլքիդ մեռնեմ,  
 Քո գովական խելքիդ մեռնեմ:  
 Սիրաւոր յորիկ, վիրաւոր յորիկ,  
 Լորիկ, սեւաւոր յորիկ, յորիկ ջան:  
 Քէ'լէ, քէ'լէ, սոյիդ մեռնեմ,  
 Քո չինարի բոյիդ մեռնեմ:  
 Քէ'լէ, քէ'լէ, քօղիդ մեռնեմ:  
 Քո լուսընկայ շողիդ մեռնեմ:  
 Քէ'լէ, քէ'լէ, բերնիդ մեռնեմ,  
 Քո սիրունիկ ձէնիդ մեռնեմ:  
 Քէ'լէ, քէ'լէ, ձէռիդ մեռնեմ,  
 Քո հուր-կըրակ սէրիդ մեռնեմ:  
 Քէ'լէ, քէ'լէ, աչիդ մեռնեմ,  
 Քու անուշիկ պաչիդ մեռնեմ:

Ա'յ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,  
 էս օր մեր տուն խարսնիս կայ,  
 Խարսնիս կանեմ՝ տեղ չըկայ,  
 Կոլոտ փեսին բեղ չըկայ:  
 Ջա'ն ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,  
 էս օր մեր տուն խարսնիս կայ,  
 Թաւէն ծակ է, եղ չըկայ,  
 Թաղա փեսին տեղ չըկայ:  
 Աղջիկ կայնէ կամըրջին,  
 Ոսկէ գընդեր ակնջին,  
 Գընա ասա զոնքըչին՝  
 Աղջիկ թող տայ կըտրիճին:  
 Ա'յ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,  
 էս օր մեր տուն խարսնիս կայ,  
 Փեսին շատ երես մի տայ,  
 Փեսին էյթիբար չըկայ:



Երևան — Խաչատուր Աբովեան պողոտայ

**ԳԱՐՈՒՆ ԵՐԵՒԱՆ**

Խօսք՝ Ա. ԳՐԱՇԻԻ

Երաժշտ. ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

*Meno mosso* ♩. 138-144

Գարուն ե՛րե՛ - - - ւան՝ - - - սի՛ - - րուն ե՛րե՛ - - - ւան,

Վար՝ գե՛ր եւ ճա՛մ - - քիս՝ - - - փը՛ - ում ե՛րե՛ - - - ւան,

ուր է՛ւ Գը՛ - նամ, ուր է՛ւ մը՛ - նամ, քեզ ե՛մ յա՛ - ւիպ - եան

սի՛ - րում ե՛րե՛ - - - ւան, - - - քեզ ե՛մ յա՛ - - ւիպ - եան

սի՛ - րում ե՛րե՛ - - - ւան - - - ի՛մ ջա՛կէ սը՛ր - փի վա՛ռ ու վա՛ռն քոն եւ երե՛ -

ւան, ի՛մ ժող - վըր՝ - - - քի ա՛ - նուջ այճի լոյսն եւ ե՛րե՛ - ւան, ի՛մ Հա՛ - յաս - փա -

Հի - - - ջարդն ես Ե - - - թե - - - ւան, ի՞նչ Հայաստան -

Հի - - - ջարդն ես Ե - - - թե - - - ւան:



ԱՇԽԱՐՀԱՆՈՉԱԿ ԻՐԱԺԵՏԱԳԻՏ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Նկար՝ Մ. Սարեանի)

Գարուն Երևան, սիրուն Երևան,  
Վարդեր եւ ճամբիս փրփուժ, Երևան:

Ուր էլ գընամ, ուր էլ մընամ,

Քեզ եմ յաւիտեան սիրում, Երեւան:

Իմ ջահել սրսի վառ ու վառման յոյսն ես Երեւան,

Իմ ժողովրդի անուշ աչի յոյսն ես Երեւան,

Իմ Հայաստանի զարդն ես Երեւան:

Ջուզուեւի, զարդարուեւի սիրուն աննըման,

Դու նորահարս ես դառել Երեւան,

Հայրենական գարնան գրկում

Ծաղկի՛ր, ծիծաղի՛ր, երգի՛ր Երեւան:

Իմ ջահել սրսի... եւայլն:

Երգը շրթունքիս կըռիւ գընացի.

Քո կեանքի համար անվախ կուռեցի,

Կըրակ կըռուում, կըրակ հեռուում,

Պատկերիդ պայծառ կարօտ մընացի:

Իմ ջահել սրսի... եւայլն:

### ԼՈՐԻԿ

Գացի արտեր, բըռնի լոր,

Աղջիկ տեսա եայլի ձոր,

Նըման էր կարմիր խընձոր.

Լորիկ, գարնան փառեր

Դու վարդ արիւ, յորիկ:

Նըման եր կարմիր խընձոր,

Լորիկ, յորիկ, յորիկ, յորիկ,

Լորիկ, գարնան փառեր

Դու վարդ արիւ, յորիկ:

Արեւ դիպաւ սարերուն,

Կաքաւ թըռաւ քարերուն,

Լորիկ կայնե վեր դարուն:

Ջուր կուգայ գոչգոչալէն,

Գըլխուդ ես գըցե վալէն,

Լո՛ր, չես հարցնե իմ հալէն:

Քար մի՛ թալի մեր զըշին,

Թող դայ նըստի քու թըշին,

Կըրակ տու դարիք փըշին:

### ՊԱՐԵՐԳ ԹԱՄԶԱՐԱՅԻ

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա,

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա:

Աղջիկ, դու ինձ հար կ'ըլլա՞ս,

Դարդերուս դարման կ'ըլլա՞ս:

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա,

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա:

Աղջիկ մազերըդ թուխ է,

Էս ի՞նչ բարութի մուխ է,

Մուխ հանողը քոռանայ,

Ինձի քեզի մոռանայ:

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա,

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա:

Մեխակի ծառ եմ տընկեր,

Քեզ համար հիւանդ ընկեր,

Օխտը տարի տեւում է,

Օտար երկիր եմ պառկեր:

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա,

Լէ Լէ Լէ Լէ Թամզարա:

## ՀՈ՛Վ ԱՐԷՔ

Moderato

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

հո՛վ ա—րէք սա—րեր ջան հո՛վ ա—րէք.

իմ դար—գին դար—ման ա—րէք:

Սա—րե—րը հո՛վ չեն ա—նում...

իմ դար—գին դար—ման ա—նում:

Լե՛ն տեր ա՛մ—տեր մի քիչ զով ա—րէք.

վա—րար ա՛ն—ջրե թափէք ծով ա—րէք.

Գե՛շ մա—ր—դու օր—ա—րե—ւը

Սե հո—ղի տա—կով ա—րէք:

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զո՛վ  
 արէք, արէք,  
 Իմ դարդին դարման արէք: Վարար անձրիւ թափէք, ծո՛վ  
 — Սարերը հով չեն անում, արէք,  
 Իմ դարդին դարման անում: Գե՛շ մարդու օր-արեւը



ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅ ԶԻԱԻՈՐ

Moderato

Սա-րէն կու-գայ ձի-ա-ւո-ր վայ Լէ Լէ  
 Լէ, Լէ. Մեր տու-նը չար-տա-խա-ւոր.  
 ըն-ջը-լիկ փրնջը-լիկ կարճը-լիկ Եար-ճար-... Եար-

Սարէն կուգայ ձիաւոր,  
 վայ լէ, լէ, լէ, լէ,  
 Մեր տունը չարտախաւոր,  
 Ինջիլիկ փրնջըլիկ կարճըլիկ  
 Եար, Եար.  
 Ինջիլիկ փրնջըլիկ կարճըլիկ  
 Եար, Եար.

Հրէս եկաւ իմ աղբէր,  
 Երեք օրուան թագաւոր:  
 Ծառերի հովին զուրբան,  
 Իմ եարի պոյին զուրբան,

Երկու օր ա չեմ տեսել,  
 Տեսնողին աչքին զուրբան:

Անձրեւ եկաւ չաղալէն,  
 Ուռու տերեւ դողալէն,  
 Հըրէս եկաւ իմ աղբէր,  
 Ալ ձին տակին խաղալէն:

Ճամբա՛յ տուէք առաջ գամ,  
 Սիրած եարիս բարեւ տամ,  
 Ուխտ եմ արել որ առնեմ,  
 Թող տեսնի աշխարհ ալամ:

ՊԱՐԵՐԳ

Մայրս մանէ մանածըս,  
 Գնա քաղէ ցանածըս,  
 Պապըս հարսնիք է բռներ,  
 Չեմ ճանչնար նշանածըս:  
 Ամպը լեցուեր ձուն կուգայ,  
 Իրկուն կ'ըլլայ տուն չի գայ,  
 Այսպէս չոր բարձի վրայ,  
 Առանց եարի քուն չկայ:  
 Այս ի՞նչ բարձրկեկ լեռ է,  
 Զուրը հիւանդին գեղ է,

Սիրած սիրածին չեն տար,  
 էս ի՞նչ տնաւեր տեղ է:  
 Թռչունի նման ըլլայի,  
 Թռչէի քովըդ գայի,  
 Բարձիդ վրայ կանգնէի,  
 Սոխակի պէս խօսէի:  
 Սէրը ի՞նչ է, սիրուիլն ի՞նչ է,  
 Կըտրիճ, քու սէվտան ի՞նչ է,  
 Ծառը բարձր, պտուղը քաղցր է,  
 Զեռք չի հասնիր, օգուտն ի՞նչ է:

## ԱՐԻ ԵՐԹԱՆՔ

Արի երթանք սարն ի սէյրան,  
Դու կը նմանիս չողի ջէյրան,  
Սէֆիլ տղէն քեզի հէյրան,  
Կայնի՛, սէյր անեմ, սէյր անեմ,  
Ջամայ բոյիդ հայրան եմ:

Դու ման կուգաս վերի-վերի,  
Կրակն ընկել սիրտըս կերի,  
Քու մօրն ասա՛ մէկն էլ բերի,  
Կայնի՛, սէյր անեմ... եւլն.:

Դու ման կուգաս կըտըրները,  
Սաղրի մաշիկ կըռընկները,

Գիւլաբաթին պըռնկները,  
Կայնի, սէյր անեմ... եւլն.:

Դու էլեր ես կ'երթաս ի բեր,  
Ոչ բերն էլնի, ոչ բերատէր,  
Ինձի թողի խեղճ ու անտէր,  
Կայնի՛, սէյր անեմ... եւլն.:

Դու կայներ ես լըւացք կ'անես,  
Շամամ ծըծերըդ բաց կ'անես,  
Ինձ տեսնելիս սուտ լաց կ'անես,  
Կայնի՛, սէյր անեմ... եւլն.:

## ՈՒԽՏ

Էջմիածին երթամ ուխտ,  
Պագնեմ սեղան ջուխտէ ջուխտ,  
Կանչեմ զօրաւոր սըրբեր,  
Իմ հիւանդին անեմ թուղթ:

Անարատ-կաթ Ասուածածին,  
Դու ողջ պահե նանի բալին:

Լուսաւորչի ծառները,  
Մատաղ անեմ գառները,  
Լուսաւոր զօրքիդ մեռնեմ,  
Ջոկել ես արդարները:

Էջմիածին, քո վանքը  
Լիքն ա Աստըծու բանքը,  
Աղաչեմ Լուսաւորչին,  
Պահէ իմ տըղի կեանքը:

## ԼԷ՛Պ ՇՕ, ԼԷ, ԼԷ

Լէ՛պ հօ՛, լէ՛ լէ՛, լէ՛պ հօ՛,  
լէ՛, լէ՛,

Լէպ հօ՛, լէպ հօ՛, լէ՛պ հօ, լէ.  
Ձեր տան տակին վար կանիմ,  
Չար Քրդերին քար կանիմ,  
Ով իմ սիրածն ինձի տայ,  
Գըժութիւնս թարկ կ'անիմ:

Էն սարը բարձըր սար ա,  
Տակը զընճըլած քար ա,  
Ես քեզ էնտեղ սիրեցի,  
Էդ ո՞վ արաւ աշկարա:

Եաղի դուղը սառել ա,  
Աչքիս լուսը մարել ա,  
Վա՛յ էն շըմշատ աչքերին,  
Ուշքըս միտքըս տարել ա:



ԱՇԽԷՆԻ ԵՐԳԸ

Թա-լի-շու ճամ-բէն դուզ ա, Եար, ամ-ման, ա ման, ա ման, ա ման,  
 էյ, ո՛ւյ, ամ-ման-- ա ման, էյ, ո՛ւյ, ամ-ման, Ան տոն կայներ Աշխէն կու գայ,  
 խո-րոտ էր Աշ-խէ-նը. կո-լոտ էր---- Աշ-խէ-նը:

Թալիշու ճամբէն դուզ ա,  
 Եար ամմա՛ն, ամա՛ն, ամա՛ն, ամա՛ն, է՛յ,  
 Ո՛ւյ ամմա՛ն, աման է՛յ, ո՛ւյ ամման.

Անտոն կայներ՝ Աշխէն կուգայ,

խորոտ էր Աշխէնը,

կոլոտ էր Աշխէնը:

Ինձ պէս տըղէն քեզի հետ,  
 Եար ամմա՛ն, ամա՛ն, ամա՛ն, ամա՛ն, է՛յ,  
 Ո՛ւյ ամմա՛ն, աման է՛յ, ո՛ւյ ամման.

Աստուած վըկայ լաւ կը սազայ:

Մարգարի դուռը դուզ ա,  
 Աշխէն կայներ՝ Անտոն կուգայ.

Երկու հարիւրն ի՞նչ անէ,

Իմ հէրը շատ բաշլըղ կուտայ:

Սեւ փուշին վիզս եմ գցել,

Կրակը սիրտս եմ լցել,

Թամամ հինգ օր չեմ տեսել,

Իմ հարը միտս եմ գցել:

ԷՍ ԶՈՒԼՈՒՄ ԴԱՐԴԸ

Հագեր ես կարմիր, կայնել ես կալը,  
 Օրըս սեւ արիւր, կապեր ես ալը,  
 Փըշերն ինձ թողիր, դուն քաղիր վարդը,  
 Դուն սիրտըս գըցիր էս զուլում դարդը,  
 Դարբէգար արիւր ու դադար չունիմ,  
 Դարգամահ արիւր, անունի՛դ մեռնիմ...

# ԴԻԼԲԱՐ ԶԱՆ

Moderato

Դաշնաւորեց՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

The musical score is arranged in three systems, each with four staves (Soprano, Alto, Tenor, Bass). The lyrics are written in Armenian script below the vocal lines.

**System 1:**

- Soprano: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան
- Alto: (rest)
- Tenor: Դիլ Բար ջան
- Bass: Դիլ Բար ջան

**System 2:**

- Soprano: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան
- Alto: (rest)
- Tenor: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան
- Bass: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան

**System 3:**

- Soprano: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան Դիլ Բար ջան եւ սա
- Alto: (rest)
- Tenor: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան Դիլ Բար ջան եւ սա
- Bass: Դիլ Բար ջան Դիլ Բար ջան Դիլ Բար ջան եւ սա

րէն կու գա ճ Ձեր բաղ ջին մրտ նիմ դիլ բար ջան

րն զի կը գրտ նեմ սի թուն ջան ջան ջան ջան

դիլ բար ջան դիլ բար ջան դիլ բար ջան դիլ բար ջան

Դիւթա՛ր ջան, Դիւթա՛ր ջան,  
 Դիւթա՛ր ջան, Դիւթա՛ր ջան, Դիւթա՛ր ջան,  
 Դիւթա՛ր ջան,  
 Ես սարէն կուգամ,  
 Ձեր բաղջան մտնեմ,  
 Դիւթա՛ր ջան,

Քեզի կը գտնեմ, սիրո՛ւն ջան,  
 Զա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, Դիւթա՛ր ջան,  
 Դիւթա՛ր ջան, Դիւթա՛ր ջան, Դիւթա՛ր ջան:

### Փ Ա Թ Պ Ա Ր

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,  
 Եարիս տուեր ծո՛վ լինի,  
 Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,  
 Եարս քամարով լինի:  
 Դե՛, քրո՛ք, քրո՛ք,  
 Հո՛ղր հանենք,  
 Մեր քրեամու դո՛ղր հանենք:  
 Ծաղիկ ես ծաղկանց միջին,  
 Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,  
 Մի հատ ես աղջկանց միջին,  
 Եարիս տուեր ծո՛վ լինի,  
 Եա՛ր, ինձ պարզերես արա,  
 Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,

### ԿՈՂԲԱՅ ԵԱՅԼԻ

Կողբայ ելան սելերը,  
 Կըտրան հոգուս թելերը,  
 Կամաց քըշէք սելերը,  
 Կապեմ չուլքուս թելերը:  
 Այ եղնիմ, այ եղնիմ,  
 Դոճիդ վրայ խալ եղնիմ,  
 Թուերդ պագնեմ զօր գիւեր,  
 Ես քո սիրած ետրոն եմ:  
 Աղջի գընանք մեր բաղչէն,  
 Բանանք մեր սրտի բողչէն,  
 Պագըմ դու տուր, պագըմ ես,  
 Թող դու շմաններն ամաչեն:  
 Այ եղնիմ, այ եղնիմ,  
 Դոճիդ վրայ խալ եղնիմ,  
 Թուերդ պագնեմ զօր գիւեր,  
 Ես քո սիրած ետրոն եմ:

Ա. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

Իմ ընկեր մարդկանց միջին,  
 Եարս քամարով լինի:  
 Դե՛, քրո՛ք, քրո՛ք,  
 Հո՛ղր հանենք,  
 Մեր քրեամու դո՛ղր հանենք:  
 Արի՛, մի փաթպար խաղանք,  
 Տընկող մընանք, չը կաղանք,  
 Հարսանիքիդ ալիւրը  
 Մուղնու ուխտից վաղ աղանք:  
 Իրար հետ բաղը գընանք,  
 Ուտենք, խըմենք, լիանանք,  
 Թըշնամու աչքը հանենք,  
 Մեր Աստըծուց գոհանանք:

### ՏՈՒՆ ԵՄ ՇՈՆԵԼ

Տուն եմ շինել գետու բերան,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար.  
 Վըրէն թալեմ ջուխտըմ գերան,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար:  
 Մէկն էր ուռի, մէկն էր ծիրան,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար.  
 Ծիրան կաթէր ետրոջ բերան,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար:  
 Հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար:  
 Զուրն եկէր էն սարերէն,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար,  
 Եկեր թափեր քարերէն,  
 Հօ՛յ նար, ջանըմ նար:

## ԾՈՎՈՒՆ ԽԱԻՔ ՄԸ ԿԷՐ

Ծովուէն խաւք ըմ կէր, անուէն էր արօր,  
Վըզիկն երկէն էր, սըրտիկ՝ սեւաւոր,  
Կապեմ բէչարէս, երթամ խեա ինոր,  
էն իմ դարդ գիտի, ես էլ գէօ ինոր:

Արե՛, եա՛ր, արե՛, խրոով մի՛ մընա,  
Ասբուորիս մալ ձիկ, քե չի մընայ:

Ես վերի ոչխար վէր ցասման քարին,  
Թ՛ ըվանքով զարկին պըրինտար արին,  
Խապրիկ մի տարէք իմ Սօնա եարին,  
Թո՛ղ առնի դարման, գայ վէր իմ եարին:

Արե՛, եա՛ր, արե՛, եւլն.:

Պոստան մ՛եմ դրե վէր էնա դարին,  
Աստուած աւերէր էս տարւան տարին,  
Չէ՛ լաւ մէկ շամամ օրօխկի եարին,  
Շամամ թոռումաւ, իմ եար խըռովաւ:

Արե՛, եա՛ր, արե՛, եւլն.:

Իգի մ՛եմ տընկե—վարդ խազար ու բիւր,  
Պաղչէ մ՛եմ տընկե—վարդ խազար թավուր,  
Կանչեմ, եա՛ր, արե՛—սարեր լացուցեմ,  
Շատ կարիպ—կուրպաթ ճամխէն դարձուցեմ:

Արե՛, եա՛ր, արե՛, եւլն.:

Ծրծւերդ էր ուռե, ես ասի նուռ էր,  
Ասի ձեռ պարզեմ, դիւ ասիր ժուռ էր,  
Թէ ժուռ թէ խասուէն, մօտ ձիկ կապուլ էր,  
Քաղցր լեզւին մեռնեմ, անուշ պըլպուլ էր:

Արե՛, եա՛ր, արե՛, եւլն.:

էս օր ի՞նչ օր ի, պախս ի ուրբաթի,  
Եարոջըս մեռնեմ, կարիպ կուրպաթ ի,  
Աղջիկ, քեօ գըլուխ արծըթէ թաս ի,  
Խորած վարդապետ կ՛ասի չը խասի:

Արե՛, եա՛ր, արե՛, եւլն.:

Ըստամբուլ քաղաք վէր Սեւ Ծովերաց,  
Կարիպ եմ ճամխէ ետեւ սարերաց,

Կարիպիս մեռնեմ՝ իր ճամխներաց,  
Կարօտ մնացի թուխ-թուխ աչերաց:

Արե՛, եա՛ր, արե՛, ելլն.:

Մըտեր ես իգին, խավող կը քաղես,  
Շամամ ծըծւերով շաքար կը մաղես,  
Ալմաստ խանչալով սըրտիկս կը դաղես,  
Աչքով, ընքերով դիւ ձիկ կը մաշես:

Արե՛, եա՛ր, արե՛, ելլն.:

Էլեր ես իգին, աւուզ ջուր կուզայ,  
Քաֆուր վարդ բացւե, անուշ խոտ կուզայ,  
Իմ խէրանց իգին վարդ խաղար թավուր,  
Մէջ էն վարդերաց իմ վարդն ի քաֆուր:

Արե՛, եա՛ր, արե՛, ելլն.:

Երկինքն ի ամպե, կուզեայ մարմար ձիւն,  
Կուզեայ կը թափի վէր մալուլ մարդուն,  
Մէկ ե՞ս եմ մալուլ, թէ աշխարհ պիթուն,  
Աստուած աւերէր նամարդ մարդու տուն:

Արե՛, եա՛ր, արե՛, խրուով մի՛ մրնա,  
Ասրուորիս մալ ձիկ քե չի մրնայ:

### ԱՅ, ԱՅ ՆԱԶԵՐՈՎ

Ես քեզ տեսայ  
Երբ կուզայիր հով սարից.  
Դուն կ'երգէիր  
Էջխով տարուած քո եարից.  
Բըլբուլն առաւ  
Անուշ ձայնըդ ու լըռեց.  
Ես գինովցայ  
Էն քո երգած հուր սէրից:

Ա՛յ, ա՛յ նազերով,  
Ա՛յ, ա՛յ սազերով սարն եկար.  
Ա՛յ, ա՛յ նազերով,  
Վարդի փրնջերով տուն եկար:

Ես քեզ տեսայ  
Վարդի թըփի մօտ կանգնած,  
Կոյս վարդերով  
Շուշան կուրծքըդ զարդարւած.  
Քեզ նայողներն  
Քո բոյր գեղով շիկնեցան,  
Ես մնացի  
Անհուն սիրով կարօտած:

Ա՛յ, ա՛յ նազերով,  
Ա՛յ, ա՛յ սազերով սարն եկար.  
Ա՛յ, ա՛յ նազերով,  
Վարդի փրնջերով տուն եկար:



ԱՇՈՍԱՏԱՆՔԻ ԵՐԳ

Խօսք՝ Գ. ՍԱՐԵԱՆԻ  
Allegro moderato

Երաժշտութիւն՝ Ա. ՍԱԹԵԱՆԻ

փառք քանիք զք զին ու եր — զին, մեր հազար փառք ըստեղծութիւն — զին,  
 փառք քանիք քեզ — զին, փառք քանիք կրն յո զին, փառք քանիք աշխարհին բաւ զի՛ քե-րն-դին:  
 փառք քանիք քեզ — զին, փառք քանիք կրն յո զին, փառք քանիք աշխարհին բաւ զի՛ քե-րն —  
 զին (երգել փակ թերթով) — — — — —  
 փառք քանիք քեզ — զին, փառք քանիք կրն յո զին, փառք քանիք աշխարհին բաւ զի՛ քե-րն —

Փառք տանք մեր ջրբին ու հողին,  
 Մեր հողում՝ կեանքն ըստեղծողին,  
 Փառք տանք ցանողին, փառք տանք հրնձողին,  
 Փառք տանք աշխարհին թարիք բերողին:  
 Աշխատող մարդն է ըստեղծում,  
 Աշխարհում ամէն ամէն բան,  
 Աշխատող մարդու ձեռքն ամէն գործում,  
 Պտղատու ծառի ճիւղի է նրման:  
 Գործն է միշտ կեանքին փայլ տալիս,  
 Աշխատանքն երբեք չի մարում,  
 Նա սերունդների ձեռքով է գալիս,  
 Ու յար յաւիտեան մընում աշխարհում:  
 Փառք տանք մեր ջրբին ու հողին,  
 Մեր հողում կեանքն ըստեղծողին,  
 Փառք տանք բանուորին ու կառուցողին,  
 Փառք տանք աշխատող բոլոր բոլորին:

ԱՅ, ԾԱՄ ԿՏՐԱՍ

ՄԱՅՐ

Ա՛յ ծամ կըտրած, դէ արի ցած,  
Նախիր գընաց, կով տուն մընաց,  
Դատարկ կըժեր, լալկան ճըժեր  
Անտէր թողած.

Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ,  
Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ:

ԱՂՋԻԿ

Ադէ, ադէ, կարըս լուսին,  
Սարէն իջաւ թըւանքն ուսին,  
Ես էլ կըժեր չեմ լըցնի,  
Լալկան ճըժեր չեմ հագցնի,  
Սիրաս է եարոտ, եարիս կարօտ,  
Ճամբէն քարոտ.

Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ,  
Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ:

ՄԱՅՐ

Աման աղջի, կէս գիշերին  
էդ ո՞վ կըպաւ քո թըշերին,  
Քեզ ո՞վ սիրեց, ո՞վ թըշերիդ  
Վարդեր բացեց.

Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ,  
Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ:

ԱՂՋԻԿ

Գիշերն էր ուշ, գիշերն էր նուշ,  
Կ'երգէր սոխակ անուշ-անուշ,  
Լուսինն ելաւ աշխարհ պատեց,  
Երազն ելաւ սիրտըս պատեց,

էլ չիմացայ, ո՛վ թըշերիս  
Վարդեր բացեց.

Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ,  
Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ:

ՄԱՅՐ

Քեզ սիրողի խասը խամբի,  
Չարժանանայ նա լաւ օրի,  
Որ քո թըշեր, պարզկայ գիշեր,  
Վարդ չընաշխէր.

Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ,  
Վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ, վո՛ւլ:

ԱՂՋԻԿ

Աստղեր գիտեն, լուսին գիտէ,  
Ես մեղք չունեմ, ազիզ ադէ,  
Անէ՛ծ քըդ թող օրհնանք դառնայ,  
Չար խօսքըդ թող չասուած  
մընայ,

Ա՛խ իմ թըշեր պարզկայ գիշեր  
Եարս էր նաշխեր.

Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ,  
Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ:

ԽՈՒՄԲ

Ջան ուշ գիշեր, աստղեր զառ-  
վառ,

Սէրը սըրտի ալ վարդից վառ-  
Ջան ուշ գիշեր, սիրած թըշեր,  
Անուշ եարն էր վարդեր նաշխեր:

Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ,  
Տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ, տո՛ւլ:

ԾԱՌԻՍ ՏԱԿԸ ԿԱՆԱԶ Է

Ծառիս տակը կանաչ է,  
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Իմ կարն ինձի ճանաչ է,  
Ջա՛ն, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Ղուրբան կ'եղնեմ իմ կարին,  
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

Սիրուն թենէն կ'ամաչէ:  
Ջա՛ն, լէ, լէ, լէ, լէ, լէ...  
Բագըմ ունիմ՝ խամուշ ա,  
Միջի մէյվէն անուշ ա,  
Մի՛ք մեղ անի մեր ու քիր,  
Սրտով սիրածն անուշ ա:

**ԵՂՍՕ ԶԱՆ**

**ԽՈՒՄԲ**

Եղսօն նրստե կով կը կըթէ,  
Յակօն եկե դուռ կը արփէ.

Էն ո՞վ է.

— Յա՛կօն ե...

Եղսօն կ'ուզէ, շատ բան կ'ուզէ,  
Առանց խոստում դուռ չի

բանայ,

Յակօն կ'ըսէ, կուտամ կ'ըսէ,  
Ինչ որ հարիս սիրտն ուզենայ:

Հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛. հօ՛, հօ՛,

Եղսօ ջան:

**ԵՂՍՕ**

Գօտիկ կ'ուզեմ սաղաֆ յարած,  
Մաշիկ կ'ուզեմ ոսկով կարած:

**ԽՈՒՄԲ**

Կոտրուկ մէջքին գօտիկ կ'ուզէ,  
Քոթուկ ոտին մաշիկ կ'ուզէ:

**ՅԱԿՕ**

Աչքիս վերայ գընամ առնեմ,  
Քո կարօտից մի թող մեռնեմ:

**ԽՈՒՄԲ**

Ուզէ Եղսօ, էլի ուզէ,  
Ասա, էլ ի՞նչ քեզ կը սազէ:

**ԵՂՍՕ**

Մատնոց կ'ուզեմ, գոհար շարեմ,  
Ակնոց կ'ուզեմ, նամակ գըրեմ:

**ԽՈՒՄԲ**

Կոտրուկ մատին մատնոց կ'ուզէ,

Բարդան քրթին ակնոց կ'ուզէ:

**ՅԱԿՕ**

Ասա էլ ի՞նչ կ'ուզես առնեմ,  
Սիրուն իղսօ, չարըդ տանեմ:

**ԽՈՒՄԲ**

Ուզէ Եղսօ, էլի ուզէ,  
Ասա, էլ ի՞նչ քեզ կը սազէ.

Հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛,

Եղսօ ջան,

Հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛,

Եղսօ ջան:

**ԵՂՍՕ**

Չարդեր կ'ուզեմ վըզիս կախան,  
Սիրտըդ կ'ուզեմ հեաը խաղամ:

**ԽՈՒՄԲ**

Երկար վըզին զարդեր կ'ուզէ,  
Հա՛մ սիրա կ'ուզէ, հա՛մ սէր

կ'ուզէ:

**ՅԱԿՕ**

էդ ի՞նչ ասիր, իմ Եղսօ ջան,  
Քո էդ եղնիկ սըրտին զուրբան:

**ԽՈՒՄԲ**

Դէ դուռը բաց, ա՛յ տընաւեր,  
Տես ինչ է քեզ բերել նըւէր:

Եղսօն ուզեց, շատ բան ուզեց:

Յակօն ըսաւ, կուտամ ըսաւ,

Եղսօն ոչինչ ձեռք չըբերեց,

Իր մուրազին Յակօն հասաւ:

**ԾԻՐԱՆԻ ԾԱՌԻ ՏԱԿԻՆ**

(ՅՈՒԱԿԻ)

Ծիրանի ծառի տակին,  
Յուլակ ջան, եար ջան, արի:

Աչնով արի քո եարին,

Արի, եար ջան, շուտ արի:

Հենց որ ծագի արեւը,

Քեզի դըրկեմ բարեւը:

Աչնով արի քո եարին, եւլն.

Սարերի ծաղիկ վարդը,

ինձ վառել ա քո գարդը:

Աչնով արի քո եարին, եւլն.

Ելել ես կ'երթաս արտը,

Գըլիսիդ զարկել ես վարդը:


Աչնով արի քո եարին, եւլն.

# ԻՄ ԵՐԳԸ


Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ Գ. Մ. ԱԼԷՄԵԱՅԻ


Lento  $\text{♩} = 44$  *p* con molto sentimento



Գանձեր ունեմ անտակ ան—ծէր,



Ես հարուստ եմ, ջան, ես հա—րուստ .




Մով բարութիւն շը—նորհք ու սէ— All<sup>o</sup> mod<sup>o</sup>  
2




ճոխ պարգեւի հիմ ա—ռել վերուստ—նել վերուստ:

*p* **Meno mosso**  $\text{♩} = 76$




Ան—գին հանքը հիմ գանձե—րի, Սքրտիկս է շէն ու ա—զատ  
Եար նա նա նայ ջան նա նա նայ, Եար նա նա նա նա




Ինչ քան էլ սր բաշխեմ ձը—րի, Սէրն անվերջ է ու անհատ:  
Եար նա նա նայ ջան նա նա նայ, Եար նա նա նա նայ:


*mf* **stesso tempo**




Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես Գողից շա րից, շոր փորձանքից.



Աշխարհքով միմ ահա էս պէս Ետի եմ տա—լիս հիմ բարձունքի:



Ես հարուստ եմ ես բախի տաւոր հիմ ծընընդ ծան պայծառ օրէն:



Էլ աշխարհ չեմ գալու հօ նոր, Իր տըւածն եմ տալիս իրեն:

*p* > *cresc. e accel. poco a poco*

Եար եա եա եա, ջան եա եա եա, եար եա եա եա եա...

Եար եա եա եա, ջան եա եա եա, եար եա եա եա եա:



ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՆ  
(1907—1947)

Գանձեր ունիմ անտակ, անձէր,  
Ես հարուստ եմ, ջան, հարուստ,  
Ծով բարութիւն շնորհք ու սէր,  
Ճոխ պարգեւ եմ առել վերուստ:

Անդին հանքը իմ գանձերի,  
Սրտիկս է շէն ու ազատ,  
Ինչքան էլ բաշխեմ ձրրի,  
Սէրն անվերջ է ու անհատ:

Երկիւղ չունեմ, ան չունեմ ես,  
Գողից, չարից, չար փորձանքից,  
Աշխարհով մին անա էսպէս,  
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես ըստաւոր,  
Իմ ծընընդեան պայծառ օրէն,  
Էլ աշխարհ չեմ գալու, հօ՛, նոր,  
Իմ տըւածն եմ տալիս իրեն:

### ԱՌՆԵՄ ԵՐԹԱՄ ԷՆ ՍԱՐԸ

Առնեմ, երթամ էն սարը,  
Առնեմ, երթամ էն սարը,  
Առնեմ, երթամ էն սարը,  
Սէր անելով իմ կարը:

Վըրան եմ գարկել դարին,  
Պայման եմ դըրել տարին,  
Տարին թող դայ, լըրանայ,  
Հեաը բերէ իր բարին:

Առնեմ, երթամ էն սարը,  
Առնեմ, երթամ էն սարը,

Առնեմ, երթամ էն սարը,  
Սէր անելով իմ կարը:

Հէնց որ ծաղկի արեւը,  
Քեզի զըրկեմ բարեւը,  
Իմ անամ գու իմ կարն ես,  
Առնեմ, ելնեմ վերեւը:

Քարի տակին պաղ աղբիւր,  
Լիքձաթի թաս, ոսկի ջուր,  
Ես կը վառիմ քո սիրուն,  
Մի թաս ուզեմ, երկուս տուր:

# ՆԱԶԵՐ

Խօսք՝ ժողովրդական

Երաժշտութիւն՝ Գ. Մ. ԱԼԷՄՇԱՀԻ

**Largo** ♩ = 44 **3** *p dolce e con amore*

Նոր է բաց ւել — բարի  
 էս ձորն ի վեր — ձր-նե-

Լոյս,  
 -փակ:

Մէկ տեղ կ'եր-թանք — դար ի  
 դու նը-մա-նիս — ար-

*mf rubato* *p a tempo*

դուս .  
 -դակ .

Բո-բիկ մի քե-լէ փու-շ է:  
 Բո-բիկ մի քե-լէ փու-շ է:

**Moderato** ♩ = 84 *mf giocoso*

Սիրունիկ պաշտ ա-նուշ է:  
 Սիրունիկ պաշտ ա-նուշ է:

Հով կը փը-շէ  
 Երկնից կա-մար

սարն ի վեր,  
 ուն-քե-րդ,

Ար-տուտ կ'ել-լէ դարն ի վեր,  
 ին ծի վա-նեց քու սե-րդ,

*p animando e cresc.*

Աղ-ջի ա-նու-շիկ նա-զեր-...  
 Մատաղ լի-նեմ սեւ ա-չիւ-...  
 Խել-քրս տա-րաւ  
 Ես կա-րտն եմ

**pp**

քու մա-զեր,  
 քու պա-չիւն,  
 քու մա-զեր .  
 քու պա-չիւն .  
 եար եւ...-ր  
 եար եւ...-ր

*p rit. mf a tempo*

եւ...-ր եար-  
 եւ...-ր եար-  
 Աղջի ա-նու-շիկ նա-զեր-...  
 Մատաղ լի-նեմ սեւ ա-չիւ-...

*animando e cresc.*

Խել քրս տա-րաւ  
 Ես կա-րտն եմ

քու մա-զեր .  
 քու պա-չիւն .  
 քու մա-զեր:  
 քու պա-չիւն:

**D.C. Fin**

Նոր է բացուել բարի լուս,  
 Մէկտեղ կ'երթանք դար ի դուս:  
 Բոբիկ մի' ֆէլե, փուլե է,  
 Սի'րուհիկ, պագդ անուլե է:  
 Էս ձորն ի վեր ձընեփակ,  
 Դու նըմանիս արեզակ:  
 Հով կը փըչէ սարն ի վեր,

Արտուա կ'ելնէ դարն ի վեր:  
 Ա'ղջի, անուշի'կ նազեր,  
 Խելքս տարաւ քու մազեր:  
 Երկնից կամար սնքերդ,  
 Ինծի վառեց քու սէրդ,  
 Մատաղ լինեմ սեւ աչին,  
 Ես կարօտ եմ քու պաչին:

### ՍԻՐԵԼԻՍ


Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ Գ. Մ. ԱԼԵՄՇԱԶԻ


Andante  $\text{♩} = 112$

3

*pp con amore*




Սիրի — իս մի չա — տիկ ես,




*p* Աշ-խարհքի մէջ

մի չատիկ ես —


*mf* Ես մեանիմ




քե-զի մատաղ — Դուն ծաղկիք մի չա-տիկ — ես —




*mf* Նազե-լիս ինչ մեղք ունիմ, Հոգիս ե-լաւ ինչ մեղք ու-



-նիմ, Սիրտըս սի-րեց ինչ մեղք ու — նիմ —



*u tempo* Նա-զե-լիս ինչ մեղք ունիմ, Սիրե-լիս մի արունք է



Մի կեանք կը-տրես մի արունք է, Թէ մի մատաղ սըր-



-տիկ կո-տրես Սիրե-լիս — եօթնա — բունք է —



### ԲՈՒԽՈՒՐԻԿ


Խօսք՝ Հ. Վ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

Երաժշտ. Գ. Մ. ԱԼԷՄՇԱՀԻ


Lento  $\text{♩} = 46$

14


*p con nostalgia*




Մըխտ Ժը—խտ ով բուխու—րիկ հայ—րե—




-նի ————— Կա—րօ —տան—քիս ալ—բու —մով-----




Ես հե —ուս եմ բայց ծուխդ հոգւսս կը հաս —նի—




----- Իմ սա —րե—բուս հո—վե —բով-----




Իրեթուած հիւ —ղակ սը—րինգ—նե—բով հո—վուս—




-կան — Դա—ւա—րին մէջ Լուս բը—նով, Ան—գամ մը




գէթ քաղցրութեանդ մէջ մայ —րա—կան — Գայի ա—



-նուշ Ե—րա—գով : Մըխտ, Ժը—խտ ով բուխու—



-րիկ հայ—րե —նի ————— Կա—րօ —տան.քիս



ալ—բու —մով: —————

Ծըխէ՛, ծըխէ՛, ով բուխուրիկ հայրենի,  
 Կարօտանքիս այրումով,  
 Ես հեռու եմ, բայց ծուխդ հոգւոյս կը հասնի,  
 Իմ սարերուս հովերով:

Դիւթուած հիւղակ՝ սըրինգներով հովուական,  
 Դալարին մէջ լուռ քընով,  
 Անգամ մը գէթ քաղցրութեանդ մէջ մայրական,  
 Գայի անուշ երազով:

Ծըխէ՛, ծըխէ՛, ով բուխուրիկ հայրենի,  
 Կարօտանքիս այրումով:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

## ՍԻՐԱՀԱՐ ԶՈՅԳԸ

### Ա.Դ.ԶԻԿ

Գացել եմ շուկէն էրել եմ բազար,  
 Զըն տըղէն կ'առնեմ, անունն էր Նազար.  
 Նազար, ջա'ն Նազար, ծառ չինար եղնիս,  
 Թէ որ գիս չառնիս բէմուրատ մեռնիս:

### ՏՂԱՆ

Գացեր եմ շուկէն, ելեր եմ ես ծառ,  
 Զըն աղջիկ կ'առնեմ, անունն էր Պայծառ.  
 Պայծառ, ջա'ն Պայծառ, ծառ չինար եղնիս,  
 Թէ որ գիս չառնիս անմուրազ մեռնիս:

### Ա.Դ.ԶԻԿ

Գացեր եմ շուկէն առեր եմ ասեղ,  
 Զըն տըղէն կ'առնեմ, անունն է Բարսեղ.  
 Բարսեղ, ջա'ն Բարսեղ, ծառ չինար եղնիս,  
 Թէ որ գիս չառնիս, բէմուրատ մեռնիս:

### ՏՂԱՆ

Գացի Առաքեալ, ելայ Սուրբ Նշան,  
 Զըն աղջիկ կ'առնեմ, անունն էր Շուշան.  
 Շուշան, ջա'ն Շուշան, ծառ չինար եղնիս,  
 Թէ որ գիս չառնիս, ծըռիս ու մեռնիս:

ԱՐԱԳ ԹԵԻՒԱՂ (ԱԿՆԱՅ)

Մատնուս ա-կը մա-վի է, աս ինչ դը ժար տա-րի է.

Ես աղ-ջիկներ խն բա-նե ցեք, կարգը-ւն լու տա-րի է:

Մատնուս ակը մավի է,

Շա՛ն աղջիկներ, բան բանեցէք,

Աս ի՛նչ դը ժար տարի է,

Կարգը-ւն լու տարի է:

ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ

- Տօ՛, տղայ, շան որդի, իսկի ժամ դուն չըս գացի, իսկի խորան չըս տեսի, իմ բերան ընտուր նման է.
- Տօ՛, տղայ, շան որդի, իսկի վանքեր չըս գացի, իսկի կանթեղ չըս տեսի, իմ աչուին ընտուր նման է.
- Տօ՛, տղայ, շան որդի, իսկի պոսթան չըս գացի, իսկի ունան չըս տեսի, իմ պատ ընտուր նման է.
- Տօ՛, տղայ, շան որդի, իսկի պախչէն չըս գացի, իսկի շամամ չըս տեսի, իմ ծծեր ընտուր նման է.
- իսկի խնձոր չըս տեսի, իմ երես ընտուր նման է.
- իսկի դու մոմ չըս տեսի, իմ մատներս ընտուր նման է.
- իսկի սուրմա չըս տեսի, իմ մազեր ընտուր նման է.
- իսկի մէյտան չըս գացի, իմ ճակատ ընտուր նման է.
- իսկի կամար չըս տեսի, իմ ընքներ ընտուր նման է.
- իսկի սաղաֆ չըս տեսի, իմ ակրէք ընտուր նման է:

ԱՐԻ ՄԱՆԱՆ

Արր՛ Մանան, արի՛, գընանք մեր տունը,

Գիշեր ցերեկ գուրկ է աչքերէս քունը,

Չա՛ն,

Չա՛ն, Մանան Չա՛ն...

Մանան սարէն կուգայ, շալկինը ծախէ,

Ոսկեթել մազերը թիկունքէն կախ է:

Երկինքը ամպել է, գետինը թաց է,

Մանանի թիկունքը կիսէն հետ բաց է:

# ՀՕՅ\_ՆԱՐ

Andante

Գաղնատուրեց՝ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

հօյ նար հօյ նար հօյ նար հօյ նար ջա—նրմ նար

Մեր դուռ շեր զը—րան դի—մաց հօյ նար , ջա—նրմ նար  
հե—րիք մաս աչ—քով ի—մաց

հօյ նար հօյ նար հօյ նար հօյ նար հօյ նար հեյ

Մեռ—նմ էդ ծով ա—լե—րուն հօյ նար ջա—նրմ նար  
հո—գիս վրը—դո—ված մը—նաց

նա զրմ նա զրմ նա զրմ նա զրմ, նա զրմ նա զրմ նա զրմ նա զրմ.


հօյ նար հօյ նար հօյ նար, հօյ նար ջա—նրմ նար

հօյ նար հօյ նար հօյ նար, հօյ նար ջա—նրմ նար

հօյ հօյ հօյ հօյ հօյ հօյ հօյ — — — — —


*lento* *mf*

Ե—րե—րուն ջան	Ե—րե—րու — ն	1.	} հօյ լէ լէ :
Զուն Ե—կեր էս սա—րե—րու — ն	2.		
հա—լեր կա—թեր ձո—րե—րու — ն	3.		
Գըլ—գըլ—լեր վէջ կը—ծե—րու — ն	4.		




Այ- ներ նա-րոջ ու- սե- րու — ս 1  
 թափ ուեր զա- մամ ջի- ծե- րու — ս 2  
 ղար- ման կեզ- ներ խո- ցե- րու — ս 3  
 ճին- նեմ զքե- նեմ նին նա- րե — ս 4

} հոյ լէ լէ




հոյ լէ լէ հոյ լէ լէ հոյ լէ հոյ լէ հոյ լէ լէ ---



հոյ նար հոյ նար հոյ նար հոյ նար զա- նրմ նար



հոյ նար հոյ նար հոյ նար հոյ նար զա- նրմ նար



հոյ հոյ հոյ հոյ հոյ հոյ հոյ ---

Լօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, զանրմ նար:

Մեր դուռ՝ ձեր դրբան գիմաց,

Լօ՛յ նար, զանրմ նար.

Հերիք տաս աչքով իմաց.

Լօ՛յ նար, զանրմ նար.

Լօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հե՛յ...

Մեռնիմ էդ ծով աչերուն,

Լօ՛յ նար, զանրմ նար.

Հոգիս վրդոված մընաց:

Լօ՛յ նար, զանրմ նար:

Նարբմ, նարբմ, նարբմ, նարբմ, նարբմ, նարբմ, նարբմ, նարբմ,

Լօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, զանրմ նար:

Լօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ...

Եարուկ պարտէզն՝ անուշ քուն,

Բուրսայի բարձն էր գլխուն,

Քընած էր քրտընած էր,

Վարդն հրեսին փռուած էր:

X

Երերուն ջան, երերուն, հօ՛յ լէ լէ,

Ձունն եկեր էն սարերուն, հօ՛յ լե լե.  
 Հալէր կաթէր ձորերուն, հօ՛յ լե լե.  
 Գըլգըլէր մէջ կըժերուն, հօ՛յ լե լե:

Ելնէր հարող ուսերուն, հօ՛յ լե լե.  
 Թափուէր շամամ ծիծերուն, հօ՛յ լե լե.  
 Դարման կ'եղնէր խոցերուն, հօ՛յ լե լե.  
 Երերուն ջան երերուն, հօ՛յ լե լե:

Հօ՛յ լե լե, հօ՛յ լե լե,  
 Հօ՛յ լե լե, հօ՛յ լե լե:

Հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար, զանքմ նար,  
 Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ...

### ՆԱԽՇՈՒՆ ԱԶԵՐ

Նախշուն աչեր, նախշուն աչեր,  
 Սրտիս զարկիր, նախշուն աչեր,  
 Ինձ գերեցիր, գրաւեցիր,  
 Հէ՛յ, աննըման նախշուն աչեր:  
 Դու Աստղիկն ես կամ Անահիտ,  
 Ի՞նչ անուանեմ աննըմանիդ,

Եկ մի անգամ սիրահարիդ  
 Սրտանց նայէ, նախշուն աչեր:  
 Ճերմակ մարմնիդ ալ ես առել,  
 Թուխ մազերըդ լանջիդ փըռել,  
 Աննըման գիցուհի ես դառել,  
 Գոհարաշող նախշուն աչեր:

ԱՇՈՒՂ ԵՆՈՍ

### 1) ԹԵԻՊԱՐ

Սարը սարի նըման չէ,  
 Հօ՛յ, օրօ՛ր, Աղինօ՛.  
 Լա՛ւն ասեք, լա՛ւն ասեք իմ եարի,  
 Իմ սիրելու վասք մ'ասեք իմ եարի:

Քարը քարի նըման չէ,  
 Հօ՛յ, օրօ՛ր, Աղինօ՛.  
 Լա՛ւն ասեք, լա՛ւն ասեք իմ եարի,  
 Իմ սիրելու վասք մ'ասեք իմ եարի:

Հարս ու աղջիկ շատ տեսայ,  
 Հօ՛յ, օրօ՛ր, Աղինօ՛.  
 Լա՛ւն ասեք, լա՛ւն ասեք իմ եարի,  
 Իմ սիրելու վասք մ'ասեք իմ եարի:

Մէկն էն հարի նըման չէ:  
 Լա՛ւն ասեք, լա՛ւն ասեք իմ եարի,  
 Իմ սիրելու վասք մ'ասեք իմ եարի:

Ձառ-մանուշակ բաղի մէջ,  
 Թազնուել է թաղի մէջ,  
 Լուսաբացին ծաղկում է,  
 Ծովի, շողի, շաղի մէջ:

Երանի քեզ, ա՛լ աղջիկ,,  
 Ոսկիդ ծալէ-ծալ, աղջիկ,  
 Դու մեր տանը հարսնացու,  
 Ես քեզ համար տալ, աղջիկ:

2) ԹՌՆՈՑԻ ՊԱՐ

Սօ՛նա եա՛ր, Սօ՛նա եա՛ր,  
Սօ՛նա սիրուճ, Սօ՛նա եա՛ր:

ՏՂԱՅ

Վարդավառը գալիս ա,  
Սօ՛նա եա՛ր, Սօ՛նա եա՛ր,  
Ծաղիկը ցընծալիս ա.  
Սօ՛նա եա՛ր, Սօ՛նա եա՛ր,  
Այ գիւլում կանչող աղջիկ.  
Սօ՛նա եա՛ր, Սօ՛նա եա՛ր,  
Ձէնըդ ծըլվըլալիս ա:  
Սօ՛նա սիրուճ, Սօ՛նա եա՛ր:

ԱՂՋԻԿ

Կանաչ տեղը՝ բազում եմ,  
Պարի միջին խաղում եմ.  
Կաքաւի պէս սորալով,  
Տըղաներին դաղում եմ:

ՏՂԱՅ

Կարմիր գինին թասումը,  
Ես եմ քո հաւասումը,  
Ե՞րբ կը տաքնան աղջիկերք.  
— Վարդավառի պասումը:

ԱՂՋԻԿ

Հա՛յ, ասի՛ նա, ասի՛ նա,  
Կարմիր գինին թասին ա.  
Տըղէք ե՞րբ կը կոտորուին.  
— Հորթաթողի պասին ա:

ՏՂԱՅ

Սիրո՛ւն աղջիկ, նազ ունիս,  
Շահ-զատայի սազ ունիս,  
Հողեմ շահ-զատի գըլուխ,  
Դու իմ հոգում հազ ունիս:

4. 4.

ՔԱ ԴԷ ԵՍԻՄ

(ՊԱՐԵՐԳ)

ԸՆԿԵՐՈՒՂԻ

Աղջի՛, ինչի՞ մարդ չես առնի:

ԱՂՋԻԿ

Քա դէ՛ եսիմ, եսիմ, եսիմ:

ԸՆԿԵՐՈՒՂԻ

Վա՛յ թէ կ'ուզես՝ հերըդ չի տա:

ԱՂՋԻԿ

Քա դէ՛ եսիմ, եսիմ, եսիմ,  
Մէկը ուզեց, ես չհաւնա,  
Ուրիշ ուզող հըլա չըկա,  
Հերըս կ'ըսէ քիչ մ'էլ մընա,  
Ծախս ու մխսի փարա չըկա:

ԸՆԿԵՐՈՒՂԻ

Քեզի համար շատ են վառուել:

ԱՂՋԻԿ

Քա դէ՛ եսիմ, եսիմ, եսիմ:

ԸՆԿԵՐՈՒՂԻ

Վա՛յ թէ տեսել՝ յետ են դառել:

ԱՂՋԻԿ

Քա դէ՛ եսիմ, եսիմ, եսիմ,  
Ինէրտանքը ուզող հկաւ,  
Քիթ մըռութը դուրըս չեկաւ,  
Մերըս կ'ըսէ շատ ջահել ես,  
Քառսուն տարիդ թամամ չունես:

ԸՆԿԵՐՈՒՂԻ

Մերըդ կ'ըսէ շատ ջահել ես,  
Քառսուն տարիդ թամամ չունես,  
Թամամ չունես, թամամ չունես:

**ԹԵԼԼՕ ԶԱՆ**

Գընա, գընա, գալիս եմ, թելլօ,  
 Ես քո թարգը տալիս չեմ թելլօ,  
 Աման թելլօ, թելլօ ջան,  
 Սիրուեն թելլօ, թելլօ ջան,  
 թելլօ:

Ես ինչ անեմ, դուն արիր, թելլօ,  
 Զոռով սավդի տէր արիր, թելլօ,  
 Աման թելլօ, թելլօ ջան,

Սիրուեն թելլօ, թելլօ ջան,  
 թելլօ:

Գընանք արտը, չանաք անենք,  
 թելլօ,  
 Դառնանք տունը, հանաք անենք,  
 թելլօ:

Աման թելլօ, թելլօ ջան,  
 Սիրուեն թելլօ, թելլօ ջան,  
 թելլօ:

**ԽԱԼԱԼ Է, ԶԱՆ ԽԱԼԷ**

Տուն եմ շինէ գիտու բերան,  
 Խալալ է, ջան խալի.

Վերէն թալի ջուխտըմ գերան,  
 Խալալ է, ջան խալի.

Մէկն ի բոխի, մէկն ի ծիրան,  
 Խալալ է, ջան խալի.

Ծիրան փթխաւ եարոջ բերան,  
 Խալալ է, ջան խալի.

Ել ու էրթանք կանկու սար,  
 Քոչկ մի շինենք, մտնենք հիսար,  
 Կ'ուզէ խարիր, կուտամ խազար,  
 Բազէ՛ք թուխ աչքիդ խամար:

Մեր դռանը ծառ մի պնդուկ,  
 Զեր դռանը ծառ մի պնդուկ,  
 Եարիկ մ'ունիմ շատ է խնդուկ,  
 Առա գացի մտայ սնտուկ:

4. 4.

**ԱԲԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա**

Աբարանը քարոտ ա,  
 Վայ, լե, լե, լե, ջան լօ, լօ, լօ,  
 Քարի տակը արօտ ա,  
 Իմ մայրիկ ջան, իմ փոյրիկ ջան.  
 Թամամ օխտը տարի ա,  
 Քուրն աղբօրը կարօտ ա:  
 Կալատափը մաղել իմ,

Կողակ ձուկը աղել իմ,  
 Հազար ու մի դարդ ու ցաւ.  
 Սըրտիս միջին թաղել իմ:  
 Սեւ ամպը սարի գըլխին,  
 Կաքաւը քարի գըլխին,  
 Մէկ մէկու խօսք ինք տըւել,  
 Էն բարձըր սարի գըլխին:



Օ՛ՌԻ ՊԸՃԻՆԿՕ...

Allegretto con spirito

Եղանակ՝ վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑԻ

Ա-րև ըլ-լամ ծաթիմ մարիմ վե-րե-ւեդ, կամ  
 շուք ըլ-լամ ա-ծիմ հատնիմ քե-զի հետ, դէմ քիզ մա-տաղ  
 ա՛յ սի-րա-կան, Բայլե-րուդ հետ ծաղ-կէ ծաղիկ վէտ ի վէտ:  
 Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պը-ծին-կօ պը-ծին-կօ պը-ծին-կօ. Օ՛յ օ՛յ  
 օ՛յ օ՛յ պը-ծին-կօ պը-ծին-կօ պը-ծին-կօ: Ճին-կօ

Արև ըլլամ՝ ծաթիմ, մարիմ վերեւեդ,  
 կամ շուք ըլլամ՝ ածիմ, հատնիմ քեզի հետ,  
 Դէմ քիզ մատաղ, ա՛յ սիրական,  
 Բայլերուդ հետ՝ ծաղկէ ծաղիկ վէտ ի վէտ:  
 Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըծինկօ՝ պըծինկօ՝ պըծինկօ՝,  
 Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըծինկօ՝ պըծինկօ՝ պըծինկօ՝:

Ես արեգակ՝ դու ես ծովը ծիրանի,  
 Հալինք լեցուինք իրար ծոցը հալանի,  
 Հովը երգէ, ա՛յ սիրական,  
 Հազար լարով, հազար անգամ երանի:  
 Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըծինկօ՝, եւայլն:

Արօ՞ւ թէ էգ, երկօ՞ւ թէ մէկ մարմին ենք,  
 Արու ե էգ ձագ ու թռուներ կը հանենք,  
 Մեր աշխարհի չորս ծագերուն  
 Արևի պէս բոց ու բարի կը շարենք:  
 Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըծինկօ՝, եւայլն:

## ՀԵԼԻՆԷ ԵԱՐԸ

(ՊԱՐԵՐԳ)

<p>Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը,          Զինուոր էր, չեկաւ հարը.          Էն սարը, բարձրը սարը,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p> <p>Մեխակի ծառ հմ տընկեր,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը.          Քեզ համար հմ մեծցուցեր,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p> <p>Վարդի թուփը բարձրը է,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը.          Սիրած հարը քաղցրը է,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p>	<p>Սիրածիս մէկն ալ դունես,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը.          Ես զոնախ հմ, դու տունես,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p> <p>Լուսինին լոյսը ես հմ,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը.          Սիրածիդ մէկն ալ ես հմ,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p> <p>Մեր տունը ձեր տան մօտ է,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը.          Իմ սիրտըս քեզի մօտ է,          Հօ՛յ, Հելի՛նէ, Հելի՛նէ հարը:</p>
--	--

\* \* \*

Նիննամ, նիննամ, նիննարէ, հօյլեւէ՛,  
 Եարս արի՛ բարձրը լեռը, հօյլեւէ՛,  
 Բարձրը տեղ լոյս կը վառի, հօյլեւէ՛,  
 Նարըմ, նարըմ, նարըմը, նիննարէ:

\* \* \*

Հօ՛յ Հելի՛նէ, Հելի՛նէ, ջա՛ն Հելի՛նէ, Հելի՛նէ,  
 Փափուրի՛ ջան, փափուրի, հէ՛յ, փափուրի, փափուրի,  
 Աղջի քու մազերդ հիւսէ, հօ՛յ Հելի՛նէ, Հելի՛նէ:  
 Նորէ նոր մածուն բերէք,  
 Վա՛յ նանայ նա՛յ, ջա՛ն նանայ նա՛յ,  
 Իմ հարը հաց չէ կերեր,  
 Վա՛յ նանայ նա՛յ:

\* \* \*

Երեք օրուան կիրակին, գալ օրակին, գալ կիրակին,  
 Թողէք երթամ հասնիմ ես իմ սիրածին:  
 Արա, հե՛րլի, հե՛րլի, թե՛ւի, թե՛ւի, թե՛ւի հար.  
 Լուսնակը պար է բռներ,  
 Լուսնակը պար է բռներ,  
 Աղջի տուտո՛ւյ, տո՛ւյ, տուտո՛ւյ,  
 Իմ սարի տուտո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ:

Սարերի վերով գընաց,  
 վա՛յ նանայ նա՛յ, ջա՛ն նանայ նա՛յ,  
 իմ եարը խռով գնաց,  
 վա՛յ նանայ նա՛յ:

Երեք օրուան կիրակին, գալ օրակին, գալ կիրակին, եւլն . . .  
 Թողէք երթամ հասնիմ ես իմ սիրածին:

Արա, հե՛րլի, հե՛րլի, թե՛լի, թե՛լի, թե՛լի եար.

Աղջի, տըղին պարն ի՞նչ է,  
 Աղջի, տըղին պարն ի՞նչ է,  
 Ցատկելու պարելու է,  
 Ցատկելու պարելու է,  
 Աղջի տուտո՛ւյ, տո՛ւյ, տուտո՛ւյ,  
 իմ սարի տուտույ, տուտո՛ւյ:

### ԵԱՐԱԼԻ ԵԱՐ ԶԱՆ

Ելեր եմ գացեր ծաղկոց ձորն ի վեր,  
 Պաղ ջուր եմ խմեր, զով հովը շնչեր,  
 Հաւքուց կեղք լսեր, քաֆուր վարդ քաղեր,  
 Ամէնքն ալ եարիս եղունգ չեն արժեր:

Եարալի եար ջան, հե՛յ եար, հե՛յ ջեյրան,  
 'Իո՛ւրս ել, իմ գիւման, եո քելիքն հեյրան:

Ելեր եմ գացել էգիք ման եկեր,  
 Շամամ, թուզ պոկեր, ծիրան, դեղձ քաղեր,  
 Մալաս նուռ ծծել, ամէն բան փորձեր,  
 Ոչ մէկն ինձ եարոջ համ, հոա չէ տըւեր:

Եարալի եար ջան, հե՛յ եար, հե՛յ ջեյրան,  
 'Իո՛ւրս ել, իմ գիւման, եո քելիքն հեյրան:

Ելեր եմ գացեր անդին քար փնտուեր,  
 Գտեր շատ գոհար՝ եաղութ ու լալվար,  
 Զմբուխա, աղամանդ, ալմաստ անհամար,  
 Ոչ մէկն ալ եարոջ փելքին չի նմաներ:

Եարալի եար ջան, հե՛յ եար, հե՛յ ջեյրան,  
 'Իո՛ւրս ել, իմ գիւման, եո քելիքն հեյրան:

Ելեր եմ գացեր Սիփան սարն ի վեր,  
 Լուսնեակն եմ վառեր, աստղերն համրեր,  
 Լուսաստղն ալ բռներ, այգուն դէմ ելեր,  
 Հէչ մէկն ալ եարիս նման չեմ տեսեր:

Եարալի եար ջան, հե՛յ եար, հե՛յ ջեյրան,  
 'Իո՛ւրս ել, իմ գիւման, շող լուսիգ հեյրան:

ՀՕՅ ՆԱԶԱՆԸՄ

Moderato

Մշակեց՝ Բ. ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ

The musical score is arranged in four systems, each with four staves (Soprano, Alto, Tenor, Bass). The key signature is one sharp (F#) and the time signature is 6/8. The lyrics are in Armenian and are written below the vocal staves. The score includes dynamic markings such as *f*, *mf*, and *ff*. The lyrics are as follows:

System 1:  
 S: Հօյ, նազանք — նոր, նազանք, Գիւլ  
 A: —  
 T: —  
 B: —

System 2:  
 S: նոր, նազանք, Գիւլ  
 A: —  
 T: Գիւլ, նազանք — նոր, նազանք Հօյ  
 B: —

System 3:  
 S: նազանք սարե — թով Ե-կար, կարմիր սոյե — թով Ե-կար, կարմիր սոյե — թով Ե-կար:  
 A: —  
 T: —  
 B: —

System 4:  
 S: կանաչ սարե — թով Ե-կար, կարմիր սոյե — թով Ե-կար, կարմիր սոյե — թով Ե-կար:  
 A: —  
 T: —  
 B: —

Հօ՛յ, նա՛զանք, նա՛զանք,  
 Գիւլ նա՛զանք, նա՛զանք.  
 նա՛զան, դու բարով եկար,  
 Կանաչ սարեով եկար,

Կարմիր սոյեով եկար:  
 Գարնան սիրուն ծաղիկ ես,  
 Հօ՛յ, նա՛զանք, նա՛զանք,  
 Ինձ համար աղաւնիկ ես,



ԿԱՐԱ ՄՈՒՐՁԱՅԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԻՐԸ

(Առաջին քառաձայն համերգը տրուած է 15 Մարտ 1885-ին, Թիֆլիսի մէջ)

Գիւլ Նա՛գանքմ, Նա՛գանքմ,  
 Գլխիս վրով պախա տուր,  
 Հօ՛յ, Նա՛գանքմ, Նա՛գանքմ,  
 Նախշուն թեւ թիթեռնիկ ես,  
 Գիւլ Նա՛գանքմ, Նա՛գանքմ:  
 Եա՛ր ջան, դուն բարով եկար,  
 Կանաչ սարերով եկար,  
 Խոր խոր ձորերով եկար:

Ճամբայ տըւէ՞ք՝ առաջ գամ,  
 Սիրած հարիս բարեւ տամ,  
 Ուխտ եմ արել, որ առնեմ,  
 Թող տեսնի աշխարհ ալամ:

Սա՛րեր, ձո՛րեր, յետ կացէ՛ք,  
 Իմ հարի ճամբէն բացէ՛ք,  
 Եար հարի հետ խօսելիս՝  
 Ականջ արէ՞ք, իմացէ՛ք:

Նըշի ծառին նուշ կըլնի,  
 Վարդի հոտն անուշ կըլնի,



ԿԱՐԱ ՄՈՒՐՁԱ  
 (ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ)  
 Քառաձայն երգչախումբերու  
 առաջին կազմակերպիչը

Երանի էն ազջըկան՝  
 Սիրած հարին թուշ կըլնի:

### ՓԵՍԱՆ՝ ՀԱՐՍԻՆ

Ամէն առաւօտ զէմդ բուսնէի,  
 Վարդի ծառ ըլլայի, զէմդ բացուէի,  
 Որ գայիր անցնէի՝ փէշիդ քսուէի:

Եկուր աղուոր աղջիկ, եար եղար ինձի,  
 Եախուք զիւմրիւք՝ անգին քար եղար ինձի:

Առաւօտուն կ'ելլես արեւ կու ծաթէ,  
 Բերանդ որ կը բանաս մեզր կու կաթէ,  
 Եկուր, նստէ, անուշ անուշ խորաթէ:

Եկուր, աղուոր աղջիկ. եար եղար ինձի,  
 Եախուք զիւմրիւք՝ անգին քար եղար ինձի:

### ԶԱՆ, ՄԱՐԱԼ ԶԱՆ

Զան, մարալ ջա՛ն.  
 Էս սարէն մէկ քոչ անցաւ,  
 Զան, շիրիկ ջա՛ն.

Քոչը տըլաւ մէջն անցաւ,  
 Զան, մարալ ջա՛ն.

Սիրտս մէկ կըրակ բնկաւ,  
 Զան, շիրիկ ջա՛ն.

Ո՛չ վառաւ ու ո՛չ հանգաւ:

Կարօտ բերդն պլեր ա,  
 Եարբս մէջը քընել ա,

Զէն տըլի ձէնքս չառաւ,  
 Մագհար ինձմէն ջորել ա:

Սեւ փոշին ճիտս եմ գըցել,  
 Կըրակը սիրտս եմ լըցել,  
 Էսօր հինգ օր է չեմ տեսել,  
 Իմ եարբ միտս եմ գըցել:

Արեւն առաւ գերանին,  
 Ես մեռնեմ աւետրանին,  
 Զուխտ աղաւնիկ գուրս ելան,  
 Կանաչ խտար բերանին:

### ԼՈՒՍՆԱԿԸ ՍԱՐԻ ՏԱԿԻՆ

Լուսնակը սարի տակին,  
 Եա՛ր, եա՛ր,  
 Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
 Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
 Մամուռը քարի տակին,  
 Եա՛ր,

Եա՛ր, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
 Եա՛ր, լէ, լէ, լէ, լէ, լէ.

Ես իմ կարին կարօտ եմ,  
 Եա՛ր, եա՛ր,

Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
 Եա՛ր, նա, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,

Քան վարդ ու մանուշակին:  
 Եա՛ր,

Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
 Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ:

Աչքըս գըցել եմ սարին,  
 Ոտքըս տըլել եմ քարին,  
 Երթայ ու էլ ետ չըգայ,  
 Քեզ զինուոր գըրած տարին:

Կանգնեմ քարին ու սարին,  
 Գիր գըրեմ զարիբ կարին,  
 Արցունքով գըրեմ կանչեմ,  
 Աղու կըտրի սէնց տարին:

ԿԱՔԱԻ ԹՌԱԻ

Կաքաւ թռաւ բանձըր քարին,  
Կուլայ մըումուռ իր ջիգեարին,  
Ինձ մօտ տարէք Սիփան սարին,  
Կարօտել եմ անուշ կարին:

Արի, ետր ջան, բարով արի,  
Զընգզընգալէն սարովն արի:

Սիփան սարը գառ չիման է,  
Եարն եմ սիրել, աննման է,  
Մեռնեմ կարոջ շորոր քելքին,  
Զինար բոյին, արիւ տեսքին:

Արի, ետր ջան, եւայլն:

Դու բարակ ես, բարունակ ես,  
Արեգական նմանակ ես,  
Մէջ իմ սրտին անանակ ես,  
Հոգիս էրւաւ, բոց կըրակ ես:

Արի, ետր ջան, եւայլն:

ՆԱՆԱՆ ԵԱՐ

Քաղհան եմ անում մօտ սարին,  
Մաաաղ ըլնեմ ես իմ կարին,  
Մէջքին արծաթէ քեամար ա,  
Մեռնեմ ունքի կամարին:

Նանան կար, հա՛յ Նանան կար,  
Էս ի՛նչ սիրուն ջան Նանան կար:

Դու ելել ես, կ'երթաս ի բեր,  
Ոչ բեր ըլնի, ոչ բերատէր,  
Խեր չտեսնեն քու հերն ու մեր,  
Ինձ չանէին էս գարդին տէր:

Նանան կար, հա՛յ Նանան կա՛ր,  
Էս ի՛նչ անուշ ջան Նանան կա՛ր:

Մաշինով ես արտը ցանեմ,  
Թաքուջակով քաղհան անեմ,  
Տեսնեմ, թէ բեզարել ես,  
Գոգնոցըս չարդախ կանեմ:

Նանան կար, հա՛յ Նանան կար,  
Էս ի՛նչ մարալ ջան Նանան կար:

ԱՌԻԻՑԸ ԶՈՒՐ

Առւիցը ջուր ա գընում,  
Նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
Եա՛ր, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,

Գիտես, թէ զուր ա գընում,  
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
Նախշուն կարիս հարցըրէք,  
Նա՛յ, նա՛յ, նա՛յ,

Եա՛ր, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,  
Ինձ թողել, ուր ա գընում,  
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Ամպել ա, տուն չեմ մըանում,  
Մըթնել ա, քուն չեմ մըանում,  
Գիշեր-ցերեկ մի՛ն արած,  
Մաս գալով քեզ չեմ գըտնում:

Թազա մածուն եմ բերել,  
Իմ կարը հաց չի կերել,  
Հեռու տեղից ա գալիս,  
Ինձ լաւ փեշքեշ ա բերել:

ՎԱՐԴ ՍԻՐԵՑԻ

Վարդ սիրեցի՛ փուշ դառաւ,  
Դըլէ համան, դըլէ համան,  
դըլէ համան,

Գընաց ուրիշին առաւ,  
Ա՛խ, մերըդ մեռնի, սարի  
աղջիկ, օ՛յ, օ՛յ,

Քարի աղջիկ, օ՛յ, օ՛յ,  
Քար սիրտ աղջիկ, օ՛յ, օ՛յ,  
Զար սիրտ աղջիկ:  
Գընաց ուրիշին առաւ,  
Դըլէ համան, լէյլի ջան, ջան:

Եղնիկ եմ՝ նեաը կըծքիս,  
Դըլէ համան...

Տիրել ես խելք ու մտքիս,  
Ա՛խ, մերըդ մեռնի...

Մինուճարիս մեղքացիր,  
Դըլէ համան...

Թոյն մի ածա թէժ վէրքիս,  
Ա՛խ, մերըդ մեռնի...

## ՉԱԼԻԿ - ՄԱԼԻԿ

Աղուէս պառկեր աղբի տակին, վո՛ւյ վո՛ւյ,  
 Աչք էր գցել չալ հաւի ձագին, վո՛ւյ վո՛ւյ,  
 Նետով կը տամ աչքի տակին, վո՛ւյ վո՛ւյ,  
 Որ մօտ չգայ նա մեր բակին, վո՛ւյ վո՛ւյ:

Ա՛յ իմ չալիկ մալիկ, չալ մալալիկ, չալ պքքքիկ,  
 Գրքսաւոր, թմփլանակաս,  
 Խոտապեր թռչկան նուսեր, վո՛ւյ վո՛ւյ,  
 Խոտապեր թռչկան նուսեր, վո՛ւյ վո՛ւյ:

Աղջի, արի՛, հաւին կուտ տուր, վո՛ւյ վո՛ւյ,  
 Քեզ կը կերցնեմ մեղր ու կարագ, վո՛ւյ վո՛ւյ,  
 Հա՛մ տիրացու, հա՛մ սարկաւագ, վո՛ւյ վո՛ւյ,  
 Աչքեր ունին ալագ-մալագ, վո՛ւյ վո՛ւյ:

Ա՛յ իմ չալիկ մալիկ, չալ մալալիկ, եւլն.:

## ԱՂՈՒԷՍՆ ԷԿԱԻ

Աղուէսն էկաւ լանջիկ, մանջիկ,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,

Ղաւտակքիկ, սրբգիկ նուսեր,  
 վո՛ւյ, վո՛ւյ:

Աչքը գըցեց չալ հաւի ձագին,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,

Աղուէս պառկեց աղբի տակին,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,

Սիրտը ուզեց հաւի քարճիկ,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,

Նետով կը տամ աչքի տակին,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,

վա՛յ, վո՛ւյում չալիկ,

Որ մօտ չըգայ նա մեր բակին,  
 վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, եւլն.:

Չալմալուրիկ, չալպքսուրիկ,

Տրոտահոտ, սրմբլա նուսիկ,

## ԵՍ ՍԻՐԵՑԻ, ՈՒՐԻՇՆ ԱՌԱԻ

Ես սիրեցի ուրիշն առաւ, սիրուն ջան,  
 Ինչ որ արաւ, մերս արաւ, սիրուն ջան:

Պազ ջուր կուգար վերի սարէն, սիրուն ջան,  
 Չըհովցրեց սըրտիս հարէն, սիրուն ջան:

Սէրըդ սըրտիս մէջն ա վառւում, սիրուն ջան,  
 Տե՛ս, թէ խօսքըս ո՞նց եմ պահում, սիրուն ջան:

Թէ որ չառնեմ, ես կը մեռնեմ, սիրուն ջան,  
 Զիւան ջանըս կըրակ էնիմ, սիրուն ջան:

ՋՐԱՆՑՔՈՎԸ ԶՈՒՐ ԵԿԱԻ

Խօսք՝ Ա. ԳՐԱՇԻԻ

Երաժշտ.՝ ԱՐՏԱՇԷՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

Moderato grazioso

Էս ի՛նչ վա - րար ջուր ե - կաւ, Լու - սա - շող մա -  
 րոր ե - կաւ, պա - րակ փա - րակ դաւ - զե - թով.  
 Էս - զար մի աղ - քիւր ե - կաւ: Բա - րով ե - կար  
 ԶՐ - թիկ ա - նուջ, մեր դաւ - զե - թի փա - թիկ ա - նուջ, զան -  
 քա թով ե - կար զՐ - թիկ ա - նուջ, մեր դաւ - զե - թի փա - թիկ ա - նուջ  
 Բա թով ե - կար զՐ - թիկ ա - նուջ, մեր դաւ - զե - թի փա - թիկ ա - նուջ, զան -

Էս ի՛նչ վարար ջուր եկաւ,  
 Լուսաշող, մաքուր եկաւ,  
 Պապակ, փափաք դաշտերով  
 Հազար մի աղբիւր եկաւ:  
 Բարով եկար ջրիկ անոււ,  
 Մեր դաշտերի փութիկ անոււ:

Սարերի հով, քեզ մատաղ,  
 Զըլզըլան զով, քեզ մատաղ,  
 Ծարաւ հողին ջուր արւիր,  
 Սեւանայ ծով, քեզ մատաղ:  
 Բարով եկար ջրիկ անոււ,  
 Մեր հանդերի փութիկ անոււ:

Անջուր դաշտեր, հովացէք,  
 Կուշտ ջուր խըմէք, գովացէք,

Ոսկի արտեր հայրենի,  
 Լափին տըւէք, ծովացէք:  
 Բարով եկար ջրրիկ անուռ,  
 Մեր արտերի ֆուրիկ անուռ:  
 Ծաղիկ, ծաղկաստան գըցենք,  
 Ծառ ու ծառաստան գըցենք,  
 Անապատում ամայի  
 Կանաչ այգեստան գըցենք:  
 Բարով եկար ջրրիկ անուռ,  
 Այգիների ֆուրիկ անուռ:

**ԱԼԱՇԿԵՐՏՑԻՔ ԲԱՐՁԱՆ ԳԱՑԻՆ**

Ալաշկերտցիք բարձան գացին,  
 Մուշ, Բըլանուխ նըստան լացին,  
 Իրանց մանուկներ մոռացին.  
 Զուլո՛ւմ, զուլո՛ւմ դատաստան էր,  
 Գերի մընաց գերդաստանըս:  
 Վերեւ նայեմ՝ աստղ փեկա,  
 Ներքեւ նայեմ՝ արուն-տիլ ա,  
 Մէր՝ որդու տէր նըստի կիլա.  
 Զուլո՛ւմ, զուլո՛ւմ դատաստան էր,  
 Գերի մընաց գերդաստանըս:

**ՍԵՒ ԱԶԵՐԸ ՄԻ՛ ՍԻՐԷ**

Սեւ աչերէն շատ վախեցիր,	Տե՛ս իմ սիրտը արիւն ծով է,
էն մութ, անծէր գիշեր է.	էս չարքերը զարկեցին,
Մութն ահ է, չարքեր շատ կտն,	էն օրուանէն դադար չունեմ,
Սեւ աչերը մի՛ սիրէ:	Սեւ աչերը մի՛ սիրէ...

### ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴ

Allegro ma non troppo

Մշակեց՝ Մ. ԱՂԱՅԵԱՆ

Ընկերով կայնած քուչէն - չէն --- կարմիր - վարդ - - կարմիր վարդ ընկե - րով կայ -  
 նած քու - չէն - - կարմիր - վարդ - - կար - միր վարդ աշ ըի՛. արի՛ մեր բազմէն, զարաւ:  
 Հի՛, մարալ եար - - - ան - սիրտ եար Աշ ըի՛. արի՛ մեր բազմէն, զարաւ. Հի՛. մարալ եար - - - ան - սիրտ եար

Ընկերով կայնած քուչէն,  
 կարմիր վարդ, կարմիր վարդ,  
 Աղջի, արի՛ մեր բազմէն, մարալ,  
 Հէ՛յ, մարալ եար, անսիրտ եար,  
 Աղջի՛, քու չարր տանեմ,  
 կարմիր վարդ, կարմիր վարդ,  
 Քու սիրուդ ինձ կը սպաննեմ,  
 մարալ,  
 Հէ՛յ, մարալ եար, անսիրտ եար:  
 Դու իմ խօսքին ականջ դիր,  
 կարմիր վարդ, կարմիր վարդ,

Ես մօրրդ հաւան կանեմ, մարալ,  
 Հէ՛յ, մարալ եար, անսիրտ եար:  
 Ճերմակեց գետին ձընից,  
 կարմիր վարդ, կարմիր վարդ,  
 Աղջի՛, դուրս արիտընից, մարալ,  
 Հէ՛յ, մարալ եար, անսիրտ եար:  
 Չեռովըդ էրւած սրտիս,  
 կարմիր վարդ, կարմիր վարդ,  
 կամ դեղ արա, կամ ջուր լից,  
 Մարալ, Հէ՛յ, մարալ եար,  
 անուշ եար:

### ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴ

(ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՎ)

Ընկերով կայնած քուչէն,  
 կարմիր վարդ,  
 կարմիր վարդ,  
 Աղջի, թափ տուր էգ քեչէն,  
 մարալ,  
 Հէ՛յ, մարալ եար,  
 Անուշ եար:  
 Աղջի, գընանք մեր բազմէն.  
 Քաղենք ծառի ալուչէն, մարալ:  
 Ա՛խ,  
 Չաղջի գըռնով ես անցայ,

Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
 Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ.  
 Անձրեւ զարկեց, ես թըրջայ.  
 Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:  
 Ա՛խ,  
 Չաղջի գըռնով ես անցայ,  
 Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
 Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ.  
 Արեւ զարկեց, ես չորցայ.  
 Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

# ԼՈՐԻԿ

Հանդարտ

Երաժշտութիւն՝ ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼՆԱՆԻ

Սոփո  
 Լի-րե-ի զո-ղիտակ տեսա, կանաչ-կարմիր էր եա-գել, Ձկնտղ ևի ես,  
 Ձէ-նըս չա-ռա, աի Լո-րիկ էր, Լո-րիկ էր, Բը-ռա, Գնաց Լո-րիկ էր:

Տօր  
 Լէ, Լէ, Լէ, Լէ սի-րուն Լո-րիկ իմ սրբոսի Լո-

Ալտ  
 Լէ, Լէ, Լէ, Լէ

Թեն  
 Լէ, Լէ, Լէ, Լէ

Բաս  
 իմ սրբո-սի Լ

Լիկ Լէ, Լէ, Լէ, Լէ, կա-նաչ Լո-րիկ  
 սի-րուն Լո-րիկ, Լէ, Լէ Լէ Լէ կա-նաչ Լո-րիկ  
 Լէ Լէ Լէ Լէ սի-րուն Լո-րիկ կա-նաչ Լո-րիկ

Լիկ Լ Լիկ

օ նուշ իմ լո թիկ  
 օ նուշ իմ լո թիկ  
 օ նուշ իմ լո թիկ  
 օ նուշ իմ լո թիկ

Արեւի շողին տակ տեսայ,  
 Կանանչ կարմիր էր հագեւ,  
 Չէն տուի ես, ձէնքս չտռաւ,  
 Ա՛խ, լորիկ էր, լորիկ էր,  
 Թըռաւ գընաց լորիկ էր:

Լե՛, յե՛, յե՛, յե՛,  
 Սիրուն լորիկ,  
 Իմ սրտի լորիկ,  
 Լե՛, յե՛, յե՛, յե՛,  
 Կանաչ լորիկ,  
 Անուշ իմ լորիկ:

Լորիկն իմ՝ շէն էր գընաց,  
 Թողուց սիրաբն մութ աւեր,  
 Որի համար սըքուած, կապուած,  
 Ա՛խ, լորիկ էր, լորիկ էր,  
 Թըռաւ գընաց լորիկ էր:

Լե՛, յե՛, յե՛, յե՛,  
 Սիրուն լորիկ,  
 Իմ սրտի լորիկ,



ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆ

Լե՛, յե՛, յե՛, յե՛,  
 Կանաչ լորիկ,  
 Անուշ իմ լորիկ:



**ՎԱՐԴ ԿՕՇԻԿՍ**

Վարդ կօշկրս, վարդ կօշկրս,  
Վարդից գեղեցիկ մաշկրս:

ԱՂՋԻԿ

Մեր տան մէջ քընող տըղայ,  
Կարմիր խնձոր բաշխող տըղայ,  
Վարդ կօշիկըս գտնող տըղայ,  
Տըղա՛յ, Ղրկէ՛ վարդ կօշիկըս:  
Վարդ կօշկրս, վարդ կօշկրս,  
Վարդից գեղեցիկ մաշկրս:

ՏՂԱՅ

Ձեր տան մէջը քընել չեմ ես,  
Կարմիր խնձոր բաշխել չեմ ես,  
Վարդ կօշիկըդ գըտել չեմ ես,  
Իմ մօտըս չէ վարդ կօշիկըդ:  
Վարդ կօշկրդ, վարդ կօշկրդ,  
Վարդից գեղեցիկ մաշկրդ:

ԱՂՋԻԿ

Լաւ օրըս եղաւ ա՛խ ու վա՛խ,  
Կորուցի կօշիկըս, աւա՛ղ,  
Հայի աղայ, հոգուդ մատաղ,  
Տղայ, Ղրկէ՛ վարդ կօշիկըս:

ՏՂԱՅ

Որ մօտս չէ՛ ուրախից ճարեմ,  
Ազնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,  
Եթէ գտնեմ յետ կ'աւղարկեմ,  
Իմ մօտը չէ վարդ կօշիկըդ:

ԱՂՋԻԿ

Մի մնար ինձի պարտական,  
Աղջիկ եմ տասչորս տարեկան,  
Ես կը լինեմ քեզ սիրական,  
Տղայ, Ղրկէ՛ վարդ կօշիկըս:

ՏՂԱՅ

Ինչո՞ւ մընամ քեզ պարտական,  
Կամիս՝ տամ հազար դահեկան,  
Եթէ կ'ըլնիս ինձ սիրեկան,  
Ես կը ճարեմ վարդ կօշիկըդ:

ՎԱՐԱ - ՄՈՒՐԱ

**ԼԱՆՋԵՐ ՄԱՐՋԱՆ**

Հէյ ջանէ ջան, լանջեր մարջան,  
Մատաղ լինի հոգիս ձեզ,  
Ինձ էլ տարէք, ձեր քիթին առէք,  
Ծով դարդերըս պատմեմ ձեզ:

Հեռու երկրի, խոր ձորերի  
Մութ ափերին անգիւժման,  
Իմ արեւին, կեանքիս հովին,  
Հողմն է ծեծում, վա՛խ, աման:

Քնքուշ սարեր, զմբուխա գիշեր,  
Ճամբայ տըլէք թող տուն գայ,  
Սիրոյ անյաղ ծարաւ պապակ,  
Ջահիլ ջիւան եա՛րըս գայ:

Վ. ԱՂԱՍԵԱՆ

**ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՐԵԼ**

Երեւան բաղ եմ արել,  
Նէյնիմ աման, նէյնիմ աման,  
Նէյնիմ աման,

Ջիզեարըս տաղ եմ արել.  
Բոյիդ մեռնիմ, սարի աղջիկ,  
Սիրուն աղջիկ,  
Սարի մարալ, ջէյրան աղջիկ:

Տոսդ ու դուշմանի միջին,  
Նէյնիմ աման, նէյնիմ աման,  
Նէյնիմ աման,

Լացըս ծիծաղ եմ արել.  
Բոյիդ մեռնիմ, սարի աղջիկ,  
Սիրուն աղջիկ,  
Սարի մարալ, ջէյրան աղջիկ:

Կանգնել եմ, գալ չեմ կարող,  
Նէյնիմ աման, նէյնիմ աման,  
Նէյնիմ աման,

Լըցւել եմ լալ չեմ կարող.  
Բոյիդ մեռնիմ, սարի աղջիկ,  
Սիրուն աղջիկ,  
Սարի մարալ, ջէյրան աղջիկ:



Դու սիրուն ես,  
 Դու շաղով աղջիկ,  
 Կը կանչեմ, քեզ կը կանչեմ, ևլն. :  
 Շողշողուն դու նազով աղջիկ,  
 Շարմազ աղջիկ,

Կարմիր երես,  
 Որսորդ եմ, դու կաքաւ ես,  
 Նախշուն հաւք ես,  
 Դու նազով աղջիկ.  
 Կը կանչեմ, քեզ կը կանչեմ, ևլն. :

**ՔԱՐԱՓԻ ԳԼԽԻՆ**

Քարափի գլխին ունիմ տուն,  
 Մէջը անկել եմ երկու սիւն,  
 Դարդս էնքան շատ ա որ,  
 Գիշերները չունիմ քուն:  
 Տանս տակից ջուր բխար,  
 Եարս սիրտըս լըւանար,  
 Եարիս տըւած եարէքը  
 Իրան ձեռքով լըւանար:  
 Բաղչա ունիմ ծառներով,  
 Մէջը լիքն ա գառներով,

Գառներ մատաղ կարէի  
 Անուշ եարիս ձեռներով:  
 Բաղ եմ գցել նոր ի նոր,  
 Հասցրել եմ մի խնձոր,  
 Եարիս տեսնելու համար  
 Քանի՛ ընկնեմ սար ու ձոր:  
 Եարալու, եարալու սիրտ,  
 Ո՞ւր ա իմ մարալու սիրտ,  
 Շուտ մուրազիդ կը հասնիս,  
 Մի՛ լար, իմ բալալու սիրտ:

**ՍԱՍՆԱՅ ԾՈՒՌ**

Առաւօտեան արշալոյսին,  
 Եա՛ր, քեզի տեսայ երազով,  
 Երգում էի էշխիդ երգը  
 Քաղցր ձայնով, ոսկէ սազով,  
 Ման կուգայիր, իմ պատուական,  
 Անմահ դրախտում փարւազով,  
 Ինձ որ տեսար, աննման եար,  
 Դէպի ինձ եկար վազով:

Տօ՛, Սասնայ Ծուր,  
 Իմ անջիգեար եար:

Ասի՛ նազելիս, սիրելիս,  
 Ալ ես հագել ու զարդարել.  
 Ասաւ՝ ազիզ ջան, իմ հոգիս,  
 Քեզանով եմ մխիթարել.  
 Ասի՛ իմ թառլան էլինար,  
 Ո՞ւր ես գնում դու հազըրել.  
 — Աշուղ Շահէն, քեզ եմ գալիս  
 Ես Բինգեօլից՝ մայր Արազով:

Ասի՛ արի,  
 Կարօքս սուր,  
 Ծարաւ եմ՝ ջուր,

Ասի՛ արի՛, ևլն. :

ԱՇՈՒՂ ԵԱՀԷՆ

**ՔԵԼԷ ՆԱԶՈՎ**

Եար, քո հոգուն մեռնեմ նազեր,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ նազով,  
 Ոլորուն են գլխիդ մազեր,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ սազով,  
 Դու անգին ես, եար, քեզ սիրեմ,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ նազով,

Ալվարդ գինին քեզ հետ խըմեմ,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ սազով:  
 Կէսօրն անցաւ, օրը մըթնաւ,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ նազով,  
 Եար, մեր անուշ օրը անցաւ,  
 Քելէ՛, քելէ՛, եար, քելէ՛ սազով:

**ԲՐԻԳԱԴԻՐ ԱՂՋԻԿ**

Խօսք՝ ՅՈՎ. Չ. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ  
Allegro moderato

Երաժշտ. Ա. ՄԵՐԱՆԳՈՒԼԵԱՆԻ

կալսել ես ցորե - նը սարի պէս, սա - րի պէս, ընկերնե - րից հետ - - բրիգադիր  
 ջան աղջիկ: Եարեա քեզ դիպ' գո - վեմ եարի պէս, եա - րի պէս, ընկերնե - րիս հետ - -  
 բրիգադիր ջան աղջիկ: Եար - - - - ես քեզ դիպ' գովեմ եարի պէս, եարի պէս -  
 - - - - ընկեր - նե - րիս հետ - - - - բրիգադիր ջան աղջիկ: Ջան - - -  
 - - ես քեզ դիպ' գովեմ եարի պէս, եարի պէս - - - - ընկերնե - րիս հետ -  
 բրիգադիր ջան աղջիկ ման գալըդ նը ման է իմ ա - գիզ - - - եա րին, քո կալըդ  
 նը ման է Ալա գեազ - սա րին ման գալըդ նը ման է իմ ա - գիզ - - - եարին,  
 քո կալըդ նը ման է - - Ալա - գեազ - - - եարին: Ջան - - -

Կալսել ես ցորենը սարի պէս, սարի պէս,  
 Ընկերներիդ հետ, բրիգադիր ջա՛ն աղջիկ.  
 Եա՛ր, ես քեզ պիտ՛ գովեմ եարի պէս, եարի պէս,  
 Ընկերներիս հետ, բրիգադիր ջա՛ն աղջիկ:  
 Եա՛ր, ես քեզ պիտ՛ գովեմ եարի պէս, եարի պէս,  
 Ընկերներիս հետ, բրիգադիր ջա՛ն աղջիկ.

Ման գալրդ նրման է իմ ազիզ եարին,  
Ջա՛ն, կալրդ նրման է Այագեազ սարին:

Փոխանցիկ դըրօշն է ձեռքումըդ, ձեռքումըդ,  
Ծըփում է վարդարոյր հովերով, ջա՛ն ազջիկ.  
Կատարել ես արւած երդումըդ, երդումըդ,  
Կենացըդ պիտ՛ խրմենք ծովերով, ջա՛ն ազջիկ:

Ջա՛ն, ես քեզ պիտ՛ գովեմ եարի պէս, եարի պէս,  
Ընկերներս հետ, բրիգադիր ջա՛ն աղջիկ.  
Ջա՛ն, գինին դրել եմ աղբիւրում սառի,  
Աղբիւրներն անուշ են Այագեազ սարի:

**ԵԱՐ ՇՈՐՈՐԱ**

ԽՈՒՄԲ

Նըստել եմ դարձիդ կարօտ,  
Տուն արի, եար, տուն արի, եար,  
Օրօրա,

Ծաղկել է ճամբիդ քարօտ,  
Ծաղկանց միջով տուն արի, եար,  
Շորօրա:

ՄԵՆԵՐԳ

Հիւսւածքըդ զառ եմ նախշել.  
ԽՈՒՄԲ

Վարդ եմ հիւսել, գով եմ ասել,  
Օրօրա:

ՄԵՆԵՐԳ

Վըրէն պատկերդ քաշել.  
ԽՈՒՄԲ

Օրօր շորօր, շուտ արի, եար,  
Շորօրա:

ԽՈՒՄԲ

Լուսնի շողով տուն դայիր,  
Տուն արի, եար, տուն արի, եար  
Օրօրա, [ջան,

Կարօտ սըրտիս քուն գայիր,  
Օրօր շորօր, շուտ արի, եար,  
Շորօրա:

**ԵՍ ՄԻ ԹԱՔ ՏՂԱՅ ԵՄ**

Ես մի թաք տղայ եմ,  
Հեր ու մեր չունեմ,  
Եարիցս հեռացայ,  
Հանգիստ քուն չունեմ:  
Եար ջան, եար ջան,  
Ունենանք սաղ ջան:

Ես քեզի սիրեցի,  
Որ ինձ եար ըլնես,  
Էրւած-վառւած սրտիս  
Դեղ ու ճար ըլնես:  
Եար ջան, եար ջան,  
Ունենանք սաղ ջան:

Ես քեզ ի՞նչ արեցի,  
Ինձնից հեռացար,  
Քու մէկուճար եարին  
Ո՞նց շուտ մտռացար:  
Եար ջան, եար ջան,  
Ունենանք սաղ ջան:

Ես քեզ կանչում եմ, արի՛  
Խըռով մի՛ մնա,  
Սիրածը սիրածից  
Հեռու չի մնա:  
Եար ջան, եար ջան,  
Ունենանք սաղ ջան:

**ԲԱՐԱԿ ԵՍ, ԲԱՐԴՈՒ ԾԱՌ ԵՍ**

**ԱՂՋԻԿ**

Ելար, սարսվ գընացիր,  
 Իջար, ձորսվ գընացիր,  
 Չասիր, դարիպ հարօ ջան,  
 Մնաս բարով, ջանեջան,  
 Մնաս բարով:

**ՏՂԱՅ**

Կընացի, սարն էր քարոտ,  
 Իմ սիրա՞ր՝ հարի կարօտ,  
 Քեզանից լաւը չը գտայ  
 Ու եկայ էլի քեզ մօտ:

**ԱՂՋԻԿ**

Բարակ էս, բարդու ծառ էս,  
 Կրբակ էս, սիրտ կը վառէս,  
 Համ դու վառար, հարօ ջան,  
 Համ ինձ վառիր, ջանեջան,  
 Համ ինձ վառիր:

**ՏՂԱՅ**

Իմ անգին, իմ սիրունը,  
 Իմ կեանքի վառ գարունը,  
 Մի՛ վառուիր, մի՛ խորովուիր,  
 Կը տանեմ քեզ իմ տունը:

**ԱՂՋԻԿ**

Իմ ետքի տունը մօտ է,  
 Մեր ճամբան ալ վարդստ է,  
 Դու իմ սէրը, հարօ ջան,  
 Սըրտիս տէրը, ջանեջան,  
 Սըրտիս տէրը:

**ՏՂԱՅ**

Գիշերը լոյս-լոյս գիշեր,  
 Սեւ աչեր, կարմիր թըշեր,  
 Ես իմ սիրածին տարա,  
 Տըզեք, ձեզ բարի գիշեր:

**ԵԱՐ ՔՈՒ ԲԱՐԱԿ ԲՈՅԻՆ ՄԵՌՆԵՄ**

Կեանքիդ, արեւիդ մատաղ,  
 Կանաչ տերեւիդ մատաղ՝  
 Եար, քու բարակ բոյին մեռնեմ,  
 Չե՞ դու կասէիր քեզ կառնեմ:

Նամակով յիշել էիր,  
 Ղըրկած բարեւիդ մատաղ:  
 Եար, քու բարակ, եւայլն:  
 Մագերըդ ուրբել էս,

Ունքերըդ բուրբել էս:  
 Եար, քու բարակ, եւայլն:  
 Խնձորը գըլորել եմ,  
 Ճամբեքը մուրբել եմ:  
 Եար, քու բարակ, եւայլն:  
 Երեք տարի միալար,  
 Քեզ վրայ սովորել եմ:  
 Եար, քու բարակ, եւայլն:

**ՎԱՐԴԻ ԹՓԻՑ**

Վարդի թըրից թուփ եմ պոկել,  
 Իմ պոկածը դուն էս, դու,  
 Հազարի մէջ քեզ եմ սիրել,  
 Իմ սիրածը դուն էս, դու.  
 Հազարի մէջ քեզ եմ սիրել,  
 Իմ սիրածը դուն էս, դու:

Թեկուզ լինես երկնքումը,  
 Իմ լուսինը դուն էս, դու,  
 Թեկուզ լինես պարտէզումը,  
 Իմ սոխակը դուն էս, դու.  
 Թեկուզ լինես պարտէզումը,  
 Իմ սոխակը դուն էս, դու:

ՄԱՃԿԱԼ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Գաղնաւորեց՝ Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ

*Andante* *Con gracia*

Մաճ կա... Ես թն-գա

բաճ ես... Եր-ր... զուր արդ շուտ

ա-րի... Օր-վի... որե քր տը նաճ ես

Եզ ներն արժ կի... տուն ա... րի

*Ped.* *Ped.* *Ped.*

Մաճկալ ես, բեզարած ես,  
Առը շուռ տուր, շո՛ւտ արի,  
Ծովի պէս քրտընած ես,  
Եզներն արձկի, տո՛ւն արի:

Կաթի սերը քաշել եմ,  
Դըրել եմ հովին՝ սառի,  
Ալ գոգնոցըս փըռել եմ,  
Արի՛, թառլան, թը՛ռռ արի:

Տեղ եմ գըցել շըւաքում,  
Քամին կուզայ զով կ'անի,  
Լուսնի շողքն է մեր ծոցում,  
Չա՛փ տուր, չա՛փ առ, շո՛ւտ արի:

Դադրած .բեզարած եա՛ր ջան,  
Ամպերն ելան, դե՛հ արի՛,  
Բեզարած ջանիդ զուրպան,  
Ծըտից թե՛ւ առ, թէ՛զ արի:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ



### ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ,  
Չեւին սափոր բռնած, ջուրն է անուշիկ,  
Աչք ունքը զալամով քաշած գեղեցիկ.

Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքրիկ ակնարկով առաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտ պարտիզում նստած,  
Ունէինք լաւ գինի, զառան խորոված,  
Երգում էինք, պարում՝ շրջան բոլորած.

Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքրիկ ակնարկով առաւ ինձ նշան:

Ման էր գալիս ընկերներով միասին,  
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին,  
Մազերն ոսկեգոյն, ճակատը լուսին.

Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքրիկ ակնարկով առաւ ինձ նշան:

Երանի այն աւուր, հազար երանի,  
Տեսութեան կրկին լինեմ արժանի,  
Առանց նորան երբեք չեմ մնալ կենդանի:

ՋԻՒԱՆԻ

## ԼՈՐԻԿ

Պաղ աղբիւրի մօտ  
Կանգնած հայ աղջիկ,  
Սափորը ուսին,  
Ինքն էր գեղեցիկ:

Առաւօտուց բոնիր վառ,  
Ես մայիլ եմ քեզ համար,  
Նման ես կարմիր խնձոր, յօրի՛կ,  
Լորի՛կ, յօրի՛կ, ջան իմ յօրի՛կ:

Պաղ աղբիւրի մօտ  
Կանգնած հայ տղայ,  
Հրացանը ուսին,  
Ինքն էր քաջ հսկայ:

Առաւօտուց բոնիր վառ,  
Ես մայիլ եմ քեզ համար,  
Նման ես կարմիր խնձոր, յօրի՛կ,  
Լորի՛կ, յօրի՛կ, ջան իմ յօրի՛կ:

## ՍԵՒԻԿ ԱԶԵՐ

Վրդովեցիր խաղաղ կեանքըս, սիրական,  
Անցուդարձովդ ինձ նայելով մշտական,  
Չէի տեսել մէկ հոգեհան քեզ նման,

Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր  
Կանգնար դեմս, սեպ-սեպ աշեցիր:

Ինչպէս մնամ ես առանց քեզ, միայնակ,  
Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,  
Ակնարկելով գաղտնի ամէն ժամանակ,

Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր, եւայլն:

Անուշ, անուշ խօսալովդ, սիրոյն կոյս,  
Մաշլած սրտիս նորից տըւիր կեանք ու յոյս,  
Առանց գինու հարբեցուցիր խղճալոյս:

Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր, եւայլն:

Սիրոյդ սուր-սուր նկատելովը խոցեցայ,  
Իբրեւ ծաղիկ դեռ չըրացած գոցեցայ,  
Երբ քեզ տեսայ, կրակովդ լեցեցայ,

Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր, եւայլն:

Սիրոյդ լարը պարանոցէս տըւիր կախ,  
Օր ու արեւ չունեմ, գործս է ա՛խ ու վախ,  
Կրկին խօսէ, գոնէ լինեմ ես ուրախ,

Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր, եւայլն:

ՇԱՓԱՂ ԿՈՒՏԱՍ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշտ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ

*Allegro espansivo J. 152*

Շափաղ Կոուտաս բաղի միջին, Այ կարմիր վարդ, շաղի միջին, Բուրմուռնքի պէս հիւսուում ես իմ գառ ու լալ խաղի միջին:

Խեղճ է տարուել քս ալվարդին, ձար չես անում իմ ծով դարձին, Բլբուլի պէս թռնեմ քեզ մօտ, կարօտցել եմ ծոցիդ զարդին:

Թառնիմ քեզ, ծօր, կա-րօր-ցել-եմ ծոցիդ զարդին:

*con desiderio*

*Sempre ten a tempo*

Շափաղ կուտաս բաղի միջին, Այ կարմիր վարդ, շաղի միջին, Բուրմուռնքի պէս հիւսուում ես իմ գառ ու լալ խաղի միջին:

Խեղճ է տարուել քս ալվարդին, ձար չես անում իմ ծով դարձին, Բլբուլի պէս թռնեմ քեզ մօտ, կարօտցել եմ ծոցիդ զարդին:

ՔԵԼԷ ՍԱԹՕ

Սաթօն սարէն կուգայ,  
 Շաղիներ ժախ է,  
 Ոսկեթել մազերը  
 Թիկունքէն կախ է:  
 Քելի Սարօ, ֆելի,  
 Ինչ նազ ես անում,  
 Քայան կախարի պես  
 Փարւազ ես անում:  
 Սաթօն էկաւ կայնաւ

Մեր կալի դռը,  
 Մեղրել էր կարագը,  
 Փաթթել էր լոշը:  
 Քելի, Սարօ, ֆելի, եւլն:  
 Սաթօն էկաւ կայնաւ  
 Մեր կալի իզը,  
 Թեւրս կանթեմ գըցեմ,  
 Սաթոյի վիզը:  
 Քելի, Սարօ, ֆելի, եւլն:

### ՀԱՆԴԻ ԼԱԼԱ

(ՊԱՐԵՐԳ)

Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար,	Էստի զօռի բան չըկայ,
Հանդի լալա իմ եարըս,	Սաւդէն իրա կամով ա:
Մութ գիշերին տուն եկար,	Ծառի տակը հով, քամի,
Նխշուն բալա իմ եարըս,	Քանքուլդ քամին տանի,
Աչքըս քու ճամբին մնաց,	Բա դու սարուժ-ձորուժը,
Հանդի լալա իմ եարըս,	Իմ քունը ո՞նց կը տանի:
Դուն իմ սըրտին դուր եկար,	Ամպել ա, ձուն չի գալի,
Նխշուն բալա իմ եարըս:	Մթնել ա, տուն չի գալի,
Կարմիր վարդը ջամով ա,	Էս անտէր բարձի վրայ,
Սիրած եարը համով ա,	Առանց եար քուն չի գալի:

### ԽԱՆ ԲԱԶԻ

Երթանք կալը, բռնենք պարը,	Երթանք բաղը, բռնենք խաղը,
Խան բաջի,	Խան բաջի,
Թող չիմանայ քո գիծ տալը,	Քաղենք բարը, թողնենք թաղը,
Խան բաջի,	Խան բաջի,
Դու խորոտ ես, քանց քո տալը,	Դու խորոտ ես, քանց քո տալը,
Խան բաջի:	Խան բաջի:
Ուսիդ շալը, ծընկիդ ծալը,	Երթանք ձորը, բռնենք լորը,
Խան բաջի,	Խան բաջի,
Երթանք կալը, ցոյց տուր խալը,	Փէշքէշ տանենք քո ախպօրը,
Խան բաջի,	Խան բաջի,
Դու խորոտ ես, քանց քո տալը,	Դու խորոտ ես, քանց քո տալը,
Խան բաջի:	Խան բաջի:

### ՕԽՏԸ ՍԱՐՈՎ

Օխտը սարով հեռո՛ւ քեզնէն,	Դարդիս դարման, եարիս
Քու շըւաքով ապրում եմ եա՛ր,	մահլամ,
Օխտը տարով բաժան քեզնէն,	Թագ ու պսակ եարս ո՞ւր ա:
Քու կարօտով էրևում եմ, եա՛ր:	
Դարդիս դարման, եարիս	Օխտը տարի ծոմ ու պասով
մահլամ,	Օր ու արեւ սեւցուցի, եա՛ր,
Կեանք ու արեւ եարս ո՞ւր ա:	Բալքի Մըշու Սուլթան զօրքով
	Իմ մուրազըս տայ ինձի, եա՛ր:
Գիշեր-ցերեկ զրկուած քընից,	Դարդիս դարման, եարիս
Ծով է կըտրում աչքըս ճամբին,	մահլամ:
Բալքի դարիք մի ճամբորդից,	Թեւ ու թիկունք եարս ո՞ւր ա:
Կարօտ եարէս խաբար առնեմ:	

## ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ

Գրի առաւ եւ դաշնաստրեց ԳՐ. ՍԻՒՆԻ

Սարերը ման եմ եկեւ, Եւր նա՛յ, նանի ջան,  
Սիրած հարիս փունջ եմ կապել, Բարեւոյնը կանգ է առել,  
Ծաղիկ, վարդ իրար հիւսել, Արեւն է սիրտը կապել,  
Եւր նա՛յ, նանի ջան, Շաղ ու ջովհար արցունք թափել:

Սարերը ման եմ եկեւ,  
Եւր նա՛յ, նանի ջան,  
Սիրած հարիս փունջ եմ կապել,  
Եւր նա՛յ, նանի ջան,  
Ծաղիկ, վարդ իրար հիւսել,  
Եւր նա՛յ, նանի ջան,  
Դարդու բալիս մի փունջ կապել,  
Եւր նա՛յ, նանի ջան:  
Բարեւոյնը կանգ է առել,  
Ալ վարդենուն աչք է արել,  
Արեւն է սիրտը կապել,  
Շաղ ու ջովհար արցունք թափել:

## ՅՈՐԵՆ ԵՄ ՅԱՆԵ

(ԳՈՐԱՆԻ)

Յորեն եմ ցանե, հա՛ր, էլիք է պառկի,  
Պըստիկ եմ սիրե, հա՛ր, չիմ դի՛մ շի գարկի:  
Բոստան եմ ցանե, հա՛ր, քամբախ դարու կող,  
Աստուած անիծէր, հա՛ր, էմլա գեղի հող,  
Մէկ հար եմ բըռնե, հա՛ր, զէն էլ կ'ըսեն՝ թո՛ղ:  
Եարուջ ծոցերն էր, հա՛ր, անուշ ու հոտով,  
Ես քինե մացի, հա՛ր, շատ լը կարօտով:  
Ձէգ Մըշու դաշա, կ'ըսեն, չորս հարիր տուն էր,  
Քու մայտան ճակաա, հա՛ր, իմ սրտի սուն էր,  
Կ'երթանք խարիբթին, սաբիբ լը դուն էր:  
Բաղեշու բուր, հա՛ր, հինգ հարիր գեղ էր,  
Ես, իմ հար՝ մէկ շապիկ, փողպատ լէ նեղ էր,  
Խաբրիկ մը խօսացիր, դարդերուս դեղ էր:

Յորեն եմ ցանե, հա՛ր, էլիք է պառկի,  
Պըստիկ եմ սիրե, հա՛ր, չիմ դի՛մ շի գարկի:  
Բոստան եմ ցանե, հա՛ր, քամբախ դարու կող,  
Աստուած անիծէր, հա՛ր, էմլա գեղի հող,  
Մէկ հար եմ բըռնե, հա՛ր, զէն էլ կ'ըսեն՝ թո՛ղ:  
Եարուջ ծոցերն էր, հա՛ր, անուշ ու հոտով,  
Ես քինե մացի, հա՛ր, շատ լը կարօտով:  
Ձէգ Մըշու դաշա, կ'ըսեն, չորս հարիր տուն էր,  
Քու մայտան ճակաա, հա՛ր, իմ սրտի սուն էր,  
Կ'երթանք խարիբթին, սաբիբ լը դուն էր:  
Բաղեշու բուր, հա՛ր, հինգ հարիր գեղ էր,  
Ես, իմ հար՝ մէկ շապիկ, փողպատ լէ նեղ էր,  
Խաբրիկ մը խօսացիր, դարդերուս դեղ էր:

### ՍԱՍՈՒՆ ՆՍՏԷՐ՝ ԱՆՏԷՐ ԿՈՒԼԱՐ



Սասուն նստեր՝ անտեր կուլար,  
 Հալքերն ալ մէջ կը սըզան,  
 Դուժան փաթեց մեր աշխարհ,  
 Երբ իմացանք սեւ խարար:

Շուն օսմանցին Սասուն աշեց,  
 Թոփեր տարաւ վըրան քաշեց,

Հայ-վա՛խ, հայ-վա՛խ գերի Սասուն,  
 Ոչ մարդ մընաց, ոչ անասուն:  
 Սասնա սարեր են խորտուբորտ,  
 Սասնա լեռներ միշտ արուն-հոտ,  
 Հայ-վա՛խ, հայ-վա՛խ գերի Սասուն,  
 Ոչ մարդ մընաց, ոչ անասուն:

### ԱՆՆՄԱՆ ԱՂՋԻԿ

Աննման աղջիկ, աչքըդ լոյս,  
 Այսօր քեզ նըչան են արել,  
 Ուրախացիր, ո՛վ սիրուն կոյս,  
 Բաղչադ գուլիչան են արել:

Ուզած բանըդ կատարել են,  
 Եկող գնացող դադարել են,  
 Տուն ու տեղըդ դարդարել են,  
 Պատըդ զարնիչան են արել:

Մի վախիր, չի կորչիլ ջանքըդ,  
 Պիտի լաւ անցկացնես կեանքըդ,  
 Տարածել են գովասանքըդ,  
 Մինչեւ Հնդըստան են արել:

Զարդեր ունես՝ ոսկի խալիս,  
 Բարեկամքրդ ընծայ են տալիս,  
 Խընամիքրդ գնում գալիս,  
 Զեր տունը մէյդան են արել:

Անունդ ասեմ վարդունի,  
 Իսկ տեսքովըդ գեղեցկունի,  
 Շուտով կը դառնաս թագունի,  
 Քեզի աննման են արել:

Նշանըդ շնորհաւոր լինի,  
 Ուզածըդ բախտաւոր լինի,  
 Շիրվանը քեզ քաւոր լինի,  
 Ինձի պարտական են արել:


ՋԱՆ, ԵԱՐՕ ՋԱՆ

Moderato

Մշակեց՝ Մ. ԱՂԱՅԵԱՆ

Վարդ եմ քաղել շաղերով, Ջան, եարօ Ջան,  
 Վեր եմ դըրել մազերով, Ջան, եարօ Ջան,  
 Տեսնեմ իմ եարբոս գալիս ա, Ջան, եարօ Ջան,  
 Առաջ գընամ տաղերով:  
 Ջան, եարօ Ջան, Ջան, Մարօ Ջան,  
 Ես սիրել եմ, ես կ'առնեմ:

Մի ծառ ունեմ ծիրանի, Ջան, եարօ Ջան,  
 Բամին տերեւ կը տանի, Ջան, եարօ Ջան,  
 Բամի՛, ինձնից արի տար, Ջան, եարօ Ջան,  
 Անուշ եարիս մատանի:  
 Ջան, եարօ Ջան, Ջան, Մարօ Ջան,  
 Ես սիրել եմ, ես կ'առնեմ:



# ԱԼԱԳԵԱԶԻՆ

Դաշնակահարից Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ

*Lento Espansivo 1. = 60*

Ե Ր Գ

ԴԱՇՆԱԿ

Ան մութ ան ողոր ծառի տիր ղի-զուան.

Դու-ճան հա-զար. Ա-լա գեաց: Ար-տուս ա-րև

էլ էի ծառ կամ, Արտու էլ դու-ճան, Ա-լա-գեաց:

Ար-տուս ա-րև էլ էի ծառ կամ Արտու էլ դու-ճան Ա-լա-գեաց:

*Ri-tor-nu-to*

Սեւ-մութ ամպեր ճակատիդ  
 դիզւան,  
 Դուժման հագար, Ալազեա՛ղ,  
 Սրտուժս արեւ էլ չի ծաղկում,  
 Սիրտս է՛լ դուժման, Ալազեա՛ղ:  
 Զառ փէշերըդ անցայ, տեսայ,  
 Առանց դարդի սիրտ չը կայ,  
 Ա՛խ, իմ դարդըս, ջա՛ն Ալազեազ,  
 իմ դարդիս պէս հէջ չը կայ:

— է՛յ Մանթաշի նըշխուն  
 հաւքե՛ր,  
 իմ դարդըս որ ձերն եղնէր,  
 Ձեր էդ գառ-վառ, խաս փե-  
 տուրներ

կը սեւնային, քանց գիշեր:  
 — է՛յ, Մանթաշի մարմանդ  
 հաւքե՛ր,  
 իմ դարդըս որ ձերն եղնէր,  
 Ձեր ծաղկանուշ բուրմունքընուշ  
 Թոյն ու տօթի կը փոխէր:

Չէ՛յ վա՛խ... կոտրան իմ թե-  
 ւերըս,  
 Ընկայ գիրկըդ, Ալազեա՛ղ,  
 Ա՛խ, մեծ սըրտիդ սեղմեմ  
 սիրտըս,  
 Լամ, արուն լամ, Ալազեա՛ղ...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

**ՏՕ, ԽՐՈՒՄԵՐ**

(Սասունցի Դաւիթի դիմումը իր հօրեղբայր Սիանին)

So, խրոխպեր, մեռնիմ քի, խրոխպեր,  
 Ես խեր չունեմ, տու ձի արա խերութեն:  
 So, խրոխպեր,  
 Ձի քենէ պետն ի շաբաթ օր անբիծք,  
 Կիրակի պատարագ,  
 Ձի քենէ պետն ի շաբաթ, չուր շաբաթ, կայնի իմ խոր վանք:

**ԱԿՆԱՅ ԵՐԳԵՐԷՆ**

Գիշեր ու ցօրեկ հէջ չես ելլեր մըտացըս,  
 Գլուխըս բարձ դնեմ կուգաս երազըս,  
 Հարամ ըրիր կերածըս ու խըմածըս,  
 Աշխարհքին չեմ փոխեր սրտով սիրածըս:  
 Պիւլպիւլը կու կանչէ երբ տի գայ գարուն,  
 Տիվանէ իմ եղեր եղբօրըս սիրուն,  
 Կուլամ ու ժուռ կուգամ աշուն ու գարուն,  
 Որու եղբար կուգայ՝ երանի քուրուն:

## ՉԻ ԼԻՆԻ

Այգեպան, ի՞նչ ես անում՝ շամբը բուրաստան չի լինի,  
 Օձի որքան գեղեցիկն ըլնի՝ սիրական չի լինի,  
 Կատրւին ուտացընես, օրը հազար նազ ու նամաթ,  
 Տիրասէր և բարեսիրտ, հայտ է, իբր շան չի լինի:

Ագռաւին շուշի միջում պահես շաքար ու նաբաթով,  
 Վատաբախտ բիւլբիւլի պէս վարդի սիրաբան չի լինի,  
 Մանկական ուսումն ունի միլիոնի չափ արժողութիւն,  
 Ապտակով սընւած տրդէն առանց աստիճան չի լինի:

Ղուռանը ասում է, թէ ջաննաթումը շատ հուրի կայ,  
 Ինչ վըրաստանին է, ջաննաթին էլ էնքան չի լինի,  
 Դու՛ Շիրին, օրը հարիւր քաղցր ու ախորժ բան մտածես,  
 Քո հայերէն խաղերը Սայաթի նըման չի լինի:

ԱՇՈՒՂ ՇԻՐԻՆ

## ԷՇԽԻՑԴ ԶՈՒՆՈՒՆ ԴԱՌԱԾ

Էշխիցրդ ջունուն դառած, գիշեր-ցերեկ հաղ եմ ասում,  
 Ո՛չ թե երեկ եւ այսօր՝ կարելի է վաղ եմ ասում:

Ծոցինըդ չեմ ճանաչում՝ մանիշակի թաղ եմ ասում,  
 Երեսիդ երկու պաչին՝ ինձ արա զոնաղ եմ ասում,  
 Անուտիլ-անխմիլ իմ քեֆս արա՛ չաղ եմ ասում:

Էշխիցրդ ջունուն դառած, եւայլն:

Էդ քու սէրըդ դառել ա իմ ջանումըս փուշի նման,  
 Էնդուր որ էլ չեմ ճարում քու լալազար թուշի նման,  
 Խօսալդ բիւլբիւլի պէս՝ կերպըդ թովուս զուշի նման,  
 Արի՛, սիրաբու մի՛ շինիլ քարին դիպած շուշի նման:

Էշխիցրդ ջունուն դառած, եւայլն:

Եա՛ ես մի քամի պիտի՝ ծամդ փարիշան ի արել,  
 Եա՛ ես մի Սեյադ պիտի՝ թողումս թառան ի արել,  
 Եա՛ ես մի գառը պիտի՝ ջանս քեզ զուրբան ի արել:

Էշխիցրդ ջունուն դառած, եւայլն:

Ո՛չ նա ունիմ է անում, ո՛չ ծախում են բազարումը,  
 Ես ի՞նչպէս այսուհետեւ ուրախանամ աշխարհումը,  
 Թըւին հազար ութ հարիւր երեսուն երեք տարումը,  
 Գանջեցի Միսկին-Բուրջին, խօսքըս Ղարաբաղ եմ ասում:

ԱՇՈՒՂ ՄԻՍԿԻՆ ԲՈՒՐՋԻ

# ԱՅ ՏՂԱՅ, ՇՕՖԷՕՐ ՏՂԱՅ

Խօսք ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻ  
Ա. շխոյժ, զգացումով

Երաժշտութիւն՝ Ա. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆԻ

Շօֆէօր տրղայ մի՛ ըջտապիր դու կանգ առ,  
Դիր մեքինան, տար ման ածիր սարէ սար,  
Ծաղիկ դաշտեր, ծիծղուն արտեր, ջրբեր պաղ,  
Կտրենք անցնինք ճամբաներով լուսաշաղ:

Ա՛յ տրղայ, շօֆէօր տրղայ ո՞ւր կ'երթաս,  
Ինչպէս թռչուն, ինչպէս գարնան ջուր կ'երթաս:

Շօֆէօր տրղայ մի՛ ըջտապիր դու կանգ առ,  
Դիր մեքինան, տար ման ածիր սարէ սար,  
Ծաղիկ դաշտեր, ծիծղուն արտեր, ջրբեր պաղ,  
Կտրենք անցնինք ճամբաներով լուսաշաղ:

Ա՛յ տրղայ, շօֆէօր տրղայ ո՞ւր կ'երթաս,  
Ինչպէս թռչուն, ինչպէս գարնան ջուր կ'երթաս:

## Ի՞ՆՉ ԱՍԵՄ

Պարտէզում իրիկնապահին,  
Ընկերներով ման կուգային,  
Բացուել էր դէմքը երկնային:

Ի՞նչ, ի՞նչ ասեմ  
Անուշիկ հարիս:

Արեւ ասեմ, թէ  
Լուսին ասեմ, թէ  
Ի՞նչ, ի՞նչ ասեմ  
Գեղեցիկ հարիս:

Հաւասուս դարդերը ծով է,  
Դարձեալ նստել է, հար կը գովէ,  
Հեսս էլ չի խօսի, խըռով է:

Երգում էր սըրտի սէրիցը,  
Սաղն էլ չի գըցում ձեռիցը,  
Թափում է շրթունքներիցը:

Համըր ասեմ, թէ  
Բըլբուլ ասեմ, թէ  
Ի՞նչ, ի՞նչ ասեմ  
Սիրունիկ հարիս:

Նարաթ ասեմ, թէ  
Շաքար ասեմ, թէ



- Դու իմ վարդը,  
 Սէր ու զարդը,  
 Թէ որ դու կաս, էլ ի՞նչ է ինձ զարդը:
- ԱՂԶԻԿ.— Ունքըդ կամար, աչքըդ նուշ է:  
 ՏՂԱՅ.— Մեղր ու շաքրից սէրդ անուշ է:  
 ՄԻԱՍԻՆ.— Սէրն անուշ է,  
 Եարն անուշ է,  
 Զա՛ն, հայրենական երկիրն անուշ է:
- ԱՂԶԻԿ.— Հողի կրծքում խորն է հերկըդ,  
 Իմ սրտում էլ քաղցր է երգըդ,  
 Քաղցր է երգըդ,  
 Սիրուն տեսքըդ,  
 Եա՛ր, սրտիս սէրն էլ լինի բերքըդ:
- ՏՂԱՅ.— Արտերի ցորենը խաս է,  
 Հասկը քեզ պէս ոսկեվարս է,  
 Իմ մուրազը,  
 Ոսկեվարսը,  
 Զա՛ն, իմ հօր ու մօր գովական հարսը:
- ԱՂԶԻԿ.— Ունքըդ կամար, աչքըդ նուշ է:  
 ՏՂԱՅ.— Մեղր ու շաքրից սէրդ անուշ է:  
 ՄԻԱՍԻՆ.— Սէրն անուշ է,  
 Եարն անուշ է,  
 Զա՛ն, մեր աննրժամ երկիրն անուշ է:

### ԾԻՐԱՆԻ

Ես մէկ ծառ եմ ծիրանի,  
 Հին արմատ եմ անուանի,  
 Պառլաներըս քաղցրահամ,  
 Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արեւելեան,  
 Զունիմ որոշ այգեպան,  
 Տունկերըս ամէն երկիր  
 Ընկած են բաժան-բաժան:

Արեւելքում ինձ տընկեց,  
 Երբ որ Աստուած ինձ ստեղծեց,

Ասաց՝ աճէ-բազմացիր,  
 Մի այգի էլ ինձ տընկեց:  
 Ուղարկեց մի այգեպան,  
 Հարաւից մի հսկայ իշխան,  
 Այն հսկայի անունով  
 Կոչուեցայ ծառ հայկական:

Չորս հազար տարուայ ծառ եմ,  
 Արմատըս պինդ, կայտառ եմ,  
 Թէպէտ ոյժըս պակաս է,  
 Բայց անունով պայծառ եմ:

ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

# ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ

Չայնապրեց՝ ՎԱՐԳԳԻՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՆՈՒՂՆԵՐԱՄ

Սա - րի լանջին ջանք  
 ման եմ գալիս  
 փռ - շէ - րի մէջ  
 ու տա - րո թիկ  
 թեց հա - ճար միշտ  
 ջան եմ տալիս  
 ջան ու ջէյրան բան  
 իմ - նու շնո՛ւ

Սարի լանջին ման եմ գալիս,  
 Փռշերի մէջ ոտարոթիկ,  
 Քեզ համար միշտ ջան եմ տալիս,  
 Չան ու ջէյրան իմ անուշիկ:

Անտէր, անտէր ի՞նչպէս ապրիմ,  
 Սիրոյ ծարաւ սիրաբու կուլայ,  
 Ա՛խ, ես էլ ո՞ւմ կրծքին փարւիմ,  
 Ո՞ւր ես ծաղիկ, իմ ալալա:

# ԳՐԱ ԱՐԻ, ՄԱՆ ԱՐԻ

Խօսք՝ ժողովրդական  
Allegretto con grazia

Մշակեց՝ Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

Գր նա ա-րի, ման ա-րի - - - Գր նա ա-րի, ման ա-րի, բարձր-ը-նեմ՝ եան ա-րի - - -  
 Այլ ցը զայ կար-միր կարգով - - - Գր նա ա-րի, ման ա-րի, Ե-կար ան-ցար մեր քա-ղաքով - - -

Ար-մե-նա-կա ձա-ցա-նի, մուխը կը փչէ կը փչեր կը փչեր - - - Գր նա ա-րի, ման ա-րի,  
 Ար-մե-նա-կա ձա-ցա-նի, կրկնով կը փչեր փչեր - - - Գր նա ա-րի, ման ա-րի.

Յուխըն կը զարբան մեր հընդին - - - Ար մե նա կրա ձա ցա նի Գր-նա ա-րի,  
 կու-ցա-ր զարի կան չա լով - - - Ար մե նա կրա ձա ցա նի rit.

ման ա-րի - - - ջան, իմ եարն ես ջուր ա-րի:

Գրնա արի, ման արի,  
 Գրնա արի, ման արի,  
 Բարձր դընեմ՝, եան արի,  
 Արմենակըս նազ անի:

Գրնա արի, ման արի,  
 Ջուխտն էլ զուրբան մեր հընդին,  
 Արմենակըս նազ անի:

Թող իմ ըսելով եղնի, եւն:

Թող իմ ըսելով եղնի,  
 Շեկոյիս սրբով եղնի,  
 Կանչե, կանչելով եղնի,  
 Եարիս կանչելով եղնի:

Ա՛յ տըղայ, կարմիր կապով,  
 Գրնա արի, ման արի,  
 Եկար անցար մեր բակով,  
 Արմենակըս նազ անի:

Ջուխտ կը քելէ տեքերկին,

Թող իմ ըսելով եղնի, եւն:

## ԵԱՐՍ ԴՈՒՆ ԵՍ

Ազիզ, անուշ եարըս դուն ես,  
 Ես քնար եմ, լարըս դուն ես:

Աչքիս լոյսը եարըս դուն ես,  
 Ես մի վարդ եմ, խառը դուն ես:

Հոգուս ընկեր եարըս դուն ես,  
 Ես հիւանդ եմ, ճարըս դուն ես:

Դարդիս դարման եարս դուն ես,  
 Ես շիշ եմ, նեկտարը դուն ես:





Սիրուն փէրի եարըս դուն ես,  
 Ես մատնի եմ, քարըս դուն ես:

Ես արեւ եմ, լոյսը դուն ես,  
 Ազիզ խերըս, խապարս դուն ես:


# Է՛՛Դ ՈՍԿԵԹԵԼ ՄԱԶԵՐԴ

Ջալնագրեց՝ ՎԱՐԳԻԳԷՍ ՏԱԼԵԱՆ


Յօրինեց՝ ԱՆՈՒՂ ՆԵՐԱՍ




է՛՛ օս - կե - թե՛լ Մա - ղե - թը




Ա - շուշ է - զուշ, շա - ղե - թը, Աճի - ընս գըլ - խէս




Խշ - ւ - զիւ ձուր ու կայ - ծակ - է - թը




Հի վախ թըն՝ում ես թըն - չտ պէս ձի ես շու ես



յում, է - ա - շում ես - զիս ես ես - շում, Ա - ա - շում



է՛՛դ պի - ռս ու շում, է՛՛ ե - թը - շում



գար - ղս ու պարտ շում, շա - ղե կըտ - թի - ջի



Ա Շ Ո Ւ Ղ Շ Ե Ր Ա Մ

(Գրիգոր Տալեան - Ալեքսանդրապոլցի Ռուստա Գոքոր, 1857 - 1938)

Քիչ ոսկեթիւ մազերըդ,  
Անուշ լեզուդ, նազերըդ,  
Խեղճըս գլխէս խըլեցին  
Հուր ու կայծակ աչերըդ:

Հե՛յ վախ, քոնում ես բոյնի պես,  
Մեկ ես չես նայում,  
Հեռանում, հոգիս ես հանում,  
Մոռանում, հե՛ք սիրքս սանում,  
Ել ես ի՞նչ անեմ,  
Դարդքս ո՞ւմ պատմեմ,  
Ճարքս կտրեցիր:

Ուր որ էրթաս, հեռանաս,  
Դու մեծ փառքի տիրանաս,  
Քեզ հետ բարի չըրեչտակ,  
Միայն ինձ չըմոռանաս:

Հե՛յ վախ, քոնում ես... եւլն...  
Ծաղկունք բացւին ոտքիդ տակ,  
Գլխիդ փայլէ արեգակ,  
Իմ աննման նազելի,  
Ինձ մի թողնի միայնակ:

Հե՛յ վախ, քոնում ես... եւլն...:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

## ԱԼՂԱՆԱԴ ՂՈՒՇ ԵՍ

Միշտ քեզ եմ սիրել, հոգիս նըւիրել,  
 Հոգիս նըւիրել,  
 Էդ անուշ լեզուդ խելքըս է տարել,  
 Արի ինձ կեանք տուր, մի՛ թողնի տըխուր,  
 Մի՛ թողնի տըխուր:  
 Սիրտըս ես խըրել էշխիդ նետը սուր:  
 Ազիզ անուշ ես,  
 Խառ բաղի նուշ ես,  
 Այդանադ դուշ ես,  
 Վարդեն ֆիֆուշ ես:  
 Ես եմ քո ետըր, մատնուդ գոհարը,  
 Մատնուդ գոհարը,  
 Ձգո՛յշ, չըկոտրես քնարիս լարը,  
 Տա՛ր ինձ, դուլ էրա, գըտիր մէկ չարա,  
 Գըտիր մէկ չարա,  
 Քեզ գերի սիրտըս մի՛ թողնի ետրա:  
 Ազիզ անուշ ես, եւայլն:  
 Իրաւունք կուտամ, որ ինձ սպանես,  
 Որ ինձ սպանես,  
 Քան թէ բաց աչքով քեզնից բաժանես,  
 Սիրտ ունիս բարի, մի հնար ճարի,  
 Մի հնար ճարի,  
 Գոնէ մէկ անգամ ինձ մօտիկ արի:  
 Ազիզ անուշ ես, եւայլն:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

## ՔՈ ՓԱՓԱՔՈՎ

Քո փափաքով վառուում եմ,  
 Արի, սիրական, ո՞ւրտեղ ես,  
 Երկնային ամպերու մէջ  
 Նըստող ծիածան, ո՞ւրտեղ ես:  
 Ճանապարհըդ նայելով  
 Աչքերումս լոյս չըմնաց,  
 Ե՛կ երեւոյթ տեսանեմ,  
 Ազնիւ սիրական, ո՞ւրտեղ ես:

Ի՞նչ պատահաւ, անուշիկ,  
 Որ դու հեռացար ինձանից,  
 Քաղցրախօս անուշ լեզու,  
 Անւամբ գովական, ո՞ւրտեղ ես:  
 Թող միայն ասեն՝ Ջիւա՛ն,  
 Սիրականդ կուգայ,  
 Թող տատանիմ քո սիրով  
 Մինչեւ յաւիտեան, ո՞ւրտեղ ես:

ԱՇՈՒՂ ԶԻԱՆԻ



## ԽԵԼՔԻ ԱՇԵՑԷՔ

Անմիտ ճնճողուկը բազէի ճանկից  
 Ուզում է որս խելի, խելքի աշեցէ՛ք,  
 Կարծես ձանձրացել է գլխից ու կեանքից,  
 Պատերազմ է մտել, խելքի աշեցէ՛ք:

Խելքին զօռ տալով է հիմա ամէն բան,  
 Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան,  
 Նիհար հաւը, պարարտ մեծ սագի նման  
 Ուզում է ձու ածել, խելքի աշեցէ՛ք:

Ազնիւ մարդը անարգւում է գէշի հետ,  
 Երիվարը լուծ է քաշում էշի հետ,  
 Երկու տարուայ հորթը ցուլ գոմէշի հետ  
 Բերել, կամ են լծել, խելքի աշեցէ՛ք:

Գայլը վերան ոչխարի մորթը առած,  
 Գառներուն պահապան, հսկող է դառած,  
 Աքլորը քարոզչի վերարկու հագած,  
 Ամբիոն է ելեր, խելքի աշեցէ՛ք:

Ուղտը մետաքսագործ, եզը նաւավար,  
 Գայլը հովիւ դառած, կ'արածէ ոչխար,  
 Աղուէսը հաւնոց դրանն յուշարար,  
 Ինչ հսկող են գլտել, խելքի աշեցէ՛ք:

Փափուկ ջեմսլմեց է հաստ գռեհիկը,  
 Ամբոխի գիտունն է խելքից բոպիկը,  
 Կենացը մէջ ծառ չտեսած ռամիկը  
 Այգեպան է եղել, խելքի աշեցէ՛ք:

Երախան ձեռքն առած փրտած հին լարը,  
 Բռնել կամի դարձող ջաղացի քարը,  
 Քաճաճ մուկը շրջել կ'ուզէ մեծ սարը,  
 Կողքը դէմ է տըւել, խելքի աշեցէ՛ք:

Ուրացողը չունի խիղճ ամենեւին,  
 Չըզգալով՝ սպիտակ ասում է սեւին,  
 Կոյրը չըտեսնելով լոյսը արեւին,  
 Աշխատում է սըտել, խելքի աշեցէ՛ք:

Պորտը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,  
Դուրս ելաւ՝ բաժինն է վիշապի փորին,  
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,  
էշը մէջ է ընկել, խելքի աշեցէ՛ք:

Ժըլատն աշխատելու է շատ ընդունակ,  
Իր հացն ուտելու չունի ախորժակ,  
Խեղճ անձը զրկելով շինել է ըստակ,  
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէ՛ք:

Յանցաւոր հարուստը ուրախ խնդալով,  
Մեղքից ազատուել է մեծ գումար տալով,  
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով  
Բանտի մէջ է փակել, խելքի աշեցէ՛ք:

Մարդ կայ գերդաստանը պահում է ցամաք,  
Կ'երթայ դուրսը կ'ուտէ սէր, մեղք ու կարագ,  
Այլոց համար կ'անէ ձայնով պատարագ,  
Իրան ժամ չի անել, խելքի աշեցէ՛ք:

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,  
Բնակիչներն Հայ, մօտ քըսան հազար,  
Իրենք սնունդ չունին ուտելու համար,  
Հինգ վանք են շինել, խելքի աշեցէ՛ք:

Կենդանին որ կ'ուզէ լինել շանսատակ,  
Կ'երթայ կը մտնի ծանրը բռնի տակ,  
Նապաստակը առիւծի դէմ համարձակ,  
Կըռիւ է սկսել, խելքի աշեցէ՛ք:

Յորենը մի անգամ լինելով տըկար,  
Այնպէս բոյս չեն գըտել, որ անեն նշխար,  
Կորեկ հացն իրեն կարծելով յարմար,  
Սեղան է բարձրացել, խելքի աշեցէ՛ք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,  
Ասպարէզը համբակներուն են թողած,  
Ջիւանն էլ կաղ էշով կարաւան մտած՝  
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէ՛ք:

## ՍԱՐԵՐ Կ'ԱՂԱԶԵՄ

Ջախնագրեց՝ ՎԱՐԴԳԻԼՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

Սա - րե՛ր, կա - շա - շե՛մ. Ի - ջե՛ք ցա -  
 երա - ցե՛ք, ԳՐ - նու՛մ եմ եա - ըի՛ս.  
 մի ճամ - բայ - բա - ցե՛ք. Աստ - առ՛ծ կը - սի - ըք  
 ճամ - բէս մի՛ք կա - պի՛ս — շատ եմ պա - պա - կե՛լ  
 1. սի՛ր - տըս կը շտա - պի՛ս. 2. Սի՛ր - տըս կը - շտա - պի՛ս.

Սարեր կ'աղազեմ, իջե՛ք, ցածրացե՛ք,  
 Գընում եմ եարիս, մի ճամբայ բացե՛ք,  
 Աստուած կը սիրե՛ք ճամբէս մի՛ք կապի,  
 Շատ եմ պապակե՛լ, սիրտըս կը շտապի:

Ձեր փէշին՝ թօշնած տերեւի նման  
 Ընկած եմ վաղուց, անյոյս, անգիւժման,  
 Թոյլ տըւէք անցնիմ, երթամ եարիս մօտ,  
 Բալքի մէկ տեսնեմ՝ չմեռնիմ կարօտ:

Կարօտ, ա՛խ, կարօտ, ջիգեարըս եարօտ,  
 Հէ՛յ, ճամբէս չաթին, փըշոտ է, քարոտ,  
 Ջահել հասակից սիրեցի նըրան,  
 Բայց նամարդ մարդիկ խլեցին տարան:

Խըլեցին տարան, արեւըս սեւցաւ,  
 Բաժին աշխարհըս վերանա դարձաւ,  
 Ապրում եմ, համա ապրումներ չունեմ,  
 Էլ ուրիշ մէկին սէր-սովտա չունեմ:

Շերա՛մ, սէգ եարիդ սիրաըն է սառել,  
 Էլ ի՞նչ ես ի զուր փարւանա դառել,  
 Չոքել կ'աղաչես սարին ու քարին,  
 Ուրիշն է տիրել քո սիրած եարին:

**ԼՈՒԷ ԵՐԳԴ**

Չափնագրեց՝ ՎԱՐԴԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ, ՇԵՐԱՄ

Բլբուլ էլ ի՞նչ ես երգում,  
 Ալ վարդըդ վըռըչնել է,  
 Ո՞ւմ ես գովում, գորովում,  
 Սիրուն եարըդ թօշնել է:

Կըկուն ու բուն քեզ վրայ  
 Ծաղր ու ծանակ են անում,  
 Իսկ քո սիրաը սէր կուլայ,  
 Դեռ կարմիր վարդ ես փընտռում:

Լրո՛ւ երգըդ, խորն է վեհերդ,  
 Ալւան վարդըդ բօցնել է:

Լրո՛ւ երգըդ... եւայլն:

Կանաչ գարունըդ զընաց,  
 Սեւաթեւ աշուն կուգայ,  
 Վարդիդ ծառը կուչ եկած,  
 Աւեր այգում կը սըգայ:

Վարդըդ թօշնաւ, թառամաւ,  
 Շերա՛մ, էլ ո՞ւմ ես գովում,  
 Դախշուն գարունքըդ անցաւ,  
 Սիրա ունիս, սէ՞ր ես երգում:

Լրո՛ւ երգըդ... եւայլն:

Լրո՛ւ երգըդ... եւայլն:

**ՀՈՌՈՎԷԼ**

Խօսք՝ Յ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆԻ  
Andante

Երաժշտ. ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ

Հո - ու - ՎԷԼ ԿՕ... Սիրած հարըս գուժնա -  
 ւոր, էդ քո ձէնից թող դըղըրդայ - - դաշտ ու չոր - - - սեւ ճեր - կե ըրի - -  
 հե - րու եա - ղըս, հո - ու - ՎԷԼ - - - սիրով հերկի սիրաբըս քեզ եմ  
 նը - - - ւի - - ընէ: 2Օ - - - հոռովէլ, ԿՕ - - - Սիրած  
 եարըս գիտեմ - - - մաճկալ ես - դառել, քո - կա - րօ - ցից - - իմ - սիրքը  
 էլ ես - դու - վա - - ռել, ջաճէլ մաճկալ ու հօ - - - ցառններ մի - - - ա - ւին,  
 հո - - ու - ՎԷԼ, ԿՕ - - - մեռնեմ քաշած ա - - - ԿՕ - -  
 սին - - 2Օ - - - հոռովէլ, ԿՕ - - - հոռովէլ, ԿՕ - -

Հոռովէլ, ԿՕ, սիրած հարըս գուժնաւոր,  
 էդ քո ձէնից թող դըղըրդայ դաշտ ու ձոր,  
 Սեւ հերկերի հերոս հարըս, հոռովէլ,  
 Սիրով հերկի սիրաբըս քեզ եմ նըւիրել:  
 2Օ, հոռովէլ, ԿՕ...

Սիրած հարըս, գիտեմ մաճկալ ես դառել,  
 Քո կարօտից իմ սիրան էլ ես դու վառել,  
 Չաճէլ մաճկալ ու հօտաղներ միասին,  
 Հոռովէլ, ԿՕ, մեռնիմ քաշած աղօսին:  
 2Օ, հոռովէլ, ԿՕ...

Օ Ր Օ Ր

Խօսք՝ ժողովրդական

Երաժշտ. Ռ. ՄԵԼԻՖԵԱՆԻ

*Ben tenuto d. 66 con fesszza*

Օրօր, օրօր, իմ սիրունիկ,  
 Օրօր ասեմ դու նանա,  
 Երկար ապրես, կարմիր օրեր,  
 կարմիր արեւ ունենաս:

Օրօ՛ր...

Օրօր, օրօր, իմ անուշիկ,  
 Օրօր ասեմ դու նանա՛,  
 Ալվարդ դառնանք քարն ու փուշը,  
 Որ ճամբով էլ դու գընաս:

Օրօ՛ր...

ՊԱՐԵՐԳ ՇԻՐԱԿԻ

Մայրիկին հազմա բերին,  
 Քոյրիկին՝ դօշի,  
 Հայրիկին՝ մաշած փափախ,  
 կատար չունենայ:

Մօ՛, եամա՛ն, ամա՛ն,  
 Մօ՛, եամա՛ն, ամա՛ն,  
 Մօ՛, եամա՛ն, ամա՛ն,

Մաշկով աղջիկ,  
 Կօշկով աղջիկ,  
 Քո սեյրեդ կարն է,  
 Շեկ սրդի խարն է:


Մայրիկին խաս կտրէին,  
 Քոյրիկին՝ խըրխա,  
 Հայրիկին՝ սալդաթի շոր,  
 Թեւեր չունենայ:

Մօ՛, եամա՛ն, ամա՛ն, ևլն.:

Մայրիկին կօշիկ բերին,  
 Քոյրիկին՝ տուֆլի,  
 Հայրիկին՝ ջուխտակ չարուխ,  
 Տակ էլ չունենայ:

Մօ՛, եամա՛ն, ամա՛ն, ևլն.:

4. 4.



# ԴՈՒՆ ԻՄ ՄՈՒՍԱՆ ԵՄ

Չալնազրեց՝ ՎԱՐԳԻԳԻՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

Դու իմ մու - սան ես, - ա - աանց

քե - ղի ծր - գեղ չեմ կա - թող - սըր -

տես աա - սի - ղը - թա - ցի քեզ - նից էլ շու -

նիմ լա - լողի Սի թուն, սև

ա - չե - թող, կար - միր - վարդ աչ - տե -

թուղ, շուխ մա - ղե - թող, շանթ ուն - ջե - թող

էլ ինչ սուր - մա է - կար - կա -

ւոր - էր առ - նը - ման փե - թող

Դու իմ մուսան ես,  
Առանց քեզի,  
Երգել չեմ կարող.  
Սրտիս տաւիղը,  
Բացի քեզնից,  
Էլ չունիմ լարող:

Սիրուն սել աչերուդ,  
Կարմիր վարդ այտերուդ,  
Շուխ մազերուդ,  
Շանթ ունեւերուդ,  
Էլ ի՞նչ սուբմա ե հարկաւոր  
Էդ աներման փերուդ:

Քեզանից հեռու  
Դառըն է մընալ,  
Ապրել միայնակ.  
Կ'ուզես ըսպանի,  
Կ'ուզես կեանք տուր,  
Սիրուն աղաւնեակ:

Սիրուն սել աչերուդ... ևլն.:

Զարդ ու զարդարանք  
Էլ ի՞նչ պէտք է,  
Դու սիրուն զուշ ես.  
Մարմինդ է զուգլած  
Ալ խալերով,  
Դրախտի նուշ ես:

Սիրուն սել աչերուդ... ևլն.:

Ափսոս ջահել ես,  
Նոր ես ծաղկել,  
Փընջիկդ գարնան.  
Քեզ ջան եմ տալիս,  
Չես հասկանում,  
Անգութ հոգեհան:

Սիրուն, սել աչերուդ, ևլն.:

ԱՇՈՒՂ ԵՐԱՍ

### ՔԵԶԱՆԻՑ ՄԱՍ ԶՈՒՆԻՄ

Քեզանից մաս չունիմ, կուրծքդ մի բանայ,  
Ի դուր ինձ մի տանջիր, էլ չեմ դիմանայ,  
Անսիրտ, անջիգեար, խեղճ եմ, ապիկար:

Մարմինդ է շքեղ, աչքերըդ կանթեղ,  
Սրտեր են հալուում հայեացքէդ ահեղ,  
Ունքերըդ կամար, էրւայ քեզ համար,  
Հագել ես նաշխուն, դառել սիրամարդ:

Զաթի ես հիւանդ եմ, քեզնից ճար կ'ուզեմ,  
Մօտեցիր մէկ անգամ, դարդըս քեզ ասեմ,  
Անսիրտ, անջիգեար, խեղճ եմ, ապիկար:

Մարմինդ է շքեղ, աչքերըդ կանթեղ,  
Սըրտեր են հալուում հայեացքէդ ահեղ,  
Ունքերըդ կամար, էրւայ քեզ համար,  
Հագել ես նաշխուն, դառել սիրամարդ:

ԱՇՈՒՂ ԵՐԱՍ

## ԿԱՅՆԵԼ ԵՍ ՍԱՐԻ ՎՐԱՅ

Կայնել ես սարի վրայ,  
Չինարի ծառի վրայ,  
Արեւի շողն է ընկել  
Սատաֆ մազերիդ վրայ:

Շարմաղ աղջիկ, ջան աղջիկ,  
Ջանըս քեզ ղուրպան աղջիկ,  
Մեռնեմ քու աչքին ունքին,  
Նազանի անուշ աղջիկ:

Էս գիշեր երազ տեսայ,  
Արտերը վարած տեսայ,  
Ամօթ քեզի կենճ տղայ,

Քո հարը տարած տեսայ:

Շարմաղ աղջիկ... եւայլն:  
Սիրուն ես լուսնի նման,  
Մինուճար ես աննման,  
Ա՛խ, մէկ էլ թռար ձեռքէս,  
Երկնային հաւքի նման:

Շարմաղ աղջիկ... եւայլն:  
Եար մարալ ես, հար ջէյրան,  
Երթանք սարերը սէյրան,  
Արի սէր տանք, սէր առնենք,  
Քու ազիզ հարին ղուրպան:  
Շարմաղ աղջիկ... եւայլն:

## ԲՈՅԴ ԲԱՐՁՐ

Բոյըդ բարձրը սալքի չինար,  
Աչքըդ նաչխուն, ունքըդ  
կամար,

Դուն ստեղծուած ես ինձ համար,  
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գոյնըդ նման է մարմարի,  
Հագիդ շորերն են յարմարի,  
Դուն ես վարդը այս աշխարհի,  
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսնելը ինձ մեծ մահ է,  
Հոգիս հանեմ, տամ քեզ, պահէ,

Ինձնում եղածն ինձ ի՞նչ շահ է:  
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գիշեր-ցերեկ նըստած լալով,  
Աղի արտասուք թափելով,  
Ինձ թողել ես տանջուելով,  
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,  
Աղաչեցի ես իմ Փրկչին,  
Որ չը կըտրէ յոյսն իմ վերջին,  
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

## ԱՆ ԻՄ ՃԱՄԲԷՆ

Ա՛խ, իմ ճամբէն մոլոր գնաց,  
Անտակ ծովուն դէմ առաւ,  
Ա՛խ, իմ սէրըս անցաւ գնաց,  
Յետ գալու է՛լ ճար չըկայ:

Դումանն եկաւ շուրջըս պատեց,  
Նաչխուն հաւքերն ի՞նչ եղան,

Դարդը եկաւ սիրտըս պատեց,  
Էն ալ վարդերս ի՞նչ եղան:

Խաս հաւքերը ձորում կորան,  
Ագռաւ վերէն կը զըռռայ,  
Սիրուս կարմիր վարդեր թող-  
ման,  
Բլբուլն անթեւ կը սգայ:

**ԵԿԱԻ ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆԸ**

Չափնագրեց՝ ՎԱՐԳԻԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

Ե - կաւ ա - նուշ գա - րու - նը.  
 հանդ է գը - նում սի - րու - նը. նը - րա գը - րա -  
 սիւ գէմ - բը պըշ - տո - րեց իմ ա - ի - նը:

Եկաւ անուշ գարունը,  
 Հանդ է գնում սիրունը,  
 Նրա գրաւիչ գէմքը  
 Պղտորեց իմ արիւնը:

Կըլկըլում է առսւակը,  
 Փայլում է արեգակը,  
 Ճախրում է զէպի երկինք,  
 Իմ խօսող ազաւնեակը:

Յօղում է մեղմիկ անձրիւ,  
 Վարդը բացեց իր տերիւ,  
 Սեւաչեայ չքնաղ կոյսը  
 Չըտըեց ինձ մի բարիւ:

Նըստաւ սարի գազաթին,  
 Սփռեց մազերը կրծքին,  
 Ինձ նըման սիրող սիրաը  
 Գըցեց ծովի յատակին:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

**ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ**

Լուսնկան կամար կամար,  
 Ես կուլամ քեզի համար,  
 Գառս, իկու կ'ըլլի քնացիր,  
 Իմ անուշ խաթերս համար:

Օրօր ըսեմ քնանաս,  
 Հազար փառքի տիրանաս,  
 Բայց երբ որ քունդ չըզայ,  
 Ծախու առնեմ քնանաս:

Չազս, օրօ՛ր, օրօ՛ր:

Չազս, օրօ՛ր, օրօ՛ր:

Օր ըսեմ, օրիկդ շատնայ,  
 Օրդ ու արեւդ շատնայ,  
 Օրէդ արեւէդ տաքնամ,  
 Քեզի աղէկ եար մը գտնամ:

Պախչան կապեմ կախօրրան,  
 Ծառէ ծառ շուքեր վրան,  
 Ծառեր, ամպեր, շուք ըրէք,  
 Որ ձագուկս քնանայ:

Չազս, օրօ՛ր, օրօ՛ր:

Չազս, օրօ՛ր, օրօ՛ր:

ԷԼԻ ԷՍՕՐ

Զայնագրեց՝ ՎԱՐԴԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ



Էլի էսօր սիրտըս կուլայ,  
 Սիրած հարին չի տեսել,  
 էլի ամպեր քուլա քուլա  
 Գլխիս դուժման են դիզել:

Նա լինեք բլբուլ,  
 Ես՝ վարդոս պարեզ,  
 Գիտեր ու ցերեկ,  
 Երգեք իմ գրկես:

Նա լինեք ծառաւ,  
 Իսկ ես՝ պաղ աղբիւր,  
 Զուր տայի նրան,  
 Նա ինձ՝ մեկ համբոյր:

Հողմեր իջան սարէն-քարէն,  
 Բաղ ու բաղչա աւրեցին,  
 Ընդմիջտ կարօտ մընալ ետրէն,  
 Ճակտիս էսպէս գրրեցին:

Կարծես վարդըս թողմած լինի,  
 Երգող բլբուլ էլ չունեմ,  
 Կարծես բախտըս քընած լինի,  
 Սիրուն սմբուլ էլ չունեմ:

Նա լինեք կարապ,  
 Իսկ ես՝ մախուր ծով,  
 Միտ իմ ծոցիս մեջ  
 Լողար ողջ մարմնով:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ՄԸՐ ԽՈՐ ՊԱՊԿԷ ԳԵՐԵԶՄԱՆ

Մըր խոր պապկէ գերեզման,  
 Թողին հոնտեղ, կիզամ ման,  
 Խոզիս կ'ելնի եռաքի տակ,  
 Խաւտա դժւար ա վաստակ:

Հիմիկ լաճերս ի՞նչ կանեն,  
 Մեռա՞ն, կորա՞ն, ի՞նչ քան են,  
 Սիրուն Շուշօն ներոտիկ,  
 Կըրպօն. Մըրտօն խորոտիկ:

Վա՛յ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛:

Քանի ղուրպատն եմ ընկեր,  
 Միջացս գօտին չեմ քակեր,  
 Խարսնուկ անուշ անթառամ,  
 Քեզնից զատ կի՛նն է հարամ:

Արեւ շողցեր ա պայծառ,  
 Նաշխուն ա դաշտ, ճեղն ու ծառ,  
 Զերդիս լերեւ են հաւքեր,  
 Կու ճըլլըլան մըր խաւքեր:

**ԹԱՌԸ ԴՕՇԻՍ**

Ջալնագրեց ՎԱՐԴԳԻԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ



Թա - ու զո - շիս զօր ու գի - շեր




սալթ քեզ հա - մար խաղ եմ կան - չում:



Թա - զը շատ կան սի - բուն զը - շեր:



հա - մա, լո - բըս քեզ եմ կան - չում:



Մէկ - ս - րի, ծար ջան, Ես - զութ ու մար - ջան:



շող - շո - զուն քա - բըս, աւ - գին գո - հա - բըս:

Թառը դօշիս զօր ու գիշեր,  
 Սալթ քեզ համար խաղեմ կանչում  
 Բաղը շատ կան սիրուն զըշեր,  
 Համա լորըս, քեզ եմ կանչում:  
 Մեկ արի, եար ջան,  
 Եաղուք ու մարջան,  
 Շողողուն փարս,  
 Անգին գոհարս:  
 Ընչի՞ էդպէս հեռու ընկար,  
 Գընացիր, էլ ետ չես գալիս,  
 Վայ թէ ընձէն լաւը գըտար,  
 Իմ սիրան է քեզ համար լալիս,  
 Մեկ արի եար ջան, ևլն.:

Անսիրտ, հէջ չէ թաք մէկ անգամ  
 Արի տեսնեմ երեսըդ լոյս,  
 Մի սիրտ մընաց, էն էլ քեզ տամ,  
 Հոտուն վարդըս դըրախտի բոյս:  
 Մեկ արի, եար ջան, ևլն.:  
 Քանի դեռ որ շունչ կայ մէջս,  
 Քեզնէն բընաւ չեմ կշտանայ,  
 Ինչքան էլ որ հոգիս տանջես,  
 Ոչ մի վայրկեան չեմ վշտանայ:  
 Մեկ արի, եար ջան, ևլն.:

### ԱԶՔՐՍ ՃԱՄԲԻԴ

Խօսք՝ Խ. ԱՐՈՎԵԱՆԻ  
Moderato cantabile

Երաժշտ. ՎԱՐԳԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Ձին է գալիս սարի գլխին, սարի դռնին, գաղ-դոն - լին, այլուստի եմ  
 Բո ճամբին, վայ եմ գալուստի --- շոր գլխին --- Լին, --- գլխին --- նա-ցիր,  
 ան, --- եր ա-րի, սսևնում եմ, --- եր ա-րի, ա-  
 թի, Դու իմ ետ - թիս կա - ռե - ցիր էլ Գաղ-դոն --- եր ա-րի, Լն - լու ճամբիդ, ա-  
 թի, ա - թի, Լո - գրս առ ա - թի Մեղքըս երե - սով ըլ Կաս, Կոնա - նել եմ,  
 Ինչ ա-րի, Ինչ ա-րի, --- Ինչ ա-րի: Եր ա-րի:

Ձին է գալիս սարի գլխին, սարի դռնին, գաղտերին,  
 Ազքըս գրցել եմ քո ճամբին, վայ եմ առիս չոր գլխիս,  
 Ա՛խ, գընացիր, ա՛խ, ետ արի, ես մեռնում եմ, ետ արի,  
 Դու իմ ետքս կապեցիր, էն էլ դարդու, ետ արի:  
 Ազքըս ճամբիդ է, արի՛, հոգիս առ, արի,  
 Մեղքըս երեսով չըտաս, փոշմանել եմ, ի՞նչ արի,  
 ի՞նչ արի, ի՞նչ արի, ե՛տ արի...

### ԲՈՒԼՎԱՐԻ ՏԱԿԻ ՑԵԼԵՐԸ


Պուճուր աղջրկայ տէրը, Հէ՛յ, ցելերը, ցելերը:	Կապուտ քուռակ հեծել եմ, Արագին մօտեցել եմ,
Ձի տալի քեաֆուր մերը, Բուլվարի աակի ցելերը:	Արա՛գ, ինձ մի ճամբայ տուր, Շէկ ետրին կարօտել եմ:
Ելայ արտը հաց տարայ, Ետրիս տեսայ, ետ դառայ,	Ընկայ ջուրն ու գնացի, Թըրջըւայ ու մընացի,
Խնձոր տըւեց, ես չառայ, Էս ի՛նչ բերախտ ետր դառայ:	Ելայ ափը չորցըրի, Սիրած ետրըս կորցըրի:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ԵՐԳԸ

Խօսք՝ ՍԱՐՄԷՆԻ  
Allegretto

Երաժշտ. Ա. ՄԵՐԱՆԳՈՒԼԵԱՆԻ

Հա-յա-սա-տանի վեր-քի երգիչ,  
 Հուսապայծառ Արովեան,  
 Խօսում ես մեր սրտի խորքից,  
 Մեզ հետ ես դու յաւիտեան:  
 Քո սեւ դարում, դու ազգերի  
 Եղբայրութիւն տենչացիր,  
 Ազատութեան վառ երգերի  
 Ոսկի սերմեր ցանկցիր:  
 Դու սեփական քո մեծ ազգին,  
 Փառքի երգեր ձօնեցիր,  
 Նըրա խիզախ, հըզօր հոգին  
 Անհուն սիրով սիրեցիր:  
 Երանի՛ թէ մի օր յանկարծ  
 Քանաքեռից իջնէիր:



Խ. ԱԲՈՎԵԱՆ

Եւ քո սիրած Նորքում կանգնած  
Երեւանին նայէիր:

Արեւազարդ, գուարդ Նորքից  
Գայիր մեր մեծ խնջոյքին,  
Եւ քեզ տանջող քո հին վէրքից  
Յաւէտ բուժուէր քո հոգին:

Ժողովրդի զաւակն ես դու,  
Կորած անյայտ, անդամբան,  
Բայց միշտ կ'ապրես դու մեր  
սրտում,  
Մեր մեծ, անմահ Արովեան:  
ԱԱՐՄԵՆ

### ՁԷՆԸԴ ՔԱՂՑԸՐ ՈՒՆԻՍ

Ձէնըդ քաղցրը ունիս, լամզով կու խօսիս,  
Նա պահէ քիզ, ումն օր ծառայ իս, գողալ,  
Մէչկըդ ջէյրանի է, ռանգըդ շաքարի,  
Փռանգըստանէն էկած խարա իս, գողալ:

Ղուճաշ ասիմ՝ շուրեղէն է, կու մաշւի,  
Սալքի ասիմ՝ ախրը մին օր կու տաշւի,  
Ջէյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու եաշւի,  
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ միրա իս, գողալ:

Թէ մանուշակ ասիմ՝ սարեմէն կոսին,  
Թէ ջաւայիր ասիմ՝ քարեմէն կոսին,  
Թէ վուր լուսին ասիմ՝ տարեմէն կոսին,  
Արեգագի նըման փարա իս, գողալ:

Գուզիմ թէ համաշա գըրանըդ գամ ուխտ,  
Աչկիրըդ կարմիր վարթ, նուր բացարած տուխտ,  
Լիզուդ՝ գըրիչ ունիս, ձեռըդ դուլգազ թուխտ,  
Ծովեմէն դուս էկած՝ գարա իս, գողալ:

Սիրոյ սիրմըդ սըրտիս մէջըն ցանեցիր,  
Նազ ու զամզով, եա՛ր, իմ հոգիս հանեցիր,  
Էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն սըպանեցիր,  
Գըլխիդ էկած զադէն առա ես, գողալ:

ԱԱՅԱԹ - ՆՈՎԱ

### ԱՌ ԱԶԳՍ

Ազդ իմ, որքան նըկուն մնաս,  
Սիրտըս քեզանից չի գատւի,  
Հազար տեսակ չարչարանք տաս,  
Սիրտըս քեզանից չի գատւի:

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,  
Հարազատ մայր իմ Հայաստան,  
Թեկուզ դրախտն էլ ինձի տան,  
Սիրտըս քեզանից չի գատւի:

Քեզանով եմ ես երջանիկ,  
Իմ սիրելի, իմ անուշիկ,  
Ծոցիդ մէջը հանգչիմ, մայրիկ,  
Սիրտըս քեզանից չի գատւի:

Ջիւանին եմ, քեզ բարեկամ,  
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,  
Հարստութեան էլ տէր դառնամ,  
Սիրտըս քեզանից չի գատւի:

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

# ՆԱ ՄԻ ՆԱԶ ՈՒՆԻ

Զայնագրեց՝ ՎԱՐԴԳԻՄ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

1. Ե. կան իմանա՞նք ա՛նուշ օ՛րեր, ձայնով լրջանա՞նք դա՛շ — դեր, յո՛րեր, եւրբո՞ւ պոփե՞լք  
 սո՛յ-բան կ'երթայ, եւսփան՝ կապան՝ ա՛յ — աւ — ն շորեր: Ըստ՛ի ձայն ունի, ձայն ունի, ձայն ունի,  
 յեռփն՝ սա՛յ ունի, սա՛յ ունի, սա՛յ ունի, ջա՛ն-լով սո՛յ-բան կ'երթայ: Գայթե՛ 5 Քե՛յ-  
 բան կ'երթայ: 2. Արարչո՞ւն էրա՛ն ճշմարտ առ-դը, Բնութի՞ն իզա՛ն Գոր — կե՛ց վարդը, եւրբո՞ւ պոփե՞լք  
 եւրբո՞ւ կե՛-փո՛ յն՛ իմանայ՝ սր — գիւ դարդը: Հապար՝ սր-բուն, եւ-պար կե՛-փո՛  
 յն՛ իմանայ՝ սր — գիւ դարդը: 3. Հա՛-փո՛ն էրա՞ն՝ Ե — բան, ա՛նուշ ունի՞ս ա —  
 ջու՛ղ Ե — բան: Բնութի՞ն պոփե՞լք եւրբո՞ւ կանչե՞մ, պոփ-մոր վառ-ւի՞մ որ — պոփ վեարամ:  
 Բն-բան պոփե՞լք եւ-րիւ կան-չե՞մ, պոփ-մոր վառ-ւի՞մ որ — պոփ վեարամ:

Եկան գարնան անուշ օրեր,  
 Ծաղկով լցւան դաշտեր, ձորեր,  
 Եարբս զուգւել սէյրան կ'երթայ,  
 Հազած-կապած ալւան շորեր:  
 Նա մի նազ ունի,  
 Նազ ունի, նազ ունի,  
 Չեռփն սազ ունի,  
 Սազ ունի, սազ ունի,  
 Զայելով սէյրան կ'երթայ,  
 Դարձել է ջէյրան՝ կ'երթայ:

Արառւան եկաւ մտաւ արար,  
 Բլբուլն եկաւ գրկեց վարդը,  
 Հազար սիրուն, հազար հէքիմ  
 Չեն իմանայ սրտիս դարդը:  
 Նա մի նազ ունի... եւայլն:  
 Հաւքերն եկան երամ-երամ,  
 Անուն ունիմ Աշուղ Շերամ,  
 Էնքան պիտի եարիս կանչեմ,  
 Տէյմոր վառւիմ որպէս Քեարամ:  
 Նա մի նազ ունի... եւայլն:  
 ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

## ՈՎ ՍԻՐՈՒՆ, ՍԻՐՈՒՆ

Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար,  
Քաշուժ է փափաք, ո՛վ սիրուն, սիրուն,  
Ձի լինի քեզ պէս ամենայն երկիր  
Փայլուն արուսեակ, ո՛վ սիրուն, սիրուն:

Կը ստանաս համբաւ, քիչ էլ սպասէ,  
Կուգայ ժամանակ, ո՛վ սիրուն, սիրուն,  
Փառք ու պատիւըդ քեզի կը յանձնեն  
Քոյրիդ նրմանակ, ո՛վ սիրուն, սիրուն:

Եղեմեան ծաղիկ, հայրենի հողով  
Սընւած մանուշակ, ո՛վ սիրուն, սիրուն,  
Հոգիդ անարատ, տեսքըդ գերազանց,  
Մէկ հատ օրինակ, ո՛վ սիրուն, սիրուն:

Իշխանուհիներ աշխարհիս շատ կան,  
Բայց մեզ անօգուտ, իմացիր հաստատ,  
Նոքա օտար են, չեն սիրեր սըրտով,  
Կեղծ ու պատիր են, արտաքին և վատ:

Ուրեմն մօտ եկ, դու իմ սիրելի,  
Իմ արեւակից, տիկին հարազատ,  
Քո սէրըդ սուրբ է, ո՛վ սիրուն անմեղ,  
Վարքով ու բարքով, սըրտով անարատ:

Մաղթում եմ սըրտով՝ մնաս անխափան,  
Միշտ վե՛հ անունով, անկախ ու ազատ,  
Խըղճալի երկիր Ջիւանու համար  
Մնաս յաջողակ, ո՛վ սիրուն, սիրուն:

ՋԻԱՆԻ

## ՀՈ՛Պ ԳԻՒԼԻՋԱՐ

Հո՛ւ պ գիւլի գիւլ,  
Հո՛ւ պ գիւլի գիւլ Գիւլիգար,  
Շեկ ծամերդ նախուց լիգար,  
Գիւլիգար:

Ձիւն է գալուժ վերեւից,  
Կաթկըթում է վերեւից,  
Լաւ օրերը սեւ անցաւ,  
Անբախտ եարի երեսից:

Սեւ-սեւ ամպեր հեռացէք,  
Իմ եարին ճամբայ բացէք,  
Եար եարի հետ խօսելով,  
Անգաճ արէք, լըսեցէք:

Ծառի տակը փորեր եմ,  
Գունտ-գունտ օսկի հորեր եմ,  
Խարար տարէք մայրիկիս,  
Դիար, դիար կորել եմ:

### ՍԻՐՏՍ ԿԸ ԴՈՂԱՅ

Պարտիզում վարդեր բացւած՝ կը սպասէր սոխակին,  
 Առանց սոխակ թառամած՝ կարօտ են պսակին,  
 Արդեօք ո՞վ է, դուռն է թակում, ա՛խ, սիրաս կը դողայ,  
 Իմ սիրունիս ո՞ւր է գնում, ա՛խ, սիրաս կը դողայ:

Գետակի ալիքները գնում են խայտալով,  
 Սիրահարի աչքերը նայում են արտասուելով,  
 Արդեօք ո՞վ է, դուռն է թակում, ա՛խ, սիրաս կը դողայ,  
 Իմ սիրունիս ո՞ւր է գնում, ա՛խ, սիրաս կը դողայ:

Թիթեռը ճրագի մօտ շրջում է անդադար,  
 Մինչ իր վերջը սիրակարօտ չունի նա օր դադար,  
 Սիրունին տանը նստած՝ սպասում է իր հարին,  
 Քնարը ձեռին առած՝ նրւագում է լալագին:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

### ԲԱՂՁԱՍ ՈՒ ԲԱՐԸՍ ԴՈՒ ԵՍ

Բաղչաս ու բարբս դու ես,  
 Խօսիր բըլբուլըս, խօսիր,  
 Ջան ու ջիգհարբս դու ես:

Քո սըրտիդ սէրը բացիր:  
 Քեզնից ուրիշ եար չունիմ,  
 Եա՛ր չունիմ, եա՛ր,  
 Սիրական եարբս դու ես,  
 Ջան բըլբուլըս եա՛ր:

Կանչում եմ՝ խարար չունիս,  
 Խօսիր բըլբուլըս, խօսիր,

Սըրտումըդ բա սէր չունի՞ս,  
 Քո սըրտիդ սէրը բացիր:

Քեզնից ուրիշ եար... եւայլն:

Սարի սըմբուլը դու ես,  
 Խօսիր բըլբուլըս, խօսիր,  
 Իմ ազիզ եարբ դու ես,  
 Քո սըրտիդ սէրը բացիր:

Քեզնից ուրիշ եար... եւայլն:

(Ակնայ ժողովրդական երգ)

### ԱՒ, ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ես քեզ տեսայ մէջը այգուն,  
 Ճըտվըտալով, ինչպէս թռչուն:  
 Սրտիս սաստիկ դուր եկար դուն:

Ա՛խ, իմ իրական, անուշ սիրեկան,  
 Կեանքիս հասօրբ դու ես, անման,  
 Վառայ, վառայ, ես վառայ,  
 Կրակիդ ճարակ դառայ,  
 Հանգստութիւն չունեցայ,  
 Մինչ իմ կարօքս չառայ:

Այն օրւանից չունիմ դադար,  
 Ինչ քեզ տեսայ գեղատիպար,

Իսկապէս եղայ սիրահար:

Ա՛խ, իմ սիրեկան... եւայլն:

Աչքերիցըդ մի կայծ թռաւ,  
 Թռաւ, սրտիս մէջը ընկաւ,  
 Ինչ կանեմ չի հանգչիր բնաւ:

Ա՛խ, իմ սիրեկան... եւայլն:

Փասիան ես ոսկեփետուր,  
 Աչքերիդ մէջը կը ցոլայ հուր,  
 Թագունիս ես թռչնոց հանուր:


Ա՛խ, իմ սիրեկան... եւայլն:

ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

ՊՍԱԿ ՊՍԱԿ




Պը-սակ պը-սակ ցիկ-նի պը-սակ, փե-սակ ե-բաւ լի-նը իր-սակ:




Տիր-նա-նի-նի, ցիր-նա-նի-նի, ցու-նի յե-նը փե-ղով փե-ն է:

Պըսակ պըսակ տիկնի պըսակ, Տիրնանինէ, տիրնանինէ,  
Փեսան եկաւ լիքը քըսակ: Զուռնի ձէնը գեղով մին է:


ԿԼՈՐ ՊԱՐ



Կը-լոր պար, մէջը ծառ, փե-ղայ ա-րի հար-սակ ցար:



Տիր-նա-նի-նի, ցիր-նա-նի-նի, նի-նի նի-նի ցիր-նա-նի-նի, ցար եկո-ւ ըն



նոր փե-սակ է, ցար եկո-ւ ըն նոր փե-սակ է, նա-րա-հար-սակ է

Կըլոր պար, մէջը ծառ, Տիրնանինէ, տիրնանինէ,  
Փեսայ արի, հարսին տար: Նինէ, նինէ, տիրնանինէ:

Պար եկողը նոր փեսան է,

Պար եկողը նորահարսն է:

ԶԵՄ, ԶԵՄ, ԶԵՄ

Զե՛մ, չե՛մ, չե՛մ կըրնա խաղայ,  
Վարդ կօշիկըս կը ճըռճըռայ,  
Անօթի փորս կը ղըրղըռայ,  
Կեսուրս կուգայ կը վըռվըռայ:

Զե՛մ, չե՛մ, չե՛մ կըրնայ խաղայ,  
Սեասուզ սիրտըս կը դողդողայ,  
Լացից աչքըս կը մըռմըռայ,  
Չար կեսուրըս կը բըռբըռայ:

Զե՛մ, չե՛մ, չե՛մ կըրնայ խաղայ,  
Չահել-ջիվան դոշիս դաղ ա,  
Լաչառ տալըս կը ճըրճըրղայ,  
Տեքրակինըս կը բըրբըրղայ:

Զե՛մ, չե՛մ, չե՛մ կըրնայ խաղայ,  
Քաւթառ եարըս կըծու սոխ ա,  
Ի՞նչ եղաւ քեզ, ա՛յ շէկ տըղայ:  
Ես քո սիրուց հալ-մաշ եղայ:

**ՔՆՔՈՒՇ ՀՈՎԻԿ**

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ  
Moderato

Երաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐԵԱՆԻ

Քնքուշ հովիկ իմ նազելուց Քաղցր քաղցր հեղինակ հեղինակ հեղինակ հեղինակ  
 Վերջ ու զարգաց շարք քաղցր-քաղցր, սիրուց - բարեկամ - հե-  
 ղինակ: Երբ ծաղրանալի, ոսկի թասով, - վարդի գոյնով - զինի բեր,  
 թեպի - զինի  
 լիճանով - բարեկամ - սիրուց - բարեկամ - սիրուց - բարեկամ - սիրուց  
 զինի - զինի  
 յարան, հարկի ծաղրանով - հեղինակ թեպի: Երբ, ծաղրանալի, ոսկի  
 թասով, - վարդի գոյնով - զինի - զինի

Քնքուշ հովիկ, իմ նազելուց	Անուշ խօսքեր սիրուս սրբաի
Քաղցր քաղցր հեղինակ բեր,	Պարտեզներից քաղի բեր:
Վիշտ ու ցաւըս շուտ փարատիր,	Ջերմ համ բոյրի ծով կարօտով,
Սիրոյ արեւ հեղինակ բեր:	Ծաղիկ ծաղկունք հեղինակ բեր,
Շուտ մատրուակ, ոսկի թասով,	Շուտ մատրուակ, ոսկի թասով,
Վարդի գոյնով զինի բեր,	Նրան փայլով զինի բեր:

**ԱՂՋԻ ՆԱԶԵՐՈՎ**

Աղջի նազերով,  
 Շէկ-շէկ մազերով,  
 Գերեցիր ինձի  
 Հաղար նազերով:  
 Հազել ես շալը,  
 Կայնել ես կալը,

Թառ բոյիդ զուրբան,  
 Սիրուն իմ հարը:  
 Աղջի նազերով,  
 Թել-թել մազերով,  
 Գերեցիր ինձի  
 Անուշ նազերով: 4. 4.

### ԿԱՆՁԷ ԿՈՌԻՆԿ

Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛, քանի դարուն է,  
Ղարիբներու սիրտը գունատ գունատ արուն է:

Կոռ՛նկ ջան, կոռ՛նկ ջան, գարուն է,  
Կոռ՛նկ ջա՛ն, կոռ՛նկ ջան, գարուն է,  
Ա՛խ, սիրքս արուն է:

Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛, քանի արօտ է,  
Աշխարհն է արեգակ, սիրտըս կարօտ է:

Կոռ՛նկ ջան, կոռ՛նկ ջան, արօտ է,  
Կոռ՛նկ ջան, կոռ՛նկ ջան, արօտ է,  
Ա՛խ, սիրքս կարօտ է:

Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛, քանի արեւ է,  
Աշնան կ'երթաս երկիր, հարիս բարեւէ,

Կոռ՛նկ ջան, կոռ՛նկ ջան, արեւ է,  
Կոռ՛նկ ջան, կոռ՛նկ ջան, արեւ է,  
Ա՛խ, եարիս բարեւէ:

### ԿԱՆՁՈՒՄ ԵՄ ԵԱՐ, ԱՐԻ

Կանչում եմ հար, արի, հար արի, հար,  
Անջիգհար, մութն ընկաւ, տուն արի հար:

Հովի թեւով արի, հար,  
Կալի ճամբով արի, հար:

Էս օրը մեր դռնով դու անցար, հար,  
Գընացիր, մընացիր, չը դարձար հար:

Աչքըս ճամբիդ մնաց, հար,  
Սիրելի եմ քեզ, արի, հար:

Մթնել է, տուն արի, անջիգհար հար,  
Ալ ձիով շուտ արի, սիրածիդ տար:

Տուն արի, տուն, անուշ հար,  
Սիրելի եմ քեզ, արի, հար,  
Եա՛ր, եա՛ր, եա՛ր:



**ԶՈՎ ԳԻՇԵՐ Է**

Զալնագրեց՝ Վ.ԱՐԳԳԷՍ ՏԱԼԵԱՆ (\*)

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

Զով գիշեր է դուրս եկ, լուսնեակը նորել է,  
 Նուշ աղջիկ, քո սիրուց հանգիստըս կորել է,  
 էդ չի՛նար հասակըդ իմ խելքըս տարել է,  
 Անուշ հա՛ր, շուտ արի, քնքոյշ հա՛ր, շուտ արի:

Բոյիդ բուսիդ մասադ,  
 Զեյրան, զեյրան, զեյրան,  
 Մեհախ հուսիդ մասադ,  
 Զեյրան, զեյրան, զեյրան:


Աստղեր կը շողշողան պարզորակ երկընքում,  
 Վառեցիր իմ հոգին քո ու սեւ-սեւ աչերէն,  
 Համբերանքըս կտրաւ, լալիս եմ քո ձեռքէն,  
 Անուշ հա՛ր, շուտ արի, քնքոյշ հա՛ր, շուտ արի:

Բոյիդ բուսիդ մասադ... եւայլն:

Ափսոս էս գիշերին, որ մենակ ման կուզամ,  
 Կ'աղաչեմ, դուրս չես գայ, առանց քեզ ո՞ւր գընամ,  
 Թէ հոգիս էլ ուզես, աղի՛ղ ջան, քեզ կուտամ,  
 Անուշ հա՛ր, շուտ արի, քնքոյշ հա՛ր, շուտ արի:

Բոյիդ բուսիդ մասադ... եւայլն:

(\*) Երաժշտագետ Վարդգէս Տալեան Աշուղ Շերամի զաւակն է:



Մուսա լեռը, հեռուէն դիտուած

## ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՊԱՐԵՐԳԸ

Մուէտահայ բարբառով

Կէրմէօր ֆըստան հէգէուծի,  
 Հէյէ, հէյէ, հէյէ, ճիճնայի,  
 Չուց էլ էղվիւր վիլլէուծի,  
 Հէյէ, հէյէ, հէյէ, ճիճնայի:  
 Կիղիցէն բէօյ գէցէուծի,  
 Հէյէ, հէյէ, հէյէ, ճիճնայի,  
 Պըր նիշանուիմ էսէուծի:  
 Հէյէ, հէյէ, հէյէ, ճիճնայի:

Կուգիր ըննիր կէծուցը,  
 Ըրկը նուռ կիր հէր ծուցը,  
 Շիւտ ուզիցա չիտէօրզը,  
 Դարձու գարկից կըրծուցը:

Իտիվ տուներ միբէ'կի,  
 Միբէ կի'նող ջիբէկի,

Թարգմանութիւնը

Կարմիր օրջազգես հազած է,  
 Հէյէ, հէյէ, հէյէ ճիճնայի,  
 Ինչ ալ աղուօր վայած է,  
 Հէյէ, հէյէ, հէյէ ճիճնայի,  
 Եկեղեցիին բակը գացած է,  
 Հէյէ, հէյէ, հէյէ ճիճնայի,  
 Պիտի նօսնուիմ քսած է:  
 Հէյէ, հէյէ, հէյէ ճիճնայի:

Կ'ուգար կ'եյլեր ածուէն,  
 Երկու նուռ կար իր ծոցը,  
 Շաս ուզեցի չսուաւ,  
 Դարձաւ գարկաւ կուրծիին:

Ետեր տունին պուրակ է,  
 Պուրակը կեցողը բօրեցի է,

Հիչ մի վէրնէք, էշկըննէր,  
Լուսընկլայս տըզ ցիրեկի:

Տիթիյրի լուընկլայսը,  
Թէզու ի արտէյս բայսը,  
Մո'ւլուր, հիգեկը'ս, մո'ւլուր,  
Սիրիմ գիչուցըզ լայսը:

Իրկէնքը շիւտ այուզի,  
էշկէյնն էլի պառկէուծի,  
Կինչիցա՝ էր տուտ իլու,  
Կսուց. «Ան շիւտ հէրբէուծի»:

Ուզիցազը չի տէուրծը,  
Բըուում քիշտից կրծէիւցը.  
Տիլլէն խէզիւզ սիվցէուծի,  
էշկէին գէիմ ս խիվցէուծի:

Թանճարան կու քըփըրթու,  
Տըվըք զէշկէին թըզ ուրթու.  
Թանճարան էփէուծ հէտէկի,  
Նիշէնծէուս իսկը հէտէկի:


Հե'չ մի վախնաք, աղջիկներ,  
Լուսնկան գերդ ցերեկ է:

Յաթեր է լուսնկան,  
Թարմ է սրսիս բոյսը,  
Մի', լար, հոգեակս, մի' լար,  
Սիրեմ աչեբուզ լոյսը:

Երկինքը աս պարզ է,  
Աղջիկն ալ պառկած է,  
Կանչեցի՝ իր հայրը ելաւ,  
Բսաւ. «Ան աս հարբած է»:

Ուզեցի բայց չբսուաւ,  
Բուռով գարկաւ իր կրծքին.  
Որթին խաղողը սեւցած է,  
Աղջիկն ինձմով խեւցած է:

Սանը կ'եռայ,  
Տուեք, աղջիկը բող երթայ.  
Սանով եփածը հասիկ է,  
Նեանածս ոսկեհասիկ է:



Մուսա Լերան Եօղուն Ոլուգ գիւղէն տեսարան մը

Էսիւր անցու գի՞ւր գընիւց,  
Աչքըս իտաըթէն մընիւց.  
Վէիզ կէխէուծի լաուրջ հըննիր,  
Եէտիւր ացա բուն հըննիր,

Էշկէն, էնէուներդ Մայրում,  
Տէուր ընծի դէուս մը էրուն.  
Էշկէն, էնէուներդ Մէնուշ,  
Դէուն սիր ուտիս, իս անուշ:

Տղու, էնէուներդ Մըկըրտէշ,  
Պոյըդ իրկան, խէիւքըդ քէշ.  
Տղու էնէուներդ Թորոս,  
Դէուն կ'ըլմէնէս քալ խուրաուզ:


Էշկէն, էնէուներդ Սաուի,  
Դէուն զէմ սըիւրար մը վաուի.  
Քիլի ուրթընք միր քիւշան,  
Մէտնէս ուտում քի նըշան:

Հոսկէ անցաւ, ո՞ւր գնաց,  
Աչքս ետեր մնաց,  
Վզէն կախած է կապոյս ուլունցներ,  
Ասկէ, բսի, բան չ'ելլեր:

Աղջիկ, անուերդ Մարիամ,  
Տուր ինծի գաւաթ մը բան.  
Աղջիկ, անուերդ Մանուէ,  
Դուն սեր ուտես, ես՝ անուէ:

Տղայ, անուերդ Մկրտիչ,  
Հասակդ երկայն, խելդ քիչ.  
Տղայ, անուերդ Թորոս,  
Դուն կը նմանիս գոնջ խորոզ:

Աղջիկ, անուերդ Սաուա,  
Դուն իմ սիրտը մի վաուեր.  
Քայէ երբանք մեր անկիւնը,  
Մասանիս սամ կեզի նեան:



Մուսա Լեռ — Քարա Չայի կամուրջը

## ՊԱՐՏԻԶԱԿԻ ՊԱՐԵՐԳ

Լուսաղբիւրին ծառերը,  
Հոն թօփ կ'ըլլան մանչերը,  
Նշանածնին որ տեսնան,  
Ծուռ կը դընեն ֆէսերը:

Լեռները կարգաւ կարգաւ,  
Հարս էլլողը քիւրք հագաւ,  
Նշանածին տուած օսկին  
Կէրտանին վըրայ փակաւ:

Հիւլիւն կ'առնեմ կը շարեմ,  
Տոպրակ կ'առնեմ կը կարեմ,  
Գեղէ գեղ կը պառտիմ,  
Սրտիս սիրածը կ'առնեմ:

Ձաղացին շէմը տաշած,  
Երկու ախլախէն քաշած,  
Իմ եարուն ըքուիները  
Օսկի դալէմով քաշած:

Ամպ կը գոռայ ձուն չի գար,  
Իրկուն կ'ըլլայ տուն չի գար,  
Այս անտէր բարձին վրայ  
Առանց հարու քուն չի գար:

Տղա՛յ, անունըդ նազար,  
Մ'ընե՛ր աղջըկայ նազար,  
Ձատկին՝ վարի կալերը  
Կ'ըլլայ աղջըկայ պազար:

Լեռնէն ջուր մը կը վազէ,  
Հարցուր նայէ ո՞ւր կ'երթայ,  
Մահանայ քենին կ'ընէ,  
Իր կարը տեսնել կ'երթայ:

Մամա մանէ մանածըդ,  
Գնա՛ քաղէ ցանածըդ,  
Պապաս հարսնիք է բուներ,  
Չեմ ճանչնար նշանածըս:

## ՋԱՆ ԻՄԱՆ

Էլա տանիս հերդիս բացի,  
Ջան իման, ջան իման,  
Եարըս տուն չէր, նստայ լացի,  
Ջան իման, ջան իման,  
Չինար բոյիդ ես զուրբան,  
Ջան իման, ջան իման,  
Սեւ աչերուդ ես զուրբան:  
Ջան իման, ջան իման:  
Դու հուսա կիգաս, դու խըլաթայ,  
Բոլոր էրես լմանի գաթա,

Պազիկ մի տուր, տամ զոլաթա,  
Կանչիմ՝ կար արի՛, շուտ արի:

Դու հուսա կիգաս, խասագեղու,  
Դու կու քելիս, ինչոր մեղու,  
Պազիկ մի տուր, տանիմ գեղու,  
Կանչիմ՝ կար արի՛, շուտ արի:

Արի էրթանք կունըկու սար,  
Բերդ մի շինինք մտնանք խոտար,  
Խարիր կուզին, կիտամ խազար,  
Թուխ աչքերուդ խաթրու խա-  
մար:

## ՍԷԼԻ ԵՐԳԸ

Մեռայ բաղը գընալէն,  
Ել, ա՛յ, ել, ել, թառլան մարալ ջան,  
Ջըրերի հետ խաղալէն,  
Ել, ա՛յ, ել, ել, ձեռներիդ զուրբան.  
Ծառներին թուփ չըմընաց,  
Դարդիս դարման անելէն:

Ա՛խ, ՀԻՒԱՆԴ ԵՄ

Զայնագրեց՝ ՎԱՐԳԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ



Սիրուն պեխերդ ես խուզում,  
Սրախ դարդեր ես դիզում,  
Կայնել համբոյր ես ուզում:

Ա՛խ, հիւանդ եմ չեմ կրնա,  
Ա՛խ, հիւանդ եմ չեմ կրնա,  
Սրսքս ֆեզնէն չի դառնա:

Կէս գիշերին տուն կուգաս,  
Դուռ ու երդիք կը բանաս,  
Աճապ ուրակ՞ը կը մընաս:

Ա՛խ, հիւանդ եմ... եւայլն:  
Քու սսածըդ ճարել եմ,

Նոր շապիկդ կարել եմ,  
Համա քեզնէն ջորել եմ:

Ա՛խ, հիւանդ եմ... եւայլն:  
Դոշկիս երեսը խաս է,  
Դոշըս մարմարէ թաս է,  
Մեզի տեսնողն ի՞նչ կ'ասէ:

Ա՛խ, հիւանդ եմ... եւայլն:  
Վըրէս եորդան մի գըցի,  
Ընձէն քիչ հեռու կեցի,  
Խօսքիս միտքը իմացի:

Ա՛խ, հիւանդ եմ... եւայլն:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ԳՆԱ ԱՐԻ, ՄԱՆ ԱՐԻ (\*)

(ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՎ)

Գընա արի, ման արի,  
Գընա արի, ման արի,  
Բարձը դընեմ եան արի,  
Արմենակըս նազանի:

Ձուխտ կը քելէ տեքերկին,  
Գընա արի, ման արի,  
Ձուխտն էլ զուրբան մեր հընգին,  
Արմենակըս նազանի:

Ա՛յ աըղայ, կարմիր կապով,

Գընա արի, ման արի,  
Եկար անցար մեր պատով,  
Արմենակըս նազանի:

Կ'երթամ կ'ըսեմ աղբօրըս,  
Գընա արի, ման արի,  
Կուգայ զարկէ խանշալով,  
Արմենակըս նազանի:

Գընա արի, ման արի,  
Ձա՛ն, իմ եարն ես, շուտ արի:

(\*) Այս երգին ձայնագրութիւնը տպուած է Երգարանիս 351-րդ էջին վրայ, բայց անուշադրութեամբ, իբրև ոտանաւոր հրատարակուած է երգին մէկ այլ տարբերակը: Երգել, ուրեմն, այս էջի բառերով:

## ԽԱԼԵՐԻԴ ՂՈՒՐԲԱՆ

Հալւեց սարերի ձուներ,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ,  
 Բընէն թռաւ թռչունը,  
 Քայլերուդ զուրբան,  
 Զան աղջիկ,  
 Աչքէս խլեցիր քունը,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ:

Եղնիկի նման ման գալըդ  
 Կախաւի նման պար գալըդ,  
 Շրթունքդ լայ ու մարջան է  
 Նայւածքդ հոգի կը հանէ:

Մեր ձորի ջուրն անուշ է,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ,  
 Խաս վարդի փուշն անուշ է,  
 Քայլերուդ զուրբան,  
 Զան աղջիկ,  
 Կուրծքըդ նուրբ է, քնքուշ է,

Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ:  
 Եղնիկի նման... եւայլն:  
 Կանաչ դարուն է եկել,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ,  
 Բազ ու բազա է ծաղկել,  
 Քայլերուդ զուրբան,  
 Զան աղջիկ,  
 Նախշուն փնջիկ ես դառել,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ:

Եղնիկի նման... եւայլն:  
 Մի փերի ես ծովային,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ,  
 Նախշուն ծաղիկ ձորային,  
 Քայլերուդ զուրբան,  
 Զան աղջիկ,  
 Թեթեւ թռչնիկ հովային,  
 Խալերուդ զուրբան,  
 Նազ աղջիկ:  
 Եղնիկի նման... եւայլն:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

## ԼԷ ԵԱՄԱՆ

Շատ ազուտորիկ աղջիկ ես,  
 Կարմիր վարդի փնջիկ ես,  
 Մօտեցիր հասըդ աննեմ,  
 Քո դարդէն կը մեռնիմ ես:

Լէ եաման, յէ յէ եաման,  
 Լէ եաման, դու դու աննրման.  
 Ամբողջ աշխարհ փնտռեցի,  
 Զք գրսայ կեզի նրման:

Կայներ կը նայիս ծովին,  
 Վարսերըդ տուած հովին,  
 Հազար երանի կուտամ,


Բարակ մէջքըդ գրկողին:  
 Լէ եաման... եւայլն:  
 Շնորհք ունիս կուսական,  
 Իմ մարալըս պատուական,  
 Հազար գեղեցիկ տեսնեմ,  
 Դու ես սրախ սիրական:

Լէ եաման... եւայլն:  
 Ես քեզի շատ կը սիրեմ,  
 Ինչ որ որ ուզես կը բերեմ,  
 Մօտեցիր՝ մարդ չի տեսներ,  
 Ճերմակ դռնէդ համբուրեմ:  
 Լէ եաման... եւայլն:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Ե Ր Գ Ե Ր



Ս. Դրիգոր Լուսավորչի Մայր Տաճարը — Պէշրու.Թ, Անթիլիաս  
Յառաջամասին՝ ձախ կողմը, Նահատակաց Յուշադամբանը

## ԵՐԳ ԿԱԹՈՂԻԿԷ ՏՕՆԻ

Ձայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

*պիսիք ինչ ձայնը, սկզբը ձ = 54*

ու ըստի լե՛րս սուրբ է կե՛րտե՛րս  
 յի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ  
 « յայտն արարեալ էս զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ  
 էս զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ  
 սրբալե՛րս զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ զի՛նչ

Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն  
 երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով և զարդարեաց  
 զամուրըս քո սքանչելի փառօքն իւրովք:

Խնդա յոյժ դուստր Սիովնի, քանզի երկիրս երկինք ե-  
 ղեն այսօր վերստին քո նորոգմամբ, և թագաւօրն երկնաւոր  
 հաճեցաւ բնակիլ ի քեզ:

Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր առեալ ասնիմք քեզ  
 այսօր զանդադար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անարատ  
 անքնին քո խորհրդով:

## ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ

Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նրմա, ձայնք  
 հնչեցին սանդարամեաք անդընդոց:

Տեսեալ ըզլոյս մեծ Հայրապետին Գրիգորի, պատմէր  
 ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ, քանզի ի  
 սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

ԱՂԵՐՍ

*Հնչարձայն. d. 50* *Չորսուղի Կանխապես Վրբ.*

Տէր, " - շոր - յեան Տէր " - շոր - յեան.

Տէր, -

Տէր, " - շոր - յեան

Տէր, " - շոր - յեան Տէր " - շոր - յեան:

Տէր " - շոր - յեան

Տէր, " - շոր - յեան

Տէր, " - շոր - յեան

Տէր, " - շոր - յեան Տէր " - շոր - յեան.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Արի Աստուած հարցն մերոց,  
 Որ ապաւէնդ ես նեղելոց,  
 Հա՛ս օգնութիւն ծառայից քոց,  
 Լեր օգնական ազգիս Հայոց:  
 Միջնորդութեամբ սրբոյ խաչին  
 Եւ անարատ սուրբ ծնողին,  
 Յիշեա՛ղհեղուն արեան Փրկչին,  
 Ել ի խնդիր փոքու հօտին:

Զի գիտացաք մեք հաւաստեալ,  
 Որ Հափ մեղաց մերոց լըցաւ,  
 Ուստի և Տէրդ մեր բարկացաւ,  
 Առ ի խրատել զմեզ զարթեալ:  
 Արդ անկանիմք առաջի քո,  
 Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ,  
 Անցո՛ր ի մէնջ զցասունն քո,  
 Վասն անսպառ զթութեան քո:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

# ԵՐԳ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ

Չայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Adagio 72 *mit Beharrlichkeit zu beobachten*

եկեալքս ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյիս: օրհնեմք զշայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ Աստուծոյ և ամենեքեան ասեմք ամէն: Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով զամենասուրբ Երրորդութիւնդ: Որ տայ զկենդանութիւն, վասն որոյ և զաշխարհքս զՔիզ փառաւորէ (\*):

Եկեալքս ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյիս: օրհնեմք զշայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ Աստուծոյ և ամենեքեան ասեմք ամէն: Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով զամենասուրբ Երրորդութիւնդ: Որ տայ զկենդանութիւն, վասն որոյ և զաշխարհքս զՔիզ փառաւորէ (\*):

(\*) Դպրաց խմբերգի այս մասը շարունակութիւնն է Կիրակամսից այն երգին, որ կը սկսի սապէս. — «Ալէլուիա, ալէլուիա: Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս»: Այնուհետեւ խմբովին կ'երգուի «Եկեալքս ի մտանել արեգականն», եւ այլն: Չայնագրութիւնը իր այս ձեւով, այսինքն խմբերգի բաժինով, առաժ ենք Կոմիտաս Վրդ.ի դաշնաւորումէն, ուր կը պահէր «Լոյս զուարթ»ը:

# ԵՐԳ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄՈՒ

Չայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

♩ = 52

Աշխարհս աճենայն, առ իս նաչեցեալ, ախտակից լերուք:  
 Բանամ զչրթունս, բարբառիմ լեզուաւս, բողոքեմ զանձնէս,  
 Տէր սղորմեա, Տէր սղորմեա, Տէր սղորմեա:  
 Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուբ ինձ փորեցի:  
 Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի, դարան գործեցի, Տէր սղորմեա,  
 եւ այլն:  
 Երբեմն էի լոյս, և այժմ եմ խաւար, և ստուեր մահու:  
 Զիարդ պատմեցից, զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ,  
 Տէր սղորմեա, եւ այլն:

## Տէր ՈՂՈՐՄԵԱ

Մ. ԵԿՄԱԼԵԱՆ

- Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Ամենասուրբ Երրորդութիւն,  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա: Տուր աշխարհիս խաղաղութիւն:

Ննջեցելոց արքայութիւն,                   Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Ազգիս Հայոց ազատութիւն:               Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Միջնորդութեամբ սուրբ և անմահ  
եւ կենարար պատարագիս:

**ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ**

HANDEL

**ԶՕՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ**

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած, և ի սմա հեղեր ըզպատուական սուրբ զարիւն. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Եւ ըզքո միւսանգամ ըզգալուսարդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:



# ԱՅՍ ԽՈՐՀՈՒՐԴ ԼՅԱԻ

(ԳԱՆՁ Ա. ՈՏՆԼՈՒԱՅԻ)

Չայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Այս խորհուրդ լցաւ, անդ գուշակեցաւ աստ կատարեցաւ:  
 Աստուած մարդացաւ, ընդ օրինօք մտաւ, քահանայացաւ:  
 Տե՛ր փոյն շնորհաւ, լուա զմեզ բազկաւ, արփո բաժակաւ:  
 Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց: Աղաչեմք:  
 Ողորմեա:  
 Այսօր վերացաւ, վերնատունն նստաւ, և գառն կերաւ:  
 Հին օրէնքն անցաւ, զի գիրն լցաւ, և նորս սկսաւ:  
 Տե՛ր փոյն շնորհաւ, լուա զմեզ բազկաւ... Եւայլն:

## ԵՐԳ ԹԱՓՕՐԻ

Միաշարաթ օր հանգստեան  
 Կանայք եկին ի գերեզման  
 Եւ ողբային արտասուական,  
 Խնդրել զՅիսուս անապական:  
 Չայնեացհրեշտակն ուրախական,  
 Չայն որ եղին ի գերեզման,

Չեզ աւետիս՝ յարեալ փեսայն,  
 Դրունք դժոխոց խորտակեցան:  
 Մարիամեանքն ուրախացան  
 Եւ յԱստուծոյ միշտ գոհացան,  
 Առ աշակերտսն անդրէն դարձան  
 Տալ աւետիս վասն յարութեան:

## ՍԻՐՏ ԻՄ ՍԱՍԱՆԻ

(ԳԱՆՁ Բ. ՈՏՆԼՈՒԱՅԻ)

Չայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎՐԳ.

Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի:  
 Որ Տէրն ամենի, նմա առաջի, ի ծունկս անկանի:  
 Նա ոչ ամաչէ, և ոչ զարհուրի, սիրողն արժաթի:  
 Նոր սեղան դնի, և հաց բաղարջի, Լ'անապակ զինի:  
 Տե՛ր իմ արժանի արա զմեզ հացի քո սուրբ սեղանի:  
 Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց: Աղաչեմք:

Ողորմեա:

Խոնարհիլ պարտին, իւր յանցաւորին, ըստ օրինաց Փրկչին:  
 Որք որ փափաքին ուտել զայն մարմին, որով սրբեսցին:  
 Թողուլ կամովին, զյանցանս ի սրտին, զեթթանասնեկին:  
 Իսկ որ ստամբակին, եղեալ օրինին, որ աստուածային:  
 Իսկ աստուածային, բնաւ ոչ սահմանին, մեր բազմողորմին:  
 Տե՛ր իմ արժանի արա զմեզ հացի... ևւայլն:

## ՇԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԹԱՓՕՐԻՆ

Պարգեւատուն ամենեցուն, այսօր խնդրի պարգեւ ի Պի-  
 ղատոսէ, և արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յով-  
 սեփայ:

Կենդանատուն ամենեցուն, այսօր դընի ի նոր գերեզմա-  
 նի, և գանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր եղաւ ի նորա-  
 փոր վիմի, զոր օրհնեն զօրք երկնից երգով, պահպանի ի զին-  
 ուորացն:

## ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ:  
 Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:  
 Ծնաւ նոր արքայ ի Բեթլեհէմ քաղաքի:

Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:  
 Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ:  
 Ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք:  
 Եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:  
 Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ:  
 Եւ հրեղինաց բազմութիւնք, յերկնից յերկիր վայր իջեալ:  
 Այսօր հովուացն անսեալ զարդարութեան արեգակն:  
 Եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:

## ՏԱՂ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է սուրբ Ծննդեան, աւետիս,  
 Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:

Այսօր արեւն արդարութեան, աւետիս,  
 Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս:

Այսօր խաւարն անգիտութեան, աւետիս,  
 Հալածեցաւ ի մէջ մարդկան, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս,  
 Ծնաւ երեք զանմահ արքայն, աւետիս:

Որք յԱրարայ և իսարայ, աւետիս,  
 Սուրբ պատարագ բերին նմա, աւետիս:

Մեղքոն, Գասպար և Պաղտասար, աւետիս,  
 Ոսկի զմուռս բերին նմա, աւետիս:

Զաստղն տեսին և զարմացան, աւետիս,  
 Շատ քննեցին ու չիմացան, աւետիս:

Այսօր հրեշտակք երկնից իջան, աւետիս,  
 Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս,

Այսօր դըժոխքըն սարսեցան, աւետիս,  
 Գունդըք դիւաց յոյժ տրամեցան, աւետիս:

Յնծա', ցնծա' Դաւիթ արքայ, աւետիս,  
 Հնչեա զքնար քո և խայտա, աւետիս:

ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՐ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փառք և պատիւ և զօրութիւն, Միասնական Երրորդութեան  
 Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, Փառք ի բարձունս յաւիտեան:

Փառք և պատիւ և զօրութիւն, Միասնական Երրորդութեան  
 Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, Փառք ի բարձունս յաւիտեան:

ԻՋԻՐ ԱՐՔԱՅ ՀՋՕՐ

Իջիր արքայ հրգօր, անուանոր փառաւոր ցոփոր փոփոքի. ամենապիտիւն և զող,  
 ամենապիտիւն փոփոքի, և զիր անոր փոփոքի փոփոքի, փոփոքի և զող:

Իջիր Արքայ հրգօր,  
 Անուանոր փառաւոր  
 Տուր որ գովենք.  
 Ամենատէր եղող,  
 Ամէն տեղ միշտ յաղթող,  
 Եղիր մեր վրայ տիրող,  
 Քեզ կ'աղաչենք:

Իջիր, Յիսուս փրկիչ,  
 Եղիր մեզ պահպանիչ,  
 Մեզ միշտ օգնէ.  
 Քու օգնութիւնը մենք  
 Մեզի պարիսպ ընենք,  
 Քու վրադ մեր յոյսն դնենք  
 Տէր մեզ լըսէ:

Իջիր, ով Սուրբ Հօգի,  
 Եւ հիմա տուր մեզի  
 Վկայութիւն,  
 Թէ Տէրն մեզ կը սիրէ.  
 Մեր սիրան առ դուն տիրէ,  
 Մի հառանար մեզմէ,  
 Հօգի սիրուն:

Ով Դու Երրեակ և Մի,  
 Մեծ գովութիւնք քեզի  
 Անդուլ տրուին.  
 Քու փառքը տուր որ մենք  
 Երկնից ի մէջ վայլենք,  
 Ու քեզ փառարանենք,  
 Տէր երկնային:

### ԱԼ ՄՕՏ ԸԼԼԱՄ Ո՛Վ ՏԷՐ

Ալ մօտ ըլլամ ո՛վ Տէր, ալ մօտ ֆե-չի. Թէ-եւ նամբաս ըլլայ Դառնցաւա-լի  
 Մըրը աչօ թեմ պիպի, ալ մօտ ըլլամ ֆե-չի, ալ մօտ ըլլամ ֆե-չի, ալ մօտ ֆե-չի:

Ալ մօտ ըլլամ ո՛վ Տէր,  
 Ալ մօտ Քեզի,  
 Թէեւ ճամբաս ըլլայ  
 Դառն ցաւալի.  
 Միշտ աղօթեմ պիտի,  
 Ալ մօտ ըլլամ Քեզի,  
 Ալ մօտ Քեզի:  
 Թէեւ թափառական,  
 Գիշեր ատեն,  
 Մութ տեղ քարի մը վրայ  
 Իմ գլուխս դընեմ.  
 Երազներուս մէջ, Տէր,  
 Ալ մօտ ըլլամ Քեզի,  
 Ալ մօտ Քեզի:  
 Սանդուխ մը հոն տեսնեմ  
 Քովէզ իջած,  
 Անթիւ սուրբ հրեշտակներ  
 Վրան ալ կայնած,

Որ աչք ընեն ինծի.  
 Ալ մօտ ըլլամ Քեզի,  
 Ալ մօտ Քեզի:  
 Քունէս ելած՝ ես քեզ  
 Պիտի գովեմ,  
 Ու դառն վիշտէս Բեթէլ  
 Պիտի շինեմ,  
 Որ տառապանքներովս  
 Ալ մօտ ըլլամ Քեզի,  
 Ալ մօտ Քեզի:  
 Երբոր ուրախ թեւով  
 Ես վեր թռչիմ,  
 Աստղէն ու արեւէն  
 Երբոր անցնիմ,  
 Հոգիս երգէ պիտի,  
 Ալ մօտ ըլլամ Քեզի,  
 Ալ մօտ քեզի:  
 Թարգմ. I. F. PETTIBONE

### ԱՆԱ ՄԵԶԻ ՄԱՆՈՒԿ ԾՆԱԻ

Անա մեզի մանուկ ծնաւ. Զնաւ զաւակ Դաւթի. Տե՛ղի որ դի մը պրըռեցաւ,  
 ու յախու թիւն երկրի. Տե՛ղի որ դի մը պրըռեցաւ, ու յախու թիւն երկ-րի.

Անա մեզի մանուկ ծնաւ,  
 Ծնաւ զաւակ Դաւթի,

Մեզի որդի մը տրուեցաւ  
 Ուրախութիւն երկրի:



### ՏՈՒՆ, ՔԱՂՑՐ ՏՈՒՆ

Ուրիշ են աշխարհայար - եր հաճոյք - ներ ցածուկ քանակն արեղ եր - բէ՛ք լե՛մ վերերեք. հանցի փոշո -  
 շէ մի հրապոյր երկին - քն չոր խիստ ջարտեր արեղ արեղ եր փոշոտե՛ն Տուն, տուն, քաղցր ի՛մ տուն:  
 Գա՛նձ ի՛մ տուն, քա՛ղցր ի՛մ տուն, քա՛ղցր ի՛մ տուն, քա՛ղցր ի՛մ տուն:  
 Տուն, տուն, քա՛ղցր ի՛մ տուն,  
 Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ:

Ուրիշ են աշխարհայար հաճոյքներ,  
 Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ,  
 Հոն դիս կ'ողողէ մի հրապոյր երկինքէն,  
 Չոր խիստ շատեր ուրիշ տեղ կը փնտռեն:  
 Տուն, տուն, քա՛ղցր ի՛մ տուն,  
 Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ:

Չոր տեղ կը շողան ճոխութիւնք իմ չորս դին,  
 Տըլէք, ո՛հ, ինձի ցած խրճիթս վերստին,  
 Տըլէք իմ հըլու թռչուններս սիրական,  
 Նաեւ իմ մտքիս, ո՛հ, հանգիստն աննման:  
 Տուն, տուն, քա՛ղցր ի՛մ տուն,  
 Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ:

Թարգմ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

### ԵՐԳ ԿԵՆԱՑ

Տըխուր ողբով մ'ըսէր ինձի, պոխտով է լոկ երազ, փոքր ինչ ինչի, փոքր ինչ ինչի,  
 ամէն րեղ հաւ - նուզազ. ամ - քն րեղ հաւ նուզազ, փոքր ինչ ինչի, փոքր ինչ ինչի, ամէն րեղ հաւ նուզազ:

Տըխուր ողբով մ'ըսէր ինձի,  
 Այս կեանքն է լոկ երազ,  
 Գործ կայ ինձի, գործ կայ քեզի,  
 Ամէն տեղ հանապազ:  
 Կեանքն իրական է, փութաջան.  
 Եւ նպատակ ունի,

Անոր վախճան չէ գերեզման,  
 Անդին ալ կը նայի:  
 Կեանքն օգտակար և թանկագին  
 Ընել ենք հրաւիրուած,  
 «Դուն հող էիր, դառնաս հողին»,  
 Հողւոյն վրայ չէ ըսուած:

Ամէն դարու մեծ, բարերար  
 Մարդոց կեանքն կը փայլի,  
 Մեր ետեւէն հետք օգտակար  
 Չըզել է պարտք մեզի:

Յառաջ երթանք վեր նայելով,  
 Մեր կեանքն վըսեմ ընենք,  
 Արթուն ըլլանք և եռանդով  
 Տիրոջը ծառայենք:

Թարգմ. ELIAS RIGGS

**ՀՐԱՇԱԼԻ ԽՕՍՔ ԿԵՆԱՑ**

Ո՛հ ինձ դարձեալ երգէ զանոնք, հրաշալի խօսք կե-նաց: Եւս քեզմաքայլ ցեւանեմ զանոնք,  
 հրաշալի խօսք կե-նաց: կե-նո-րար խօսք քեզեցիկ. ինձ բոցբնեմ հաւատք պարտիք.  
 խօսք քեզեցիկ, խօսք հրաշալի, հրաշալի խօսք կե-նաց: Եւս Եւս:

Ո՛հ ինձ դարձեալ երգէ զանոնք, Հրաշալի խօսք կենաց Ես գեղափայլ տեսնեմ զանոնք, Հրաշալի խօսք կենաց. կենարար խօսք գեղեցիկ, ինձ յայտնեն հաւատք, պարտիք, Խօսք գեղեցիկ, խօսք հրաշալի, Հրաշալի խօսք կենաց:	Օրհնեալ Յիսուս տայ ամէնուն, Հրաշալի խօսք կենաց, Լուր, մեղաւոր զայս ձայն սիրուն Հրաշալի խօսք կենաց. Չրի պարգեւ է լիովին, Մեզ սիրով կոչեն յերկին, Խօսք գեղեցիկ, խօսք հրաշալի, Հրաշալի խօսք կենաց:
---	--

Չայն տայ սիրոյ աւետարան,  
 Հրաշալի խօսք կենաց.  
 Չայն թողութեան, խաղաղութեան,  
 Հրաշալի խօսք կենաց.  
 Ո՛վ Յիսուս Փրկիչ միայն,  
 Սրբացուր մեզ յաւիտեան:  
 Խօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,  
 Հրաշալի խօսք կենաց:

Թարգմ. ՀՐԱՆԴ ՔԻՐԻՉՃԵԱՆ

## ՏԷՐ ԸՆԴ ՁԵԶ

Տէր ընդ ձեզ փնջելի զի-բար ցտեսնեմք, խորհրդոսն առաջնոր-ջէ ձեզ, իր փառախորհաւան-ի ձեզ,  
 եւ զնոր կէ ուր զնոր զի-բար ցտեսնեմք: Տէր ընդ ձե-զ, Տէր ընդ ձե-զ, փնջելի,  
 զե-րը ժո-ղով-ու-իմք, մեր վերջ-կի-ջե ալ ցտեսնեմք եւ զի-բար աւանդ կրկնորայաւ եմք:

Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք,  
 Խորհրդովն առաջնորդէ ձեզ,  
 Իր փառախորհաւանքէ ձեզ,  
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:

Տէր ընդ ձեզ, Տէր ընդ ձեզ,  
 Մինչեւ վերը ժողովուրդն,  
 Մեր Փրկիչն ալ տեսնեն,  
 Եւ մեկտեղ անոր երկրպագեն:

Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք,  
 Իր թեւոց ներքեւ ծածկէ ձեզ,  
 Մանանայ միշտ պատրաստէ ձեզ,  
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:  
 Տէր ընդ ձեզ... եւ այլն:

Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք,  
 Երբ վրտանդ կամ վիշտ պատէ ձեզ,  
 Իր բազուկը պաշտպանէ ձեզ,  
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:  
 Տէր ընդ ձեզ... եւ այլն:

Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք,  
 Տարածէ ձեր վրայ իր սէրը,  
 Խափանէ մահուան խայթերը,  
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:  
 Տէր ընդ ձեզ... եւ այլն:


ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿ

(ՆԱԽԵՐԳ)

Moderato



ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

Ահա ելաւ լուսինն արծաթ,  
 Մութ ամպերու ստուերէն,  
 Ահա՛ նաւակն ալ գեղազարդ  
 Դուրս սահեցաւ ժայռերէն:

Անուշ հովիկ, փրչէ յուերիկ,  
 Ու դեպ ինձ բեր բիւր ժիւր ալիք:

Նաւակին մէջ իմ գեղունին  
 Փռուած անփոյթ լուսնի տակ,  
 Կը ձայնակցի իր կիթառին,  
 Հնչուն ձայնով մը յստակ:

Անուշ հովիկ, փրչէ յուերիկ,  
 Ու դեպ ինձ բեր երգն անուերիկ:

Ձայնով կ'երգէ սէր ու գգուանք,  
 Համակ յուզում ու սարսուռ,  
 Ա՛լ թող, աղջիկ, երգն ու նուագ,  
 Բոց աչերըդ ինձ դարձուր:

Անուշ հովիկ, փրչէ յուերիկ,  
 Ու դեպ ինձ բեր երգն ու աղջիկ:

Լ. ՇԱՆԹ

## ԳԻՇԵՐ ՑԵՐԵԿ ԿԸ ՀԱՌԱԶԵՄ

Գիշեր ցերեկ կը հառաչեմ, ա՛խ, օրիորդ, քո սիրայդ,  
Սեւ աչքերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ, ի՛նչ օգուտ.  
Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մազերուդ,  
Միայն քեզի սա կ'աղաչեմ, որ ունենաս քիչ մը գուլթ:

Գիտես անգուլթ, որ իմ սրտիկս չի դիմանար այս ցաւուն,  
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունքն օրն ի բուն,  
Զքեզ միայն կը յիշեմ, թէ քուն ըլլամ թէ արթուն,  
Թէ մուլթ ըլլայ միտքս կուգաս, նոյնպէս և առաւօտուն:

Շատ աղուորներ թէեւ տեսայ, սիրտըս միայն քեզ սիրեց  
Ո՛հ, չեմ գիտեր, ըսէ ինձի, թէ քու սրտիդ ո՛վ տիրեց,  
Ա՛խ քո խաթուն բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց,  
Գերի կ'ըլլամ քո մօրկանդ, եթէ զիս զուրկ չը ձգեց:

Ուրախ էի, գիտե՞ս, օր մը երբ ևս քեզ նստեցուցի,  
Սա ներսիդիս ինչ կայ չկայ ամէնն ալ հասկցուցի,  
Անոյշ բոյրդ զիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,  
Այն ի՞նչ օր էր, ի՞նչ ժամ էր, խելքս գըլխէս թռցուցի:

## ՀՈՎՈՒԵՐԳ

Հովիւը սարուժ տխրեց,  
Սիրոյ երգը նուագեց,  
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,  
Երգը զուարթ օրերին, հինկա՛լլա...

Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին՝  
Խոր ձորում մընացիր,  
Երգը վառ աչերիդ, երգը վառ այտերիդ,  
Երգը զուարթ օրերիդ, հինկա՛լլա...

Ահա կուգայ նոր գարուն,  
Ծաղիկներով զարդարուն,  
Սիրուն են գոյնզգոյն ծաղիկներն, հա՛, հա՛ հա՛,  
Գոյնզգոյն ծաղիկներն, հինկա՛լլա...

Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին՝  
Խոր ձորում մընացիր,  
Երգը վառ աչերիդ, երգը վառ այտերիդ,  
Երգը զուարթ օրերիդ, հինկա՛լլա...

ՍԻՐՈՅ ԶՈՂԵՐ

Moderato

Լըճի մէջ նաւակը  
Մեզմ հողիկ կը տանի,  
Նորա մէջ նստած է  
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի  
Կիթառա ու կ'երգէ,  
Իսկ քամին կը փախցնու  
Նաւակը եզերքէ:

Լըճակին մէջը կայ  
Քարաշէն մի ամբողջ,  
Սիրուհւոյ բնակարան,  
Հանապազ փակ գոց:

Պատանւոյ նաւակը  
Դէպ ամբողջ կը վազէր,  
Ուր նորա անձկալին  
Սրտատրոփ կը սպասէր:

Մեզմ հողը աւելի,  
Աւելի սաստկացաւ,  
Երկինքը թուխպ պատեց,  
Փոթորիկ բարձրացաւ:

Ալիքի լեռները  
Գոռալով կը ծփան,  
Պատանին աներկիւղ  
Կը նուազէ կիթառան:

Լուսինը ամպերի  
Տակերէն երեւցաւ,  
Սոսկալի աղէտի  
Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամբան ալիքը  
Նաւակին խփուեցան,  
Նաւակը փշրեցին,  
Յոյս չկայ փրկութեան:

Պատանին աչքերը  
Լուսնակին բարձրացուց,  
Կիթառի լարերը  
Նա ուժգին հնչեցուց:

— «Տար վերջին խօսքերըս  
Անձկալույս, ո՛վ լուսին,  
Թէ քաղցրիկ անունը  
Յիշելով կը մեռնիմ»:

Դադրեցաւ փոթորիկ,  
Ու ալիք պառկեցան,  
Ջրի վրայ կըտորտանք  
Նաւակի երեւցան:

Սիրուհին սրտատրոփ  
Նայեցաւ լըճակին,  
Հասկցաւ դառնութիւնն  
Իւր անբաղդ վիճակին:

— «Իրարմէ բաժնեցին  
Մեզ աշխարհ և այս կեանք,  
Գէ՛թ մահով այսուհետ  
Ջրի տակ միանանք»:

Ասաց և աղաղակ  
Բարձրացուց նա ուժգին,  
Գլորուեց, զո՛հ եղաւ  
Անկշտուժ ծովակին:

## ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,  
Սիրականիս վերջին զարդ,  
Նա քեզ հանեց իւր կրծքից,  
Ինձ պարզեւեց վերջին վարդ:

Մանկութեան ոսկէ ժամերն,  
Անցեր են անդառնալի,  
Կորած սիրոյս յիշատակ,  
Դու ես միայն վերջին վարդ:

Գարնան օրերն անցել են,  
Տօթ ամառն է ինձ էրում,

Միշտ սպասում եմ քո տեսքին,  
Դու ամառուայ վերջին վարդ:

Երջանիկ կեանքիս օրերն,  
Ցաւ են դառել առաջիս,  
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք  
Միաքրս բերիւր, վերջին վարդ:

Շատ չի տեւել՝ կը բացուի  
Առաջիս սեւ գերեզման,  
Իս աշխարհիս միայն քեզ  
Հետս կ'առնեմ, վերջին վարդ:

Բ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

## ՀԷ՛Յ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Հէ՛յ իմ սիրուն, հազար սիրուն,  
Դրախտի խնձոր աղուշ մաղուշ,  
Ա՛յ եղէգնի շաքար ծորուն,  
Բայց նրանից քաղցր ու անուշ:

Սիրուններում ընտիր սիրուն,  
Աստուած ի՞նչ լաւ է քեզ գծեր,

Կաթով շաղուած են մոլորուն  
Քո թաքցրած շամամ ծծեր:

Եար կը մեռնիս, կը դայ օրը,  
Ծոցըդ երկինք չես տանելու,  
Ճիճուն կ'ուտէ այդ բոլորը,  
Միթէ ի՞նձ ես լոկ զրկելու:


## ՍԻՐԱՀԱՐՆԵՐ ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ,  
Ինձ տեսնողը կարծում է թէ տուն չունիմ:

Ննջարանս սենեակիդ պատի տակն է,  
Կեանք, խնդութիւն պարզ գիշերուայ լուսնակն է:

Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար ունքերուդ,  
Արտասուքը փաս կուտայ աչքերուդ:

Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին,  
Ամուսնանանք, ալ չըսպասենք մեծ պասին:



ԵԱՐՈՋ ԵՐԳ

Allegro

Եար մ'ունէի չի՛ մար բոյով տեսքով աննման, Սիրուններու  
 Ան ա-լե-րով սե մա-զե-րով սե սա-թի նը-ման. Բարձր շայնով  
 Թա-գու հին էր սի-րով ան-սահ-ման: Ան իմ ա-նուղ եար,  
 երգ էր կանչում բոլ-բու-լի նը-ման:  
 Ինչ-չու՞ հե-ռա-ցար, ինչ-չու՞ զխոթո զիբ ինչե՛ն, մո-ռա-ցար

Եար մ'ունէի չինար բոյով, տեսքով աննման,  
 Սիրուններուն թագուհին էր սիրով անսահման,  
 Սեւ աչերով, սեւ մազերով, սեւ սաթի նման,  
 Բարձր ճայնով երգ էր կանչում բոլբուլի նման:  
 Ա՛խ, իմ անուշ եար, ինչու հեռացար,  
 ինչո՞ւ զիս թողիր, ինչո՞ւ մոռացար:

Երբ հեռացար դու ինձանից օրըս խաւարեց,  
 կանաչազարդ պարտիզումս վարդս թառամեց,  
 Պատէն կախուած իմ ջութակը ինկաւ փշրուեց,  
 վերջին անգամ այրած սիրտըս արձագանգ տուեց:  
 Ա՛խ, տուէք թեւեր, թեւեր որ թռչիմ,  
 թեւեր որ թռչիմ, իմ եարին հասնիմ:

ԷՆ ՏԵՍԱԿ ԿԻՆ

Էն տեսակ կին,  
 Եւ իր հոգին,  
 Թէ աչուղն էլ ունենար,  
 Առանց զէնքի,  
 Առանց զօրքի  
 Շահերի դէմ կը գընար:  
 Սիրոյ հընոց,  
 Կրակ ու բոց  
 Էնպէս աչքեր թէ ժըպտան,

Մարդու համար՝  
 Օրուայ պէս վառ  
 Գիշերները լոյս կը տան:  
 վարդի թերթեր,  
 Էնպէս շուրթեր  
 Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,  
 էլ քեզ ոչ Շահ,  
 Ոչ ահ ու մահ,  
 Ոչ զէնք ու զօրք կը յաղթեն:

**ԶՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՐՀ**

Սիրեցի եարբս տարան,  
Եարա տուին ու տարան,  
էս ի՞նչ գուլում աշխարհ է,  
Պոկեցին սիրտս ու տարան:

Ցաւըս խոր է, ճար չը կայ,  
Ճար կայ, ա՛խ ճարող չը կայ,  
էս ի՞նչ գուլում աշխարհ է,  
Սրտակից ընկեր չը կայ:

Լաւ օրերս անցան գնացին,  
Սեւ դարդերըս մընացին,  
էս ի՞նչ գուլում աշխարհ է,  
Խոր ցաւերըս մնացին:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

**ԱՌԱՋԻՆ ՍԷՐ**

Երէկ տեսայ քեզ պարտիզում,  
Ծաղկած էիր վարդի պէս  
Եւ քո պատկերդ հոգուս խոր-  
քում  
Նկարուեցաւ լուսատես:

Այնտեղ, ո՛վ կոյս, ինձ գերեցիր,  
Այնտեղ ես քեզ սիրեցի,  
Այնտեղ հոգիս ջերմ, սիրելի,  
Ես քեզ ընծայ բերեցի:

Այժմ չունիմ մի ուրախ ժամ,  
Տըխուր է սիրտս իբր դագաղ,  
Ես մեռանել մի՛նչեւ անգամ  
Ցանկանում եմ, ո՛հ, աւա՛ղ:

Որպէս օձից՝ ժանտ, թունաւոր,  
Դու ինձանից փախչում ես,  
Տեսանելով ինձ սգաւոր,  
Ծիծաղում ես, խնդում ես...

Ս. ՇԱՀԱՋԻՋ

**ԱՍՈՒՊ ՄԸ**

Այդ աղջիկը երէկ տեսայ,  
Հե՛ղ մը միայն, ան ալ վերջին,  
Կարծես ասուպ մը դիւրասահ,  
Որ կը կորչի աչքիդ առջին:

Հազիւ գողցայ ակնարկ մը վառ  
Սեւ աչքերէն իր տենչարժարժ,  
Ու ժպիտ մը, որ այտէն վար  
Ինձի նեաեւ ուզեց յանկարժ:

Հազիւ դիպայ քնքուշ թաթին,  
Հրաժեշտի պատրուակով,  
Ու զգացի քայլ մը անդին՝  
Սրտէս բան մը մնաց իր քով:

Լ. ՇԱՆԹ

**ԻՄ ԸՆՏՐԱԾԸ**

Կապոյտ երկնքում  
Ասաղեր են փայլում,  
Այլ և լուսնակը,  
Ամենից սիրուն,  
Ամենից փայլուն  
է արեգակը:

Կանաչ դաշտերում  
Եւ այգիներում  
Ծաղիկներ կան շատ,  
Բայց չէ՞ որ մի՛նը,  
Վարդի նմանը,  
Նա է բնութեան զարդ:

Սիրուն աղջիկներ,  
Ինչպէս ծաղիկներ,  
Ամէն տեղ շատ կան,  
Բայց իմ ընտրածը,  
Սրտիս սիրածը  
Հրեշտակի է նման:

Գ. ԲԱՐՈՒՈՒԴԱՐԵԱՆ

ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Մինչ մահուան անյիշատակ ի շիրիմ՝  
 Մնամ քու սիրոյդ ես հաւատարիմ,  
 Կրնայ ըլլալ, որ դուն, աւա՛ղ, մտնաս զիս,  
 Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստմունքիս:

Ո՛վ իմ հրեշտակ, յո՛յս իմ միակ նազելի,  
 Քեզի կեանք ու բախտ բոլորն ալ տուի,  
 Իմ մանկութեան տիոց դու սէ՛ր նախընծայ,  
 Սիրտդ գերել ես միշտ փափաքեցայ:

Սակայն ափսո՛ս, երջանկութեան այն փափուկ՝  
 Մահուան ժանտ ձեռքով ըլլայ վաղանցուկ,  
 Այս է վճիռ, զոր գրեց ճակտին մեր երկինք,  
 Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք:

Սակայն իմ սիրտ քուկին սրտէդ անբաժան,  
 Քեզմէ չզատուի մինչ ի գերեզման,  
 Սիրոյս յետին բաղձանք, յետին նշանակ՝  
 Քու քովդ է հանգչիլ մահուան քարին տակ:

Սոխակն երգէ իւր դայլայլիկ գիշերին՝  
 Նստի ի վերայ մեր ցուրտ դամբանին,  
 Մինչ երկուքնիս մենք ի տեղւոյն այն դադար,  
 Մահուան գրկաց մէջ ննջենք անդադար:

Վկայ ըլլան աստեղք երկնից կամարաց,  
 Զքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց,  
 Զը դադարիմ պիտի երբեք ըսել քեզ՝  
 Ես քուկդ եմ յաւերժ սիրով բոցակէզ:

Ո՛հ, ի՞նչ ընեմ, ըսէ՛, սրտի՛ս իմ հատոր,  
 Արի՞ւնս կ'ուզես՝ թո՛ղ վազէ բոլոր,  
 Բայց թէ անով ալ գոհ չըլլաս, ո՛վ անգութ,  
 Կեանքս այս գոհ կուտամ քու սիրոյդ:

Պիտի սիրես զիս յետ մահուան, գիտե՛մ ես,  
 Բայց անօգուտ տեղ արտասուքներ թափես  
 Շիրմիս վրայ, անմխիթար ողբալով  
 Այն սիրելիդ՝ զոր կոչուսիր շուտով:

**ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ**



Դարդըս լացէ՛ք, սարի սըմբուլ,  
Ալւան-ալւան ծաղիկներ,  
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբուլ,  
Ամպշող երկնուց զով հովեր...

Երկինք գեաին գլխուս մըթնան,  
Անտուն անաէր կուլամ ես,  
Եարիս տարա՛ն, ջանիս տարա՛ն,  
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես...

Ա՛խ եարս ինծի հանեց սըրաէն,  
Անճար թողեց սւ գընաց,  
Սրտիս սաւդէն, խորունկ եարէն,  
Անդեղ թողեց սւ գընաց...

Դարդըս լացէ՛ք, սարի սըմբուլ,  
Ալւան-ալւան ծաղիկներ,  
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբուլ,  
Ամպշող երկնուց զով հովեր...

Ա. ԻՍՍՅԱԿԵԱՆ

**ԱՂԱԶԱՆՔ**

Համեստ աղջիկ, ինձ մի տանջեր չարաչար,  
Չարաչար, սիրուն ջան, չարաչար:  
Հոգիս հոգւոյդ մատաղ լինի ամէն ժամ,  
Ամէն ժամ, սիրուն ջան, ամէն ժամ:  
Ես Հայ, դու Հայ, մեր մէջ չկայ խտրութիւն,  
Խտրութիւն, սիրուն ջան, խտրութիւն:  
Նազլու, նազլու, ինձ մի գցեր սարէ սար,  
Սարէ սար, սիրուն ջան, սարէ սար:  
Մատաղ կեանքումս ինձ մի դներ գերեզման,  
Գերեզման, սիրուն ջան, գերեզման:

**ԿԱՐՕՏ**

Սըրաիս թագունի  
Կարօտել եմ քեզ,  
Ա՛խ, ի՛նչ կը լինի  
Յանկարծ յայտնուես,  
Եւ, թէկուզ իսկոյն  
Դարձեալ չըքանաս,

Ինչպէս գիշերուան  
Կարճատեւ երազ:  
Միայն թէ տեսնեմ  
Պատկերըդ մէկ էլ,  
Միայն թէ ասեմ,  
Ո՛նց եմ կարօտել:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՍԻՐԵՐԳ

Խօսք՝ ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԼԻ  
Andante dolorose

Յօրինեց՝ ԱՐԱՅ ՊՅՅԱՆԵԱՆ

*pp*  
 Մի՛ լար աղ-ուռ-ըրս, մի՛ լար, լա-լը քե-զի հա-մար  
 չէ՛— Թող մե-նա-ւորն հաւա-չէ իր խու-ցին մէջ ան-  
 դա-լար, Բացա-կան շատ չու-շա-նար, կու-գայ  
*ff* *Avec grande tendresse*  
 և քեզ--- կը կան-չէ : Մի՛ լար աղ-ուռ-ըրս, մի՛ լար,  
*p* *désolé*  
 լա-լը քե-զի հա-մար չէ : Ան խաւարով չ'ար-բե-  
 -նար, վերքն իսկ ի-րեն կա-կառ է. Զի կը յի-շէ, կը յի-  
*mf*  
 շէ, կը յի-շէ. Բոյր, գի-տես-- ցանան հը նար-- Սըր-  
*avec ivresse*  
 քեմ ար-ցուն քըզ, մի՛ լար--- մի՛ լար---

Մի՛ լար, աղուռ'ըրս, մի՛ լար,  
 Լալը քեզի համար չէ՛...  
 Թող մենաւորն հառաչէ  
 Իր խուցին մէջ անդալար...  
 Բացական շատ չ'ուշանար,  
 կուգայ և քեզ կը կանչէ...

Մի՛ լար, աղուռ'ըրս, մի՛ լար,  
 Լալը քեզի համար չէ՛...  
 Ան խաւարով չ'արբենար,  
 վերքն իսկ իրեն կակառ է,  
 Զի կը յիշէ, կը յիշէ...  
 Քո՛յր, գիտե՛ս, ցանան անհընար...  
 Սըրբե՛մ արցունքըզ, մի՛ լար...

## ԵՐԳ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ

Ահա մօտեցան մահուան ժամերըս,  
Ալ չեմ իմանար բոլոր ցաւերըս,  
Կը զատուիմ քեզմէ սիրուն ծաղիկըս,  
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերըս:

Ինչպէս պիտ' զատուիմ, սասիկ է սերս,  
Բայց օգուտ չունի, Ասուած է սերս:

Համբերէ քիչ մը, ո՛վ մահ սոսկալի,  
Զիս մի մեղքնար, սիրան իմ ցաւալի,  
Համբերէ քիչ մը որ սէրըս առնեմ.  
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ:

Ինչպէս պիտ' զատուիմ... ԿԼԱՅԼՆ:

Երբ կը մտածեմ, մէկ երկու ժամէն,  
Հողեր ու սրդեր զիս պիտի ծածկեն,  
Ամէն կողմերըս ծակեն ծակծակեն,  
Իմ մատղաշ մարմինս մատաղ պիտ' անեն:

Ինչպէս պիտ' զատուիմ... ԿԼԱՅԼՆ:

Յուրա գերեզմանին երբոր մօտենաս,  
Զըլլայ որ երբեք սարսուռ մը զգաս,  
Քաղցր ժպիտով մ'երբ անունըս տաս,  
Անշուշտ այն ատեն ինձ պիտի խղճաս:

Կը զատուիմ քեզմէ սիրուն ծաղիկըս,  
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերըս:

## ԱՆՈՒՇ ՍԻՐԱԿԱՆ

Սիրաըս դարձեր է մի մանուկ լալկան,  
Ես զուր եմ խարում նրան շաքարով,  
Նա լալիս է միշտ, անո՛ւշ սիրական,  
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով:


Ես նրան ի՞նչ ճար անեմ:

Ինչքան աշխարհում սիրունիներ կան,  
Յոյց տուի աչքիս, զուր եմ համոզում,  
Քեզանից բացի, անուշ սիրական,  
Նա ուրիշ ոչ ոք, ոչ ոք չէ ուզում:


Ես նրան ի՞նչ ճար անեմ:

ԻՄ ԵԱՐԸ

Andante



Ա-րի՛, եր-գի՛ր, սիրու՛ն ար-դու՛յքո՛ղ ա-յա-լայ-— լին՛ իմ եա՛րին։



Թող եւ ըստ տանն ու վարդն ա-մու՛լ, Ա-րի թա-ռի՛ր մեր՛ կրտրին։

Արի երգիր սիրուն բլբուլ,  
Քո դայլալիկն իմ հարին,  
Թող բուրաստանն ու վարդն  
ամուլ,

Արի թառիր մեր կրտրին։  
Իմ հարն ունի շուշան այտեր,  
Ալ վարդ շրթներ, շող գանգուր,  
Իմ հարն ունի ծով ծով աչեր,  
Որ շողում են սէր ու հուր։

Նա սիրտ մ'ունի խորունկ՝  
այնքան,  
Որ պարփակեց իմ հոգին,  
Ու տեղ մնաց դեռ բաւական,  
Թշուառ մարդկանց ցաւ, հոգին։

Արի երգիր սիրուն բլբուլ,  
Քո դայլալիկն իմ հարին,  
Թող բուրաստանն ու վարդն  
ամուլ,  
Արի գովիր իմ հարին։

Սիրուն ասաղեր, հուր աչուկներ,  
Ձեր շողն ու փայլն են սիրուն,  
Սակայն հարիս սեւ սաթ աչեր,  
Ձեզանից էլ են սիրուն։

Հաւատացէք, աչերն այդ խոր  
Թէ լինէին երկնքում,

Մարդիկ պիտի ուզէին, որ  
Գիշեր լինէր միշտ կեանքում։

Մի օր հարիս թեւը ընկած  
Անցնում էի դաշտերով,  
Խոտ ու ծաղիկ սքանչացած  
Նայում էին ապշելով։

Երբ տուն դարձանք ու հարս  
ընկաւ  
Բազուկներուս մէջ յոգնած,  
Խոտ ու ծաղիկ գտայ անբաւ  
Փէշերին հետ տուն եկած։

Ծերուկ լեռներ, հսկայ ժայռեր  
Ստուեր ձգէք ջրերին,  
Որ արեւի չար շողիկներ  
Չհամբուրեն իմ հարին։

Լողանում է իմ հարն այսօր  
Պաղ ու վճիտ ջրերում,  
Իմացել են շողեր բոլոր  
Ու թագ կապել ամպերում։

Ծեռուկ լեռներ, հսկայ ժայռեր,  
Ստուեր ձգէք ջրերին,  
Լաւ ծածկեցէք ջուրն ու ափեր,  
Որ շտեմենն իմ հարին։

ՍԻՐՈՒՀԻՍ

Largo

Սի-րու-հիս քեզ հա-մար կեանքս կէս ե-ղաւ,  
 քո ա-նունն էր մի-այնն, որ ինչ կեանք տը-ւաւ:  
 Աղ-ջիկ դու սի-րուն, շը-քեղ ա-նու-նով,  
 սե-ւո-րակ աչ-քով էրկ-նա-ծիր ուն-քով:  
 Այր-ւի քո սիր-տը այ-րե-ցիր հը-րով,  
 Անու-նի քո սիր-տը վա-ռե-ցիր սի-րով:

Սիրուհի՛ս, քեզ համար  
 կեանքս կէս եղաւ,  
 Քո անունն էր միայն,  
 Որ ինձ կեանք տըլաւ:

Աղջիկ, դու սիրուն,  
 Շըքեղ անունով,  
 Սեւորակ աչքով,  
 Երկնածիր ունքով:

Այրուի՛ քո սիրք,  
 Այրեցիր հրով,  
 Վառուի՛ քո սիրք,  
 Վառեցիր սիրով:

Մանուշակ, նունուֆար,  
 Վարդ, մեխակ, շուշան,

Ոչինչ են ինձ համար,  
 Իմ անգի՛նն հողեակ:

Մօրիցըդ գաղտուկ՝  
 Արի՛ մեր պարտեզ,  
 Ման գանք միասին,  
 Սիրո՛ւն, դու և ես:

Այրուի՛ քո սիրք,  
 Այրեցիր հրով,  
 Վառուի՛ քո սիրք,  
 Վառեցիր սիրով:

Բայց ափսո՛ս չեմ կարող,  
 Որ գամ քեզ տեսնեմ,  
 Իմ վիրաւոր սրտին  
 կարօտը առնեմ:

Դէ՛ բաւական է,  
Նայի՛ր երկնքին,  
Կապոյտ երկնքին,  
Քո խըղճմըտանքին:

Այրուի՛ քո սիրքը,  
Այրեցիր հըրով,  
Վառուի՛ քո սիրքը,  
Վառեցիր սիրով:

**ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ**

Առտուն կ'ելլես դուն ժուռ  
կուգաս,  
Թափած մազով, վա՛յ, վա՛յ,  
Բարեւ կուտաս, բարեւ կ'առնես,  
Հազար նազով, վա՛յ, վա՛յ:

Ջրկողին միշտ քէն է սիրտը,  
Մութ կը գոցէ, վա՛յ, վա՛յ,  
Քու նայուածքիդ ինկած տեղը  
Հուր է, բոց է, վա՛յ, վա՛յ:

Սիրուն աղջիկ, աղուոր,  
Քեզ կը սիրեմ իրաւ որ,  
Սիրաս՝ սիրովդ վիրաւոր,  
Աղուոր, սիրուն աղջիկ, մի՛  
հեռանար:

Սիրուն աղջիկ, աղուոր,  
Քեզ կը սիրեմ իրաւ որ,  
Սիրաս՝ սիրովդ վիրաւոր՝  
Աղուոր, սիրուն աղջիկ, մի՛  
հեռանար:

**ԸԼԼԱՅԻ, ԸԼԼԱՅԻ**

Ծոցիդ կախուած խաչն ըլլայի,  
Սըրտիդ սիրած մանչն ըլլայի,  
Օր ու գիշեր՝ ալ շրթունքիդ  
վրան հալուող պաչն ըլլայի:

Կանաչ արեւուդ ես մեռնիմ,  
Ճերմակ դռնիդ խալն ըլլայի,  
Մի բլար անգուր... եւայլն:

Մի բլար անգուր,  
Մասաղ եմ հոգուդ,  
Սիրողիդ հանդեպ ունեցիր գուր:  
վարդ շրթներուդ ալն ըլլայի,  
Մէջքըդ կապուած շալն ըլլայի,

Երազներուդ ակն ըլլայի,  
Գըլսիդ վայել թագն ըլլայի,  
Սիրաբո սրտիդ միացնող,  
Չբացուելիք բակն ըլլայի:  
Մի բլար անգուր... եւայլն:

**ՀԻՒՐ ԸԼԼԱՄ**

Հիւր ըլլամ, քեզ հիւր ըլլամ,  
Քու հոգուն մատաղ ըլլամ,  
Գիշեր մը մինչեւ առտու  
Ընդունէ գիս, քու սենեակըդ հիւր ըլլամ:

Մեղքըցիր ինձ միշտ կուլամ,  
Քեզ չը տեսնեմ՝ խենթ կ'ըլլամ,  
Պալատի մէջ դընեն գիս,  
Արժէք չունի, քու սենեակըդ հիւր ըլլամ:

Գիշեր թէ ցերեկ ըլլայ,  
Ես կ'ուզեմ քովըդ ըլլամ,  
Ողջ մըտնեմ՝ մեռած ըլլամ,  
Հոգ չեմ ընեք, երբ սենեակըդ հիւր ըլլամ:

## ՍԻՐԱԿԱՆԻ ԱՆԷԾՔԸ

Ես քեզ սիրի, որ դու ինձի չը թարկես,  
Եթէ թարկես՝ հողուով մարմնովըդ խարկես,  
Անիծեմ, տաս տարի տեղումըդ պառկես,  
Եորդանի մէջ տնքայ կողերըդ, աղջիկ:

Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չը վարուի,  
Պսակուելուդ օրը՝ քողքդ սեւ կարուի,  
Հօրդ տունն ու դուռը սեւ քարով շարուի,  
Ա՛խ ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակուի,  
Քառասուն օր տանջուի՝ հոգին չը քակուի,  
Ինձնէն զայրի հետդ ով որ պսակուի,  
Երեք օր չը վայլէ սէրըդ, ա՛յ աղջիկ:

Չգտնես խամ կտաւ էնես արխալուղ,  
Լէն բօլ աշխարքի մէջ օրըդ անցնի սուղ,  
Հացդ կորեկ եղնի, գարին հետը կուղ,  
Օձի պէս սակաւի քո կերըդ, աղջիկ:

Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ դիւան,  
Աստուածածածինն էնի քու մօրդ դիւան,  
Իր կենաց մէջ նա չունենայ սաղ ջան,  
Որ ինձ էրաւ տնից դարբէդար, աղջիկ:

Պատճառն ի՞նչ էր, որ չհաւնաք ինձի,  
Կարօ՞տ էք դովլաթի, փափա՞ք էք գանձի,  
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,  
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ:

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,  
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնի սէրդ,  
Քեզի ընձէն էրաւ քու քեաֆիւր մէրդ,  
Խնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջիկ:

Ես Զուլալ-օղլին եմ, դարդովդ եմ կեցի,  
Գիշերն եմ մտածի, ցորեկն եմ լացի,  
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,  
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ, աղջիկ:



### ՇՈՒՊԷՐԹԻ ՍԷՐԷՆԱՏ


Andante

ՖԻԱՆՑ ՇՈՒՊԷՐԹ

1. հո-վե-ցփյ գուն կը հե-ծե-ծէ յո-ղիկ և ա-նուշ,  
 2. հո-վե-րուն վրայ կո-գե-վա-րի հեթ մը հե-զա-նազ,  
 Պա-տու-հա-նիք ըստ-ուե-րին տակ կեր-գեմ սի-րա-յուշ:  
 Իմ սր-տիս եղ ա-սայծ է ած, սի-րոյ սուրբ Ե-րազ:  
 Թե-և յի-մար ցան-կա-դա-տեր կը-բաժնեն ըզ-մեզ,  
 Լի-ա-լուա-նին շո-ղերն ար-նաթ Ծով ու սար կ'օ-ծեն,  
 կը-բաժնեն ըզ-մեզ: հո-վին Թե-ով քեզ ի կուզ գեմ.  
 Ծով-ու սար կ'օ-ծեն: Ե-հոյ էր Թաթ ա-նե-զա-թաւն  
 Ան-հուն սէրն իմ Ես, Ան-հուն սէրն իմ Ես:  
 Ար-թե-նալ Բո-ցեն, Ար-թե-նալ Բո-ցեն:  
 Աստղերն քերթեց կը ծրոյ տիծ ինչ. միւշ կեր գեմ քե-զի.  
 ցայգն համ-Բոյ-րի կը կան-չէ մեզ. կը կան-չէ մեզ:  
 Ան-Ե-կոյր ին-ծի, Ան-Ե-կոյր ին-ծի,  
 Ան, Ե-կոյր ին-ծի:

Հովը ցայգուն կը հեծեծէ  
 Յուշիկ և անուշ,  
 Պատուհանիդ ստուերին տակ  
 կ'երգեմ սիրայուշ,

Թէեւ յիմար ցանկապատեր  
 կը բաժնեն զմեզ,  
 կը բաժնեն զմեզ:  
 Հովին թեւով քեզի կ'ուզեմ



ՖՐԱՆՅ ՇՈՒՊԵՐԹ

Անհուն սէրն իմ ես,  
Անհուն սէրն իմ ես:

Հովիտներուն վրայ կ'ողեւարի  
Հեւք մը հեղանազ,  
Իմ սրտի բոց աւազն է ան,  
Սիրոյ սուրբ երազ:  
Լիալուսնին շողերն արծաթ  
Ծով ու սար կ'օծեն,  
Ծով ու սար կ'օծեն:

Եկուր երթանք անկրութեան  
Արբենալ բոցէն,  
Արբենալ բոցէն:  
Աստղերն երկնից կը ժպտին ինձ,  
Մինչ կ'երզեմ քեզի,

Յայդն համբոյրի կը կանչէ մեզ,  
Ա՛հ, եկո՛ւր ինձի,  
Ա՛հ, եկո՛ւր ինձի,  
Ա՛հ, եկո՛ւր ինձի:

Թարգմ. Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

### ՍԵՒՈՐԱԿ ԱԶԵՐ

Սեւորակ աչեր, սիրունիկ աչեր,  
Հրաշալի աչեր, աչեր մութ գիշեր,  
Երբ որ ձեզ տեսայ, հանգստից զրկուայ,  
Չեզանով միայն աշխարհ մուացայ:

Այդ աչքերը սեւ, ինչպէս կրակ կ'այրեն,  
'Իէպ' մի այլ աշխարհ, նրանք զիս կը կանչեն,  
Ուր տիրում է սէր, հոն փայլուն է կեանք,  
Ուր չկայ տանջանք, հոն կայ սէր, յարգանք:

Չտեսնէի ձեզ, չէի տանջուեր ես,  
Կ'ապրէի անվերջ, ազատ ու անվիշտ,  
Ի սպառ մաշեցիք, աչեր սեւորակ,  
Եւ երջանկութիւնս անդարձ դուք տարաք:

## ՍԻՐՈՅ ՎԻՇՏ

Ուրաեղ սիրուն կին կը տեսնեմ  
կը նորանան դարդերըս,  
Ու երբ անուշ երգ կը լսեմ,  
կը խորանան դարդերըս:

Սահման չունին, դարման  
չունին,  
Չեն վերջանում, չեն անցնում,  
Ա՛խ, մահուան պէս, սեւ մահ-  
ուան պէս,  
Իմ դարդերըս, դարդերըս:

Ջառ յոյսերով, անմահ սիրով  
Ես քեզ խորունկ սիրեցի,  
Աստղ ու երկինք, մատաղ սիր-  
տըս,

Ոտներիդ տակ փրոնցի:

Սէր չը տուիր ու աշխարհէն  
Սիրտըս կըտրաւ, Շուշան ջան,  
Ա՛խ, զմբուխտէ, ա՛խ, զմբուխտէ  
Իմ յոյսե՛րըս, իմ սէ՛րըս...

Կարօտ կեցայ կնոջ սիրուն,  
Սրախ սակի արեւին,  
Պապակ կեցայ մութ սարերին,  
Բաշը փըրփուր նըժոյգին:

Կեանքըս անցաւ թեւերը թափ,  
Սիրտը կոտրած սազի պէս,  
Ա՛խ, ծովէն խոր, սարէն ծանրը  
Իմ դարդե՛րըս, դարդե՛րըս...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## Ա՛Ւ, ՀԱՅԿԱՆՈՒՇ

Արխալուխդ կարել էմ,  
Ոսկի կոճակ շարել էմ,  
Ա՛խ, ա՛խ, Հայկանուշ:  
Նանի ջան դարդ մի անի,  
Ես սիրածս ճարել էմ:

Հայկանուշ, Հայկանուշ,  
Պաչիկներդ մեղրեց  
Աւելի՛ անուշ:

Քանքուլիդ կալին մեռնիմ:  
Երեսիդ խալին մեռնիմ,  
Ա՛խ, ա՛խ, Հայկանուշ:  
Լըսեր եմ կարդացող ես,

Սաղմոսիդ ծալին մեռնիմ:

Հայկանուշ, Հայկանուշ,  
Պաչիկներդ մեղրեց  
Աւելի՛ անուշ:

Ծառին տակը հով քամի,  
Քանքուլըդ քամին տանի,  
Ա՛խ, ա՛խ, Հայկանուշ:  
Բա՛ դու սարում ու ձորում,  
Իմ քունը սօնց կը տանի:

Հայկանուշ, Հայկանուշ,  
Պաչիկներդ մեղրեց  
Աւելի՛ անուշ:

## ԳԱՂՏՆԻՔ

Ես սիրել էմ վարդը տըժգոյն  
Սիրուց տանջուած այտերի,  
Մեղամաղձոտ խաղաղութիւնն  
Չոյգ սեւորակ աչերի:  
Ես պահել էմ սըրախ խորքում  
Մի լուռ գաղտնիք սիրային,

Եւ այն երբեք ոչ մի երգում  
Յայտնելու չեմ աշխարհին:

Բայց և պահել անկարող էմ,  
Օ՛, դըժուար է համբերել,  
Չասել՝ ինչո՛վ բաղդաւոր էմ,  
Չասել՝ ինչպէ՛ս էմ սիրելի:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵԱՐՕ ԶԱՆ

*Allegro*

Եա-րօ ջան, դուն Մա-սի-սի սարն ես. Եար, Եա-րօ ջան,

դուն իմ սրբ տի տէրն ես. Եանա Եանա էս էլ բախտի բան ա:

Ալ պլուզիդ մեռնեմ, շալ պլուզիդ մեռնեմ.  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ.

Եարօ ջա՛ն, դուն Մասիսի սարն ես,  
Եար, եարօ ջա՛ն, դու իմ սրաի տէրն ես,  
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:  
Ալ պլուզիդ մեռնեմ, շալ պլուզիդ մեռնեմ,  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, Ֆայթօն զանիդ կ'անեմ,  
Եար, եարօ ջան, քեզ մեր տունը տանեմ,  
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:  
Ալ պլուզիդ մեռնեմ, սեւ աչերիդ մեռնեմ,  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, արի գնանք ժամը,  
Գնանք ժամը, տընջանայ մեր ջանը,  
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:  
Ալ պլուզիդ մեռնեմ, բոյ ու բոսիդ մեռնեմ,  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ:

Փողոցում բարեւ կուտանք կ'առնենք,  
Ի՞նչ կը լինի մէկ էլ հալըդ հարցնեմ,  
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:  
Ալ պլուզիդ մեռնեմ, մազիդ, ունքիդ մեռնեմ,  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, շատ մի ցաներ բամպակ,  
Կ'երթամ Թիֆլիս վրէդ կ'անեմ զանգատ,  
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:  
Ալ պլուզիդ մեռնեմ, ալ թշերիդ մեռնեմ,  
Եարոյի կարած պլուզին մեռնեմ:

### ՄԱՔՈՒՐ ՄՐՏՈՎ

Մաքուր սրտով մտորուն,  
Դաշտիցը տուն դառնալիս,  
Յանկարծ տեսայ վառվուռն,  
Արեգակի պէս եարիս:

Իսկոյն անցաւ իմ մտքով,  
«Արի՛, սրան տամ մի պաշ»,  
Բայց նա սաստեց ինձ ունքով,  
Խորհրդաւոր շըշընչաց:

«Մեր տուն կը դաս երբ մթնի,  
Հայրըս ժամ է գնալու,  
Մայրըս էլ տունն չի մտնի,  
Հիւր է այսօր մնալու:

«Հէնց որ անցար դրան շէմ,  
Իմ ծոցը քեզ կը բանամ,  
Էնքան պաշեմ պաշպըչեմ,  
Որ վերջապէս կշտանամ»:

Ն. ԲՈՒԶԱԿ

### ԲԼՈՒՐԻՆ ՎՐԱՅ

Խօսք՝ ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ  
Andante

Եղանակ՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՅԻ

Ե — կուր իմ աղ — ուոր, այս գի — շեր հով կայ. լոկ  
 հոս է ան — դորր հաւա — տա ինձ որ հո — գիս կը ցան —  
 կայ ոչ թէ լու — սըն — կայ, այլ ան — դուն — դը խոր: Ե —  
 կուր իմ աղ — ուոր, այս գի — շեր հով կայ Յո — վը հն — ա —  
 ւոր տես կը հե — կե — կայ, այս գի — շեր հով կայ. քոյր հա — ա —  
 տա, որ հոգ — տոյս մե — նա —ւոր այս գի — շեր մահ կայ. տես կը հե — կե —  
 կայ Յո — վը հն — ա —ւոր, Ե — կուր, իմ աղ — ուոր:



ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

Եկուր, իմ աղուոր...  
Այս գիշեր հո՛վ կայ,  
Լոկ հոս է անդորր.  
Հաւատա՛ ինձ որ  
Հողիս կը ցանկայ  
Ո՛չ թէ լուսընկայ,  
Այլ անդո՛ւնդըդ խոր.  
Եկո՛ւր իմ աղուոր,  
Այս գիշեր հո՛վ կայ...

Ծովը հեռաւոր,  
Տե՛ս, կը հեկեկայ,  
Այս գիշեր հո՛վ կայ...  
Քոյր, հաւատա՛ որ  
Հողւոյս մե՛նաւոր  
Այս գիշեր մա՛հ կայ.  
Տե՛ս կը հեկեկայ  
Ծովը հեռաւոր...

Եկո՛ւր, իմ աղուոր..

Մ. ԶԱՐԻՖԵԱՆ

## Ա՛խ, ՍԻՐՈՒՆ ՍԻՐԱԿԱՆ

Երեւանից դուրս ելայ  
Թիֆլիզ քաղքին մօտեցայ,  
Փողոց, փողոց ման եկայ,  
Սիրականըս չտեսայ:  
Ա՛խ, սիրուն սիրական,  
Ինձ մի թողուր անպաշտպան:

Սիրականըս ուշացաւ,  
Դրութիւնըս գէշացաւ,  
Ելայ ճամբան նայելու,  
Ամբողջ կեանքըս մաշեցաւ:  
Ա՛խ, սիրուն սիրական,  
Ինձ մի թողուր անպաշտպան:

## ՍԻՐՈՅ ԵՐԳ

Ես սիրել եմ մի գոյգ աչեր,  
Նման փայլուն աստղերի,  
Նրանք խորն են որպէս եթեր,  
Նման յուզուող ջրերի:

Ես գերուեցայ նոցա փայլից,  
Արար աշխարհ մոռացայ,  
Զքնաղ կոյսի ջերմ կարօտից,  
Աշուղ դարձայ, երգ հիւսեցի:

Կանաչ կարմիր փունջ կապեցի,  
Որ իմ սիրած եարին տամ,  
Նա անգութ էր, ձեռքէս չառաւ,  
Թողուց որ սեւ բախտըս լամ:

Ա՛խ, այդ կոյսը անտարբեր էր,  
Սէրըս նըրան չէր գրաւում,  
Իմ վառ սէրը լոկ ցընորք էր,  
Նա տեղ չունէր աշխարհում:

## ՍԻՐԱՀԱՐԻ ՄԸ ԱՂԵՐՍԸ

Սիրականս, ալ չը խպնիմ, չամաչեմ,  
Ոտքդ ինկած կուլամ, կ'ողբամ, հառաչեմ,  
Ձիս մի մերժեր, յանուն երկնից կ'աղաչեմ,  
Աշխարհիս մէջ դու մէ'կ հատիկ սիրական:

Ինչո՞ւ արդեօք լուռ կը մնաս, չես խօսիր,  
Դեռ յուսատու բառ մը անգամ ինձ չ'ըսիր,  
Ժպիտ մը գէթ դէմքիդ վրայ անբասիր  
Ձը տեսայ դեռ, ի՞նչ անգուլթ ես, սիրակա՛ն:

Մէկ բոպէէն ամէն հոգ կրնաս վանել,  
Կասկած, երկիւղ սրտէս ամէն վախ հանել,  
Ձիս քու սէրդ, սրտիդ տէրը անուանել,  
Բայց մոռնջի պէս լուռ կը մնաս, սիրակա՛ն:

Արդեօք ինչե՛ր քեզ խօսեր են իմ մասին,  
Գուցէ շատեր իմ հաեւէս գէշ ըսին,  
Բայց չարախօսք թող կորնչին միասին,  
Թշնամիի խօսքին մ'անսար, սիրակա՛ն:

Կասկածոտ ես, աչքդ զքեզ կը մատնէ,  
Ալեծոկեալ հոգիդ սիրտդ կը յայանէ,  
Բայց իմ սէրս սրտիդ դրան կը զարնէ,  
Բա՛ց իմ առջեւ անոր դռներ, սիրակա՛ն:

Ալ հերիք չէ՞, ինչո՞ւ բերանդ ես գոցեր,  
Սիրտըս կրակ ձգեր, հոգւոյս մէջ՝ բոցեր,  
Ձիս դերեզման կրնան տանիլ այս խոցեր,  
Թէ չը գթաս իմ վիճակիս, սիրակա՛ն:

Նաւի մը պէս ծովուն վրայ ալեկոծ,  
Խաղալիք մ'է եղած սիրտըս, ցաւ ու կոծ  
Բարդած միան սրտիս վրայ ծանր ու հոծ,  
Ժպիտով մը վանէ զանոնք, սիրակա՛ն:

Ինչ որ ուզես սիրոյ փոխան կուտամ ես,  
Դրամ, ոսկի, սիրտս ալ նուէր, հոգիս՝ քեզ:  
Եթէ պահ մը դուն ալ խորհիս ինձի պէս,  
Ես երջանիկ, դու գոհ կ'ըլլաս, սիրակա՛ն:

Սակայն թող որ սիրաբն երգէ, լայ հոգիս,  
Մինչեւ ամպեր ցրուին երթան՝ դու ժպտիս,  
Ճակտէդ քաղեմ համբոյր, սեղմեմ քեզ սրտիս,  
Ալ անբաժան ապրինք սիրով, սիրակա՛ն:

ՄԵՂԱԿՈՐ ԱԶԵՐԻՆ

Andante

Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր  
 Իմ հոգու հետ դու խաղում ես ամէն օր.  
 Յոյս ես տալիս քո հայեացքով ամէնուն,  
 Մէկ կանչում ես մէկ էլ փախչում մուլտրուն,  
 Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր

Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր,  
 Իմ հոգու հետ դու խաղում ես ամէն օր,  
 Յոյս ես տալիս քո հայեացքով ամէնուն,  
 Մէկ կանչում ես, մէկ էլ փախչում մուլտրուն:  
 Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր:

Բայց հայեացքով՝ անմխիթար հայեացքիս  
 Յոյս է տալիս, ես ի՞նչ անեմ վիրաւոր,  
 Քեզ անիծեմ՝ բայց ինչպիսի՞ անլծքով:  
 Դու անմեղ ես, չէ՛, աչերդ են մեղաւոր,  
 Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր:

Լալ չգիտեմ, արցունք չունեմ ես բնաւ,  
 Մահն ինձ համար մի հանգիստ է ցանկալի,  
 Էս աշխարհում ոչ մի բան ինձ չյաղթեց,  
 Վախենում եմ որ քո սէրն ինձ տապալի:  
 Դու անմեղ ես քո աչերն են մեղաւոր:

## ԲՈՅԴ ԲԱՐՁՐ

<p>Բոյըդ բարձր սալվի շինար, Աչքըդ նաշխուռն, ունքդ կամար, Դուռն ստեղծուած ես ինձ համար, Անգին ծաղիկ իմ նոր բուսած: Գոյնդ նման է մարմարի, Հողիդ շորերն է յարմարի, Դու ես վարդը այս աշխարհի, Անգին ծաղիկ իմ նոր բուսած: Քեզ չտեսնել ինձ մեծ մահ է, Հողիս հանեմ քեզ տամ, պահէ,</p>	<p>Ինձնուժ եղածն ինձ ի՞նչ շահ է, Անգին ծաղիկ իմ նոր բուսած: Գիշեր ցերեկ նստած լալով, Աղի արտասուք թափելով, Ինձ թողել ես տանջուելով, Անգին ծաղիկ իմ նոր բուսած: Ես քեզ տեսայ ծաղկանց միջին, Աղաչեցի ես իմ Փրկչին, Որ չկարէ յոյսն իմ վերջին, Անգին ծաղիկ իմ նոր բուսած:</p>
--	---


## ՃԱՄԲԻԴ ՄԵՌՆԵՄ

<p>Վարդը ձեռքիդ դու ներս եկար, Ինքդ սիրուն վարդի պէս, Սիրաբոս գերի հեարդ տարար, Բլբուլի եար վարդի պէս: Յօնքերըդ թուխ կամար կապած, Աչքըդ տակին՝ ջուխտ արեւ,</p>	<p>Լոյս շող տուին՝ դարդից ամպած, Մաշաժ ուրախ ջուխտ արեւ Քո ճամբէն է աչքըս պահում, Ճամբիդ մեռնեմ, անո՛ւշ եար, Դու քաղցր երազ իմ խեղճ կեանքում, Ա՛խ, ո՞ւր ես, ո՞ւր անո՛ւշ եար: Յ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ</p>
--	--

## ԻՄ ՆԱԶԵԼԻ

Հողի կուտամ, հագի տո՛ւր ինձ,  
Իմ նազելի աչազեղ,  
Սիրաբոս գիշեր, սէրըդ — վառ-աստղ,  
Թո՛ղ շողշողայ նա այնտեղ.  
Սիրաբոս — սեւ արտ, սէրըդ — ալ վարդ,  
Ա՛խ, թող ծաղկի նա այնտեղ:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Զ Ո Ւ Ա Ր Թ Ե Ր Գ Ե Ր

ԵՐԳ ԽՆՋՈՅՔԻ

Խօսք՝ ՍԱՐՄԷՆԻ  
Moderato

Երաժշտութիւն՝ ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ

Մե-ղան է ա - - սար, քինացն Ա - թա - - թար, Հըն - Հում են եր - - գեր  
 ու - թախ ու զը - - ւարթ, Լըցնենք ըն-կեր - ներ - - - - - թա - ժակ - նե - թը  
 Հի, Թող Հայոց գի-նին - - - - - մեզ ա - - նուշ վ - - - նի:

Սեղանն է առատ,  
 Դիմացն Արարատ,  
 Հնչում են երգեր  
 Ուրախ ու զուարթ:

Փառք տանք մեր կեանքին,  
 Հողի մշակին,  
 Որ միշտ կանաչեն  
 Մեր դաշտն ու այգին:

Լըցնենք, ընկերներ՝ր,  
 Բաժակները լի,  
 Թող Հայոց գինին  
 Մեզ անուշ լինի:

Լըցնենք, ընկերներ՝ր,  
 Բաժակները լի,  
 Թող Հայոց գինին  
 Մեզ անուշ լինի:

Փառք տանք մայր հողին,  
 Արեւի շողին,  
 Գինին պարգեւող  
 Հայոց խաղողին:

Գովենք դարէ դար,  
 Աշխատանքն արդար,  
 Հայոց աշխարհի  
 Արեւը պայծառ:

Լըցնենք, ընկերներ՝ր,  
 Բաժակները լի,  
 Թող Հայոց գինին  
 Մեզ անուշ լինի:

Լըցնենք, ընկերներ՝ր,  
 Բաժակները լի,  
 Թող Հայոց գինին  
 Մեզ անուշ լինի:





ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴՈՒ ԵՐԳ

Moderato

Ու—ղիղ գի—նե—տնից ես տուն եմ գը—նում. փո—ղոց այ փո—  
 ջոց էդ ինչ եմ տես—նում. Աջ գը—նամ թէ ճախ, ծուռ  
 են եր կուսն էլ. փո—ղոց տեսնում եմ դու էլ ես հար—բել

Ուղիղ գինեանից ես տուն եմ գընում,  
 Փողոց, ա՛յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում,  
 Աջ գընում թէ ձախ, ծուռ են երկուսն էլ,  
 Փո՛ղոց, տեսնում եմ, դու էլ ես հարբել:

Ճամբա՛յ, այդ ո՞ւր ես, ո՞ւր ես ինձ տանում,  
 Ինչո՞ւ դու ինձ պէս ուղիղ չես մնում,  
 Ես ծուռ-մուռ ճամբան ուղիղ եմ քայլում,  
 Ճամբա՛յ, էս գիշեր դու էլ ես հարբել:

Լուսին ջան, ուխտդ ինչի՞ է ծրուած,  
 Մէկ աչքըդ կապուել, միւսը կիսաբաց,  
 Դո՞ւ էլ ես կոնծել, ա՛յ դու անամօթ,  
 Ամաչի՛ր ինձնից, վաղուցուայ ծանօթ:

Բա՛, էստեղ, էստեղ, — տե՛ս լապտերներն էլ  
 Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել,  
 Մէկ՝ պարզ են վառում, մէկ՝ սաստիկ խաւար,  
 Կամ թէ պատից-պատ կըպչում անդադար:

Աղբէ՛ր, էս գիշեր ամէնքն են հարբել,  
 Ի՞նչ բան է մենակ-մենակ ծոմ պահել,  
 Չէ՛, էդ կը լինի իստակ գըժութիւն,  
 Ուրեմըն նորից դառնամ գինեառուն:

## ԶԻՆՈՒՈՐԻՆ ԿՈՐՈՒՍԵԸ

Այս ի՛նչ կորուստ, ի՛նչ մեծ  
ցաւ,  
Բանթալոնիս կոճակը,  
կոճկելն ի՞քէն փըրթեցաւ,  
Գընաց մըտաւ ո՞ր ծակը:

Ա՛հ, կ'աղաչեմ, պարոններ,  
Թե որ տեսնաք գայն տեղ մը,  
Իմացուցե՛ք, ո՞ր ծակն է,  
Երբամ հանեմ գայն տեղ մը:

Ոչ պղտիկ էր, ոչ մեծ էր,  
Չափաւոր ալ չէր ըսուեր,  
Ինչ գոյն ըլլալն ալ մոռցայ,  
Կարժի՞ր էր թէ սեւի վրայ:

Ա՛հ, մի՛ խնդաք պարոններ,  
Այս կորուստս քիչ բան չէ,  
Յիսնապետս որ իմանայ,  
Վերջը բանիկս բուսած է,  
Գտե՛ք, գտե՛ք:  
Կոնակս գտե՛ք:

Միտքըս կուգայ թէ վըրան,  
Թռչուն մը կար խոշորկէկ,  
Եւ կորուսեալ այդ կոճակն  
Գամուած էր հոս ամուրկէկ:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Խանութները չեն ծախեր,  
Եւրոպայէն չեն բերեր,  
Շունչանորդի կոճակիս  
Ծառն ու արմատն է չորցեր:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Զինափորձին ատենը,  
Կը դիտեն մեր չորս կողմը,  
Ոտքէս բռնէ մինչեւ վեր  
Կը խառնեն՝ տեղ չեն ձգեր:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Կուտան ձեռքըս հրացան,  
Կ'ըսեն, «չալիէ՛ ուսիդ վրայ»,  
Ի՞նչպէս կայնի՞մ, դուք ըսէ՛ք,  
Բանթալոնս վար կ'իյնայ:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Բարեկամացս հանդիպիմ,  
Հարկաւ պիտի բարեւ տան,  
Չեռքըս հոսկէ պակաս չէ,  
Պիտի տեսնեն ու խնդան:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Աղջկանց ալ բան պէտք է,  
Երբոր տեսնեն՝ կը խնդան,  
Ճամբաս հատաւ փոխելով,  
Թռչելու է պալոնով:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Պառաւ կանանց բերանն ալ,  
Թէ կրնաս գոցել՝ գոցէ,  
Անանկ բաներ կը մազեն,  
Որ կոճակս բամբասեն:

Ա՛հ, մի՛ խնդաք... Եւ այլն:

Միբուհիս ալ, Աստուած տայ,  
Այս կորուստս չիմանայ,  
Քանզի գիտեմ վախկոտ է,  
Պղտիկ բանէ մը դող կ'ելլէ:

Ա՛հ մի՛ խնդաք... Եւ այլն:

Կեցէք, միտքս բան մ'եկաւ,  
Վազեմ երթամ ճար չկայ,  
Դիողինէսն ուր որ է,  
Գուցէ կոճակս ան գանէ:

Ա՛հ, կ'աղաչեմ, պարոններ,  
Զբլլայ երբեք զիս ծաղրե՛ք,  
Օր կ'ըլլայ որ փրցընե՛ք,  
Գու՛ք ալ կոնակի տե՛ր էք:

### ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻ, ԱՆՈՒՇ ԳԻՆԻ

Allegro

Կարմիր գինի անուշ գինի. վա՛յ, վա՛յ, քու քամողի  
 մատներն ու տեմ՝, վա՛յ, վա՛յ. Մե՛ ռած մարդու կեանքես տա լիս  
 վա՛յ, վա՛յ, քու քամողի հոգուն մեռնեմ, վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Կարմիր գինի, անուշ գինի, վա՛յ, վա՛յ,  
 Քու քամողի մատներն ուտեմ՝, վա՛յ, վա՛յ,  
 Մեռած մարդու կեանք ես տալիս, վա՛յ, վա՛յ,  
 Քու քամողի հոգուն մեռնիմ, վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Երկինք գետին, Աստուած վկայ, վա՛յ, վա՛յ,  
 Քէյֆիցը լաւ ոչինչ չըկայ, վա՛յ, վա՛յ,  
 Դէ՛, քէյֆ արէք դուք աշխարհում, վա՛յ, վա՛յ,  
 Դուշմանի լեզուն մնջանայ, վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Մենք էլ նստենք մի քէյֆ անենք, վա՛յ, վա՛յ,  
 Կարմիր գինին, անուշ գինին, վա՛յ, վա՛յ,  
 Գինի խմենք և քէյֆ անենք, վա՛յ, վա՛յ,  
 Մէկզմէկու մենք ջան ասենք, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն:

### ԿԻՆ ՈՒ ԳԻՆԻ

Բերէ՛ք շիշը, բերէ՛ք բաժակը,  
 Քանի խումի կայ ախորժակ,  
 Որսանք բոպէնդուր բերկրանքի  
 Յաւերժականչէմարդուս կեանք:

Խըմենք գինի կընոջ կենաց,  
 Կնկան սիրենք անկեղծ սրտանց,  
 Տըղամարդուն գինի ու կին  
 Ընծայել են Նոյ և Աստուած:

Առանց գինու փուճ է կեանքը,  
 Սէրն է տալիս մեզ բերկրանքը,  
 Սէր ու գինի, գինի ու սէր,  
 Այս է կեանքի մեր սփոփանքը:

Լըցրէ՛ք բաժակ փըրփըրադէզ,  
 Բերէ՛ք իմ մօտ կին բոցակէզ,  
 Խմեմ, գրկեմ ու համբուրեմ,  
 Այնուհետեւ իմ կեանքը ձեզ:

# ԵՐԳ ԲԱԳՈՍԻ

Կատակով

Դաշնակորեց' ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Կ-կո-ռի-ին մեծ կա-րա-սին բո-լոր-տիրն են բազ մեր... բո է

Կ-յո այո, ա-յո, այո, բո-լոր տիրն են բազ-մեր... բո-

Մեծ կա-րա-սին բո-լոր տիրն են բազ-մեր... բո-

Կ-յո, այո, ա-յո, այո, ա-յո, ա-յո, ա-

Լոր տիրն են բազ-մեր, Կ-ազ իշ-խանք, մեծ դա-րո-նայք ժո-

Լոր-տիրն են բազ-մեր, Կ-յո, Կյո, Կ-յո, ա-յո, ժո-

Լոր տիրն են-բազ-մեր, Կ-ազ իշ-խանք, ա-յո --- ժո-

յո, ա-յո, ա-յո Կ-ազ իշ-խանք, մեծ

շովք են հոն կազ-մեր, Կ-յո ա-յո, ժո-

շովք են հոն կազ-մեր, Կ-յո, ա-յո --- ժո-

շովք են հոն կազ-մեր --- Կ-յո --- ա-յո --- ժո-

դա-րո-նայք, ժո-շովք են հոն կազ-մեր --- ա-յո, ժո-

Չոլփ Են հոն կազմեր . Լի-ւազ իշխանք, մեծ դա-րոնայք ժո Չոլփ Են հոն կազ  
 Չոլփ Են հոն կազմեր . ա-յո , այո , ա-յո , ա-յո , ժո Չոլփ Են հոն կազ  
 Չոլփ Են հոն կազմեր . Լի-ւազ իշխանք, ա-յո --- ժո Չոլփ Են հոն կազ  
 Չոլփ Են հոն կազմեր . Լի-ւազ իշխանք, մեծ դարոնայք ժո-  
 մեր --- ա-յո --- ա-յո --- ժո-չոլփ Են հոն կազմեր :  
 մեր , ա-յո , ա-յո ժո-չոլփ Են հոն կազմեր :  
 մեր , ա-յո , ա-յո , ժո-չոլփ Են հոն կազմեր :  
 Չոլփ Են հոն կազմեր , ա-յո , ժո-չոլփ Են հոն կազմեր :

Ակուռի մեծ կարասին բուրբախն են բազմեր,  
 Աւազ իշխանք, մեծ պարոնայք ժողովք են հոն կազմեր,  
 Այո', այո', ժողովք են հոն կազմեր:

Սասաիկ է վէճն, մեծ է խնդիրն, զօր այնտեղ կը խորհին,  
 Թէ ի՞նչ կերպով դարձան տանին հիւանդ մեր աշխարհին,  
 Այո', այո', հիւանդ մեր աշխարհին:

Մէկն այո կ'ըսէ, մէկն այն կ'ըսէ, կը ծագի լոյսն առաուն,  
 «Ինձ լսեցէք, տեարք», կը գոչէ աւանին պեան արթուն:  
 Այո', այո', աւանին պեան արթուն:

«Թող թագն առնու, կ'ըսէ, Բագոս և փառօք ապրի շատ,  
 Իսկ ցնծութիւն ըլլայ դըշխոյ և գահն ալ յԱրտաշատ»,  
 Այո', այո', և գահն ալ յԱրտաշատ:

Այսպէս մեզի նոր ցնծութեան արեւներ կը ծագին,  
 Ուրախ կ'ըլլայ մեր ժամանակն և նոր՝ մեր աշխարհն հին,  
 Այո', այո', և նոր՝ մեր աշխարհն հին:

## ԿՆԻԿԸ

Vivace

Աշխարհի սկզբի—բի—գ էս—դէս է կը—նի—կը.

Մարդու գլխին միշտ դա—տու հաս, տափով է կը—նի—կը:

Աշխարհի սկիզբից էսպէս է կնիկը,  
 Մարդու գլխին միշտ պատուհաս, պատիժ է կնիկը:  
 Նրա համար էլ՝ իմաստունները,  
 Երկիւղալի բաների շարքում դասեցին կնիկը:

Կնկայ համար, հէ՛չ, չկայ բան՝ չկայ,  
 Ամէն դժուար բանի հնար կը գտնի կնիկը:  
 Կնկայ համար հէ՛չ փակուած դուռ չկայ,  
 Ամէն դրան մի բանալի ունի կնիկը:

Ինքն էր սատանան օձի շապիկով,  
 Խեղճ Ադամին խնձորով խաբեց Եւա կնիկը:  
 Չեռները փոքր են, արարմունքը մեծ,  
 Մանր է ոտքը, քայլը հսկայ, այսպէս է կնիկը:


Չգիտեմ ինչո՛ւ թոյլ է անունը,  
 Կնկայ կապածը մարդ չի քանդի, ուժեղ է կնիկը:  
 Ասեղից, լեզուից ուրիշ զէնք չունի,  
 Բայց սուսերից խոր կը խոցի լեզուով կնիկը:

Մեղրիցը քաղցր է, թոյնիցը լեզի,  
 Այսպէս անհասկնալի է ամէնուն կնիկը:  
 Մինչեւ իսկ հայրը աղջրկան շուտով,  
 Ջէհէզը վրան տընից դուրս կ'անէ, այսպէս է կնիկը:


Է՛հ, Նիկոլայն էլ մի թագաւոր էր,  
 Բայց տեսէք ի՛նչ օյին բերեց գլխին կնիկը:  
 Ասեղնագործով նաշխուն նկարած,  
 Ռասսիոթիւնի շապիկը կարեց թագունի կնիկը...

# ՄԵՂԱԻՈՐ Է ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ...

Moderato



Կարկուտ կայծակ և երկրաշարժ, Սով, դաւտ-բազմ, հիւան-դու-թիւն



Ո՛վ չի գիտեր թող գիտե՛նայ, մեղաւոր է դաշնակցութիւն:

Կարկուտ, կայծակ և երկրաշարժ,	Մէկուէն աղջիկ թող լրբանայ,
Սով, պատերազմ, հիւանդութիւն,	Միւսին ազան սիրահարուի,
Ո՛վ չի գիտեր՝ թող գիտենայ,	Ամենեքեան բերնէ բերան՝
—Մեղաւոր է Դաշնակցութիւն...	—Մեղաւոր է Դաշնակցութիւն...

Ազգային Ֆիւրօն վերջնարուի,	Տօ ի՛նչ ասեմ, ո՞ր մէկն ասեմ,
Առաքելեան դուրս վաճառուի,	Ի՛նչ օյի՛ններ չը սարքեցինք,
Կովկաս՝ հնչակեան չմնայ,	Ամէն հընար ի գուր անցաւ,
—Մեղաւոր է Դաշնակցութիւն...	Կայսուկը մնայ Դաշնակցութիւն...

## ԳԷՇ ԱՏԵՆ

### ՄԱՐԿՈՍ

Բարե՛ւ, պարօն Ղուկաս,  
 Ինչ ո՞ւր կ'աճապարես,  
 Թէ որ խանութ կ'երթաս,  
 Պարապ եա կը դառնաս, վա՛յ...

Գե՛տ ասեմ, հա՛, հա՛ հա՛,  
 Անեան բան, հա՛, հա՛, հա՛,  
 Գե՛տ ասեմ, իրաւ շատ անպիտան:

### ՂՈՒԿԱՍ

Պանսութիս փեղկերը.  
 Շատ ուշ կը բացուին կոր,  
 Վախնամ կամաց կամաց  
 Ամբողջ գոցուի պիտար:

Գե՛տ ասեմ... եւ այլն:

### ՄԱՐԿՈՍ

Եթէ ասկէց առաջ,

Չէինք շահեր ալ նէ,  
 Գոնէ գործ մ'ունէինք,  
 Աս ան կը խաբէինք:

Գե՛տ ասեմ... եւ այլն:

### ՂՈՒԿԱՍ

Դիւրին վաստակ մը կար,  
 Թէ որ ծեր չըլլայինք,  
 «Փարատեա»ն սորվելով,  
 Տէրտէր մը կ'ըլլայինք:

Գե՛տ ասեմ... եւ այլն:

### ՄԱՐԿՈՍ

Հինգ հատ դաւկի տէր եմ,  
 Մսխող կիւն մ'ալ ունիմ,  
 Մօտա պոմպէ կ'ուզէ,  
 Ես հին գլխարկ չունիմ:

Գե՛տ ասեմ... եւ այլն:

## ՂՈՒԿԱՍ

Հապա աղջիկս ըսես,  
Վեց տարի դպրոցն է,  
Սիրեմք բայը աղէկ,  
Քիչ մ'ալ փառասոն գիտէ:

Գեո ասեց... եւ այլն:

## ՄԱՐԿՈՍ

Իմին լակոսներս ալ,  
Ժամ ու աղօթք մոռցան,  
Թուղթի ստակ կ'ուզեն,  
Կ'առնեն թատրոն կ'երթան:

Գեո ասեց... եւ այլն:

## ՂՈՒԿԱՍ

Տանս մէջ եղածները,  
Բոլորն ալ ծախուեցան,  
Կնկանս քողքը մնաց,  
Աչքս անոր եմ անկած:

Գեո ասեց... եւ այլն:

## ՄԱՐԿՈՍ

Տանտէրս առջի օր զիս,  
Տունէն որ վըռընտեց,  
Նայեցայ որ արդէն,  
Ամէն բան կրուեր է:

Գեո ասեց... եւ այլն:

## ՂՈՒԿԱՍ

Վաղն անուսիս օրն է,  
Զգել փախչելու է,  
Օրացոյց շինողը,  
Բռնել կախելու է:

Գեո ասեց... եւ այլն:

## ՄԱՐԿՈՍ

Ամէն փողոց պարտք կայ,  
Թէնհա ճամբայ չունիմ,  
Թէ որ ասանկ երթայ,  
Օգէն պիտի թռչիմ:

Գեո ասեց... եւ այլն:

## ՂՈՒԿԱՍ

Չըսե՞ս՝ ալ մեզ համար,

Յուսալը փուճ բան է,  
Անկուտի ապրելէն,  
Ոտքը անկելու է:

Գեո ասեց... եւ այլն:

## ՄԱՐԿՈՍ

Թէ որ ինձ հարցնես,  
Ատ ալ աժան բան չէ,  
Արդէն մեռած կ'ըսուինք,  
Պատանքնիս պակաս է:

Գեո ասեց... եւ այլն:

## ՂՈՒԿԱՍ

Եկուր վճիռ մը տանք,  
Միջոց մը մամտանք,  
Անօթի ապրելնուս,  
Խեղդուինք՝ չը մուրանք:

Գեո ասեց... եւ այլն:

## ՄԱՐԿՈՍ

Խեղդուելու համար,  
Չուան որ պէտք ըլլայ,  
Ուսկի՞ց պիտի գտնենք,  
Անոր ալ կուտ պէտք է:

Գեո ասեց... եւ այլն:

## ԵՐԿՈՒՔԸ ՄԷԿ

Գիտենք, մեզ կը կանչէք,  
Գուցէ խրատ մը տաք,  
Շատ շնորհակալ ենք,  
Արդէն մենք գործ գտանք:

Ո՛հ, ի՛նչ աղեկ, հա՛, հա՛, հա՛,  
Այս միջոց, հա՛, հա՛, հա՛,  
Ի՛նչ աղեկ, իրաւ շատ աղեկ գործ:  
Թաղական անդամներ,  
Գործ վաստակ չեն գիտեր,  
Քուէն մեզի տուէք,  
Հարիւրին վեց առէք:

Ո՛հ, ի՛նչ աղեկ, հա՛, հա՛, հա՛,

... եւ այլն:

# ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻ

Allegro

Կրամբամբուլին այն օղին է որ մեզի քաջ ծանօթ է, է.  
 Նրա համը չը տեսնելը  
 Նրա համը չը տեսնելը  
 Ուսանողին ամօթ է:  
 Եւ հանապաղ իմ սիրելի,  
 Մենք կոնծում ենք կրամբամբուլի:  
 Եւ հա-նա-դազ իմ սիրելի կրամբամբուլի, կրամբամբուլի:  
 Ես կը կոնծեմ կրամբամբուլի:

Կրամբամբուլին այն օղին է,  
 Որ մեզի քաջ ծանօթ է,  
 Նրա համը չը տեսնելը  
 Ուսանողին ամօթ է:  
 Եւ հանապաղ իմ սիրելի,  
 Մենք կոնծում ենք կրամբամբուլի:  
 Հայրս անդադար ինձ գրում է,  
 «Որդի ջան, շուտ աւարտէ,  
 Ժամանակդ արագ անցնում է:  
 Տե՛ս, գըրերդ լաւ սերտէ»:  
 Ա՛խ, բայց նրա պարոն որդին,  
 Միշտ կոնծում է կրամբամբուլին:  
 Թէ դարդս ու հոգս ինձ նեղում  
 է,  
 Թէ իմ քէֆը տեղը չէ,  
 Թէ աղջիկըս ինձ խաբում է,  
 Ու էլ հաւատարիմ չէ:  
 Կ'ասեմ — «Աղջիկ իմ նազելի,  
 Քու տեղ կը սիրեմ կրամբամբուլի:  
 Բէ լեարդս ու թոքըս՝ մաշուել է,  
 Գլուխս էլ սաստիկ ցաւում է,  
 Թէ որ խմել, քէյֆ անելը  
 Բժիշկն ինձ արգելում է:  
 Բայց ինչ ցաւ է կ'ուզէ ըլլի,  
 Ես կը կոնծեմ կրամբամբուլի:  
 Իսկ երբ կուգայ կեանքիս վերջը,  
 Մահս էլ առաջիս տեսնեմ,  
 Օղին կոնծեմ բաժակիս մէջ,  
 Հոգեհանիս էլ կ'ասեմ. —  
 «Վերջին անգամ, իմ պատուելի,  
 Ե՛կ, տաքացնենք կրամբամբուլի»:  
 Բ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ




## ԳԻՆԵՐԳ

Allegro

Խօսք եւ եղանակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅԻ




Կարմիր գինի ուլ եղեր եմ գինուլ հա, հա, եր կրիս դառնալուն  
կոնծեմ գինին կերգեմ ուրախ, քաջ, հա, հա, Մէկի դէմ հազար



այժմ եմ առաջ հոսի կը կուսնեմ տա հանջ:



հա, հա, հա, հա, Բաժակները թող հըն չեն հա, հա, հա, հա, չին, չին, չին:



հա, հա, հա, հա սիրոյ կարմիր կարկա չին, թող յի մար էմ ըր խրտչին:

Կարմիր գինիով եղեր եմ գինով,  
Երկրիս դառնալուն այժմ եմ ապահով,  
Կը կոնծեմ գինին, կ'երգեմ ուրախ, քաջ,  
Մէկի դէմ հազար կ'ունենամ պահանջ:

Հա', հա', հա', հա',

Բաժակները թող հնչեն,

Հա', հա', հա', հա',

Չին, չին, չին...

Հա', հա', հա', հա',

Սիրոյ կարմիր կարկաչեն

Թող յիմարները խրտչին:

Կաթիլ մը սփոփանք մի՛ շատ տեսնէք ինձ,

Աշխարհն ունի բիւր հոգեր ու կսկիծ,

Թող մեզ չըզգեստնէ բախտին ելեւէջ,  
Կեանքն ա՛յս է, այսպէս պիտի գտնէ վերջ:

Հա՛, հա՛, հա՛, հա՛,  
Բաժակները քող հնչեց,  
Հա՛ հա՛, հա՛, հա՛,  
Չի՛ն, չի՛ն, չի՛ն...  
Հա՛, հա՛, հա՛, հա՛,  
Սիրոյ կարմիր կարկաչեց  
Թող յիմարները խրջից:

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ՀԱՐԲԱԾ ՈՒՍԱՆՈՂԻ ԵՐԳԸ

Ո՛հ, ի՛նչ քաղցր բան,  
Ըլլալ կոնծաբան,  
Կոնծել լաւ գինի,  
Թափառիլ միշտ անբան:

Ո՛հ, ի՛նչ դառըն բան,  
Ըլլալ թղթաբան,  
Տարուիլ միշտ փողը,  
Գըլխին տալ սեւ հողը:

Հարիք քր՛մպրբրլալլա  
Հա՛, հա՛, հա՛:

Հարիք քր՛մպրբրլալլա  
Հա՛, հա՛, հա՛:

ԹԻՖԼԻՍՈՒ ՔԷՑ

Ձմեռն ինչ կ'ուզէ թող ըլլի,  
Թէ ագռաւն էլ սարերն ըլլի,  
Մեզի ցուրան չի վախցընի,  
Թէ գլխըներըս տաք կուլլի:  
Երբ նոյ գինին կամեցաւ,  
Հասած խաղողը քամեցաւ,  
Էն վախտը նա գինին կոնծեց,  
Ջուրը անասնոց յանձնեցաւ:

Հարստութիւնը ոչինչ է,  
Կեանքը սակով էրծրթով չէ,  
Հարուստ տեսած ենք տարեկան,  
Ախ ու վախը մեզ համար չէ:  
Երբ կուգան սիրուն գարունքը,  
Գրնանք դափը մեր թիկունքը,  
Մենք լաւ կարմիր գինին կոնծենք  
Թողնենք վարդ-պըլպուլիսուգը:

ՊԱՐ ԱԻԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իր մոմերը,  
Աւաղակաց համար:  
Թրա լա լա լա:  
Սահի գուարթ թող գիշերը,  
Մեր պալատն է անտառ:  
Թրա լա լա լա:

Երգեն հողմունք ու փոթորիկք,  
Աւաղակաց համար:  
Թրա լա լա լա:  
Գինիով լեցուի մեր փորիկ,  
Եկէք, օ՛ն, դուք ի պար:  
Թրա լա լա լա:

ԳԻՆԻ ԼԻՑ

Allegro

Մեր տուն չեր տուն դիմաց դիմաց, ես կը խըմեմ քու-կին  
 կե-նաց . . . գա-ւա-թիս տակ բան չը մը-նաց,  
 գի-նի լից, աղբէր գի-նի լից. խը-մո-ղաց ա-նուշ:

Մեր տուն ձեր տուն դիմաց  
 դիմաց,  
 ես կը խմեմ քուկին կենաց,  
 Գաւաթիս տակ բան չը մնաց,  
 Գինի լից աղբէր, գինի լից,  
 Խմողաց անուշ:

Գինիին պէս անուշ ի՞նչ կայ,  
 — Համբոյրը ջերմ վարդ աղջկայ,  
 Սէր ու գինի, ա՛լ բան չկայ,  
 Գինի լից, աղբէր, գինի լից,  
 Խմողաց անուշ:

Ես կը խմեմ երկու օխա,  
 Դուն կը խմես երեք օխա,  
 Եկուր անենք մէյ մէկ թօխա,  
 Գինի լից, աղբէր, գինի լից,  
 Խմողաց անուշ:

Տուէք մեզի գինուոյ լաւը,  
 Խմենք, մոռնանք վիշտն ու  
 ցաւը,  
 Չ'արժեր հողալ ափ մը կաւը,  
 Գինի լից, աղբէր, գինի լից,  
 Խմողաց անուշ:

ՂԱՓԱՄԱ

Հրաւէր ունէր Արտաշը,  
 Ղարսէն բերին կարկաշը,  
 Ճամբէ արի քեռեկին,  
 Ղափամա էփէ Սեռակին:  
 Ձան ղափամա ղափամա,  
 Անու՛ճ եղով ղափամա,  
 Սիւզմա մեղրով ղափամա,  
 Ձան ղափամա, ղափամա:

Հրաւէրնէրը տպած էր,  
 Ղափամի տակը կպած էր,  
 Տես, սր տէրը չիմացաւ,  
 Չըկերած՝ ասլան դարձաւ:

Ձան ղափամա... եւ այլն:

Գինին սեղանին գըրին,  
 Հաեւ ղափաման բերին,  
 Արդահանա եղովը  
 կարմրցած էր տեղովը:

Ձան ղափամա... եւ այլն:  
 կերան, կերան պարպեցին,  
 Գինին խմին հարբեցին,  
 կըլոր պարը սարքեցին,  
 Ծափ տըւին ու պարեցին:

Ձան ղափամա... եւ այլն:

ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻ

(ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՎ)

Կրամբամբուլին այն օղին է,  
Որ մեզի քաջ ծանօթ է,  
Կը խմեմ ես, կը գուարճանամ,  
Ամբողջ աշխարհք հոգս չէ:  
Երկինք երկիր թէ կործանին՝  
Ես կը խմեմ կրամբամբուլին:

Թէ սիրուհիս գայ զիս գրկել,  
Երեսներըս համբուրել,  
Կորի՛ր, կ'ըսեմ, շուտ առջեւէս,  
Ա՛լ դու ինձի համար չես:  
Ահա գրկած եմ սիրուհին,  
Ես կը ճնկեմ կրամբամբուլին:

Թէ լեարդս ու թոքս, սիրտս  
ալ մաշի,  
Ասով ես կ'առնեմ հոգի,  
Թէ հոգեվարք պառկած ըլլամ,  
Մէկ կաթիլով կ'ըռնանամ:  
Դայեակ, բժիշկ, և ոչ մէկին  
Ես չեմ փոխեր կրամբամբուլին:

Թէ նազեքայլ աղջիկ մ'ինձ գայ,  
Սիրոյս համար լայ ողբայ,  
Հազար կտոր ալ կոտորուի,  
Բնա՛ւ իմին հոգս չէ:  
Բայց շատ կ'ողբամ, երբոր  
կոտորի  
Շիշ ու գաւաթ կրամբամբուլի:

Թէ թատրոնի համար ինձի  
Օթեակ կամ տոմսակ զրկեն,  
Մէկէն կ'առնեմ կը պատուեմ,  
Բերողն ալ կը դրոշմեմ:  
Թատրոն դպրոց գետինն անց-  
նին,  
Իմ սիրածն է կրամբամբուլին:

Թէ կինս, աղաքս բոլոր օրը  
Չըլլան պատառ մ'հաց կերած,  
Ցաւ չեմ զգար, զի իմ փորը  
Շարաթով հաց չէ մտած:  
Առանց հացի թող սովորին  
Տղաքս խմել կրամբամբուլին:

Թէ հարսնիքի զիս հրաւիրեն,  
Ոտքով գլխով կը վազեմ,  
Մէկ բարձի վրայ ծերանալնուն  
Հազար տարի կը մաղթեմ:  
Հարսը թող տան իր փեսային,  
Ինձի ձգեն կրամբամբուլին:

Թէ անկողին հիւանդ պառկած  
Հոգի տալու մօտ ըլլամ,  
Բժիշկն հարցնէ, թէ ի՞նչ կ'ու-  
ղեմ,  
Շուտ մը կը պատասխանեմ.  
«Պարոն բժիշկ, իմ դեղ գիւրին  
է հրաշագործ կրամբամբուլին»:

Թէ մեռնելու օրերուս մօտ  
Հոգէառըս քովըս գայ,  
Ո՛հ, այն ատեն թող բաժկիս  
հետ  
Հոգիս մարմինէս ելլայ:  
Բայց մինչեւ որ հոգիս քակուի,  
Պիտի կլլեմ կրամբամբուլի:

Թէ գերեզման մտած ըլլամ,  
Չըլլայ երբեք զիս մոռնաք,  
Գացէք գտէք իմ գինեպան,  
Այս է իմ վերջին կտակ.  
— Մեռած օրուան կիրամուտին  
Աղէկ կ'ըլլայ կրամբամբուլին:

## ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Նըստէք ի մէջլիս,  
 Հա՛րք և եղբա՛յրք  
 Եւ լաւ բարեկամք,  
 Գոհանամք կեանքէ,  
 Որ ունի՞մք սեզան,  
 Եւ դուք շէն կենայք:  
 Խնդրեմք սր այսօր,  
 Քան զամենայն օր,  
 Շատ ուրախանայք:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

Ատա, կարապե՛տ,  
 Տակառապեաի՛ն  
 Գնա՛ իմաց տուր,  
 Կարասներըն բա՛ց,  
 Ե՛կ խաբար բեր մեզ  
 Եւ ուրախացո՛ւր:  
 Սիւրահիքն տա՛ր,  
 Շուշէքը լից բեր,  
 Թաս տուր, խմացուր:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

Ղալապալուխ է,  
 Քէֆերս է հասեալ  
 Այսօր խիստ աղէկ:  
 Մեզանըս լցեալ  
 Միրգեր և ծաղիկ,  
 Չլինի վեր քաշէք:  
 Ատա՛, հաւ կերէք,  
 Սըրտով խմեցէք,  
 Ուրախ ծիծաղէք:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

Ապա, ո՛վ սրաի  
 Քէն ունի, հանէ,  
 Հաշտութեամբ մնայ,  
 Լաւ մարդը այն է,  
 Որպէս եկեալ է,  
 Էլ այնպէս գնա:  
 Չոր մաղէն համեղ,  
 Գինին է զօրեղ,  
 Դուք անուշ արէք:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

Մենակ մի ուտէք,  
 Լաւ բաժանեցէք,  
 Հաւասար շարէք:  
 Տաղերըն կանչէք,  
 Սաղերըն ածէք,  
 Ծափ աըւէք, պարէք,  
 Է՞ր չէք խնդալի,  
 Այսօր ունի՞մք մենք  
 Լաւ սառըն գինի:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

Ղապլու խորովու,  
 Հաւու քապապներ,  
 Խաշլամա գառըն:  
 Էս մէջլիսու՞մըն,  
 Տխուր և դառըն,  
 Մարդ չըլինի խառըն:  
 Թասերըն շարած  
 Ողջ ոսկեջրած  
 Խըմողն է օրհնած:

Թասերքն չիճի,  
 Կարմիր գիճի  
 Ձեզ անուօ լիճի:

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՓԷՐԷԹՆԵՐ

«ԱՆ ՈՒՆ» ՕՓԷՐԱՅԻ ԵՐԳԵՐԷՆ

1 ԱՄՊԻ ՏԱԿԻՑ ԶՈՒՐ Է ԳԱԼԻ

Moderato

Եղանակ՝ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Ամ-պի տա-կից ջուր է գա-լի Դօշ է  
տա-լի փըր-փըր-րում էն ո՞ւմ եարն է  
Նըս-տած լա-լի. հօն-գուր հօն-գուր էն սարում

Ամպի տակից ջուր է գալի,  
Դօշ է տալի, փըրփըրում,  
էն ո՞ւմ եարն է նըստած լալի,  
Հօնգուր-հօնգուր էն սարում:  
Ա՛յ պող ջըրեր, գուլայ ջըրեր,  
Որ գայիս էք սարերից,  
Գալիս՝անցնում հանդ ու չուրեր,  
Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:  
Եարար խըմե՞ց, եարար հովցա՞ւ,  
Վառւած սիրաը էն հարի,

Եարար հովցա՞ւ, եարար անցա՞ւ  
Այրող ցաւը ջիգեարի:  
—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ,  
Վառւած, տարւած քու սիրով,  
էրւած ջիգեարն եկաւ անցաւ,  
Չը հովացաւ պող ջըրով:

Ամպի տակից ջուր է գալի,  
Դօշ է տալի, փըրփըրում,  
Ա՛խ, իմ ազիզ եարն է լալի  
Հօնգուր-հօնգուր էն սարում:

2 ԱՂԶԻ ԲԱՒՏԱԻՈՐ

Moderato

Եղանակ՝ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Աղ-զի Բախտա — — — — — Եր-նէկ քո սէ —  
— րին — — — — — քո սա — րի սո — վո — ր  
սե սե ա — չե — րին. համ-բար-ձում. եայ-

Աղջի բախտաւո՛ր,  
Երնէ՛կ քու սէրին,  
Քու սարի սովոր  
Սեւ-սեւ աչերին:

Մեռնեմ գարուն քիդ,  
Ծաղկած գարուն ես,  
Սարի պէս՝ մէջքիդ  
Կանգնած եար ունես:

Համբարձում, եայլա,  
Եայլա ջան, եայլա,  
Սէր-օրեր եայլա,  
Եայլա ջան, եայլա:

Համբարձում, եայլա,  
Եայլա ջան, եայլա  
Սար-եարեր եայլա,  
Եայլա ջան, եայլա:

### 3 ՎԱ՛Յ, ՎԱ՛Յ, ՄՕՍԻ ԶԱՆ

— Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան, ինձ մի՛ սպանիր,  
Սըրանից յետոյ չե՛մ սիրել նըրան...  
Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...  
Սիրտըս դողում է տերեւի նըման...

— Դէ՛ իմ անուէնով երգւիր, անըզգա՛մ,  
Որ էլ Սարոյին դու չես սիրելու,  
Թէ չէ՛ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝  
Մինչեւ դաստակը սիրտդ եմ խըրելու:

— Քո ոտի հողն եմ, Մօ՛սի ջան, Մօ՛սի,  
Դու քո եսիրին երգո՞ւմ ես տալիս...  
Ես էլ Սարոյին չեմ սիրում ասի,  
Տեսնո՞ւմ ես՝ չոքած ի՛նչպէս եմ լալիս...

— Դու խարո՞ւմ ես ինձ, սուտի՛կ, խաբերա՛յ,  
Չե՞մ սիրում ասիր, էն ի՞նչ է հապա,  
Էն ի՞նչ է հապա, ո՛ր տեղն ենք մտնում՝  
Հեկեկում ես դու գիշերուայ մըթնում,  
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում  
«Սարօ ջան, Սարօ, Սարօ՛» ես ասում...

— Մօ'սի ջան, Մօ'սի, գլխովըդ շուռ դամ,  
 Ինձ մի' սպանիր, ինձ թող էս անգամ,  
 էլ չեմ սիրի ես, երբ դու չես ուզում,  
 էլ չեմ կանչի ես նըրան երազում...  
 Ինձ մի' սպանիր, դամէդ տար հեռու...  
 Քո քո՞յրը չեմ ես... Իմ Մօսին չե՞ս դու...

### 4 ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ, ԻՆՉ ԵՍ ԼԱԼԻՍ

Andante

Եղանակ՝ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Մի-րուն աղ-ջիկ ինչ ես լա-լիս, էդ-դեմ մի-նակ  
 ու մո-լոր: ինչ ես լա-լիս ու ման գա-լիս  
 էս ճո-րե-րում ամեն օր օր: Թե լա-լիս ես,  
 վարդ ես ու-զում, մա-յիս կը գայ մի քիչ կաց, թե լա-լիս  
 ես եարդ ես ու-զում, ա՛խ, նա գը-նաց, նա գը-նաց:

Մի-րուն աղջիկ, ինչ ես լալիս  
 էդպէս մենակ ու մոլոր,  
 Ինչ ես լալիս ու ման գալիս  
 էս ձորերում ամէն օր:

Թե լալիս ես՝ վարդ ես ուզում,  
 Մայիս կը գայ, մի քիչ կաց,  
 Թե լալիս ես եարդ ես ուզում,  
 Ա՛խ, նա գընաց, նա գընաց...

Արտասուելով, լալով էդպէս  
 ետ չես դարձնի էլ գերիդ,  
 Ինչո՞ւ ի զուր հանգցընում ես  
 Ջահել կրակն աչքերիդ:

Նըրա անբախտ հողի վըրայ  
 Պաղ ջուր ածա աղբիւրի,  
 Գու էլ գընա նոր սէր արա,  
 Էսպէս է կարգն աշխարհի:



5 ՈՒՌԻՆ

Andante

Եղանակ՝ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Ասում են՝ ուռին  
 Աղջիկ էր ինձ պէս,  
 Մընում էր ետրին,  
 Ու չեկաւ նա տես:

Խեղճը դողալով՝  
 Անյոյս կը ռաջաւ,  
 Դարդից չորացաւ,  
 Ուռինի դարձաւ:

Ջրերի վըրայ  
 Գըլուխը կախած՝  
 Դեռ դողում է նա  
 Ու լալիս կամաց:

Ու ամբողջ տարին  
 Մի միտք է անում,  
 Թէ ետրը ետրին  
 Ո՞նց է մոռանում...



# 6 ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ

Largo

Եղանակ՝ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

*Tempo I*

Բար-ջոյ սա-րեր, այ սա-րեր, չի՞ տ' սոս յի — և վայ սա-րեր,  
 դոյ՛ել ինչ հեղ չի՞ սոս — և՛ f, ի՞նչ սար-դե-  
 ռի — և, ի՞նչ սա-րեր: դոյ՛ել ինչ հե — ցի չի՞ սոս — և՛ f,  
 ի՞նչ սար-դե — ռի — և, ի՞նչ սա-րեր: *acceler.* ի՞նչ տ' ի՞նչ — և  
*a tempo* չի՞ սոս, չի՞նչ յո-րե-րի — և, չի՞նչ սոս — և՛ f,  
 հո-ւտ՛ հո-ւտ՛ հո-ւտ՛ սե-փոս — անե, հո-ւտ՛ ինչ-փո-  
 թե — սոս — ինչ: հո-ւտ՛ — ի՞նչ հո-ւտ՛ սե-փոս — անե,  
 հո-ւտ՛ ինչ-փո-ս — և՛ թե — սոս: հո-ւտ՛ ինչ-փո-ս ինչ-փո-ս,  
 ինչ-փո-ս սո — սո ինչ-փո-ս, ինչ-փո-ս ինչ-փո-ս հո օ — ռի — և՛,  
 ինչ-փո-ս սո — սո ինչ-փո-ս: ինչ-փո-ս ինչ-փո-ս հո օ — ռի — և՛,  
 ինչ-փո-ս սո — սո ինչ-փո-ս: ինչ-փո-ս ինչ-փո-ս հո օ — ռի — և՛,


— զայն թէ յանկա — յժ ի — ծա — ծայ, եւ արարեալ էս զաւրի —  
*sostenuto*  
 ց, աչի լաւ — լո — զ ծաւրի — ծայ, եւ արարե —  
*rit.*  
 տե՛ր էս զաւրի — լո — զ ծաւրի — ծայ:

Բարձր սարեր, ա՛յ սարեր,  
 Ձէն եմ տալի «վա՛յ» սարեր,  
 Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք  
 իմ դարդերին, թայ սա՛րեր:

Որս եմ՝ բուժէս ձեզ արած,  
 Ձեր ձորերին՝ ձեզ արած,  
 Կ՛ուզեմ կորչեմ անգիւման,  
 էս աշխարհից բէզարած:

Բորչեմ բէզար դատարկուն,  
 Քար սարէ-սար դատարկուն,  
 Մեռնեմ պըրծնեմ էս օրից,  
 Բալքի առնեմ դադար, քուն:

Ա՛խ, կը մեռնեմ, համա նա  
 վա՛յ թէ յանկարձ իմանայ,  
 Ես կ՛ազատուեմ էս ցաւից,  
 Աչքը լալով նա մընայ:



ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ



ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԷԼԵԱՆԻ «ՊԸԼ ՊՈՒՂԻ» ՕՓԵՐԷԹԷՆ

1) Ա՛Խ, ՔՈ ՍԻՐՈՒԴ ԿՐԱԿՈՎ

(Չուգերգ՝ Չուսճուդի եւ Մեհրիի)

Ա՛խ, քո սիրուդ կր-ա-կով, աղջիկ վառե-ցի-ր, հո-գիւ, սաս  
 ին-ճի դու շու-քով երբ կրտս-նը - ւե՛րք ճե՛ղք նո-րից - կր-ա-կի ճաշածա-  
 .. ին կրճ-ի վառ-ա-կը վառ-ի-ր, ճօրից ծածուկ կը սպասեմ,  
 ինչ մեղ-քա-յե-ցի ս - փին:

ՋՈՒՄՇՈՒԴ

— Ա՛խ, ՔՈ սիրուդ կրակով,  
 Աղջիկ, վառեցիր հոգիս,  
 Ասա ինձի դու շուտով,  
 Ե՞րբ կը տեսնենք մենք նորից:

ՄԵՀՐԻ

— Կիրակի ճաշածամին,  
 Հնչի զանգակը վանքի,  
 Մօրից ծածուկ կը սպասեմ  
 Քեզ Մեղքագետի ափին:

ՋՈՒՄՇՈՒԴ

— Թէ ես Սիւնեաց ողջ աշխարհ  
 Շրջէի միշտ, անդադար,  
 Չէի գանի քեզ նման,  
 Այսպէս անգին սիրահար:

ՄԻԱՍԻՆ

Հազար երանի մի օր  
 Գայ, մենք լինենք բախտաւոր,  
 Հասնենք մեր նպատակին,  
 Մնաս բարով, ի՛մ անգին:

2) ՇԷՆ ԿԵՆԱՅ ՕՋԱԽԴ

(Պուղիի երգը)

Շէն կենայ օջախդ Մեղիք Շահնազար,  
 Օրդ երկար լինի մեր լոխճի համար.  
 Ժողովուրդիդ գլխից անպակաս լինես,  
 Շուաքիդ տակին մեզ բախտաւորացնես.  
 Պուղիիդ շնորհքն էլ, է՛լ աւելանայ,  
 Որ քեզ ուրախ պահի, սիրտդ լիանայ:

### 3) ՄԷԿ ԷԼ ԱՍԱ, ԼԱԻ ԼՍԵՄ

(Չուգերգ՝ Ռեհանի եւ Պուղիի)

The musical score consists of four staves. The top two staves are vocal lines with Armenian lyrics written below them. The bottom two staves are piano accompaniment. The key signature has one sharp (F#) and the time signature is 2/4. The lyrics are in Armenian and correspond to the text provided below the score.

ՌԵՀԱՆ. — Դու իմ գլխին մարդ չդառար, ցաւ դառար:

ՊՈՒՂԻ. — Մէկ էլ ասա, լաւ լսեմ:

ՌԵՀԱՆ. — Չափը անցար, եկ գլխիցըս ձեռք վեր առ:

ՊՈՒՂԻ. — Ոնց ես մի լաւ դըմբըզեմ:

ՌԵՀԱՆ. — Անզգամ, դո՛ւրս, դո՛ւրս:

ՊՈՒՂԻ. — Դէ՛ Ռեհան, սո՛ւս, սո՛ւս:

ՄԻԱՍԻՆ. — Ո՞վ է տեսել, ո՞վ է լսել, հողի ջան,  
Բերին գլխիդ էզպէս բան:

— Ինչս՞ով եմ քս մօտ մեղաւոր, անպիտան,  
Որ չարչարեմ յաւիտեան:

ՌԵՀԱՆ. — Ողջ իմ կեանքը խաւարեցրիր, սեւ արիւր:

ՊՈՒՂԻ. — Մէկ էլ ասա, լաւ լսեմ:

ՌԵՀԱՆ. — Գիշեր-ցերեկ բան չմնաց որ չարիր:

ՊՈՒՂԻ. — Ոնց ես մի լաւ դըմբըզեմ:

ՌԵՀԱՆ. — Անզգամ, դո՛ւրս, դո՛ւրս:

ՊՈՒՂԻ. — Դէ՛ Ռեհան, սո՛ւս, սո՛ւս:

ՄԻԱՍԻՆ. — Քս ձեռքիցը ազատուելու ճար չկայ:

— Ղորթ է, դո՛րթ, Աստուած վկայ:

— Պէտք է նստեմ էշի վրայ ու փախչեմ,  
Որ քս ձեռքէն ազատեմ:





### 5) Ա՛Խ, ԻՄ ԱՍՏՈՒԱԾ

(Զուգերգ՝ Մեհրիի եւ Զումշուգի)



**ՄԵՀՐԻ.**— Ա՛խ, իմ Աստուած դու Ասիր իմ ազազանքը,  
 Հեռացրու դու ինձնից այս մեծ տանջանքը,  
 Տուր ինձ, Տէր իմ, սյօ, զօրութիւն, որ կարենամ,

#### ՄԻԱՍԻՆ

**ԵՒ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ.**— Հանեմ սրտից իմ Աւանին ու մոռանամ:  
 Հանեմ սրտից իմ Մարիանին ու մոռանամ:

**ՄԻԱՍԻՆ.**— Ա՛խ, չեմ կարող ջնջել ճակատիս գրուածը,  
 Պէտք է ընտրեմ երկնից ինձ տնօրինուածը,  
 Թէեւ սա չէ բոլոր սրտով իմ սիրածը,  
 Բայց ի՛նչ անել կարող է խեղճ ջուրն ընկածը:

### 6) ՎԱՐԱՆԴԱՅԻ ՄԵԼԻՔՆ ԵՄ ԵՍ

(Զուգերգ՝ Շահնազարի եւ Զումշուգի)

**ՇԱՀՆԱԶԱՐ.**— Վարանդայի մելիքն եմ ես, Շահնազար,  
 Յիշիր Զումշուգ, թէ ի՛նչ ասաց քեզ քո հայր:

**ԶՈՒՄՇՈՒԳ.**— Հայր սիրելի, դու գիտես որ ինձ համար,  
 Քո կամքը միշտ եղել է սուրբ և արդար:  
 Այսուհետեւ թող լինի քո սիրած բան,  
 Ոչ թէ ուսում, այլ լոկ դաշոյն ու հրացան:  
 Այսուհետեւ խօսք եմ տալիս անդադար,  
 Զանք գործ դնել՝ պայծառանայ մեր աշխարհ:

**ՄԻԱՍԻՆ.**— Երբ որ լինեն, ծնող, որդի համաձայն,  
 Միշտ կը լինի երջանկութիւն նրանց տան,  
 Դէ՛, թող Տէրը վկայ լինի մեր ուխտին  
 Եւ ուղարկի իր օրհնէնքը երկնային:

### 7) ԻՄ ԱԻԱՆ, ՍԻՐՈՒՆ ԱԻԱՆ

(Մեհրիի մ եներգը)

Ա՛խ, ինչ ասեմ իմ հօրը,  
Որ սեւ արեց իմ օրը,  
Առաւ հետը տարաւ ինձ որսի  
Պատճառ դառաւ իմ հոգսի:

Լոյս կիրակի գետ գնացի,  
Քեզ, իմ Աւան, սպասեցի,  
Իսկ դու չեկար ինձ տեսութեան,  
Ես մեն-մ ինակ արտասուեցի:

Ա՛խ, իմ Աւան, սիրուն Աւան,  
Ո՞ւր թռար, ո՞ւր սլացար,

Ինչո՞ւ, ձայն տուր իմ սիրական,  
Այսպէս շուտով ինձ մոռացար:

Ա՛խ, Աստուած դու ինձ գթա՛,  
Ի՞նչ երազ էր որ տեսայ,  
Մէկ էլ նրան թէ ես չգտայ,  
Վա՛յ, ոտքով, ձեռքով կորայ:

Ա՛խ, ինչպէ՞ս այդ իմանամ  
Ու այդ ցաւին դիմանամ,  
Գուցէ կայ որեւէ մի պատճառ,  
Ո՞վ լուր կը բերի ինձ համար:

### 8) ԽՆԱՄԻՆԵՐՍ, ՀԱՄԵՑԷՔ

(Զուգերգ՝ Շահնազարի եւ խնամիներու)

ՇԱՀՆԱԶԱՐ

— Խնամիներս համեցէք,  
Աչքիս վրայ տեղ ունէք,  
Սիրտըս, դուռըս, այսուհետ,  
Զեզ համար բաց կը գտնէք:

ԽՆԱՄԻՆԵՐ

— Շէն կենայ, շէն, տունըդ հազար,  
Խնամի Մեւիք Շահնազար,  
Մեր տան դռներն էլ այսուհետ  
Բաց կը լինեն ձեզ համար:

ՇԱՀՆԱԶԱՐ

— Մեր մէջ որ սէր հաստատուեց,  
Սատանի գլուխը ջարդուեց:  
Վարանդայի Խաչէնին  
Բախտի մի նոր դուռ բացուեց:

ԽՆԱՄԻՆԵՐ

— Շէն կենայ, շէն, տունըդ հազար,  
Խնամի Մեւիք Շահնազար,  
Մեր տան դռներն էլ այսուհետ  
Բաց կը լինեն ձեզ համար:

### 9) ԱՍԵՆՔ ՇՆՈՐՀԱԻՈՐ

(Զուգերգ՝ Մեւիք Շահնազարի եւ Պուղիի)

ՇԱՀՆԱԶԱՐ

— Դէ հիմա եկէ՛ք մեր Զումշուդին  
Ասենք շնորհաւոր,  
Նա և իրա սիրուն Մեհրին,  
Լինեն բախտաւոր:

ՊՈՒՂԻ

— Մեր մեւիքները ուրախանան,  
Իրանց որդիք ամուսնանան,  
Մեր սրտերը, ուրախ, խնդուն,  
Նրանց միանան:

ՇԱՀՆԱԶԱՐ

— Երբոր որդին պատւիրածը  
Լսում է իր հօր,  
Հայր և որդի իրանց տանը  
Կը լինեն բախտաւոր:

ՊՈՒՂԻ

— Դուք էլ տեսաք՝ չասացի սուտ,  
Այլ ևղաւ օգուտ,  
Երբ որ մեռնեմ՝ ասէք, Պուղի՛,  
Ողորմի հոգուդ:

« Ա Ր Շ Ի Ն Մ Ա Լ Ա Լ Ա Ն »

Օ Փ Է Ր Է Թ Ի Ե Ր Գ Ե Ր Է Ն

1) ԽԱԼԱՆ ՔԵԶ ՄԱՏԱՂ, ԱՍԿԵԱՐ

ԽԱԼԱ

Զէթըրըս գլխիս ծածկեմ,  
Խալան քեզ մատաղ, Ասկեա՛ր,  
Քեզ գընամ աղջիկ գտնեմ,  
Խալան քեզ մատաղ, Ասկեա՛ր:

ԱՍԿԵԱՐ

Գու գըտածը ի՞նչ կ'անեմ,  
Այդ լաւ չի լինի, Խալա՛,  
Աղջիկը ես պիտ' առնեմ,  
Արդեօք սրտիս դիւր կը գա՞յ:

ԽԱԼԱ

Մեր օրէնքում այդ չկայ,  
Որ աղջկան տեսնեն,

Եկ իմ խորհրդով գնա,  
Եւ այդպէս էլ գործ արա:

ԱՍԿԵԱՐ

Քեզ լաւ յայտնի է Խալա,  
Որ չտեսած չեմ առնի,  
Թէ ոչ չեմ ամուսնանայ,  
Ինչ ուզում ես ինձ ասա:

ՎԵԼԻ

Գու իմ սրտից խօսեցիր,  
Շատ լաւ ասացիր, աղա՛,  
Գու տեղը ծանրը նստիր,  
Զուր մի չարչարուիր, Խալա՛:

2) ԱՅԴ ԻՆՉ Է ՔՈ ԴԱՐԴԸ

Moderato

Այդ ինչ է քո շար—տը Այդ ինչ տըխ—րու—թիւն է սա . . .  
 (1. նուազ) (2. նուազ)  
 ինչ է քո տան—  
 ջան—քը, Ասա տեսնեմ ինչ ա—սա:  
 1. 2.

ՍԻԻԼԻՅՄԱՆ

Այդ ի՞նչ է քո դարդը,  
Այդ ի՞նչ տխրութիւն է սա,

Ի՞նչ է քո տանջանքը,  
Ասա տեսնեմ, ինձ ասա:  
Մի՛ ամաչիր, պատմիր,


Ասկեա՛ր, քո դարդը ինձի, վերջ տուր մտածմունքիդ,  
 Ի՞նչ ես դու մտածում Պաամիր տեսնեմ թէ ի՞նչ կայ:  
 Նման այդպէս գերիի: Միթէ դու չե՞ս լսել,  
 Այս աշխարհում մի՞թէ Որ այսպիսի առած կայ.  
 Քո դարդին հէջ ճար չկայ, «Աշխարհիս երեսին  
 Անկարելի բան չկայ»:

### 3) ՀԱԻԱՏԱՑԻՐ ԻՆՁ ԱՍԿԵԱՐ ԶԱՆ

Moderato



հա-ւա-տա-ցիր ինչ նս-կեար ջան, Ան-կեղծ եմ ես քեզ բա-րե կամ.



խոր-հորդներս դու հե-տե-իր և քեզ հա-մար աղ-ջիկ գը-տիր

ՍԻԻԼԷՅՄԱՆ. — Հաւատացիր ինձ Ասկեար ջան,  
 Անկեղծ եմ ես, քեզ բարեկամ,  
 Խորհուրդներիս դու հետեւիր  
 Եւ քեզ համար աղջիկ գտիր:

ԱՍԿԵԱՐ. — Արչին մալջի ես կը լինեմ  
 Եւ իմ աչքով աղջիկ կ'ընտրեմ,  
 Իսկ քո խորհրդներիդ համար,  
 Մի լաւ նուէր քեզ կ'ընծայեմ:

ՍԻԻԼԷՅՄԱՆ. — Դու տեսար որ ես խելօք եմ,  
 Ինչպէս նաեւ շատ ազնիւ եմ,  
 Խոստացած ընծադ որ առնես,  
 Գործերիդ էլ միջնորդ կ'լինեմ:

ԱՍԿԵԱՐ. — Վէլի՛, դու ի՞նչ ես մտածում  
 Եւ ինչո՞ւ ես այդպէս տանջւում,  
 Քեզ էլ մի աղջիկ կը գտնենք,  
 Ինչո՞ւ ես այդպէս «ա՛խ» քաշում:

ՎԷԼԻ. — Ա՛խ, աղա ջան, բարի կղէք  
 Եւ ասածներըդ կատարէք,  
 Գիշեր ցերեկ ես տանջւում եմ,  
 Խեղճ վէլին եմ, ինձ ազատէք:

### 4) Ա՛Խ, ԵԱՐԱԲ

#### ԳԻԻԼՁՕՂՐԱ

Ա՛խ, եարաբ, վերջ կը լինի՞  
 Մեր այս ցաւ ու հոգսերին,  
 Աստուած, դու խղճա՛ մեզի  
 Եւ վերջ տուր մեր վիշտերին:

Ինչո՞ւ համար պէտք է մենք  
 Խաւարում այսպէս տանջուենք,  
 Ա՛խ, Աստուած, դու խղճա՛ մեզ  
 Եւ վերջ տուր մեր վիշտերին:

### 5) ԱՍԿԵԱՐ ԵՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ

ԱՂՋԻԿՆԵՐԸ. — Արշին մալձի մալ ցոյց տուր:

ԱՍԿԵԱՐ. — Այս քոպէիս, խանումնե՛ր:

ԱՂՋԻԿՆԵՐԸ. — Բողջադ բաց մէկ մէկ ցոյց տուր:

ԱՍԿԵԱՐ. — Յոյց տամ, ցոյց տամ, խանումնե՛ր:

ԱՂՋԻԿՆԵՐԸ. — Յոյց տուր, ցոյց տուր, ինչ որ կայ:

ԱՍԿԵԱՐ. — Թափթա, քիշմիր և բասմա:

ԱՂՋԻԿՆԵՐԸ. — Մեզ համար տեսնենք ի՞նչ կայ:

ԱՍԿԵԱՐ. — Ի՛նչ որ ցանկաք, խանումնե՛ր:

ԱՂՋԻԿՆԵՐԸ. — Ի՛նչ գեղեցիկ կտոր է,  
 Ծաղիկն էլ յարմար է,  
 Նորահարսի համար  
 Լաւն է, լաւն է:

Ա՛խ երանի, ո՛վ հարսանեաց շոր կը կարի,

Ա՛խ երանի, ո՛վ սիրած եարին տեսնի:

### 6) ՍՈՎՈՐԵԼՈՎ ՓՈՐՁԻԵՑԻ

Allegretto

*mf*

Սո-վո-րե-լով փոր-ջուե-ցի, Ա-մէնքից նս ծաղր-ուե-ցի  
 Գաւ ու տան-ջաշք շատ տա-րայ. Բայց վեր-ջա-դէս  
 թնգ գը-տայ: Այն-դէս սի-րե-ցի, սրբ-տով սի-րե-ցի.  
 որ չեմ կա-րող ա-սել թնգ, նս չեմ աղ-րի ա-ռանց թնգ:

ԱՍԿԵԱՐ

Սովորելով փորձեցի,  
 Ամէնքից ես ծաղրեցի,  
 Յաւ ու տանջանք շատ տարայ,  
 Բայց վերջապէս քեզ գտայ:  
 Այնպէս սիրեցի, սրսով սիրեցի,  
 Որ չեմ կարող ասել քեզ:  
 Ես չեմ ապրի առանց քեզ:

ԳԻԻԼՁՕՂՐԱ

Ոչ ոքին չէի տեսնում,  
 Դարդերըս չէի պատմում,  
 Ի՞նչ է սէրը չգիտէի,

Քեզ տեսնելով սիրեցի:  
 Այնպէս սիրեցի, սրսով սիրեցի,  
 Որ չեմ կարող ասել քեզ,  
 Ես չեմ ապրի առանց քեզ:

ՄԻԱՍԻՆ

Ա՛խ, մեր բախտը մեզ օգնեց,  
 Ես ինձ թշուառ կարծեցի,  
 Բայց ինձ կեանքը ողջունեց,  
 Քեզ տեսնելով սիրեցի:  
 Այնպէս սիրեցի, սրսով սիրեցի,  
 Որ չեմ կարող ասել քեզ,  
 Ես չեմ ապրի առանց քեզ:

7) ՈՐՏԵՂԻՑ ՊԱՏԱՀԵՑ

ԳԻԻԼՁՕՂՐԱ

Ո՞րտեղից պատահեց, Աստուած  
 Իմ, Արշին մալ ալան,  
 Եւ սիրտըս կըրակով լցրեց,  
 Այրևում եմ:  
 Ինքը լաւ, խօսքերը քաղցըր,  
 Արշին մալ ալան,  
 Սիրեցի ամէնից բարձրը,  
 Տանջուում եմ:  
 Ինձ գցեց այս դարդերի մէջ,  
 Արշին մալ ալան,  
 Հալ չը մնաց իմ սրտիս մէջ,  
 Այրևում եմ:  
 Զօր ու գիշեր մտածում եմ,  
 Արշին մալ ալան,

Եւ կարծես թէ երազում եմ,  
 Տանջուում եմ:  
 ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԸ

Ի՛նչ վատ ես տրամադրուած,  
 Գիւլջօհրա՛, մեզ ասա,  
 Ինչպէս մի խելագարուած,  
 Գիւլջօհրա՛, մեզ ասա,  
 Սիրտըդ ինչպէ՛ս է այրած,  
 Գիւլջօհրա՛, մեզ ասա,  
 Մեզ ասա, Գիւլջօհրա՛:  
 Օրիորդին այդ չի սաղի,  
 Տխրելն ու մտածելը,  
 Այդ ի՛նչ է քեզ պատահել,  
 Գիւլջօհրա՛, շուտ ասա,  
 Մեզ ասա՛, Գիւլջօհրա՛:

8) ՍՈՒԼԹԱՆ ԲԷԿԻ ԵՐԳԸ

Մէկ ձի առայ աշխարհ ընկայ,  
 Մարա՛լս, դիլբիլմազ,  
 Վերջը եկայ քեզի գտայ,  
 Մարա՛լս, դիլբիլմազ:

Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
 Ե՛կ առնեմ, դիլբիլմազ:  
 Տուն կը շինեմ քեզի համար,  
 Մարա՛լս, դիլբիլմազ,

Մէջը զմբուխա, սսկի, մարմար,  
 Մարա'լս, դիւբիւմազ:  
 Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
 Ե'կ առնեմ, դիւբիւմազ:  
 Ես այրի, դու այրի, դու ե'կ,

Ինձ արի, դիւբիւմազ,  
 Ինչ ասես դու ինձ՝ յօտար եմ,  
 Մարա'լս, դիւբիւմազ:  
 Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
 Ե'կ առնեմ, դիւբիւմազ:

9) ՍԻՐՈՒՆ ԹՈՉՆԻԿ

Andante

Սի-րու-ն թո-չ-նի-կ, թո-ւր զն-ա, Սի-րա-ծ նա-  
 թիս քա-րե-ա-րա լի-սա որ  
 նա տը-խուր նրա տա-ծ, գի-  
 - շեր ցե-րե-կ թե-գ է ըս-ողա-սում:

ԳԻՒԼՉՕՂՐԱ

Սիրուն թռչնիկ, թուր զնա',  
 Սիրած եարիս բարեւ արա,  
 Ասա որ նա տխուր նստած,  
 Գիշեր ցերեկ  
 Քեզ է սպասում:

Արշին մալճի ինչ արեցիր,  
 Սրտումըս խոր վերքեր թողիր,  
 Ա'խ, սրտումըս կրակ վառեցիր,  
 Հողիս այրեցիր,  
 Մենակ թողուցիր:



10) ԲԷԿԻ ԱՂՋԻԿԸ

Allegretto

ՍԻՒԼԵՅՄԱՆ

Բէքի աղջիկը երեւի սա էր,  
 Մեր Ասկեարը շատ է հաւան կացել,  
 Չեզ եմ ասում,  
 Շատ է հաւան կացել:

Ո՛վ կ'իմանար որ Սուլթան բէկը,  
 Այսպէս նաշխուն աղջիկ է ունեցել,  
 Չեզ եմ ասում,  
 Աղջիկ է ունեցել:

Ափսո՛ս, հէ՛յ, ափսո՛ս, ես չէի գիտեր,  
 Որ այդպիսի գեղեցիկն է եղել,  
 Չեզ եմ ասում,  
 Գեղեցիկն է եղել:

II) ԹԷԼԼԻԻ ԵՐԳԸ

ԹԷԼԼԻ

Եկ իմ սիրած, քեզ եմ սպասում,  
 Գիշեր ցերեկ մտածում եմ,  
 Աղի արտասուք թափում եմ,  
 Այրուում եմ, բայց քեզ չեմ  
 տեսնում:

Ի՞նչ կը լինէր յանկարծ գայիր,

էրւած սրտիս ճար բերէիր,  
 Չեռ. քիցս բռնած տուն տանէիր,  
 Սիրուն Թէլլի ինձ ասէիր:  
 Ես էլ կրծքիդ փաթաթէի,  
 Ծիծաղէի, արտասուէի,  
 Քո Թէլլին եմ քեզ ասէի,  
 Մարմար կրծքիդ ես փարէի:



12) ՎԷԼԻ-ԹԷԼԼԻ ԴԷՄ ԴԷՄԻ

ՎԷԼԻ

Հըլէ՛ ինձ համար մարալ ես,  
 Ես քո աչերիդ մատաղ,  
 Ի՞նչ կ'ըլլի ինձ եար ըլլես,  
 Ես քո ծամերիդ մատաղ:

ԹԷԼԼԻ

Դու ինձ համար մարալ չես,  
 Ի՞նչ ես ուզում ինձանից,  
 Լաւն այն է որ հեռանաս,  
 Ուր որ է կը գայ աղէս:

13) ՓՈՂ ՈՒՆԵ՞Ս, — ՀԱ՛, ՀԱ՛...

ԹԷԼԼԻ. — Ես կը գնամ միայն նրան,  
 Ո՛վ որ փողեր շատ ունի,  
 Ո՛վ սր փողեր շատ ունի,  
 Դարդ ու ցաւեր հէ՛չ չունի:  
 — Փող ունե՞ս...

ՎԷԼԻ. — Հա՛, հա՛...

ԹԷԼԼԻ. — Փող ունե՞ս...

ՎԷԼԻ. — Հա՛, հա՛...

ԹԷԼԼԻ. — Փող ունե՞ս՝ ես քոնն եմ,  
 Փող չունե՞ս՝ գնա՛ կորիւր:

ՎԷԼԻ. — Քեզ կը սիրեմ մի պայմանաւ,  
 Որ ինձ անկեղծ եար լինես,  
 Որ ինձ անկեղծ եար լինես,  
 Դարդ ու ցաւից ազատես:  
 — Փող ունե՞մ...

ԹԷԼԼԻ. — Գալի՞ս ես...

ՎԷԼԻ. — Փող ունե՞մ...

ԹԷԼԼԻ. — Գալի՞ս ես...

ՎԷԼԻ. — Գիտե՞մ դու գալիս ես,  
 Գիտե՞մ դու հողիս ես:

ԹԷԼԼԻ. — Փողը մի այնպիսի բան է,  
 Որի ուժը շատ մեծ է,  
 Որի ուժը շատ մեծ է:  
 Դարդ ու ցաւից կ'ազատէ,  
 — Փող ունե՞ս. — Հա՛, հա՛... եւլն :

ՎԷԼԻ.— Սէրը մի անպիսի բան է,  
 Որի ուժը շատ մեծ է,  
 Որի ուժը շատ մեծ է,  
 Դարդ ու ցաւից կ'ազատէ:  
 — Փող ունեմ:— Գալի՞ս ես... եւայլն:

14) ՍԵՒ ՍԵՒ ՍԶԵՐ ԳԵՂԵՑԻԿ

Moderato

*mf*

Սե սե աչեր գեղեցիկ, ինձ մի աներ տարադէտար:

*p*

Գի շնր ցե բեկ այ-րը լուս եմ, բո սի բու ցը ան դա դար:

2.


ան դա դար Մի՞թէ սի բա ջրդ ես եմ, ուրի շին է - ի կարծում,

1. 2.

Թէ որ այդ դէս է, հոգի ջա'ն, ես ել հո'ք բեզ եմ սիրում: եմ սի բում:

Սե սե աչեր գեղեցիկ,  
 ինձ մի աներ տարադէտար,  
 Գիշեր ցերեկ այրը լուս եմ  
 Բո սիրուցը անդադար:  
 Մի՞թէ սիրածըդ ես եմ,  
 Ուրի շին էի կարծում,  
 Թէ որ այդպէս է, հոգի ջա'ն,  
 Ես ել հո'ք բեզ եմ սիրում:

Սե սե աչեր գեղեցիկ,  
 ինձ մի աներ խելագար,  
 Գիշեր ցերեկ տանջւում եմ  
 Բո սիրուցը անդադար:  
 Ինչո՞ւ համար մտածել,  
 Ի զուր տեղը տանջւել,  
 Արի՛ մենք ամուսնանանք,  
 Ի՞նչ շահ որ այդպէս մնանք:



## 15) ՄԵՆՔ ՀԱՍԱՆՔ ՄԵՐ ՆՊԱՏԱԿԻՆ

ԽՈՒՄԲԸ.— Մենք հասանք մեր նպատակին,  
Դուք էլ հասէք ձեր մուրազին,  
Աստուած կեանք տայ մեր Ասկեարին,  
Պատճառ եղաւ մեր բոլորին:

ԱՍԿԵԱՐ.— Շնորհակալ եմ ես ձեզանից,  
Շնորհակալ եմ ձեր բոլորից,  
Սիւլէյմանից՝ որ խրատ տուաւ,  
Իէկից՝ որ աղջիկը տուաւ ինձ:

ՍԻՒԼԵՅՄԱՆ.— Սուլթան բէկն էլ առողջացաւ,  
Եւ իր ընտրածին նա առաւ,  
էլ հիմա մէջքը չի ցաւում,  
Հաստ Խալային արժանացաւ:

ՎԷԼԻ.— Բա չէ՞ք ասի, ես էլ գտայ,  
Եւ իմ ընտրածին ես առայ,  
Իմ Թէլլոյին մատաղ լինեմ,  
Ես էլ նրան արժանացայ:

ԽՈՒՄԲԸ.— Խանու՛մն աղային, ԱսեանՍիւլէյմանին,  
Խալան Սուլթանին, Թէլլոն Վէլիին,  
Ամէնքս հասանք մեր մուրազին,  
Աստուած կեանք տայ մնացողներին:



« Մ Ա Շ Տ Ի Ի Պ Ա Տ »

Օ Փ Է Ր Է Թ Ի Ե Ր Գ Ե Ր Է Ն

1) ԲՈՅԻԴ ԲՈՍԻԴ ՂՈՒՐՊԱՆ, ԿԻԼՆԱԶ

Սիրուն կիւլնազ — Եարըս Սարվար,  
 Եար կիւլնազ, անուշիկ կիւլնազ, սիրական կիւլնազ, Կա՛ր:  
 Բոյիդ բոսիդ դուրպան կիւլնազ, կիւլնազ, կիւլնազ,  
 Սեւ աչերիդ դուրպան կիւլնազ, կիւլնազ, կիւլնազ:  
 Ոչ ոք իրաւունք ունի Եարը Կարից բաժանի,  
 Դու հանգիստ կաց սիրուն Կար,  
 Ո՞վ քեզ կարող է տանի:  
 Բոյիդ բոսիդ դուրպան... Եւայլն:  
 Ես միայն քեզ եմ սիրում, միայն քեզանով ապրում,  
 Մատաղ լինեմ քո բոյին,  
 Սեւ սեւ կամար ունքերին:  
 Բոյիդ բոսիդ դուրպան... Եւայլն:

2) ԱՂՋԻԿԴ ԿՈՒՏԱՍ, ՓՈՂ ԿՈՒՏԱՄ

— Մաշտի Իպատ դու մեր տունը հազար բարով ես եկել,  
 Ի՞նչպէս եղաւ, որ հոգի ջա՛ն, մտաբերեցիր տուն մտար:  
 — Ա՛յ մարդ, ասեմ, քեզ ամէնից, ամէնից շատն եմ սիրում,  
 Դու քո աղջիկը ինձի տուր, տես թէ ինչպէ՛ս եմ պահում:  
 — Ա՛յ Մաշտի Իպատ, սոսա տեսնեմ, դրպանդ լի՞քն է փողերով:  
 Ես քեզի օրիսրդ աղջիկ տամ, ոչ թէ այրի կին սեւ շորերով:  
 — Փող կ'ուզե՞ս, տամ:  
 = Խնդրեմ տո՛ւր...  
 — Աղջիկդ կուտաս՝ կուտամ:  
 = Ասա քո արեւ...  
 — Քո արեւ...  
 = Եթէ այդպէս է՝ տո՛ւր ձեռքդ...

3) ԲԱՑ ԱՐԱ ԴՈՒՌԸ

Բաց արա դուռը, բաց արա դուռը,  
 Բաց արա դուռը, որ գանք քեզ սպաննենք:  
 Փամփուշտները պատրաստ, փշառլները լիքը,

Բաց արա դուռը, որ գանք քեզ սպաննենք:

Ի՞նչ էք ինձանից ուզում,

Ինչո՞ւ էք դուռը ծեծում,

Ի՞նչ էք ինձանից ուզում,

Ի՞նչ է արդեօք ձեր միտքը...

— Բաց արա դուռը...

#### 4) ԱՅ ՄԱՇՏԻ, ՈՒՐԱԽԱՑԻՐ

Ա՛յ Մաշտի, ուրախացիր, հարսանիքդ կարգադրիր,

Տավուլ-գուռնա ածեցէք, ուրախացէք ու պարէք:

Ես Մաշտիս խելօք եմ, հազար ջահէլ ես կ'արժեմ,

Ռուստամ բէկ, քեզ եմ ասում, հաստատ եղիր քո խօսքում:

Ռուստամ բէկը թէ մարդ ա, իրան խօսքին հաստատ ա,

Կիւլնազ հանրմը քոնն է, դէ՛, շուտ փողերըդ հանէ:

Ա՛յ Մաշտի մեղք եմ ես, մէջքըս եղաւ երկու կէս,

Մատաղ լինեմ քո հարսին, տուր ինձ դու իմ ապասին:

Ա՛յ համալ, հեռացիր, ապասին մտքիցդ հանիր,

էս օր իմ հարսանիքն է, ուրախացիր ու պարիր:

#### 5) ՀԱՅՐ ՈՒ ԱՂՋԿԱՅ ՄԻՋԵԻ

Աղջի՛կըս, քեզ կօշիկ առնեմ:

— Ա՛ռ, հայրիկ ջան, ես քեզ մատաղ:

Աղջի՛կըս, քեզ գուլպայ առնեմ:

— Ա՛ռ, հայրիկ ջան, ես քեզ մատաղ:

Աղջի՛կըս, քեզ Ֆիստան առնեմ:

— Ա՛ռ, հայրիկ ջան, ես քեզ մատաղ:

Աղջի՛կըս, քեզ ամուսնացնեմ:

— Ո՛չ, հայրիկ ջան, ես քեզ մատաղ:

#### 6) ԵՍ ՔՈ ԱՍԱԾՆԵՐԻՑԴ ԶԵՄ

Ես քո ասածներիցդ չեմ, էնպէս խփեմ,

Որ գլուխդ քսան տեղից կը ջախջախեմ:

Տօ՛, մի թողէք էդ մուրտարին գլուխը ջարդեմ,

Ինձ պէս մարդուն, նա ինչպէ՞ս է խայտառակում:

Ա՛յ, մարդ, Հասան, բաւական է Մաշտուն տանջես,

Դու մի հարուստ ինտէլիկէնտ, ամօ՛թ է քեզ:

ՊԵՐՃ ՊԹՕՇԵԱՆՑԻ «ՍՍՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ» ՕՓԵՐԷՏԷՆ

1) ՆԱԽԵՐԳԱՆՔ

Andante

Երաժշտութիւն. ԳԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

հօ՛ւ եր-բում կ'ա-նե-մ, որ քեզ չեմ թող-նի-  
 կեանքս ոչ ո-քի-ն հետեւ չեմ կա-  
 ղի-ն Առանց քեզի ես-ն յիստ' մեամ անտէր  
 տէր-ն էլ մը նաա քա-րով-ն էլ ԳԸ-  
 նա քա-րով-ն էլ մը նաա քա-րով-ն

Հօ՛ւ, երգում կ'անեմ,	է՛լ մնաս բարով,
Որ քեզ չեմ թողնի,	է՛լ գնաս բարով,
Կեանքս ոչ ոքի	է՛լ մնաս բարով,
չեա ես չեմ կապի:	է՛լ գնաս բարով,
Առանց քեզի ես	է՛լ մնաս բարով...
Պիտ' մնամ անտէր,	

2) ԱՂԵՐՍԱՆՔ

Ընչանք ե՞րբ ես դիմանամ,	Սէրըդ կրակ ա դառել,
Մաշեցիր ջանքս, վարդիթե՛ր,	էրում ա ջանքս, վարդիթե՛ր,
Կըտրեցիր կեանքիս թելերը,	Հերիք ա ինձ չարչարես,
Իմ հագեհան վարդիթե՛ր:	Կըտրիր ցաւըս, վարդիթե՛ր:

(Զայնագրութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



Andante

Երաժշտութիւն՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Ըն-չանք երբ ես դի-մա-նամ, մաշե-ցիր ջա-նըս, վար-դի-  
 թեր. կրտրե-ցիր ցնան-քիս թե-լն-րը, իմ հո-գե-հան  
 վար-դի-թեր Աե-րրդ կը-րակ ա դա-ռել, է-րում  
 ա ջանս, վար-դի-թեր. հե-րիք ա ինչ չար-չա-րես.  
 կրտ-րիր ցա-ւըս, վար-դի-թեր - - - - - թեր:

3) ԶՈՒԳԵՐԳ ՍՕՍԻ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐԻ


Andante

Երաժշտութիւն՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Բան եմ ասում ահանջ դիր, հոգուդ մատաղ վարդիթեր, ինչ մի բըցիր չըլն-րը.  
 կրտրիր ցաւըս վարդի թեր, վար-դի թեր, իմ Սօ-սի, իմ Սօ-սի-

Բան եմ ասում ահանջ դիր,  
 Հոգուդ մատաղ, վարդիթեր,  
 ինձ մի բըցիր չուրբը,  
 Կարիր ցաւըս, վարդիթեր,  
 վարդիթե՛ր...  
 իմ Սօսի՛...  
 Հանգիստ ու դադար չունենմ,  
 Խղճա՛ ինձի, վարդիթեր,  
 Աստուած սիրես խնայիր,

Թող մնամ խաղաղ, վարդիթեր,  
 վարդիթե՛ր...  
 իմ Սօսի՛...  
 Ջանըս դալուկ, ցաւատանջ,  
 Մեղանում չալ չմընաց,  
 ինձ մի բըցիր չուրբը,  
 Մի չարչարեր, վարդիթե՛ր,  
 վարդիթե՛ր...  
 իմ Սօսի՛...  
 իմ Սօսի՛...



ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՅ

4) ՄԵՐ ՍՕՍԸ ՎԱՐԴԻՆ ՍԻՐԵՑ

Allegro

Երաժշտութիւն՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Մեր սօսը վարդին սիրեց, Եար, նա-նի.

նա-նի... ջան. վար-դի-թեր նը-րան բաշխեց.

Եար, նա-նի, նանի... ջան նանի ջան.

Մեր Սօսը վարդին սիրեց,  
 Եար, նանի, նանի ջան.  
 Վարդիթեր նրան բաշխեց,  
 Եար, նանի, նանի ջան:  
 Վարդիթե՛ր, բախտաւոր ես,  
 Եար, նանի, նանի ջան,

Սօսի պէս լաւ եար ունես,  
 Եար, նանի, նանի ջան:  
 Վարդը որ կայ շուշա ա,  
 Եար, նանի, նանի ջան,  
 Կոտրած սրտին ճար չկայ,  
 Եար, նանի, նանի ջան:

### 5) ՄԱՆԻՇԱԿ ԵՄ ԵՍ ՔԱՂԵԼ

Andante

Երաժշտութիւն՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Մա-նի-շակ եմ ես քա-ղեղ բե-զի ըն-ծայ բե-րե-  
լու, որ ա-մէ-նը ի-մա-նան, թէ ես  
իմ խօս-քի տէրն եմ: Մարտ ա-միսն է հեղտ բան չի.  
Ո՛վ կ'ա-սի ձիւնն եմ քե-րեղ, Մատներս թի-ակ  
չի-նե-լով, էս բանն ա-րի, վար-դի-թեր.

Մանիշակ եմ ես քաղել  
Քեզի ընծայ բերելու,  
Որ ամէնը իմանան,  
Թէ ես իմ խօսքի տէրն եմ:

Մարտ ամիսն է, հեղտ բան չի,  
Ո՛վ կ'ասի ձիւնն եմ քերել,  
Մատներըս թիակ շինելով,  
էս բանն արի, վարդիթե՛ր:

Մեռնեմ էդ աչք-ունքերիդ,  
Որ ծիածան ա ու արեւ,  
Մեռնեմ էդ անուշ լիզուիդ,  
Որ տեսնելիս՝ տայ բարեւ:

էգուց ժամ պիտի գընաս,  
Գնացած ճամբիդ ես մատաղ,

Ծամբիդ պիտի սպասեմ,  
Կէս գիշերէն էլ շատ վաղ:  
Հայաստանում մի հատ ես,  
Ոչ ոք ունի քեզ պէս եար,  
Քեզ տեսնող ազատ ազան,  
Գլուխը կը տայ քարէ քար:

Սիրտըս քաշեց իրա մօտ,  
Կարեց հոգուս թելերը,  
Ասաց՝ մի օր կը ստանաս  
Նեղութեանըդ փոխարէն:

Ուղիդ քսան տարումն եմ,  
Տասնըութը շուտ անցաւ,  
էս երկուսը, հէնց, գիտե՞ս,  
Երկու հարիւրից անցաւ:

6) ԴՈՒ ՄԻ ՀԱՏ ԵՍ, ԱՆՆՄԱՆ

Սիրելի ջան, հեռացար,  
 Չլինի թէ Սօսին մտացար,  
 Սրտումս վառ ա քո սէրը,  
 Էրում ա ջիգեարիս ծէրը:

Դու մի հաս ես, աննման,  
 Աւարակում գովական,  
 Փոքրում ես սեսնողին,  
 Կրակում նրա հոգին:

Քո սէրից ինձ կը սպաննեմ,  
 Աղջիկ, քո ցաւը տանեմ,  
 Արի՛, դու ինձ ահանջ դիր,  
 Նանիդ ես բազի կ'անեմ:

Դու մի հաս ես, աննման,  
 Աւարակում գովական,  
 Փոքրում ես սեսնողին,  
 Կրակում նրա հոգին:



ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

7) ԹԱՌԱՄԵՑԱԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

Andante

Երաժշտութիւն՝ ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Թառամեցաւ կարմիր վարդը,	Սօսի սիրտը ո՞նց տընջանայ,
Բազի բլբուլ էլ չի երգում,	Աչերը ջուխտակ ֆինջան ա,
Նազ մի անի, նազիդ մեռնեմ,	Տեսնողի լեզուն մնջանայ,
Քո նազն ինձի կը սպաննի:	Սօսի սիրտը ո՞նց տընջանայ:



8) Ա Ղ Օ Թ Ք

Largo

Երաժշտութիւն՝ ԳԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Ո՛վ երկիրն ք երկիր, դուք ինձ նա-յե-ցէք, ինձ կա-րեկ-ցե-  
լով խնդ-ճիս գը-թա-ցէք. ինձ կա-րեկ-ցե-լով խնդ ճիս գը-թա-ցէք.

Ո՛վ երկիրն ք երկիր, դուք ինձ նայեցէք,  
ինձ կարեկցելով՝ խնդճիս գթացէք:  
Աղաչում եմ ձեզ, աղաչանքս լսէք,  
Սըրտիս վերքը խոր դուք դարմանեցէք:

ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅԻ «ՊԷՊՕ» ՕՓԵՐԷԹԻ ԵՐԳԵՐԷՆ

1) ՔԷՕՌՕՂԼԻԻ ԵՐԳԸ

Չափաւոր

Խօսք՝ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ — Եղանակ՝ աշուղական

Այ բռն օղ-լի, ջան բռն օղ-լի, Այ բռն օղ-լի  
ջան բռն օղ-լի, քեզ խաբէց համ — ջան, բռն օղ-լի.  
հայ հայ հայ, Բայց որ դարձար դու ջա-ղաց-դան,  
կան-չիր թող գայ, ջան բռն օղ-լի, ջան, ջան բռն օղ-լի,  
ջան — ն ջան բռն օղ-լի ջան:

Այ Բէօօօղլի, ջան Բէօօօղլի,  
Քեզ խաբեց Համզան Բէօօօղլի:  
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Բայց որ դարձար դու ջաղացպան,  
Կանչիր թող գայ, ջան Բէօօօղլի:  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի,  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի:

Մարդուս բաղդն էլ ահա այսպէս,  
Պարաւում է ջաղացի պէս:  
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Մէկ օր ահռելի վիշապ ես,  
Միւս օր ջաղացպան՝ Բէօօօղլի:  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի,  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի:

Թէեւ դռաթիցը զրկուած,  
Բայց թուր ունիս վրադ կախած,  
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Համզան ստրուկ թոկից փախած,  
Բայց դու էլի ջա՛ն Բէօօօղլի:  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի,  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի:

Բայց դու էլի Բէօօօղլին ես,  
Ժողովուրդին սիրելին ես,  
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Թէկուզ ջաղացպան էլ լինես,



ՎԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

Քեզ պատիւ կըտան Բէօօօղլի:  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի,  
Ջա՛ն, ջա՛ն Բէօօօղլի:

2) ՊԷՊՈՅԻ ԵՐԳԸ

Musical notation with lyrics: Դամբը ձեռիս աշխատում եմ, վայ էն մարդին հալալ աշխատեցրու եմ ուտում, աշխարհու՛մըս, խալ-խի գա-տած հացն է ուտում:

Դամբը ձեռիս աշխատում եմ,  
Հալալ աշխատանքս եմ ուտում,  
Վա՛յ էն մարդին աշխարհումըս,  
Խալխի դատած հացն է ուտում:  
Հալալ մարդու սիրտը ուրախ,  
Ճակատը միշտ բաց է ըլնում,  
Վա՛յ էն մարդին, որ հա՛մ գջլում,  
Հա՛մ էլ անկուշտ լաց է ըլնում:

Դամբը ձեռիս ջուրն եմ գընում,  
Չեռ ու ստրս թաց են ըլնում,  
Տանը նստած առանց հացի,  
Քիրս ու դեղէս լաց են ըլնում:  
Լուսնակը լուս, գիշեր խաւար,  
Առաւօտը բաց է ըլնում,  
Խըլբըլթալէն լօթի ձկներ,  
Բազարումը հաց են ըլնում:

«ՆԱՄՈՒՍ» ԳՈՒՍԱՆԵՐԳՈՒԹԵՆԷՆ

1) Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ

Խօսք՝ ՎԱԶԳԷՆ ԵՍԱՅԵԱՆԻ

Երաժշտ. ՅԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆԻ

*Moderato*

S  
 Վարդի հոծանք մեզից ցիկ, ուր վարդերուն հոյակ զիկ, եւ քիչ հաւարտից որով, հրամարտից քիչ-քիչ:

A  
 Վարդից մեզից ցիկ, ուր վարդերուն հոյակ զիկ, քիչ հաւարտից որով, հրամարտից քիչ-քիչ:

T  
 մեզից ցիկ-ցիկ ուր հոյակ զիկ, հրամարտից քիչ-քիչ:

B  
 մեզից ցիկ-ցիկ ուր հոյակ զիկ, հրամարտից քիչ-քիչ:

*a tempo*

Եւ քիչ իմ ցումն ցարժանից, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Եւ քիչ ցումն-ձեռնից ցիկ, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Կի-քիչ-հոյակ հոյակ զիկ-ձեռնից, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Կի-քիչ-հոյակ հոյակ զիկ-ձեռնից, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

*Allegro*

Եւ քիչ ցումն-ձեռնից ցիկ, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Եւ քիչ ցումն-ձեռնից ցիկ, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Եւ քիչ ցումն-ձեռնից ցիկ, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:

Եւ քիչ ցումն-ձեռնից ցիկ, իմ ցիկերուն հոյակ զիկ, ուր քիչ հաւարտից որով, ուր քիչ հաւարտից որով:



ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ (ԱԹԷՆՔ)

Վարդի նման զեղեցիկ,  
Ո՛վ վարդերես հայ-աղջիկ,  
Ես քեզ համար եմ խոսվ,  
Էրևում եմ քս սիրով:

Արի՛, իմ տուն տանեմ քեզ,  
Իմ տիրուհին դու լինես,  
Ոսկի փռեմ ոտքիդ տակ,  
Ո՛վ անուշ իմ տատրակ:

Հայ աղջիկ, տուր նրբան  
Սէրըդ կուսական,  
Եւ ապրէք միասեղ,  
Զոյգ սիրտեր սիրազեղ,  
Մի կեանք քաղցր ու շքեղ:

2) ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Խօսք. ՎԱԶԳԻՆ ԵՍԱՅԵԱՆԻ

Երաժշտ. ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆԻ

*Allegro moderato*

T  
Ըստ ու հիմն-դայ զարկի է խօր. հարմար ժողովրդի շո — լոր. հարս է՛մ բն-րամ

B  
Ըստ ու հիմն-դայ զարկի է խօր. հարմար ժողովրդի օ — լոր շո — լոր. հարս է՛մ բն-րամ

1.  
2.

աւ — լի շու-րան, հարսերէրի միջ անձրան, միջ անձր — ման. միջ անձր — ման:

աւ — լի շու-րան, հարսերէրի միջ անձրան, միջ անձր — ման միջ անձր — ման:

*con brio*

S  
դէ՛հ ար-դերի ծախ ծախ արանի. էս օր — ուան շար քանի արանի. մեր փե — սին

A  
դէ՛հ ար-դերի ծախ ծախ արանի. էս օր — ուան շար քանի արանի. մեր փե — սին

T  
դէ՛հ ար-դերի ծախ ծախ արանի. էս օր — ուան շար քանի արանի. մեր փե — սին

B  
Ե՛կէ՛ք ար-դերի. Ե՛կէ՛ք ար-դերի ծախ ծախ արանի. ծախ ծախ արանի. ծախ ծախ արանի. ծախ ծախ արանի. ծախ ծախ արանի.

Մաք - ու աճ ցաւ, սի - բաւ առն, սիրտս առն ցաւս իւ - լաւ :  
 Մաք - ու աճ ցաւ, սի - բաւ սուհ ցաւս իւ - լաւ :  
 Մաք - ու աճ ցաւ, սի - բաւ առն, սիրտս առն ցաւս իւ - լաւ :  
 Մաք - ու աճ ցաւ, սի - բաւ սուհ ցաւս իւ - լաւ :

Ծափ ու ծնծղայ զարկէք էսօր, Դէ՛հ, աղերք, ծափ ծափ տանք,  
 Հարս ենք բերում օրօր-չորոր, Էս օրուան շատ փառք տանք,  
 Հարս ենք բերում, սարի շուշան, Մեր փեսին Աստուած տայ,  
 Հազարների մէջ աննըման: Սիրասուն տաս բալա:

«ԱՆՈՒՇ»ԷՆ ԵՐԿՈՒԷՆ ՈՒՐԻՇ ԵՐԳԵՐ

1) ԱՂՋԻ ԱՆԱՍՏՈՒԱԾ

—Աղջի՛, անաստուած՝, նըստիր վըրանում,  
 Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,  
 Աշուղ ես շինել, չեմ հանգստանում,  
 Խաղեր կապելով,  
 Չուրեր չափելով,  
 Ոչխարըս անտէր,  
 Ընկել եմ հանգեր:

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քո սիրով,  
 Ոտըս կապեցիր թել-թել մաղերով,  
 Էլ չեմ դիմանայ կը փախցնեմ զօռով:  
 Ա՛յ սարի աղջիկ,  
 Ա՛յ սիրուն աղջիկ,  
 Ա՛յ դու կարմրաթուշ  
 Թուխամաղ Անուշ:

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չը տան,  
 Արիւն կը թափեմ ես գետի նըման,  
 Սարերը կ'ընկնեմ, կորչեմ անգիւման,  
 Ա՛յ սեւ աչերով,  
 Ա՛յ ծով աչքերով,  
 Ունքերըդ կամար,  
 Աղջի՛կ, քեզ համար:

Խօսք 3. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Եղանակ՝ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Lento

Աղ-ջի, ան աստ ուս՝ նրս տիր վր-րա-նու-  
 -մ, ինչես գորսգայի ինչ քանակ ա-նում. և շուղես զիմել  
 չեմ հանգրստա-նում, խա-ղեր-խա-ղեր կա-ղե-լով.  
 չո-լեր-չո-լեր չա-փե-լով. ոչ խա-րրս ան-տեր  
 լն-կել մե՛ հան զեր, լն-կել լն-կել լն-կել եմ հան զեր.  
 է-րե-ցիր ա-մա-ն սիրտըս բո սի-րո-վ. ո-տըս կա ղե՛ցիր  
 թել թել մա-զե-րո-վ. էլ չեմ դի-մա-նա-յ.  
 էր-փայտցնեմ զօ-րով Այ՛ սա-րի աղ-ջի-կ. այ՛ սի-րուն աղ-ջի-կ.  
 Այ՛ դու կարմրա թուշ, թրխա մազ և-նուշ. Այ՛ սա ռի աղ ջի-կ.  
 Այ՛ սի ռուն աղ ջի-կ, այ՛ դու կարմրա թուշ, թրխա մազ և նուշ:

## 2) ՎՈՒՇ, ՎՈՒՇ, ԱՆՈՒՇ...

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Եղանակ՝ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

*mf*

Ե—կէ՛ք, քոյ—րե՛ր, սէգ սա—րե—րի Չըքնա—ղա—գեղ

*P*

ո—գի—նե՛ր, Ե—կէ՛ք, ջա—հէլ սի—րա—հա—րի սե—րը

*pp*

ող—բանք վա—ղա—մեռ: Վուշ, վուշ, Ան—նուշ, վուշ, վուշ, քու թիկ,

*m3*

վուշ քո սե—րին, քո եա—րին, վուշ, վուշ, Աա—րօ՛,

*P*

վուշ, վուշ ի գիթ, վուշ քո սի—րած սա—րե—րին:

Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի  
 Չըքնաղագեղ ոգիներ,  
 Եկէ՛կ, ջահիլ սիրահարի  
 Սէրը ողբանք վաղամեռ:

Օխան աղբիւրից ջուր է առել  
 Կսյսն սափորով, լուռ ու մունջ,  
 Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,  
 Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ ասաղուէք գրել  
 Խընդիրք արել աստղերին,

Փափաք սըրտով խընդիրք արել  
 Բարի ժըպտան իր սէրին...

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի աղջիկ,  
 Ափսո՛ս իգիթ քո եարին,  
 Ափսո՛ս բոյիդ թելիկ-մեկիկ,  
 Ափսո՛ս էգ ծով աչերին...

Վո՛ւշ-վո՛ւշ, Անուշ, վո՛ւշ-վո՛ւշ,  
 քուրիկ,  
 վո՛ւշ քո սերին, քո եարին,  
 վո՛ւշ-վո՛ւշ, Աարօ, վո՛ւշ-վո՛ւշ  
 իգիթ,  
 վո՛ւշ քո սիրած սարերին...



ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Ջ Ա Ն Ա Ջ Ա Ն Ե Ր Գ Ե Ր

ԵԿ ԻՄ ՍՐԻՆԳ

Lanto

Եկ իմ սր-րինգ իմ քա-րն-կամ սրր-տա-գին, նի-  
 հար շրթ-ներդ սի, և-րն-րուն դիր գալ-կա-հար իմ շրթ-նե-րուն, եր-  
 գենք ու լանք, լանք ու նր-գենք տրրտ մա-գին

Ե՛կ իմ սրինգ, իմ բարեկամ սրրաագին,  
 Նիհար շրթներդ, ս՛հ, երերուն,  
 Դի՛ր գալկահար իմ շրթներուն,  
 Երգենք ու լանք, լանք ու երգենք տըրամագին:  
 Լա՛ց, զի լոկ քեզ գըտի հասարն իմ սրաին,  
 Դու բարունակ էիր կանաչ,  
 Երբ մի անգութ ձեռք անճանաչ  
 կտրեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին:  
 Եւ թոյլ աըւիր, որ լանջիդ վրայ գալարուտ  
 Ծակեր բացուին, վէրք երկաթի,  
 Թող այդ վիրաց, ըսիր, կաթի  
 Արիւն, բողոք, միակ ըսփսփ վիշտերուդ:  
 Ես ալ մանուկ մ՛էի անմեղ, երբ վաղուց,  
 Մի անճանօթ պատճառ վըզիս  
 Լուծ մը դըրաւ, ս՛րբ կոչեց զիս  
 Եւ հօր ու մօր սիրոյն կարօտ զիս թողուց:  
 Իմ ալ կուրծքըս ծակծրկեցին ժանա վէրքեր  
 Եւ որպէս գուն սիրես որմին  
 Յենուլ, լուիլ, մի նչեւ սր մին  
 Չը յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չե՛ս երգեր,—  
 Լըռիկ մեջիկ սիրեմ և ես հեռու կալ

Ընկերութեան ժիտ ժըխորէն,  
 Եւ իմ սըրտին, հոգւոյն խորէն  
 Զննել, զգալ լոկ, զարմանալ ու խոկալ:  
 Եւ քանի որ նոյնն է ծընունդ մեր և կեանք,  
 — Մարդուն քրմաց դուն հպատակ,  
 Եւ անձանօթ մի նպատակ  
 Անհուն կամաց մէջ թողած է իմ կեանքը,—  
 Ինչո՞ւ նոյն հողն չամփոփէ մեզ, ի՞մ սըրինգ,  
 Զէ՞ որ սիրող սրտից կրկին  
 Նո՛յնն են դըժոխք և նոյնն՝ երկին,  
 Յիշէ՛, ընդ քեզ ապրիլ, մեռնիլ ուխտ ըրինք:  
 Թող երգէոն, դաշնակ, քընար գեղգեղեն,  
 Յեկեղեցւոջ, ի գինետան,  
 Աղօթք ու պար թըռչին, խայտան,  
 Թող ալք վալին հաճոյք մարմնոյ, հոգեղէն.  
 Ա՛խ, իմ սըրինգ, աշխարհ յոյսով թող բերկրի,  
 Թող բաղդն անոր ժըպտի յոյսին,  
 Ե՛կ, ես և դու ի միասին  
 Լա՛նք ու երգե՛նք, մեր բաժինն այս է յերկրի:

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ



ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ

**ՊՈՒԼԿԱՐ ՄՕՐ ՕՐՕՐԸ**

Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընի՛ր ու խաղաղ:

Քո արիւնից մեր դաշտերը հազար ծաղկով վառւեցին,  
Ամէն մի մայր ծաղիկ ունի, մինակ ես եմ անծաղիկ:

Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընի՛ր ու խաղաղ:

Մեր լեռների կատարներին ազատութեան բոցավառ  
կարոյկները կէս գիշերի սեւ խաւարը վանեցին:

Քընի՛ր, բալիկ, խաղաղ քընի՛ր ու հանգիստ:

Արշալոյսի վառ ցոլքերով մեր հորիզոնն ողողւեց,  
Եւ արեւի շողքերի տակ մեր երկիրը թունդ ելաւ:

Քընի՛ր, բալիկ, քընի՛ր խաղաղ ու հանգիստ:

Կէս գիշերին մեր դըռնակը էլ չի բախում հարամին,  
Մանուկները ահ ու դողով էլ չեն նայում հերթիկին:

Քընի՛ր, բալիկ, քընի՛ր խաղաղ ու հանգիստ:

Հօտ ու նախիր լուսաբացին խայտալու՜կ են դաշտ վազում,  
Հովիւների սըրինգ-շըւինն ողջ ձորերն են թունդ հանում:

Քընի՛ր, բալիկ, քընի՛ր խաղաղ ու հանգիստ:

Ամէն շաբաթ երեկոյին ես այց կը տամ քո շիրմին,  
Օրօր կ'ասեմ, որ խոր քընես, մատաղ լինեմ քո հողին,

Քընի՛ր, բալիկ, քընի՛ր խաղաղ ու հանգիստ:

Բայց թէ մի օր մեր լեռների մայրիները կորանան,  
Եւ մեր գըլխին հազար կողմից սեւ ամպերը դիզանան,  
Թէ ժըպիտը նորից խամրի մեր կոյսերի շըրթունքին,  
Եւ մեր անմեղ մանուկները օրօրոցում դողդողան,  
Այն ժամանակ նորից կը դամ, կ'ասեմ, բալիկ, մի՛ քընի՛ր,  
Ե՛լ, ոտքի՛ ել, սեւ ամպերը մեր լեռներին դիզացան  
Եւ փոթորկի գոռ շընչի տակ, մայրիները կսրացան,  
Վի՛ր կաց, մէ՛կ էլ, հըսկայ զաւակ, ձգուիր քո վէս հասակով,  
Շարժիր մէկ էլ յազթ բազուկըդ, մատաղ լինեմ քո բազկին,  
Յետոյ նորէն հանգիստ քընի՛ր, անուշ անվերջ, խոր քընով...

ԽԱՂՈՂԸ


Երբ խաղողին դեղին ողկոյզ  
Տերեւներուն տեսնամ մէջէն,  
Թէ տխուր եմ կամ մտայոյզ՝  
Պարտէզ բացուի սրախս մէջ շէն.

Ոսկեհատիկ օրհնած խաղող,  
Տեսքն ալ կ'արժէ հազար ներբող:

Հատիկները լուսով լեցուն,  
Դուրսը շաղ է, ներսը շաքար,  
Ու թափուած են կըլոր սահուն,  
Կարծես մանտրիկ բերնի համար.

Ոսկեհատիկ օրհնած խաղող,  
Գեղն ալ կ'արժէ հազար ներբող:

Խաղողն օրհնեալ է ամէն տեղ,  
Բայց հոս բուսնի միսկեքն անուշ,



ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Ու հո՛ս միայն հըրաշագեղ,  
Կ'աճի մերին քելլի չավուռ.  
Ոսկեհատիկ օրհնած խաղող,  
Գոյնն ալ կ'արժէ հազար ներբող.

Խաղողն առատ՝ ամբողջ աշուն,  
Աղքատին ճաշն է պիտանի,  
Աստուածածին կ'ընէ հասուն,  
Նկեղեցին կ'օրհնէ դանի.  
Ոսկեհատիկ օրհնած խաղող,  
Համն ալ կ'արժէ հազար ներբող,

Գարնան վարդեր թէ զիս դիւթեն,  
Խաղողն անէ սրտիկըս զով,  
Անոնց հոտէն, ասոր հիւթէն  
Սիրեմ՝ ըլլալ ըստէս գինով.  
Ոսկեհատիկ օրհնած խաղող,  
Հիւթն ալ կ'արժէ հազար ներբող,

**ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ**

Adagio

Փաշնասորեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅ

հո—վերն ա—ռան սար ու դա—րեր, Ամ—դերն ե—լան  
 մութն ըն—կաւ Ան—գին մէ—րիկ, հե—րիք յու—սա—ս.  
 րո շող—շո—շուն աստղն ըն—կաւ լաց. մէ—րիկ ջան  
 որ էլ չեմ—գայ — վեր—բը սըր—տիս տուն չեմ գայ

Հովերն առան սար ու դարեր,  
 Ամպերն ելան, մութն ընկաւ,  
 Անգին մէրիկ, հերի՛ք յուսաս,  
 Քո շողշողուն աստղն ընկաւ:  
 Լա՛ց մերիկջան, որ էլ չե՛մ գայ,  
 Վերք սրտիս՝ տուն չեմ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպն է ցողում  
 Սև ու պղտոր երկընքէն,  
 Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում  
 Իմ անգիւման, սև սըրտէն:  
 Լա՛ց, մերիկջան, որ էլ չե՛մ գայ,  
 Վերքս խորն է, նար չըկայ:

Անգուլթ կեանքում վէրք ըստացայ  
 Սըրտանց սիրած ընկերէս,  
 Անխիղճ կեանքում վէրք ըստացայ  
 Անուշ սիրած քուրիկէս...  
 Լա՛ց, մերիկջան, որ էլ չե՛մ գայ,  
 Ագիգ բալեդ էլ չըկա՛յ...

**ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ**

Adagio

Գաղնատուրեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅ

Ո՛ւր էք կորեր զարնան օրեր, Զառ սարերի հովի հեռ,  
 կանչեմ, արիք, նաչխուն հաւքեր,  
 Ալ շրթունքով վարդի հեռ:  
 Աղբիւր կուգար էս քարափէն,  
 Կարան էստեղ երգ կ'ասէր,

Խոր ծմակէն կուգար էրէն,  
 Սիրազս ուրախ կը զարնէր:  
 Հիմի ցուրտ է, ձիւնն է եկեր,  
 Չորս դիս ձմեռ ու սառսյց,  
 Ա՛խ, էլ չկան արեւ օրեր,  
 Սիրտս էլ սառեր է վաղուց:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

Andante

Որս կան ախ-պէ՛ր սա-րէն կու գաս, սա-րի մա-րալ կը փն-տոնես.  
 Ա-սա՛, եա-րաբ՛, դուն չը տեսա՞ր իմ մա-րա-լըս, իմ բա-լէս:



ՈՒԵՏԻՍ ԻՍՈՅԱԿԵԱՆ  
 (Վերջին լուսանկարներէն)

— «Որսկան ախպէ՛ր, սարէն կուգաս,  
 Սարի մարալ կը փնտոնես,  
 Ասա՛ հարաբ, դուն չը տեսա՞ր  
 իմ մարալըս, իմ բալէս:

«Դարդի ձեռքից սարերն ընկաւ  
 իմ արեւըս, իմ բալէս,  
 Գլուխն առաւ քարերն ընկաւ  
 իմ ծաղիկըս, իմ լալէս»...

— «Տեսայ, քուրի՛կ, նաչխուն բալէդ  
 կարմիր-կանաչ է կապեր,  
 Սիրած եարի համբոյրի տեղ  
 Սըրտին վարդեր են ծըլեր»:

— «Որսկան ախպէ՛ր, ասա՛, հարաբ,  
 Ո՞վ է հարսը իմ բալիս,  
 Ո՞վ է գըրկու՞մ չոր գլուխը  
 իմ մարալիս, իմ լալիս»:

— «Տեսայ քուրի՛կ, դարդոս բալէդ  
 Քարն է դրեր բարձի տեղ,  
 Անուշ քընով տաք գընդակն է  
 կրծքում գրկեր եարի տեղ:

«Սարի մարմանդ հովն է շոյում  
 Ճակտի փունջը մարալիդ,  
 Ծաղիկներն են վըրան սըգում  
 Ազիզ բալիդ, խեղճ լալիդ»...

Ա. ԻՍՈՅԱԿԵԱՆ

## ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,  
 Երբ միտս էք գալիս՝ (հոգի՛ ջան) ասում եմ ևս ա՛խ.  
 Հալում եմ, հալում օտարութեան մէջ,  
 Ա՛խ, սիրտըս խորում (հոգի՛ ջան) ցաւիս չկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝  
 Սեղանիս վերայ (հոգի՛ ջան) առաջս է դրած,  
 Աչքըս ակամայ վերան եմ ձգում,  
 Ձեր սիրուն պատկերն (հոգի՛ ջան) եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և ա՛խ, միտքս է մոլորում,  
 Դառն արտասուքով (հոգի՛ ջան) աչքըս պղտորում,  
 Կարծում եմ բոլոր աշխարհը մըթնեց,  
 Արեւ խաւարեց (հոգի՛ ջան) էնգուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,  
 Ձեր սիրուն աչերն (հոգի՛ ջան) էլ ե՞րբ կը տեսնեմ,  
 Ին սեւ սեւ աչերն սեւ ունքով պատած,  
 Կարծես՝ հրկնային (հոգի՛ ջան) զալամով քաշած:

Ին սեւ սեւ աչերն, որ շատին սպաննեց,  
 Բայց էլի շատին (հոգի՛ ջան) դըժոխքից հանեց,  
 Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,  
 Առանց կրրակի (հոգի՛ ջան) էրուած խորոված:

Էլ ե՞րբ կը տեսնեմ ևս ձեզ ման գալիս,  
 Բաղ ու բաղչայում (հոգի՛ ջան) սէյրան անելիս,  
 Ուրտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,  
 Երբոր ձեր կարմիր (հոգի՛ ջան) թըշերն է տեսնում:

Իլըրուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝  
 Թըռչում է, թըռչում (հոգի՛ ջան) ամպերում կորչում  
 Եւ իր Արարչի՛ տեսածն ասելիս,  
 Փառք քեզ ՏէրԱստուած (հոգի՛ ջան) փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,  
 Թէ հրեշտակ ասեմ (հոգի՛ ջան) հրեշտակ չեմ տեսել,  
 Թէ մարդ անուանեմ՝ բեթամաղ կ'անեմ,  
 Ուրեմն ի՞նչ անեմ (հոգի՛ ջան) մոլորուած եմ ևս:

Մոլորուած եմ ևս օտար աշխարհում,  
 Հաւատն էլ օտար (հոգի՛ ջան) օտար և լեզուն,

Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,  
Հայո՛ց աղջիկներ (հոգի՛ ջան) դուք էք աննման:

Ձեր սէրն է միայն սըրտումըս պահած,  
Ձեր սիրով միայն (հոգի՛ ջան) ես եմ կենդանի,  
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշուած  
Օտարութեան մէջ (հոգի՛ ջան) դեռ կը պահպանի:

ԳԵՈՐԳ ՄԻՐՈՍԱՆԵԱՆՅԵ

ԱՐՇԱԼՈՅՍ

Վարդեր ու վարդեր,  
Թերթ ի թերթ փըթթեր,  
Ի կապոյտ եթեր,  
Զիւնափայլ ամպեր,  
Քայլերուդ առջիւ  
Սըփռելով թեթեւ,  
Քեզ բնութեան հետ,  
Յայտ ժամ հեզաւէտ՝  
Մընամ մեծալոյս,  
Ո՛վ քաղցր արշալոյս:

Ահա շող ի շող,  
Շուշանաց ի քող,  
Զիւր ոսկինըշոյլ  
Վարսեր հոյլ ի հոյլ,  
Ծուփ ի ծուփ ի սփիւռ,  
Թողլով ի զեփիւռ,  
Եւ մարգըրտայեռ  
Պարզելով թեւեր,  
Նազի արշալոյս,  
Երկնքի այն կոյս:

Ահա վառ ի վառ,  
Ճակատուն գոհար,  
Եւ բըրերն անուշ  
Քըթթելով քնքոյշ,  
Զերկին և զերկիր  
Գըրկէ սիրալիր,  
Ի ժպիտ գուարթ՝  
Ծաղկանց թոյր ի թոյր  
Հեշտից ցողէ բոյր:

Ահա սոյլ ի սոյլ  
Թըռչնեկացըն բոյլ  
Ճուռողեն ընդ բոյս,  
Ողջո՛յն արշալոյս.  
Ողջոյն որ զմուայլ  
Փոխարկես ի փայլ,  
Ու զախուր երկիր  
Գործես ցնծալիր.  
Ո՛հ, յ'էից ողջո՛յն,  
Արշալո՛յս, ողջո՛յն:

Քեզ ամէն ոք տայ  
Զիւր ձօն նախընծայ,  
Քեզ՝ ըզսրբագոյն,  
Քեզ՝ ըզփափկագոյն,  
Քեզ՝ ամպ, սիւք, վըտակ,  
Ծաղկունք և սոխակ,  
Ամենք տան քեզ գով,  
Հալին քո սիրով,  
Ո՛վ երկնային կոյս,  
Սիրուն արշալոյս:

Ո՛հ, դու որ այսպէս  
Մեր սիրտն զմայլես,  
Մեր բիրերն աղօտ  
Մի՛ թողուր կարօտ,  
Երբ գերեզմանին  
Յաղջամուղջ փակուին,  
Այլ զանուշ քո լոյս  
Եւ աչացս ոգւոյս  
Շողշողեա ի յոյս,  
Կուսան Արշալոյս:

Խ. ՆԱՐ-ՊԵՅ

ՕՂՆ Է ԶՈՎ, ԳԻՇԵՐՆ Է ԱՂՈՒՈՐ

Tempo di barcarole

Օղն է զով գիշերն է աղուոր Աստղիկն ա-նուշ կը պըլպըլ-  
 լայ. Ալեաց վերայ նաւակ մը մեղմօրօր նա-զն-լա-  
 ծեմ կը սուրայ Թիա-վա-րն-ցէք խոր լուսեան մեջ  
 իսա-նե-ցէք վառ դառն ել-ւ-եջ  
 զը-արթաղ-խոյժ նաւաս-տիք, ալ-եաց մըր-մուն-ջին գող-տրիկ:

Օղն է զով, գիշերն է աղուոր,	Կապոյտն անուշ կը պըսպըղայ,
Աստղիկն անուշ կը պըլպըլայ,	Ծափն ու ալիք հազեր են ժպիտ,
Ալեաց վերայ նաւակ մը մեղմօրօր,	Լուսոյ անձրեւ կը տեղայ:
Նազելածեմ կը սուրայ:	Թիավարեցե՛ք... եւայլն:
Թիավարեցե՛ք խոր լուսեան մեջ,	Լուռ ու մունջ բնութիւն
Զուարթ աշխոյժ նաւասիք,	երազուն
Խառնեցե՛ք վառ դառն ելեւեջ,	Մըշիկ մըշիկ կը նընջէ,
Ալեաց մրմունջին գողտրիկ:	Աստուծոյ աչքն է միմիայն
Լուսնկայ գիշերն է անուշ,	արթուն,
	Բնութեան վերայ կը հըսկէ:
	Թիավարեցե՛ք... եւայլն:

Մ Ա Յ Ի Ս

Ճամբայ տուէք սար ու դաշտեր,	Նա Մայիսն է ցօղստ, շաղոտ,
Ճամբայ բացէք էն հիւրին,	Ամիսներից սիրելին:
Նա բերում է ձագեր, թիթեռ,	Ճամբայ տուէք սար ու դաշտեր,
Նախշուն օրեր մեր երկրին:	Ճամբայ բացէք էն հիւրին,
Ճամբայ բացէք ծառեր ու խոտ,	Նա բերում է ձագեր, թիթեռ,
Մեր անուշիկ էդ հիւրին,	Նախշուն օրեր մեր երկրին:

### ՂԱՐԻՊ ՄՇԵՑՈՒՆ

Ղարիպ աղբէր, արի՛ մեր տուն,  
Բուք բորանին ո՞ւր կ'երթաս,  
Հերի՛ք այդքան թափառելով,  
Սեւ դարդերը քամուն տաս:

Անտուն աղբէր, արի՛ մեր տուն,  
էս էլ Հայի օջախ է,  
Իմ պաղ ջուրըս, սեւ-չոր հացըս,  
Քեզ պէս աղբօր հալալ է:

Մշա՛կ աղբէր, արի՛ մեր տուն,  
Դարդ ու ցաւըդ ինձ պատմէ,  
Լաց-լացի տանք էս մեծ տօնին,  
Սիրաւըս լացի կարօտ է:




ՇՈՒՇ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ


ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

### ՈՂԲ ՍԻՐՈՅ

Andante



Ար-շա-լոյ-սը նո-րէն բաց-լաւ, Անդ ու զամ-դէն թօն կու-գայ:



Ալ ձին եկաւ և անտէր եկաւ. Ախ իմ եարը տուն չեկաւ

Արշալոյսը նորէն բացլաւ,  
Ամպ ու զամպէն թօն կուգայ,  
Ալ ձին եկաւ, անտէր եկաւ,  
Ա՛խ իմ եարը տուն չեկաւ:

Լոյսը բացլաւ, դուռը բացլաւ,  
Ալ ձին քըրտնած ներս ինկաւ,  
Սիրուն կրճքին վէրք ստացած,  
Արիւնթաթախ ներս ինկաւ:

Ա՛խ, սիրուն ձի, դու ինձ ասա՛,  
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,  
Ո՞ր ձորի մէջ, ո՞ր քարի տակ,  
Անտէր թողիր իմ եարը:

Ամպեր եկան, մութը պատեց,  
Մինակ նստած կուլամ ես,  
Սիրելիիս, կորած եարիս,  
Սուգ ու շիւան կ'անեմ ես:

### ՊԼՊՈՒԼԻՆ ԵՐԳԸ

Աստղով բանուած գիշերին մէջ  
 Պլպուլն աղօթքն իր երգէ,  
 Եւ սարերուն ու ձորերուն  
 Մութ գիրերը կը հեգէ:

Երգէ՛ զուարթ  
 Ծաղիկ ու վարդ,  
 Ով դու սոխակ  
 Գիշերի զարդ:

Քու երգիդ մէջ ամբողջ հոգիս,  
 Համակ քու սէրդ կը թրթռայ,  
 Մութն երբ իջնէ իր խաւարով,  
 Քու փշահիւս թառիդ վրայ,

Քու երգդ հնչուն,  
 Երգող թռչուն,  
 Սրտիս կուտայ  
 Երկնաաննչ չուն:

### ԻՆՁ ՄԻ ԽՆԴՐԻ

Ինձ մի՛ խնդրի, ես չեմ երգի,  
 Տխրութիւնս է ահագին,  
 Աղեկտուր նորա ձայնից  
 Կը խորտակւի քո հոգին:

Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ  
 Երգելու չեմ ես երբեք:

Ես երգեցի սարի վերայ,  
 Ուր չորացան խոտ ու վարդ,  
 Անապատ է այնտեղ հիմա,  
 Սեւ, ամայի անապատ:

Հառաչանքից այրւած սրտում  
 Էլ ծաղիկ չի դալարում:

Բոյր ու գեփիւռ ես կ'ուզէի,  
 Եւ արշալոյս ոսկեվառ,  
 Որ մի պայծառ երգ հիւսէի  
 Ու երգէի քեզ համար:

Բայց իմ սիրտը բռնած են դեռ  
 Հուր հառաչանք, սեւ գիշեր:

Երգըդ հնչէ հաւատքի պէս,  
 Միշտ սփոփանք, յոյս, դորով,  
 Երբ իմաչքերս փակուին յուշիկ,  
 Անուշ ձայնիդ օրօրով,

Զով գիշերին  
 Մէջ դու լռին  
 Երգէ թրթռուն  
 Քու մեղեդին:

Իմ յոյգերուս, զգացմանցըս  
 Մխիթարիկն ես միայն,  
 Քու հրճուանքովդ, երբ երկնքի  
 Հատնին յոյսերն ընդունայն,

Ըստուերներուն  
 Մէջ երերուն,  
 Պլպուլ, հոգի՛ս  
 Նըւագես դուն:

### ՅԵՏ ՄԱՀՈՒ

Եթէ մի օր, անո՛ւշ ընկեր,  
 Գաս այցելու իմ շիրմին  
 Ու նորարոյս վառ ծաղիկներ  
 Տեսնես փրուած չորս կողմին,


Դու չը կարծես թէ հասարակ  
 Ծաղիկներ են ոտքիդ տակ,  
 Կամ գարունն է նրանց բերել,  
 Իմ նոր տունը զարդարել:

Նրանք չերգած իմ երգերն են,  
 Որ սրտումըս ես տարայ,  
 Նրանք սիրոյ այն խօսքերն են,  
 Որ դեռ չասած ես մեռայ:


Նրանք իմ ջերմ համբոյրներն են,  
 Այն աշխարհքից ուղարկուած,  
 Որի ձամբէն քս առջեւը,  
 Գերեզմանով է փակուած:

Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ


Andante



Մի բուն մա նու զակ, ինչո՞ւ ես թող մե՛լ կա-դայտ աչք։



ներդ ինչո՞ւ ես փա կել։ քեզ ո՞վ նե զա ցրեց, ո՞վ



քեզ աչ-դա-նեց, բու ա-նուղ եր-տով ո՞վ չի ըզ-մայլ-ւեց։

— Միրո՛ւն մանուշակ, ինչո՞ւ ես թողմ ել,  
 կապոյտ աչիկներդ ինչո՞ւ ես փակել,  
 Քեզ ս՞վ նեղացրեց, ս՞վ քեզ աշպանեց,  
 Քո անուշ հոտով ս՞վ չի ըզմայլուեց։

= Միրո՛ւն մանուկներ, դուք ինձ սիրեցիք,  
 իմ ծաղիկներից փնջեր կապեցիք,  
 Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից,  
 ինձ չազատեցիք, չպահպանեցիք։

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

Մ Ա Կ Ո Յ Կ Ը

Մակոյկն է խրրած  
 Օրօրուն ափին,  
 Անձնատուր եղած  
 իր ամուր կապին։

Առազատար թոյլ  
 կախուած մեղկօրէն,  
 կը դողայ անգուլ  
 Հովի սարսուռէն։

Թիերն ալ յոգնած  
 Դադարէն երկար,  
 Բաց ծովուն դիմաց  
 կը նային իրար։

Ու դժգոհ, խոհուն,  
 Թեք կայմը ամուր,  
 կը դիտէ հեռուն  
 կարօտով տխուր։

Ու կ'ըմբռնեմ ես, —  
 նաւն ալ կազմ անան,  
 Անձկոտ սրախս պէս,  
 Բաց ծով կը ցանկայ։

կ'ուզէ սասակակոծ  
 կեանք ու փոթորիկ,  
 Մինչ ափին անգործ՝  
 կ'երերայ լըռիկ։

Լ. ՇԱՆԹ



Հէ՛՛ — հէ՛՛ — հէ՛՛ — հէ՛՛, Զաւիթրան իջ փ-րե-ւին, Կոու-ւր ան-յաւ, —

Հէ՛՛ — հէ՛՛ — հէ՛՛ — հէ՛՛, Զաւիթրան իջ փ-րե-ւին, Կոու-ւր ան-յաւ, —

Կուպե ցի մի Զաւիթրան, Զեւիթրան էր ձայն, — Հէ՛՛ հէ՛՛ հէ՛՛ հէ՛՛ —

Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Դիմի լուսա-յաւ, Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Դիմի լուսա-յաւ —

Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Դիմի լուսա-յաւ, Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Դիմի լուսա-յաւ —

Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Աստուծոյ մի անն կը ծո-րեն —

Աստուծոյ մի անն կը ծո-րեն, Աստուծոյ մի անն կը ծո-րեն, հի՛յ զան —

Հուսնձք կը ժողովեմ մանգաղով,  
 — Հուսնակը եարս է,  
 Ակօս ակօս ման գալով,  
 — Սիրածըս հարս է:  
 Գըլխերաց եմ ու բոպիկ,  
 — Անուշ են հովեր,  
 Արտերուն մէջ թափառիկ,  
 — Մազերն են ծովեր:

Յորեն, կակաչ, կարօտով,  
 — կաքաւը կուլայ,  
 կապեցի մէկ նարօտով,  
 — Չեւքերն են հինայ:  
 Հասկերուն մէջ վերեւէն  
 — Ասուպը անցաւ,  
 Աստղեր միւռոն կը ծորեն,  
 — Դէմքը լուսացաւ:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

### ՄԱՆՈՒՇԱԿԻՆ

Ո՛հ մի սղբալ դու թառամած  
 եւ դալկացած մանուշակ,  
 Որ քու անուշ բոյրն առած,  
 Քեզ ձգեցին ստքի տակ:

Աւելի պարզ էր շողշողում  
 Մեր դարունը մանկութեան,  
 Բայց մեզ համար այս աշխարհում  
 Նա չքացաւ յաւիտեան...

ԱՇՈՒՂԻ ԶՐՈՅՑԸ

Հէ՛յ պարոններ, ազանջ արէք  
 Թափառական աշուղին,  
 Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ  
 տըղերք,  
 Լաւ ուշ գրէք իմ խաղին:

Մենք ամենքըս հիւր ենք  
 կեանքում  
 Մեր ծնընդեան փուշ օրից,  
 Հերթով գալիս,անց ենք կենում  
 էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խնդում,  
 Գեղեցկութիւն, գանձ ու գահ,  
 Մահը մերն է, մենք մահինը,  
 Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛ւ իմացէք,  
 Որ խօսւում է գարէ գար,

ՀԱՍՈՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արեւ,  
 Տաք և պայծառ է օրը,  
 Դէ՛, քաշեցէ՛ք սիրուն եզներ,  
 Յառա՛ջ տարէք արօրը:

Վարը վարենք, ազօս փորենք,  
 Խո՛ր ազօսներ հողի մէջ,  
 Սերմը ցանենք, որ հունձ հնձենք  
 Յորեան դիզենք կալի մէջ:

Ուտելու միշտ պաշար ունենք,  
 Ուրա՛խ կ'անցնի մեր օրը,  
 Կը գայ ձմեռ — մենք վախ չու-  
 նենք —

Լի և կուշտ է մեր փորը:

Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,  
 Շուտով վարենք արտերը,  
 Թո՛ղ չասեն մեր գրացիքը,  
 Ծոյլ են Հասոյի եզները:

Երնէ՛կ նըրան, որ իր գործով  
 Կ'ապրի անվերջ, անգագար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
 Անէ՛ծք նըրա չար գործքին,  
 Որդիդ լինի, թէ հէր ու մէր,  
 Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում,  
 Որ ժըպտում է մեր սըրտին,  
 Ո՞վ չի սիրում, թէ կուզ դուշման,  
 Լաւ արարքը լաւ մարդին:

Անց ենք կենում... միայն անմահ  
 Գործն է խօսւում լաւ ու վատ,  
 Ա՛խ, երանի՛ ո՛վ որ կը գայ  
 Ու կը գընայ անարատ:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԼԱՅ

Քիչ կը մնայ սիրտըս պատուի,  
 Խեղքըս թուի, ո՛վ ախպէր,  
 Գլուխս առնեմ սարերն ընկնեմ,  
 Գոռամ, պոռամ, ջա՛ն տխպէր:

Թէ որ գարգըս կը հասկընաս,  
 Չէն տուր սաղիդ, ախպէր ջան,  
 էրուած սիրտըս սաղիդ հեռ լայ,  
 Դարդըս հալի՛ հովանամ:

Տունս ու օճախս էն ի՛նչ թողի,  
 Քամու բերան ընկայ ևս,  
 Քանի՛ արիւն արցունք թափի՛  
 Գնաց գարունն իմ սրտէս:

Չարկ թելերին, անոյշ ախպէր,  
 Երգերն անոյշ թող խօսան,  
 Ա՛խ վաղուց է որ չեմ լացեր  
 էսպէս սրտանց, ախպէ՛ր ջան,

**Ծ Ո Վ Ը**

Allegro

Եղանակ՝ Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑԻ

Մո-վը յոգ նած փրբ փուր բերնին, ա-փին ին-կած կը հե-ւայ  
 Ժէո ա-փե-րից մէ-գը մը-թին ծո-փի վե-րայ կը շո-ղայ

Վէր-քը սըր-տին ան քուն ան սուն, կեանքից հե-ռու եմ փա-խել, կ'ու-

զեմ, աղ-րիչ վայ-րի ա-փում, աղ-րիչ մե-նակ ան ըն-կեր

Մովը յոգնած, փրբփուր բերնին,  
 Ափին ընկած կը հեւայ,  
 Ժէո ափերից մէգը մըթին  
 Մովի վերայ կը սողայ:

Վէրքը սըրտիս անքուն-անտուն,  
 կեանքից հեռու եմ փախեր,  
 կ'ուզեմ ապրեմ վայրի ափում,  
 Ապրեմ մենակ, անընկեր:

Աստղունք մէկ-մէկ ելան բազման  
 Երկնի փերուզ աթոռքում,  
 Աստղերի պէս երգերս ելան  
 Հոգուս մըռայլ խորքերում:

Սըրտիս լարերն արտում-արտունջ  
 կեանքըս թօշնած երգեցին,  
 Հովը հեւաց մունջ ու մըրմունջ,  
 Աստղունք վըրաս լուռ լացին:

Ամպերն ընկան ծովի վըրէն  
 Հազար բերնով ջուր խըմին,  
 Թըռաւ որորն խոլոր ծովէն,  
 Մըլաց, նըստաւ թուխ քարփին:

— Ես է՛լ քեզ պէս, մենիկ որո՛ր,  
 Աչերս՝ արցունք ու տըրտում,  
 կը թափառիմ ոլո՛ր-մ ոլո՛ր,  
 կեանքի հեռո՛ւ ափերում...

### Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանի'ր, մանի'ր, իմ ճախարակ,  
 Մանի'ր սպիտակ մալանչներ,  
 Մանի'ր թելեր հաստ ու բարակ,  
 Որ ես հոգամ իմ ցաւեր:


Ձէթ եմ ածել աղանջներըդ,  
 Նոր շինել եմ շրտըւիկ,  
 Դէ'հ, շուտ շարժիր լայն թևերըդ,  
 Ոստեր շինիր սըրուլիկ:

Մանի'ր, մանի'ր, իմ ճախարակ,  
 Լիսեռնիկըդ պտըտիր,  
 Մանի'ր թելեր հաստ ու բարակ,  
 Իլկիդ վըրայ փաթաթիր:

Տիգրանիկըս գուլպայ չունի,  
 Հանդ է գնում ոտաբաց,  
 Գաբրիէլըս չուխա չունի,  
 Միշտ անում է սուգ ու լաց:

Մանի'ր, մանի'ր, իմ ճախարակ,  
 Մանի'ր սպիտակ փաթիլներ,  
 Մանի'ր թելեր հաստ ու բարակ,  
 Որ ես հոգամ իմ ցաւեր:

Չըւան չունինք, չաթու չունինք,  
 Ո՛չ սամոտէն, ո՛չ պարան,  
 Այսպէս աղքատ դեռ եղած չինք,  
 Կըւըրեւի է ամէն բան:



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

Դեռ հարս էի որ գործեցի  
 Քանի կապերս խալիչա,  
 Բայց դրանցից շուտ զրկուեցի,  
 Հիմա չունիմ մի քէչա:  
 Կարժիր օրըս երբ սեւացաւ,  
 Եւ պարտք մընաց թէեւ քիչ,  
 Պարտատիրոջ սիրան ալ սեցաւ,  
 Եկաւ տարաւ ամէն ինչ:  
 Մանի'ր, մանի'ր, իմ ճախարակ,  
 Մանի'ր սպիտակ քուլաներ,  
 Մանի'ր թելեր հաստ ու բարակ,  
 Որ ես հոգամ իմ ցաւեր:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

### ՈՎ ԿԵԱՆՔ ՈՒՆԻ

Ով կեանք ունի, դարդ էլ ունի,  
 Դարդին դարձան եար էլ ունի,  
 Մենակ ես եմ անբախտ ծընեւի,  
 Սիրաըս դարդոտ ու ճար չունի:  
 Ով սէր ունի, եար էլ ունի,  
 Նազան սըրտում տեղ էլ ունի,

Մենակ ես եմ սեւ օր ծընեւի,  
 Սէրըս կուլայ ու բոյն չունի:  
 Ծէգը առաւ դար ու դուրան,  
 — Ազիզ մէրի'կ, դուռը բաց,  
 Քու որդին եմ, խոցեած կուզամ,  
 Անո՛ւշ մէրիկ, գիրկըդ բա՛ց...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՎԵՐՅԻՇՈՒՄ

Allegro

Աղ ու որ օ-րե՛ր իմ մանկու-թեան, Ձը արթ դա-հեր կեանքիս գարնան,  
 Ե-րազ-նե-րու որես վա-ղանցիկ, Որ-քան ալ շուտ անցաք գացիք.  
 Ա-մէն ան-գամ որ յի-շն՝ չնզ, Բաղ ցրիկ օ րե՛ր  
 հա-ռաչ մ'իս-կոյն թըռ-չի կուրծ-քէս,  
 իմ եր-ջա-նիկ, որ-քան ալ շուտ ան-ցաք գա-ցիք

Աղու որ օրեր, իմ մանկութեան,  
 Ձը արթ պահեր կեանքիս գար-  
 նան,  
 Երազներու պէս վաղանցիկ,  
 Որքան ալ շուտ անցաք գացիք.  
 Ամէն անգամ որ յիշեմ ձեզ,  
 Հառաչ մ'իսկոյն թըռչի կուրծ-  
 քէս,  
 Քաղցրիկ օրեր իմ երջանիկ,  
 Որքան ալ շուտ անցաք գացիք:  
 Կապուտադեղ երկնից վրայ  
 Ասուպ մ'անա կը պլպլայ.  
 Բայց պահ մ'է լոկ, լոյսն այդ  
 չքնաղ

Կը մարմըրի մէկէն, աւա՛ղ.  
 Այդ ասուպին պէս սիրունիկ,  
 Տղաք աղու որ կեանք մը ունիք,  
 Բայց այդ օրեր ժպտուն, թէեւ  
 Գեղեցիկ, բայց չեն յարատեւ:  
 Օրեր ալ կան ապագային,  
 Հակապատկեր ձերայս կեանքին,  
 Ուր վարդի տեղ փուշեր միայն  
 Պիտի գտնէք դէմ յանդիման:  
 Այն ատեն երբ ամէն դիէն,  
 Հոգեր զձեզ շրջապատեն,  
 Ձեր մանկութեան օրերն անուշ  
 Պիտի յիշէք, ո՛հ, սակայն ուշ...

Գ Ա Ր Ո Ւ Ն

Դարնան շաղով, անուշ տաղով,  
 Ծիծառն հկաւ կարապետ,  
 Տողաշաղախ վարդը չքնաղ,  
 Տե՛ս, կը ժպտի անոր հետ:  
 Դաշտ ու արօտ վաղուց կարօտ  
 Ձերմ արեւին կենսատու,

Ալ ու ալուան կանաչ հազան,  
 Բարեւ տուին իրարու:  
 Ձոր ու անտառ, հովիտ ու սար,  
 Գոյն գոյն ծաղկով զարդարուն,  
 Կ'երգեն ուրախ երգեր ու տաղ,  
 —Ա՛խ, ինչ սիրուն է գարուն:

## ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

Ձիւներն հատ-հատ երկինքէն վար կը թափին,  
 Բայց երբ կ'իջնեն, մեղմիւ կ'ասեն ընկերին.  
 Դո՛ւն ալ, ե՛ս ալ, թոյլ էակներ ջրի պէս,  
 Պիտի հալինք՝ թէ չմիանանք ամրապէս:

Մենք մեն-մինակ ի՞նչ կրնանք, մենք առանձին՝ ոչինչ ենք,  
 Բայց երբ մէկ ենք, միասին, լեռն ու դաշտը կը ծածկենք:

Անձրեւ կուգայ, ջրի փոքրիկ կաթիլներ,  
 Մէկտեղ կ'իջնեն և կը հանեն մեծ ձայներ,  
 Կ'ասեն՝ ի՞նչն է աւելի թոյլ քան թէ ջուր,  
 Բայց միութեան չի դիմանար նոյնիսկ հուր:

Մենք մեն-մինակ ի՞նչ կրնանք, մենք առանձին ոչինչ ենք:  
 Բայց երբ մէկ ենք, միասին, մեծ մեծ գետեր կը կազմենք:

Շատ տկար են ծիծեռնակներ, բայց խմբով,  
 կը ճամբորդեն գարնան ատեն ապահով,  
 Երբ գիշակեր թռչուն տեսնեն, խմբովին,  
 Մեծ աղմուկով կը փախցնեն թշնամին:

Այդ աղմուկը մեղի կ'ասէ, մենք մինակ ենք, տկար ենք,  
 Բայց երբ մէկ ենք, միասին, մենք արծիւն ալ կը վանենք:

Բնականէն տրուած է այս մեծ օրէնք,  
 Որ տկարներ, թէեւ չունին ոյժ և զէնք,  
 Միանալով կը զօրանան, կը կռուին,  
 Եւ միութեան չի դիմանար թշնամին:

Ու կը կրկնեն՝ ձիւն ու անձրեւ, տերեւ, թռչուն,  
 «Միացէ՛ք, միութիւնն է զօրութիւն»:

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

## ԱՅ ՍԵՒ ԱՄՊԵՐ

Ա՛յ սև ամպեր, վա՛յ սև ամպեր,  
 Սիրտըս պատեց սեւ ու՞ մութ,  
 Եարաբ ի՞նչ է քո գուք ինձ բերում,  
 Գարնան անձրե՞, թէ կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանկի,  
 Արիւն թափել ու քրտինք,  
 Ողջ սուրբերին մոմ հմ վառել,  
 Աղօթք արել, որ երկինք

Արտիս նայի, տունս խնայի,  
 Կեա՛նք տայ, օ՛ր տայ իմ հացին,  
 վա՛յ բալէքիս... Աստուած չանի,  
 Թէ որ անհաց մնացին...

Ա՛յ սև ամպեր, ի՞նչ է քո գոռում,  
 Սիրտըս պատեց սև ու՞ մութ...  
 Եարաբ ի՞նչ է քո արտիս բերում,  
 Գարնան անձրե՞ւ թէ կարկուտ:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Յ Ա Յ Գ Ա Յ Ի Ն

Սրբորուն

Եղանակ՝ Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅԻ

Գի-շերն ուշ է, հուփն ա-նուշ է Աս-րե-րուն, Թա-խիծն հո-վին՝ կը  
 հե-ծէ վին՝ մը, հե-ռուն: Լուս-նա-կին տակ, Լիճն ըս-ողի-տակ կե-  
 րա-զէ. Գա-լարն ա-փին՝, Բուր նան, նը-թին մե-տարս է

Գիշերն ուշ է,  
 Հուփն անուշ է  
 Սարերուն,  
 Թախիծն հովին՝  
 կը հեծէ վին  
 Մը, հեռուն:  
 Լուսնակին տակ,  
 Լիճն սպիտակ  
 կ'երազէ...  
 Դալարն ափին՝  
 Բուրեան, նրբին  
 Մետա՛քս է...

Մի՛ լար, իմ սիրտ,  
 Ժպիտն է շիթ  
 Արիւնի...  
 -Ո՛վ ծիլ թողմած,  
 Ննջէ առանց  
 Գարունի...  
 Քար մը՝ սընար,  
 Ծառ մը՝ քընար  
 Ընտրեցի...  
 Սոսափն՝ օրօր,  
 Սարսափն՝ անդօրր  
 է ինծի...

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԲԼԲՈՒԼԻՆ

Արի՛ բլբուլ, մէկտեղ նստենք,  
 Ձէն-ձէնի տանք ու երգենք,  
 էս օրուանից դառնանք աղբէր,  
 իրար խառնենք մեր ցաւեր:  
 Անցա՛ւ դարուն, աշուն կուգայ,  
 Ծառ հեռու չէ և ձմեռ,  
 Լա՛ց, աղբէր ջան, էլ վարդ չկայ,  
 Թուփը մնաց կիսամեռ:  
 Երգե՛նք աղբէր, ցա՛ւը երգենք,  
 Դու՛ քո մեռած ալ վարդի,  
 Երգե՛նք աղբէր, ցա՛ւը երգենք,

Ես՝ իմ աւեր վաթանի...  
 Անցա՛ւ դարուն, արնոտ դարուն,  
 Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ,  
 Ա՛խ, աղբէրըս մնաց անտուն,  
 Քոյրըս՝ քաղցից կիսամեռ...  
 Արի՛, բլբուլ, ցաւը երգենք,  
 Վարդի, աւեր վաթանի,  
 Արի՛, աղբէր, իրար խառնենք  
 Մըմուռ ցաւը մեր սրտի...

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

## ԱՅԾԵԱՄԻՆ

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին,  
 Պարտում են քո խեղճ անձի ֆրասին,  
 Գամբռաներով, բարակներով միասին:  
 Փախիր, այժեա՛մ, փախիր, որսկանն է գալիս,  
 Չագուկներդ տխուր, լալիս են լալիս:


Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,  
 Կ'ուզէ ձեռքերը արիւնովդ լուայ,  
 Սղճալի քո աղաք սար ու ձոր կուլան:  
 Փախիր, այժեա՛մ, փախիր, որսկանն է գալիս,  
 Չագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Որսկանը գութ չունի, կ'անէ կրակը,  
 Կամ քեզի կը սպաննէ կամ քո զաւակը,  
 Ի գուր չ'անցնիր հրացանի գնդակը:  
 Փախիր, այժեա՛մ, փախիր, որսկանն է գալիս,  
 Չագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Չորեր մի մտներ, վտանգաւոր է,  
 Որսկանն ման կուգայ այնտեղ, սովոր է,  
 Քարայրից խփելով քեզ կը գլորէ:  
 Փախիր, այժեա՛մ, փախիր, որսկանն է գալիս,  
 Չագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Դաշտումը ման մի գար, թէ մտածես լաւ,  
 Քեզ կը վիրաւորեն կը ստանաս մեծ ցաւ,  
 Դուրս մի ելլեր դու խիտ անտառից բնաւ:  
 Փախիր, այժեա՛մ, փախիր, որսկանն է գալիս,  
 Չագուկներդ տխուր, լալիս են լալիս:

ԱՇՈՒՂ ԶԻԿԱՆԻ



Լ Ճ Ա Կ Ը

Andante

ին-չո՞ւ, աղ-ղած ես լը-ծակ ու չեն խայտար քո ալ-եակք. մի-  
թէ հայլ-ւոյր մեզ անչ-կաւ գե-ղու-հի՞ մը նա-յն-ցաւ :

ինչո՞ւ ապշած ես, լըծակ,  
Ու չեն խայտար քու ալեակք,  
Միթէ հայլւոյր մէջ, անձկաւ,  
Գեղուհի՞ մը նայեցաւ :


Եւ կամ միթէ կը զմայլի՞ն  
Ալեակքդ երկնի կապոյտին  
Եւ այն ամպոց լուսափթիթ,  
Որք նըմանին փրփուրիդ :

Մեղամաղձոտ լըծակ իմ,  
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,  
Սիրեմ քեզի պէս ես ալ  
Գրաւիլ, լըռել ու խոկալ :

Ո՛րքան ունիս դու ալի,  
Ճակատս ա՛յնքան խոկ ունի,  
Ո՛րքան ունիս դու փրփուր՝  
Սիրտս ա՛յնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գողդ ալ թափին  
Բոյլքն աստեղաց երկնքին,  
Նըմանիլ չես կրնար դուն  
Հողւոյս, որ է բո՛ց անհուն :

Հող աստղերը չեն մեռնիր,  
Ծաղիկներն հող չեն թոռմիր,  
Ամպերը չեն թրջիր հող,  
Երբ խաղաղ էք դուք և օդ :



ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ

Լըծակ, դու ես թագուհիս,  
Զի թ՛հովէ մ՛ալ խորշոմիս,  
Դարձեալ խորքիդ մէջ խրոսով,  
Զիս կը պահես դողդղալով :

Շատերը զիս մերժեցին,  
«Քընար մ՛ունի սոսկ» ըսին,  
Մին—«դողդոջ է, գոյն չունի»,  
Միւսն ալ ըսաւ—«կը մեռնի» :

Ո՛չ ոք ըսաւ — «հէ՛ք տըղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,  
Թերեւս ըլլայ գեղանի,  
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:  
Ո՛չ ոք ըսաւ — «սա տըղին  
Պատուենք սիրտը տրտմագին,

Նայինք ինչե՛ր գըրուած կան»...  
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:  
~~.....~~  
Հոն կայ մոխի՛ր ... յիշատակ...  
Ալեակքդ յուզուի՛ն՝ թող լըճակ,  
Զի քու խորքիդ մէջ անձկաւ  
Յուսահատ մը նայեցաւ...  
Պ. ԴՈՒՐԵԱՆ

### Ի Մ Մ Ա Ն Ը

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ  
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,  
Շողիանան ցաւքս ու հողիս,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ սընարըս՝ իմ տիպար  
Մոմ մը վըտիտ ու մահադէմ,  
Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ ճակտովս արտօսրագօծ  
Զիս պատանքի մէջ ցուրտ, զերթ  
վէմ,  
Փաթթեն, դընեն սև դազաղը,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ հնչէ տըխուր կոչնակ,  
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,

Դազազս առնէ իր յամըր քայլ,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:  
Եթէ մարդիկն այն՝ մահերգակ,  
Որք սեւ ունին և խստոռ դէմ,  
Համասըփռեն խուսկ և աղօթք,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:  
Եթ՛ յարդարեն՝ իմ հողակոյտ,  
Եւ հեծեծմամբ ու սըգալէն  
Իմ սիրելիքը բաժնուին,  
Գիտցէ՛ք որ միշտ կենդանի եմ:  
Իսկ աննշան՝ եթէ՞ մընայ  
Երկրի՛ մէկ խորշն՝ հողակոյտն իմ,  
Եւ՝ յիշատակս ալ թառամի՛,  
Ա՛հ, ա՛յն՝ առեն՝ ես՝ կը՛ մեռնիմ...  
Պ. ԴՈՒՐԵԱՆ



ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

*Moderato*

Ո՞վ ծիծեռնակ, վարանած թռչունիկ, ինչ արածդ - մա-վին, ո՞վ ծիծեռնակ, վարանած թռչ-  
 նիկ, ինչ արածդ մինչև չափիս չափիս կեցուցա - նակես մօտիկ իմ բանտին: Ե՛ր-թի՛ վա-րու-ժա-  
 նոց սիրուն, վարու ժառնոց սիրուն, վարու-ժառնոց սիրուն հոս ժայռիկ թողուց պե՛տե՛ս  
 դունամերիկեաց կրկնեն - ժես, ո՞ր լայ ու-րե-մի՛ն ին-ժի պե - ս, ին - ժի պե - ս:

Ո՞վ ծիծեռնակ, վարանած թռչունիկ, ինչ արամագին  
 Զայնիւ կ'եղանակես մօտն իմ բանտին.

Միթէ վարուժանըդ սիրուն  
 Հոս միայնա՞կ թողուց զքեզ,  
 Ու դուն անմխիթար կը հեծեծես.  
 — Ո՛հ, լա՛ց ուրեմն ինձի պէս:

Բայց երանի՛ քեզ, բիւր երանի, կրնաս թռչիլ,  
 Թեթեւ թեւոցդ ի թափ ընդ սար, ընդ ձոր.  
 Իսկ հոս արեւուն նշոյլն ազօտ  
 Մութ բանտիս է անթափանց,  
 Եւ ոչ մեղմ հովիկ մ'ի շունչ գովագին  
 Տանի ձայնն իմ սիրելիաց:

Գէթ դուն գնա՛ գտնել սիրելիս, սլացիր արագ,  
 Սակայն դարձիր նորէն մօտ չուառիս,  
 Եւ հոս հանգչէ այս իրիկուն,  
 Լե՛ր դու վկայ տխուր մահուանս  
 Եւ շիրմիս վրայ ճըլճըլալով՝  
 Գէթ դու յիշէ՛ դիս անմոռաց:



Ե Ր Ա Ջ

Դաշնաւորեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Երանգուն 60

Ես լըսեցի մի անուշ ձայն, իմ ծեփացած մօր մօտ էր--

Ես լըսեցի մի անուշ ձայն, իմ ծեփացած մօր մօտ էր--

Ես լըսեցի մի անուշ ձայն

Փայլեց նշոյլ ուրախութեան, Բայց ափսոս որ երազ էր-- :

Փայլեց նշոյլ ուրախութեան, Բայց ափսոս, որ երազ էր-- :

Փայլեց նշոյլ ուրախութեան Բայց ափսոս, որ երազ էր-- :

Ես լսեցի մի անուշ ձայն,  
 իմ ծեփացած մօր մօտ էր,  
 Փայլեց նշոյլ ուրախութեան,  
 Բայց ափսոս որ երազ էր:

Կարկազանոս աղբիւրն այնտեղ  
 Թաւալում էր մարգարիտ,  
 Նա յտտակ էր որպէս բիւրեղ,  
 Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի,  
 Յիշեց մանկութեանս օրեր,  
 Մօրըս համբոյրն ևս զգացի,  
 Ախ, ափսոս որ երազ էր:

Կրծքին սեղմեց կարօտագին,  
 Աչքերս սրբեց — շատ թաց էր,  
 Բայց արտասուքս զնում էին, —  
 Ախ այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. ՇԱՀԱԳԻՉ



ՔՈՒՆ ԵՂԻՐ ԲԱԼԱՍ

Andante

Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Քուն և զիր. Բա լաս աչ-երդ խուփ ա-րա, նախ ջուն ա-չն-րուդ  
 Քուն թող գայ վը-րայ--- նախ-ջուն ա-չն-րուդ Քուն թող գայ վը-րայ:  
 O-րոր իմ Բա-լաս O-րոր ու նա-նի, իմ ա-նու-ղի-կիս  
 քու-նը կը տա-նի, իմ ա-նու-ղի-կիս քու-նը կը տա-նի.

Քուն հղիք պալաս, աչերդ խուփ արա',  
 նախջուն աչերուդ քուն թող գայ վըրայ:

Oրոր իմ պալաս, օրոր ու նանի,  
 իմ անուցիկիս քունը կը տանի:

Ոսկի խաչ վըղիդ՝ քեզի պահապան,  
 նարօտ կապեր է ծարէն տէրպապան:

Oրոր իմ պալաս, հւայլն:

Մազի հիւուններ կախիլ կմ կս ալ,  
 նազար չիս առնուլ, քուն հղի'ր, մի լար:

Oրոր իմ պալաս, հւայլն:

Աս քանի՞ մօրրդ անքուն աչքովը  
 Անցնիլ է օրեր օրոցքիդ քովը:

Oրոր իմ պալաս, հւայլն:

Օրոցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,  
 Մըղկըտան ծանով սիրտըս չի մաշիս:

Oրոր իմ պալաս, հւայլն:

Դուն ալ քուն հղիք, ինձի ալ քուն տո'ւր,  
 Սուրբ Աստուածամայր, անուշիս քուն տո'ւր:

Oրոր իմ պալաս, հւայլն:

Վ Ա Ր Դ Ը

Երաժշտութիւն՝ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ

*Moderato assai*

Canto

Piano

*p*

Փոր-րկ տը-ղան մի վարդ տն-սաւ... Տն սաւ մի

*ten*

վարդ... դաշ-տի մի-ջին, վար-դը տն-սաւ

ու-րա-խա-ցաւ... Աօ-տիկ վա-զնց... սի-րուն վար-

*pp subito*

Handwritten musical notation for the first system, featuring a vocal line and piano accompaniment. The key signature has three sharps (F#, C#, G#) and the time signature is 4/4. The lyrics are: *դին Ար-րուն վար-դին կարմիր վար-դին կարմիր*

Handwritten musical notation for the second system. The lyrics are: *վար-դին դաշտի մի ջին Ար-րուն վար-*

Handwritten musical notation for the third system. The lyrics are: *դին կար-միր վար-դին կարմիր*

Handwritten musical notation for the fourth system. The lyrics are: *վար-դին դաշտի մի ջին.*

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,  
 Տեսաւ մի վարդ դաշտի միջին,  
 Վարդը տեսաւ, ուրախացաւ,  
 Մօտիկ վազեց՝ նայի վարդին,  
 Նայի վարդին, կարմիր վարդին,  
 կարմիր վարդը դաշտի միջին:  
 Տղան տասաւ.— Քեզ կը պոկեմ,  
 Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին.

Վարդն ասաւ. — Տե՛ս կը ծակեմ,  
 Որ չը մոռնաս փշոտ վարդին,  
 Փշոտ վարդին, կարմիր վարդին,  
 կարմիր վարդը դաշտի միջին:  
 Ու անհամբեր սղան պոկեց,  
 Թարգմ. Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Պոկեց վարդը դաշտի միջին.  
 Փռւշը նրա ձեռը ծակեց,  
 Բայց էլ չօգնեց քնքոյշ վարդին,  
 Քնքոյշ վարդին, կարմիր վար-  
 դին,  
 կարմիր վարդը դաշտի միջին:  
 ԿԵՕԹԷ

**ԶՈՒՐ ԵՍ ԳԱԼԻ, ԱՅ ԳԱՐՈՒՆ**

Քեզ սպասող չը մնաց,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն,  
 Գովքըդ ասող չը մնաց,  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Սև մութ պատեց աշխարհին,  
 Սար ու ձոր դարան արին,  
 Մեզ վայ բերեց էս սարին,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Բիւլբիւլըդ գայ՝ թող ձէն տայ,  
 էլ ո՞վ պիտի քեզ խնդայ,  
 էլ ո՞ր սիրտը կը թնդայ,  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Բիւլբիւլն էկաւ՝ վարդ չունի,  
 Ծաղկոցը կայ՝ գարդ չունի,

էն ո՞վ ա որ դարդ չունի,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Դու ես բերիր հաւքերին,  
 Ո՞նց տէր ըլնին բընբերին,  
 Սա՛ղ տեղ չկայ մեր երկրին,  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Աշուղի բերանը փակ,  
 Սաղ-քեամանչէն փակի տակ,  
 Սիրտն ա էրևում անկըրակ,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Քեզ սպասող չը մնաց,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն,  
 Գովքըդ ասող չը մնաց,  
 Զո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Յ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

**ՔՆՔՈՒՇ ՏԱՏՐՍԿԱ...**

Քնքո՛ւշ տատրակըս, դու անծանօթի,  
 Դու օտարի պէս մօտովըս անցար,  
 Ի՞նչ եղաւ քեզի, սր վառ կարօտի,  
 Ծով-արցունքներըդ այդպէս շուտ մոռցար:  
 Գընա՛, մոռացի՛ր, և բաղդը քեզ հետ,  
 Ո՛ւմ հետ որ կ'ուզես, թըռի՛ր ու գընա՛,  
 Շինիր քո բոյնը, ում հետ որ կ'ուզես,  
 Թող տունըս մնայ տըխուր, վերանա:  
 Թո՛ղ օճախիս մէջ կըրակ չը չսղայ,  
 Մարած տանըս մէջ թո՛ղ ոռնայ քամին,  
 Թո՛ղ վայէ քամին չոր գլխիս վերայ,  
 Ես չե՛մ հաւատում կընոջ երգումին...



ԵՐԳՉՈՒՇԻ ԻՐԻՍ ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ

Ն Ա Ի Ե Ր Գ

Կէս գիշեր է, լուռ և հանդարտ է չորս դին,  
 Երկնից վերայ աղամանդներ կը փայլին,  
 Եւ լուսնոյ մեղմ փողփուն շողեր տըրտմագին,  
 Պոսֆորի ջինջ ալեաց վրայ կը հալին:

Նաւակիս մէջ ընկողմանած, երազս՛ւն,  
 Յընորքներու կապոյտ փունջ մը կը հիւսեմ,  
 Լոկ երազներ՝ կեանքի գարուն օրերուն,  
 Երբեմն յըստակ ու մեղմ, երբեմն դալկադէմ:

Եւ նաւակըս, ծրփուն ալեաց խաղալիկ,  
 Զիս կը տանի հեռո՛ւ, հեռո՛ւ ամերէն,  
 Քաղցրը զեփիւռն, ամպոտ երկինքն ու ալիք,  
 Երազներուս մեղմ իկ օրօր կը մընջեն:

### ԳԱՐՈՒՆ ԱՌԱԻՕՏ

Բա-րի լոյ-սի զան-գեր զարկին, զրնգ զրն-գա-լէն ա-նուշ ա-նուշ,  
 լոյ-սը խցւեց մեր աղ խարհին, շող-ջո-ղա-լէն ա-նուշ ա-նուշ

Բարի լոյսի զանգեր զարկին	Երամ կապած կռուներն եկաւ
Չընգզընգալէն անո՛ւշ, անո՛ւշ,	կրոկրոալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Լոյսը բացւեց մեր աշխարհքին	Տաղ կը կարդայ քարէն կաքաւ
Ճըղճըղալէն անո՛ւշ, անո՛ւշ:	կըղկըղալէն անո՛ւշ, անո՛ւշ:
Առուն հովտէն փախուստ կուտայ	Հարս ու աղջիկ հանդերն ելան
Գըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ,	Շորորալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Բարակ հովը կը շընկշընկայ	Ծաղկի բուրմունքն անմահական
Չըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ:	Սըլսըլալէն անո՛ւշ, անո՛ւշ:

### ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿ

Andante espressivo Եղանակ՝ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ

Գե-ղե-ցիկ հո-տաւէտ, գու ծա-ղիկ..... լեռ-նա-  
 յին, ու՛մ հա-մա — ըր գու բու-սար, ու՛մ հա-  
 մա — ըր ծաղ-կե — ցիր... ու՛մ հա-մա — ըր գու բու-  
 սա — ըր ու՛մ հա-մա — ըր ծաղ-կե — ցիր:

Գեղեցիկ հոտաւէտ	Ո՛ւմ համար դու բուսար,
Դու ծաղիկ լեռնային,	Ո՛ւմ համար ծաղկեցիր:

Յրանբում մեծացար  
Անխնամ մեն-մենակ,  
Մի լաւ օր չտեսար,  
Որբի պէս վշտակիր:

Ու անցաւ քո կեանքը  
Սգաւոր, տխրազին,  
Գեղեցիկ հասաւէտ  
Դու ծաղիկ լեռնային:

Դ. ՄԵԼԻՔԵԱՆ

### ՆՈՃԻՆ

Խօսք՝ Մ. ԶԱՐԻՖԵԱՆԻ

Եղանակ՝ Ս. ՊԱՆԹԱՅԵԱՆԻ

*And<sup>o</sup> p*

Կապոյտն ի վեր խորասոյզ,  
Սա մեծ նոծին կը նիրհէ,  
Զինքը խռովող ոչ մէկ յոյզ  
Կ'ընդունի ան աշխարհէ:  
Ու մենաւոր ու խոհուն՝  
Կը զգայ գեփիւռն հազիւ թէ,  
Գիշերներուն մէջ անհուն

Երբեմն յանկարծ կ'աղօթէ:  
Ու կը նիրհէ՛, կը նիրհէ՛...  
Մինչեւ որ մութ հեռուէն  
Շանթ մ'հորիզունն հրդեհէ:  
Ա՛հ, մեծ նոծին այն ատեն,  
Փոթորկին տակ գալարուն՝  
Կ'երզէ իր Յաւն անանուն...  
ՄԱՍԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

### ԼԱ, ԼԱ, ԼԱ, ԼԱ,

Կռուի գնացող զինուորներից  
Նա է ուրախ ով մասին ունի,  
Լա, լա, լա, լա, լա, լա,  
Լա, լա, լա, լա, լա,  
Հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ,  
Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ:  
Դարձողներից նա է ուրախ,  
Ով գեղեցիկ կին ունի:  
Լա, լա, լա... եւ այլն:  
Գեղեցիկ կին ունեցողը,

Լաւ էլ պէտք է շուն ունենայ:  
Լա, լա, լա... եւ այլն:  
Պէտք է որ կամ շունը հսկէ,  
Եւ կամ հսկէ սկեսուրը:  
Լա, լա, լա... եւ այլն:  
Զէնք ու գինին զինուորներուն,  
Անհրաժեշտ է մինչեւ մահ:  
Լա, լա, լա... եւ այլն:  
Զէնքով թշնամու հեա կռուել,  
Գինիով՝ բարեկամի հետ:  
Լա, լա, լա... եւ այլն:

## ՄՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Andante religiose

ՍԻԿԻԼԵԱՆ ՏՈՀՄԻԿ ԵՐԳ

Մասեր կոմպոզիտոր

Ո՛վ դու հոգեզուարճ, ո՛վ դու հոգեխօս,  
 Խաղաղարեք Մնսւնդի գիշեր:  
 Աշխարհ թող բերկրի, զի ծընաւ Քրիստոս,  
 Յնծութիւն ի քեզ, ո՛վ մարդկութիւն:

Ո՛վ դու հոգեզուարճ, ո՛վ դու հոգեխօս,  
 Խաղաղարեք Մնսւնդի գիշեր:  
 Աշխարհ թող բերկրի, զի ծընաւ Քրիստոս,  
 Յնծութիւն ի քեզ, ո՛վ մարդկութիւն:

## ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Սիրահեղիկ սիրուն աղջիկ,  
 Քնիր անուշիկ քնով,  
 Որ գօրանաս, սրախ ծաղիկ,  
 Քնքուշ տեսքով, կարօտով:

Քեզ սիրում է քո մայրիկը,  
 Մաքուր կաթը քեզ տալով,  
 Եւ օրհնում է քու հայրիկը,  
 Քեզ փարելով, գգուելով:

Ինձ մի տանջիր, իմ անուշիկ,  
 Թող մնայ սրտիկըս խաղաղ,  
 Ննջիր հանգիստ հոգուս հատիկ,  
 Թող ևս չասեմ ա՛խ ու վա՛խ:

Խաչն Յիսուսի քեզ պահապան,  
 Գիշեր, ցերեկ, օրն ի բուն,  
 Որ զարգանաս, իմ աննման,  
 Եւ ըլլաս մայր սրբասուն:

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ



Արի՛, գութան՝ վարի՛, գութան,  
 Օրն՝ եկել է, ճաշ դառել,  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Օրհնեալ է Աստուած, հօրովէ՛լ:  
 Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,  
 Քաշի՛ր՝ քաշենք, վար անենք,  
 Ճիպտին արա, քըշի՛ր, հօտաղ,  
 Մեր սեւ օրին ճար անենք:

Պարաքատէրը գանգատ գընաց,  
 Քեօխովէն կը գայ, կը ծեծի,  
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,  
 Կը բարկանայ, կ'անիծի:

Էն օրն եկան թովջի արին,  
 Հարկ են սեղում տէրութեան,  
 Ի՞նչ տամ կօտին ու բէգեարին...  
 Վարի՛, վարի՛, իմ գութան:

Ձեռքս պակաս, ոյժքս հատած,  
 Հազար ու մի ցաւի տէր,  
 Ինձ են նայում մերկ ու սոված  
 Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գութան՝ վարի՛ գութան,  
 Օրն՝ եկել է, ճաշ դառել,  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Օրհնեալ է Աստուած, հօրովէ՛լ:

3. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀՕ՛, ԵԶՆԵՐՈՒՆ

Հօ՛, հօ՛ յառաջ արօրը,  
 Ակօսեցէք արօրը.

Հօ՛, հօ՛, եզներ, հօ՛, հօ՛...

Հուսկ աղօս մ'օ՛ն, անվհատ,  
 Թաղեմ զիմ հասկ ցորեն հատ.

Հօ՛, հօ՛... հեւայլն:

Մաճն ի ձեռքիդ միշտ հերկիր,  
 Անիծապարտ այս երկիր.

Հօ՛, հօ՛... հեւայլն:

Հօ՛, հօ՛ յառաջ արօրը,  
 Ի՛նչ պէտք է մեղկ արօրը.

Հօ՛, հօ՛... հեւայլն:

Հօ՛, հօ՛ կրէք լուծն աշխուժ,  
 Ի՛նչ փոյթ պապիկն է վատուժ:

Հօ՛, հօ՛... հեւայլն:

Օ՛ն, հատիկը աղօսում  
 Եւ պապիկը մի փոսում...

Հօ՛, հօ՛... հեւայլն:

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ.

Հ Ե Գ Ն Ա Ն Ք

Խօսք՝ ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ  
Andante

Եղանակ՝ ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆԻ

Գա-նի կա-ծի գա-ւը մարմ-նիս, ժը-ղի-տն աչ-բիս վարդ կըլ-

Գա-ւը մարմ-նիս աչ-բիս վարդ կըլ-

Գաւ մարմ-նիս վարդ կըլ-

լայ. ցորտի գի-էս... կանց-նի մա-յիս ու լոյս կ'իյ-նայ ձակ-տիս վը-

լայ ցորտի գի-էս կանց նի մա-յիս լոյս կ'իյ-նայ ձակ-տիս

լայ ցորտի գի էս կանց-նի լոյս կ'իյ-նայ ձակ-տիս

լայ հո- գի-էս կանց-նի մա-յիս ու լոյս կ'իյ-նայ իմ

րայ. Ու այս վար-դով այս գա-րու-նով կը հեգ-նեմ ան որ կու-

վրայ. այս գա-րու-նով կը հեգ-նեմ ան որ կու-

վրայ. այս գա-րու-նով կը հեգ-նեմ ան կու-

վրայ. այս գա-րու-նով կը հեգ-նեմ կու-

գայ, ան որ կու-գայ հո-ղին բու-նով, բը-նա-ցը-նել ցա-լըն հրս-կայ:

գայ, ան-կու-գայ բու-նով բնա-ցը-նել ցաւն հրս-կայ:

գայ, ան որ կու-գայ բու-նով, բնա-ցը-նել ցաւն հրս-կայ:

գայ, ան-կու-գայ հո-ղին բու-նով բնա-ցը-նել ցաւն հրս-կայ:

Քանի՛ կ'աճի ցաւը մարմնիս,  
 Ժպիտն աչքիս վա՛րդ կ'ըլլայ,  
 Յուրտ հողիէս կ'անցնի մայիս,  
 Ու լո՛յս կ'իյնայ ճակատիս վրայ...

Ու այս վարդով, այս գարունով,  
 կը հեզնեմ Ան որ կուգայ,  
 Ան որ կուգայ, հողին քունով,  
 Քընացընել Յաւն հսկայ...

Մ. ԶԱՐԻՖԵԱՆ

### Ա՛Ւ, ՄԵՐ ՍԻՐՏԸ

Moderato

Ա՛ւ մեր սիրտը լի-քը գարդ, ցաւ Օր ու ա-րև չը տեսանք:

Վախ մեր կեանքը սեւով անցաւ, Մշխարհից բան չիմացանք չի-մա-ցանք:

Ա՛ւ, մեր սիրտը լիքը գարդ, ցաւ,  
 Օր ու արև չը տեսանք,

Վա՛խ մեր կեանքը սեւով անցաւ,  
 Աշխարհից բան չիմացանք:


### ՍՍ.ՅԼՈՐԴ

Որքա՛ն լաւ օրերս գնացին,  
 Որքա՛ն համբոյրներ գիրդ ու  
 սէր,  
 Ի՛նչ բոց հայեացքներ հրածին,  
 Ի՛նչ բորբոք կրծքեր, գիրկ ու  
 սէր:

Անցան գարնան սէրս ու արև,  
 Ամրան գիշերները լուսնի,  
 Աշնան տխրագին միաս բարեւ,  
 Չմրան սէրս ամփոփ, մեկուսի:  
 Սայլորդ, մի՛ ֆեիր... եւայլն:  
 Ո՛հ, դառն է հիմա, ծերացած,  
 Նայիլ լուռ հանգչող կրակին,  
 Յիշել լաւ օրերս անցած,  
 Յիշել սիրած աղջիկ ու կին:

Սայլորդ, մի՛ ֆեիր ձիերին  
 էլ տեղ չունեմ ուր ռսապեմ,  
 Չունեմ մեկը որ ինձ սիրի,  
 Սայլորդ, մի՛ ֆեիր ձիերին:

Սայլորդ, մի՛ ֆեիր... եւայլն:



ԱԼԵԿՍԱՆՏՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ  
ՄԻ՛ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Andante

*f*

Մի լար բլբլ-բուլ բնզ մի տան ջիր, որ փո-թո-րիկն ա-նի-րաւ,  
վարդդ սիրուն, վարդդ կարմիր, թը փից տո-կն-ց ու տա-րաւ:


Մի՛ լար, բլբուլ, քեզ մի տանջիր,  
Ո՞ր փոթորիկն անիրաւ՝  
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր  
Թը փից պոկեց ու տարաւ:  
Կ'անցնին օրեր, կը գայ կրկին  
Մի նոր գարուն վարդաբեր,  
Եւ մոռացած քո վիշտը հին,  
Նորից կ'երգես վարդի սէր:

Բայց վա՛յ կեանքին այն խեղճ  
երգչի,  
Որ վաղածամ որբացաւ,  
Իւր սիրելի խօսուն վարդից  
Նա յաւիտեան զրկուեցաւ:  
Երգչի համար գարուն չը կայ,  
Ո՛չ էլ նոր վարդ կը սիրէ,  
Նա պէտք է լայ, պէտք է սըգայ,  
Մինչ յաւիտեան կը լըռէ:  
Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

# ԱՅՎԱՐԴ

Երաժշտութիւն՝ ԱԼԵՔՍԱՆՏՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆԻ

*Larghetto*



ԱԼԵՔՍԱՆՏՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Ա՛յ վարդ, լսի՛ր ազազանքիս,  
 Թոյլ տուր թըփից քեզ պոկեմ  
 Եւ քեզանով՝ սիրած կոյսիս  
 Չքնաղ կուրծքը զարդարեմ:

Մի՛ վախենար, նրա կրծքին  
 Չես թառամիր, քնե՛լե վարդ,  
 Այնտեղ, մասաղ կրծքի սակին,  
 Կեանքի աղբիւր կայ առաս:

Ա՛յ վարդ, պատմիր նրան յուշիկ  
 Իմ հուր տենչանքն ու յոյսեր,  
 Թե՛ղ բուրմուռնքով քո անուշիկ  
 Նըրա սըրտում զարթնի սէր:

Մի՛ վախենար, նրա կրծքին  
 Չես թառամիր, քնե՛լե վարդ,  
 Այնտեղ, մասաղ կրծքի սակին,  
 Կեանքի աղբիւր կայ առաս:

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

## ԳԻԺ ԴԱՆԻԷԼԻ ԵՐԳԸ

Է՛յ ժողովուրդ, հրգըս լսէք,  
 Ես բլբուլ եմ Գիւլիստանի բաղերից,  
 Է՛յ ժողովուրդ, դարդըս լսէք,  
 Ես բայդուշ եմ Դաղստանի ժայռերից:  
 Բալաս մնաց քարերի տակ,  
 Մինակ բալաս, մարալի պէս գեղեցիկ,

Մազեր ունէր ոսկէ թելեր,  
Աչեր ունէր կապոյտ կապոյտ խոշորիկ:  
Է՛յ ժողովուրդ, երգըս լսէք,  
Ես բլբուլ եմ Գիւլիստանի բաղերից,  
Է՛յ ժողովուրդ, դարդըս լսէք,  
Ես բայղուշ եմ Դաղստանի ժայռերից:

**Թ Մ Բ Ի Ն**

Moderato

ՖՐԱՆՅ ՇՈՒՊԷՐԹ

Մօտն հինաւուրց աղբիւրին  
Կը բարձրանայ թմբին,  
Ես երազեր եմ անոր  
Շուքին տակ մեզմօրօր:

Անտուն շրջիկ մ'այդ ծառէն  
Գիշերս անցայ նսրէն,  
Մըփուն ճիւղերն իր աչսպէս  
Խօսեցան ինձ կարծես.

Անոր բունին վրայ փոքեր՝  
Սիրելի անուններ,  
Հրճուանքի թէ վշախ մէջ,  
Փնտուր եմ զայն անվերջ:

—Եկուր, ընկե՛ր յողնաթիւ,  
Հանգչէ՛ շուքիս ներքեւ,  
Ուր ո՛չ մէկ ցաւ երկրային  
Պիտի տանջէ քու հոգին:  
Թարգմ. Մ. Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅ

### ԳԱՐՈՒՆ

Moderato

Երաժշտութիւն՝ Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

Եւ այս գա-րուն կ'անցնի շուտով, կը թա-ռա-մի մա-նու-  
 -շակ, կ'ծածկուի սե վա-րա-գու-րով նր-կնից դէմ-քը ա-նու-  
 -շակ. մի-այն սե-րը միշտ կը մը-նայ իմ սրբ-տու-մը կեն-դա-  
 նի— Ո-չինչ սիրող սրբ տի վն թա Բանանա լու— սյժ չու նի:—

Եւ այս գարուն կ'անցնի շուտով,  
 կը թառամի մ'անուշակ,  
 կ'ծածկուի սեւ վարագուրով,  
 Երկնից դէմքը անուշակ:


Միայն սէրը միշտ կը մընայ  
 իմ սրտումը կենդանի,  
 Ոչինչ՝ սիրող սրտի վերայ  
 Բանանալու սյժ չունի:

### Մ Ա Յ Ր Ի Կ Ս

Հայրենիքէս հեռացել եմ,  
 Խեղճ պանդուխտեմտուն չունիմ,  
 Ազիզ մօրէս բաժանուել եմ,  
 Տխուր, տրտում, քուն չունիմ:

Սարէն կուգաքնախ շուն հաւքեր,  
 Ա՛խ, իմ մօրը տեսի՞լ էք,  
 Ծովէն կուգաք մարմանդ հովեր,  
 Արդեօք բարեւ բերե՞լ էք:

Հաւք ու հովեր եկան կշտիս,  
 Անձէն դիպան ու անցա՛ն,  
 Պապա՛կ սրտիս,— փափա՛ք սրտիս  
 Անխօս դիպան ու անցա՛ն:



ԱՆՈՒՇԱԻԱՆ Տ. ՂԵՒՈՆԴԵԱՆ

Ա՛խ, քու տեսքին, անուշ լեզուին  
 կարօտցել եմ. մայրի՛կ ջան,  
 երնէ՛կ, երնէ՛կ, երազ լինեմ,  
 Թըռչիմ մօտըդ, մայրի՛կ ջան:

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,  
 Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,  
 Սրտիդ կպնիմ՝ վառ կարօտով,  
 Լամ ու խնդամ, մայրի՛կ ջան...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ՎԱՅ ԷՆ ՍՐՏԻՆ

Խօսք՝ ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ  
Andante

Եղանակ՝ Ս. ՊԱԼԹԱՅԵԱՆԻ

Նի, Ենտեր իմ կեանք չոր ծառես -- էս օր ան-բոյս էս օր ան.

յոյս, քաղն էլ ան-բոյս. - կը մարես, վայ էնքալ- յոյս կը մարես---

D.C. al  $\text{\textcircled{C}}$

$\text{\textcircled{C}}$  rit. a tempo

յոյս կը մարես

$\text{\textcircled{C}}$  rit. a tempo

molto o poco *perdendosi* pp. fine

Canto

Piano

*mf*

*p*

*p*

Վա՛յ էն սրտին որ սէր չունի, Խեղճուկ իմ սիրտ անսէր ես, Սիրածի հետ սէրըդ կորցրիր, Անսիրակա՛ն, անսէ՛ր ես...

1. Կան անսէր ես. Վա՛յ էն սրտին որ սէր չունի, 2. Վա՛յ էն գլխին որ տէր չունի, Անտէր իմ կեանք—չո՛ր ծառ ես, էս օր անբո՛յս, էս օր անյո՛յս, Վազն էլ անլոյս կը մտնես...

Վա՛յ էն սրտին որ սէր չունի,  
 Խեղճուկ իմ սիրտ — անսէ՛ր ես,  
 Սիրածի հետ սէրըդ կորցրիր,  
 Անսիրակա՛ն, անսէ՛ր ես...

Վա՛յ էն գլխին որ տէր չունի,  
 Անտէր իմ կեանք—չո՛ր ծառ ես,  
 էս օր անբո՛յս, էս օր անյո՛յս,  
 Վազն էլ անլոյս կը մտնես...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

### ՆՈՅԵՄԲԵՐ

Խօսք՝ ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ

Եղանակ՝ Ս. ՊԱՒԹԱՅԵԱՆԻ

*Mod<sup>o</sup> P*

Պարտէզներէն ջնջումն անցած է արդէն վարդենիներն

ըը թախիժէ կը դեղնին... Ու մայրիներ երազն իրենց

կաւարտեն երկընքին դէմ թօթուելով սէգ կատարնին

Պարտէզներէն ջրնջումն անցած է արդէն:

Վարդենիները թախիժէ կը դեղնին...

Ու մայրիներ երազն իրենց կ'աւարտեն՝

երկընքին դէմ թօթուելով սէգ կատարնին...

Վերը, ամպեր, լիճերու պէս սպիտակ:

Տեղտեղ կապոյտը կ'երգէ դեռ երգը հին:

Ոչ մէկ խոսովք: Աստուծոյ խիղճն է յըստակ:

Թըռչուններ, լուռ, կը գաղթեն սուգն հեանքնին...

Վարդենիները թախիժէ կը մեռնին...

Ս. ԶԱՐԻՖԵԱՆ

### ՎԵՐՋԻՆ ՅՈՅՍ

Ալեւտանջ հոգւոյս միակ մխիթար,

Ծաղկիր վարդի պէս, փթթիր անգաղար,

Օրօ՛ր իմ հոգեակ, թանկագին դաւակ,

Դու կեանքիս միակ հղօր հրեշտակ:

Գալիս է գարուն, ծաղկում են դաշտեր,

Այրի մայրիկիդ շատանում վշտեր,

Օրօ՛ր իմ հոգեակ, թանկագին դաւակ,

Դու սիրոյս միակ անգին յիշատակ:

Արցունքից խաւրած՝ աչքերս են լալիս,

Երբ անցած օրերս իմ միտքս են գալիս,

Աշխատիր լինիս դու բարի պարծանք,

Դու հոգւոյս միակ բարի հրեշտակ:

Օրօ՛ր իմ հոգեակ, թանկագին դաւակ,

Հայրենի տանըդ արժանի ժառանգ,

Թէ մեռնիմ, հոգ չէ, և այն ժամանակ,

Անբախտ մայրիկիդ յիշէ շարունակ:



ԵՐԳՉՈՒՇԻ ՄԱՐԻ ԱՐԹԻՆԵԱՆ — ԿԱՌՎԱՐԵՆՅ

ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ, ԽՈՐ ԽՈՐ ՁՈՐԵՐ

*Tempo de valce*

Բարճըր սարեր, խոր խոր ձորեր, ձեր վրայով, ձեր լանջով, Եարա՛ր, եարբս անց չէ՞ր կացել, Ձեզ մընաք բարով չէ՞ր ասել:

Թողէք փարեւմ ես ձեր լանջին, Համբոյր տամ նրա անցած ճամբին, Թողէք ես լամ, ես արտասուեմ, Սիրած եարիս կարօտն առնեմ:

Իմ հայրենեաց խոր խոր ձորեր, Ձեր մէջ առիւծներ են քրներ, Ճամբան որ Արագն էր փակեր, Եարբս ինչպէ՞ս էր անց կացեր: Ո՞ր ձորի մէջ, ո՞ր քարի տակ, Ո՞րտեղ փնտռեմ իմ եարին, Եարա՛ր, եարբս անց չէ՞ր կացել, Ձեզ մընաք բարով չէ՞ր ասել:

Բարճր սարեր, խոր խոր ձորեր,  
 Ձեր վրայով, ձեր լանջով,  
 Եարա՛ր, եարբս անց չէ՞ր կացել,  
 Ձեզ մընաք բարով չէ՞ր ասել:  
 Թողէք փարեւմ ես ձեր լանջին,  
 Համբոյր տամ նրա անցած ճամբին,  
 Թողէք ես լամ, ես արտասուեմ,  
 Սիրած եարիս կարօտն առնեմ:

Իմ հայրենեաց խոր խոր ձորեր,  
 Ձեր մէջ առիւծներ են քրներ,  
 Ճամբան որ Արագն էր փակեր,  
 Եարբս ինչպէ՞ս էր անց կացեր:  
 Ո՞ր ձորի մէջ, ո՞ր քարի տակ,  
 Ո՞րտեղ փնտռեմ իմ եարին,  
 Եարա՛ր, եարբս անց չէ՞ր կացել,  
 Ձեզ մընաք բարով չէ՞ր ասել:

## ՕՆ ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ

(Հատուած մը Վէրաիի «Թրովաթորէ» օփերայէն)


Lento

GIUSEPPE VERDI

Օն վե-րա-դառ-նանք մեր սիրուն լեռ-ներն, Չը լը-քանենք այն խա-  
 -ղաղ վայ-րիկ-ներն էր բաժ-նը-ւե-ցանք այն սիրուն եր-կրէն,  
 Պի-տի լը-սեմ, ոհ, հին եր-գերն ան-դրէն: Օն փու-թանք դառ-նալ  
 Պի-տի լը-սեմ, ոհ,  
 մեր սիրուն լեռ-ներն, Ոչ եւ թո-ղուլ այն խա-ղաղ վայ-րերն  
 այն սիրուն եր-գերն, Ե-րա-նու-թեանց բաղջր հա-ւաս-տիք-  
 ներն Լեղ Պի-տի եր-գես ի մեզմ ծայն բը-նա-րիդ, Լեղ Պի-տի նըն-  
 -ջնք Ե-րա-զնք ա-նու-շիկ: Մի, ով եր-կիր Ե-րա-նու-  
 -թեան, Մի, ով եր-կիր Ե-րա-նու-թեան, Բը-նա-կա-  
 -րան *p* եր-ջառ-կա-թեան, խա-ղա-ղու-թեան *pp*

Օ՛ն, վերադառնանք մեր սիրուն լեռներն,  
 Չը լըքանենք այն խաղաղ վայրիկներն,  
 է՞ր բաժնուեցանք այն սիրուն երկրէն,  
 Պիտի լըսե՛մ, ո՛հ, հին երգերն անդրէն:

Օ՛ն, փութանք դառնալ մեր սիրուն լեռներն,  
 Ոչ եւս թողուլ այն խաղաղ վայրերն,



ՃԻՈՒԶԷՓՓԷՎ ԿԷՐՏԻ

Պիտի լըսե՛մ, ո՛հ, այն սիրուն  
 երգերն,  
 Երանութեանց քաղցր հաւաս-  
 տիքներն:  
 Անդ պիտի երգես ի մեղմ ձայն <sup>2</sup>  
 քընարիդ,  
 Անդ պիտի նընջենք, երազենք  
 անուշիկ:  
 Ո՛վ, ո՛վ, երկիր երանութեան,  
 Բնակավայր երջանկութեան,  
 Խաղաղութեան:  
 Դառնանք, այս՛, մեր լեռներն  
 գեղեցիկ,  
 վարել անդանոր կենցաղ հան-  
 դարտիկ,  
 Երգել առ յաւէտ ի ձայն քընարից,  
 վայելել քընիկ յերազըս անուշից:

Արդ սէր իմ, նիրհէ՛, գըլուխ քս ի գիրկս,  
 Մինչ սըլանայ հոգեակս ի յերկինս,  
 Անդ պիտի երգես ի ձայն քընարից,  
 Քուն վայելես յերազս անուշից:  
 Անդ պիտի երգես ի մեղմ ձայն քընարիդ,  
 Անդ պիտի նընջենք, երազենք անուշիկ:  
 Ինչպէս երբեմն կ'երազէինք,  
 Անդ է հանգիստ հոգւոյն, որ աստ կ'անձկայ երկնից:

**ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ**

Օտա՛ր, ամայի՛ ճամբէքի վըրայ  
 իմ կարաւանը մեղմ կը ղողանջէ,  
 կանգնի՛ր կարաւանս, ինձի կը թըլայ,  
 Թէ հայրենիքէս ինձ մարդ կը կանչէ:  
 Բայց լուռ է շուրջըս ու շըշուկ չըկայ,  
 Արեւվառ, անդորր այս անապատում,  
 Ա՛խ, հայրենիքըս ինձ խորթ է հիմա,  
 Ու քնքուշ սէրըս՝ ուրիշի գրկում:  
 Գընա՛, կարաւանս, ինձ հետըդ քա՛շ տար,  
 Օտա՛ր, ամայի՛ ճամբէքի վըրայ,  
 Որտեղ կը յոգնես, գլուխըս դիր վար,  
 Ժէռ-քարերի մէջ, փըշերի վերայ...

ԱՅԳԵՐԳ

Allegretto

ՖԲԱՆՑ ՇՈՒՊԷՐԹ

Երկնում կապոյտ երգեց արարող, ա-րե՛վը վառ շո-ղով, ա-լե-րը կայ՛նաց-  
 կանց ծոցում լողում զմբուխը յօ-ղով, Լո-ղում զմբուխը յօ-ղով: Դու էլ վեր կաց, ա-  
 չե-րը կայ, ա-նուց աղջիկ, զարթիր, Դու էլ վեր կաց, աչև ըրդ կայ, ա-նուց աղջիկ, զար-  
 թիր, Դու էլ վեր կաց, ա-լե ըրդ կայ, ա-նուց աղ-ջիկ, զար-թիր, զար-թիր, զար-  
 թիր, ա-նուց աղ-ջիկ, զար-թիր, զար-թիր, զար-թիր, ա-նուց աղջիկ, զարթիր:

Երկնում կապոյտ երգեց արարուա,  
 Արեգը վառ շողով,  
 Աչերը բաց՝ ծաղկանց ծոցում,  
 Լողում զմբուխա յօղով:  
 Դու էլ վեր կաց, աչերը բաց,  
 Անուց աղջիկ, զարթի՛ր...

ՊԼՊՈՒԼԻՆ ԵՐԳԸ

Կարողով բանուած փիշերին մէջ, պայտէ աղջիկն իր եր-մէ, եւ սարե-րուն ո յո-րե-  
 րուն ճութ փի-րե-րը կը-հե-մէ եր-մէ՛ զը-սարթ. ճանիկ ու վարդ. ո՛վ դու սոխակ  
 փիշե-րի վարդ. եր-մէ՛ զը-սարթ. ճա-նիկ ու վարդ, ո՛վ դու սո-խակ փի-շե-րի վարդ:

Այս երգին բառերը կը գտնուին Երգարանին 486րդ էջին վրայ:

# ԱՃԻԻՆՍ՝ ՀԱՅ ՀՈՂԵՐՈՒՆ

Խօսք՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ  
Andante

Երաժշտութիւն՝ ՅԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆԻ

Իղ- շերս ա- մէն հն- շե- լէ վերջ, Աստ- զն- բու- ն տակ օ-

Իղ- շերս ա- մէն հն- շե- լէ վերջ, Աստ- զն- բու- ն տակ օ-

իղ- շերս ա- մէն. Աստ- զն- բուն տակ օ-

տար. վար- դիս թեր- թերն Ե- ղն- սուն, ցանցն Լէ վերջ հո-

տար վար- դիս թեր- թերն Ե- ղն- սուն, ցանցն Լէ վերջ հո-

տար վար- դիս թեր- թերն Ե- ղն- սուն ցանց- նե- լէ վերջ  
Cresc.---

վե- ղն- բուն. Ես- արս կո- ղն- վի- բա- ւոր f աւն ծիրն

վե- ղն- բուն. Ես- արս կո- ղն- վի- բա- ւոր f աւն ծիրն

հո- վե- բուն Ես- արս վի- բա- ւոր աւն ծիրն

անց- ներ հո- վե- բուն ու հո- ղա- մա- ծ բը- սե- ի

անց- ներ հո- վե- բուն ու հո- ղա- մա- ծ բը- սե- ի

անց- ներ հո- վե- բուն ու հո- ղա- մա- ծ բը- սե- ի



Ինչպէս թրթուրն իր բըժո՛ժն, ինչպէս փեթա՛կն իր՝ մեղուն,  
 Ունենայի հայրենիք մը վերջապէս, նետահար  
 Իմ թեւերուս երկնելու թռի՛չքը նորոգ, — ուր ըլլար՝  
 Համայնական լոյսի՛ն պէս՝ կեանքերով կեանքը զեղուն...  
 Ու, — զըւարա՛կ ուխտազիր գիւղի մը պարզ խորանին, —  
 Ազա՛տ՝ պղտոր ժըխորէն ստաննեքուն ախտածէտ,  
 Բաշխէի սի՛րտս ամէնուն, ու մահս ինձի՛ ըլլար գէթ...  
 Ու հեռասոյգ և անտես, աստղի մը պէս անքընին,  
 Խնկապարո՛յր շիջումով՝ յանձնէի բորբ ու բեղուն  
 Հողիս դարձեալ Անհունին, և աճիւնս՝ հայ հողերուն (\*)...

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

**Տ Ր Ի Ո Ւ Է Տ**

Խօսք՝ ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԻ

Երաժշտ. ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

*SS. ԲԵՐԲԵ Ժ. 126*

Երգում է ծո-վը, դաշտը, հո-վը —, ամէն ինչ երգ է ու շըշուկ, ամէն ինչ երգ է  
 ու շըշուկ, երբ սիրտը խենթ է, կամ թէ փիւտով է, երգում է ծո-վը, դաշտը, — հո-  
 վը: — *FIN* Գի-տէի որ սիր-տը դաշտ է, ծով է, — եւ երբ պայտնում է սիրտն  
 ըստ — է, երգում է ծո-վը, — երգում է հո-վը, — ամէն ինչ երգ է ու շըշուկ:

Երգում է ծովը, դաշտը, հովը,  
 Ամէն ինչ երգ է ու շըշուկ,  
 Երբ սիրտը խենթ է, կամ թէ գիտով է,  
 Երգում է ծովը, դաշտը, հովը:  
 Գիտէք որ սիրտը դաշտ է, ծով է,  
 Եւ երբ դարթնում է սէրն անշուք,  
 Երգում է ծովը, երգում է հովը,  
 Ամէն ինչ երգ է ու շըշուկ:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

(\*) Առաջին տունը երգել երրորդ տունին, իսկ երկրորդը՝ չորրորդին հետ:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԷՆ

Լ՛ի նըս-կըզ-բին փայտիճիկն-ըր ոչ դուն փի ցիտն նո ոչ ալ ե—ս, առջեմ  
 Տիկն Բարբառ-դալ ոչ դուն կըր—ասն նո ոչ ալ ես. վարապոյ-րի՛ երեւն է որ կը քառեակ  
 զենք մնայ երկու—յով. վարապոյ-րը երբ որ վեր—այս ալ ոչ դուն կաս նո ոչ ալ ես



Անըսկիզբին դազանի քները, ո՛չ դուն  
 գիտես եւ ո՛չ ալ ես,  
 Առեղծուած ին բառը կարդալ, ո՛չ դուն  
 կըրնաս եւ ո՛չ ալ ես,  
 Վարագոյրի ետեւն է որ կը բարբան-  
 ջենք մենք երկուքով,  
 Վարագոյրը նրբոր վերնայ, ալ ո՛չ  
 դուն կաս եւ ո՛չ ալ ես:  
 Ահա տեսանք այս աշխարհը, ինչ որ  
 տեսանք մէկ ոչինչ է,  
 ինչ խօսեցանք, ինչ լըսեցինք, այս  
 բոլորն ալ մէկ ոչինչ է,  
 Թէ բովանդակ աշխարհն տնցնիս դուն  
 ծայրէ ծայր, միշտ ոչինչ է,  
 կամ բանտարկուած տանըդ ապրիս՝  
 նրմանապէս սա ոչինչ է:  
 Ըսենք թէ՛ դուն ուզած իդ պէս միշտ  
 ապրեցար, վերջըդ ի՞նչ է,  
 Ըսենք՝ կեանքիդ գիրքը ցըվերջ դուն  
 կարդացիր, վերջըդ ի՞նչ է,  
 Եւ կամ դար մը դուն ապրեցար բաղ-  
 ձանքներուդ յագուրդ տալով,  
 Եւ ըսենք թէ՛ դար մ'ալ նորէն պի-  
 տի ապրիս, վերջըդ ի՞նչ է:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ԵՒ ՍԻՐՈՒՅԻՆ  
 Իմաստունները Թող խօսին, մի՛ հե-  
 ռանար դուն խաղեամէն,  
 Ստոյգն այն է, որ կեանքը կայ,  
 բայց կը Թուքի արագօրէն,  
 Մասցածը սուտ է պատիր, — բս-  
 տոյգն այն է, որ ծաղիկին  
 Վախճանը մահն է վերջնական,  
 դեռ առաջին ծրնամ օրէն:

Սի՛րտ, քանի որ ճըշմարտութիւնն այս աշխարհի ըստուեր մ' է լոկ,  
Ալ ինչո՞ւ կը նըւաստանաս ջանք ու ճիգով ու կ'ընես հոգ,  
Մարմինդ յանձնէ ճակատագրին, ժամանակին հետ յարմարէ',  
Գըրիչը ի՛նչ որ գըրած է, հընար չէ որ փոխէ ո՛չ սք:

Ի՛նչ Գըրիչն է արդէն գրած՝ չի՛ ենթարկուիր սըրբագրութեան,  
Տըրտուժ ապրիլն ալ մարդիկը շուտ կ'ենթարկէ հիւանդութեան,  
Ամբողջ կեանքըդ թէ արտասուես՝ սըրտիդ արիւնն արցունք չինած,  
Կատարւածէն դուրս կէտ մ'անգամ չի՛ կատարուիր ուրիշ մէկ բան:

Տէ՛րը եղիր Եգիպտոսին, Յունաստանին, Չինաստանին,  
Ենթարկէ՛ քու իշխանութեանդ հանուր հողը մոլորակին,  
Վըստան եղի՛ր թէ աշխարհէն, իժ ու քուկին բաժինն է լոկ,  
Տա՛սը կանգուն ճերմակ պատանք, երկու կանգուն հո՛ղը դաշտին:

Երէկ իրկուն գացած էի բըրուտի մը գործատեղին,  
Երկու հազար կուժեր տեսայ, որ իրար մէջ կը խօսէին,  
Ամէն մէկը կը թուէր թէ կ'ազազակէր — «ցուցուր տեսնենք,  
Կուժ շինողը, կուժ առնողը, կուժ ծախողը՝ ժամանակին»:

Պուպրիկներ ենք մենք բազմազան ու երկինքն է լարախաղաց,  
Ու սա ո՛չ թէ առակ մըն է, այլ իսկութիւն բացէ ի բաց,  
Որ գոյութեան բեմին վըրայ ժամանակ մը խաղալէ վերջ,  
Անէութեան տուփը կ'իյնանք մէկիկ մէկիկ՝ դերն աւարտած:

Ապրած եղիր երկու, երեք դար կամ հազար երկար տարի,  
Քեզ այս աւեր իջեւանէն անպայման դուրս քըչեն պիտի,  
Կ'ուզես եղիր հըզօր արքայ կամ շուկայի մի մուրացիկ,  
Ամենէն վերջ այս երկուքն ալ միեւնոյն գինն արժեն պիտի:

Այն երէկ էր, անցա՛ւ դընա՛ց, անոր մասին ա՛լ մի հոգար,  
Դեռ ծագելիք օրուան մասին, գու բընաւին մի՛ տըրաընջար,  
Ներկայ վայրկեանն է իրական ու նա միա՛յն է ճըշմարիտ,  
Վայլէ՛ անհոգ, որովհետեւ գայն անգամ մ'ալ քեզ կտ չեն տար:

Քանի կըրնաս, քանի ձեռքդ է, մի՛ ցաւցըներ դուն ո՛չ սքին,  
Հուր զայրոյթիդ խարոյկներուն՝ մի՛ նըստեցներ դուն ո՛չ սքին,  
Թէ բաղձանքդ է անդսրբութիւն այս անցաւոր աշխարհին մէջ,  
Ամէ՛ն անգամ ինքը՛դ ցաւիր, մի՛ ցաւցըներ դուն ո՛չ սքին:

Յրիտասարդ օրերըս կը վերածընուին այսօր կըրկին,  
 Գինի՛, գինի՛, գինի՛ բերէք, երանութիւնը իմ սըրտին,  
 Մի՛ բամբասէք, թէ լեղի է, գինին քա՛ղցր է ամէն անգամ,  
 Փրդառնութեան պատճառն է լոկ՛ դառնութիւնը ի՛մ իսկ կեանքին:


Մահուան քաշած նետին հանդէպ, ամէն վահան անօգո՛ւտ է,  
 Արծաթի և ոսկու տըւած շքեղութիւնն անօգո՛ւտ է,  
 Կեանքն ու աշխարհ քանի խորունկ ես քըննեցի՛ հասկըցայ թէ  
 Բարի գործէն զատ ամէ՛ն բան, աշխարհիս մէջ անօգո՛ւտ է:

Բարեկամներ, երբ հաւաքուիք իրարու հետ տեսակցելու,  
 Յաճախակի դուք յիշեցէք բարեկամին ձեր այս հեռու,  
 Համով, հոտով ու պատուական գինին երբ դուք մէկտեղ խըմէք,  
 Հերթն երբ ինձ գայ, յիշատակիս բաժակը վար շըրջեցէք դուք:  
 Բնագրէն Թարգմանեց՝ ԱՐԱՄ ԶԱՐԸԳ

Շ Ո Ղ Ի Կ

Allegretto — կատակելով եւ աշխոյժ, բայց ոչ արագ BEETHOVEN

մեծ-նակ է ինչ եւ ու Շո-ղի. ա — սի՛ թո՛ղ մի պա-շե՛տ. Եւ — ղիկ զան, թո՛ղ մի,  
 թո՛ղ մի ինչ պա-շե՛տ: Շո-ղիս ասուս՝ լէ՛. շե՛տ թո՛ղի, լէ՛. շե՛տ թո՛ղի, լէ՛. շե՛տ թո՛ղի, լէ՛. շե՛տ թո-  
 ղի, րե՛ս, կր-բան-շե՛տ, խե՛ղօք, այ՛ քրդայ, խե՛ղօք, խե՛ղօք մի — նա՛, քրդ-ղայ, կր-կանչե՛մ:  
 է՛. Շո-ղի-կին ո՞վ կը-լօ — սի, ո՞վ կը-լօ — սի: Զօրով մի պա- ջ ա-  
 նայ. զօ-անձ մի պա- ջ ա նայ, թո-ղի փա-խայ:  
 Եւ — սի կի՛մի ֆո-ռա՛, ղէ՛. ղէ՛. ինչ-քան կո-չե՛ս ֆոռա՛. ղէ՛. .  
 կի-մի ինչ-քան կո-չե՛ս ֆոռա՛, ինչ քան կո-չե՛ս ֆոռա, Եոջի՛ ինչ քան կո-չե՛ս կի՛մի ֆո-  
 ա՛ս ինչ-քան կո-չե՛ս կի՛մի ֆո-ռա՛, ղէ՛. ինչ քան կո-չե՛ս, ինչ քան կո-չե՛ս ֆո-ռա՛: Է.



Ֆրանց Լիստ

Մենակ էինք ես ու Շողիկ,  
 Ասի՛ «Թող մի պաշեմ»,  
 Շողիկ ջան, թող մի քեզ պաշեմ»:  
 Շողիկն ասաւ՝ «չէ՛, չեմ թողի,  
 Չեմ թողի՛ տե՛ս, կը կանչեմ.  
 Խելօ՛ք, ա՛յ տղայ, խելօք միա՛,  
 Տղա՛յ, կը կանչեմ»... .

Է՛, Շողիկին ո՞վ կը լսի: —  
 Զօռով մի պաշ առայ, թողի փախայ:  
 Ասի՛ հիմի գոռա,  
 Դէ՛, հիմի ինչքա՛ն կ'ուզես գոռա՛,  
 Շողի՛կ, ինչքա՛ն կ'ուզես հիմի գոռա...

**ԶԱՆԵԼ ՆԱՍԱԿ**

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ  
 Andante

Երաժշտութիւն՝ Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Է՛յ գու զանկը երգարար հասակ, անցար ոսկի ամպի պէս, քեզ երբ ցարար եր-կեր ու սէր:  
 Կարար փարունն իմ արդիւ: Քար կը սեղմեմ՝ արդիւ կի-մա, — կ'եղեմ արեւոր լա-  
 լու: — արեւայ ինչ քան, ինչ քան կ'ուզես, անցանկ է երբ ի փա-լու:

Է՛յ գու ջանկը, հըպարտ հասակ,  
 Անցար ոսկի ամպի պէս,  
 Քեզ հեա տարար երգեր ու սէր,  
 Տարար գարունն իմ սրաէս:

Քար կը սեղմեմ սրախ հիմա,  
 կ'եղնեմ սարերը լալու, —  
 Ա՛խ, լաց՝ ի՛նչքան, ի՛նչքան  
 կ'ուզես,  
 Անցածն էլ եա չի գալու:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԾԻԾԵՌՆԱԿԻՆ ԲՈՅՆԸ

Adagio ♩ . 54

Երաժշտութիւն Բ. ԿԱՆԱԶԵԱՆԻ

Զուգերգ

Դաշնակ

*m.f.*

Ծի-ծեռ-նա-կը Բոյն կը շի-ներ և կը շի-

*Pd*

-ներ և կ'ըր-գէր ա-մն յեկ շիշ որ կրպ-ցը-

-ներ իր հին Բոյ-նը կը յի-շեր ա-մն յեկ

2իւշ որ կըպ-ցը-նէր իր հին բոյ-նը կը յի

1. 2. - շէր 2 մէկ ան-գամ 3. Բայց ինչ կը

3 P. - շէր

Ծիծեռնակը բոյն կը շինէր  
 Եւ կը շինէր, և կ'երգէր,  
 Ամէն մէկ շիւղ որ կըպցընէր,  
 Իր հին բոյնը կը յիշէր:

Նա կը յիշէր անցեալ տարուան  
 Իր սնուցած ձագերին,  
 Որոնց շատերն յափշտակեց  
 Արիւնարբու թըշնամին:

Մէկ անգամ էր նա բոյն շինէր,  
 Եւ շատ անգամ կարկըտէր,  
 Բայց այս անգամ վերադարձին,  
 Բոյնն աւերակ էր գտեր:

Բայց ինք կրկինբոյն կը շինէր  
 Ե՛ւ կը շինէր, և՛ կ'երգէր,  
 Ամէն մէկ շիւղ որ կըպցընէր,  
 Իր հին բոյնը կը յիշէր:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ



ՕՐՕՐԵՐԳ

Andante

Վ. Ա. ՄՈՅԱՐՏ

Նանիկ բայիկ սի-րա-սու-նի,      Նանի են արել թեւ թռչուն,      Նիրն են մըտել քաջո ու արա,  
 Ժիր մեղուն էլ է լռուել,      Պարզ լուսընկան էլ հանդարտ,      Իր արծաթ քողն է փրոել,  
 Նանիկ արա շողի տակ,      Լուսնի արծաթ քողի տակ,      Նանիկ, նանիկ



Վ.ՈՒՖԿԱՆԿ ԱՄԱՏԷՌՍ ՄՈՅԱՐՏ

Չան, իմ բալիկ սիրասուն,  
 Նան են արել թեւ թռչուն,  
 Նիրն են մըտել դաշտ ու արա,  
 Ժիր մեղուն էլ է լռուել,  
 Պարզ լուսընկան էլ հանդարտ,  
 Իր արծաթ քողն է փրոել,  
 Նանիկ արա շողի տակ,  
 Լուսնի արծաթ քողի տակ,  
 Նանիկ, նանիկ:

Բախարդ չունի էլ ոչ ոք,  
 Խաղ ես անում միշտ անհոգ,  
 Դէ՛, նան արա դու մուշ-մուշ,  
 Որ քեզի տամ մեղր ու նուշ,  
 Նան արա, շուտ մեծանաս,  
 Աչքդ արեւի հետ բանաս,  
 Նանիկ արա շողի տակ,  
 Լուսնի արծաթ քողի տակ,  
 Նանիկ, նանիկ:





ԵՐԳՉՈՒՇԻ ԶԵՓԻՒԻ ԴԱՆՆԹ

ԱՆՑԻՐ ՍԵՒ ԱՄՊ

Moderato

*Moderato*

Ան-ցի-ր սե-ւ աժ-պ ի՞մ սը-րա-ի-ց,  
 Բա-ցե-ր՝ Ե-րկ-ին-ք կա-պու-ւ-ա-կ,  
 Տը-խու-ր խա-ւար թու-խա-լի մէջ  
 Ցու-լա՛ գա-րնան՝ արե-ղ-ա-կ:

Թող պա-տառ-ւ-ի ցու-րտ ձը-մ՝ րան՝  
 Ար-գոյ հան-դե-րձ տա-ղա-կա-լի,  
 Եւ շող-շող-ոյ բը-նու-թե-ան  
 Ոս-կէ ժը-պի-տ ցան-կա-լի:

Անցի՛ր սեւ աժպ իմ սըրաից,  
 Բացե՛ր՝ երկինք կապոււաակ,  
 Տըխուր խաւար թուխալի մէջ  
 Ցուլա՛ գարնան արեղակ:

Թող պատառւի ցուրտ ձըմ՝ րան՝  
 Արգոյ հանդերձ տաղակալի,  
 Եւ շողշողոյ բընութեան  
 Ոսկէ ժըպիտ ցանկալի:

### ՈՒՌԻՆԵՐԻ ՏԱԿ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

*Andantino*

Մեռի — նե՛րի ցակն զր — ցոս — բուն եմ լուռ, հեռուս մի զու՛թակ հեծում է ցրթոց: Ան՝ թի մէջ ասե՛ր  
 իմ բարձր — ցի վրայ, աս նու՛ շիկ ձոր ցիս արքայաւում է նա: Անտոյրս մի չեմ ձանրացաւ վրաս իջրեց սի ու  
 ճիւղ, փարուն ու երայ: Մեռի — նե՛րի ցակն նրան — բուն եմ լուռ, հեռու մի զու՛թակ լու՛րս է ցրթոց:

Ուրիների տակ, մտորում եմ լուռ,  
 Հեռում մի ջուժակ հեծում է տխուր,  
 Մուժի մէջ, ասես, իմ բախտի վրայ,  
 Անուշիկ մօր պէս արտասուում է նա:

Անողորմ մի ձեռք ծանրացաւ վրաս,  
 Փշրեց սէր ու երգ, գարուն ու երագ...  
 Ուրիների տակ մորմորում եմ լուռ,  
 Հեարս մի ջուժակ լալիս է տխուր...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

### ԱՐԱՋՆ ԵԿԱԻ


Արագն կհաւ յափին տալով,  
 Ժեռ քարերին, ափին տալով,  
 Ո՞րանզ խաղեմ ես իմ գարգը,  
 Չոր գլուխս ափին տալով:  
 Ա՛յ, իմ Արագ, ջուրըդ մարար,  
 Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր,  
 Ես չըհասայ իմ մօւրազին,  
 Արա՛գ, եարաբ, կարօտս առա՞ր:  
 Ամպերն ընկան Մասիս սարին,  
 Կարօտ մնացի ես իմ եարին,

Աստուած սիրես, էրեւծ սրտիս  
 Ջուզապ բերես կհող տարին:  
 Գիշերն անքուն գիր կը գրեմ,  
 Արտասուքըս գեա կը շինեմ,  
 Արա՛գ, ձեզը ջրիդ չառած,  
 Իմ սեւ գարգը քեզ կը բերեմ:  
 Կասես՝ չողքը քարին ընկաւ,  
 Կըրակըն իմ սրտին ընկաւ,  
 Կամար ունքից, թուխ աչքերից,  
 Յաւն իմ ջիւան ջանին ընկաւ:

Յ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ


ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ե Ր (\*)



Կոմիտաս Վարդապետ (աշխարհական տարազով) եւ Սպիրիտոն Մեւիքեան

1) ԹԱՄԶԱՐԱ



Այս պարերգին բառերը հրատարակուած են Երգարանիս 290րդ էջին վրայ:

(\*) Հայկական պարերու 1-13 թուագրուածները գրի առնուած են Սպիրիտոն Մեւիքեանի կողմէ:

2) ՓԱՓՈՒՐԻ

Կ'արագանայ մինչեւ 120


Musical score for 'Փափուրի' (Phaphoury). The score is written in treble clef with a 2/4 time signature. It begins with a tempo marking of quarter note = 80. The melody consists of four staves of music, featuring eighth and sixteenth notes, with some rests and repeat signs. The piece concludes with a double bar line and repeat dots.

3) ՑՈԼԱԿԻ

Musical score for 'Ցոլակի' (Soulakhi). The score is written in treble clef with a 6/8 time signature. It begins with a tempo marking of quarter note = 104. The melody consists of three staves of music, featuring eighth and sixteenth notes, with some rests and repeat signs. The piece concludes with a double bar line and repeat dots.


4) ՔԵՌԾԻ

Musical score for 'Քերծի' (Kerdy). The score is written in treble clef with a 2/4 time signature. It begins with a tempo marking of quarter note = 104. The melody consists of three staves of music, featuring eighth and sixteenth notes, with some rests and repeat signs. The piece concludes with a double bar line and repeat dots.




Հայկական ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլի արական պարախումբը (Երևան) «Քոչարի»-ն պարած պահյուն

5) ՄՇՈՅ ՔՈԶԱՐԻ



6) ՔՈԶԱՐԻ



7) ԷՐԶՐՈՒՄԻ ՊԱՐ

*♩ = 184*

Musical score for 'Էրջրուսի Պար' (Erzrumi Par). It consists of three staves of music in 3/8 time, marked with a tempo of quarter note = 184. The key signature has one sharp (F#). The music features a mix of eighth and sixteenth notes with some triplets.

8) ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՊԱՐ

Կ'արագանայ մինջե. 120

*♩ = 100*

Musical score for 'Տիարպեքիրի Պար' (Tiarpekeri Par). It consists of three staves of music in 6/8 time, marked with a tempo of quarter note = 100. The key signature has one flat (Bb). The music is characterized by a steady eighth-note accompaniment.

9) ՎԱՀՐԱՄԻ

*♩ = 96*

Musical score for 'Վահրամի' (Vahrami). It consists of three staves of music in 2/4 time, marked with a tempo of quarter note = 96. The key signature has one flat (Bb). The music features a mix of eighth and sixteenth notes.

10) ՀՕՅ ՆԱՐԷ


*♩ = 90*

Musical score for 'Հոյ Նարե' (Hoy Nare). It consists of two staves of music in 2/4 time, marked with a tempo of quarter note = 90. The key signature has one flat (Bb). The music features a mix of eighth and sixteenth notes.



Հայկական ժողովրդական երգի և պարի պետական անսամբլի մենակատարուհիներ՝ Ռոզա Սաֆարեան և Լուսիկ Քոչեան (Երևան)

11) ՇԱՏԱԽԻ ՊԱՐ — ԳԷՕՆՏ (ԹՐԱԽԱՆ)



12) Լ Ո Ր Կ Է

Musical score for exercise 12, 'LORKE'. It consists of four staves of music. The first staff is in 4/4 time with a tempo marking of ♩ = 100. The second staff is in 4/4 time. The third and fourth staves are in 12/8 time with a tempo marking of ♩ = 120. The music is written in a single melodic line on a treble clef.

13) Զ Ե Ր Ա Գ Ի

Musical score for exercise 13, 'ZETAGI'. It consists of two staves of music. The first staff is in 9/8 time with a tempo marking of ♩ = 208. The second staff is in 9/8 time. The music is written in a single melodic line on a treble clef.

ՍՈՒԷՏԻՈՅ ՊԱՐԵՐԳ

Musical score for 'SOUTSIOS PARERG'. It consists of two staves of music. The first staff is in 2/4 time with a tempo marking of *Moderato*. The second staff is in 2/4 time. The music is written in a single melodic line on a treble clef. Below the staves are Armenian lyrics.

Կէրսէօր ճրագան հիփու-ժի, հի-լէ, հի-լէ, հի-լէ, հի-լէ, հի-լէ-սա-ժի,  
 Զու-ց էլ էշ-վիւր վիւ-լէ-ու-ժի, հի-լէ, հի-լէ, հի-լէ, հի-լէ, հի-լէ-սա-ժի:

Այս պարերգին բառերը կը գտնուին Երգարանիս 378-րդ էջին վրայ:

ՊԱՐՏԻԶԱԿԻ ՊԱՐԵՐԳ

Musical score for 'PARTISAKI PARERG'. It consists of two staves of music. The first staff is in 2/4 time with a tempo marking of *moderato*. The second staff is in 2/4 time. The music is written in a single melodic line on a treble clef. Below the staves are Armenian lyrics.

Կո-ւալի-րին իս-ու-րը, հո-ւ-րիս կըլ-լան իս-ու-րը,  
 Զըշահա՛ծ-եփն ոք, փն-նե-ն, ծու-ն կը ԴԸ-նե՛ն թի-սե-րը:

Այս պարերգին բառերը կը գտնուին Երգարանիս 381-րդ էջին վրայ:

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՄԱՍ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐ

Չայնագրեց՝ ՎԱՐԳԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Յօրինեց՝ ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

Զինուած պայքարատուան Զէյթուն - նի քաղեր, սուրբ ազա-տու - թեանի՛ վառուած ան-վե-հեր, ՎՈՐՑ  
 ժող լըցուած առիւ-ծի նըման, խոջաջ կրուում է - է ընդդէմ թըշնամեաց: Կեցցի՛ք դուք միշտ  
 Զէյթունցի՛ք, որ պիտի՛ կրթի՛ք հայրենիք, բուխաւորու - նի պարծանք, մեր կեանքերն էլ չե՛ղ կը քանկ:

Զինուած, պատրաստուած Զէյթունի քաջեր,  
 Սուրբ ազատութեամբ վառուած անվհէր,  
 Վըրէժով լըցուած առիւծի նըման,  
 Քաջ քաջ կրուում էք ընդդէմ թշնամեաց:  
 Կեցցի՛ք դուք միշտ Զէյթունցիք,  
 Որ պիտի փրկիք հայրենիք.  
 Կու՛ր Հայաստանի պարծանք,  
 Մեր կեանքերն էլ ձեզ կը քանկ:

Զէյթունի շուներ արեամբ շաղախուած,  
 Թըշնամիներով են շրջապատուած,  
 Նըրա քաջերը երկիւզ չեն կրում,  
 Այր ու կին մէկտեղ կըռիւ են մղում,  
 Կեցցի՛ք դուք միշտ... եւայլն:

Նըրանք միշտ կ'ասեն - «Լաւ է ազատ մահ,  
 Քան ըստրուկ ապրել աշխարհի վրայ,  
 Քան միշտ ենթարկուել թշնամիներին,  
 Եւ արատ թողնել Հայր անցեալին»:  
 Կեցցի՛ք դուք միշտ... եւայլն:

## Ա՛Յ ՍԱՐԻ ԱՂՋԻԿ

Զահէլ սըրտերում  
 Քո վառած հուրը,  
 Չի մարում, աղջիկ,  
 Սափորիդ ջուրը.  
 Ա՛յ սիրուն աղջիկ,  
 Ա՛յ սարի աղջիկ,  
 Թեկուզ մեզ վառի,  
 Շուտ-շուտ ջուրն արի:  
 Շուրթերից բացւող  
 վարդը ժրպտալիս,  
 Մեզ, սիրուն աղջիկ,  
 Հանգիստ չի տալիս.

Ա՛յ սիրուն աղջիկ,  
 Ա՛յ սարի աղջիկ,  
 Շուտ-շուտ դուրս արի  
 Աղբիւրը ջրի:  
 Մեն-մենակ դու ես  
 Ծագիկը սարի,  
 Մեն-մենակ դու ես  
 Զարդը աշխարհի.  
 Ա՛յ սիրուն աղջիկ,  
 Ա՛յ սարի աղջիկ,  
 Թեկուզ մեզ վառի,  
 Շուտ-շուտ ջուրն արի:  
 Կ. ՄԻՐԱԲԵԱՆ

## Ո՛Վ ԻՄ ՍԻՐԵԼԻ

Ո՛վ իմ սիրելի, մէկ մօտս արի՛,  
 Հարգամ քու դուռն գալս իմացիր,  
 Երկու աչիցս արուն ա կաթում,  
 Գլխիս վա՛յ տալով, լալս իմացիր:

Հերիք ե մուրվաք արա՛,  
 Եա՛ր հերիք ե, մուրվաք արա՛,  
 Նահախ տեղան մի՛ չարչարիք,  
 Մեկ ոահմ արա՛, եար, քեզի դուրբան:

Սրտիս դարդերն չո՞ւմ չես իմանում,  
 Ինձ նահախ տեղան չո՞ւմ ես սպանում,  
 Աչքիդ տակովն մտիկ ես անում,  
 Անմուռնչ բարով տալս իմացիր:

Հերիք ե, մուրվաք արա՛... եւայլն:

Էշխիդ կրակն սրտումս վառ ա,  
 Լերդ ու ջիգեարս դառել ա եարա,  
 Հոգիդ սիրես՝ մէկ ոահմ արա,  
 Խեղճ Թուրինջն եմ ես, հալս իմացիր:

Հերիք ե, մուրվաք արա՛... եւայլն:



ԵՐԳՉՈՒՇԻ ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ . ՄՈՒՐԱՏԵԱՆ

### ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Ես հանեցի սուրս պատհանից,  
Արտասուքով օծեցի,  
Տըրամաւ անուշ սիրականս,  
Երբ վճիռս կարդացի:

Նա երդուեցաւ իմ սիրովս,  
Եկէ՛ք, ուխտենք միասին,  
Այսուհետեւ էլ չը սիրենք  
Կռուից փախչող վատերին:

Խիստ զգուհիլի կերպով նայինք  
Ոսկու սիրուն մեռնողին,


Համբոյրի տեղ թոյն կամենանք  
Թիւրքից վրէժ չառնողին:

Ողեւորուած կրկնեց քաջը,  
Ո՞ւմ կը սպասենք, վա՛յ մեզի,  
Նա հեռացաւ մըռընչալով,  
Ինչպէս կորիւն առիւծի:

Կը դայ գարուն, մենք կը սպա-  
սենք,  
Նոր կեանք, նոր բախտ քիւրդի-  
հեա՛,

Մեր լեռներից պիտի հոսի  
Արիւնն իբրեւ վարար գետ:

ԿԱԼԵՐԻ ԶԱՄԲԱՆ



Կալերի ճամբան թաղա,  
 Լուր, լուրի, լուր,  
 Լուր, լուրի, ռբլիսկ,  
 Մատանիքս փերուզ ա,  
 Չան-նիկ զանիկ զանի,  
 Չան, զանիկ, ռբլիսկ:

Մըանիմ ծոցըդ՝ համամ ա,  
 Ծոցումըդ բոստան ցանեմ,  
 Ծըծերդ ընծի շամամ ա:  
 Ալազեազը մօտիկ ա,  
 Իմ եարբ կոլոտիկ ա,  
 Կոլոտիկին մի նայի,  
 Պատկերը խորոտիկ ա:

Քառսուռն ոչխար թամամ ա,

4. 4.

ԱՐԻ ՄԷԿ ՏԵՍՆԵՄ

Իմ մայր Հայաստանի, մայր հողից ծնւած,  
 Աննման գեղեցիկ, արի մէկ տեսնեմ,  
 Հայրենիքիս զով հովերով փայփայլած,  
 Ծաղիկներից ծաղիկ, արի մէկ տեսնեմ:  
 Արի մէկ տեսնեմ, կարօտս առնեմ,  
 Համբոյրս, անուշ եար, համբոյրիդ խառնեմ:

Քո սիրուդ թեւերով շատ սարեր անցայ,  
 Շատ մարդ տեսայ, սակայն քեզ չմոռացայ,  
 Էլի ջերմ կարօտով քո գիրկը դարձայ,  
 Աշխարհիս անուշիկ, արի մէկ տեսնեմ:  
 Արի մէկ տեսնեմ, կարօտս առնեմ,  
 Համբոյրս, անուշ եար, համբոյրիդ խառնեմ:

Աշխուժ, հոգուս առջեւ սիրուններ պէս-պէս,  
 Հանդէս եկան վառ գէմքերով հրակէզ,  
 Հոգուս աստղը կրկին դարձաւ դէպի քեզ,  
 Լուսաշող հայ աղջիկ, արի մէկ տեսնեմ:  
 Արի մէկ տեսնեմ, կարօտս առնեմ:  
 Համբոյրս, անուշ եար, համբոյրիդ խառնեմ:

ԱՇՈՒՂ ԱՇՈՒԺ

# Ս Ի Ր Ե Ր Գ

Խօսք՝ Գ. ՈՃԷՄԵԱՆԻ

Երաժշտութիւն՝ ՕՉԱՆ ՏՈՒՐԵԱՆԻ

Moderato

*mf*

Գի-շե-ր ցե-րե-կ եւ յուճ յուճեմ, ու-նեմ յու-նեմ եւ փեղ ու-  
 նեմ, եւ փեղ եւ — խորտար եմ իւ-րեւ, վարդ ծաղիկ կրթիւ կա-խեմ. խորտար կա-  
 խեմ. Իւ-նեմ որ ք փեղ լեմ ցե-նեւ, իւ-նեմ որ ք քիչ լեմ ւ-նեւ. սիրտու կր-  
 տաւ. *a tempo* քօր չառնք-ւի-ր, եւ ուրիշ եւ ուր եւ սիր-ուիր: Այլ ցոււն ու նեմ, ու-  
 ռակ չե-քե-ցի-ր, սիրտու սիր-տու-նք ք-րե-ցի-ր:

— Ե յուճ ու նեմ, ու-նեմ յու-նեմ եւ փեղ ու-նեմ: *rit.* Այլ սիր — ցիւն ք վառեմ, իւ-  
 նեմ: *f* քիչ լեմ ծաղիկ ծաղիկ ծաղիկ ծաղիկ: *D.C.*

սիրե եւ-սիր ք սիր-տու, իւ-նեմ եւ, նեւ որ-մեւ-նեւ, որ իւ սիր — յուճ ցիւ-րա-նեւ:  
 եւ-սիր ք սիր-տու, իւ-նեմ եւ, ու-նեւ զար-նեւ իւն եւ, աշխարհ սիր — ցիւ-րա յու իւն եւ:



ՕՉԱՆ ՏՈՒՐԵԱՆ  
 Երաժշտագէտ  
 եւ նուագախումբի խմբավար

Գիշեր ցերեկ եւ քուճ չուճեմ,  
 Ունեմ չուճեմ՝ եւ քեզ ունեմ:  
 Ես քեզ համար վարդ եմ քաղել,  
 վարդը ծաղիկել՝ կրծքէս կախել,  
 վարդով կարօտ չ'առնըւիր,  
 Հեռուից հեռու եար չի սիրուիր:  
 Քանի որ է քեզ չեմ ահսել,  
 Քանի որ է ձէնդ չեմ լրսել,  
 Սիրտըս կըրտակ ձգեցիր,  
 Սիրտըս սիրովդ էրեցիր:  
 Ոչ առն ունեմ, ոչ քուճ ունեմ,  
 Ունեմ չուճեմ՝ եւ քեզ ունեմ:  
 Սէրըս սրտիկս է վառեմ,  
 Քո սէրն հագիս է այրեմ,  
 Ի՞նչ անեմ ես, ո՞նց դիմանամ,  
 Որ քս սիրոյն տիրանամ:  
 Աչքերըդ ծով, խնձոր երես,  
 էլ հերիք է հագիս վառեմ,  
 Ինչ էլ անես, դարձեալ իմն ես,  
 Աշխարհ գիտէ, որ դու իմն ես:

### ԻՄ ՑԱԻԸ

Lento

Երաժշտութիւն՝ ՏԻԳՐԱՆ ՏԷՐ ԱՆԳՐԷԱՍԵԱՆԻ

Առբի տեն չե թող լոկ ծա-րա բաժ. ցա-մաք գաւ-նել աղ-էրթն յա մայր,  
 Գամ-բիլ ծա-ղիկ հա-ւա-թի Տէջ ոհ չէ այն-չափ ցաւ ինձ; Եւ-մայր:

Առբբ տենչերով լոկ ծարաւած՝  
 Ցամաքգտնել աղբէրքն յամայր,  
 Ցամքի՛լ ծաղիկ հասակի մէջ,  
 Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Ջերմհամբոյրով մը դեռ չայրած,  
 Սա ցուրտ ճակատըս դալկահար  
 Հանգչեցնել հողէ բարձին,  
 Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ փռունջ մը,  
 Ժպտէ, գեղէ, հուրէ շաղեալ,  
 Գրկել սա ցուրտ հողակոյտը,  
 Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Քաղցր երազով յղի մրափ մը,  
 Չանդորրած դլուխս մրրկահար՝  
 Ննջել հողէ վերմակին տակ,  
 Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հազնիլ հիւղին մուր անուներ,  
 Ծրծեղ նորա մրմուր օդն յար,  
 Միշտ ցաւիլը միանգամայն,  
 Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հէք մարդկու թեան մէկ ոստը  
 Գօս՝  
 Հայրենիք մը ունիմ թշուառ,  
 Չօգնած անոր մեռնիլ աննշան,  
 Ո՛հ, այս է սոսկ ցաւ ինձ համար:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

### ՋԱՆ ԱՂԲԻԻՐ

Աղբիւր, աղբիւր, ջա՛ն աղբիւր,  
 Ջուրըդ գըլգըլան աղբիւր,  
 Վարդը բացուում է բոյրով,  
 Սէրն է ապրում համբոյրով,  
 Թէ սր գտնես իմ եարին,  
 Վարդ կը ցանեմ քո քարին:

Ալվա՛րդ, Ալվա՛րդ, ջան Ալվա՛րդ,  
 Բըլբուլն էրուում է անվարդ,  
 Հեռից վառւած քո սիրով,

Դեռ կուռում են քո սիրով,  
 Բայց ամենքից աշխարհում,  
 Քաջ կարօն է քեզ սիրում:

Աղբիւր, աղբիւր, ջա՛ն աղբիւր,  
 Ջուրըդ գըլգըլան աղբիւր,  
 Վա՛յ թէ ապին իմանայ  
 Ու ինձ վրայ բարկանայ,  
 Պէտք է մեռնենք երկուսով,  
 Աշխարքի մէջ նամուսով:

Վ. ՄԻՐԱԲԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ԱՐԻՆԵՐՈՒ

Խօսք՝ Մ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշտ. ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Դէպ ի ազատ դաշտ, եղ լայրևեղ, բրնու թեան ծոցը անգին, նոր ոյժ, կազդոյր ստանան մեր մար

ժինը, միտքն ու հոգին ու հոգին. կամփռան ու պարտքի սէր, մե—զ առաջնորդ ու ընկեր,

կամփռան ու պարտքի սէր, մե—զ առաջնորդ ու ընկեր: Այսօր հուրհուր ծաղիկը մար,

անոր յոյ—սը լուսաբեր, լուսաբերին ուրիշ և սուրբ—ձայր բարձր, ձայր վեր, ձայր վեր:

կամփռան ու պարտքի սէր, մե—զ առաջնորդ, մեջ ընկեր, կամփռան ու պարտքի սէր,

մե—զ առաջնորդ, մեջ ընկեր, ձայր բարձր, ձայր վեր, ձայր բարձր, ձայր վեր. ձայր

վեր, ձայր վեր, ձայր վեր, վեր, վեր: Զարսպիկ, ԿՐԱՍՏԻ ԵՐՄԻ շորթինայ ա—րին և ժր կայ—

գատ, կը ըստ ի ծանկ իր ա—մեն դին նը—սի—րու մով մը կամ դաժան, կամ դաժան: կամփռան ու

պարտքի սէր, մե—զ առաջնորդ, մեջ ընկեր, կամփռան ու պարտքի սէր, մե—զ առաջնորդ, մեջ ընկեր:

Դէպ ի ազատ դաշտ, եղ լայրևեղ, բրնու թեան ծոցը անգին,  
 նոր ոյժ, կազդոյր ստանան մեր մարմինը, միտքն ու հոգին.  
 կամփռի ուժն ու պարտքի սէր, մեզ առաջնորդ ու ընկեր:  
 Ազգին հուրքոտ ծաղիկը նուրբ, անոր յոյսը լուսաբեր,

Սկսուտին ուխտն է սուրբ — «Հայը բարձր, Հայը վեր»:  
 Ճարպիկ, զուարթ երգը շուրթին, հայ արին է ժիր, կայտառ,  
 Կը բուրէ կեանք իր ամէն գին, նուիրումով մը խանդավառ:  
 Կամքի ուժն ու պարտքի սէր, մեզ առաջնորդ, մեզ ընկեր:

Մ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ

### ԻՆՁ ՄԻ ՏԱՆՁԻՐ

Երաժշտութիւն՝ ՄԱԹԻՆՏ ՊՈՒՏԱՔԵԱՆԻ

*Introduction*

ինձ մի պանդոր, մի շարձարիր սիրեկան, Բոց աչերդ ու շրթներդ վարդ — Գա—  
 թոխտը մուսիքի իմ սրտին չեն բաւա կան։  
 նման, եր զան — կու — թիւն խոս քանում ե — ձ յաւիտեան, Այ սիրուն աղջիկ անուշ ժպտի — քանի  
 այժմայ ա — ջ — զիկ սեւ սեւ ա — յե — թն։ Է — յ, զա — ն, սեւ սեւ ա — ջ — թն։

Ինձ մի տանջիր, մի շարձարիր, սիրեկան,  
 Քո խոստումունքը իմ սրտին չեն բաւական.  
 Բոց աչերդ ու շրթներդ վարդանման,  
 Երջանկութիւն խոստանում են յաւիտեան:

Ա՛յ սիրուն աղջիկ, անուշ ժպտիսով,  
 Ա՛յ մաքայ աղջիկ, սեւ սեւ աչերով,  
 Հէ՛յ, զան, սեւ սեւ աչերով:

Քեզ տեսնելիս, ա՛խ մողորում է միտքըս,  
 Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտըս.  
 Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտըս,  
 Զօրութիւնըս հատաւ ինձնից, սիրեկան:

Ա՛յ սիրուն աղջիկ, անուշ ժպտիսով,  
 Ա՛յ մաքայ աղջիկ, սեւ սեւ աչերով,  
 Հէ՛յ, զան, սեւ սեւ աչերով:



ԵՐԳՉՈՒՇԻ ՄԱԹԻԼՏ ՊՈՒՏԱՔԵԱՆ  
ՃԱՄԲԻԴ ՄԵՌՆԵՄ (\*)

Խօսք՝ ՅՈՎՂ. ՅՈՎՂՅԱՆՆԷՍԵԱՆԻ

Երաժշտ. ՄԱԹԻԼՏ ՊՈՒՏԱՔԵԱՆԻ


*Introduction*

դու ձերս ե-կա — ր, ին-քոց սի-րու-ն — զար-դի պիս, սի-ր-ցրս վե-րի նե-րոց պա-րա — րս

ԲՇԼԻմ յե կար զար-դի պիս, զար-դի պիս: Արի ձար զանշու-ր — րի, կարս պեղ եմ ջուր ա-րի:

*ff*

(\*) Այս երգին բառերը կը գտնուին Երգարանիս 424-րդ էջին վրայ:



## Ա՛Խ, Ի՛ՆՉ ԼԱԻ ԵՆ

Ա՛խ, ի՛նչ լաւ են սարի վըրայ,  
 Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,  
 Անըրջային թիթեւասան,  
 Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:  
 Ահա՛ բացւեց թարմ առաւօտ,  
 Վարդ է թափում սարին-քարին,  
 Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,  
 Շընչում բուրմունք եղեմային:  
 Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վըրայ,  
 Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,  
 Շըւին փըչեց հովիւն ահա,  
 Աղջիկն ու սէրն անո՛ւշ, անո՛ւշ:  
 Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

## ԱՂԱՍԻՆ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Այն որ ծանօթ է պատմութեան ազգին,  
 Ծանաչէ վահան, Մուշեղ, Գարեգին:  
 Նոքա գնացին՝ Տէր ետ մեղ կրկին  
 Սէգ կարօն, Մուսէն և քաջն Աղասին:

Ապրին պաշտպանք մեր ազգին,  
 Կարօն, Մուսէն, Աղասին,  
 Կեցցեն դիւցազն մեր ազգին,  
 Սեգ կարօն, Մուսէն եւ քաջն Աղասին:

Միշտ պիտի պարծի Բանաքեռ աւան,  
 Որ ծնաւ ձեզ՝ պէս կորիւնք աննման,  
 Դուք Արարատայ ամուր ախոյեան,  
 Փառք և ցնծութիւն ասքանազեան տան:

Ապրին պաշտպանք... եւայլն:

Մասիս, Արագած, Նպատ ու Յիրաւն,  
 Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան.  
 Դուք նոցա գլխին կեցէք Հայաստան,  
 Ուր տեղ վտանգ կայ հասէք օգնութեան:

Ապրին պաշտպանք... եւայլն:

Մինչ մեր սեւ բախտէն ստատանն այն զազան  
 Լիկէր խեղճ Հայոց վշտօք դանազան,  
 Դուք անոր դարձաք սարսափ յաւիտեան,  
 Զօրս նորին վանեալ արեցիք ցիր ու ցան:

Ապրին պաշտպանք... եւայլն:

Չի մոռնար Անին այդ ձեր յաղթութիւն,  
 Որ Քրտաց, Պարսկաց արարիք նկուն,  
 Այնու Հայ գերեաց հասաք օգնութիւն,  
 Խուժք խուժք օգնեցիք դառնալ իրենց տուն:

Ապրիկ պատգամք . . . եւ այլն:

Ը. Վ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ

### ՔԱՐԱԻԱՆ

Քարաւանը շորորալէն  
 Հըրէն գալիս է,  
 Անապատի աւազներին  
 Համբոյր տալիս է:  
 Է՛յ քարաւան, արագ շարժելիք,  
 Որ մենք շուտ հասնենք,  
 Սիրած հարիս կարօտել եմ,  
 Որ մենք շուտ հասնենք:

Հուսնակ գիշեր, սիրուն գիշեր,  
 Որքան անուշ ես,  
 Երբ կը նայես անապատին,  
 Հուսաւորում ես.  
 Ասա լուսին, ինչո՞ւ այդպէս  
 Արագ կը վազես,  
 Ինձ պէս եարի՞՞դ կարօտել ես,  
 Արագ կը վազես:

Ե. ՍԱՐԴԱՐԵԱՆ

### ԶՈՒԱՐԹ ՆԱԻԱՍՏԻՆ

Զըւարթ նաւաստին  
 Ծովերուն վըրայ,  
 Հովի հոսանքին  
 Դիմագրաւ կ'երթայ:  
 Զերթ ծովու թըռչուն  
 Միշտ ծայրը կայմին,  
 Իր երգը հընչուն  
 Կը յանձնէ հովին:

Կ'անցնի վտանգէն  
 Աշխոյժ և ուրախ,  
 Ու չ'ազդեր իրեն  
 Մըրրիկն անգամ վախ:

Սեւ ամպն ալ վերէն  
 Երբ իջնէ գըլխուն,  
 Կը կրկնէ նորէն  
 Իր երգը հընչուն:

Զ. Շ. ԱՍԱՏՈՒՐ

### Ա Շ Ո Ւ Ն

Դեղնած դաշտերին  
 Իջել է աշուն,  
 Անտառը կըրկին  
 Ներկել է նախշուն:  
 Պաղ-պաղ մեզի հեա  
 Փըշում է քամին,

Քշում է տանում  
 Տերեւը դեղին:  
 Տխուր հանգերից,  
 Ամէնքը տրտում,  
 Քաշում են կամաց  
 Իրենց տունն ու բուն:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

### ՎԻՇՏ ԱՌ ՇԱՅՐԵՆԻՍ

*Tempo di marcia*

Թշուառ հայրենիքի ո՛հ դու լառ հերիք, հոսես ար-գուսույ՜ ին հեղիկ հե-ղիկ,  
 ո՛հ, թո՛ղ հանդարտին հառաչանքդ ու լաց-թող Ա-ռե՛ տըխուր մուսայղ ողբա-սաց:  
 մուսայղ ող-բա-սաց: Քողըդ առ մէկդի, թո՛ղ աշկունքդ ժրպարեն զէ՛մ մայրախորտի  
 ին հայ պանդորդին, որ շեռն ի խա հայտ՝ մէջ օ-գոսար մայրաց, ին լայ ին վրան՝ փառքդ անմոռաց:

Թշուառ Հայրենիք, ո՛հ դու լառ հերիք,  
 Հոսես արտասուք քո հեղիկ հեղիկ,  
 Ո՛հ, թո՛ղ հանդարտին հառաչանքդ ու լաց,  
 Թո՛ղ լըռե՛ տըխուր մուսայղ ողբասաց:

Քողըդ առ մէկդի, թո՛ղ աշկունքդ ժրպարեն  
 Դէ՛մ մայրախորտ քո հայ պանդորդին,  
 Որ ձեռն ի ճակատ՝ մէջ օտար վայրաց,  
 Կուլայ քո վըսեմ փառքդ անմոռաց:

Հայրենիք, քո սիրտըդ բացաւ ծաղիկ,  
 Կո շուրջըդ ներկեց այգըդ գեղեցիկ,  
 Ե՛լ, ե՛լ արջնաթո՛յր այդ ամպոց տակէն,  
 Որ վեց դարերով գըլսւխըդ ծածկեն:

Ե՛լ, ե՛լ ձեռքդդ տուր, որդի քո եմ ես,  
 Տո՛ւր որ համբուրեմ սիրով սըրտակէզ,  
 Եւ քեզ սիրտ մ՛ուռնիմ, տամ գանի յստար,  
 Զոր Հայութիւնն ինձ տուաւ քեզ համար:

Յ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ



Խօսք՝ ՇԱԽԱՐՀ ՔՇՆՅ. ՄԵՇՐՈՊԵԱՆԻ

Երաժշտ. Յ. ՓԱՓՈՋԵԱՆԻ

Հայ ա - րի նե՛րն Հայ յաւ - րան, օ - րա - րու թե՛ան ա - փե - րին, ի՛նչ - քի ընծայ կը ի՛նչ - քե՛ն իրենց փառքն անու -  
 աւան: Շող կ'ար - ձակին փարոս - ներ ու կը ծաղկին փոքր ու զան, իջջոր մտքի սարոս - շան սար - մե - նա -  
 կան եւ յուս ներ շող կար - ներ: Հը - սարոս թե՛ան մեր դա - րուն զարչաւ աւա - խուճ խաղ զը -  
 ջա - կ, խո - սան հողին ան - մը - ջակ, փերցնեն չե - ցին այ փա - րուն, Արդ, խաղ զա չի՛ք հե - ու ա - սոր  
 ով հայրե - նի սրօր - նե - ր եւ հի - սե - ցի՛ք հա - րօր - ներ, ուրեմն յերան փարս - սոր: Հը... ւո - ր:

Հայ արիներն, Հայաստա՛ն,  
 Օտարութեան ավերէն,  
 Քեզի ընծայ կը բերեն  
 Իրենց կամ քերն անսասան:  
 Շող կ'արձակին փարոսներ,  
 Ու կը ծաղկին վարդ, շուշան,  
 Հըզօր մտքի սարուշան,  
 Արմենական հերոսներ:

Հրպարտութեան մեր դարուն  
 Դարձած անխոնջ քաջ մըշակ,  
 Խոսքան հողէն անմըշակ  
 Կերանն ցեղին նոր դարուն:  
 Արդ, խայտացէ՛ք հեռաւոր՝  
 Ո՛վ հայրենի արօտներ,  
 Եւ հիւսեցէ՛ք նարօտներ  
 Ուխտեալներուն բիւրաւոր:

Օ Ր Օ Ր

— Անուշ քնիկ աչերն առեր,  
 Անուշ հովերն ալ տարուբեր,  
 Իմ տատրակիս քունն է եկեր:  
 Անուշ երգով ըսեմ օրօր:  
 = Ես քունն չունիմ, անգո՛ւլթ  
 մայրիկ,  
 Հերիք աչերս կապես, հերի՛ք,  
 Մէկ պահիկէն կ'ընեմ պահիկ,  
 Չիս արձակէ, մ'ըսեր օրօր:

— Արցունքներդ մարգարտի պէս  
 Երեսդ ի վար ի՞նչ կը թափես,  
 Մի՛ լար ձագուկ, մի՛ լար,  
 մեղք ես,  
 Ով կ'ուզես՝ ան ըսէ օրօր:  
 = Սիրտդ քար է, ալ հասկցայ,  
 Լացի, լացի, ճար չգտայ,  
 Ալ քնանամ, ճարը չկայ,  
 Էրկա՛ն, էրկա՛ն ըսէ օրօր:

## ԵՍ ԵՂԷ ՔԵՉ ՉԷՅՐԱՆ

Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն,  
է՞ր իմ սիրտըս կ'անես եարալու արիւն,  
Դու ես իմ սիրելի աղա և պարոն,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

Պաղչի դուռըն բաց է, այս է լաւ վախտըն,  
Չալում ծոցըդ էլ բաց, մըտնեմ դըրախտըն,  
Թող ես շամամ քաղեմ, դու նըստիր թախթըն,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

Գիտեմ որ դու քանց զիս սիրոյ թամահ ես,  
Նըռներդ հող կը դառնայ, է՞ր պինդ կու պահես,  
Թող համբուրեմ օրհնեմ, հոգով զարդարուես,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

Ձինչ ձուկըն ջըրէն դուրս ես կուզամ տապակ,  
Դու էլ իմ սիրովըն ծարաւ ես, պապակ,  
Ապա է՞ր կու մընամ ք մեք միմեանց փափաք,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան,

էլ չունիմ սիրելի քանց քեզ պատուական,  
ինձ կարօտ մի՛ թողուլ նազլու սիրական,  
կու մեռնիմ, կու մընաս դու ինձ պարտական,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

Երեսըդ նըման է կարմրափայլ վարդին,  
Թող քու հայրը մեռնի, ապրի իւր օրդին,  
Բալքի բահմ անես դուն զարիպ ճամբորդին,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

Բարձին վրայ բազմիս ի մէջ դարպասին,  
Մայիլ եմ աչքերիդ, հազիդ աղլասին,  
Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին,  
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ



## ԻՆՉՊԷ՞Ս ԴԻՄԱՆԱՄ

Չըգեցիր զիս քո տուն,  
Թողիր հեռացար,  
Ա՛խ, թողիր գացիր դուն  
Եւ զիս մոռացար:

Որ կարդամ մինչեւ լոյս,  
Մի քիչ հովանամ,  
Դընեմ ծով աչերուս,  
Պառկեմ քնանամ:

Ես այս ծով ցաւերուն  
Ինչպէ՞ս դիմանամ,  
Թըղթիկ մ'ալ չես գըրեր,  
Յաւերդ իմանամ:

Չըգեցիր զիս քո տուն,  
Թողիր հեռացար,  
Ա՛խ թողիր գացիր դուն  
Եւ զիս մոռացար:

Ա. ՎՇՏՈՒՆԻ

## ՍԻՐՈՒՆ ԵՍ ՀՈԳԵԱԿ

Սիրուն ես, հոգեակ, սէր ես դուն սիրուն,  
Մատաղ եմ կտրել քո լոյս աչերուն,  
Էրւած ու գերւած՝ չոքել կը սպասեմ,  
Մէկ անգամ խօսիր, էդ լեզուդ լըսեմ:

Բլբուլը երբ ֆեզի սեսնի,  
Իր փափաքին պիտի-պիտի հասնի,  
Թե որ լինի միտս ֆեզի մօս,  
Էլ չի ֆաշի վարդի կարօս:

Սարէն ու ձորէն ծաղկունք եմ ջոկել,  
Քնքուչ ու ընտիր շրթունքով պոկել,  
Վառվռուն ակունք մէկ տեղ փունջ կապել,  
Եկել եմ դուռըդ, փէշըդ եմ կապել:

Բլբուլը երբ ֆեզի սեսնի,  
Իր փափաքին պիտի-պիտի հասնի,  
Թե որ լինի միտս ֆեզի մօս,  
Էլ չի ֆաշի վարդի կարօս:

Ուրիշ բան չունիմ քեզ նըւէր տալու,  
Ընդունիր ձօնըս, մի՛ թողնիր լալու,  
Դէ՛հ, ա՛ռ, մուրազ տուր, վեր կենամ գընամ,  
Սիրային փակած գըռներն ես բանամ:

Բլբուլը երբ ֆեզի սեսնի,  
Իր փափաքին պիտի պիտի հասնի,  
Թե որ լինի միտս ֆեզի մօս,  
Էլ չի ֆաշի վարդի կարօս:

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

Մ Ա Յ Ր Ի Կ

Խօսք եւ երաժշտութիւն՝ ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻԻ

*Moderato*

Զուխտակ շամամներդ ինձ համար, մայրիկ,  
 կաթնադրիւր են եղել ինձ համար, մայրիկ,  
 Տատրակի պէս շատ կամ արեւ ելեւէջ,  
 Կրծքիդ վրայ մաքուր՝ սուրբ տաճար, մայրիկ,  
 Սուրբ տաճար, մայրիկ:

Ինձ համար հոյակապ կեանքըդ ես մաշել,  
 Հրճել, ուրախացել, վրրաս ես աշել,  
 Մինչեւ մեծանալրս, ինչե՛ր ես քաշել,  
 Մնացել ես անքուն անդադար, մայրիկ,  
 Անդադար, մայրիկ:

Փոխարէնը ես քեզ ոչինչ չեմ արել,  
 Մօտըդ չեմ մնացել, չեմ մխիթարել,  
 Քո սուրբ պատուէրները ես չեմ կատարել,  
 Թողիլ եմ իղձերըդ անկատար, մայրիկ,  
 Անկատար, մայրիկ:

Ձիւանին եմ, սխալմունքքս զգում եմ,  
 Ես քո հոգու համար միշտ աղօթում եմ,  
 Ներիր քո մեղաւոր սրգուն, խնդրում եմ,  
 Եղիր դու երկնքում ինձ սատար, մայրիկ,  
 Ինձ սատար, մայրիկ:

*rall.*



Երեւանի ժողովրդական երգի - պարի պետական անսամբլի  
գեղարուեստական ղեկավար Թ.Ա.ԹՈՒԼ Ա.Լ.ԹՈՒՆԵԱՆ

## Զ Ա Ն Գ Ի

Զանգին եկաւ կռիւ տալով,  
Խոր քարերը իրար տալով,  
Սեւան ծովից մինչեւ Արագ,  
Արտ այգիներ զարդարելով:

Զանգի՛, գիտեմ դարդ՝ շատ ունես,  
Բարձրը ձայնով բողոքում ես,  
Դարդս խառնեմ դարդերիդ հետ,  
Արտասուքըս ջրերիդ հետ:

Ժայռի գլխին բանտ է շինուած,  
Անուշ հարըս մէջը քնած,  
Հարուստ Զանգի, ուժըդ ցոյց  
տուր,  
Ափիդ կանգնեմ հարըս ինձ տուր:

Խիտ մազերըս պարան հիւսեմ,  
Ժայռի գլխից վար քաշ անեմ,  
Կամարունքերս մէջքիդ կապեմ,  
Քաղցրը հարիս կամուրջ կապեմ:

Էլ մի՛ վազիր դէպի յառաջ,  
Կուրծքդ դէմտուր ժայռի առաջ,  
Ճիչ արձակիր, ժայռը դողայ,  
Բալքեամ բանար ջանիս թողայ:

Թէ՛ չը հասայ իմ մուրազին,  
Սեւ դիակըս տուր Արագին,  
«Սեւ աչերը» կեանքը զոհեց,  
Առանց հարի ապրիլ չուզեց...

## ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր, երազի նման  
Անցաք գնացիք, ալ չէք դառնալու,  
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհող օրեր,  
Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն,  
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ,  
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,  
Բոպէ չը մնաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը յաջորդեց սորան,  
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս,  
Ապուլլոն տուեց ինձ իւր քնարը,  
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, այդ քնարն իմ ձեռքում հնչեց  
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,  
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,  
Ուրախացուցիչ չը գտայ մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,  
Որ այդ ցաւերից ազատուելու չեմ,  
Որչափ իմ ազգըս կը մնայ ստրուկ,  
Օտարների ձեռք՝ անխօս, ախրադէմ:

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ  
Թըռաք գընացիք անդարձ յաւիտեան,  
Ես այն ժամանակ անհող ու ազատ,  
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Տէրութեան շղթան ինձ զգալի չէր,  
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը,  
Ձեզանից յետոյ ծանրացան նոքա,  
Ո՛հ, անիծում եմ ես այդ օրերը:

Լո՛ւռ կաց, դու, քնա՛ր, ալ մի՛ հնչեր ինձ,  
Ապուլլո՛ն, յետ առ դարձեալ դու նորան,  
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,  
Ձոն բերել կեանքը սիրած աղջրկան:

Ես պիտի դուրս գամ գէպի հրապարակ,  
Առանց քընարի, անզարդ խօսքերով,

Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,  
Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում ալ ի՞նչ սեւ քնար,  
Սո՛ւր է հարկաւոր կարիճի ձեռքին,  
Արիւն ու կրակ թշնամու վերայ,  
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:

Թող պատգամախօսը հնացած Դէլֆի,  
Իւր եռոտանու վըրայ փըրփըրի,  
Թող միջին դարու դազափարներով,  
Ամբոխը խաբել ճգնի, աշխատի:

Թող նա թարգմանէ զբարտութիւնը,  
Թող մխիթարուի ծովի ափերում,  
Մենք ազատութեան ենք միայն թարգման,  
Միայն այս խօսքըս ունեմ բերանում:

Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,  
Խընայիր թշուառ մեր անտէր ազգին,  
Մի՛ տար գոհ գնալ թշնամիների,  
Նա է՛լ չի լըսում Դէլֆեան հարցուկին:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ

## Ի Մ Փ Ե Ր Ի Ն

Կէս գիշերին գետի ափին  
Ես նըստած եմ սիրովառ,  
Գետն հոսում է, և հոսանքին  
Ես նայում եմ միալար:

—Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին  
Քընած գետը վրդովում,  
Ալիքները խըփում ժայռին,  
Ծերուկ ժայռը լըւանում:

—Ո՞վ է աստղոտ, զով գիշերին  
Լուսնի շողով զարդարւում,  
Շուշան-կըրծքին, սև մազերին  
Գոհար ցօղեր սըրբակում:

—Ո՞վ է չքնաղ բարի-լուսին  
Ծաղիկները համբուրում,  
Մըշուշային փըրփուրի մէջ  
Արշալոյսին ողջունում:

Նա հեզ գետի լուռ փերին է,  
Յնորքներիս սիրելին,  
Նա իմ սըրտի գիցուհին է,  
Վառ երգերիս նազելին:

Եւ մինչեւ լոյս գետի ափին  
Ես նըստած եմ քարացած,  
Գետն հոսում է, և հոսանքին  
Ես նայում եմ շըւարած:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

# *Tempo di marcia*

Այս երգին բառերը կը գտնուին Երգարանիս 183-րդ էջին վրայ։

ԻՆՔԴ ԱՆՈՒՇ

Էսօր Արազն էս քընացել,  
 Լողացել՝ փերի էս դարձել,  
 Խաւարին շաւաղ էս գըցել  
 Անձան հրեշտակի նըման։

Ինքդ անու՛ւ, խօսքդ անու՛ւ,  
 Շուկչրդ անու՛ւ,  
 Շըրթուկներդ համբուրեցի՝  
 Զգացի ամենից անու՛ւ։

Հագել էս վարդագոյն աալաս,  
 Փաթաթել վըզիդ ալ ու խաս,  
 Պըճնըւել էս, կը շողշողաս  
 Գարնան արեղակի նըման։

Ինքդ անու՛ւ... է եւայլն։

Զուկնեմ գըրիչ, լեզու ճարտար,  
 Գըրեմ, գոզեմ անձիդ յարմար,  
 Դիտողիդ կանես շանթահար,  
 Ամառւայ կայծակի նըման։

Ինքդ անու՛ւ... է եւայլն։


ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

ՔԷՄԱՆՉԻՍՏ ՌՈՒԲԷՆ



ՏԱՍՆԵԻԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ե Ր



Կ Ա Տ Ա Կ

Երաժշտութիւն՝ ԿԱՐՕ ՉԱԲԱՐԵԱՆԻ

*Moderato*

Արարչի-ցի մի-զով վազում եմ ու - ուրա ուրա, շուրջըս հա-ղիկ-

ներ, թի - թեւ ներ փոյն փոյն: Հոյ, քոնտ ցի մի-կին, յոյս էլ մի - պն,

*acceler.*

սուն ցուրաց, բա-ցի, պե - սայ, վայ... ջեւ-փունս էլ թի - թեւ էլ կայ...

Պարաէզի միջով վազում եմ ուրախ, ուրախ,  
 Շուրջըս ծաղիկներ, թիթեռներ գոյն-գոյն:  
 Հո'պ, բոնեցի մէկին, յետոյ էլ միւսին,  
 Տուն տարայ, բացի, տեսայ, վա՛յ...  
 Չեւքումս է'լ թիթեռ չըկա՛ր...

Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

# ԾՈՅԼ ՓԻՍՕՆ

Երաժշտութիւն՝ ԿԱՐՑ ԶԱՔԱՐԵԱՆԻ

*Moderato*  
*p*  
 Անք փիսօն շա-տոյլ է, Վեր փի-սօն շա-տոյլ է, Չի վազում ինձ հե-տ, Չի խօսում ինձ  
 հեղ, աւելոյց օ — ը լուս պատկած է յո՛րաբար: — փիսօ փրօճիւր է պատմի. — Վ՛ր՛նա  
*piu mosso* *poco lento* *piu mosso* *poco lento* *piu mosso*  
 — փիսօ՛, ին-չո՛ւ շեռ խաղում. — Վ՛ր՛նա... — փիսօ՛, ու-տե՛ղ եւ ուղում. — Վ՛ր՛նա... — փիսօ՛, ինչ  
 շեռ խօսում. — Վ՛ր՛նա... Վ՛ր՛նա... *Moderato*  
 Ին էրպիւս իւր ինչ, Երանում է, Երանում,  
*Allegro*  
 ին ոչ ին էրպիւր շիւրջաւորաւ-ծում: Եւ էլ վազ-ուս-նիչ պարպիչ կ'ըջ  
 Եւս՝ ու Վեր ին-չու-րի-ն է ըն-կեց կ'ը յատմում. Եւս փրօճիւր — ին-չու-ր պարպիչ է պա-  
*Andantino*  
 իում, իսկ չե՛րեկ — ին-չու-ր վազվզում, իսկ — յում: իսկ յու-տե՛ղ փի-սօ,  
*pp*  
 Երանս շա-տոյլ-նայ ու փր-սոս Վ՛ր՛նա — Եւս — 4:

Մեր փիսօն շատ ծոյլ է,	Պատկած է տըխուր:
Մեր փիսօն շատ թոյլ է,	— Փիսօ, գըլո՞ւխդ է ցաւում:
Չի վազում ինձ հետ,	= Մը՛նա...
Չի խօսում ինձ հետ,	— Փիսօ՛, ինչո՞ւ չես խաղում:
Ամբողջ օրը լուս,	= Մը՛նա...

— Փիսո՛, ուտե՞լ ես ուզու՞մ :  
 = Մը՛ռռռ...  
 — Փիսո՛, ինչո՞ւ չես խօսու՞մ,  
 = Մը՛ռռռ... Մը՛ռռռ...

Ու նստած բարձին,  
 Մըռռում է, մըռռում,  
 Իմ ոչ մի հարցին  
 Չը պատասխանում :  
 Ես էլ վազուանից  
 Պարտէզ կը գնամ,

Ու մեր Փողարին  
 Ընկեր կը դառնամ,  
 Նա գիշերները  
 Պարտէզ է պահում,  
 Իսկ ցերեկները  
 Վազվըզում, խաղում :  
 Իսկ դու, ծոյլ փիսո,  
 Մըռռա շարունակ,  
 Ու մըռռա՛ մենակ...

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐԵԱՆ

### Փ Ի Ս Օ Ն


Երաժշտութիւն՝ Մ. ՄԻՐՉԱՅԵԱՆԻ

*Allegretto*

փիսօն, փիսօն մը — լա — ւան, Թաւ — րիզ Թողեց փաւ — խաւ չան, լե — ցուն . Թաթ — խան,  
 եր — կար պոչ, ինչ որ ու — չեց՝ ա — սին ոչ . լե — ցուն Թաթ — խան,  
 եր — կա — ռ պոչ, ինչ որ ու — չեց՝ ա — սին ոչ :

Փիսօն, փիսօն մը լաւան,  
 Թաւրիզ Թողեց փախաւ վան,  
 Լեզուն Թաթխան, երկար պոչ,  
 Ինչ որ ուզեց՝ ասին ոչ :

Փիսօն գընաց գողէ գող,  
 Փորը դատարկ, սիրար գող,  
 Դունչը մեկնեց կովկիթին,  
 Շերեփն իջաւ ճակաաին :



Խ Ո Ջ Ի Կ

Երաժշտութիւն՝ Լ. ՍԱՅԱՐԵԱՆԻ

*Allegretto*

Կեղ-տոյտ խո-ւրիկ, խուճուճ պո-չիկ, ամ-բողջ օ-րը խըռ խըռ անուճ,  
 չի-խե — բուճե՛ս ես դու թաւալուճ: — Ե՞ս եմ կեղ-տոյտ, ա՛յ ան-աս —

*meno mosso e rubato*

*poco accelerando*

ձօթ, բա՛, քո բակը ո՞վ է մաքրում, բուճե՛ս ու պուճախ մա-քուր պահում:

*rubato* *poco accelerando*

— Ե՞ս եմ կեղ-տոյտ, Ե-պա ինչ-ո՞ւ մեծ պո-չե-րիկ, ես-չի ժամիկ,  
 ինչ ես ու-պում, եկը՛ս էլ հա-մով ի՞Ֆ ի՞Ֆ անուճ: —

*poco rit.*

— Կեղտոտ խողիկ, խուճուճ պոչիկ,  
 Ամբողջ օրը խըռ խըռ անուճ,  
 Ցիխերունն ես դու թաւալուճ:

— Ե՞ս եմ կեղտոտ, ա՛յ անամօթ.  
 Բա՛, քո բակը ո՞վ է մաքրում,  
 Քուճն ու պուճախ մաքուր պահում:

Ե՞ս եմ կեղտոտ, ապա ինչո՞ւ,  
 Մեծ տօներին ճաշի ժամին,  
 Ինձ ես ուտում, հետն էլ համով ի՛Ֆ ի՛Ֆ անուճ:

Ա. ՍՏԵՓԱՆԵԱՆ



## ՈՍԿԵՐԻՉ ՂԱԶԱՐ

Երաժշտութիւն՝ Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ



Ոսկերիչ Ղազար, արեւիդ համար,  
Մատնի մը շինի մատներուս համար,

Ոսկերիչ Ղազար, արեւիդ համար,  
Ջուխտ մը օղ շինի աղանջիս համար:

Ոսկերիչ Ղազար, արեւիդ համար,  
Գօտի մը շինի գիւմ մէջքի համար:

## ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ

Երաժշտութիւն՝ Ա. Տ. ՂԵՒՈՆԴԵԱՆԻ



Բացւել են գարնան  
Օրերը պայծառ,  
Արի՛, իմ ընկեր,  
Գրնանք դէպի սար:

Կանչում են գարնան  
Հաւքերն անհամար,  
Գրնանք, իմ ընկեր,  
Գրնանք դէպի սար:

Երգենք նրանց հետ,  
Երկնահաս վերեւ,  
Կեանքը լայնարձակ,  
Ծաղիկ ու արեւ...

Վեր կաց, վե՛ր, ընկեր,  
Ելնենք դէպի սար,  
Բացւել են գարնան  
Օրերը պայծառ:

**ԼՈՒՍԸ ԼՈՒՍԱՑԱԻ**

Երաժշտութիւն՝ ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Լուսը լուսացաւ, բարին շատացաւ, վաղ լուսաբացին, Գութան ջան, վարի, ահօսը շարի, Թափ տուր թեարա, շուռ տուր սեարա, Հոռովէլ, հօ... հօ...

Լուսը լուսացաւ, բարին շատացաւ,  
 վաղ լուսաբացին, Գութան լրծեցին,  
 Հոռովէլ, հօ... հօ...

Գութան ջան, վարի, ահօսը շարի,  
 Թափ տուր թեարա, շուռ տուր սեարա,  
 Հոռովէլ, հօ... հօ...

3. ԹՈՒՄԱՆԵԱՆ

**ՀԷՅ, ԶԱՆ, ԱՆՑԱՆ**

Allegro

Երաժշտութիւն՝ ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Հէյ ջան անցան բուք ու բորան, ջր՝ ծնա պապին ջր՝ նի հեյ, հոյն է խաղում  
 սար ու դաշտում, Օ՝ ը պայճառ, բու՝ բա՝ էֆի. հոյն է խաղում  
 սար ու դաշտում, լ՝ ը պայճառ, բու՝ բա՝ էֆի.

Հէյ, ջան, անցան բուք ու բորան,  
 Զրմեռ պապին ձիւնի հեյ,  
 Հոյն է խաղում սար ու դաշտում,  
 Օրը պայճառ, բուրաւէտ:

Հէյ, ջան, շուտով երգ ու տաղով  
 կըգայ գարուն ցանկալի,  
 Պայճառ արեւ, կանաչ տերեւ,  
 Ծառ ու ծաղիկ կը բերի:

2. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ



### ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Երաժշտութիւն՝ Գ. ՄԻՐՉԱՅԵԱՆԻ

*Allegro*

Վար-դը տալիս է ճընծաղիկ, Եղբիւ կապոյտ մանուշակ, Բայի-սի-է Բայ-  
 ւում է վար-դը, Եղբաբի երգում ա-նու-շակ, ա-նու-շակ:

Մարտը տալիս է ձրնծաղիկ,  
 Ապրիլ՝ կապոյտ մանուշակ,  
 Մայիսին բացուում է վարդը,  
 Սոխակն երգում անուշակ:  
 Յունիսը մեզ խոտ է տալիս,  
 Իսկ Յուլիս առատ ցորեն:  
 Օգոստոսը՝ տանձ ու խնձոր  
 Եւ ուրիշ հասուն մրրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է  
 Խաղողի ամէն տեսակ,  
 Հոկտեմբերը՝ կարմիր դիւնի,  
 Նոյեմբերը՝ բողկ ու տակ:  
 Դեկտեմբերին ձիւն է գալիս,  
 Յունուար ծածկում սար ու ձոր,  
 Փետրուարին սկսում է  
 Փոփոխակի ցուրտ-տաք օր:

### ԿԱՐՄԻՐ ՄԱՐԶԱՆ

Երաժշտութիւն՝ Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ

Կար-միր մար-զան, ախ-պեր զան, Դիւի, Դի-ւի, Դիւի զան, զան:  
 ոս-կէ թի-ն-զան ախ-պեր զան, Դի-ւի, Դի-ւի, Դիւի զան, զան

Կարմիր մարջան, ախպէր ջան,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան,  
 Ոսկէ Փինջան, ախպէր ջան,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան:  
 Խուճուճ գառն կս նոր ծընած,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան:

Վարդի ծառն կս նոր ծաղկած,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան:  
 Կարմիր խնձոր կարմրաթուշ,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան:  
 Խնձորի պէս նուշ-անուշ,  
 Դիւի, Դիւի, Դիւի ջան, ջան:

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Երաժշտութիւն՝ ԳԵՂԱՐԻԿԻ

Թող քեզ ծածկեմ, անգին բալաս, օ-րօ-րեմ ի՞նչ — էի. օ-րը մթնեց, լուսինն է-լաւ,  
 Գիշեր է հի-մի. օ-րը մթնեց, լուսինն է-լաւ, Գիշեր է հի-մի:

Թող քեզ ծածկեմ, անգին բալաս, օրօրեմ, քընի,  
 Օրը մթնեց, լուսինն էլաւ, գիշեր է հիմի:  
 Արեւն արդէն գնաց յոգնած, քընեց մօր գրկում,  
 Դու գեռ արթուն, երեսըդ բաց, խօսում ես, երգում:  
 Քամին մեջեց, ծիտ ու ծղրիթ քնել են մուշ-մուշ,  
 Մեռեւեմ լիզուիդ, վարդ ծիծաղիդ, քնի՛ր, իմ անուշ:  
 Էգուց նորից արեւ կը գայ, քեզ համար նոր օր,  
 Մութն է, բալա՛, քնիր հիմա, քեզ օրօր, օրօ՛ր:

Գ. ՄԵՍԵԱՆ

ՄԱՅԻՍԸ

Կանոն՝ Ռ. ՅԻՆԴԼԷՐԻ

Զուգ ուած, զար-գար-ուած Թա-ւիշ կա-նան-չալ, կը  
 փայ-լին գաղ-տեր Ոս-կի ճա-ճան-չալ:


Զուգուած զարդարուած  
 Թաւիշ կանանչով,  
 Կը փայլին դաշտեր  
 Ոսկի ճաճանչով:  
 Մայիսը սիրուն  
 Գոհար է մաղեր,  
 Ծաղիկներն ու խոտ  
 Արծաթով շաղեր:  
 Հազար հազարով  
 Թռչուններ կ'երգեն,  
 Դաշտերը կանանչ  
 Կը զընգան նորէն:

Ա. ԽՆԿՈՑԵԱՆ

Մ Ա Ր Տ

Երաժշտութիւն՝ 3. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ


*Animando*




Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս, մարդու հանճարը չբացի, էս որ ուրախ որ կանի, վա-ըն՝ անճրեւ ու քա-միս,



և ուաւօրը՝ պայծառ օր, կէս-օրը՝ մեք ու անպարտ: մին հազնում է ըսպիտակ, մին կանաչին է քաւիս,



մի օր ցարդ է, մի օր քաւի, մին խնդում է, մին լալիս: Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս,



մարդու հանճարը չի քա-լիս. էս-օր ուրախ որ կա-նի, վա-ըն՝ անճրեւ ու քամի:

Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս,  
Մարդու հանգիստ չի տալիս,  
էսօր ուրախ օր կ'անի,  
վաղը՝ անճրեւ ու քամի:  
Առաւօտը՝ պայծառ օր,  
Կէսօրը մութ ու ամպոտ:  
Մին հազնում է ըսպիտակ,

Մին կանաչին է տալիս,  
Մի օր ցուրտ է, մի օր տաք,  
Մին խնդում է, մին լալիս:  
Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս,  
Մարդու հանգիստ չի տալիս,  
էսօր ուրախ օր կ'անի,  
վաղը՝ անճրեւ ու քամի:

3. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

Մեր գիւղացու հարսանիքում,  
Տղերքն ուրախ եալլի են խա-  
ղում.  
Կոնարոնուկ ծլլաշարւում,  
Կրնկակոխ քայլում, շարժում,  
Ապա քողցրր ձայնով երգում.  
«Եալլին ա՛ա՛, եալլին ա՛,  
Մեր սիրտ, ձեր սիրտ բարին ա՛,  
Հէնց էս խաղի տարին ա՛,  
Հըլէ՛, հըլէ՛, բարին ա՛,

Հէնց էս խաղի տարին ա՛...  
Մին ձա՛խ, մին ա՛ջ,  
Հէ՛յ, հա՛յ, հէ՛յ, հա՛յ,  
Թռչենք առաջ,  
Հէ՛յ, հա՛յ, հէ՛յ, հա՛յ»...  
Ահա՛ այդպէս թռչկոտում են,  
Իրանք իրանց կոտորում են,  
Առաջ կամաց — ծանր ու օրօր,  
Յետոյ միջակ, ապա յորդոր...

\* \* \*

«Ասա՛, տեսնեմ, մեր գիւղում  
կովերն ի՞նչպէս են կթում»:  
— Ահա՛ այսպէս են կթում. —  
Հորթին կապում մօր ծնկից,  
Ծիծը խլում զաւակից,  
կովկիթն իրանց ձեռքն առնում,  
Ապա կողքին կըկըզում, —  
Փը՛ււ, բը՛ժժ...  
Փը՛ււ, բը՛ժժ...

Ահա՛ այսպէս են կթում,  
Փոքրիկ հորթին լացացնում...  
\* \* \*

«Ո՞նց են հարում խնոցին,

Հէնց էս օր էլ հարեցին»:  
— Ահա այսպէս հարեցին. —  
Թուր ծառից կապեցին,  
Հաստ խնոցին կախեցին,  
Երկու շարթուայ հաւաքսը,  
Նրա մէջը ածեցին,  
Տաք ու զով ջուր խառնեցին,  
Ապա ծայրից բռնելով,  
Տարան, բերին, շարթեցին, —  
Թըլը՛ խկ, շըլը՛ խկ,  
Թըլը՛ խկ, շըլը՛ խկ...  
Ահա այսպէս հարեցին,  
Դեղին կարագ հանեցին:

ԱՂԵՔՍԱԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ

**Ձ Ի Ի Ն**

Երաժշտութիւն՝ ԿԱՐՑ ՉԱՔԱՐԵԱՆԻ

*Moderato*

Ձիւն, փափուկ ջիւն — է, սպիտակ ջիւն, ջիւն, փափուկ ջիւն — է, սպիտակ ջիւն, ինչո՞ւ ի — ջիր դաշտերին, ծաղիկներ մը — փել են փուռ, հայտ է — նը բակն ան — կո — ջիւն, հովն է նը — բանց ան — կո — ջիւն — է

Ձիւն, փափուկ ձիւն, սպիտակ ձիւն,  
Սեղմ իջիր դաշտերին,  
Ծաղիկներ մըտել են քուն,  
Հովն է նըբանց անկողին:

Հանգարտ, կամաց իջիր ցած,  
Որ ծաղկունք շարթնանան,  
Ծածկիր նըբանց քնքուշ, հեզ,  
Ըզգոյշ, ըզգոյշ անսահման:

Ձիւն, փափուկ ձիւն, սպիտակ ձիւն,  
Հանգիստ, խաղաղ իջիր վար,  
Ծաղիկներ մըտել են քուն,  
Ծաղիկները ցրահար:



### ՈՒՂԻՂ ԿԱՐԳՈՎ

(ՔԱՅԼԵՐԿ)

Կանոն՝ Ֆ. ՇՊԷՑԵՐԻ

U. f.

Ու-ղիղ կարգով կանգնինք շարքով. Շարքինք վաղտվաղտ Մենք դե-տի դաշտ

Մէկ երկու Մէկ ձախ մէկ աջ Մէկ երկու դե-տի ա-ռաջ

Ուղիղ կարգով,  
 կանգնինք շարքով,  
 Շարքինք վաշտ վաշտ,  
 Մենք դէպի դաշտ:

Մէկ երկու,  
 Մէկ ձախ, մէկ աջ,  
 Մէկ երկու,  
 Դէպի առաջ:

Միշտ անվարան,  
 Ընկեր անդին,  
 Ըլլանք պաշտպան  
 Հայրենիքին:

Մէկ երկու,  
 Մէկ ձախ, մէկ աջ,  
 Մէկ երկու,  
 Դէպի առաջ:

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

### ՈՒՆԷՐ-ՉՈՒՆԷՐ

Երգ՝ Ա. ՆԱՐԻՆԵԱՆԻ

Ու-ներ չու-ներ մէկկին ու-ներ Ե-րեք սագ. սագ. սագ. սագ.

Մէ-մէն մէկ սագ ու-ներ չու-ներ մէյ մէկ ձագ. ձագ. ձագ. ձագ.

Ունէր-չունէր  
 Մէկ կին ունէր  
 Երեք սագ,  
 — Սագ, սագ, սագ:  
 Ամէն մէկ սագ  
 Ունէր չունէր  
 Մէյ մէկ ձագ,  
 — Չագ, ձագ, ձագ:

Ճերմակ էին  
 Բոլոր երեք  
 Սագերը,  
 — Ճեփ ճերմակ:  
 Դեղին էին  
 Բոլոր երեք  
 Չագերը,  
 — Դեփ-դեղին:

Հ. ԱՂԱՔԱՔ

Օ Ր Օ Ր

Կանոն՝ Մ. ԱՆՅԵՒԻ

Նանիկ ըրէ անուշ հրեշտակ, Մըտաւ արեւն իր մօր գիրկը,  
 Հովի գովի թելի տակ, Ելան աստղեր ու լուսին,  
 Սիրունդէմքիդ վարդ է բացուեր, Աստղ ու լուսին գով հովի հետ,  
 Օրօ՛ր, օրօ՛ր, իմ հրեշտակ: Օրօ՛ր, օրօ՛ր, քեզ ըսին:

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ԱՅ Կ Ա Պ Ի Կ

Պարերգ Նորվեկեան

Պի՛կ պիկի պիկ, ա՛յ կապիկ, Մէկ վեր վեր կը ցատկես,  
 Հագեր ես ալ շապիկ, Մէկ ալ սուտ կը սատկես,  
 կապեր ես շալ գօտի, Կ'ոստոստես կուզէ կուզ,  
 կանգներ ես ոտքի: Հոս պուպուզ, հոն պուպուզ:

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ



ԵՐԳ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

*Moderato*

Աստուած տուաւ ի՞նչ ձեռքերով  
 Աշխատութիւն մեզի բաժին,  
 Ըսաւ՝ հոն է գանձն ապահով,  
 Ոսկիէն լաւ և թանկագին:

Օ՛ն, ընկերներ, ջանանք տքնինք յարատեւ,  
 Երգենք՝ ապա վաստակն ըլլայ մեր թեթեւ:

Առանց ջանքի չըկայ հաճոյք,  
 Բախտն սրոշած է մեր վիճակ,  
 Ուշիմ մարդը կ'ընէ խնճոյք,  
 Գոհ և ուրախ, ճոխ կամ միջակ:

Օ՛ն, ընկերներ, ջանանք տքնինք յարատեւ,  
 Երգենք՝ ապա վաստակն ըլլայ մեր թեթեւ:

Լ Ո Ր Ի Կ

Պարերգ Հայկական

Առաւօտուն փրչեց հով,  
 Արտը ծըփաց, դարձաւ ծով,  
 Արտին մէջէն թըռաւ լոր,  
 Թըռաւ ինկաւ ձորէ ձոր:

Կըլորիկ, գըլորիկ, ա՛յ լորիկ,  
 Օրոր-օրոր, շո՛ւտ զարձիր,  
 Արտիս մէջը մընացիր:

Կըլորիկ, գըլորիկ, ա՛յ լորիկ,  
 Օրոր-օրոր, շո՛ւտ զարձիր:


Առաւօտուն փրչեց հով,  
 Արտը ծըփաց, դարձաւ ծով,  
 Արտին մէջէն թըռաւ լոր,  
 Թըռաւ ինկաւ ձորէ ձոր:  
 Կըլորիկ, գըլորիկ, ա՛յ լորիկ,  
 Օրոր-օրոր, շո՛ւտ զարձիր:

Լորիկ, լորիկ, ա՛յս տարի  
 Արտըս ցաներ եմ գարի,  
 Ուր որ երթաս, շո՛ւտ զարձիր,  
 Արտիս մէջը մընացիր:

Կըլորիկ, գըլորիկ, ա՛յ լորիկ,  
 Օրոր-օրոր, շո՛ւտ զարձիր:

ԵՐԳ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Moderato



Առտուն կանուխ թէ ելլենք, Բաղցր է վաստակը դաշտին, Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք Գեղջուկ երգերը մերին,

Անցաւ դիշեր մութ ու սիւաւ, Ժպտին դաշտերը նորէն, Պայծառ արեւ ծագեցաւ Կանաչ լեռանց վրայէն:

Ելլենք աշխոյժ ի մեր երկ,  
 Հրաւէր կարդան թուչնոց երգ,  
 Աշխատութիւնը դաշտին  
 Սիրուն գանձն է աղքատին,  
 Թող ճոխն անդին նիրհէ խոր  
 Հեշտութեանց մէջ նորանոր,

Անոր կեանքին չեմ ցանկար,  
 Թէ սոխ ուտեմ ամէն օր:


Մշակին կեանքն ոսկի է,  
 Աղաղ, անփոյթ ու անդորր,  
 Գեղջուկունն երգ դայլայլն է  
 Սոխակի մը տարփաւոր:

Թող ճոխն առտուն ըսթափի,  
 Իր խոկն ունի ու վիշտեր,  
 Բայց այս կեանքը կը նմանի  
 Վերի կեանքին ցանկալի:

Առտուն կանուխ թէ ելլենք,  
 Բաղցր է վաստակը դաշտին,  
 Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք  
 Գեղջուկ երգերը մերին:

ՓԱՅՏԷ ԶԻՆ

Երգ՝ ՊՈՏՈՒՈՎԱՔԻԻ



Կող թը— ուր թը— ուր իմ էի, Զը— տաս մի— այն ա— քա—

- ցի. Դուն թը— չուն ես թե— ա—ւոր ես ալ կը— տրի՞ծ էի— ա—ւոր:

Հօ'ւյ թըռիւր, թըռիւր իմ ձի,  
 Զըտաս միայն աքացի,  
 Դուն թուչունն ես թեւաւոր,  
 Ես ալ կըտրի՞ծ ձրաւոր:

Թեւ առ, թըռիւր, սըլանանք,  
 Հեռու հեռու հեռանանք,  
 Դէ', շուա ըրէ, դէ' թուչենք,  
 Արար աշխարհ մենք շրջենք:

**Ճ Ա Խ Ա Ր Ա Կ**

Երաժշտութիւն՝ Ա. Տ. ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

*Longamente p*

ան-կի, Տա-կի Տա-խա-րակ, նրապի՛նք Քա-կի Տա-խա-րակ, ան-պի-  
 թին պի՛րք Տա-խա-րակ, որ-բե-թին պի՛րք Տա-խա-րակ, անպի-թին պի՛րք Տա-խա-  
 րակ, որ-բե-թին պի՛րք Տա-խա-րակ: Լուս-նի.... րակ:

Մանի, մանի ճախարակ,  
 Նստինք՝ բանի ճախարակ,  
 Անտէրին տէր ճախարակ,  
 Որբերին տէր ճախարակ:

Լուսնի լուսով մանեմ ես,  
 Ոպիտակ ոստեր անեմ ես,  
 Աղքատ օրով ու լացով,  
 Որբեր պահեմ մանածով:

3. ԹՈՒՄԱՆԵԱՆ

**Տ Ի Կ Ն Ի Կ**

Երգ՝ ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆԻ

Տիկ տիկ տիկ սի-րու-նիկ, նախշուն խելօք իմ տիկ-նիկ տես տես, տես,  
 իմ Ե-րես ծիկ տես, տես, տես, իմ Ե-րես ծիկ.

Տի'կ տի'կ տի'կ, սիրունիկ,  
 Նախշուն խելօք իմ տիկնիկ,  
 Տե'ս տե'ս, տե'ս, իմ երես-ծի'կ...  
 Վե'ր վե'ր վե'ր, հաց տամ կեր,  
 Վե'ր, շուտ հագիրք քու շորեր,

Չի'կ չի'կ չի'կ, տուր պահիկ-չիկ.  
 Լա' լա' լա', իմ բալա,  
 Թըռիթ, թռչինք, ե'լ, մի' լա,  
 Չա'ն Չա'ն Չա'ն, հոգի ջան-ճո'ւկ...

Ա. Տ. ԳԵՈՐԳԵԱՆ

Ա) ԱՐՏՈՒՏԻ ԵՐԳԸ

*Allegretto*  


Կանաչ արտում ման կը գամ, Չու-տրկ-նե-րիս կեր կը գամ, զանիկ լաւ է, զանիկ լաւ-իմալ արտում  
 ման կը գամ, Չու-տրկ-նե-րիս կեր կը գամ, Չու-տրկ-նե-րիս կեր կը գամ, Չու-տրկ-նե-րիս կեր կը գամ, Չու-տրկ-նե-րիս կեր կը գամ:

Կանաչ արտում ման կը գամ,	Տատիկներով պար կը գամ,
Չուտրկներիս կեր կը գամ,	Թեւեթներով ծափ կը գամ,
Չա՛ն, ինչ լաւ է, Չա՛ն ինչ լաւ,	Երբ անձրիւն է կաթկթում,
Կանաչ արտում ման կը գամ,	Թաքնըւում ենք թփուտում,
Չուտրկներիս կեր կը գամ:	Չա՛ն, ինչ լաւ է, Չա՛ն, ինչ լաւ,
Տատիկներով պար կը գամ,	Երբ անձրիւն է կաթկթում,
Թեւեթներով ծափ կը գամ,	Թաքնըւում ենք թփուտում:
Չա՛ն, ինչ լաւ է, Չա՛ն, ինչ լաւ,	

Վ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բ) ԱՅ, ԱՅՍՊԷՍ

*Allegretto*  


Ես թիթեռ եմ ու կեթեռ եմ, Թըււրում եմ, ա՛յ, ա՛յապէս, Ես ղիկ-նե-րից հոգ եմ քա-ղում  
 կիլիկ եմ առ եւում, ա՛յ, ա՛յապէս, Ես ղիկ-նե-րից հոգ եմ քա-ղում, կիլիկ եմ առ եւում, ա՛յ, ա՛յապէս:

Ես թիթեռ եմ, ոսկեթեռ եմ,	Երբ Լիլիկը, չար բալիկը
Թըււրում եմ, ա՛յ, ա՛յապէս,	Հենց ուղում է ինձ բռնել,
Ծաղիկերից հոտ եմ քաշում,	Ես թռչում եմ, շուտ փախչում եմ
Հիւթ եմ առնում, ա՛յ, ա՛յապէս:	Թեթեւ, թեթեւ, ա՛յ, ա՛յապէս:

Մ. ՎՇՏՈՒՆԻ



ՄԱՆՍԹՈՒԹԻԻՆ.— Մանկական երգերէն Ա. ԺԱ. Թուագրուածներուն եղա- նակները յօրինած է երաժշտագիտուհի ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼԻԿԵԱՆ:

Գ) ՓՈՍ ԵՆՔ ՓՈՐՈՒՄ

Moderato

փոս ենք փորում, ծառ ենք պրծկում. ու-րախերում ու կանչում. որ մե-ծա-նայ եւ Քրի-շեր քայ,  
 ծածկի սի-րուն կանաչում. որ մե-ծա-նայ եւ Քրի-շեր քայ. ծածկի սի-րուն կա-նա-չում:  
*mf*  
 երբ ան քան փառ ա-րե-ւ-ր քայ իր լու-ղերում շողշողուն. ծառը սի-րում հանձնար կր քայ  
 մեջ իր անուշ ըսպերում ծառը սի-րում հանձնար կր քայ մեջ իր անուշ ըսպերում:

Փոս ենք փորում, ծառ ենք Երբ ամբան վառ արեւը դայ  
տնկում իր շողերով շողշողուն,  
 Ուրախ երգով ու կանչով, Ծառը սիրով հանգիստ կըտայ  
 Որ մեծանայ ու ճիւղեր տայ, Մեզ իր անուշ սուերում:  
 Ծածկի սիրուն կանաչով: Հ. ՀԱՅՐԱՊԵՏԻԱՆ

Դ) ՁԻՒՆԸ ԵԿԱԻ

*Andantino*  
*mp*  
 Ձիւնը եկաւ շատ առատ, աշխարհն առատ ի-րա ցած, մեծ էլ սահնակներն առատ,  
 սարի գլխից ի-ջած ցած. մեծ էլ սահնակներն առատ, սարի գլխից ի-ջած ցած:

Ձիւնը եկաւ շատ առատ, Չմուշկներով սահեցինք,  
 Աշխարհն առատ իրա տակ, Սըղղացինք, խաղացինք,  
 Մենք էլ սահնակներն առատ, Չա՛ն, ինչ լաւն հս դու ձմեռ,  
 Սարի գլխից իջանք ցած: Չա՛ն, ինչ լաւն է խաղը մեր:  
Բ. ԱՍԱՏՐԵԱՆ



Ե) ԳԱՌՆԱՐԱԾ ՄՈՍԻՆ

*Moderato*  

 Գառնարած Մոսին, Առաւօտ լուսին, հով, հով, հով, փառ — ետ — թ

ա — ռած Դէպի հանդ Դո — նայ, զով, զով, զով, զով, զով, զով, զով:

Գառնարած Մոսին

Առաւօտ լուսին

Հով, հով, հով,

Գառները առած,

Դէպի հանդ գընաց,

Զով, զով, զով:

Գառներն են մայում,

Խօս են արածում,

Մուշ, մուշ, մուշ,

Ժայռի կրծքի տակ

Կարկաչում վտակ,

Վուշ, վուշ, վուշ:

Նըւազում է նա

Սրինդը իրա,

Ջան, Ջան, Ջան,

Գառները եկան,

Կազմեցին շրջան,

Ջան, Ջան, Ջան:

Լ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Զ) ԶԱՐԹԻՐ, ԱՅ ԻՄ ԴԱՇՏ

*Allegretto*  

 Զարթիր ա՛յ իմ դաշտ, եկել է գարուն, Բերել է քեզ հիւր, բերել է քեզ հիւր, հաւիտքը սիրուն:

Զարթիր, ա՛յ իմ դաշտ,

Եկել է գարուն,

Բերել է քեզ հիւր

Հաւքերը սիրուն:

Պայծառ երկինքը

Կապել է կամար,

Կապուտով վրան

Խփել քեզ համար:

Շողերն արեւի

Ժպտում են, խաղում,

Անձրեւը կրծքիդ

Գոհար է մաղում:

Զարթիր, զարգարւիր

Ատլաս կանաչով,

Գարունն է եկել

Երգով ու կանչով:

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ



Է) ԲԿԼԻԿ ԶԿՆԻԿ

*Moderato*

ԶԿՆԻԿ ԼՈՂ ԳՐԱՐ, ԼՈՂ ԱՐԱ, ԴՐՍԻ ՈՐԱՐ ԹՈՂ ԱՐԱ, ԻՉԻՐ ՉԸՐԻ ԺԱՎԱԿԸ,  
 ՃԻՆՆԵ ԱՆՅՆԻ ՎՐՎԱՆՔԻ ԻՉԻՐ ՉԸՐԻ ԺԱՎԱԿԸ, ՃԻՆՆԵ ԱՆՅՆԻ ՎՐՎԱՆՔԻ:  
*P* ՏԵՍՎՈՐՅԱՆՔ ԿԱՅ ԺՈՎՈՐՆԻՆ, ՄԻ ԼԱՆՄՈՎ ԳԻՒԿ ԵՐԵՆԻՆ, ՈՐԴ Է ԽՐԺԵՆ ԻՐ ԿԱՐԹԻՆ, ԸՐ ՆՕՎԵՆԱՍ  
 ԱՅԴ ՈՐԴԻՆ, ՈՐԴ Է ԽՐԺԵՆ ԻՐ ԿԱՐԹԻՆ, ԸՐ ՆՕՎԵՆԱՍ ԱՅԴ ՈՐԴԻՆ ԻՆՅՆՆԵՍՆԵՅ ԽՐՎՈՒԿԸ,  
 ԻՆՅՆՆԵՍՆԵՅ ԲԵՎՈՒՎՈՒՄ, ԵՆՈՎՈՐ ԳՐԱՆՅ ԶԱՐԴԸ, ԿԱՐԹԸ ՏՐՆԱՅ ԿՈՎՈՐԴԸ:

ԶԿՆԻԿ, ԼՈՂ ԳՐԱՐ, ԼՈՂ ԱՐԱ,  
 ԴՐՍԻ ՈՐԱՐ ԹՈՂ ԱՐԱ,  
 ԻՉԻՐ ՉԸՐԻ ԺԱՎԱԿԸ,  
 Մ ՃԻՆՆԵ ԱՆՅՆԻ ՎՐՎԱՆՔԻ:

ՏԵՍՎՈՐՅԱՆՔ ԿԱՅ ԺՈՎՈՐՆԻՆ,  
 Մ ՄԻ ԼԱՆՄՈՎ ԳԻՒԿ ԵՐԵՆԻՆ,

ՈՐԴ Է ԽՐԺԵՆ ԻՐ ԿԱՐԹԻՆ,  
 ՉՄՕՄԵՆԱՍ ԱՅԴ ՈՐԴԻՆ:

ԻՆՃ ՀԼԸՍԵՑ ՃԿՆԻԿԸ,  
 ԻՆՃ ՀԼԸՍԵՑ ԲԵԿԼԻԿԸ,  
 ՀՈ՛Վ, ԿՈՒՂ ԱՐԵՑ ԶԱ ՈՐԴԸ,  
 ԿԱՐԹԸ ՄՆԱՅ ԿՈՎՈՐԸ:

Ա. ԽՆԿՈՑԵԱՆ

Ը) ՀԱԻԻԿ

*Moderato mf*

ՀԱԻԿ, ՀԱԻԿ ԱՆԵՐԵՍ, ԳՐԱԳԻՆ ԱՐԻՐ ՍԵՆԵՐԵՍ, ԱՅ ԳՈՒ ՍԵՆՈՒԿ ԽԱՎՈՐՆԻՆ՝  
 ԳԻՒԿ, ԱՎՖՈՆ ՈՒՎԻ ԺՈՎՈՐՆԻՆ ԱՅ ԳՈՒ ՍԵՆՈՒԿ ԽԱՎՈՐՆԻՆ՝ ԳԻՒԿ, ԱՎՖՈՆ ՈՒՎԻ ԺՈՎՈՐՆԻՆ:

Հալիկ, հալիկ աներես,  
 Տատին արիր սեւերես...  
 Ա՛յ դու սեւուկ խառուարիկ,  
 Սաքոն ուտի քո տտարիկ:

Ո՞ւմ բակն ասես՝ չմըտար,  
 Ո՞ւմ կուտն ասես՝ չկերար,  
 Ամօթով ես թողել մեզ,  
 Ա՛յ դու բեկլիկ աներես:

Ա. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

### Թ) ՆՈՐ ՏԱՐԻՆ

Allegro

Նե կա ե-կա մեր նոր տարին, հեղին էլ ե-ղև — նին կանաչ, ե կա նա-ն չը-մե պապին,  
 կը-տր նե-րը շա-լա-կած ե-կա նա-ն չը-մե պապին, երգե-ր-նե-րը շա-լա-կած:

Ահա եկաւ մեր նոր տարին,  
 Հեան էլ եղևին կանաչ,  
 Եկաւ նաև ձմեռ պապին,  
 Նըւէրները շալակած:

Արևի պէս թող միշտ վալլի  
 Մեր կեանքն ուրախ ու պայծառ:  
 Սիրենք ուսում և աշխատանք,  
 Լինենք աշխոյժ ու կայտառ,  
 Երգենք, պարենք, ուրախանանք,  
 Տօնածառի շուրջը վառ:

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼԻԿԵԱՆ

### Ժ) ՍԱՐԵԱԿԻՆ

Allegretto

Բարով եկար, սիրուն սարեակ,  
 Երգիչը մեր թանկագին,  
 Յիշում էի քեզ անդադար  
 Ու կարօտում քո երգին:  
 Բոյն եմ շինել ես քեզ համար,  
 Փափուկ, տաքսեկ ու յարմար,  
 Որ ձու ածես, ձագեր հանես,  
 Սիրես նրանց, գուրգուրես:  
 Որ գուրս գաս դու մեր պարտե-  
 զից,  
 Ծառը մաքրես թրթուրից,  
 Որ անդադար ամբողջ ամառ,  
 Երգեր ասես ինձ համար:

Լ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ



ԺԱ) ՆՈՅԵՄԲԵՐԻՆ



Նոյեմբերին քամին եկաւ,  
 Ուժգին փչեց ու անցաւ,  
 Տերեւները թափ ու ծառից  
 Պոկեց, փչեց ու տարաւ:

Հեռու երկրից ձմեռ պապին  
 Շուտով կը գայ մուշտակով,  
 Այգիներում ու դաշտերում  
 Սպիտակ սաւան փռելով:  
 Ղ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

Աղջկե՛րք, պար բռնեցէք,  
 Արմիկի երես գովեցէք:  
 — «Ա՛յ երես,  
 Շարժող երես,  
 Դու չը թողնես  
 Մեզ սեւերես:»

Աղջկե՛րք, պար բռնեցէք,  
 Արմիկի կրօներ գովեցէք:  
 — «Ա՛յ կրօներ,  
 Ուժեղ կրօներ,  
 Դուք կը շրջէք  
 Մեծ մեծ լեռներ:»

Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,  
 Արմիկի երես կը լուայ:  
 — «Ա՛յ երես,  
 Արեւ երես,  
 Քս չափազով  
 Մեր սիրտ կ'երես:»

Արմիկի կրօներն ի գերան,  
 Կը պատռի վագրի բերան:  
 — «Ա՛յ կրօներ,  
 Գըթոտ՝ կրօներ,  
 Դուք կը բանաք  
 Մեր փակ դրօներ:»

Աղջկե՛րք, պար բռնեցէք,  
 Արմիկի աչեր գովեցէք:  
 — «Ա՛յ աչեր,  
 Սիրուն աչեր,  
 Արեւի պէս  
 Փայլուն աչեր:»

Ո՞վ պատռեց վագրի բերան:  
 Արմիկ պատռեց վագրի բերան:  
 — վագրի բերան,  
 Ահա այսքան,  
 Ժանիքները  
 Մէկ-մէկ գերան:  
 Ղ. ԱՂԱՅԵԱՆ

### 1) ԵՐԳ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

*Mod<sup>to</sup>*

Աշ-խա-տու-թիւն երկ-նա-տուր գանձ, Ա-նով մի-այն ա-մէն մէկ անձ  
 Ար-ժե-ցը-նել կր-նայ իր կեանք, Չայնչունե նայն է մեծ գրկանք: մեծ գրկանք:

Աշխատութիւն, երկնատուր	Բանուորն ալ մէջ իր գործա-
գանձ,	տան,
Անով միայն ամէն մէկ անձ	Մեքեաններն ուր կը թնդան,
Արժեցընել կրնայ իր կեանք,	Սեցած, փոշոտ երբ կ'աշխատի,
Չայնչունե նայն է մեծ գրկանք:	Մեծ ըստփանք մ'ունի սրտի:
Մշակը երբ հերկէ, ցանէ,	Հայ աշակերտ, ո'ն, նաև դուն,
Բաղձանքն անոր սոսկ մէկբանէ,	Աշխատութեամբ մը կռանդուն,
Քաղելարդիւնքն աշխատանքին,	Դպրոցական քու գործերուդ,
Որ գահացում մըն է անգին:	Բուլսր սրտով նուիրուէ փոյթ:

### 2) Ծ Ա Ղ Ի Կ

*And<sup>no</sup>*

Թօշ-նած ծաղիկ դու մե-նա-ւոր, Որ փառքն-զար ծոր-ծո-րին, Ար-րիկ-նե-րն  
 ցըր-ուած Բո-լոր թեր-թե-րըդ վար կը ծո-րին կը ծո-րին

Թօշնած ծաղիկ դու մենաւոր,	Թերթ մը կ'իյնայ քեզմէ հողին
Որ փառքն եզար ծործորին,	Եւ բախտն զմեզ կը թողու:
Մրրիկներէն ցրուած՝ բոլոր	Կորսնցուցած՝ մարդ հաճոյքներ,
Թերթերըդ վար կը ծորին:	Կը հարցնէ արամօրէն,
Մարդիկ են զոհ նոյն մանգաղին	—Ո՞րն աւելի վաղանցուկ էր,
Եւ նոյն կամքին միշտ հըլու,	Ծաղի՞կը թէ կեանքն իրեն:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— Մանկական երգերէն 1-12 թուագրուածներու եղանակները յօրինած է երաժշտագէտ ՍԱՐԳԻՍ ՊԱՂԹԱՅԵԱՆ:

### 3) ԾԱՌԵՐՈՒՆ ՏԱԿ

Tempo di marcia

Օ՛ն ընկերներ, երթանք շխտակ,  
Դէպի պարտէզ ծառերու տակ,  
Զով ստուերին տակ ծառերուն,  
Հանգչինք զուարթ ու երազուն:

Ամառն եկաւ, ա՛լ օդն է տաք,  
Անտառներու ծառերուն տակ,  
Օ՛ն, վայելենք արձակուրդի  
Օրերն ազատ ու հաճելի:

Տառներու մէջ հերթֆակունք,  
Ա՛լ մեզ ձեզուն ըլլայ երկինք,  
Ծառեր, թուփեր մեզ շրջապատ,  
Մարգերն ալ՝ գորգ, ծաղիկներ՝  
զարդ:

Խաղաղ ծոցին մէջ բընութեան,  
Մեր պատանի սիրտերն խաչտան,  
Պահ մը ապրինք կեանք մ'ան-  
զիտակ,  
Սա հովանուտ ծառերուն տակ:

### 4) ԱՌԱՒՕՏ


Ճա-գեց արեւն հո-րի-զո-նէն կար-միր, դե-ղին ցոլ-բե-րով  
Մեծ ծառերը շուք ձգեր-են, Աղ-բիւր-նե-րուն զու-րին բով: Կըսինք բով:

Ծագեց արեւն հորիզոնէն,  
Կարմիր, դեղին ցոլֆերով,  
Մեծ ծառերը շուք ձգեր են,  
Աղբիւրներու ջուրին քով:  
Կ'անցնի զկփիւռն ալ խաղալով  
Տերեւներու հեա կանաչ,


Ու կը փայլին դաշտին մէջ ծով,  
Յասմիկը, վարդն ու կակաչ:  
Իր փեթակէն թըռաւ մեղուն,  
Ծաղկէ ծաղիկ կ'ոստոստէ,  
Ելիր, մանո՛ւկ, մտքով բեղուն,  
Կանախ դասըղ պատրաստէ:



7) ԲԱՐՁԻԿԻՆ ԵՐԳԸ (\*)



Փոքրիկ բարձիկ սիրական, կահուղ գրչխուս տակ տըկար,



Ճեր մակ տարուկ դասուս կան. Բուր-գով լեցուած ինձ համար:

Փոքրիկ բարձիկ սիրական,  
կահուղ գրչխուս տակ տըկար,  
Ճերմակ, տաքուկ, պատուական,  
Բուրգով լեցուած ինձ համար:

Թրա լա լա լա լա լա լա լա  
լա լա լա լա լա լա լա:

Հովին ձայնէն երբ վախնամ,  
Գայլն ու մորրիկ երբ գողան,  
Վրբադ ննջել միշտ կուգամ,  
Փոքրիկ բարձիկ սիրական:

Թրա լա լա լա... եւայլն:


Կան անթիւ խեղճ մանուկներ,  
Մերկ՝ մայր չունին, չունին տուն  
Եւ բարձ մ'անգամ չեն դտներ,  
Երբ աչքերնին փակէ քուն:

Թրա լա լա լա... եւայլն:


Ո՛հ, դառն բախտ, միշտ քընատ,  
Կը տառապին, երբ այսպէս,  
Անո՛ւշ մայրիկ, անընդհատ  
Արցունք կուգայ իմ աչքէս:

Թրա լա լա լա... եւայլն:

8) ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ



Ես շուն մը ունիմ գանգուր վարսե թով Եւ բերր փայլուն ջր-ռուկն է դեղին.



Մե-զի ա-մե նուս կը փա թի սի-րով. Մեր պահա-պանը, սարսափն է գիւղին:

Ես շուն մը ունիմ գանգուր վարսերով,  
Աչքերը փայլուն, ցառկն է գեղին,  
Մեզի ամէնուս կը փարի սիրով,  
Մեր պահապանը, սարսափն է գիւղին:





Տեսնելով իր կեռ աղաներն ամուր,  
Չարերն ու գողերն իրմէ կը փախչին,

(\*) ՄԱՆՅԹԻՍԻԻՆ. — Չայնագրութեան երկրորդ տողի կրկնութեան պէտք է երգել «Թրա լա լա լա»ները, որոնք մուսացութեամբ ջեն գրուած տողին սակ:

Իր խոշոր թաթերն ու ճանկերը սուր,  
Առիւծին, վազրին վիզին կը կառչին:


Ամէն առաւօտ ինք մեր ետեւէն,  
Սակառնիս շիտակ կը տանի դպրոց,  
Ու երբ մայրիկը դուրս ելլէ տունէն,  
Մեր դըրան առջեւ կը սպասէ տղոց:

9) Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ս



Աղուր գառնուկս իմ սիրուն,  
Եկուր, ցատկէ քովս ի վեր,  
Ստուերին տակ ծառերուն,  
Ուր կը փչեն մեղմ հովեր:  
Փափուկ խոտերը դաշտին  
Քեզի բազմոց թող ըլլան,  
Լըծին ջուրերը հեշտին  
Տոտիկները թող լուան:

Քեզի լեռնէն ու ձորէն  
Քաղնմ տերեւ ու ծաղիկ,  
Արտէն բերնմ քեզ ցորեն,  
Տունէն՝ շաքար ու հատիկ:  
Ծունկըս քեզի անկողին,  
Կուրծքըս՝ բարձ, թեւս՝ վերմակ,  
Ձը դըպչի պոչըդ հողին,  
Չաղտոտի բուրդըդ ճերմակ:



10) ՓՈՔՐԻԿ ԱՐՍԻՆԷՆ

All<sup>o</sup>

Անուշ աղջիկ մ'ես զուարթ Արսինէս, կոտրած սրտե-րը  
 զուարթ էր շի-նես Ով ըզ-բնզ տեսնէ կը սիրէ իսկոյն,  
 Թէ քա-ղա-քա-վար, Թէ քա-րի-նս զուն: զուն:

Անուշ աղջիկ մ'ես զուարթ Արսինէս,  
 կոտրած սրտերը շուտ մը կը շինես,  
 Ով զքեզ տեսնէ՝ կը սիրէ իսկոյն,  
 Թէ՛ քաղաքավար, Թէ՛ քարի ես դուն:  
 Երբեք չեմ տեսած քու դէմքըդ տխուր,  
 Գիտես Թէ՛ խօսիլ և Թէ՛ կենալ լուռ,  
 Բերնէդ չի լսուիր խօսք մը փուճ կամ սուտ,  
 Բարի օրինակ մ'ես ընկերներուդ:

11) Խ Ա Ղ Ո Ղ Ը

Mod<sup>o</sup>

Տե-րե-նե-րուն մե-ջէն քա-րակ, Որ սըն-դուսի կը նը-մա-նին,  
 Կուռ ողկոյզներ սև ու ճերմակ, վար կը կախեն հատիկներնին:

Տերեւներուն մէջէն քարակ,  
 Որ սընդուսի կը նմանին,  
 կուռ ողկոյզներ սև ու ճերմակ,  
 վար կը կախեն հատիկներնին:  
 Ոմանք երկայն, ոմանք կլոր,  
 Մանրիկ, փայլուն և լուսանցիկ,

Տերեւներուն վըրայ խոշոր,  
 կը կարծուին բանուած ծաղիկ:  
 Արցունք են Թէ շաղի կաթիլ,  
 Ամպի ցանցէն ցօղուած շիթ-շիթ,  
 Զմրո՞ւխտ արդեօք, վա՞րդ  
 նորածիլ

Կամ երկինքէն ինկած ժպիտ: Զայն շինեցին լոյս հրեշտակներ,  
 Անոնք արցունք չեն, ո՛չ դոհար, Սուրբ մատներովն իրենց ճար-  
 Ո՛չ ալ ծաղիկ, ո՛չ ալ կիտուած, տար,  
 Անուշ խաղող են զովարար: Այգիներուն՝ աշնան նուէր,  
 Միրգ՝ զոր միայն օրհնեց Աս- Սիրուն տղա՛ք, ձեզի համար:  
 տուած:

12) ԲԱՂԱՔԱՎԱՐ ՏՂԱՆ

*Marcia*

Զուրկ ազ-նիւ իւր-բէ, առանց կրթութեան. Լի-մէ-նէն աղ-ուոր  
 ու սի-րուն տը—ղան կա-րող չէ սիր-ուիլ նոյն իսկ ծը-նող-  
 -բէն, իր ըն-կեր-ներն ալ զին-քը կա-նար-գեն:

Զուրկ ազնիւ բարքէ, առանց կրթութեան,  
 Ամէնէն աղուոր ու սիրուն տըղան  
 Կարող չէ սիրուիլ նոյնիսկ ծընողքէն,  
 Իր ընկերներն ալ զինքը կ'անարգեն:  
 Իսկ ան որ չունի, ո՛չ շընորհ, ո՛չ գեղ,  
 Ո՛չ զարդ, ո՛չ ոսկի, ո՛չ զգեստ շքեղ,  
 Այլ իր կերպերովն ու խօսքով համեստ,  
 Գիտէ ընդունիլ ամէնէն զովեստ:  
 Ան պիտի շինէ իր կեանքին ճամբան,  
 Պիտի յարգարէ, պիտի պճնէ զայն,  
 Ու շրջապատուած համակրանքով տաք՝  
 Միշտ պիտի քալէ անդորր, անսայթաք:

ԵՐԳՈՎ ՇՐՋԱՆ

Արեւն ըրաւ օրուան շրջան, Թուչնիկ գնաց որ հոն հանգչի,  
 Ահա ասաղերը կ'երևան, Նոյնպէս և մենք,—գիշեր բարի:

ՔԱՆԻ ՄԸ ԱՐՏԱՍԱՆԵԼԻ ԿՏՈՐՆԵՐ

ԳՈՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես իմ անոյշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,  
 Մեր հին սազի սղբանըւոգ, լացակուժած լարն եմ սիրում,  
 Բրգանման ծաղիկների ու վարդերի բոյրը վառման,  
 Ու նայիրեան աղջիկների հեղածկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսէ,  
 Արեւն ամբան ու ձմեռուայ վիշապաձայն բուքը վսեմ,  
 Մթում կորած խրճիթների անհիւրընկալ պատերը սեւ,  
 Ու հնամեայ քաղաքների հաղորամեայ քա՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ չեմ մոռանայ ես սղբաձայն երգերը մեր,  
 Չե՛մ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր դրքերը մեր,  
 Ի՛նչքան էլ սուր սիրտըս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր,  
 Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան եա՛րն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հէքիաթ չկայ,  
 Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ,  
 Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ դադաթ չկայ,  
 Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ՀԱՅ ԴՐՕՇԻՆ

Վե՛րջապէս ազատ...: Եւ մե՛նք մեզի տէր:  
 Հայաստան Հայուն՝ հա՛յ դրօշակի տակ,  
 Փա՛ռք հսկաներուն, սղջ թէ նահատակ,  
 Որ վեց դարերու մեր խաչն են քանդեր:  
 Հայոց աշխարհի Զատի՛կն է ցաթեր...

Կարմիր, կապոյտ ու նարինջ՝

Դրօճա՛կ հայկական,

Մեր արեւուն տակ, դո՛ւն ծածանե միտ,

Նախա՛ն, յաղթական:

Սեւ Ծովէն մի՛նչեւ Ծո՛վ Միջերկրական,  
 Ու կասպեան Ծովէն մի՛նչեւ Տաւրոսներ,  
 Ա՛լ Հայերն, այո՛, հայ հողերուն տէ՛ր:  
 Ա՛լ ո՛չ Թուրք, ո՛չ Ռուս, ո՛չ Իրան, Թուրան,

Ո՛չ իսկ թեւարկու դրօշ մը մեր վրան:  
 Կարմիր, կապոյտ ու նարինջ՝  
 Դրօշա՛կ հայկական,  
 Մեր հողին վերեւ դո՛ւն ծածանե միտ,  
 Նախօ՛ւն, յաղթական:

Ո՛վ երեք գոյնի երեք սուրբ իմաստ.—  
 Կարմիրն արիւնոտ թրքահայաստան,  
 — Եօթը նահանգներն ու մեր կիլիկիա՛ն,  
 Կապոյտն՝ Հայաստանն է Ռուսէն ազատ,  
 Նարինջն՝ Ուրմիա՛ն պարսկահռնազանդ:  
 Կարմիր, կապոյտ նարինջ,  
 Դրօշա՛կ հայկական,  
 Մեր կամփին վերեւ դո՛ւն ծածանե միտ,  
 Նախօ՛ւն, յաղթական:

Այսպէս միացուած, ազատ, անբաժան,  
 Հայ հողերն այսպէս ամբողջ մը կրկին,  
 Ծիածանին տակ Հայ Եռագոյնին:  
 Ահա մեր ուզածն, — այս Մե՛ծն Հայաստան,  
 Մե՛րն է ան, մե՛րն է, մե՛րն է յաւիտեան...  
 Կարմիր, կապոյտ ու նարինջ՝  
 Դրօշա՛կ հայկական,  
 Մեր ուժին վերեւ, դո՛ւն ծածանե միտ,  
 Նախօ՛ւն, յաղթական:

Յրուած բեկորներն անոնց որ ինկան՝  
 Մեզ միակ ժառանգ թողլով վրէժնի՛ն,  
 Եւ երա՛զը մեծ, որ առաւ մարմին.  
 Մենք, արեան մէջէն և պանդխտութեան,  
 Արդ կ'երթանք, կ'երթանք, կ'երթանք Հայաստան:  
 Կարմիր, կապոյտ ու նարինջ՝  
 Դրօշա՛կ հայկական,  
 Մեզի առաջնորդ՝ դո՛ւն ծածանե միտ,  
 Նախօ՛ւն, յաղթական:

ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,

Այս թռչնակի, այս առուակի,  
Հետն այս երգի ու զարթօնքի,  
Բացուեց լեզուն իմ մանկիկի:

Տե՛ս, թթովեց բառ մի անգին  
Հայկեան լեզուից մեր սրբազան,  
Ասես մասունք հաղորդութեան  
Դիպաւ մանկանքս շրթունքին:

— «Լսի՛ր, որդիս, պատգամ  
որպէս,

Սիրող քո մօր խօսքը սրտանց,  
Այս օրուանից յանձնումեմ քեզ  
Հայոց լեզուն հազարազանձ:

Կտրել է նա, հանց աստղալոյս,  
Երկինքները ժամանակի,  
Շառաչել է խռովայոյզ,  
Սլացքի հետ Հայկեան նետի:

Եւ Մեսրոպի սուրբ հանձարով  
Դարձել է գիր ու մագաղաթ,  
Դարձել է յոյս, դարձել դրօշ,  
Պահել երթը մեր անաղարտ:

Նրանով է մրմնջացել  
Հայ պանդուխտը երգն իր վշտի,

Նրանով է որոտացել  
Կռուի երգն իմ ժողովրդի:

Նրանով է մայրըս ջահել,  
Ինձ օրօրոց արել մի օր,  
Հիմի եկել մեզ է հասել  
Նրա կարկաչը դարաւոր:

Բա՛ց շրթներըդ, խօսիր, անգին,  
Ժիր դայլալիք իմ սիրասուն,  
Թող մանկանայ քո շրթներին  
Մեր ալեհեր Հայոց լեզուն:

Պահի՛ր նրան, բարձր ու վճիտ,  
Արարտի սուրբ ձիւնի պէս,  
Պահի՛ր նրան սրտիդ մօտիկ  
Քո պապերի աճիւնի պէս:

Ու ոսոխի զարկիցը սեւ  
Դու պաշտպանիք կրծքով նրան,  
Ինչպէս մօրդ կը պաշտպանես  
Թէ սուր քաշեն մօրդ վըրան:

Ու տե՛ս, որդի՛ս, ուր էլ լինես,  
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,  
Թէ մօրդ անգամ մտքից հանես,  
Քո մայր լեզուն չմոռանա՛ս:»

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Կ Տ Ա Կ

Սիրուն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ,  
Ճշմարիտն ես փորձով գիտեմ, ու խօսքերս մի՛ մոռնար:

Կեանքն է փախչող, խաբուսիկ դեւ, վայրկեանն է միշտ իրական,  
Բախտի կռանը կամքն է թէև, բայց դիպուածն է տիրական:

Ջգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան:  
Բայց դու խելքդ վրող պահի՛ր, ինչպէս պողպատ կուռ վահան:

Մի՛ հաւատար ստուերներին, յենւի՛ր միայն քեզ վրայ,  
Ատելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լաւութիւն միշտ արա՛:

Եւ լայն օրում թէ՛ ընկերներ, թէ՛ բարեկամ ճանաչիր,

Իսկ նեղ օրում ընկերներիդ ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:  
 Խաղերով լի այս աշխարհում խաղըդ եթէ տանուլ տաս,  
 Չուարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրայ կը խնդաս:  
 Անվախ ու վեհ ղեկդ վարէ անձանօթին դէմ-դէմի,  
 Անզղջալի առաջ գնա՛, ինչ որ լինի՛, թո՛ղ լինի:  
 Լսի՛ր, տղա՛ս, ինձ կը թաղես անյայտ մի տեղ, աննշան,  
 Որ չիմանան, մարդիկ չըզան՝ շիրմիս քարը գողանան...

ԱԽԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ

### ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Հանճա՛րդ Հայկեան, Նաւասարդեան սա տօներուն  
 Արեւափառ,

Ա՛լ վերածնէ փլատակներէն, և փառագոչ  
 Քընարըդ ա՛ռ:

Յանո՛ւն Ոյժին, յանո՛ւն Գեղին, մտիր մեհեանն  
 Աստուածներուն,

Ջահը ձեռքիդ՝ բաղնէ բագին համափռէ՛  
 Հուր ու արիւն:

Եւ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր  
 Բաժակըդ նուռ,

Յետոյ՛ զոհուող քերթողներուն սիրտին վրայ  
 Լեցո՛ւր, լեցո՛ւր:

Ձի մենք, յանուն Սէրին, Սերմին, քու հին Յեղիդ  
 Մարմարէն կոյս,

Մե՛նք Չաւակներիդ օգոստափառ, պիտի կերտենք  
 Նո՛ր Արշալոյս:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

### ՈՒ ԱՆՑԵԼ...

Արարատի ծեր գմբէթից  
 Դար է կկել, վայրկեանի պէս  
 Ու անցել:

Մահախուճապ սերունդների  
 Աչքն է դիպել լոյս գազաթին  
 Ու անցել:

Անհուն թուով կայծակների  
 Սուրն է բեկուել ազամանդին  
 Ու անցել:

Հերթը մի պահ քոնն է հիմա,  
 Դո՛ւ էլ նայիր սէգ ճակատին  
 Ու անցի՛ր...

ԱԽԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ՀԷՅ ՉԱ՛Ն ԵՐԵԼԱՆ

Հէյ Չա՛ն Երեւան,  
 Լինեմ ես քնած, թէ լինեմ արթուն,  
 Հէյ Չա՛ն Երեւան,  
 Չարկերը սրտիս տրոփ առ տրոփ,  
 Հէյ Չա՛ն Երեւան,  
 Կ'երգեն քեզ համար միայն օրհնութիւն...

Միայն օրհնութի՛ւն, միայն օրհնութի՛ւն  
 Եւ սէ՛ր ու կարօտ,  
 Սէ՛ր և օրհնութիւն՝  
 Հէյ Չա՛ն Երեւան:

Հէյ Չա՛ն Երեւան,  
 Արեւը պայծա՛ռ՝ երկնքիդ վրայ,  
 Արարատը քեզ լինի պահապան,  
 Այգիներիդ մէջ որթը մեղրանայ,  
 Երդիքներիդ տակ ծիծաղն անպակաս,  
 Դէզերը հունձքիդ հսկայ լեռ դառնան  
 Ու յաւերժի դէմ յաւէտ շէն մնան՝  
 Հէյ Չա՛ն Երեւան:

Հէյ Չա՛ն Երեւան,  
 Չմեռների դէմ միշտ դալա՛ր մնաս  
 Ու պայքարներում մնաս յաղթակա՛ն,  
 Բռունցքդ չարին լինի պատուհաս,  
 Եւ գաւակներիդ համար հեռաւոր  
 Դու լայնաբաց գի՛րկ դառնաս մայրական  
 Եւ հեռուներից երգես մեզ օրօր՝  
 Հէյ Չա՛ն Երեւան...

Հէյ Չա՛ն Երեւան,  
 Օրերդ անցնին ծափով ու երգով,  
 Օրօրոցներիդ վերեւ ապագան  
 Լինի գարնային մեղմ ու անուշ հով.  
 Քրահնքդ հողիդ օրհնութիւն դառնայ,  
 Հողդ ոստիսիդ դառնայ դերեզման,  
 Ու վիշաք սրաէդ ընդմիշտ բացակայ՝  
 Հէյ Չա՛ն Երեւան...

Հէյ ջա՛ն Երեւան,  
 Դրօշդ ձեռքիդ միշտ ամուր բռնես,  
 Մեծ երազը մեր անվթար պահես,  
 Գալիքն անցեալին զօդող կապ լինես,  
 Լոյսի ակերից անյագուրդ ըմպես,  
 Նայուածքիդ հուրով չարքերը վանես  
 Եւ հողմերի դէմ անխորտակ կանգնես՝  
 Հէյ ջա՛ն Երեւան:

Հէյ ջա՛ն Երեւան,  
 Հող բռնես ձեռքիդ ու դառնայ ոսկի՛,  
 Ծիւ տնկես արտիդ ու դառնայ կաղնի՛,  
 Արմատըդ հողի ընդերքից անցնի,  
 Աչքերիդ շողից լուսինը խամրի,  
 Հրճուանքդ մնայ, թախիժդ մեռնի՝  
 Հէյ ջա՛ն Երեւան...

Հէյ ջա՛ն Երեւան,  
 Դարերի դիմաց միշտ կանգուն կենաս,  
 Ու բախտի կոչին յար արթուն մնաս,  
 Լուսաւոր ճամբէդ անվարան դնաս,  
 Նախանձ աչքի դէմ ծակող փո՛ւշ դառնաս,  
 Սիրտըդ աշխարհին որպէս վարդ բանաս,  
 Մէկով ցանք անես, հազարով բառնաս՝  
 Հէյ ջա՛ն Երեւան...

Հէյ ջա՛ն Երեւան,  
 Մի վայրկեանի մէջ օրով կանաչես,  
 Տիեզերքի դէմ փառքով ճաճանչես,  
 Մեր արցունքի մէջ հողիդ ճանաչես,  
 Հողուդ ժպիտով մեր վիշաք ջնջես,  
 Մի օր էլ դարձի շեփօրը հնչես  
 Եւ պանդուխտներիդ հայրենիք կանչես՝  
 Հէյ ջա՛ն Երեւան...

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ



## Տ Ր Տ ՈՒ Ն Ջ Ք

Է՛հ, մնաք բարով, Աստուած և արեւ,  
 Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...  
 Ասող մ'ալ ևս կ'երթամ յաւելուլ երկնից,  
 Ասողերն ի՞նչ են որ, եթէ ո՛չ անբիծ  
 Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին,  
 Որք թըւին այրել ճակատն երկնքին.  
 Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝  
 Յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ...

Այլ, ո՛հ, ի՛նչ կ'ըսեմ... շանթահարէ՛ զիս,  
 Աստուած, խոկն հսկայ, փշրէ՛ հիւլէիս՝  
 Որ ժպրհի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,  
 Ելնել ասողերու սանդուխքն անալի...

Ողջո՛յն քեզ, Աստուած, գողգոջ էակին,  
 Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին.  
 Դո՛ւ որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս,  
 Խըլեցիր թրթուումս շրթանց՝ թուիչքն հոգւոյս,  
 Ամպ տուիր աչացս, հեւք տըւիր սըրտիս,  
 Ըսիր՝ մահուան դուռն ինձ պիտի ժըպտիս.  
 Անշուշտ ինձ կեանք մը պահած ևս ևտքի,  
 Կեանք մ'մահուան շողի, բոյրի, աղօթքի,  
 Իսկ եթէ կորընչի պիտի իմ հուսկ շունչ  
 Հոս՝ մառախուղի մէջ համբ, անշունչ,  
 Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,  
 Պլլուիմ անուանդ, մռընչեմ անդադար,  
 Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողըդ խըրիմ,  
 Թո՛ղ յորջորջեմ քեզ «Աստուած՝ ոխերիմ»։

Ո՛հ, կը գողգոջե՛մ, արժգոյն ևմ, արժգո՛յն,  
 Փըրփըրի ներսըս գըժոխքի մ'հանգոյն...  
 Հառաչ մ'ևմ հեծող նոճերու մէջ սեւ,  
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...  
 Ո՛հ, կայծ տուէք ինձ, կայծ տուէք, ապրի՛մ...  
 Ի՛նչ, երազէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...  
 Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է. Աստուած,  
 Արդեօք դամբանի մբուրո՞վ է գծուած...  
 Ո՛հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,

Սիրե՛լ կ'ուզեմ դեռ, ապրիլ ու ապրիլ:  
 Երկնքի աստղե՛ր, հողւոյս մէջ ընկէ՛ք,  
 Կա՛յծ տուէք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք:  
 Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,  
 Ո՛չ երկնի շողեր ժպիտ մ'ինձ հին տար.  
 Գիշերն՝ միշտ դադաղս, աստղերը՝ ջահեր,  
 Լուսինն յար կուլայ, խուզարկէ վընբ.  
 Կ'ըլլան մարդիկ որ լացող մը հունին,  
 Անոր համար նա դրաւ այդ լուսին.  
 Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան, —  
 Նախ՝ կեանքը, վերջը՝ լացող մ'իր վրան:  
 Ի զո՛ւր դըրեցին աստղերն ինձի «սէ՛ր»,  
 Եւ ի զո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,  
 Ի զո՛ւր սիւքեր «սէր» ինձ ներշնչեցին,  
 Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին.  
 Ի զո՛ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,  
 Գաղտնապահ տերեւք չառին երբեք շունչ,  
 Որ չը խռովեն երազքըս վըսեմ,  
 Թոյլ տուին որ միշտ ըզնէ երազեմ.  
 Եւ ի զո՛ւր ծաղկունք՝ փրթիթներ գարնան՝  
 Միշտ խընկարկեցին խոկմանցըս խորան.  
 Ո՛հ, նոքա ամէնքը զիս ծաղրեր են...  
 Աստուծոյ ծա՛ղրն է աշխարհն ալ արդէն:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

## ՕԳՍԷՆԻՆ ՆԱՄԱԿԸ

Իլք պահարին էր, սօխախին վարէն  
 էս կէզի օր մը տեսայ բէնճիրէն,  
 Կըլօխըթ կապած կէճէլիկ կազմա,  
 Կըրնակըթ տալլը շապիկ մը պասմա,  
 Սուռաթըթ փառլախ թիւլպէնտի կըտօր,  
 Հէմէն կիտէս քի մարէի պըտօր...  
 Ներսիդիս ալթիւսթ էղավ մէյ մըն ալ,  
 Անճախ քի կըցայ պէրանըս պանալ,  
 Ծանըս ձգեցի, կիտէ՞ս Հօռօրիկ,  
 — «Թարչին պահարլը նօհուտլո՛ւ թօփի՛կ»...

Տուն էրէրցուցիր տուտախըթ քիրազ,  
 Ըսիր. — «Տատընա պագայըմ պիրազ:»  
 Տուռը կայնեցայ, վախ իջար հէմէն.  
 Ան թագէ Ֆիտան, շայիր ու չիմէն  
 Պօյ պօս էնտամըթ, աչկըթ քէսթանէ,  
 Բիլիճ պօղազըթ, թուշըթ տեսայ նէ՝  
 Ա՛լ չի տիմացայ. — «Կիւզէլ գըզ, ըսի.  
 «Սանա հէլալ աըր թօփ, թօփճու, հէ՛փսի,  
 «Բարա իսթէմէզ, եթէր քի պիր սէն  
 «Պէնի կէօրաիւքճէ եիւզիւմէ կիւլսէն:»  
 Պէրանըս կօցվէ՛ր, քէշկէ՛ չըսէի,  
 Կա՛ս կարմիր եղար, ա՛լ նառ չիչէյի,  
 Նէրս փախար, տուռը կոցեցիր պիրտէն,  
 Բէնճիրէն կացիր: — Ա՛ն օրէն պէրի  
 Ճիյէրս, ա՛յ Հօռօք, աշխօվըթ կէրի:  
 Շաշխըն էմ տառցէր առտու իրինկուն,  
 Նէ՛ իստէկ ունիմ, նէ՛ ըռահաթ քուն,  
 Նէ՛ կլօխըս խելք, նէ՛ վըրաս տէրման,  
 Աշկէս տուրս կ՛ելլայ կիտէս քի տիւման...:  
 Ան կանի միտկըս չե՞ս ի գար, կիւլիւմ,  
 Կ՛ըսեմ աս էօմրէն աղէկ է էօլիւմ:  
 Խօվուշը, խախվէն, շարշին, մահալլէն,  
 Կը նըստիմ, կ՛ելլամ՝ ախ վախ ընեկէն.  
 Նէ՛ ըռախին խէր կ՛ընէ, նէ՛ թիւթիւն,  
 Արխատաշնեբըս կը խընթան պիւթիւն.  
 Կ՛ըսէն քի. — «Եագըլս, գա՛վալլը Օքսէն,  
 «Կընիկ մը խուռմիշ ըրեր էր էօքսէն,  
 «Տուն ալ, խուշի պէս, սէրսէմ պուտալա,  
 «Պիր ազ գոնայըմ, ըսիր, պու տալա.  
 «Տուգախը ինկար, ա՛լ պօռա՛ կանչէ»...  
 Չէ՛, վալլահա՛ աս կաշվեկու պան չէ:  
 Մընէ՛ր, խըյանէ՛թ, կիւնա՛ն է ինձի,  
 Աճապ ա՞չք ունիս գէնկինի, մէնձի,  
 Քի մէյ մը ինձի չէս նայիր պիլէ...  
 Էս կէզի էսիր, խուլ խուռպան, քէօլէ:  
 Մէյ մը վըրանիս կարթա տէրպապան,  
 Ալթըլս տուն ինէ կիացիր ամէն պան...  
 Էս կէզի տարին տասվերկու ամիս,  
 Հաց, մոււմ, շարաթը օխա մըն ալ միս

Պակաս չէ՞մ ընէր, էս մա՛րթ է՞մ, հէ՞մ ալ  
 կարնէ՞մ, կը ծախէ՞մ հարուր թիւրլիւ մալ.  
 Ծըմէրը՝ միտիա, թորիկ, քարիտէս,  
 Պահարին՝ զէրէն, ֆուլիա խուկնկը պէս,  
 էտկը վախիթը կուգայ չիլէնկին,  
 էտկը պօստանը, խարբուզին սէրկին,  
 էտկը խայիսի, շէֆթալի, արմուտ,  
 էտկն ալ ուսկու՞մրի, քէֆալ, փալամուտ.  
 Մեր տունէն պակաս չըլլար լաքէրտան,  
 կը տատիմ, կէզի կը շինէ՞մ ֆիստան...  
 Տուն իմին տիւշկիւն հալիս մի՛ նայիր,  
 Խասըմին հէտըթ էրթանք բանայիր,  
 Տէ հօն նայէ՛ քի մէկ հաթ մը օլսուն  
 կա՞յ Օքսէնին պէս պապայիթ թօսուն:  
 Հօռօրի՛կ, նէրսըս կը վառի ալէֆ,  
 վա՛խ ճիվան էօմրիս քի կ'ըլլայ թէլէֆ.  
 Հաչան քի կէզի կէօնիւլ տըվէր է՞մ  
 կէզի չարնէ՞մ նէ էս կ'ըլլամ վէրէ՞մ...  
 Նէրսըս կը պանի թէստէրէ քէսէր,  
 Մէրհամէ՛թ ըրէ, էկու չէ մը՛սէր:  
 Տուն մէշկիս խուշախ, կըլօխիս մանտիլ,  
 էս ֆէնէր ըլլամ, տուն մէջը խանտիլ,  
 էս սախսի ըլլամ, տուն զէրէն զիւմպիւլ,  
 էս խաֆէս ըլլամ, տուն մէջը պիւլպիւլ,  
 Տուն տիրէկ ըլլաս, էս հէլքէն պէզի,  
 Հօվը պըչէ տէ պատտըվիմ կէզի...  
 կէնէ կ'ըսեմ քի չեմ տիմանար կօր,  
 Իշտէ մընացի տէրիյով օսկոր:  
 Տահա ի՞նչ կըրէ՞մ, հալըս եաման է:  
 Թախ քի մէքթուպիս ճուղապը քայ նէ  
 Պըտօր պէքլէյէ՞մ. ամա չէ՛ չըսես,  
 Զիրա խապիլ է, քէտէրէս, խըուսէս,  
 կ'ուզէ՛ս նէ հաւտա, կ'ուզէս մը՛ հավտար,  
 էտքը կէշութիւն կ'ըլլայ...: Ա՛ս խըտար:

ԱԼՓԱՍԼԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՑԱՆԿ

Ա

Այառա. զուարթ  
 Ային. ալիքը  
 Այդանադ. կարմիր թելով  
 Այուչե. թթուաչ, խակ սալոր  
 Ալլայա. գունաւոր ծաղիկ  
 Ակոկիլ. յամառօրէն կենալ  
 Աղբրանց-արուն. կարմիր ծաղիկ  
 մը  
 Աղու (կտրիլ). թոյն  
 Ամին. ամէն  
 Անբիծք, ամբիծք. ննջեցեալին  
 տունը կատարուած հոգեհան-  
 գիստ  
 Անանակ. ծիածան  
 Անկաջ ենող. լսող  
 Աեել. նայիլ  
 Աեկարա (անել). մէջտեղ հանել  
 Ապասի. մանր դրամ մը  
 Առ. հերկուող հողի շերտ  
 Արուն-սիլ. մակարդացած,  
 թանձրացած արիւն (սիլ-կաւ)  
 Աքիր. աչքեր

Բ

Բաղդադի. մէջքին կապելիք  
 երկար թաշկինակ  
 Բաղմանչի. այգեպան  
 Բանքմա. բանուժ է, կը բանի  
 Բաշլըղ. գլխանոց  
 Բարդան (բիթ). խոշոր պարկ,  
 պարկանման  
 Բեզարած. յոգնած  
 Բեքամաղ անել. վիրաւորել  
 Բերւոր. կթւոր, ոչխար կթող  
 Բեօն. բոյն

Բեչարե. անօք, խեղճուկ  
 Բկլիկ. որկրամու  
 Բոխ. բանջարեղէնի տեսակ մը  
 Բոխախ. վզի մասը կոկորդի  
 տակ  
 Բուքա. սիրահար  
 Բրիգադիր. աշխատանքի խում-  
 բերու մէջ աշխատող

Գ

Գագ. լեռնային փշոտ թուփ  
 (վառելիք կամ տաւարի կեր)  
 Գախ. ժամանակ  
 Գեադա. ծառայ  
 Գեագ. մանանա, փուշ  
 Գեամի. նաւ, առագաստանաւ  
 Գիւլաբաթ. վարդագոյն  
 Գոնիսալ. պարի մէջ ցատկել  
 Գուլիւեան (անել). վարդով զար-  
 դարել  
 Գրդնակ. խմոր բանալիք գլան

Դ

Դադ անել. տաղել, այրել  
 Դամ. ընթացք  
 Դարման. յարդ  
 Դեղեա փոքրիկներու փաղաք-  
 շական որակուժը ատրէցմար-  
 դոց (ամու)  
 Դելրե. դափ  
 Դիար-դիար. աշխարհէ աշխարհ  
 Դիզան. դէզ  
 Դիո՞ր. ո՞ւր  
 Դիփ. ամէն, բոլոր  
 Դմբել, դմբզել. բռունցքով  
 զարնել, ծեծել  
 Դովլաթ. բարձր դիրք

Դուդ. դոդ  
Դօժ. կուրծք

## Ե

Եաւել. աշել, նայիլ  
Ելման, յելման. վարար, յորդ  
Յրերուն. երերունող, փոխարե-  
րարար՝ անհանգիստ

Երիւկել նայիլ  
Երկրաւոր. երկու տեսակ

## Զ

Զանիթ անել. վարձել

Զեռ. պէս, նման

Զօղած. ջրդեղած

Զօլարթա. ոսկի

## Է

Էլ. օտար

Էմլա. այս տեսակ

Էսուց. հոսկէ

Էրնել. ցորենը հովին տալով  
յարդէն զատել

## Ը

Ղեուի. յօնք

## Թ

Թալել. նեակել, ձգել

Թալուկ. թափուած

Թալուր. տեսակ

Թարկ (թարգ) անել. լքել, թողուլ

Թեր. ծաղկի թերթ, տերեւ

Թրվանի. հրացան

Թոխի. նոխազ

Թոն. կարճատեւ առատ անձրեւ

Թովուս դուռ. սիրամարդ

Թովջի (անել). գնահատել

(տուրքը)

Թորկել. թողուլ

## Ժ

Ժախ. բոխ, բոյս մը

Ժուռ. խակ

## Ի

Իելիկ. բաճկոնակ

Իսկի. բնաւ

## Լ

Լալագար. կարմրափայլ

Լիբաս. հազուստ

Լոդկա. նաւ

Լոխն. ամբողջ

Լօթի. քէյֆ, կերուխում սիրող

Լօժ. լաւայ հաց

## Խ

Խալիս. ժողովուրդ, օտար մար-  
դիկ

Խամբաջի. երկրազործի աշխա-  
տակից կին

Խամուռ. եղէգն

Խասի. հասնի

Խարիբբին. պանդխտութիւն

Խաւ. թռչուն

Խըդիլ. տեղէն շարժիլ, երթալ-  
գալ

Խերուքին. հայրութիւն

Խըբիմ. անփորձ

Խոխա. երախայ

Խովներ. հովանար, զովանար

Խօր. հօր

Խօրած. թաղուած, թաղուելու  
արժանի

Խուցիկ-մուցիկ. նազ

Խալփուկ. զարդարուն զգեստ

Խոխալեր. հօրեղբայր

## Ս

Սեր. ծայր

Սկրալ. աքլորին կանչելը

Կ

Կանթել. թեւը նեւեւ  
 Կեր. ուտող, կրծող վէրք, կեղ  
 Կողակ. գետի փշածուկ  
 Կուրսիկ. կանանց վրայի հա-  
 գուսա  
 Կուզ. ամի  
 Կոնել. կռթնիւ  
 Կոներ (կուռ). ձեռքեր, բա-  
 զուկներ  
 Կոռ ու բեգեար. բռնի տուրք

Հ

Հաբարական. հասարակական  
 Հաղ (աւել). խաղ  
 Համբեք. գիւղի իշխաններ  
 Հայս (յայս). յայտնի  
 Հանգ. տեսակ  
 Հաւան. ցորենի խուրձ  
 Հուս (յուս). ուստի<sup>ո</sup>, ուրկէ<sup>ո</sup>  
 Հրես. ահա  
 Հոյ անել. ճամբայ իյնալ, սկսիլ

Ձ

Ձիկ, ձի. ինծի  
 Ձնեփակ. ծներեկ (ասփերժ —  
 բուռ ֆոնազ)

Ղ

Ղապլու. դապի, ամանի մէջ  
 դրուած  
 Ղափազա. թռչունի վանդակ  
 Ղիմեի չիմ զարկի. սիրտս չի  
 տանիր զարնել  
 Ղոչա. բանուկ  
 Ղուլ. ծառայ  
 Ղուար. սպիտակ ձի

Ճ

Ճամխել. ճամբել

Մ

Մադար. օգնութիւն  
 Մալաս. թթուաշ  
 Մալուլ. տկար, հիւանդ  
 Մասուր. վայրի վարդ  
 Մացի. մնացի  
 Մրգիկ. մեղի  
 Միգրիս. մազերուս  
 Մով. կապոյտ  
 Մուզ. գոց գոյն  
 Մուղնի. Արագածի ստորոտը,  
 Աշտարակի մօտ վանք մը

Յ

Յելման. տես՝ ելման  
 Յիրու. իրարու

Ն

Նախաւատի. նախիրի հաւաքա-  
 վայր՝ արօտ երթալէ առաջ  
 Նամար. սննդարար ուտելիք  
 Ներսիկ. խորոտիկ, սիրուն  
 Նուբար. առաջին բերք (բուր-  
 ֆանիսա)  
 Նօթաժ. կծկուած, փոթ-փոթ  
 եղած

Շ

Շամբ. եղէգնուս  
 Շանց հանել. նշան ընել  
 Շարաֆուն. շնորհալի  
 Շարմաղ (երես). շարմաղէ ան-  
 ցած ալիւրի պէս ճերմակ  
 Շափաղ (սալ). լոյս, փայլ  
 Շիմեաս. բարձր, գեղեցիկ, նաև՝  
 տոսախ  
 Շիւ. ընծիւղ  
 Շիւան. լաց ու կոծ  
 Շլապկա. գլխարկ  
 Շկոլանքիմ. դպրոցը

## Ո

Ունեամեջ. յօնքերուէն մէջտեղը

## Չ

Չարին. կարծր

Չաղ. գէր

Չանախ անել. բամբակ քաղել

Չանկլի դիւան. զանգակաւոր  
տուն

Չանչախ. սաստիկ շատախօս

Չեմեմ. երկարավիզ կօշիկ

Չքս. կօշիկ

## Պ

Պաժ. հասակ

Պապիկ. պապիկին

Պասիլի. ծրար

Պափա. Պաքուր

Պեհ. խոշոր, մեծ, մեծզի

Պրլ. խենթ

Պրսղրնցիս. պտղունցիս (երկու  
մասներու ծայրերուն միջև)

Պլեր ա. քանդուկեր է

Պնդուկ. կաղին

Պոքնկներ (պոուկ). շրթներ

Պրինսար. վիրաւոր

Պունուր. փոքր, պզտիկ

## Ղ

Ղամալ. գեղեցիկ, գեղեցկատե-  
սիլ

Ղամով. խուճբով

Ղեյրան. այծեամ

Ղորել. խուովել

## Ռ

Ռեխ. բերան, երախ

Ռքնե. ոինտ է, լաւ է

## Ս

Սաբիպ. պատճառ

Սադրի. շրջան մը իրանի մէջ

Սալդաթ. գինուոր

Սալթ. միայն

Սայ. սուրհանդակ

Սանխեր. սանահայր

Սավսե. սէր

Սելերը. սայլերը

Սեյրան. զբօսանք, զուարճու-  
թիւն

Սեյրան անել. հաճոյքով դիտել

Սին. սիւն

Սինձ. լեռնային բոյս մը

Սիւրահե, սիւրայի. կլոր, եր-  
կար սրուակ

Սղալել. յարգարել, շտկել

Սովդագար. վաճառական

Սուսամ (սուսան). կապոյտ շու-  
շան, հիւրիկ

## Վ

Վարար. յորդ, տեղատարափ  
(անձրիւ)

Վերի վերի. հպարտ հպարտ

Վի՞ր. որո՞ւն

Վուճել. շառագունիլ

## Տ

Տաշել. հարթել

Տարբէսար անել. թափառական  
դարձնել

Տափին սալ. գետին դնել

Տեֆերկին. տաղրոջ կին

Տեյմօր. մինչեւ որ

Տոլ. սնամէջ դղում

Տոնը. դուռը

Տուհ. ծայր, ճոթ

Տուֆիլ. հողաթափ

## Յ

Յել. հերկուած հող

**Փ**

Փար. իրար անցընել (ոտքերը)

Փարսլար. շուրջպար մը, ուր մէկ ոտքը կ'անցնեն միւսին մէջ

Փարե (փրե) Պարման. կամուրջ՝ Սասունէն իջնող Պարման գետին վրայ

Փարւազ (անել). թռչկոտիլ, սի-  
զարար զբօսնուլ

Փարւանա. թիթեռնիկ

Փելֆ. փայլք

Փեփե. նուէր

Փրխաւ. լիկեցաւ, հալեցաւ

Փողպատնի. օձիք

**Ք**

Քահրբար. սաթ

Քարափ. ժայռ

Քաւթառ. ծերուկ (վիրաւորա-  
կան)

Քաֆուլ (էանֆուլ, ֆենֆել). ճա-  
կատի գանգուր մազի փունջ,  
խոպոպ

Քաֆուր (վարդ). մութ կարմիր

**Քաղցրաբոյր վարդ**

Քթօց. կողով

Քիւր. քոյր

Քեօխակ. գիւղի մեծը, քէհեա

Քոթուկ. աղաոտ, գարշահոտ

Քոլ. մացառ, ցախ

Քորել. քերել

Քուչե. փողոց

Քուրսի. աթռու, մեծ աթռու կամ  
թախա, որ դրուած է թա-  
ղարի կամ մարած թռնիրի  
վրայ. կը ծածկեն զայն վեր-  
մակով. ապա ոտքերը ներս  
մացնելով, կը տաքնան ձմեռ  
եղանակին

Քոֆել. սարքել, լարել

**Օ**

Օգուման. սւղում են

Օխնուիլ. օրհնուիլ

Օսիաթ. կտակ

Օրօխկի. շրկէ

**Ֆ**

Ֆուրե. սպարօշ

**ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՅԻ ԵՐԳԵՐՈՒՆ ԲԱՌԵՐԸ**

Աբա. հապա

Ասաբ. բարեկրթութիւն

Այիվնումն (այվան). դահլիճի  
մէջ

Անախսելի. անյաղթելի

Անգան. ականջ

Ասկ. ազգ

Արբաբ. զրկուած, տուժած

Բաբ. հաւասար, համեստ, ընկեր

Բաբաթ. տեսակ, առարկայ

Բադեխան. Միջին Ասիոյ հա-  
մանուն գաւառի թանկագին  
սուտակ

Բաղման, բաղմանչի. այգե-  
գործ, պարտիզպան

Բանգ. թմրեցուցիչ, հաշիշ

Բանդ. կապ

Բաս. հապա

Բաս. վէճ, աշուղներու մրցում

Բեդասրգ. անտոհմիկ

- Բեդամաղ . դժգոհ, անտրա-  
 մադիր . — անել . վշտացնել,  
 սիրտ կոտրել  
 Բուքա . կուռք, պաշտելի  
 Բունիաք . հիմք (չէնքի)  
 Բովուն . հովուն  
 Գեք . վնաս, գէշութիւն  
 Գուլգազ . կարմրագոյն  
 Գուրծ . գործ  
 Գուլար . գոհար  
 Դադա . վարպետ, իմաստուն  
 Դալ . ճիւղ, տղաբերքէ ետք ա-  
 ռաջին կաթը  
 Դաղ . խարան, խոց, տաղ  
 Դամաղ . քիմք  
 Դանգ . ցորենաչափ (տէնկ—մէկ  
 չորրորդ մսխալ)  
 Դաս . նուագախումբ, շարք  
 Դասա . փունջ  
 Դասամազ . մազի փունջ  
 Դաւ տալ . դաւել, յանդգնիլ  
 Դեվեր . գէպի վար, ստորադաս  
 Դիդար . սիրուն, սիրելի  
 Դիվան . ատեան, դատարան  
 Դիվաց . դեւերուն  
 Դիբունանց . բոլորին  
 Դուգուն . խարան, տաղ, վիրա-  
 կապ  
 Եաղ . օտար, թշնամի  
 Եաւիլ . տարեկցիլ, բազդատ-  
 ուիլ, համեմատուիլ  
 Զար . ոսկի  
 Զարա . ուլունք  
 Զարբաբ . ոսկեկար բեհեղ  
 Զարնբան . ոսկենկար  
 Զոդ . խնճոյք  
 Էդնեն . ետեւէն  
 Էհամ . կ'երթամ  
 Էն գլխեն . սկիզբէն, առաջուց  
 Էնդուր . անոր համար  
 Էտխ . սէր  
 Էրիս . տուաւ  
 Թահր . տեսակ, եղանակ  
 Թարիփ . գովասանք, բացա-  
 տրութիւն  
 Թիդ . նետի ծայր, սլաք  
 Թիրման տալ . շալի տեսակ մը  
 Թօլա . կալաքարի ջուր, որով  
 կը ճերմկցնեն կտաւը  
 Իլթիմազ . աղաչանք  
 Իդբար . խոստում  
 Ինթիզար . կարօտ, սպասում  
 Լալ . կարկեհան, սուտակ  
 Լամզ . անուշ խօսակցութիւն՝  
 լաւ արտաբերումով  
 Լուր . լոր  
 Խալ . ծին (պէնկ)  
 Խամ . խակ, անփորձ  
 Խաս . ընտիր  
 Խար . փուշ, տատասկ  
 Խարա . վէտվէտուն մետաքս  
 Խիալ . երեւակայութիւն  
 Խունի . սեւ լեարդ, ջիգեար  
 Ծիդ . ծղօտ  
 Կեր . կար  
 Կուդի . պոչ  
 Կուք . կոթ  
 Կուան (կունն) . բազուկ, ձեռք,  
 կողմ  
 Զամաւա . միշտ, հանապազ  
 Զայա . ամօթ  
 Զանգ . եղանակ, տեսակ

Հանդամ. հասակ, ներդաշնակութիւն

Հաջ. հաճի, ուխտաւոր

Հարա. հաւար, օգնութիւն

Հուսով. հոտաւէտ

Ձար. ձիու պոչի մաղ, որ կը գործածուի քամանչայի աղիղնեքուն համար

Ղադե. ցաւ, փորձանք

Ղադեդ առնիմ, սանիմ. ցաւդ տանիմ

Ղազար. պատիժ, պատուհաս

Ղամզ. աչքի ծայրով պչրոտ նայուածք

Ղանդ. կոնածեւ գլուխ-շաքար

Ղաստ առա. ջանք ըրէ

Ղափա. սուրճ (խահուէ)

Ղուլուխ, դուլլուխ. ծառայութիւն

Ղոփա. ցանկապատ

Ղօնադ. հիւր

Մագամ. միթէ

Մար շինիլ. մեռցնել, պարտութեան մատնել

Մարում. յայտնի, ծանօթ

Մաս. գինովցած

Մարմաւ. շղարշ

Միխ. միխ, գամ

Միր. մեր

Միրա. բերկրանք

Մուհաջար. ցանկապատ

Մուրվաթ. գութ, շնորհ

Նաբաթ. բիւրեղացած շաքար

Նադաւ. նկարիչ, նկարէն

Նամ. խոնաւութիւն, ցօղ

Նաւար. նշգրակ

Նընգեցեց. իյնանք

Նուր. նոր

Նուրմեկանց. նորէն

Նօխար. ծառայ

Շարա. քանի մը շարք

Շահիփ. արքայական պատուիրակ, բարձրագահ

Շահսանամ. Աշուղ Ղարիբի սիրուհին

Շահով. դրամով

Շամս. արեւ

Շանց սալ. ցոյց տալ

Շար. օրէնք, արդարութիւն

Շարբաթ. մետաքսեայ նուրբ հիւսուածեղէն

Շրվախ. շուք

Շիմշաս. տոսախ

Շիրմայեմեկ. փղոսկրէ

Ունբր, ումբր. կեանք

Չայի, դափա. թէյ (չայ), սուրճ

Չափար. արախի շուրջը քաշուած փշացանկ

Չափարած. ցանկապատած

Չը դուս եհա. դուրս չերթայ

Պոօւ. շրթունք

Պսոել. փնտռել

Ջեր. անգամ, հեղ

Ջուհարդար. գոհարակիր, շողշողուն

Ջունուն. խելագար

Ռանգ. երանգ, գոյն

Ռաւ. առասպելական թեւաւոր ձի — Ռուստամի ձին

Ռեհան. շահասպրամ

Սադադ. կապարճ, նետ

Սալթի. նոճի

Սաջար. ծառ, թուփ

Սափա. քէյֆ, հաճոյք, վայելք  
(սէֆա)

Սեյալ. հեղեղ

Սիմ. արծաթէ լար

Սոյբաթ. զրոյց

Վարաղնած. ոսկեթերթով պա-  
տած

Վիթել. վոթել, թափել

Վի կենալ. վեր կենալ

Վուց. ո՛չ, ինչպէ՛ս

Տալ անել. կարել տալ

Տակոի. բոյսի արմատին մա-  
զաթելերը

Տար. օտար

Տուխս. հնգթերթեան ճերմակ  
ծաղիկ

Րափա. պատի դարան աման-  
ներու

Փար. շղարշ

Փարա. լոյս, ճառագայթ

Փարսեվար. պարսկերէն

Փրնջան. սկահակ, բաժակ

Փիալա. բիւրեղեայ բաժակ

Փռանգ. ֆրանսացի, եւրոպացի  
(ֆրէնկ)

Քաշա. երանի թէ

Քովուց. քովը

### «ՄՈԿԱՑ ՄԻՐԶԷ» ԵՐԳԻՆ ԲԱՌԵՐԸ

Բաժ. հասակ ու ձեւ

Բաբլէն. ձմերուկ

Բեմուրադ կենեւ. նպատակին  
չհասնէր

Բոզ Բեդալի. նժոյգին անունը

Գեաւս. խրախճանք

Դեղեց. թոյն քսեց

Դուրիէն. աշխարհը

Ետու. տուաւ

Էրաւ մաղսէն. դէմքը թթուե-  
ցուց

Թամաշէն. ի տես, դիտելու

Թամֆ. թամբ

Լամէն. խպիպը, կոկորդի ծալքը

Կաժեց. շերտ մը կարեց

Կրթիւն. գինիի բաժակ

Կոյոս. կարճ

Նաւ. դադաղ

Չանե. կզակ

Չուր. մինչեւ

Սաքար. ճամբորդութիւն

Օդէն. սենեակը



## Ե Ր Ք Ա Ց Ա Ն Կ

### Ա

	1. Աբարանը քարոտ ա	316
	2. Ազատն Աստուած այն օրից	26
*	3. Ազատութեան այն վառ սէրը	90
	4. Ազատութեան որդին եմ	153
	5. Ազատութեան սիրոյն համար	71
	6. Ազգ իմ, որքան նկուէն մնաս	370
	7. Ազիզ, անուշ հարըս դուն ես	351
*	8. Ազնիւ ընկեր, մեռանում եմ	76
*	9. Աթլաս ֆիստան, մոռ փոշի	271
*	10. Ալագեազ բարձր սար ա, հա՛ր աման	231
	11. Ալագեազ բարձր սարին	189
	12. Ալագեազ բարձր տեղ ա, հա՛ր	189
	13. Ալագեազ սարն ամպել ա	208
*	14. Ալաշկերացիք բարձան գացին	326
	15. Ալետանջ հողոյս միակ մխիթար	518
*	16. Ալ մօտ ըլլամ ո՛վ Տէր	396
*	17. Ալ ու ալուան ես հագել	227
	18. Ա՛խ, հարաբ, վերջ կը լինի՞	454
*	19. Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս	570
	20. Ա՛խ, իմ ճամբէն մոլոր գնաց	364
	21. Ա՛խ, ինչ ասեմ իմ հօրը	451
	22. Ա՛խ, ինչ լաւ են սարի վրայ	550
*	23. Ա՛խ, մարալ ջան	192
	24. Ա՛խ, վասպուրական, տխուր Հայաստան	31
*	25. Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ	511
*	26. Ա՛խ, քո սիրուդ կրակով	447
*	27. Ակոռիի մեծ կարասին	430
	28. Ահա բաժակ սւրախութեան	27

(\*) Ասղանիս կրող երգերը ձայնագրուած են:

* 29.	Ահա ելաւ լուսին արծաթ	401
* 30.	Ահա եկաւ մեր նոր տարին	582
31.	Ահա ծագեց կարմիր արեւ	490
32.	Ահա կ'երթամ սիրելի մայր	96
* 33.	Ահա մեզի մանուկ ծնաւ	396
34.	Ահա մօտեցան մահուան ժամերս	410
* 35.	Ա՛հ, իմ Աստուած դու լսիր	450
* 36.	Աղբերացու, ներես, լեզուս չի գալիս	449
37.	Աղբիւր, աղբիւր, ջա՛ն աղբիւր	546
38.	Աղուէսն եկաւ վերին թաղէն	278
39.	Աղուէսն էկաւ լանջիկ, մանջիկ	324
40.	Աղուէս պառկեր աղբի տակին	324
* 41.	Աղուոր գառնուկս իմ սիրուն	588
* 42.	Աղսւոր օրեր իմ մանկութեան	493
43.	Աղջըկե՛րք, պար բռնեցէք	583
* 44.	Աղջի՛, անաստուած նստիր վրանում	472
45.	Աղջի, անունդ Արաքսի	199
* 46.	Աղջի բախտաւոր, երնէկ քո սէրին	441
47.	Աղջի, դու հուր ես, մուր ես	236
48.	Աղջի, ինչի՞ մարդ չես առնի	315
49.	Աղջիկ հմ տանը դրած	284
50.	Աղջիկս քեզ կօշիկ առնեմ	462
* 51.	Աղջի հարսնարդ եկաւ	230
52.	Աղջի նազերով, շէկ շէկ մազերով	375
53.	Ամէն առաւօտ դէմդ բուսնէի	322
* 54.	Ամէն Հայի սրտից բխած	65
55.	Ամէն սաղի մէջըն գոված	253
56.	Ամպել ա ձիւն չի գալի, մթնել ա տուն չի գալի	220
57.	Ամպել ա ձիւն չի գալի, Շողեր ջան	200
58.	Ամպի մէջ լորիկ թռաւ	222
* 59.	Ամպի տակից ջուր է գալի	441
* 60.	Ա՛յ աղջիկ, ծամո՛վ աղջիկ	276
61.	Այգեպան ի՞նչ ես առում	346
* 62.	Այգուն, այգուն իմ խցկի մօտ	86
63.	Այդ աղջիկը երէկ տեսայ	406
* 64.	Այդ ի՞նչ է քո գարգը	452

65.	Այլուղըս կորաւ ձեր դուռը	278
66.	Ա՛յ, խորոտիկ, խորոտիկ	227
67.	Ա՛յ, ծամ կարած, դէ արի ցած	302
68.	Ա՛յ, Մաշտի, ուրախացիր	462
69.	Ա՛յ, մարալ աղջիկ, ա՛յ սիրուն աղջիկ	212
70.	Այն որ ծանօթ է պատմութեան ազգին	550
* 71.	Այս դուռը դեռ անառիկ է	154
72.	Ա՛յ, սեւ ամպեր, վա՛յ, սեւ ամպեր	494
73.	Այս ի՛նչ կորուստ, ի՛նչ մեծ ցաւ	428
74.	Ա՛յ, սիրուն աղջիկ, դրախտի ծաղիկ	190
* 75.	Այս խորհուրդ լցաւ	392
* 76.	Այսօր ձայնն հայրական	391
77.	Այսօր տօն է սուրբ Ծննդեան, աւետիս	394
* 78.	Ա՛յ վարդ, լսիր աղաչանքիս	513
* 79.	Ա՛յ, Քէօռօղլի, ջան Քէօռօղլի	468
80.	Այ Ֆոռկա, Ֆոռկա, Ֆոռկա	287
81.	Անդրանիկ փաշան բիւր ընկերներով	115
* 82.	Անի քաղաք նստեր կուլայ	83
83.	Անհօգ ես, չես գիտեր ինչ կայ	496
* 84.	Անձրեւ եկաւ շաղալէն	213
85.	Անմիտ ճնճղուկը բազէի ճանկից	356
86.	Աննման աղջիկ աչքդ լոյս	342
* 87.	Անսկիզբին գաղտնիքները ոչ դուն գիտես և ոչ ալ ես	526
* 88.	Անսնց համար որ ինկան	88
* 89.	Անուշ աղջիկ մ'ես զուարթ Արսինէս	589
* 90.	Անցիր սեւ ամպ իմ սրտից	533
91.	Անուշ քնիկն աչերն առեր	553
* 92.	Աշխատութիւն, աշխատութիւն	586
* 93.	Աշխատութիւն, երկնատուր գանձ	584
* 94.	Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ	389
* 95.	Աշխարհի սկիզբից էսպէս է կնիկը	432
96.	Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար	372
97.	Աշխարհումս ա՛խ չ'իմ քաշի	258
98.	Աշխոյժ նաւաստին անվեհեր ճակատ	426
99.	Աշուղ եմ էդ քու սեւ սեւ աչերիդ	287
100.	Աչքերըդ օլոր-մոլոր	211

101.	Առաւօտ արշալոյսին	67
102.	Առաւօտեան արշալոյսին, եա՛ր	332
103.	Առաւօտուն լոր մտաւ արտ, վա՛խ	190
104.	Առաւօտուն բարի լոյս	206
* 105.	Առաւօտուն փչեց հով	575
106.	Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն	391
107.	Առնեմ, երթամ էն սաբ	305
* 108.	Առտուն կանուխ թէ ելլենք	576
109.	Առտուն կ'ելլես դու և ժուռ կուգաս	413
110.	Առւիցը ջուր և գնում	323
111.	Ասում են դիմացիր, ես ո՞նց դիմանամ	282
* 112.	Ասում են թէ մի աղջիկ	272
* 113.	Ասում են ուռին աղջիկ էր ինձ պէս	444
* 114.	Աստղով բանուած գիշերին մէջ	522
* 115.	Աստուած տուաւ իր ձեռքերով	575
116.	Արազը հեշտացել և, էլլինսօ եար	355
117.	Արազը հեշտացել և, ի՞նչ ասեմ հօրս մօրս	214
* 118.	Արազի ափին ծնած դու ընկեր	163
119.	Արազն եկաւ լափին աւելով	534
* 120.	Արդեօք գիտե՞ս դու, որ չեմ մոռացել	216
121.	Արե՛ւ, արե՛ւ, դուրս արի	308
* 122.	Արեւ բացւեց թուխ ամպերէն	270
* 123.	Արեւ ըլլամ՝ ծաթի՛մ, մարի՛մ վերեւէդ	317
124.	Արեւը կայնէ կէսօր	206
125.	Արեւը կեռ ու կամար	220
126.	Արեւը նոր ծագել և	229
127.	Արեւ թըռվըռով ելաւ	226
* 128.	Արեւի շողին տակ տեսայ	328
129.	Արեւն ելաւ կամար կամար	217
130.	Արեւն ըրաւ օրուան շրջան	590
131.	Արի՛, բլբուլ, մէկտեղ նստենք	495
132.	Արի՛, դութան, վարի՛, դութան	509
* 133.	Արի՛, երգիր սիրուն բլբուլ	411
134.	Արի՛ երթանք սարն ի սէյրան	294
135.	Արի՛ իմ սոխակ, թող պարտէղ մերին	57
136.	Արի՛ ինձ անգաճ կալ	251
137.	Արի՛ համով դուլուղ արա	251

138.	Արի՛ Մանան, արի՛, գնանք մեր տունը	311
139.	Արի՛ք, ընկերք քաջակորով	79
140.	Արի՛ք, կայտառ հայորդիներ	175
141.	Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք	16
142.	Արխալուխդ կարելի եմ	418
* 143.	Արշալոյսը նորէն բացւաւ	485
* 144.	Արշին մալջի մալ ցոյց տուր	454
145.	Արա ու տուն լցրել է բարը	348
146.	Արօրն ասաց տատրակ հաւքուն	188
<b>Բ</b>		
* 147.	Բազէաս ու բարըս դու ես	373
* 148.	Բա՛մ, փորոտան, բարձուստ բոմբիւն	10
149.	Բան եմ ասում ականջ դիր	464
150.	Բանախ դռներն էին կօթը ելքերով	160
151.	Բարե՛ւ, պարոն Ղուկաս	433
152.	Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն	226
* 153.	Բարի լոյսի զանգեր զարկին	506
154.	Բարձրէն ելաւ հրամանը	162
* 155.	Բարձր սարեր, ա՛յ սարեր	445
* 156.	Բարձր սարեր, խոր խոր ձորեր	519
157.	Բարով եկար սիրուն կռունկ	96
* 158.	Բարով եկար սիրուն սարեակ	582
159.	Բաց արա դուռը, բաց արա դուռը	461
* 160.	Բացել են գարնան օրերը պայծառ	565
161.	Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ	266
162.	Բերէք շիշը, բերէք բաժակը	429
163.	Բէգազու աղջիկ, դռնէն դո՛ւրս արի	241
* 164.	Բէգի աղջիկը երեւի սօ էր	457
* 165.	Բլբուլ, էլ ի՞նչ ես երգում	359
* 166.	Բլբուլի հիդ լաց իս էլի	249
167.	Բոյըդ բարձր սալվի չինար	424
168.	Բոցիկու սարին սեւ ամպն է չոքեր	170
<b>Գ</b>		
* 169.	Գանձեր ունիմ անտակ անձէր	304
* 170.	Գառնարած Մոսին, առաւօտ լուսին	580
* 171.	Գարահիսար լերան կրծքին	129

* 172.	Գարնան արեւ, այգուն այգուն	81
173.	Գարնան շաղով, անուշ տաղով	493
174.	Գարնան գուլթան հանեցի	244
175.	Գարուն ա ձուն ա արել	247
* 176.	Գարուն Երեւան, սիրուն Երեւան	288
177.	Գարունքները դու ման կուզաս սարումը	202
178.	Գացել եմ շուկէն, էրել եմ բազար	310
179.	Գացէք, տեսէք ո՞վ է կերել զէծ	195
180.	Գացի արտեր, բռնի լոր	290
* 181.	Գեղեցիկ հոտաւէտ դու ծաղիկ լեռնային	506
182.	Գետի ափին լուաց անում	190
183.	Գերեզմանիս թող արձանին վրայ	109
* 184.	Գիշերն ուշ է, հովն անուշ է	495
185.	Գիշեր ու ցորեկ հէշ հես ելլեր մտացս	345
* 186.	Գիշեր ցերեկ ես քուն չունիմ	545
187.	Գիշեր ցերեկ կը հառաչեմ, ա՛խ, օրիորդ	402
188.	Գլգլալով ջուր է իջնում	144
189.	Գնա արի, ման արի	351
* 190.	Գնա արի, ման արի (ուրիշ բառերով)	382
191.	Գնա բլթուլ մեր աշխարհից	32
192.	Գնա, գնա, գալիս եմ թեւիլօ	316
193.	Գնա, գնա, հետիդ եմ	234
* 194.	Գնդակ որոտաց Նոյեմբեր ամսուն	135
* 195.	Գոռաց ուումբը, գոռաց Հայր Սուլթանին	157
196.	Գուլթանը հաց եմ բերում	236
197.	Գրող տանի քուրդ Աբոյին	162

## Դ

* 198.	Դամբը ձեռիս աշխատում եմ	469
199.	Դա շապիկն է այն քաջ մարդուն	94
* 200.	Դաշնակցական խումբ զնանք մենք Սասուն	167
201.	Դարգու աշուն սարէն իջաւ	82
202.	Դարդ մի՛ անի, ջան ու ջիգեար	262
* 203.	Դարդս լացէք սարի սմբուլ	408
* 204.	Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին	128
205.	Դեղնած դաշտերին իջել է աշուն	551
206.	Դէ՛ գնա, կիգամ, վա՛յ գնա կիգամ	275

207.	Դէ՛ հիմա եկէք մեր Զումշուդին	451
* 208.	Դէպի ազատ դաշտ, հղբայրնե՛ր	547
* 209.	Դիւրա՛ր ջան, Դիւրա՛ր ջան	295
* 210.	Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր	423
211.	Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ	62
* 212.	Դու իմ գլխին մարդ չդառար, ցաւ դառար	448
* 213.	Դու իմ մուսան ես, առանց քեզի՛	362
214.	Դու խօսք տուիր ինձանից չգատուէիր	235
215.	Դուն ելեր ես սարը սէյրան	235
* 216.	Դուն էն գլխէն իմաստուն իս	256
217.	Դու քո ճամբէն գնա քոյրիկ	415
<b>Ե</b>		
* 218.	Եար մ'ունէի չինար բոյով	405
219.	Եա՛ր ջան, արի, դուն մի առնի էն աղին	246
220.	Եար, քո հոգուն մեռնիմ նազեր	332
* 221.	Եարօ ջա՛ն, դուն Մասիսի սարն ես	419
* 222.	Եթէ կամինք փրկել թշուառ հայրենիք	80
223.	Եթէ մի օր, անո՛ւշ ընկեր	486
224.	Եթէ տժգոյն մահու հրեշտակ	498
225.	Ելար, սարով գնացիր	335
226.	Ելեր եմ գացեր ծաղկոց ձորն ի վեր	319
* 227.	Եկան գարնան անուշ օրեր	371
228.	Եկան, եկան Մոկաց հարսներ	243
229.	Եկան, եկան Մոկաց հարսներ (ուրիշ բառերով)	243
* 230.	Եկաւ անուշ գարունը, հանդ է գնում սիրունը	365
* 231.	Եկաւ գարուն ու արեւ	567
* 232.	Եկեալքս ի մտանել արեգականն	388
233.	Եկել է գարուն, սոխակը սիրուն	29
234.	Եկեր առջեւս կայներ ես	116
* 235.	Եկէ՛ք, քոյրեր, սէգ սարերի	474
236.	Ե՛կ, իմ սիրած քեզ եմ սպասում	457
237.	Ե՛կ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին	475
* 238.	Եկուր, իմ աղուոր... Այս գիշեր հով կայ	420
239.	Եղբարք, յառաջ սլանանք քաջ	175
240.	Եղսօն նստեր կով կը կթէ	303
241.	Ես աղջիկ եմ, հէր չունիմ	223

242.	Ես եմ ազատ հայ պատանի	153
* 243.	Ես թիթեռ եմ, ոսկեթեւ եմ	578
* 244.	Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ	75
* 245.	Ես լսեցի մի անուշ ձայն	500
* 246.	Ես ծարաւ էի, աղբի'ւր, ջուր տուիր	240
247.	Ես կը գնամ միայն նրան	458
248.	Ես հանեցի սուրս պատեանից	543
* 249.	Ես հայ տղայ մ'եմ զարմէն հայկազուն	586
250.	Ես մէկ ծառ եմ ծիրանի	349
251.	Ես մի թաք տղայ եմ	334
252.	Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէ	58
* 253.	Ես շուն մը ունիմ գանգուր վարսերով	587
254.	Ես պուճուր, եարբս պուճուր	242
255.	Ես սարէն կուգայի, դուն դուռը բացիր	228
256.	Ես սիրելի եմ մի գոյգ աչեր	421
257.	Ես սիրելի եմ վարդը տժգոյն	418
258.	Ես սիրեցի, ուրիշն առաւ, սիրուն ջան	324
259.	Ես քեզ սիրի, որ դու ինձի չթարկես	414
260.	Ես քեզ տեսայ բանտում խաչուած	148
261.	Ես քեզ տեսայ երբ կուգայիր	300
262.	Ես քեզ տեսայ մէջը այգուն	373
263.	Ես քու ասածներիցդ չեմ	462
264.	Ես քու ղիմէթըն չ'իմ գիդի	257
* 265.	Երբ ալիկոծ ծովու վրայ	131
266.	Երբ խաղողին դեղին ողկոյզ	478
267.	Երբսր բացուին դռներն յուսոյ	20
268.	Երբոր մայրը երկունքով	84
269.	Երբոր մենք մեծնանք, պիտեր ունենանք	73
* 270.	Երգում է ծովը, դաշտը, հովը	525
271.	Երգիկ, երգիկ բռնել ես	267
272.	Երեւան բաղ եմ արել, նէյնիմ աման	330
273.	Երեւան բաղ եմ արել, ջան արեւ	215
274.	Երեւան երթալու եմ	572
275.	Երեւանից դուրս ելայ	421
276.	Երէկ տեսայ քեզ պարտիզում	406
277.	Երթանք կալը, բռնենք պարը	340

278.	Երկինքն ամպել է, ի՛նչ անուշ թոն է	199
* 279.	Երկնում կապոյտ երգեց արտոււ	522
280.	Երնէկ թէ այս նոր տարին	74
* 281.	Եւ այս դարուն կ'անցնի շուտով	515
282.	Եօթն օր, եօթ գիշեր, շամամն ի գօտիս թումբըշեր	204

Ձ

283.	Ձանգերն ալ կախած էն տաճարի դրան	268
284.	Ձանգին եկաւ կռիւ տալով	557
285.	Ձա՛ր, զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թող զնգայ	282
* 286.	Ձարթիր, ա՛յ իմ դաշտ	580
287.	Ձարթի՛ր, որդեակ, ուշ բեր, վեր կաց	101
* 288.	Ձերագի (պարի եղանակ նուագի համար)	540
289.	Ձէնքերս տուր, մայրիկ	161
* 290.	Ձի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն	279
* 291.	Ձինուած, պատրաստուած Ձէյթունի քաջեր	541
* 292.	Ձով գիշեր է, դուրս եկ	377
293.	Ձուարթ նաւաստին, ծովերուն վրայ	551
* 294.	Ձուգուած, դարգարուած թաւիչ կանանչով	569
* 295.	Ձուրկ ազնիւ բարձէ, առանց կրթութեան	590
296.	Ձօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս	390

Է

* 297.	Էդ սակեթել մազերդ	352
298.	Էլա տանիս հերդիս բացի	381
* 299.	Էլի էս օր սիրտս կուլայ	366
300.	Է՛յ բէմուրազ մի սըպանի	258
* 301.	Է՛յ դու ջահել, հպարտ հասակ	529
302.	Է՛յ ժողովուրդ, երգս լսէք	513
303.	Է՛յ, ջան հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես	51
304.	Էն տեսակ կին և իր հոգին	405
305.	Էշխէմէդ հիվանդացիլ իմ	262
306.	Էշխէմէն էնպէս վառվիլ իմ	250
307.	Էշխիցող ջունուն դառած	346
308.	Էջմիածին երթամ ուխտ	294
309.	Էջ Միածինն ի հօրէ	386
310.	Էս առուն ջուր է գալի	292
311.	Էս գիշեր լուսը տեսայ	237

* 312.	էս գիշեր լուսնակ գիշեր	193
* 313.	էս ի՛նչ վարար ջուր եկաւ	325
314.	էս ճամբէքը ուր ա	245
315.	էս օր Արագն ես գնացել	560
316.	էս օր ուրբաթ է, պաս է	246
* 317.	էրզրումի պար (պարի եղանակ նուագի համար)	538
318.	էրւում եմ, էրւում	282
<b>Ը</b>		
* 319.	Ընդ աստեղօք օտար օփանց	87
* 320.	Ընկերով կայնած քուչէն	327
321.	Ընկերով կայնած քուչէն (ուրիշ բառերով)	327
* 322.	Ընչանք ե՞րբ ես դիմանամ	463
<b>Թ</b>		
* 323.	Թալիշու ճամբէն դուզ ա	295
324.	Թամամ աշխար պտուտ էկա	260
* 325.	Թամզարա (պարի եղանակ նուագի համար)	535
* 326.	Թառամեցաւ կարմիր վարդը	467
* 327.	Թառը դօշիս զօր ու գիշեր	367
328.	Թաքավուր իս, դիվանս արա	263
329.	Թէ զիս կանչեն օտարաց	88
* 330.	Թէ թեւ ունէի, ո՛հ, կը թռչէի	28
* 331.	Թէ հայրենեաց պօականդիր	41
332.	Թէպէտ վտար քաղքէ քաղաք	77
* 333.	Թշուառ հայրենիք, ո՛հ դու լաս հերիք	552
334.	Թող բարձրացնեն ճռինչ, աղաղակ	92
335.	Թող բլբուլ չերգէ Մշոյ դաշտերում	34
336.	Թող երգէ բլբուլ Մշոյ դաշտերում	35
337.	Թողի երկիրն իմ հայրենի	91
338.	Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս	39
* 339.	Թող քեզ ծածկեմ, անդին բալաս	569
340.	Թուրքը լսեց անունդ, Չավո՛ւշ	119
* 341.	Թռչէի մտքով տուն, ուր իմ մայրն է արթուն	209
* 342.	Թօշնած ծաղիկ դու մենաւոր	584
<b>Ի</b>		
343.	Ի բիւր ձայնից բնութեան շքեղ	24
* 344.	Իբրեւ արծիւ սաւառնում ես	114

* 345.	Ի զէն, Հայեր, Ի սուր և Ի հրացան	111
* 346.	Իզձերս ամէն հնձելէ վերջ	523
347.	Իմ անուշիկ մայրիկս	112
348.	Իմ կեանք ու սէր սիրուն ազջիկ	242
* 349.	Իմ հայրենեաց հոգի վարդան	44
359.	Իմ մայր Հայաստանի մայր հողից ծնւած	544
351.	Իմ չինար եարին, Իմ գոհար եարին	215
* 352.	Իմ սիրելի զաւակունքս	61
353.	Ինձմէ մի նեղընա, Իմ խոզու մասը	210
354.	Ինձ մի խնդրի, ես չեմ երգի	486
* 355.	Ինձ մի տանջիր, մի շարշարիր, սիրեկան	548
* 356.	Ի՞նչ կօնիմ հէքիմըն, Ի՞նչ կօնիմ շարէն	254
* 357.	Ինչո՞ւ ապշած ես, լճակ	497
* 358.	Ինչո՞ւ Բինգէօլը մտար	191
359.	Ինջինար եար ջան, փունջինար եար ջան	274
* 360.	Իջիր արքայ հզօր	395
361.	Իսլամական գոռ վաշտերը կատաղի	121

## L

362.	Լէ, լէ, լէ, լէ Թամզարա (ձայնագրութիւնը՝ էջ 535)	290
363.	Լէ՛ւյ հօ՛, լէ՛, լէ՛, լէ՛ւյ հօ՛	294
364.	Լէփօ լէ լէ, լէփօ, լէ լէ	189
* 365.	Լճի մէջ նաւակը մեղմ հովիկ կը տանի	403
* 366.	Լորկէ (պարի եղանակ նուագի համար)	540
* 367.	Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր	397
* 368.	Լուսաղբիւրին ծառերը	540
369.	Լուսաստղ գցեց դուռ	194
* 370.	Լուսը լուսացաւ, բարին շատացաւ	566
371.	Լուսինն ելաւ էն սարին	239
* 372.	Լուսին չկար, մութ գիշեր էր	106
373.	Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ	404
374.	Լուսնակը սարի ասկին	322
375.	Լուսնակը ցոլաց գնաց	211
376.	Լուսնակը ցոլաց գնաց (ուրիշ բառերով)	211
377.	Լուսնակն անուշ, հովն անուշ	200
378.	Լուսնկան կամար կամար	365
379.	Լռեց: Ամպերը եկան ծածկեցին երկինք	19

* 380.	Լօ, լօ, լօ, սէգ Սիփանայ սարի վերան	103
	խ	
381.	Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելլենք	130
382.	Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ	100
* 383.	Խաւարել եմ որպէս գիշեր	71
384.	Խլաթի գաւառ, Սոխորդ գեղ ըսուած	118
385.	Խնամիներս համեցէք, աչքիս վրայ տեղ ունէք	451
386.	Խնուսից գալսդ հայ զինուորները քաջ	155
387.	Խորհուրդ մեծ և սքանչելի	394
388.	Խումար պարկե երես բաց	247
	Ս	
* 389.	Մագեց արեւ ազատութեան	117
* 390.	Մագեց արեւն հորիզոնէն	585
391.	Մագէ՛ արշալոյս, ծագէ՛ արուսեակ	140
392.	Մառիս տակը կանաչ է	302
* 393.	Մառիս տակը մանիշակ, ջան գիւլիւմ, ջա՛ն	185
* 394.	Մափ ու ծնծղայ զարկէք այսօր	471
* 395.	Միծեռնակը բոյն կը շինէր	530
* 396.	Միծեռնակ, ծիծեռնակ	97
* 397.	Միրանի ծառ, բար մի՛ տայ, վա՛յ	224
398.	Միրանի ծառի տակին	303
* 399.	Մխէ, ծխէ, ո՛վ բուխուրիկ հայրենի	309
* 400.	Մովը յողնած, փրփուր բերնին	491
401.	Մովուն խաւք մը կէր, անունն էր արօր	299
402.	Մոցիդ կախուած խաչն ըլլայի	413
	Կ	
* 403.	Կալերի ճամբէն թաղա	544
* 404.	Կալսել ես ցօրենը սարի պէս	333
405.	Կամաւոր հայ զինուոր ենք	124
406.	Կայնել եմ՝ գալ չեմ կարող	292
407.	Կայնել ես, կանչում էլ չես	247
408.	Կայնել ես սարի վրայ, չինարի ծառի վրայ	364
* 409.	Կանաչ արտում ման կը գամ	578
410.	Կանչէ՛, կռունկ, կանչէ՛	376
411.	Կանչում եմ եար արի, եար արի, եար	376
412.	Կապոյտ երկնքում աստղեր են փայլում	406

* 413.	Կապոյտն ի վեր խորասոյդ	507
* 414.	Կարկուտ, կայծակ և երկրաշարժ	433
* 415.	Կարկուտ տեղաց Խանասորայ գաշտումը	122
* 416.	Կարմիր գինի, անուշ գինի, վա՛յ, վա՛յ	429
* 417.	Կարմիր գինիով եղեր եմ գինով	436
* 418.	Կարմիր մարջան, ախպէր ջան	568
419.	Կաքաւ թռաւ բանձր քարին	323
420.	Կեանքիդ, արեւիդ մատաղ	335
* 421.	Կեղտոտ խոզիկ, խուճուճ պոչիկ	564
422.	Կէս գիշեր է, լուռ և հանդարտ է չորս գին	505
423.	Կէս գիշերին գեաի ափին	559
* 424.	Կէրմէօր Փըստան հէգէսուծի	540
* 425.	Կլոր պար, մէջը ծառ	374
426.	Կողբայ ելան սելերը	298
* 427.	Կովկասի քաջե՛ր, խմբեր կազմեցէք	125
428.	Կոտորածն անգութ, Հայերը թող լան	72
* 429.	Կուգաս անցեալի սսկուն մշուչէն	180
* 430.	Կուժն առայ, ելայ սարը	234
431.	Կո՛ւկուլիկու, սանամէ՛ր	270
* 432.	Կռուեցէ՛ք աղերք, կռուեցէք քաջ քաջ	151
433.	Կռուի գնացող զինուորներից	507
* 434.	Կռունկ, ո՞ւստի կուգաս	69
* 435.	Կրամբամբուլին այն օղին է	435
436.	Կրամբամբուլին այն օղին է (ուրիշ բառերով)	439

## Լ

* 437.	Հարբրբա՛ն, ջանէ ջան	197
438.	Հագել ես կարմիր, կայնել ես կալը	295
439.	Հագար ինն հարիւր եօթը թուականին	119
440.	Հալածուած ենք Հայաստանի լեռներէն	79
441.	Հալւեց սարերի ձունը	383
442.	Համեստ աղջիկ, ինձ մի տանջիր	408
443.	Հայ ապրինք, եղբա՛րք, մարդկութեան մէջը	56
* 444.	Հայաստան երկիր գրախտավայր	18
445.	Հայաստանէն եկած զինուոր	144
* 446.	Հայաստանի վէրքի երգիչ	369
* 447.	Հայաստանից եկած զինուոր	152

* 448.	Հայ արիներ ենք կարգապահ	174
* 449.	Հայ արիներն, Հայաստան, օտարութեան ուրիշներէն	553
450.	Հայդուկ եմ ես դաշնակցական	130
451.	Հայդուկ մի վախնար Քիւրաի գնդակից	156
* 452.	Հայ եղբայրներ, զէ՛ն, գունդ ի գունդ	168
453.	Հայ եմ ես, մեռնիլ զխոցող Հայ եմ ես	73
* 454.	Հայ երիտասարդք, շուտ շտապեցէք	136
455.	Հայե՛ր, Մասիսը ժամն է առեր	91
456.	Հայկազունք, պար բռնենք	77
457.	Հայոց աշխարհիկ, գարժ՛ւնդ է հասել	94
458.	Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ	482
459.	Հայրենեաց սիրոյ համար	107
460.	Հայրենիքէս հեռացել եմ	515
* 461.	Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք	60
462.	Հայր մեր երկնաւոր, սուրբ ըլլայ քո անուն	87
* 463.	Հանդէն գաս, գեղը մանես	267
	Հարսանեկան երգեր	
464.	Ա) Մեր թագւորին ի՞նչ պիտի	218
465.	Բ) Գացէք բերէք թագւորամէր	218
466.	Գ) Մեր թագւորն էր խաչ	219
467.	Դ) Է՛ն գիզան, պէտ պէտ գիզան	219
468.	Ե) Թագւորի մէր, դուստ արի	220
* 469.	Հաւատացիր ինձ Ասկեար ջան	453
* 470.	Հաւիկ, հաւիկ աներես	581
* 471.	Հեռաւոր երկիր նստած դու նժգեհ	173
* 472.	Հերիք որդեակք այսքան տարուան տառապանք	52
473.	Հերոս մանչեց, Սուլթան դողդողաց	141
474.	Հէ՛յ իմ սիրուն, հազար սիրուն	404
475.	Հէ՛յ պարոններ, տկանջ արէք	490
* 476.	Հէ՛յ, ջան, անցան բուք ու բորան	566
477.	Հէ՛յ, ջանէ ջան, լանջեր մարջան	330
478.	Հըլէ ինձ համար մարալ ես	458
* 479.	Հիմի՞ էլ լուսնք, եղբարք, հիմի՞ էլ	36
480.	Հիմի՞ էլ խօսենք, եղբարք, հիմի՞ էլ	38
481.	Հինգ էժ ունիմ ուլ էժերով	283
482.	Հիւր ըլլամ, քեզ հիւր ըլլամ	413

483.	Հնչակեան ենք մենք, ուխտեալ-գինուօրներ	126
484.	Հոգի կուտամ, հոգի տուր ինձ	424
485.	Հո'ւյ, գիւլի գիւլ, հո'ւյ գիւլի գիւլ, Գիւլիգար	372
486.	Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա եարբս	215
* 487.	Հոռովէլ, հօ՛, սիրած եարբս	360
* 488.	Հո'վ արէք, սարե՛ր ջան, հո'վ արէք	291
* 489.	Հովերն առան սար ու դարեր	479
* 490.	Հովը ցայգուն կը հեծեծէ	416
491.	Հովիւը սարում ախրեց	402
492.	Հո'վ, հո'վ, հո'վ լինի	298
* 493.	Հունձք կը ժողվեմ մանգաղով	488
494.	Հրաւէր ունէր Արտաշը	438
495.	Հօ'դալլօ, ջան, հօդալլօ	282
* 496.	Հօ՛, երգում կանեմ որ քեզ չեմ թողնի	463
497.	Հօ'լ արա, գոմէչ ջան	232
* 498.	Հօ'լ արա, եզը, ջա՛ն աղբէր	233
499.	Հօ՛, հօ՛, յառաջ արօրը	509
500.	Հօ՛յ, եար, ամպել ա ձուն չի դալի	229
501.	Հօ՛յ, Հելինէ, Հելինէ եարը	318
* 502.	Հօ՛յ, Նա՛զանըմ, Նա՛զանըմ	320
* 503.	Հօ՛յ նարէ (պարի եղանակ նուագի համար)	538
* 504.	Հօ՛յ նար, ծամեր ունիս ծիրանի	231
* 505.	Հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար	312
* 506.	Հօ'ւյ թռիր, թռիր իմ ձի	576
507.	Հօ՛, ոթ՛լ օ՛, լօ՛, լօ՛, լօ՛	282
<b>Ձ</b>		
508.	Չախսրդ օրերը ձմրան նման	225
509.	Չայն մը հնչեց էրգրումի Հայոց լեռներէն	46
510.	Չայն տուր ո'վ ծովակ, ինչո՞ւ լռում ես	40
511.	Չայն տուր ո'վ Ֆէտա, ինչո՞ւ ես տրտում	134
512.	Չգեցիր դիս քո սուն, թողիր հեռացար	555
513.	Չեր պարտէզում անուշ հոտով	274
514.	Չէնըդ քաղցր ունիս, լամզով կը խօսիս	370
* 515.	Չի՛գ դու, քաշի՛, ա՛յ եզը	244
* 516.	Չին է գալիս սարի գլխին	368
517.	Չիւներն հատ հատ երկինքէն վար կը թափին	494

* 518.	Զիւնը եկաւ շատ առատ	579
* 519.	Զիւն, փափուկ ձիւն	571
* 520.	Զկնիկ, լող տուր, լող արա	581
* 521.	Զմեռն անցաւ եկաւ գարուն	384
522.	Զմեռն ինչ կ'ուզէ թող ըլլի	437
Ղ		
523.	Ղարիբ աղբէր, արի մեր տուն	485
524.	Ղարիբ եմ կարս գնացի	223
Ճ		
525.	Ճամբայ տուէք սար ու դաշտեր	484
526.	Ճամբորդ կուգայ, ինչ խումաշի բեռներ կայ	221
Մ		
527.	Մածուն կ'ուզեմ, թան կը բերես	426
528.	Մակոյկն է խրած օրօրուն ափին	487
* 529.	Մաճկալ ես, բեզարած ես	336
530.	Մայիս ամսոյ դու գեփիւնիկ	89
531.	Մայր Արաքսի ափերով	42
532.	Մայրենի լեզու, մայրենի բարբառ	59
533.	Մայրիկին կազմա բերին	361
534.	Մայրիկ, մի երթար փաշի սարէն	167
535.	Մայր Հայաստանն է կուլայ սգաւոր	151
536.	Մայր մանէ մանածս	293
* 537.	Մանի, մանի իմ ճախարակ	577
* 538.	Մանիչակ եմ քաղել	466
539.	Մանիր, մանիր իմ ճախարակ	492
* 540.	Մանկութեան օրեր, երազի նման	558
541.	Մաշտի իպսա դու մեր տունը	461
* 542.	Մառնուս աղը մովի է	311
543.	Մարալ գոմէշ նազ կանէ	233
544.	Մարգիս միջին կայ համեմ	243
* 545.	Մարաբ տալիս է ձնծաղիկ	568
546.	Մարտի դաշտը սլացէք, ս՛վ քաջեր	118
547.	Մաքուր սրտով մտորուն	420
* 548.	Մեզ են դարնան շնչով կանչում	283
* 549.	Մենակ էինք ես ու Շողիկ	528
550.	Մենք, ա՛յ աղուոր աղջիկ, եկել ենք ձերը	284

* 551.	Մենք անկեղծ զինուոր ենք, առանձին վիճակ	142
552.	Մենք հասանք մեր նպատակին	460
* 553.	Մենք պէտք է կռուենք և ոչ լաց լինենք	166
554.	Մեռայ բազը գնալէն	381
555.	Մեր բազը ծառ ա, ձեր բազը քար ա	215
556.	Մեր գիւղացու հարսանիքում	570
557.	Մեր դրանը խնկի ծառ	208
* 558.	Մեր հայրենիք թշուառ, անտէր	7
* 559.	Մեր Սօսը վարդին սիրեց	465
* 560.	Մեր տան առաջ պարտէզ կայ	567
* 561.	Մեր տուն ձեր տուն դիմաց դիմաց	438
* 562.	Մեր փիսօն շատ ծոյլ է	562
* 563.	Մէ խօսկ ունեմ իլթիմագով	252
564.	Մէկ ձի առայ աշխարհ ընկայ	455
565.	Մէջլումի պէս կորաւ եարբս	263
566.	Մըր խոր պապկէ գերեզման	366
* 567.	Մթին դարերու անդունդին խորէն	99
568.	Միաշաբաթ օր հանգստեան	392
569.	Մի գեղեցիկ պարզ գիշեր էր	101
* 570.	Մի' լար, աղուորս, մի' լար	409
* 571.	Մի' լար, բլբուլ, քեզ մի տանջիր	512
* 572.	Մի' լար, մի' թացիր աչերդ	273
573.	Մի' հեծեր, մայր իմ, մի' հեծեր	147
* 574.	Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն	53
575.	Մինչ ե՞րբ գլուխդ պիտի ծեծես	27
576.	Մինչ մահուան անյիշատակ ի շիրիմ	407
577.	Միշտ քեզ եմ սիրել, հոգիս նուիրել	354
578.	Միութեան սուրբ դրօշակը	68
579.	Մնասցես բարեաւ, սէր իմ, սէ՛ր	66
* 580.	Մշակ բանուոր, բէնջպէր աղբէր	171
* 581.	Մօտն հինաւուրց աղբիւրին	514

## 3

* 582.	Յառաջ ընթանանք, եղբայրնե՛ր	560
* 583.	Յառաջ Հ. Մ. Ը. Մ.ի սկառուաներ	172
* 584.	Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ	14

## Ն

585.	Նազ աղջիկ, նազ աղջիկ, նազ մի անի	286
586.	Նախշուն աչեր, նախշուն աչեր	314
587.	Նախշուն աքիր, նախշուն աքիր	286
588.	Նանի՛, Բարօ՛, կարգա զիս	230
* 589.	Նանիկ ըրէ, անս'ւշ հրեշտակ	574
590.	Ննջեա, սրդեակ, անուշ քնով	78
* 591.	Ննջիր մանկիկ իմ սիրասուն	43
* 592.	Նոյեմբերին քամին եկաւ	583
* 593.	Նոր է բացել բարի լոյս	306
594.	Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն	554
595.	Նպատակիս զէթ մի մասը կատարուէր	63
596.	Նպատակիս հասնիմ միայն	74
597.	Նստել եմ դարձիդ կարօտ	334
598.	Նստէք ի մէջլիս, հա՛րք և եղբա՛յրք	440

## Շ

599.	Շաղգըր-շուղգըր քեամարս	277
600.	Շատախի պար — Գէօնտ (պարի եղանակ նուագի համար)	539
601.	Շատ աղուորիկ աղջիկ ես	383
* 602.	Շարաֆուն դու փուշով աղջիկ	331
* 603.	Շաւարշանի հերոսներուն	182
* 604.	Շափաղ կուտաս բաղի միջին	339
605.	Շէն կենայ օջախդ, Մելիք Շահնազար	447
606.	Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛	208
* 607.	Շօֆէօր տղայ, մի շտապիր	347

## Ո

* 608.	Ո՛հ, ինձ դարձեալ երգէ գանոնք	399
* 609.	Ո՛հ, ի՛նչ անուշ և ի՛նչպէս զով	33
610.	Ո՛հ, ի՛նչ քաղցր բան, ըլլալ կոնծարան	437
611.	Ո՛հ, մի ողբալ դու թառամած	489
* 612.	Ոչինչ են աչքիս աշխարհի հաճոյքներ	398
* 613.	Ոսկերիչ Ղազար, արեւիդ համար	565
* 614.	Ո՛հ անձկալիդ իմ հայրենիք	78
* 615.	Ո՛վ դու հոգեզուարճ, ո՛վ դու հոգեխօս	508
* 616.	Ո՛վ երկինք երկիր, դուք ինձ նայեցէք	468
617.	Ո՛վ իմ սիրելի, մէկ մօտս արի	542
* 618.	Ո՛վ ծիծեռնակ, վարանած թռչնիկ	499

619.	Ո՛վ կեանք ունի, դարդ էլ ունի	492
* 620.	Ո՛վ մեծասքանչ դու լեզու	21
* 621.	Ո՛վ որ քաջ է; ի՞նչ կը սպասէ	113
* 622.	Ո՞րն է աշխարհ Հայաստան	85
* 623.	Որսկան ախպէ՛ր, սարէն կուգաս	481
624.	Ո՞րտեղից պատահեց, Աստուած իմ	455
625.	Որքա՛ն լաւ օրերս անցան գնացին	511
* 626.	Ուղիղ գինետնից ես աուն եմ գնում	427
* 627.	Ուղիղ կարգով, կանգնենք շարքով	573
* 628.	Ունէր չունէր, մէկ կին ունէր	573
629.	Ուռի ես, կռանալ մի	223
* 630.	Ուռիների տակ մտորում եմ լուռ	534
631.	Ուստի՞ գուքաս, դարիբ քլբուլ	250
* 632.	Ուրախ լեր սուրբ եկեղեցի	386
633.	Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար	340
634.	Ուրեմն մնաք բարով, ազնիւ ընկերներ	169
635.	Ո՞ւր էր թէ զեփիւռիկ, ըլլայի թափառիկ	415
* 636.	Ո՞ւր էք կորեր գարնան օրեր	480
637.	Ուրտեղ սիրուն կին կը տեսնեմ	418
<b>Չ</b>		
638.	Չե՛մ, չե՛մ, չե՛մ կրնա խաղայ	374
639.	Չէթըրըս գլխիս ծածկեմ	452
* 640.	Չինար ես, կեռանալ մի	221
641.	Չիս ասում թէ լա՞ց իս էլի	261
* 642.	Չորրորդ գնդի հրամանատար քաջ Քեռի	164
<b>Պ</b>		
643.	Պաղ աղբիւրի մօտ կանգնած հայ աղջիկ	338
644.	Պաղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ	337
645.	Պանք Օթօման գրաւած է դաշնակցական կոմիտէն	110
646.	Պաշարման մէջ է թարգմանչաց սուրբ վանք	148
647.	Պարգեւատուն ամենեցուն	393
* 648.	Պարզի՛ր, աղբիւր, Քրդի աղին ջուր տանեմ	67
649.	Պատերազմ է գնում Հայոց քաջ կանը	124
* 650.	Պարտէզի միջով վազում եմ ուրախ	561
* 651.	Պարտէզներէն Ջնջումն անցած է արդէն	518
652.	Պարտէզում իրիկնապահին	347

* 653.	Պարտէզ սւնիմ գրախտ ա	229
654.	Պարտիզում վարդեր բացւած	373
655.	Պարտքով կովը ծախեցին	207
* 656.	Պզտիկ ծիտ եմ, ծըտի ցեղից	572
657.	Պզտի՛ տղայ, չեմ օրօրեր օրօրանքդ	35
* 658.	Պի՛կ, պիկի պիկ, ա՛յ կապիկ	574
659.	Պուճուր աղջկայ տէրը	368
* 660.	Պսակ պսակ տիկնի պսակ	374

## Ջ

661.	Ջահէլ սրտերում քո վառած հուրը	542
662.	Ջաղացս մանի, մանի	243
663.	Ջաղացս պատիկ պատիկ	222
* 664.	Ջան, իմ բալիկ սիրասուն	532
665.	Ջան, մարալ ջան, էն սարէն մէկ քոչ անցաւ	322
* 666.	Ջուխտակ շամամներդ գրախտ ծոցիդ մէջ	556
667.	Ջուր կուգայ վերին սարէն	246

## Ս

668.	Սաթօն սարէն կուգայ	339
* 669.	Սասուն գաւառ, հին Հայաստան	93
670.	Սասուն ելաւ ապստամբեց	108
* 671.	Սասուն նստէր անտէր կուլար	342
* 672.	Սարերդ ծաղկել, ձորերդ ծաղկել	201
* 673.	Սարերը հովել ա, ծիրան ջան	207
* 674.	Սարերը ման եմ եկել, եար, նա՛յ, նանի ջան	341
* 675.	Սարերի հովին մեռնեմ	271
* 676.	Սարերի վրով գնաց	237
* 677.	Սարեր կ'աղաչեմ, իջէք, ցածրացէք	358
* 678.	Սարերու ծնունդ արծիւ յաղթապանծ	137
679.	Սարէն ելաւ երկու մուխ	234
* 680.	Սարէն կուգայ ձիաւոր	293
681.	Սարը սարի նման չէ	314
* 682.	Սարի լանջին ման եմ գալիս	350
683.	Սա՛ր, սա՛ր, ես սարերի ծաղիկ եմ	191
684.	Սափորն ուսիս դրի, ջա՛ն, եարօ ջա՛ն	222
* 685.	Սեղանն է առատ, դիմացն Արարատ	425
686.	Սեւ աչերէն շատ վախեցիր	326

* 687.	Սեւ խաւարը իմ ընկերս է անբաժան	48
* 688.	Սեւ մութ ամպեր ճակատիդ դիզուան	344
689.	Սեւորակ աչեր, սիրունիկ աչեր	417
* 690.	Սեւ սեւ աչեր գեղեցիկ	459
691.	Սեւ սեւ աչերիդ զուրբան	230
692.	Սիրականս, ալ չըխպնիմ, չամաչեմ	422
693.	Սիրահեղիկ սիրուն աղջիկ	508
694.	Սիրել եմ, արի, արի	240
695.	Սիրելի ջան, հեռացար	467
* 696.	Սիրելիս, մի հատիկ ես	307
* 697.	Սիրելուցըս չեկաւ նամակ	355
698.	Սիրեցի եարբս տարան	406
* 699.	Սիրունիս, քեզ համար կեանքս կէս եղաւ	412
700.	Սիրուն աղջիկ եմ, ալ կ'ուզեմ	210
* 701.	Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս	443
702.	Սիրուն ես, հոգեա՛կ, սէր ես դուն սիրուն	555
703.	Սիրունը խալն ի՞նչ կանէ	236
* 704.	Սիրուն թռչնիկ, թռիր, գնա	456
705.	Սիրուն կիւլնազ, եարբս Սարվար	461
* 706.	Սիրուն մանուշակ, ինչո՞ւ ես թողմե՛լ	487
707.	Սիրուններ, մի՛ք նեղանայ	228
* 708.	Սիրուն պեխերդ ես խուզում	382
* 709.	Սիրա իմ սասանի, սարսափ զիս ունի	393
710.	Սիրաս դարձեր է մի մանուկ լալկան	410
* 711.	Սիրաս նման է էն փլած տըներ	203
712.	Սիրաս տխուր լի վէրքերով	95
713.	Սոսկունմն ահաւոր պատեց Մշոյ դաշտ	132
* 714.	Սովորելով փորձեցի, ամէնքից ես ծաղրեցի	454
715.	Սուրբ կարապետ չայիր չիման	308
716.	Սուրբ կարապետ քո վանքը	275
* 717.	Սուրբ տենչերով լոկ ծարաւած	546
718.	Սրտիս թագունի կարօտել եմ քեզ	408
719.	Սօնա եա՛ր, Սօնա եա՛ր	315
Վ		
* 720.	Վա՛յ էն սրտին, որ սէր չունի	516
* 721.	Վա՛յ կաքաւիկ, սեւ կաքաւիկ	279

722.	Վա՛յ, վա՛յ, Մօսի՛ ջան, ինձ մի սպանիր	442
* 723.	Վահրամի (պարի եղանակ նուագի համար)	538
724.	Վարանդայի մեղիքն եմ ես, Շահնազար	450
725.	Վառեց երկինք իր մոմերը	437
* 726.	Վարդ եմ քաղել շաղերով, ջա՛ն, եարօ ջա՛ն	343
727.	Վարդեր ու վարդեր, թերթ ի թերթ փթթեր	483
* 728.	Վարդը ձեռքիդ դու ներս եկար	549
729.	Վարդի թփից թուփ եմ պոկել	335
730.	Վարդ կօշիկս, վարդ կօշիկս	330
* 731.	Վարդի նման գեղեցիկ, ո՛վ վարդերես հայ աղջիկ	470
732.	Վարդն ի բացւէ վանայ քեաղքի էգէստար	212
733.	Վարդ սիրեցի՜ փուշ դառաւ	323
* 734.	Վերան աշուն, դառներ գարուն	285
735.	Վերէն ես կուգայի, դու դուռը բացիր	196
736.	Վերի արահերուն գարին	274
737.	Վեր կա՛ց, թշուառ վշտի դաւակ	102
738.	Վերջին վարդ, վերջին վարդ	404
* 739.	Վէրքերով լի ջանֆիտայ եմ	127
740.	Վրդովեցիր խաղաղ կեանքս	338
741.	Վրէ՛ժ կը գոռան շիրմաց խորէն	25

## S

* 742.	Տալուրիկի դաւակ եմ խորդ	145
* 743.	Տերեւներուն մէջէն բարակ	589
* 744.	Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք	400
745.	Տէ՛ր, կեցո դու զՀայս	64
* 746.	Տէր ողորմեա (Կոմիսաս Վարդապետի)	387
* 747.	Տէր ողորմեա (Մ. Եկմայեանի)	389
* 748.	Տէր ողորմեա (Handel-ի)	390
749.	Տըլէ համան, արեւն առեր	238
750.	Տըլէ համան, գեամին եկաւ	238
* 751.	Տիարպէքիբի պար (պարի եղանակ նուագի համար)	538
* 752.	Տի՛կ տի՛կ տի՛կ, սիրունիկ	577
* 753.	Տխուր ողբով մ՛ըսէր ինձի	398
754.	Տուն եմ շինել գետու բերան, հօ՛յ նար, ջանքմ նար	298
755.	Տուն եմ շինէ գիտու բերան, խալալէ ջան, խալէ	316
* 756.	Տօ, խրոխպեր, մեռնիմ քի, խրոխպեր	345

757. Տօ՛, տղայ, շան սրղի, իսկի ժամ դուն չը՞ս գացի 311

## Ց

\* 758. Յոլակի (պարի եղանակ նուագի համար) 536

\* 759. Յորեն եմ ցանե, հա՛ր, էլիբ է պառկի 341

## Փ

\* 760. Փառք և պատիւ և զօրութիւն 395

\* 761. Փառք տանք մեր ջրին ու հողին 301

762. Փափուրի ջան, մտայ բլբուլի բողբ 214

\* 763. Փափուրի (պարի եղանակ նուագի համար) 536

\* 764. Փիսօն. փիսօն մլաւան 563

\* 765. Փող ու ճոկան, դրօշ ու թմբուկ 176

\* 766. Փոս ենք փորում, ծառ ենք տնկում 579

\* 767. Փոքրիկ բարձիկ սիրական 587

\* 768. Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ 502

## Ք

769. Քանաքեռ բարձր տեղ ա 223

\* 770. Քանի՛ թմբինք բաւ է, եղբա՛րք 184

\* 771. Քանի՛ կ'աճի ցաւը մարմնիս 510

\* 772. Քանի վուր ջան իմ՝ հար քի զուրբան իմ 259

773. Քանի՞ տարի է, հայրենիք սիրուն 98

774. Քաղհան եմ անում մօտ սարին 323

775. Քարաւանը շորորալէն հրէն գալիս է 551

776. Քարափի գլխին ունիմ տուն 332

777. Քեզանից մաս չունիմ, կուրծքդ մի բանայ 363

\* 778. Քեզ եմ մնում, անուշ դարուն 264

779. Քեզ սպասող չմնաց, ո՞ւր ես գալի, ա՛յ դարուն 504

\* 780. Քեռծի (պարի եղանակ նուագի համար) 537

781. Քէլէր, ցոլէր իմ հարը 292

782. Քէ՛լէ, քէ՛լէ, քէլքիդ մեռնիմ 287

783. Քիչ կը մնայ սիրտս պատուի 490

784. Քնի՛ր բալիկ, հանգիստ քնիբ 477

\* 785. Քնի՛ր, իմ բալիկ, օրօր իշ արա 54

\* 786. Քնքուշ հովիկ, իմ նազելուց 375

787. Քնքուշ տատրակս, դու անծանօթի 504

\* 788. Քոչարի (պարի եղանակ նուագի համար) 537

\* 789. Քոչարի՛ Մշոյ (պարի եղանակ նուագի համար) 537

* 790.	Քուն եղիր բալաս, աչերդ խուփ արա	501
791.	Քո փափաքով վառւում եմ	354
<b>Օ</b>		
792.	Օգդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն	32
* 793.	Օգն է զսվ, գիշերն է ազուոր	484
794.	Օ՛խաը սարով, հեռու քեզնէն	340
795.	Օ՛խաը տարով, օ՛խաը սարով	47
* 796.	Օ՛ն, ընկերներ, երթանք շիտակ	585
* 797.	Օ՛ն, վերադառնանք մեր սիրուն լեռներն	520
798.	Օտա՛ր, ամայի՛ ճամբէքի վրայ	521
799.	Օրը մթնեց, ճամբէս երկա՛ր	415
* 800.	Օրն էր ուրբաթ, լուս ի շարաթ	280
801.	Օրօր, օրօր, իմ սիրունիկ	361

## Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ

### Ա) ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

1.	Միքայէլ Նալբանդեանց	8
2.	Հայր Ղեւոնդ Ալիշան	11
3.	Բարսեղ Կանաչեան	16
4.	Տոքթ. Նահապետ Ռուսինեան	20
5.	Տոքթ. Ներսէս Մեղպուրեան	23
6.	Մկրտիչ Պէշիկթաշլեան	24
7.	Խրիմեան Հայրիկ	29
8.	» »	92
9.	Տիգրան Չուհաճեան	34
10.	Բաֆֆի	40
11.	Գամառ Քաթիպա	42
12.	Աւետիս Ահարոնեան	48
13.	Խորէն եպիսկոպոս Նար - Պէյ	56
14.	Գէորգ Զ. Կաթողիկոս Ամենայն Հայոց	66
15.	Սմբատ Շահազիզ	76
16.	Մկրտիչ Փորթուզալեան	85
17.	Խան	106
18.	Դժոխք - Հրայր	109

19.	Բարկէն Սիւնի	110
20.	Սերոբ Փաշա	113
21.	Անդրանիկ	115
22.	Հայդուկ Անդրանիկ	141
23.	Զօրավար Անդրանիկ	167
24.	Համազասպ	117
25.	Գէորգ Չավուշ	119
26.	Ռուբէն (Տէր Մինասեան)	120
27.	Կարօ (Արիստակէս Զօրեան)	123
28.	Թօրոս (Գալուստ Ալսոյեան)	123
29.	Պետրոս Սէրէմճեան (Պուլկարացի Պետօ)	127
30.	Պետօ (Աղեքսանդր Փանոսեան)	129
31.	Սարգիս Կուկուճեան	131
32.	Սօսէ Մայրիկ	135
33.	Եփրեմ	137
34.	Հ. Պօյաճեան (Մուրատ)	140
35.	Խանասօրի Վարդանը	143
36.	Իշխան (Արղութեան)	143
37.	Մուրատ (Սերաստացի)	144
38.	Գալուստ Արխանեան	153
39.	Արտաշէս Միսաքեան	155
40.	Խաչիկ Գնունի	155
41.	Վազգէն (Տէրոյեան)	156
42.	Սերոբ և իր կորիւնները՝ Աւետիս և Յակոբ	159
43.	Արամ Արամեան (Աշոտ Թաթուլ - Կորկոտեան)	160
44.	Արաբօ	162
45.	Գարեգին Նժդեհ	163
46.	Քեռի	164
47.	Տուրբախ	169
48.	Գէորգ Կառվարենց	179
49.	Կոմիտաս Վարդապետ	193
50.	Աշոտ Սաթեան	209
51.	Աշուղ Զիւանի	225
52.	Սայեաթ Նովա	248
53.	Ռոմանոս Մելիքեան	273
54.	Արամ Խաչատուրեան	289

55. Գուրգէն Մ. Ալէմշահ	305
56. Կարա Մուրզա (Քրիստափոր Մարգարեան)	321
57. Անտոն Մայիլեան	329
58. Վաղարշակ Սրուանձտեանց	337
59. Աշուղ Շերամ (Գրիգոր Տալեան)	353
60. Խաչատուր Աբովեան	369
61. Լեւոն Շանթ	401
62. Ֆրանց Շուպէրթ	417
63. Մատթէոս Զարիֆեան	421
64. Յովհաննէս Թումանեան	446
65. Արմեն Տիգրանեան	446
66. Պերճ Պռօշեանց	465
67. Դանիէլ Ղազարեան	467
68. Գարրիէլ Սունդուկեանց	469
69. Յակոբ Փափազեան	471
70. Գարեգին Պէշկէօթիւրեան	476
71. Մկրտիչ Աճէմեան	478
72. Աւետիս Իսահակեան	481
73. Շուշանիկ Կուրղինեան	485
74. Ղազարոս Աղայեան	492
75. Պետրոս Դուրեան	497
76. Երգչուհի Իրիս Պիւլպիւլեան	505
77. Ալեքսանտր Ծատուրեան	512
78. Ալեքսանտր Սպենդիարեան	513
79. Անուշաւան Տէր Ղեւոնդեան	515
80. Երգչուհի Մարի Արթինեան - Կառվարենց	519
81. Ճիւղէփփէ Վէրաի	521
82. Պէթիֆօլէն	529
83. Վոլֆկանկ Ամատեուս Մոցարա	532
84. Երգչուհի Զեփիւռ Շանթ	533
85. Կոմիտաս Վարդապետ և Սպիրիտոն Մելիքեան	535
86. Պարուհիներ Ռօզա Սաֆարեան և Լուսիկ Քոշեան	539
87. Երգչուհի Անգինէ Քէշիշեան - Մուրատեան	543
88. Օհան Տուրեան	545
89. Երգչուհի Մաթիլտ Պուտաքեան	549
90. Թաթուլ Ալթունեան	557
91. Քէմանչիսա Ռուբէն	560

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ, ՀԱՅՐԵՆԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ  
ԵՒ ԱՅԼ ՆԿԱՐՆԵՐ

92.	Բաֆֆիի Խենթը իր քաջերու խումբով	40
93.	Վարդանանք	45
94.	Վարդան Մամիկոնեանի դամբարանը	45
95.	Կարնեցի օրիորդ տոհմիկ տարազով	46
96.	Կարին (Էրզրում)	47
97.	Վարագայ Ս. Խաչ Վանք	58
98.	Սգաւոր Մայր Հայաստան	61
99.	Ս. Էջմիածին	64
100.	Կաթողիկոսի գահը Էջմիածնի մէջ	67
101.	Ատանայի արհաւիրքը (1908)	72
102.	Մուշի տեսարանը	89
103.	Մեծ և Փոքր Մասիսները	95
104.	Վանի բերդը	101
105.	Սիփանայ սարը Կտուց կղզիէն դիտուած	105
106.	Խանի արշաւախումբը	107
107.	Հայ կամաւորներ (նկար՝ Ա. Ֆէթվաճեանի)	112
108.	Արաուլ լիւր և Խանասորի դաշտը	122
109.	Սուլուխ գիւղի կամուրջը (Մշոյ դաշտ)	132
110.	Գուրաու գիւղը Մշոյ դաշտին մէջ	149
111.	Նեւրոզի խումբը	158
112.	Կարնոյ բանտը Արամեանի կախուած շրջանին	161
113.	Ֆեռիի 4-րդ կամաւորական գունդը	165
114.	Զէյթունի ընդհանուր տեսարանը	184
115.	Վարագի մէջ հերկ ընտղներ	232
116.	Աւանց — Վանի նաւահանգիստ	239
117.	Հայուհին (նկար՝ Ա. Ֆէթվաճեանի)	241
118.	Սերմնացանը Վարագի մէջ	245
119.	Հայ պարուհին (նկար՝ Զապէլ Պոյաճեանի)	346
120.	Սայեաթ Նովայի գերեզմանը (Թիֆլիս)	263
121.	Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ	268
122.	Մշոյ լարախաղաց Ս. Կարապետի անուանով	269
123.	Երեւան — Խաչատուր Արովեան պողոտայ	288
124.	Կարա Մուրզայի երգչախումբը	321
125.	Մուսա լիւր	378
126.	Մուսա լիւրան Եօզուն Օլուգ գիւղը	379
127.	Մուսա լիւր — Քարա Չայի կամուրջը	380
128.	Ս. Գր. Լուսաւորչի տաճարը (Պէյրուս - Անթիլիաս)	385
129.	Մաճկալը աշխատանքի պահուն	509
130.	Օմար Խայեամը և իր սիրուհին	526
131.	Հայկ. պարախումբը «Քոչարի» պարած պահուն	537
132.	Մանուկներ կ'երգեն	561

## ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՐԳԵՐՈՒ ՑԱՆԿ

### ՄԵՆԵՐԳՆԵՐ՝ ԴԱՇՆԱԿԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ

1. Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին	128
2. Ծառիս տակը մանիշակ	185
3. Ծիծեռնակը բոյն կը շինէր (զուգերգ)	530
4. Ծիծեռնակ, ծիծեռնակ	97
5. Մաճկալ ես, բեզարած ես	336
6. Սեւ մութ ամպեր ճակատիդ դիզուան	344
7. Վա՛յ էն սրտին որ սէր չունի	516
8. Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ	502
9. Քեզ եմ մնում անուշ գարուն	264
10. Օրն էր ուրբաթ լուս ի շաբաթ	280

### ՔԱՌԱԶԱՅՆ ԵՒ ԲԱԶՄԱԶԱՅՆ ԵՐԳԵՐ

1. Ա՛խ, մարալ ջան	192
2. Ակոռիի մեծ կարասին	430
3. Ամէն Հայի սրտից բխած	65
4. Ա՛յ աղջիկ, ծամով աղջիկ	276
5. Այս դուռը դեռ անառիկ է	154
6. Անձրեւն եկաւ շաղալէն	213
7. Անոնց համար որ ինկան	88
8. Արեւի շողին տակ տեսայ	328
9. Դիլբա՛ր ջան, Դիլբա՛ր ջան	295
10. Դուն էն գլխէն իմաստուն իս	256
11. Իբրեւ արծիւ սաւառնում ես	114
12. Իղձերս ամէն հնձելէ վերջ	523
13. Ծագեց արեւ ազատութեան	117
14. Ծափ ու ծնծղայ զարկէք այսօր	471
15. Կարկուտ տեղաց Սանասորայ դաշտումը	122
16. Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ	151
17. Կուգաս անցեալի ոսկուն մշուշէն	180
18. Հայ արիներ ենք կարգապահ	174
19. Հերիք որդեակք այսքան տարուայ տառապանք	52
20. Հունձք կը ժողվեմ մանգաղով	488
21. Հօ՛յ, Նա՛զանըմ, Նա՛զանըմ	320


22. Մենք անկեղծ զինուոր ենք (հնգաձայն)	142
23. Մեր հայրենիք թշուառ անտէր	7
24. Մթին դարերու անդունդին խորէն	99
25. Մօան հինաւուրց աղբիւրին (Շուպերթ)	514
26. Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ	14
27. Շաւարշանի հերոսներուն	182
28. Ո՛վ մեծասքանչ դու լեզու	21
29. Ո՞ւր էք կորեր գարնան օրեր	480
30. Սարերը հովել ա, ծիրան ջան	207
31. Վարդի նման գեղեցիկ, ո՛վ վարդերես հայ աղջիկ	470
32. Տէր ողորմեա (կոմիտաս վարդապետ)	387
33. Փող ու ճոկան, դրօշ ու թմբուկ	176
34. Քանի կ'աճի ցաւը մարմնիս	517




Ասոնցմէ զայս, ձայնագրուած են 26 եռաձայն ու երկձայն, ինչպէս նաեւ 272 միաձայն ուրիշ երգեր: Տեսնել՝ ընդհանուր երգացանկը:





## ՉԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԻՊԱԿՆԵՐ


Չայնագրուած երգերը գործածելի առաջ, ստորեւ սրբագրուած ձեւով կը խնդրուի սրբագրել՝ անուշադրութեամբ սպրդած հետեւեալ կարեւոր վրիպակները:—

1 սիրտս ո՛հ յոյժ  
2 Հա ————— յաս  
3 Ըայց չես թող ճի — 4  
4 էւ  
5 Մեր ուշ — խարճ-էն  
6 ո՞ր տե՛ շարք թանկ  
7  
8 Մա զեց ա ռեւ  
9 Դի քի յիշուի  
10 Դա — ըն Դար




11  12   
 Մահ տապի բազ — մի որ հաս 5 Մը շափան-


13  14  15   
 Նեճ — դեհ տե 0- աղ ուխտ ու բու աղ ծիւ ու գալլ



16  17  18  19   
 տան մը ջու շեճ, Մեճ հայ սեր ու երու Մեր տու - ծի բա-

20  21   
 Ան տաղ հո — Բար, շիր-ջոճք ա — լե — ր — աջ ու սե — թոյ.

22  23   
 Կը Կան չէ Մեջ Թագու հին էր սի թով աշխատ Ման.

24  25  26   
 Կն շնու հե ու ա ցար Մեռ — Նեճ քո սի թու ցը

27  28   
 Գի նի Լից աղ Բէր, Գի նի Լից.

29  30   
 քո — տիճ ոչ եւս թո-

1) Էջ	18	Տող	4	Չափի (մբզիւր)	2	Հայաստան
2) »	18	»	7	»	1	»
3) »	33	»	7	»	4	Գարուն

4)	Էջ 36	Տող 1	Չափ (մրգիւր)	4	Վարդանի երգը
5)	» 69	» 4	»	3	Կռուկ
6)	» 136	» 2	»	1	Կոչ երիտասարդներուն
7)	» 129	»	Տիեզը «Տօ»ին վրայ դնել	—	Պետոյի յիշատակին
8)	» 117	» 2	Չափ (մրգիւր)	1	Համազասպի երգը
9)	» 114	» 4	»	4	Անդրանիկին
10)	» 114	» 6	»	1	»
11)	» 113	» 2	»	2	Սերոբ փաշայի երգը
12)	» 171	» 1	»	1	Քայլերգ Դաշնակցութեան
13)	» 171	» 4	»	2	»
14)	» 171	» 5	»	6	»
15)	» 176	» 6	»	2	Քայլերգ հայ արիներու
16)	» 180	» 2	»	3	Քայլերգ Հ. Կ. Խաչի
17)	» 180	» 5	»	2	»

ԾԱՆՈԹ.— Էջ 180 տող 7 - 8 Սօփրանոյի քօսներուն պէս քօս պիտի ըլլան նաեւ միւս ձայներուն համապատասխան խաղերը:

18)	Էջ 293	Տող 2	Չափ (մրգիւր)	2	Սարէն կուգայ ձիաւոր
19)	» 224	» 1	»	1	Ծիրանի ծառ
20)	» 401	» 3	»	3	Անուշ հովիկ
21)	» 184	» 1	»	3-5	Քայլերգ Զէյթունի
22)	» 416	» 7	»	3	Շուպէրթի սէրէնաս
23)	» 405	» 2	»	1-2	Եարոջ երգ
24)	» 405	» 3	»	5	»
25)	» 419	» 3	»	2	Եարօ ջան
26)	» 459	» 2	»	3	Սեւ սեւ աչեր գեղեցիկ
27)	» 427		Տիեզները ջնջել		Հարբած մարդու երգ
28)	» 438	Տող 3	Չափ (մրգիւր)	1-2	Գինի լից
29)	» 279	» 3	»	1	Կաքաւիկ
30)	» 520	» 4	»	3	Օ'ն, վերադառնանք



## ՃՇԴՈՒՄՆԵՐ ԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ 158ի վրայ մուսուլման է երգին խորագիրը — «Նե-  
րուզի երգը»:

Էջ 159ի նկարին տակ մուսուլման է յիշատակել հօր անու-  
նը: Պէտք է ըլլայ՝ «Տարօնի առիւծը Սերոբ», հւայլն:

Էջ 441-446, «Անուշ» օփէրայի երգերու խորագիրներուն  
թուանշանները՝ 1-6, պէտք է առնել փակագծերու մեջ, իրրեւ եր-  
գերուն համրանքը ցոյց տուող թիւեր, որոնք որեւէ կապ չու-  
նին խորագիրներուն հետ:

Էջ 469ի Քէօռօղլիի երգին մէջ «ջա՛ն, ջա՛ն, Քէօռօղլի»ն  
(8 անգամ) պիտի ըլլայ «ջա՛ն, Քէօռօղլի ջա՛ն», ինչպէս գրուած  
է արդէն երգի ձայնագրութեան մէջ:


Սխալ գրուած են «վա՛յ էն սրտին» երգի ձայնագրուած  
երկու էջերը: Երգը, այսպէսով, կը սկսի էջ 517էն և կը վեր-  
ջանայ էջ 516ի վրայ:

«ԶԱՆԱԶԱՆ ԵՐԳԵՐ» ընդհանուր խորագիրը, էջ 535ի,  
537ի և 539ի վրայ, պէտք է ըլլայ «ԶԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐ»:


Երգարանը գործածելէ առաջ կը խնդրուի սրբագրել նաև  
աչքի դարկած հետեւեալ վրիպակները. —

Էջ	Սխալ	Ուղիղ
187	վերէն 18րդ տող խափ	խաբ
214	» 2րդ » շանչ	շանց
220	» 7րդ » կարող	արող
244	վարէն 11րդ » փեշակ	փեշակ
268	» 13րդ » Փարէ պաթման	Փըրէ Պաթման
302	» 4րդ » բազըմ	բաղըմ
315	» 6րդ » մերբս	մերբս
316	վերէն 2րդ » թարզը	թարզը
319	վարէն 12րդ » մազերդ հիւսէ	մազերդ հինա
453	էջին թիւը	453
560	վերէն 2րդ » քընացիլ	գընացիլ









1. Արենուշին խօսքը նուիրական է:
2. Արենուշը հնազանդ է իր ծնողքին և աստիճանաւորներուն:
3. Արենուշը հաւատարիմ և ուղղամիտ է:
4. Արենուշը միշտ կ'օգնէ ուրիշներուն:
5. Արենուշը բարեկամ է ամէնուն և քայր ամէն արենուշի, ասանց ընկերական կարգի խարուժեան:
6. Արենուշը բարեւիրտ է և փափկանկատ:
7. Արենուշը հայրենասէր է և մաքուր հայերէն կը խօսի:
8. Արենուշը անասունները կը սիրէ ու կը պաշտպանէ:
9. Արենուշը միշտ գուարթ, խանդավառ է:
10. Արենուշը աշխատասէր և կորովի է:
11. Արենուշը տնտեսող է:
12. Արենուշը մաքուր է մտածումով, խօսքով և գործքով:



Ն Պ Ա Տ Ա Կ

Հայ Արենուշներու Միութեան ներպատակն է՝ ի մի համախմբել Հայ դեռատի ազգիկները, անոնց տալ կեանքի բարձր իտէալ:

Զարգացնել Հայ ազգիկներու հոգիին, բարոյական և ֆիզիքական կարողութիւնները:

Զանոնք դարձնել հայրենասէր, անձնուէր, կարգապահ, շարքաշ, նախաձեռնող ու գործունեայ: Պարտականութեան և պատասխանատուութեան դիտակից, արի և վհանձն Հայուհիներ:





Ա. Մ Ա Ս

1. Յառաջ նահատակ
2. Ծաղկիր ազատ իմ Հայրենիք }
3. Արսասանութիւն
4. Դեպի ազատ դաշտ
5. Բացման խօսք
6. Պար
7. Պար

Խմբերգ Արեւուշներու կողմէ

Խ-Պ Յարութիւնեանէ  
(Խմբերգ) Արեւուշներէ

X

Մարտէյի Քեփկներէ  
Պոստի »

Դ Ա Դ Ա Դ

Բ. Մ Ա Ս

8. Մարզակ
9. »
10. Պար
11. Կենդանի Պատեր
12. Հաւքարձման (Վիճակ)
13. Գող սիրտք դող
14. Հայկական սպարեր

Սեն-Լուի Արեւուշներէ

Պոստի »

Մարտէյի »

Քեփկներէ, եւ Գայիկներէ

Յ. Քուժանեանի Անուշէն

Մարտէյի Արեւուշներէ

երէց Արեւուշներէ

